# ԲՈՒՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ

# ՀԱՅՈՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ

# ԸՆԴ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՀՌՈՎՄԱՅ

2528

9(Յ)
Բ-98

## ԲՌՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ

# ՀԱՅՈՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ

## ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀՌՈՎՄԱՅ

---

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

Ի Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Ա. ԿՐԱԵՎՍԿԵԱՆՑ
1884.

17576

Въ типографіи А. А. Краевскаго (Бассейная, № 2).



# Ի ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ-Ի,**

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ**

ՄԵԾԻ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ

ԷՋՄԻԱԾՆԻ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

> Բանդք է վերայ Անւոյն և Անեցւոցն
> ամենայն ազգն Հայոց կոծեալք կան:
>
> Սամուէլ Պատմագիր Գլ. ԺԷ.

## Ա

Ի հրատարակելս մեր ի լոյս հայացի թարգմանութեամբ զկրկին Յիշատակարանս դարձին Հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն՝ հարկ անշուշտ վարկանիմք ծանօթս տալ վերծանողաց զպատմական անցիցն անցելոց ի Հայս, զի առիթք եղեն զաղթականութեան Հայոց յաշխարհն Լեհաստանեցւոց, համակ և զհանգամանաց քաղաքական վիճակի նոցա յաշխարհին յայնմիկ:

Որ ոք ուշի ուշով հետազօտեսցէ զյիշատակարանս պատմութեանց ազգիս մերոյ՝ նշմարէ ապաքէն զայս ինչ երեւոյթ նշանաւոր, մասամբ իսկ բացայայտիչ պատմական անցից աշխարհին, զի ընդ յոլով երկարութիւն ժամանակի պատմութեան նորա չերեւի ուրեք ձգտումն ի Հայս կազմելոյ պետութիւն միաւորեալ և անկախ, կամ պահպանելոյ զոր միանգամ ընկալան. և այս մանաւանդ յայտնի տեսանի յետ ընդունելոյ աշխարհին զօրէնս քրիստոնէական հաւատոց, յորժամ միաւորեցան անբաժանելի ազգն և եկեղեցին Հայոց, կամ որպէս անկ է ասել՝ ազգն կամ գաղափարն ազգային խառնեալ մարմնացաւ յեկեղեցւոջն: Սորին յաղագս յոր վասն տեսանեմք ի նոսա զեղձ հոգեւորի անկախութեան. և այս ձգտումն

յազատութիւն կրօնի և եկեղեցւոյ իւրեանց՝ կարևորագոյն է կէտ պատմութեան Հայոց և որոշիչ յատկանիշ նորա։

Առ փայր մի ժամանակի հանդիսացան արդարև Հայք ի պատմութեան արևելից իբրև նախիշխան պետութիւն և ի մրցումն իսկ ընդ Հռովմայեցիս մտին յաղագս աշխարհակալութեան Ասիացւոց աշխարհին, առ Տիգրանաւ ասեմ երկրորդի, արքայիւն Հայոց և դաշնակցաւ նորա, Միհրդատաւ Պոնտացւոյ. այլ զպատճառս հզօրութեանն անկ է գտանել ի բնատուր ախորժակս իշխանացս այսոցիկ, ի միաբանութեան նոցա ընդ միմեանս և ի քաղաքական հանգամանս ժամանակին, զոր օտանն եղեն երևելի վիճակին. ուստի և ոչ ընդ երկար ձգեցաւ այս վիճակ, առ ի չգոյէ ի ժողովրդեանն ներքին և յարաշարժ նկրտման առաքինանալոյ յայսպիսի հանգէսս աշխարհակալութեանց։ Վասն այսորիկ գնի յաղթութեանցն Պոմպէոսի, որք ըստ պայմանաց դաշինն ի նմանէ առ Տիգրան առաջադրելոց չէին ապաքէն այնպէս ծանունք, զոր օրինակ ընծայեցուցանեն զայնոսիկ պատմագիրքն Հռովմայեցւոց, և մանաւանդ գնի արշաւանացն Անտոնիոսի ի Հայս՝ եմուտ պետութիւնն Հայոց ընդ քաղաքական ազդեցութեամբ Հռովմայ և ապա՝ տէրութեանն Պարսից և կայսրութեանն Յունաց, և ասպարէզ եղև մրցութեանց այսոցիկ ազգաց, զոր զմիմեամբ եկեալ առնէին տիրանալ Ասիոյ։

Ի վերջ կոյս Դ-ի դարուն բաժանեցաւ աշխարհն Հայոց ի մէջ երկոցունց պետութեանցս այսոցիկ, ունելով ի բաժնին Պարսից իւր թագաւոր։ Այլ հազիւ թէ ամք քառասուն անցին ի վերայ՝ և ահա բարձաւ իշխանութիւն թագաւորութեանն, և այն՝ ոչ բռնի եղանակաւ, ընդդէմ կամաց աշխարհին, այլ ձեռնտուութեամբ նոցին իսկ նախարարացն արքայութեանն Հայոց, որոց ընդ մատնելն զարքայն իւրեանց ի ձեռս Պարսից՝ յայս միտս և եթ յարեան տրտունջք ի Հայս, թէ չէր արժան տալ ի ձեռս անհաւատից զայր ոք քրիստոնեայ։

Իսկ իբրև ծանեան Պարսիկք, թէ կրօնն քրիստոսեան խարիսխ մեծ է ի մէջ նոցա և Հայոց, որ վասն յօժարական միտին Հայք ի կողմն Յունաց, և եդին ի մտի բառնալ բնաջինջ զքրիստոնէութիւն յաշխարհէն Հայոց հանդերձ համօ-

րէն պաշտօնէիւք նորին, զորս գլխաւոր հեղինակս համարէին հաղորդութեանց աշխարհին ընդ Բիւզանդիոյ՝ յորժամ խորհեցան ամեն սրով և հրով մածանել ի Հայս զօրէնս Զրադաշտի՝ յարեաւ յայնժամ աշխարհն Հայոց բովանդակ ի պաշտպանութիւն կրօնի և եկեղեցւոյ իւրում. և թէպէտ ակար էր զինու և լքեալ անօգնական զատ ի Յունաց՝ այլ կարի հզօրացեալ հոգւով՝ կանգնեաց յաղթանակ ընդդէմ բռնան զօրութեանն: Ի սմին ժամանակի և արեւմտեան մասն աշխարհիս մերոյ, որ ընդ իշխանութեամբ էր կայսերացն Բիւզանդիոյ՝ նեղեալ տագնապէր յեկեղեցականաց և կայսերացն Յունաց, զի ոչ սակաւ մոլեռանդութեամբ քան զՊարսիկս զհետ էին հաւանեցուցանելոյ զՀայս ի միաբանութիւն ընդ եկեղեցւոյն Յունաց: Այլ և սոքա ձեռնունայն դարձան ի ջանս իւրեանց, որպէս և Պարսիկքն: Եւ յորժամ յաւելին նկրտել կրկին պետութիւնքս, տիրողք աշխարհիս մերոյ՝ ի նպատակս իւրեանց, այն է սպառսպուռ ջնջել զբնաւոր բնածին յատկանիշս ազգիս Հայոց՝ նոքին ճիգեանք տաժեցան զնուան. իբր զի Արաբացւոց նեղելոյ և պարտաւելոյ զանեալ զՀայս ի զաւուց և ի բռնութեանց երկոցունց պետութեանց՝ դիւրութեամբ մեծաւ նուաճեցին ի ծառայութիւն իւրեանց զաշխարհն մեր բովանդակ:

Առ իշխանութեամբ Արաբացւոց անկերպարան իմն էր քաղաքական վիճակ Հայաստանի. քանզի նուաճեալ ընդ իւրեամբք համարէին զաշխարհն Արաբացիք, իսկ ի միւսմէ կողմանէն Յունաց չհաւանեալ ընդ իրաւունս նոցա ի վերայ աշխարհին՝ ունէին զայն իբրև զմի ի գաւառաց իւրեանց: Եւ այս վիճակ յեղյեղուկ տարուբերեալ՝ չարեաց մեծաց եղև պատճառ վասն Հայոց:

Ի Թ. դարուն երևելի եղև ի Հայս ազգն Բագրատունեաց ճոխութեամբ ստացուածոց իւրոց և ազդեցութեամբ. և քանզի չզօրէին այլ ևս ամիրապետք Արաբացւոց ընդ բռամբ ի հնազանդութեան ունել զոստիկանս իւրեանց ի Հայս՝ վասն այսորիկ առ ի կարճել զապերասանութիւն նոցա յօժարութեամբ ընդարձակէին զիշխանութիւն և զիրաւունս ազգին Բագրատունեաց. և ի վերջ կոյս նորին Թ. դարուն պարգևեաց իսկ

ամիրապետն Թագ արքայական և ընծայս մեծագինս առագ տանուտեան նորին ազգի, Աշոտոյ Բագրատունւոյ: Զնոյն արար և կայսրն Յունաց Բարսեղ, որ փութացաւ և ինքնագիր հրովարտակաւ արքայ Հայոց զնա ծանեաւ, առաքելով նմա Թագ արքայական: Եւ ահա վերստին անդրէն նորոգեցաւ արքայութիւնն Հայոց ի միջոց ժամանակի Թ. դարուն, սահման ունելով իւր կարի անձուկ, որոյ մայրաքաղաք էր Անին: Բայց յայնմ ևս նուազի ոչ երկանց և ճգանց ժողովրդեանն էր պատուղ անձուձ նորաբողբոջ հարստութեանն և ոչ ձգտման աշխարհին յանկարծութիւն քաղաքական, այլ գիտմանց և եթ սահմանակից պետութեանցն, որպէս ի վերոյ յիշատակեցաւ: Վասն որոյ և իշխանութիւնն Բագրատունեաց ցայն վայր միայն ձգեալ յերկարեցաւ, ցոր վայր դեռ գոյին պատճառքն, որք ծագման նորա եղեն հեղինակք: Մինչ դեռ ևս յուժի էին Արաբացիք և արևելեան սահմանք կայսրութեանն չէին յապահովի ի յարձակմանց նոցա՝ մեծաւ խնամով պաշտպանէին Յոյնք անկախութեան արքայութեանն Հայոց. իսկ յորժամ ի քայքայումն լուծաւ զօրութիւն ամիրապետաց, և զօրավարք և կայսրք Բիւզանդիոյ, բառ մեծի մասին հայազգիք (Յովհան Չմշկիկ) ի ձեռն նոցին իսկ Հայոց առ տակաւ տակաւ ընդարձակել կալան զիշխանութեան իւրեանց զսահմանս՝ զհետ եղեն նոքա յայնժամ նուաճելոյ ընդ ազդեցութեամբ իւրեանց և զարքայն Հայոց, և ի սկզբան անդ ԺԱ. դարուն իսկ և իսկ բարձին զիշխանութիւնն Բագրատունեաց, տիրանալով ի ձեռն մատնութեան մայրաքաղաքին նոցա Անւոյ: Յայսմիկ ևս նուազի զերծ ճնայ եկեղեցին Հայոց յորդայթից Յունաց, զք անդրէն նորոգեցին զհալածանս և զգաւս իւրեանց ընդդէմ եկեղեցւոյս մերոյ, մինչ զի և զկաթողիկոսութիւնն Հայոց ջանային բառնալ: Բայց Հայք պաշտպանեցին հզօրապէս աթոռոյ կաթողիկոսութեան իւրեանց, թէպէտ և աթոռ արքայութեանն Բագրատունեաց մատնեցաւ ի կորուստ: Այլ համարիմ, թէ հետևանք բարձման արքայութեանն Հայոց կորստաբեր մանաւանդ քան թէ շահաւոր եղեն վասն կայսրութեանն. զի թէպէտ և իշխանութիւնն Բագրատունեաց առ ակարութեան իւրոյ չէր ինչ վտանգաւոր

հզօրութեանն Բիւզանդիոյ, բայց նախադուռն իմն գոլով սահմանաց կայսրութեանն՝ պատուար էր արդարև նմա, յորոյ վերայ լուծանէին նախկին աշխարհաւեր յարձակմունք բարբարոս ժողովրդոցն Արևելից, որք ի խորոց Ասիոյ արշաւանս ձեռնարկէին ի կայսրութիւնն: Իսկ զկնի բառնալոյ իշխանութեանն Հայոց՝ մինչև հասանէր ցկայսրն համբաւ նորոց արշաւանաց, մինչև հրաման ի նմանէ ելանէր և մինչ կազմէր յարդարէր բանակ առ ի չուելոյ զդէմ ունելոյ զարշաւանսն՝ կործանէր և աւերականայր արդէն աշխարհն բովանդակ: Դուցէ և այս մի է ի պատճառաց առ ի բացատրել՝ թէ զիարդ հեշտաւ տիրեցին փոքուն Ասիոյ ազգն Սելջուկեան Թուրքաց յԺԱ. դարուն:

Բ

Անկումն քաղաքին Անւոյ և որ զկնի սորա արշաւանք Սելջուկեանց գլխաւոր առիթք եղեն զաղթելոյ բազմութեան Հայոց յաշխարհէն իւրեանց յարևմուտս կոյս: Նոքին իսկ Յոյնք օժանդակէին զաղթականութեանցն այնոցիկ և անգիտանային ամենևին, թէ ոչ կարասցեն յար անվտանգ պահել զիշխանութիւն իւրեանց յարևելեան մարզս պետութեանն ընդդէմ ժողովրդոց մահմետականաց, առանց օգնականութեան և սիրոյ հաւատարմութեան բնիկ որդւոց քրիստոնէից աշխարհին: Վասն այսորիկ բազ նուազել ժողովրդեանն Հայոց յարևելեան սահմանս կայսրութեանն՝ աճելով աճեցին և ժողովուրդք մահմետականք, որք ի հարկէ յար ընդ ակամբ թշնամաբար հայէին ընդ իշխանութիւնս քրիստոնէից. երբ զի Կուրանն, որ մի միայն է գերագոյն օրէնք քաղաքական և բարոյական իմացուածոց մահմետականաց, համակ և մանաւանդ նոցա օրինական՝ հրամայէ հաւատացելոցն իւրոց մղել մարտ ընդ անհաւատս, անխոնջ և անողորմաբար, ածել զնոսա բռնութեամբ յօրէնս Մահմետի և ընդ հարկօք կացուցանել: *)

*) Մարտիք ընդ նոսա, զի հարցէ զնոսա Աստուած ի ձեռս ձեր և յամօթս արասցէ զնոսա, զի տացէ ձեզ զյաղթութիւն ի վերայ նոցա և բժշկեսցէ զսիրտս հաւատացելոց: Կազիմիրսկի. Le Coran. Traduction nouvelle faite sur le texte arabe. Paris. 1857. գլ. Թ. 14. Տես և գլ. Թ. 5, 36, 38, 40—52. գլ. ԺԸ. 186, 187, 212—215.

Այսպէս Բիւզանդիոյ, որպէս յիշատակեցաւ ի վերոյ՝ օժանդակէին Հայոց ի գաղթումն եւ տային անուանս եւ ձոխ տանց նախարարութեանց Հայոց, փոխանակ կալուածոց նոցա ի Հայս՝ քաղաքս եւ բերդորայս եւ գաւառս ըստ չափու ի Փոքր Ասիոյ եւ ի Կիլիկեցւոց աշխարհին. ուր եւ գնային տոհմիկ նախարարքն հանդերձ աղխիւքն իւրեանց եւ ժողովրդովք: Ի ձեռն սոցա հիմնեցան գաղթականութիւնք Հայոց ի Կիլիկիա, որոց զօրացեալ յետս վաճառականութեան եւ քաղաքական խնդրոց՝ հուսկ ուրեմն օգնականութեամբ Խաչակրացն կանգնեցին արտաքոյ սահմանաց հնոյն Հայաստանի թագաւորութիւն Հայոց նոր, եւ հանապազ ի հաղորդութեան էին ընդ կաթոլիկ պետութիւնս արեւմտից յաղագս վաճառականութեան եւ քաղաքական գործոց:

Ընդ ժողովրդեանն Հայաստանի գնէր յորդորեալ գաղթականութեանցս այսոցիկ եւ մանաւանդ խոյս տուեալ յերեսաց հալածչացն իւրեանց եւ աւարց մահմետականաց՝ լքին զաշխարհն իւրեանց հայրենի եւ խուռն բազմութեամբ դէմ եդեալ գաղթեցին յարեւմուտս կոյս, ուրանօր ընձանային խաղաղութեան հասանել: Ըստ նմին օրինակի, որպէս ընդ Կիլիկիա եւ ընդ Փոքրն Ասիոյ՝ տարածեալ սփռեցան Հայք ընդ աշխարհն Պարսից եւ անտի մինչեւ ցԱստրախան, ի պետութիւնն Լեհաց, ուստի ի հաղորդութիւնս վաճառականութեան մտին ընդ վաճառականս Վենետկեցւոց եւ Ջենովացւոց, բնակելոց առ եզր Սեւ ծովուն եւ Ազովու. հասին եւ ի Ղրիմ, ուստի ձգեցան, ծաւալեցան ի հարաւային Ռուսաստան, ի Մոլդաւիա, ի Վալախիա, ի Պոդոլիա, ի Լեհաստան, ի Գալիցիա, Տրանսիլվանիա, յաշխարհն Մաջառաց եւ յԻտալիա: Ո՛չ են մի արկածից դժբաղդութեան, ժամանելոց ի վերայ աշխարհին Հայոց՝ գային եւ գաղթականութիւնք նորանորք, որպէս զի զկնի արշաւանացն Մոնղոլաց, ապա Լէնկ-Թիմուրի, այլ եւ սովուցն, շարժութեանց երկրի եւ մահուանց, զոր ուղեկիցք իմն էին արշաւանացն՝ կարի յոյժ աճեցաւ թիւ գաղթականացն Հայոց: Բայց թող զայս ամենայն՝ էին եւ այլ դիպուածք անցից, անցելոց արտաքոյ Հայաստանի, զոր պատճառք եղեն յարե-

մտակցս ես Հայոց գաղթելոյ. զոր օրինակ, ի պատճառս պար-տութեան Տոխտամիշի ի Լէնկ-Թիմուրայ՝ գաղթեցին Հայք յՍմակերտանէ ի Խրիմ, և յաղագս անձկոյ իշխանութեան խանին ի Խրիմ, և վասն տիրելոյն Օսմանեանց Թերակղզւոյն (յամին 1475)՝ անդրադարձն ես փախեան Հայք ի Խրիմէ, իսկ ի Լեհաստան, ուրանօր գտեալ զնոսա պետութիւնն ազգի ազգի խնամօքք և արտօնութեամբք շնորհաց, որպէս տեսցուք ի ստորև։

Զեն ուրեք տեղեկութիւնք ի միջի զթուոյ Հայոց բնա-կելոց ի Սարայ և յՍմակերտան կամ զհանդամանաց կենաց նոցա անդանօր. զոր ցուցմունք միայն կարճառօտք հաղոր-դութեանց նոցա ի մասին վաճառականութեան ընդ Պարս-կաստան և ընդ վաճառատեղեաւն Իտալացւոց։ Իսկ վասն Հայոց Խրիմու գիտեմք, զի կարի յոգունք էին անդր բնա-կեալ և յոյժ ականաւորք, մինչ զի պատմագրաց ոմանց ԺԳ. և ԺԴ. դարուց Armenia maritima կոչել զԽրիմ, այսինքն է Հայաստան ծովային։ Ի միում քաղաքին և եթ Կաֆայ (Թէոդոսիոյ) թիւ նոցա համարիւր իբր 30,000, և եպիսկո-պոսն նոցա ի զանազան դէպս դաշինս կրէր ընդ հիւպատո-սին Ջենովացւոց։

Ընդէն և անդ ծանեաւ եկեղեցին Հռոմայ զկարևորու-թիւն դիրք Կաֆայ քաղաքին, ուստի մարթ էր այս ժա-մանակաւ շուրջանակի ծաւալել զօրէնս կաթողիկութեան. վասն այսորիկ յամին 1318 պապն Յովհաննէս ԻԲ. հիմնեաց ի քաղաքին աթոռ եպիսկոպոսի, որոյ առաջին գահակալն, Հերոնիմոս եպիսկոպոս ի կարգէն Ֆրանչիսկեանց՝ զհետ եղև իսկոյն որսալոյ զՀայս ի հնազանդութիւն պապին։ Եւ թէ-պէտ զկնի ժողովոյն Փլորենտիոյ և ևս յաւելան դաւքն և նկրտմունք եպիսկոպոսացն կաթողիկաց առ ի մոլորեցուցանել զՀայս՝ սակայն ոչ յաջողեցան խորհուրդք նոցա, քանզի և իշխանութիւնն Ջենովացւոց ներհակ կայր այսպիսի խոր-հրդոց և զխամանց եկեղեցականացն Լատինացւոց ընդդէմ Հայոց, զորս զգուշէին և ի պատուի մեծի ունէին Ջենովա-ցիք, մինչ մի անձն ի հիւպատոսաց նոցա ասաց. Scitis enim terram istam populatam esse in majori parte Armenis, qui sunt

nobis fidelissimi et boni mercatores dantes civitati magnum beneficium. *) (Գիտէք դուք ապաքէն, զի աշխարհն մեծա-մասամբն բնակեալ է ի Հայոց, ջք արք հաւատարիմք են քան զբնաւս և վաճառականք պատուականք, յորոց շահ մեծ է պետութեանն)։ Էր Հայոց ի քաղաքին եպիսկոպոս իւրեանց բնիկ, այլև եկեղեցիք քան և չորք և վանք մի, յորս պահէին պատկերք սրբոց բազումք, սպասք եկեղեցւոյ և այլ բազում ինչ, զորս բերեալ էր անդր Հայոց յԱնի քաղաքէն։

Իսկ երբև ընդ ձեռամբ Օսմանեանց նուաճեցաւ Ղրիմ և թուլացեալ անկան վաճառատեղիքն Եւրոպացւոց ի նախկին ճոխութենէն և յիշխանութենէն՝ փոխեցաւ ապա և վիճակ Հայկազանց թերակղզւոյն, յորոց վերայ յարեան հալածանք և նեղութիւնք յերեսաց մահմետական ժողովրդոց և նուազեցաւ գործ վաճառականութեան նոցա։ Յայնժամ գաղթել սկսան Հայք ի Ղրիմէ ի սահմանս Լեհաստանի, ուրանօր հայրենակից եղբարք նոցա, որոց յառաջագոյն գաղթեալ էր անդր՝ վայելէին ի պէսպէս շնորհս և արտօնութիւնս։ **)

Սկիզբն գաղթականութեան Հայոց ի Ռուսաստան եղև յամին 1062, յորժամ մեծի իշխանին Ռուսաց Իզեասլաւի Եարոսլաւովիչի լուեալ զքաջութենէ Հայոց կոչեաց զնոսա ի Ղրիմէ խոստմամբք ի թիկունս իւր ընդդէմ թշնամեաց իւրոց, ազգին Պոլովցւոց։ ***) Եկին Հայք ի կոչն և ապա զետեղ առեալ բնակեցան ի Կիև և ի Կամենից քաղաքս,

---

*) Geschichte des Levantehandels in Mittelalter, v. W. Heyd. Հտ. Բ. յէջս 176, 392։

**) Զկնի նուաճմանն Ղրիմու ընդ իշխանութեամբ Տաճկաց՝ ջանք և քարոզութիւնք Ծաւալչացն Հռովմայ յաղագս Միաբանութեան Հայոց առաւելան յԱժտէր-խան քաղաքի։ (Տես ի մատենի կոմսին Դ. Տոլստոյի, որ անուանեալ կոչի Le Catholicisme Romain en Russie, Հ. Ա. 134—136, 166—172)։ Են աստ տեղեկութիւնք կարի հետաքննականք զքարոզչութեանց Լատինացւոց առ Հայս յԺԷ. դարուն, և զհայթայթանաց նոցա առ պետութիւնն Ռուսաց, զորս խնդրէին Հայք զպաշտպանութիւն եկեղեցւոյ իւրեանց ընդդէմ դաւուց Լատինացւոց։ Զիրացս այսոցիկ գոն տեղեկութիւնք և ի գիրս Մորոշկինի, կոչեցեալ «Յիսուսեանք ի Ռուսաստանի» (Iезуиты въ Россіи). Հտ. Բ. գլ. Ե. 254—288։

***) Պատմագիրն Ռուսաց Կարամզին վկայէ, թէ ի ժամանակս Վլադիմիրայ Մոնոմախի էին ի Կիևի բժիշկք Հայկազունք, ճարտարք արուեստի։ Տես ի պատմութեան նորա Հտ. Դ. գլ. Ե։ Ի Կիևի էր և եկեղեցի Հայոց։ 11 էջ մատենիս։

ձեռնարկեալ զգործ վաճառականութեան, որով ճոխացան և անուանի եղեն։ Համբաւ յաջողուածոց նոցա ժամանեաց յունկն իշխանին Գալիցիոյ Դանիէլի Ռոմանովիչի և որդւոյ նորա Լեւոնի, որք հրաւիրեցին զՀայս գալ և բնակել ի քաղաքին իւրեանց Լվովի։

Ի սկիզբն նորոյ գաղթին ոչ բաւ ամենայնի անդորր և յապահովք էին նորեկ Հայքն Լվովայ, վասն յաճախակի նեղքեն պատերազմաց իշխանացն Գալիցիոյ. իսկ իբրև արքայն Լեհացւոց Մեծն Կազիմիր միաւորեաց ընդ Լեհաստանի զգաւառն Լվովայ՝ ոչ միայն խաղաղացոյց զՀայս ազգի ազգի շնորհօք, այլ և զհետ եղև յամենայն զօրութենէ իւրմէ հրապուրել կոչել ի նորոյ ի սահմանս պետութեան իւրոյ զՀայս, որոց թոյլ ետ բնակել յԼվով, պարապել յարուեստս և ի վաճառականութիւն. ետ նոցա արտօնութիւնս առնելոյ դատաստան օրինօք և սովորութեամբք իւրեանց ըստ մեծի մասին, այլ և ազատութեան կրօնից, զի դաւանութեամբ և ծիսիւք իւրեանց վարեսցին համարձակ։ Արտօնութիւնքս այսոքիկ եղեն վէմ անկեան, յորոյ վերայ հիմնեալ կառուցան յետոյ ժամանակաւ իրաւունք ինքնագլուխ վարչութեան ժողովրդեանն Հայոց Լվովայ։

Ընդ հուպ ծանեան զբարելաւ վիճակէ նոցա հայրենակիցք նոցա, որ բնակեալ էին ի Հայաստան աշխարհի և նեղեալ տառապէին յերեսաց արշաւանաց բարբարոս ազգաց և մանաւանդ ջոլրոցն Լէնկ-Թիմուրի. վասն որոյ և հատուած կարի բազմաթիւ ելանէր անտի ի Հայոց աշխարհէն և գրոհ տուեալ գնայր ի Լեհաստան ի սկիզբն ԺԵ. դարուն, զերծեալք ի տագնապէն, որովք լցեալ էր ի ժամանակին աշխարհն մեր բնիկ, հաղորդ լինել բարեբաստիկ վիճակին ընդ իշխանութեամբ քրիստոնեայ արքային։

Ի վերջ կոյս նորին դարու ժամանէին ի Լեհաստան և սփռէին ի սահմանս պետութեանն գաղթականութիւնք Հայոց նորանորք յոգնաթիւք, որք եկին ի Խրիմէ, յետ նուաճելոյ թերակղզւոյն ընդ ձեռամբ Օսմանեանց, որպէս յիշատակեցաք վերագոյն անդր։

Զսոսա ամենեսին զգուէին փաղաքշէին արքայք Լեհա-

ցւոց, զփորձ առեալ զՀաւատարմութեան նոցա և զճարտարութեան յարուեստս և ի վաճառականութիւն: Տային նոցա զիւրութիւնս ազգի ազգիս յիւր կրօնից, դատաստանաց և վաճառականութեան, որպէս զի բարգաւաճեսցին նոքա օր ըստ օրէ և ծաղկեցուցեալ բարգաւաճեսցեն և զաշխարհն ընդ իւրեանս: Յամի տեառն 1402 թոյլ ետ նոցա արքայն Վլադիսլաւ Ե. պարապել ի վաճառականութիւն անխափան ի բովանդակ պետութեանն առՀասարակ. իսկ արքայն Վլադիսլաւ Դ. յամին 1641 ազատս կացոյց զնոսա ամենեւին ի տուրց և ի մաքսից վաճառաց նոցա:

Եւ արդարև Հաստատեցան բնակեցան Հայք յաշխարհին Լեհացւոց, առաւելեալք օր ըստ օրէ ի ճոխութիւնս, ի պատիւս և ի շնորհս, սիրեցեալք յարքայից և ի ժողովրդենէն, և ձեռն արկին ի գործ վաճառականութեան, յորում Հանդիսի անուանի եղեն յոյժ: Տուրևառս առնէին նոքա մեծաւ մասամբ ընդ աշխարհս արտաքոյ սաՀմանաց պետութեանն և մանաւանդ ընդ արևելս, որոց նիւթք վաճառաց էին, թող զբազում այլ ինչ՝ կերպասք ի մետաքսէ և ի բըրդոյ, մորթք գործեալք և զէնք: Նոքաւք ի նոցանէ փարթամեցան ընչիւք և ստացուածովք յոյժ յոյժ, մինչև դէպ լինել նոցա քանիցս անգամ գանձու իւրեանց օժանդակել արքայից Լեհացւոց ի նեղութիւնս և ի զինուածս անՀնարինս: Յոգունք ի նոցանէ նուիրեցին արծաթ յոլով վասն Հասարակաց պիտոյից: Արք միանգամ ի նոցանէ այր առՀմիկք էին՝ մտանէին ի կարգ զինուորութեան Լեհացւոց և յայլ պաշտամունս պետութեանն, և յամենայն ասպարէզս երևելի եղեն և անուն լաւութեան ժառանգեցին, ոչ դուզնաքեայ վաստակելով վաստակս յօգուտ արքայութեանն ի բազում զինուածս: Ոմանք աստ յանուանէ կոչել զարմն տոհմաւորս գաղթականութեանցն Հայոց ի Լեհաստանի. տեղեկութիւնք զնոցանէ Հանգամանօրէն կարգեալ կան ի մատենին Սադովկոյ Բարոնչի, որ անուանեալ կոչի Վարք երևելի Հայկազանց Լեհաստանի, ուստի մարթ է Հետաքննին ընթերցողացն լնուլ զպակասորդն աստ բանից մերոց:

Թէպէտ և ի մասին ազատութեան կրօնից և գործոց

վաճառականութեան նոցին իսկ արքայք Լեհացւոց ինքնաբերաբար շնորհէին Հայոց արտօնութիւնս և դիւրութիւնս՝ այլ ոչ ըստ այսմ յիշատակի դիւրին եղև Հայոց ընդունիլ ի նոցանէ և զիրաւունս դատաստանի ըստ օրինաց և սովորութեանց իւրեանց ի ձեռն բնիկ դատաւորաց. քանզի գերմանացի ժողովուրդն Իլվովայ, որոց էին արդէն սահմանադրութիւնք և օրէնք ինքնագլուխ վարչութեան, անուանեալ օրէնք Մագդեբուրգի՝ ջանային, զի և Հայք, համակ որպէս և այլ ժողովուրդք Իլվովայ՝ նովին օրինօքն վարեսցին: Եւ քանզի ոչ հաւանէին Հայք նուաճիլ ընդ օրինօքն և դատիլ ի ձեռն վոյթի և դատաւորաց քաղաքին, այլ կամէին զառանձինն իւրեանց վոյթ և դատաւորս հայկազունս, որք դատիցին զնոսա ըստ վաղեմի օրինաց և սովորութեանց Հայոց՝ վասն այսորիկ ընդ երկար մաքառեցան ընդ Գերմանացիս Իլվովայ, զորս երբեմն երկուս, և բազում անգամ բողոքելով խնդրեցին յարքայից Լեհացւոց և զայս շնորհ առնել նոցա: Եւ զխնդրեալն իւրեանց ընկալան ուրեմն, բայց ոչ զամենայնն ի միասին և ոչ ի սուղ ժամանակի: Յամի տեառն 1469 արքայն Կազիմիր Դ. ետ վճիռ, զի դատեսցին Հայք ի ձեռն վոյթի քաղաքին, այլ զի անշուշտ առաջիկայ գացին դատաստանին և դատաւորք Հայոց: Յետոյ ժամանակաւ, յամին 1476, 1510 և 1518 արքունի հրովարտակօք հրամայեցաւ, զի յորժամ դատաստանք լիցին վասն անշարժական ընչից կամ բռնաբարութեանց, վասն սպանութեան կամ վիրաց կամ գողութեանց՝ դատեսցին յայնժամ Հայք ի ձեռն վոյթի և դատաւորաց (Schoeffe) քաղաքին, իսկ յայլ ամենայն գործս փաստուց դատեսցի զնոսա նոյն վոյթ քաղաքին հանդերձ հայկազն դատաւորօք ըստ օրինաց և սովորութեանց Հայոց:

Յամի տեառն 1518, քանզի տրտնջեցին անդրէն Հայք զվճռոյդ առ արքայն Սիգիզմունդ Ա՝ հրաման ետ սա նոցա թարգմանել ի լեզու Ռութենաց կամ ի Լատինացւոց և առաջի առնել նմա զօրէնս իւրեանց վաղեմիս ի քննութիւն, զորս ոչ իմանային վոյթք և դատաւորք քաղաքին Իլվովացւոց: Եւ արարին Հայք ըստ հրամանի արքային և ի միասին

ամին, որ էր 1519-րդ՝ ցուցին նմա զԹարգմանուԹիւն օրինաց իւրեանց, զորս վաւերացոյց արքայն Սիգիզմունդ Հանդերձ ինչ ինչ փոփոխուԹեամբք աննշանիւք: Այս դատաստանագիրք Հայոց բովանդակեն զլուխս 124 գլխաւորաց և զդատաստանաց քաղաքային և քրէական գործոց, ունելով Համառօտս ի Հնոց և ի նորոց Կանոնագրաց, այլ և մասունս սաՀմանադրուԹեանց օրինացն Գերմանացւոց: *) Յաւել ուրեմն յամին 1549 արքայն Սիգիզմունդ Օգոստոս եւ Հրովարտակ, որով արգելոյր առՀասարակ ամենայն ատեան իշխանաւորի Իլվովայ քաղաքին, զի մի արասցէ դատ և դատաստան Հայոց, որք դատիցին միայն ի ձեռն վոյԹին և դատաւորաց իւրեանց, զորս նոքին իսկ ընտրեսցեն: Յայսմ Հրովարտակի գրեալ են իսկ և իսկ բանքդ Հետագայք. Verum omnes et singulas eorum causas et negotia... ad judicium ipsum Armenicum remittant et eos impetere non presumant: (Յամենայն դատաստանս նոցա և ի գործս առանձնականս վճիռ Հատցեն դատաւորք Հայոց. և մի ոք արգել արասցէ նոցա (Հայոց) զիմել առ նոսա»: Հրովարտակաւ այսուիկ ընկալան Հայք զիրաւունս առնելոյ զդատաստանս իւրեանց լինելն անկախօրէն ի ձեռն վոյԹի և դատաւորաց իւրեանց երկոտասանից, որք ընտ-

---

*) Զդատաստանագիրս Հայոց Իլվովայ ի լեզու Լատինացւոց՝ Հրատարակեաց Փ. Բիշոֆ ի Վիեննայ յամին 1862. (ի Sitzungsberichte der kaiserlichen Akademie der Wissenschaften, XL. Band. II. Heft. Iuli) յորս յառաջաբանին դրէ Հակիրճ տեղեկուԹիւնս զձեռագրաց դատաստանագրացն, յորոց պատուականագոյնն ի Հայ և ի լատին լեզուս վաւերացեալն ձեռամբ Սիգիզմունդի արքային՝ պաՀի առ կոմսին Տիտոսի Ձեալինսկւոյ: Են և այլ երկու օրինակք Համառօտ լատիներէն, յորոց մին պաՀի ի դիւանի Իլվովայ քաղաքին և միւսն ի մատենադարանի Համալսարանին նորին քաղաքի: Գտանին և տասն չափ օրինակք լեՀացի ԹարգմանուԹեան դատաստանագրոցն, որ արարաւ յամի տեառն 1601 Հրամանաւ դատաւորաց Իլվովայ: Իսկ վասն ԹարգմանուԹեան գրոցն ի լեզու Թաթարաց, ըստ վկայուԹեան Բիշոֆի՝ չեն ուրեք յիշատակուԹիւնք: — Յառաջնում Հատորի «Վաղեմի Մատենադարանի պատմագրաց ԼեՀացւոց» (Հրատարակեալն ի Վարշաւա յամին 1843 ի ձեռն Կ. Վ. Վոյցիցկեայ) եդեալ է Հրովարտակն արքային Սիգիզմունդի Առաջնոյ վասն Թարգմանելոյ ի լատին լեզու զդատաստանագիրս Հայոց. այնպէս և կարգեալ է լեՀացի ԹարգմանուԹիւն դատաստանագրոցն ըստ կարգի յօդուածոց: — Զդատաստանագրոցս ընդարձակօրէն պատմէ Հանգուցեալ Հայրն Վ. Բաստամեանց ի Յառաջաբանին իւրում «Դատաստանագրոց ՄխիԹար Գօշի» և զայս ինչ ասացուցանէ, Թէ այս Դատաստանագիրք լեՀ քաղուածոյք իցեն ի Դատաստանագրոյ ՄխիԹարայ Գօշի: Տե՛ս ի «Փորձ» ամսագրի 1879 ամի, Թ. Զ. Յունիս

րէին ի ժողովրդենէն ամի ամի ի գլուխ նորոյ տարւոյն, յետ որոց պատարագին և ապա տային երդումն հանդիսաւոր, թէ հաւատարիմք լիցին արքային։ Յետ այսր ամենայնի արքայն Ստեփանոս Բատորի յամին 1578 ամենևին ընդարձակեաց և հաստատեաց զիրաւունս Հայոց ի մասին դատաստանի ընդ այլոց ժողովրդոց Իլվովայ, եթէ զոյին ինչ խնդիրք. այլ և վաւերացոյց զամենայն արտօնութիւնս առհասարակ, շնորհեալս Հայոց յառաջնոց թագաւորացն յայլ և այլ ժամանակս, մինչ զի ըստ ինչ ինչ մասանց, մանաւանդ ի գործի վաճառականութեան, զիւրազգն ևս եղև վիճակ Հայոց քան զնոցին իսկ Լեհացւոց կամ Գերմանացւոց. և յաջորդք արքային Բատորեայ բազում անգամ վաւերացուցանէին և ևս ընդարձակէին զշնորհս և զարտօնութիւնս Հայոց, յորս երևելի է արքայն Յովհաննէս Գ. Սոբեսկի։

Հանգոյն յիշատակաւ և որք բնակեալն էին արտաքոյ Իլվովայ Հայք՝ յաւելան օր քան զօր ի շնորհս և յարտօնութիւնս յարքայից Լեհացւոց, նա մանաւանդ Հայկազունք Կամենից քաղաքին Պոդոլեկի, որք ընկալան գրեա թէ զմի և զնոյն ազատութիւն ինքնագլուխ վարչութեան և դատաստանաց և շնորհս ի գործի վաճառականութեան՝ որպէս և Հայքն Իլվովայ, ունելով միայն դատաւորս չորս փոխանակ երկոտասանից։

Վիճակ կամ թեմ Հայոց Լեհաստանի զառաջինն հաստատեցաւ յԻլվով քաղաքի յամի Տեառն 1364 հրամանաւ Մայր Աթոռոյն Ս. Էջմիածնի. և յառաջնորդութիւն վիճակին ընտրեցաւ նախ եպիսկոպոսն Գրիգոր ի ձեռն Մեսրովպայ կաթողիկոսին, և ընկալաւ հրաման ի Վլադիսլաւայ Ե. արքայէն՝ բնակել յԻլվով քաղաքի։ Արքեպիսկոպոսքն Հայոց Լեհաստանի հպատակէին միշտ Արարատեան Ս. Աթոռոյն և ըստ վաղեմի առաքելական աւանդութեանն, որ պահեցաւ յեկեղեցւոջ մերում՝ խնամէին և վարէին զգործս եկեղեցեաց միաբանութեամբ և գործակցութեամբ հօտին։ Իշխանութիւն արքեպիսկոպոսացն այնոցիկ ոչ միայն ի համօրէն Հայս Լեհաստանի ծաւալէր, այլ և ի վերայ այնոցիկ, որ բնակեալ էին ի Վլախիայ։ Նմին վեց ի տարւոջ կէին

առաջնորդքն յԼվով քաղաքի և զմիւս կնատեղեայն՝ ի Կամենից, որ երկրորդ քաղաք կարևոր էր ի Թեմի նորա։ Նիկոլ Թորոսովիչ տասներորդ էր ի թիւս առաջնորդաց Հայոց Լեհաստանի։

Ի սկզբանէ անտի գաղթականութեան ի կէս արևմտեան Հայկազունք զլեզուն Հայոց, զՄնացյն իւրեանց բարբառ. իսկ յորժ գաղթել սկսան անդր ի ԺԴ. և ի ԺԵ. դարս Հայք յԱժդէրխանէ, ի Ղրիմ և ի Կիլիկիոյ (յետ բառնալոյ թագաւորութեանն Ռուբինեանց)՝ մուծան ի խօսս նոցա լեզուն Թաթարաց և այնպէս ձևացեալ յընդհանուրս՝ զի յայն լեզու թարգմանեցին Հայք մասունս ինչ իւրեանց եկեղեցականս և աղօթս ինչ. նովին լեզուաւ վարէին և յարձանագրութիւնս դատաստանաց և դաշանց դատաւորքն Հայոց Լըվովյ։ Այլ յԺԷ. դարէն հետէ և այսր եմուտ ի նոսա կիրառութիւն լեհացի լեզուին, յոր լեզու թարգմանեցին և զդատաստանագիրս իւրեանց։

Դ

Ի սկիզբն ԺԷ. դարուն ազնուլի իմն ընծայեցուցանէր պատկեր վիճակ Մեծին Հայոց, որ տեսարան լեալ էր անընդհատ պատերազմաց Տաճկաց և Պարսից։ Շահ Աբաս եդեալ էր ի մտի աւեր և անապատ կացուցանել զմարզս աշխարհիս մերոյ, որ սահմանակիցքն էին պետութեանն Օսմանեանց, առ ի զգէմ ունելոյ զարշաւանաց նոցա. վասն այսորիկ բռնի վարէր զՀայկազունս բնակիչս Արարատեան գաւառին ի Պարս և կամէր իսկ քակել զՍ. տաճարն Էջմիածնի և տարեալ զքարինս ի Սպահան՝ անդ վերաշինել Էջմիածին նոր, որպէս զի կամակար յօժարութեամբ լքանիցեն Հայք զՀայրենի աշխարհն և գաղթեսցեն ի Պարսկաստան ի սէր տաճարին իւրեանց։

Յայսմ միջոցի թշուառութեանց Հայկազունք Լեհաստանի, որպէս տեսաք ի վեր անդր՝ բարգաւաճեալք հանգստանային քան զամենայն հայրենակիցս իւրեանց ի ճոխութիւնս և ի բարեբաստիկ խաղաղաւէտ անդորրութեան բարե-

կեցինք. առ նոսա գային զունդագունդ ի Հայաստան աշխարհէ, իբրև ի գաւառ անբոյթ ապաստանի, ամենքեան որ նեղեալք էին և կարօտեալք: Առ նոսա գնաց և կաթողիկոսն Հայոց Մելքիսեդեկ, գաստապարեալն ի մահ ի քանի մի նուագս և ազրեալն մաղապուրծ, որպէս զի ժողովեսցէ նուէրս ի մեծատանց Հայոց անդւոյն և հաստատեսցէ զպարտսն, ընդ որում կայր նեղեալ մայր Աթոռն Էջմիածին և տառապէր կաթողիկոսն: Այսու պարագայիւ, գէթ ըստ մասին, մարթ է բացատրել զպատճառս թուլութեան նորա, որ հաճեցաւ ձեռնադրել զՆիկոլ յեպիսկոպոսութիւն Իլվովեցւոց ընդդէմ բողոքմանց ժողովրդեանն վասն առատ ընծայից Նիկոլին, առ որով և նորին իսկ աջակցութեամբ ածան բռնաբար Հայկազունք Լեհաստանի ի Միութիւնն ընդ եկեղեցւոյն Հռովմայ: *)

## Ե

Մինչև ցայսօր ժամանակի չէին առ մեզ լոյս տեղեկութիւնք զթշուառ միութենէն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ: Բայց եթէ զոր ինչ գրէ Առաքել վարդապետ Դաւրիժեցի ի Պատմութեան իւրում (գլուխ ԻԸ.) յաղագս վշտաց և տառապանաց, որք ժամանեցին ի Հայս Իլվովայ յերեսաց Նիկոլի՝ այն ամենայն սկիզբն է երկանց: Պատմութիւնն Առաքելի դադար առնու ի թուականութեանս մերում ՌՃԹ (1660), երդմնադրաւ դաշինն Նիկոլի ընդ կաթողիկոսին Փիլիպպոսի և հաշտութեամբ նորա ընդ հօտին իւրում. այն ինչ սկիզբն դարձին հարկ է համարել զամն 1662, յորում ժամանակի բերան Հայկազունքն Իլվովայ խնդրել ի Նուիրակէ պապին վարդապետս իւրեանց Լատինացիս, կամ լաւ ևս զամն 1664, յորում ամի ժա-

*) Յամին 1629—1630 համբաւաւոր քարոզիչն ի կարգէն Յիսուսեանց Մաւթէոս Բէմար ևս գաւառքինն փորձեաց փորձ դարձուցանելոյ զհայկազունս Ռուսաստանի ի կաթոլիկութիւն ի ձեռն երկպառակութեանց, որովք կամէր անջատել ի միմեանց զժողովուրդն և զհովիւս նորա և ի ձեռն ազգի ազգի խոստմանց պատրուակելոյ: Այլ ապարդիւն եղեն ջանք նորա: Տես Le Catholicisme Romain en Russie. Հ. Բ. եր. 47.

մանկըն յԻլվով քարոզիչքն Լատինացւոց, պատրուակօք ուսուցանելոյ զմանկունս Հայոց։ Մասնաւորքն երկու, որ զերացս ճառեն, այն է «Նիկոլ կամ Հայոց ազգի կրած տարաբաղդութիւնքը Լեհաստանի մէջ» Ս. Պետերբուրգ 1864 (Հ. Գ. Պատկանեանց,) և «Նիկոլ եպիսկոպոս և Պատմութիւն դարձին Հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն» Վաղարշապատ 1877 Գարեգին արքեպիսկոպոսի Սրվանձտեանց՝ առեալ ունին իւրեանց զկիշտատեալ պատմութիւնն Նառաքելի, զոր յեղյեղեն արդդ հեղինակքն հանդերձ խորհրդածութեամբք և դատողութեամբք։ Զնոյն բան հարկ է ասել և վասն կարճառօտ յիշատակութեանց Դարձին, որ երևին ուրեք ուրեք ի գիրս Հ. Մխիթարեանց Վենետկոյ և Վիէննայի և ի հանդէսս մեր, որք ամենքեն թերի են և համառօտք, քանզի քաղեալ են մեծաւ մասամբ ի պատմութենէն Նառաքելի։

Վասն այսորիկ կարի օգտակար համարեցաք յաւելուլ ի գանձանակ դպրութեանս մերոյ զհայացի թարգմանութիւն տաղջեկայ Յիշատակարանացս, որք բովանդակեն զհանգամանօրէն պատմութիւն չարաչար անցից Դարձին, սկսեալ յամէն 1662 մինչև ցամն 1677, որոց հեղինակք են նորին իսկ քարոզիչքն Լատինացիք, որք մասնակիցք եղեն անօրէն գործոյն Միութեան Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ։

Ընագիրք Յիշատակարանացս, գրեալ ի լեզուս Իտալացւոց և Լատինացւոց չև ևս են ընծայեալ ի լոյս, որպէս և բազում շարագրածք զանցիցն և զվիճակէ Հայոց Լեհաստանեայց. այլ յամին 1876 ուսուցչապետն Եգոր Պավինսկի հրատարակեաց ի Վարշաւի լեհացի թարգմանութիւն սոցին յերկրորդի հատորի իւրոց «Նիւթոց Պատմութեան»։

Ըստ այսմ լեհացի թարգմանութեան արարաւ և թարգմանութիւնս այս հայկական ի ձեռն Ս. Մալխասեանց, տառաջարկելով մերով և վերակացութեամբ, ի գրոց լեզու, որպէս զի իմանալի լիցի առ հասարակ ամենայն բանասիրաց, մերոց և օտարաց, յորում վայրի կամ յորում ժամանակի և կեցցէն։

Եւ զայս ինչ ունէաք ի մտի՝ զի գիտասցես, որ յաջողութիւն է ողբալից քրիստոնէականաց պատմութեան մերոյ և լուացուցիչ պատմագրաց մերոց նախնեաց՝ նովին լեզուաւն, որպէս նոցայն է՝ ընծայեցուք բանասիրաց և յուսումնասիրութիւն ապառնի ժամանակաց։

Հեղինակ առաջնոյ մասինն պատմութեանս է Հ. Ալոյսիոս Պիդու, գաղղիացի ազգաւ, կրօնաւոր կարգին Թէատինեանց, որոյ Յիշատակարան, գրեալ ի լեզու Իտալացւոց զայսպիսի ունի վերնագիր. «Breve relatione dello stato, principii e progressi della missione apostolica agli Armeni di Polonia e Walachia e provincie circonvicine e dell' erettione e fondatione del collegio pontificio di Leopoli per la medesima natione Armena sotto la cura de pp. chierici regolari detti volgarmente Teatini, sin al I° aprile 1669. per il padre d. Luigi Maria Pidou C. R. superiore delle detta missione e collegio.

Իսկ երկրորդի մասին պատմութեանս գրեալ ի Լատինացի լեզու, որ անուանեալ կոչի Compendiosa relatio unionis nationis Armeno-Polonae cum s. ecclesia Romana ad annum Christi 1676»՝ անծանօթ է հեղինակն. այլ թուի թէ անձն կարի մտերիմ լեալ իցէ առաքելութեանն կամ մի ոմն յանդամոց նորա, զի յոյժ հմուտ է ամենայն անցից Միաբանութեանն, զոր համառօտօրէն և ոճով իմն պատմէ։

Երկոքին հեղինակքն սկիզբն առնեն Յիշատակարանաց իւրեանց ինչ ինչ տեղեկութեամբք ի վերայ վաղեմի քաղաքական վիճակի Հայոց և առաւելապէս ի վերայ պատմութեան եկեղեցւոյն մերոյ. այլ տեղեկութիւնքդ սոքա են մեծաւ մասամբն կամ թիւրեալք, մանաւանդ յորժամ բանք լինին զեկեղեցական ժողովոց մերոց և զախտաւոր արանց յուխտէ եկեղեցւոյ. իբր զի հերետիկոս կոչեն զերանելի ախոյեանս առաքելական եկեղեցւոյս մերոյ, զորոյ զդաւանութիւնն պահեցին սրբութեամբ (Յովհան Օձնեցի, Գրիգոր Տաթևացի և այլն.) և ուղղափառս անուանեն զայնոսիկ, որք բառ թիւր քաղաքականութեան կամ առ փառասիրութեան իւրեանց թուլացեալք իցեն ի միաբանութիւն ընդ Հռոմայ ի ժամանա-

կին, յորժամ ի Սիս քաղաքի էր աթոռ կաթողիկոսութեան Հայոց։ Այլ մեք զանց արարաք հերքել զայսպիսի բանս հայհոյութեանց վարկպարազիս, որք իմացեալ լինին յընթերցողաց մատենիս։ Բայց են և տեղեկութիւնք հետաքննականք զվիճակէ Հայոց Խրիմու, Վլախիոյ, Ուկրայնի, Պոդոլիոյ և Լեհաստանի, զթուոյ եկեղեցեաց, վանօրէից և եկեղեցականաց և ժողովրդեան Հայոց ի քաղաքս քաղաքս։ Յիշատակին և սովորութիւնք ինչ որ պահեալ էին առ ժողովրդեանն, որպէս են Մատաղն կամ Զոհ, Նարօտն և Հմայիլ։

Քանզի հեղինակք Յիշատակարանացս հակիրճ բանիւք պատմեն զանցս Հայոց Խրիմոյ և զառապանս նոցա յերեսաց Նիկոլի և Յիսուսեանց, որք պատահեցին յառաջ քան զամն 1662, վասն այսորիկ դնի այս ներածութեան եդաք զբովանդակ զլուխն ԽԲ. պատմութեան Առաքելի Դաւրիժեցւոյ, *) որ ստուգապատում բանիւ համառօտօրէն ճառէ զնեղութեանցն և զվշտաց, սկսեալ յեպիսկոպոսանալոյն Նիկոլի մինչև ցամն 1660, և զլխաւորէ իմն զբովանդակութիւն պատմութեան աղետալի դարձին։

Պատշաճ թուի մեզ կարգել աստանօր զբովանդակութիւն Յիշատակարանացս, համառօտեալ ի նոցունց զպատմութիւն Միութեանն, որով դիւրին եւս լիցի ընթերցողացն վերահասու լինել չարայարութեան անցիցն, որք տրոհեալ են յերկոսին գիրս և անջատ անջատ պատմին։

## Գ

Յամի Տեառն 1623 վախճանեցաւ առաջնորդն Հայոց Լեհաստանի արքեպիսկոպոսն Մեսրովպ։ Եւ իբրև հակաճառութիւնք լինէին ի ժողովրդեանն յաղագս ընտրութեան նորոյ եպիսկոպոսի ի յաջորդութիւն վախճանելոյն՝ գայր հասանէր յԼվով կաթողիկոսն Հայոց Մելքիսեդեկ ի պէտս

*) Ի տպագիր օրինակէն Ամստերդամի, ուղղագրեալ ըստ ձեռագիր օրինակին Առաքել վարդապետի, որ պահի ի Մատենադարանի Մայր Աթոռոյն Ս. Էջմիածնի։

նուիրուց։ *) Զայնու ժամանակաւ թեկն ածէր զաթոռոյ արքեպիսկոպոսութեանն Իլվովայ և կրօնաւոր ոմն Հայազն Նիկողայոս անուն կամ Նիկոլ Թորոսովիչ կոչեցեալ, պատանի 22-ց ամաց, որ թէպէտ և «համբաւեալ էր յանդուգն գոռոզութեամբ և բարկացոտ վարուք» (էջ 154), այլ մեծամեծ ընծայիւք և պատարագօք և միջնորդութեամբ արանց ոմանց հաւատարմաց իւրոց գողացաւ զձեռս կաթողիկոսին, որոյ աչառեալ բազմութեան զանձուն և ոչ անսացեալ տրտնջանաց և բողոքոց ժողովրդեանն Հայոց՝ ձեռնադրեաց զնա եպիսկոպոս գաղթականաց Լեհաստանի, և սպառնալեօք նզովից բռնադատեաց զՀայս ի հնազանդութիւն նմա։ **)

Թէպէտև ընկալան Հայք զՆիկոլ առ ահի բռնադատանաց կաթողիկոսին՝ այլ ընդ հուպ յարեան կագքն և խռովութիւնք կործանիչք ընդ նա և ընդ գաւառաւորս Իլվովայ, որք ամս յոլովս ձգեցան և ի կորուստ վարեցին զժողովուրդն։ Եւ այս ամենայնի պատճառք եղեն ինքնահաւանութիւն և աղտեղի վարք և կենցաղ եպիսկոպոսին, որ հեռէր բազմագլխի յորդորանաց գաւառորացն և առ ոտն հարկանէր զիրաւունս նոցա ի գործս եկեղեցեաց, այլև ապերասանութեամբ եղծանէր զկանոնս հայրենի եկեղեցւոյ։ Երբեւ կ՚որի թշնամացեալք էին երկոքին կողմանքն՝ առաքեցաւ

*) Զժամանակ գալստեան կաթողիկոսին Մելքիսեդեկի յԼվով չարագրողն երկրորդի մասին պատմութեանս դնէ զամն 1626։ Թուի թէ այս ժամանակագրութիւն հաստատուն իցէ և Պատմութեան Սամուէլ վարդապետին։—Տես ի հառածի պատմութեանն Սամուէլի ի սորին։

**) Ընդհանուր ամենեքին թուին մեզ բանք Հ.Հ. Պալճեանի և Ըասկարեանի, ի Մխիթ. միաբանից Վիեննայի, որք գրեն զՄելքիսեդեկ կաթողիկոս կաթոլիկ գոլ և ձեռնադրել զՆիկոլ այսու դիտմամբ, զի որպէս զժողովուրդն ի ծոց կաթոլիկ եկեղեցւոյ ... Տես Հ. Գ. Ըասկարեանի «Եկեղեցական Պատմութիւն» էջ 379 և Հ. Ս. Պալճեանի «Պատմութիւն կաթոլիկէ վարդապետութեան ի Հայս» էջ 162։ Զի եթէ գոյր արդարև նաև նշոյլ մի փոքրիկ այսպիսի դիտմանց կաթողիկոսին՝ ապաքէն ոչ վրիպէր այն յաչաց քարոզչացն Լատինացւոց, յօրինողաց զՅիշատակարանս, զոր ականջալուրք էին հանդերձ հրամանօք ձեռնադրութեան Նիկոլի և առաջոյ ունէին զգիւմնն Իլվովայ հանդերձ հրամանօք վարդապետաց թագաւորաց և կենդանեաց կաթողիկոսաց, ուստի և ոչ վրիպէին անշուշտ հրապարակել զփաստն կարևոր, որ ի միջէ կողմանէն ջատագովութիւն իմն էր ... գութեան պայքին և ի միւսմէն՝ հնար կարի յաջող՝ անձկոյ զ... ի Մխիթ...

ուշս ի կաթողիկոսէն Էջմիածնի Մովսիսէ նուիրակն Խաչատուր վարդապետ առ ի ցածուցանել զխռովութիւնս Հնարիւ իւիք և հաշտեցուցանել զհօտն ընդ հովուին։ Նա վայր մի զհետ եղև Նիկոլ բանիւք հրապուրանաց և պատրանօք յիւր կողմն ձգել զնուիրակն, բայց իբրև ետես, թէ ի զուր եղանին ոգնութիւնք նորա, այլ մանաւանդ հանդերձեալ էին զատաւորքն հանդերձ նուիրակաւն կոչել զնա յատեան դատաստանի՝ վասն օծութեան իւրք զանձնէյ չողու ի վանս Կարմելիտեանց բռնանից, զաւանեաց զանձն կաթոլիկ և նմա ընդ իշխանութեամբ պապին։

Ծանուցեալ ժողովրդեանն և զատաւորաց զհամբաւն աղետալի՝ հանդերձ ամենայն ուխտիւ եկեղեցւոյ (բայց ի միջէ քահանայէ) փակ՚ցին անդէն զդրունս տաճարաց առաջի ուրացելոյն և ուխտեցին երդմամբ ի չարչարանս ամենայն գալ մանաւանդ քան ի ծառայութիւն ուրացելոյն Նիկոլի» (էջ 156). բայց նա շուրջ պատեալ ամբոխիւ Լատինացւոց, եկեղեցականաց և աշխարհայնոց, համակ և բազմութեամբ զօրաց, յարեաւ և եկն ի վերայ մայր եկեղեցւոյն, բռնի խորտակեաց զդրունսն և եկ և նստաւ անդրէն յաթոռ իւր։ Նոյին օրինակաւ տիրացաւ նա և այլոց եկեղեցեացն ամենեցուն։ Իսկ ժողովուրդն Հայոց քանզի ունէին յարքայից Լեհացւոց արտօնութիւնս ազատութեան կրօնից՝ վասն այսորիկ զատախազք մտին յատեանս պետութեանն, պահանջելով յարքեպիսկոպոսէն զէթ եկեղեցի մի վասն կատարելոյ զօրէնս աստուածպաշտութեան իւրեանց։ Ծանեան արդարև զատաւորքն Լեհացւոց և արքայն Վլադիսլաւ Դ. զիրաւունս բողոքարկուացն և հրաման ետ եսուն գործակալաց արքունի կատարել զխնդիր նոցա, եթէ խաղաղութեամբ իցէ և եթէ զօրութեամբ զինու։ Այլ ինքն, զի զոր օրինակ առանձնանաց Նիկոլ պատուիրանացն Աստուծոյ և դրժեաց ուխտին իւրում և երդմանցն՝ այնպէս և հրամանացն արքային անտեսեաց. քանզի, բացագանչէ Հ. Պիդու, զրահիւք արդարութեան վառեաց Աստուած զսիրտ նորա» (էջ 231). այլ մեք գիտեմք, թէ ոյք ոմանք էին, որք զրահիւք գաղտագողի հայթայթա-

նաց և ազգայնոց փառէքն զախտ նորա և հզօրացուցանէին զնա յաւէտ, ի մեծագոյն փառս Աստուծոյ։ *)

«Իսկ ժողովուրդն Հայոց, գրէ Տ. Պիզու (էջ 22) անտի և այսր յամառեալ կայ ի հերձուածին և անզօանէ զուգդութիւնն արարողութեանց, և ահա ամք են 26 և աւելի ևս, զի մարտնչի ընդ նմա (իմա ընդ Նիկոլի) սաստիկարար յոյժ, որչափ կար իցէ մարդոյ, ոչ ինչ խնայելով յարծաթ, որպէս զի անանկացան ամենեքեան, որ յառաջագոյն մեծատունքն էին առ հասարակ։

---

*) Տեսցի առ զորբեակ բողոքագրոյն, զոր մատուցին Հայկազունք Իլվովայ առ կաթողիկոսն Ս. Էջմիածնի, ի 25-րդի ամսոյ Յուլիսի 1651 ամի.

...Կաթողիկ եկեղեցականքն Լատինացւոց և ռուսիկանք քաղաքին Իլվովայ ջանային զփականս և զծխնիս եկեղեցւոյն և ի ներքս մուծին զանիծեալն. (յաւ էր եթէ կլեալ էր զմեզ երկիր, քան եթէ տեսանէաք զայդ ծուլութիւն այնպիսի)։ Ձեռնիկոսան ոչ միայն եհան ի մէնջ, ի հարազատ որդւոցս Հայաստանեայց եկեղեցւոյ, համօրէն զեկեղեցիս, որով խափանեաց զկարգս աստուածպաշտութեան, այլ և չայդ իսկ թոյլ թողել զմեռեալս։ Ածի նա զքահանայս մեր, որ հաւատարիմքն իցեն օրինաց մերոց և ոչ կամիցին հնազանդիլ իշխանութեան նորա, զան հարկանէ զնոսա և կապեալս արկանէ ի բանտ և ոչ արձակէ՝ մինչև դարձցին և ընկալցին զԼատինացւոցն զհաւատս։ Եւ ոչ ոք է, որ պաշտպանիցէ զմեզ. քանզի համօրէն իշխանաւորք աշխարհայինք և եկեղեցականք ի կողմն նորա են և մանաւանդ Յիսուսեանք։ Բողոքելով բողոքեցաք մեք առ արքայ. այլ չև է ընկալեալ մեր հրաման յարդարելոյ ատեան հարցափորձից և դատաստանի, և Աստուծոյ է միայն գիտել՝ թէ երբ զայն ընկալցուք։ Եւ եթէ լինիցի իսկ ատեան դատաստանի՝ խիթամք թէ և յայնժամ ոչ գտցէ յերեսն ճշմարտութիւնն. քանզի որ ի Վարշաւայ նստի նուիրակն և այլ եկեղեցականք Լատինացւոց և առաւել ևս Յիսուսեանք յամենայն գործեն իւրեանց պաշտպանեն անիծեալ եպիս-

Իբրև ծանեան Հայք, թէ կարի դժուարին է նոցա մաքառիլ ընդ Նիկոլի, որում պաշտպանէին բանիւ և գործով արքունիք հանդերձ թագուհեաւն Մարեմաւ Լուդովիկէիւ, եկեղեցականք Լատինացւոց, Յիսուսեանք և մանաւանդ ժողովն Տարածման Հաւատոյ, (Congr. de Propaganda fide) խորհեցան յայնժամ կռուել ընդ նմա նովին զինու, որով նայն զնոսա յաղթահարէր, ուստի խնդրեցին գտին ի ձեռագիր մաշտոցի ուրեք զաւանութիւն հին եկեղեցւոյն Հայոց, յորում գրեալ էր, թէ ընդունին Հայք զնախերիցութիւն պապին և զեօթանեսին ժողովսն զառաջինս. և զայս գիր զաւանութեան առաջի արարին արքային, առ ի ցուցանել, թէ միաբանք են նոքա ընդ եկեղեցւոյն Հռովմայ: Բայց արքայն պահանջեաց, զի առ մեծագոյն ևս հաստատութեան՝

---

կոպոսին: Զոգալ մեք և առ նուիրակին և բողոք բարձալ ընդդէմ բռնութեանցս այսոցիկ. այլ նա արար մեզ պատասխանի, թէ չեն կարեւոր իրքն. զի որպէս, ասաց, մկրտութեամբ աւազանին քաւեցան մեղքն նախկին՝ այսպէս և գործք եպիսկոպոսին Թորոսովիչի թողան նմա յորէն, յորմէ հետէ ընկալաւ նա զմիութիւնն ընդ Ս. Կաթողիկէ եկեղեցւոյն Հռովմայ: Յորժամ խնդրեցաք, զի մեզ, որ քրիստոնեայքս եմք՝ տացի գէթ մին յեկեղեցեացն՝ ոչ հաւանեցաւ ընդ այս խնդիր մեր արքայն և ոչ նուիրակն և ոչ քահանայք Լատինացւոց, ինկրքս ածելով կանոնս հռովմէական՝ թէ ամենայն եկեղեցիք հնազանդին եպիսկոպոսին, որպէս իշխանաւորին իւրեանց: Միով ասել բանիւ՝ վարին ընդ մեզ ըստ ամենայնի՝ զոր օրինակ առ աչօք մերովք ընդ եկեղեցւոյն Յունաց վարեցան, որ ի քսան ամաց հետէ ի զուր ճգնի իրաւունս գտանել: Եւ զայս ամենայն առնեն, որպէս զի տկարասցուք տակաւ ի զօրութենէ և հաճեսցուք ուր ուրեմն մտանել ի միութիւնն: Տես ի Catholicisme Romain en Russie, Դ. Տոլստոյի, հատ. Բ. յէջն 49: Հեղինակն հանեալ է զպատճէն բողոքագրոյս այսորիկ ի մատենէն Wiadomosc o Ormianach w Polszcze. Lwow, 1842.

վաւերացուցէ զթուղթն ինքն կաթողիկոսն Էջմիածնի։ Յայնժամ կազմեցան և մեկնեցան արք երևելիք պատգամաւորք Հայոց հանդերձ թղթովն առ կաթողիկոսն Փիլիպպոս, որոյ ի դարձին իւրում յԵրուսաղեմէ զանզի առեալ կայր ի Կ. Պոլիս քաղաքի։ Զհետ նորա փութացաւ անդր և Նիկոլ եպիսկոպոս, թուի թէ վասն խափանելոյ զվաւերացումն թըղթոյն դաւանութեանն։ (Քանզի եթէ յաջողէին Հայք ի ձեռն դաւանութեանն կաթոլիկս ընծայեցուցանել զանձինս՝ հաւատարեալ ապա ընդ նմա ի հաւատոյն՝ յաղթահարէին զնա անշուշտ իրաւամբք և արտօնութեամբք իւրեանց։ Տես յէջս 158—159 մատենիս։)

Պատմի, թէ վաւերացուցեալ իցէ կաթողիկոսին Փիլիպպոսի զառաջարկեալն թուղթ դաւանութեան. բայց իբրև ժամանեաց Նիկոլ ի Կ. Պոլիս և զղջացեալ ի վերայ ուրացութեան իւրոյ առաջի կաթողիկոսին հրաժարեցաւ ի դաւանութենէ կաթոլիկաց՝ ջնջել հրամայեաց յայնժամ կաթողիկոսն զթուղթն դաւանութեան և ետ Նիկոլի թուղթս օրհնութեան և կոնդակս, որովք դարձաւ Նիկոլ յԼվով առ ժողովուրդն՝ որ խնդութեամբ ընկալան զնա, իրազեկ լեալ դարձի նորա ի հաւատս հայրենի։ Յայնժամ հաստատեաց անդրէն Նիկոլ զկարգ և զբարեկարգութիւն յեկեղեցիս Հայոց ըստ ամենայնի, զոր օրինակ էին յառաջ քան զմիաբանելն իւր ընդ կաթոլիկս. բայց միայն արտաքին ձևովք ինչ ջանայր պատրել զԼատինացիս, անգէտս լեզուին Հայոց, թէ արդեամբ միաբանեալ իցէ Միութիւնն յեկեղեցիս Հայոց։ Վասն պատիր Միութեանս, որ եղև յամի Տեառն 1652՝ հաստատեաց Նիկոլ տօն յիշատակի ամի ամի։— Նոր զկայ առնու պատմութիւն Նորքիկի վարդապետին։

Թէպէտ և ի հոգևորին խաղաղեցաւ այսպէս ժողովուրդն՝ այլ յար տրտնջէր զՆիկոլէ վասն աղտեղի բարուց նորա, որ ունէր առ իւր տարփածու կին, յորմէ և որդիք ծնեալ էին նորա, վասն անառակութեանցն, կաշառառութեանցն, բռնութեանցն և կողոպտելոյ զեկեղեցիս, «որովք մերթ էր կազմել հատոր մի ստուար գործոց դատաստանի» (էջ 29)։ Վասն այսորիկ իբրև եկն յԼվով նուիրակ պապին Պիդնատելլի յամին

1662՝ բողոքեցին առ նա Հայք զարքեպիսկոպոսէն իւրեանց և խնդրեցին բառնալ զչարն ի միջոյ հնարիւք իւիք։ Այսու պատճառանօք միջամուխ եղև Պիգնատելլի և ի գործս եկեղեցւոյ, քննեաց և վերահասու եղև, թէ առ վերին երեսս և եթ է Միութիւնն հրապարակաւ։ Յորդոր սկսաւ լինել առ արքեպիսկոպոսին և գաւառորդն Հայոց, զի խնդրեսցեն ի Ժողովոյն Տարածման Հաւատոյ վարդապետ իւրեանց զերոնաւորն կարգին Թէատինեանց զՎինչենցիոս Գալանոս, ընդանծացեալն առ Հայս երևելի երկօքն իւրովք ի մասին աստուածաբանութեան, գրելովք ի լեզուս Լատինացւոց և Հայոց, որպէս զի ուսուսցէ նա զմանկունս նոցա զբնիկ լեզուն նոցա զհայերէնն։ Ընդ այս առաջարկութիւն նորա կամա կամ յակամայից հաւանեցան Հայք. իսկ Նիկոլ խոստացաւ եւս տալ տուն ի պէտս բնակարանի դպրանոցին, մանաւանդ եթէ կարգեսցէ նմա Ժողովն ռոճիկ տարեկան։ Իսկ Ժողովոյն, որ այժմ և եթ փափագէր՝ խնդրութեամբ ընկալեալ զխնդիր Հայոց՝ յամին 1663 առաքեաց ի Լեհաստան զԳալանոսն հանդերձ Հ. Եղիսէիւ Պիդու և աշակերտաւ միով, որոց ձմերեալ ի Միւնխէն քաղաքի՝ յամսեանն Ապրիլի միւսոյ ամին ժամանեցին ի Վարշաւայ և յառաջնում աւուր Մայիսի եկին մտին յԼվով քաղաք, բերելով հրովարտակս յարքայէն առ եպիսկոպոսն Նիկոլ և առ Ժողովուրդն։

Ընկալաւ Նիկոլ զքարոզիչսն սիրելութեամբ բազմաւ, այլ ի բնակութիւն ետ նոցա սենեակ մի և եթ անպատրաստ և անմաքուր, յորում հարկեցան ննջել նոքա առ ժամանակ մի ի վերայ յարդի ընդ զինուորս ոմանս, և միայն ի ձեռն բողոքոյ և սպառնալեաց կորզեցին զսենեակն հանդերձ այլով փոքու սենեկաւ ի պէտս իւրեանց միայն, ուրանօր և հիմն եդ Գալանոս դպրանոցին Իլվովայ յամին 1665 ի 24-րդի աւուր Յունվարի և ուսուցանել կալաւ զմանկունս Հայոց, որոց թիւ զկնի սուղ ինչ ժամանակի յաւելաւ մինչև ցվեշտասան։ Ժողովն Տ. Հ. խոստացաւ տալ ամի ամի դահեկանս (սկուտս) 600 ի պէտս դպրանոցին, այլ վասն և Գալանոս խոստումն ետ պահելոյ աշակերտս տասն ի Հայոց, ուսուցիչս երիս և սպասաւորս ոմանս (Էջ 165)։

Մինչեւ յաջողէր դպրանոցն որ ըստ օրէ յուսմունս լեզուաց և յաստուածաբանութեան ըստ ոգւոյ եկեղեցւոյն Հռոմայ՝ ոչ շատացաւ այնու Գալանոս այլ ձեռնարկեաց զգործն կարեւոր, յոյր սակս և եկեալն իսկ էր, և թախանձել սկսաւ առ արքեպիսկոպոսին, զի մուծցէ փոփոխութիւնս ի կարգս աստուածպաշտութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ, խառնեսցէ ջուր ի բաժակն և ուղղագրեսցէ զգիրս պաշտամանց։ Թուէր թէ և ի սկզբան անդ ներհակ կայր Նիկոլ թախանձանաց նորա առ աչօք հօտին իւրոյ, բայց յետոյ երկուցեալ թէ զուցէ զթոշակն կորուսցէ, զկարգեալն նմա ի Ժողովոյն Հռոմայ՝ զիջանել սկսաւ յառաջարկութիւնսն տակաւ առ տակաւ (էջ 42)։ Եւ նախ եմուծ յեկեղեցիս զյիշատակութիւն անուան պապին յառաջ քան զկաթողիկոսին (յամի Տեառն 1664, ի 24-րդի աւուր Սեպտեմբերի), և ապա հրամայեաց քահանայիցն ամենեցուն խառնել ջուր ի բաժակն ի ժամ սրբագործութեան ընծայիցն։ Եւ քանզի այսմ հրամանի նորա ոչ հնազանդեցան քահանայքն, այլ զընդդէմն գործեցին, խակ ժողովուրդն խռովեցաւ առ հասարակ՝ վասն այսորիկ ի բռնութիւնս անցքէն ձեռն էարկ Նիկոլ և հալածել սկսաւ զհակառակորդս իւր։ Ի հնարոց բանի իւրում էր զոր հալածէր յաշխարհէն, էր զոր հաշէր և մաշէր ի բանտի, էր զոր տոփէր սպառնալեօք, էր զոր լրտես Տաճկաց ընծայեցուցանէր յաչս Լեհացւոց և այսու ճնշէր զնոսա փախստական մազապուրծ եղանել ի սահմանաց պետութեանն։ Եւ յայսմ ամենայնի օգնական և խորհրդատու էր նմա ինքն Գալանոս հանդերձ արքեպիսկոպոսաւն Լատինացւոց Իլովոյ և ուխտին Յիսուսեանց, որք գաղտնեօք գործէին և զանխուլ ի Հայոց, որպէս զի մի յարուսցեն զնոսա թշնամիս իւրեանց։

Գործ հալածանաց եկեղեցւոյն Իլովոյ համբաւեալ ժամանեաց մինչև ի մայր Աթոռն Էջմիածնի. և կաթողիկոսն Յակոբ առաքեաց անդր զնուիրակն իւր զՊօղոս Թոխաթցի եպիսկոպոսն առ ի զննել եղե աղագս։ Եկն եհաս նա յԼւով և որչափ աշխատ եղև՝ ոչինչ կարաց առնել, այլ մանաւանդ և ինքն տուժեաց զարկաւագ իւր զՎարդան, (որ ապա յաջորդեաց զաթոռ Նիկոլի) մերձաւորութեանց

Լատինացւոց, որք սպառնալեօք արտաքս հանէին զնոքն յԼվովայ ձեռնունայն։ Բայց նա յուղւոջն դիպեցաւ ի Կամենից և յայլ քաղաքս. յորդորեաց պնդեաց զՀայս հաստատուն կալ յօրէնս հայրենի եկեղեցւոյն, և իբրև ժամանեաց ի Վալախիա՝ յաւել և անդ ևս գրել թուղթ ի նոյն միտս առ ժողովուրդն Կամենիցի։

Այլ քարոզիչքն ծանեան, թէ հարկ էր մուծանել զփոփոխութիւնս յեկեղեցիս Հայոց Կամենիցի. զի տեսանէին, թէ մինչև անխախուտ ունին Հայկազունք այնր քաղաքի զաւանդութիւնս Հայաստանեայց եկեղեցւոյ՝ ցայն վայր արհամարհէին և անգոսնէին փոփոխութիւնքն մուծեալք յեկեղեցիս Լվովայ և Զամոստեայ. քանզի Հայոց Կամենիցի կենդրոն էին զօրով Հայոցն գաղթականաց Լեհաստանի և յայտ երևելի առաջի պետութեանն՝ ոչ զոյգն ունէին ազդեցութիւն ի ժողովուրդս այլոց քաղաքաց։ Վասն այսորիկ, ըստ պահանջելոյ Գալանոսի առաքեաց Նիկոլ ի Կամենից թուղթս պատուիրանաց ի ձեռն ուրացեալ քահանայի ուրումն Գրիգորի Բալամաճկեչի, որպէս զի ընկալցին Հայք զփոփոխութիւնս և զպատարագն մատուցեն խառնեալ բաժակաւ։ Այլ այնպէս սրտմտեցաւ ժողովուրդն ընդ լուր անօրէն հրամանին՝ զի հազիւ հազ ճողոպրեալ ապրեցոյց զգլուխ իւր պատգամաւորն արքեպիսկոպոսին։

Զայսու ժամանակաւ, ի 14-րդի աւուր Մայիսի 1666 ամին վախճան հասանէր կենաց Կղեմենտեայ Գալանոսի, որ կորուստ անդառնալի եղև վասն առաքելութեանն Լատինացւոց։ *) Առ վայր մի լքան բեկան կաթոլիկք Լյուսոյ իւրեանց, և բազումք կարծէին, թէ ընդ վախճանի Կղեմենտեայ վախճան և առաքելութեանն հասանիցէ. նոյն ինքն արքեպիսկոպոսն Նիկոլ ժպրհեցաւ կոչել ի ձեռաց քարոզչացն զտունն, զոր տուեալ էր ի բնակութիւն դպրանոցին։ Բայց լատին

---

*) Կղեմենտեայ Գալանոսի են երկասիրութիւնք այսոքիկ.
Historia Armena originem Christianae Religionis in Armenia, Auctoribus s. s. Apostolis Bartholomaeo et Iuda Thaddaeo. Francoforti et Lipsiae, 1701.

արքեպիսկոպոսն Նխչուանայ ոչ միայն մխիթարեաց և քաջալերեաց զքարոզիչսն և արգել զՆիկոլ ի խորհրդոյն, այլ և սաստեաց խիստ զնա՝ զի ինքնին անձամբ երթիցէ ի Կամենից և մուծցէ զփոփոխութիւնսն, քանզի պատուիրանք նորա ի Հռոմէ առ՝ խառնեցան ի ժողովրդեանն և ոչ իմիք ազդեցին։ Նա սուղ ինչ ժամանակ հնարեցաւ Նիկոլ պատճառանօք յամեցուցանել զուղղափառութիւնն, այլ ապա յանձնառին մնալ՝

---

Historia Armena Ecclesiastica et politica. Coloniae 1686.

Grammaticae et logicae institutiones linguae literalis Armenicae, Armenis traditae ab Clemente Galano clerico regulari sacrae theologiae professore, et Sanctae Saedis Apostolicae ad Armenos Missionario. Addito Vocabulario Armeno-Latino omnium scholasticorum dictionum. Romae, ex thypographia S. Congreg. de Prop. fide 1655.

Conciliatio ecclesiae Armenae cum Romana. Roma, 3t. 1658—1690.

Մատեանքս այսոքիկ, և վերջինդ մանաւանդ գրեալ են առ ի հաստատել զՀայս ի Միաբանութիւն ընդ եկեղեցւոյն Հռովմայ. այլ հետևանք նոցին ամենևին ընդդէմ եղեն խորհրդոց մատենագրին։ Իսկ զի ի վերջին մատենին այնչափ հոծ են ստայօդ բանք և անդէպութիւնք զեկեղեցւոյն Հայոց և այնպէս կցկցուն և անտեղի հետևութիւնք բանին, զի և որ կաթոլիկքն էին ջերմեռանդըն՝ զընդդէմ նորա գրեցին, որպէս Giovanni de Serpos, հեղինակ մատենին, որ անուանեալ կոչի Compendio storico di memorie cronologiche concernenti la religione et la morale della nazione Armena suddita dell' Imperio Ottomano. In Venezia, 3t. 1786.

Գալանոս մինչ չև էր մեկնեալ ի Հռովմայ յԻլվով՝ յամին 1650—1659 ուսուցիչ էր վարժանոցին Հռովմայ (Collegium), զոր եբաց պապն Աղեքսանդր Գ. ի պէտս Հայոց։ Դեռ ևս յամին 1584 ունէր ի մտի պապն Գրիգորիոս ԺԳ. հիմնել վարժանոց մի այսպիսի, այլ մահու կանխեալ՝ խափանեաց ըղխորհուրդ նորա զայս

ճակամայից մեկնեցաւ յՒլվովայ և յ12-րդի աւուր Օգոստոսի 1666 ամին ժամանեաց ի Կամենից։ Նա ի հոկիլ զգործոց նորա և ի փութացուցանել՝ չոգաւ ընդ նմա և Հ. Գրիգոր, որ տեսուչ և գլուխ եկաց առաքելութեանն զկնի մահուան Գալանոսի։

Երբ պատուիրեաց Նիկոլ քահանայից Կամենիցի ի վաղեւն պաշտել զպատարագն ըստ օրինի Լատինացւոց՝ ամենեքեան որպէս ի միոջէ բերանոյ մերժեցին զհրամանն և չոգան պատմեցին զերան զատաւորացն։ Յայնժամ այնպէս ալեկոծեալ սրտմտեցաւ ժողովուրդն, զի փոքր մի ևս՝ և ի յարձակման խռովութիւն յանդէր յուզումն. գոչէին Հայք միաբան, թէ ոչ զոք գիտեն և ոչ ումեք հնազանդին, բայց միայն կաթողիկոսին Էջմիածնի, և զի ընդդէմ բռնութեանցն առ արքայ բողոքեսցեն։ *) Վասն որոյ այսոցիկ տագնապ կալաւ զՆիկոլ և զօրս ըստ նմանէ էին, որք զայն միայն խորհէին, թէ զիարդ զանձինս ապրեցուցանիցեն։ Թէպէտ և խնդրեաց արքեպիսկոպոսն Լատինացւոց քաղաքին ի զօրավարէն, զի զինու ընկճեսցէ զյուզեալսն և հարկեցուսցէ խռովութեանն, այլ նա բացէ ի բաց հրաժարեցաւ անսալ խորհրդոյն և պատասխանէր՝ մի՛ զզուել զՀայս, որ միմիայն են ժողովուրդ հաւատարիմ և պատուաւոր քաղաքին։ Յայնժամ զայս խորհուրդ ի մէջ առին ժողովուրդն և Նիկոլ, զի յղեսցեն զոք պատգամաւոր ի Վարշաւայ առ արքայն և առ նուիրակն և ի նոցանէ խնդրեսցեն զվճիռ գործոյն։ Թէպէտ և ի սկզբան անդ կամէին Լատինացիք զնոյն Ոսկինեայ, բայց ապա զանգի-

---

*) Յայսմ ժամանակի, յորժամ գրեցաքնարար յարեան Հայք Կամենիցի ի պաշտպանութիւն եկեղեցւոյն իւրեանց ընդդէմ անօրէն հրամանաց Նիկոլի՝ հանդիպեցաւ առնովաև կինն Սեփերովիչ, մայրապետն կուսաստանին Հայոց, որոյ ի մեծի պատուի գոլով առ ամենեսեան՝ յորդորէր և քաջալերէր զժողովուրդն մի անսալ բռնութեանցն, այլ ցանգ հաստատուն կալ և մնալ ի հաւատս իւրեանց։ Թէպէտ և ամենայն ջանիւք իւրեանց հնարէին խափան լինել նմա Թէատինեանք և եկեղեցականք Լատինացւոց։ Տես սակս և անձահօրէն գրեցին զկնոջէն Հեղինակք կրկին Յիշատակարանացս. (Էջք 82, 187, 195)։—Են անդէնութիւնք հետաքննիք զվարուց այսր Սեփերովիչի ի մատենական D-r Antoni-ի ընդ մակագրաւ Nowe Opowiadania Historyeshe, ի հատուածին, որ կոչի Wartabied։ Էին առ Հեղինակին այդէնք պատմականք յիշատակք, որ չև ևս են ընծայեալք ի լոյս։

տեալ ամենայն, թէ զուցէ առ բացակայութեամբ նորա միաբանեսցի Նիկոլ ընդ ժողովրդեանն հաշտօք արծաթոյ, զոր օրինակ արարեալն էր յառաջագոյն՝ յետս կացեալն ի խորհրդոցն և փոխանակ նորա առաքեցին ի Վարշաւայ զյիշատակեալն ի վերոյ զքահանայն Գրիգոր Ռոմանովիչ: Փութացաւ և ժողովուրդն Հայոց յղել պատգամաւորս ի Վարշաւայ, հանգանակեալ վասն այլ և այլ պիտոյից պատգամաւորացն ոսկիս իբրև 2000, այլ և գրեալ թուղթ առ կաթողիկոսն Էջմիածնի: Այլ որպէս գիտելին է զուշակել՝ ոչ ինչ ազդեցին ջանք և ընծայք պատգամաւորաց ժողովրդեանն. և զի բացակայ էր ի ժամանակին արքայն Լեհացւոց Կազիմիր ի Վարշաւէ՝ դիւրագոյն ևս եղև Ռոմանոյ առնուլ թուղթս բարեյաջողս վասն կաթողիկոսաց ի թագուհւոյն, ի նուիրակէ պապին և յայլոց արանց երևելեաց, որովք գործ արար ի Կամենից:

Ժողովեցան յայնժամ դատաւորքն հանդերձ քահանայիւքն ի խորհուրդ, թէ զինչ արժան իցէ առնել. և թէպէտ եղեալ էր ամենեցուն ի մտի մի երբեք զիջանել ի հրամանս թագուհւոյն և նուիրակի պապին, մինչև ընդունիցին զպատասխանի թղթոյն իւրեանց առ կաթողիկոսն՝ բայց յայնժամ ժողովն երկպառակեցան քահանայք յաղագս միաբանութեանն, քանզի հաւանեալ էին եպիսկոպոսք պարէնից նոցա առ զաղափարս նոցա հրամանաւ Նիկոլի ի պաշտելոյ զխորհուրդս եկեղեցւոյ: Այսպէս պատմեն երկուքին հեղինակք մատենին, այլ զուցէ նոցին իսկ Լատինացւոց որսացեալ իցէ զմանս ի թուլամիտ քահանայից յորդորանօք կամ սպառնալեօք: Բայց որպէս և իցէ՝ յառաջներորդի աւուր Հոկտեմբերի 1666 ամին զառաջինն մատուցաւ պատարագ ի Կամենից քաղաքի ըստ արարողութեան Լատինացւոց: Եւ թէպէտ ժողովրդեանն մեկուսացեալ յուրացողացն ոչ երթայր յեկեղեցի, այլ յաւուրս տօնից գնայր ի մերձաւոր քաղաքն Խոտին ի Վալախիայ լսել զաստուածային պաշտամունս ըստ հայադաւան արարողութեան Հայաստանեայց եկեղեցւոյ՝ բայց պահանջելով եկեղեցականացն Լատինացւոց արգելաւ նոցա յաւուրս տօնից արտաքս քան զքաղաքն ելանել:

Նոյն յեղանակաւ մեծան յեկեղեցիս Կամենեցի փոփոխութիւնքն ըստ ոգւոյ Լատինացւոց, և թէպէտ ի սկզբան կարի խախուտ էր Միութիւնն և առ վերին երեսս միայն՝ բայց ապա յաճախակի այցելութեամբք կաթոլիկ իշխանաւորաց և նորանոր սաստմամբք ընտելացան նորամուծութեանցն ժողովուրդք և եկեղեցականք: Իսկ արքեպիսկոպոսն Նիկոլ պանծացեալ երևելի սխրագործութեամբն իւրով խընդրեաց յարքայէ ի պարգևի ժամին գիւղ մի ի ռոճիկ եկամտից: Բայց փոխանակ վարձուցն և պատուոց, որոց ակն ունէր՝ զայլ ինչ փոխարէն եգիտ եղկելին, անհամեմատ վաստակոցն, զոր վաստակեաց յօգուտ Տաւալոցին, այլ արդար և իրաւ ամենևին, հանգոյն որպէս տուժեցան համօրէն մատնիչքն և ուրացողք եկեղեցւոյս մերոյ և ազգիս:

Մինչդեռ անօթ ընակր և կուրեալ էր Նիկոլ Թորոսովյն Հռովմայ, յոյր ձեռն մարթ էր մոլորեցուցանել և որսալ ըզՀայկազունս Լեհաստանի՝ ցայն վայր փաղաքշէին զնա Լատինացիք, չլսելոյն և չտեսանելոյն առնէին զբազմապատիկ անառակութիւնս նորա և զյանցուածս, որ ժպրհէր իսկ զգենուլ զգեստս և կնգուղս պապից, առանց ունելոյ առ այս հրաման: Իսկ յորժամ զլխաւորեցաւ Միութիւնն Հայոց Լեհաստանի և ոչ ինչ օգտակար էր այնուհետև Նիկոլ՝ անդէն և անդ զհետ եղեն բառնալոյ զնա ի միջոյ: Յորդորել սկսաւ զնա Հ. Պիդու, զի թէպէտ և ոչ հաճեցաւ արքայ վարձատրել զվաստակս նորա, սակայն Թորոսին Տաւալման Հռոմայ ցանկայ փառաւորել զնա պարգևօք մեծամեծօք, զոր ինչ նայն ըղձանայցէ. վասն այսորիկ հարկ է նմա երթալ անձամբ ի Հռովմ և զառաջեաւ մատնել Թորոսովյն: Զայս ինչ Նիկոլ զպատճառանս պատրուակին և յուլանայր յուզին, այլ հուսկ յետոյ տեղի տուեալ յորդորանաց և սաստմանց Ալյխեայ Պիդու և նորոյ Նուիրակի պապին՝ ել յուղի մեծաւ շքով և ժամանեաց ի Հռովմ ի վերջկոյս Դեկտեմբեր ամսեանն 1668 ամին: Անդանօր ընկալան զնա սիրելութեամբ բազմաւ, բայց նա ընդ հուպ ծանեաւ, թէ ըմբըռնեցաւ յորոգայթի, մանաւանդ յորժամ արգելին նմա արտաքս ի քաղաքէն ելանել և ի պէտս զբօսանաց իսկ:

Ուղեւորութեամբն Նիկոլի ի Հռովմ կերպ. Պիղու պատմա-
մութիւն իւր. այլ հեղինակ երկրորդի մասին գրոցս շարա-
դրէ զանցս դիպուածոցն մինչեւ ցամն 1677։ Աստի տեսա-
նեմք, զի եկաց մնաց Նիկոլ ի Հռովմ ամս վեց իբրեւ ի գա-
ռագեղի ըմբռնեալ, և ի փրկանս ազատութեան իւրոյ հար-
կեցաւ կատարել զպայմանսն, որ առաջարկեցան նմա. այսինքն
է ձեռնագրաւ իւրով ընծայեաց ի պէտս բնակարանի դպրա-
նոցին Իլվովայ տուն մի մեծ ի կոփածոյ վիմաց, զոր ոչ կա-
մէր տալ յառաջագոյն. ձեռնադրեաց իւր յաջորդ զՎարդան
Յունանեան, զեմրիկեան ամենեւին ոգւով լատինական եկեղե-
ցւոյ. և ուր ուրեմն մեծամեծ պժուարութեամբք, ըստ միջ-
նորդութեան երեւելի արանց՝ գերծեալ մեկնեցաւ ի Հռովմայ
և դարձաւ յաթոռ իւր յԻլվով ի վախճանի 1674 ամին,
ուրանօր վերստին կենցաղավարեցաւ ըստ առաջնումն, խռո-
վելով և խռովելով, մինչև վախճան հասանէր չարաչար կե-
նացն յամին 1681։

Երկոքին հեղինակքն ի վախճանի գրոցն իւրեանց յարեն
և զպատմութիւն դպրանոցին Իլվովայ, յորում են հետա-
քննին տեղեկութիւնք զուգդութեանց և զկարգաց դպրանո-
ցին, զուսմանց և զկենցաղավարութենէ աշակերտելոցն։ Տե-
սանեմք անտի, թէ ոչ ամենեցուն Լատինացւոց հաճոյ թուէ-
ին հնարք և հայթայթանք քարոզչացն, մինչև քահանայի
ուրումն Լատինացւոյ ասել ի քարոզելն, թէ քարոզիչքն
հանգոյն աղուեսուց տիրացան տացուածոց և կալուածոց
եկեղեցեացն Հայոց (էջ 202). Իսկ թէ զկարդ վարէ-
ին ընդ միմեանս ժողովուրդն և քարոզիչքն զինի մուծման
իսկ Միութեանն՝ է տեսանել ի պատմութեանս, թէ յոր-
ժամ ախտք և հիւանդութիւնք վարակեցան ի դպրանոցին՝
կարծեցին Լատինացիք, թէ Հայոց դեղեալ իցէ զքարոզիչսն
(էջ 201)։ Այլ և երեւի, թէ ոչ միայն արտաքին պատճառք,
իմա հրկիզութիւնք և հիւանդութիւնք, ահաճութիւն արք-
եպիսկոպոսին և ժողովրդեանն խափանարիթք լինէին բար-
գաւաճման դպրանոցին, այլ նոցին իսկ քարոզչացն ապիկա-
րութիւն և կագք և գժտութիւնք ի ծածուկ, զոր աքօղել
իմն նկրտին հեղինակքն՝ տաւել եւ փափագէին գրչին։

Գուցէ և ի պատճառս գժտութեանցն գրեցան ամբաստանութիւնքն տպարանոցէն, որոյ մի առ մի պատասխանի տանէ Պիգու ըստ հրամանի նուիրակին (էջք 246—252):

## Է

Աստանօր դադար առնու պատմութիւն երկոցունց Յիշատակարանաց. այլ մեք գիտեմք յայլոց աղբերց, թէ տպարանոցն Լվովայ մնաց հաստատուն ամս առաւել քան հարիւր, խնա մինչև ցամն 1784-րդ, յորում ժամանակի փակեցաւ ըստ հրամանի կայսերն Յովսեփայ: Յայնժամ խորհեցաւ Ժողովն Ծաւալման Հաւատոյ բանալ տպարանոց նոր փոխանակ փակելոյն ի Կամենից քաղաքին Պոդոլեկի, յոր վայր փոխադրեցաւ և պահեցաւ յերկոտասան պահարանս առ եկեղեցեաւն Հայոց քաղաքին գրատունն Թէատին կրօնաւորաց, որում ի ժամուն գին արկին ռուբլիս 20,000. նոյնպէս սահմանեաց ի թոշակ տպարանոցին Փունդուշ 150,000 զլոտից (22,500 ռուբլեաց), ապահովեալ անշարժական կալիւք, իսկ պետութիւնն Լեհացւոց կարգեաց ի պէտս բնակութեան նորա զվանս կարգին Յիսուսեանց, որ ի Կամենից: Այլ ոչ գլխաւորեցաւ բան խորհրդոյն, քանզի զկնի յետին բաժանման Լեհաստանի երկուքն յերից մասանց Փունդուշին ծախեցան ի պէտս գիմնազիոնին Կրժեմենիցի և մի մասն՝ ի պէտս Հոգևոր Դպրանոցին Կամենիցի, այնու զի ուսանիցի ի դպրանոցին ձրի կղերիկոս մի ամի ի Հայոց կաթոլիկաց և պատրաստեսցի անդ ի կոչումն հոգևորական: *)

*) Վաղագոյն քան զայս փոյթ կալաւ կայսերուհին Կատարինէ Բ. զհայոց բնակելոց ի գաւառան անջատեալս ի Լեհաստանէ և միացեալս ընդ Ռուսաստանի, որպէս զի ունիցին նոքա իւրեանց պաշտօնեայս եկեղեցւոյ ըստ դաւանութեան իւրեանց. վասն այսորիկ հրամայէր պատուիրանագրաւն 1784 ամին՝ զի շրջցին զպրոցս կարևորս. իսկ առ ժամս յղեսցին ի Հայոց յէջմիածնականաց պատանի մի կամ երկուս ի սահմանս նորին Մեծութեան կայսերն հաստատեցելոց յԻլով քաղաքի. այլ ուսանիցին անդ ւնոր ի դպրանոցին Հայոց. և առ այս տացի յաւարկանտարանէս միրձ թոշակ նպաստի չափով ... (Լիակատար ժողովածու օրինաց. Հատ. ԻԲ. Թ. 15, 913): Բայց հրամանն ոչ եղաւ ի գործ:

Զկնի մահուան Նիկոլի Թորոսովիչի, որ առաջին եղև հայածէս կաթոլիկ արքեպիսկոպոսաց Լվովայ՝ նստաւ յաթոռ նորա աշակերտ Ծուաղցին Վարդան Յովնանեան յամի Տեառն 1681, որ բայց ի բաց հերձեալ անջատեցաւ յԱթոռոյն Ս. Էջմիածնի։ Զսա յաջորդեցին

Յովհաննէս Տովբիթ Աւգուստինովիչ 1715—1751,
Յակովբ Ստեփաննոս Աւգուստինովիչ 1752—1783,
Յակովբ Թումանովիչ 1783—1798,
Յովհաննէս Սիմոնովիչ 1799—1816,
Կայետանոս Վարդերեսովիչ 1817—1831,
Սամուէլ Կիւրեղ Ստեփանովիչ 1831—1858,
Գրիգորիոս Միքայէլ Սիմոնովիչ 1858—1875,
Գրիգորիոս Յովսէփ Ռոմաշկան 1875—1881,
Իսահակ Նիկողայոս Իսակովիչ 1882։

Ըստ միանալն ընդ Ռուսաստանի Լեհացի գաւառաց արևելեան հարաւոյ՝ նուաղէր տակաւ և սահման թեմի արքեպիսկոպոսին Լվովայ, քանզի ոչ հաճէր պետութիւնն Ռուսաց, զի այր հպատակք իւր՝ հովուեսցին ըստ հոգևորին յիշխանութենէ արտաքոյ սահմանաց իւրոց բնակելոց. վասն այսորիկ մայծ գ՟այս կաթոլիկս հպատակս իւր ընդ իշխանութեամբ կաթոլիկ եպիսկոպոսին Մոգիլևի։ Յամին 1806 կանոնիկոսն Յովսէփ Պրիշտոֆովիչ կարգեցաւ հայածէս փոխանորդ կաթոլիկ եպիսկոպոսին Կամենեցի առ ի հովուել գ՟այս, որ բնակեալ էին ի քաղաքս ինչ թեմի եպիսկոպոսին, և սահմանեցաւ նմա ռոճիկ 3000 ռուբլեաց։ Այս Պրիշտոֆովիչ ձեռնադրեցաւ յարքեպիսկոպոսէն Լվովայ յաստիճան եպիսկոպոսութեան և յամին 1810 կարգեցաւ վիճակաւոր եպիսկոպոս համօրէն Հայոց կաթոլիկաց, բնակելոց ի սահմանս պետութեանն Ռուսաց, որում յաւելան ի ռոճիկն ռուբլիք 1500 ի պէտս տանն քարտուղարի և ի թոշակ ճանապարհի յայցելութիւն եկեղեցեաց թեմի նորա։ Իսկ յամին 1812 ըստ Բարձրագոյն հրամանի յաւելան և այլ ևս 1500 ռուբլիք ի վարձ բնակարանի, և ուսցի բնակութեան նմա սահմանեցաւ ի քա-

գաւքն Մոգիլեւի առ Դնեստր գետով։ Յետ մահուան նորա յամին 1816 կարգեցաւ տեսուչ Հայ-կաթոլիկ թեմին նախ-անգամն Անտոնիոս Վարդկեսովիչ, որ իբրեւ վախճանեցաւ՝ յամի Տեառն 1822 եղաւ կանոնիկոսն Նիկողայոս Մոշորեց վարիչ պաշտաման տեսչի, որ ընդ իշխանութեամբ էր Հոգեւոր Կոլեգիային Լատինացւոց։ Յետ այսորիկ ամենեքին խափանեաց պետութիւնն զվիճակն Հայ կաթոլիկաց վասն խուն մի ժողովրդեան բնակելոյ ի Կամենից և ի Մոգիլեւ, ուք ընդ բնաւն ոգիք էին քանի մի հարիւր. յայնժամ Հայքն կաթոլիկք առ սակաւ սակաւ խառնեալ միաւորեցան ընդ Լատինացիս, զիք տիրացան եկեղեցեացն Հայոց և գումարոցն արծաթոյ և պատուական սպասուց եկեղեցեացն և կալուածոց նոցա *) Եւ մինչև ցայսօր ժամանակի կանգուն կան դեռ տաճարքն իբրև ի յաւիտենական յիշատակ կառուցողացն անհետացելոց կամ զօրէն մահարձանաց ի վերայ ոսկերց ժողովրդեանն անձխտելոյ, որ ի պաշտպանութիւն Հայրենի եկեղեցւոյն և ազատութեան նորա մաքառեցաւ ընդ երկար հզօրագոյն ընդդէմ հալածանաց, և չքեալ անկաւ ի մարտին, հէքացեալ զոհ մոլեգին բռնութեանց և բանտարկութեան։

Գրեա թէ ի նոյն վիճակի թարթափին և Հայք, ուք ըստ հոգեւորին ընդ իշխանութեամբ են Հայ-կաթոլիկ արքեպիսկոպոսին Իլվովայ, որոց թէպէտ և ի հայ լեզու պաշտին արարողութիւնք եկեղեցւոյ ձեռագիր մատենիւք՝ բայց թիւրեալ յեկեղեցեան մատեանքն, առ Նիկոլեւ և յաջորդք նորա, և զարդիս խառնակ և աղաւաղ ձեւով պաշտին առ նոսա աւանդութիւնք առաքելականք և ծէսք սրբոյ եկեղեցւոյս մերոյ, մաշտոց ունելով իւրեանց առանձինն, յաւելեալ և կրճատեալ. և ոչ իսկ մասն ունին նոքա ի վարչութեան

*). Տաճարն 1820—30 էին դեռ ևս եկեղեցւոյն Հայոց Կամենեցի. թող զբազում իրս պատուականս՝ գումար արծաթոյ 15,000 րուբլեաց և կալուածք։ Ցայժմ եկեղեցւոյ է և անուանի հրաշագործ պատկեր սրբուհւոյ Կուսին, որ ըստ աւանդութեան բերաւ անդր յԱնւոյ ի ձեռն Հայոց և մինչև ցայսօր ի մեծի պատուի է։ Տես ի մատենին Le Catholicisme romain en Russie. հատ. Բ. յէջն 131։

գործոց եկեղեցականաց, ընդդէմ վաղեմի դաւանութեան քրիստոնէական եկեղեցւոյ:

Հայք, որք կիսով դարու չափ համբերութեամբ մեծաւ և անձնանուիրութեամբ պաշտպանէին անկախութեան իւրեանց հոգևորի՝ տակաւ տակաւ մոռացան զեկեղեցին և կորուսին զյատկանիշս ազգին իւրեանց և գամ քան զգամ խառնեալ միաւորեցան ընդ Լեհացիս, բայց յայնոցիկ, որոց յօտար վայրս գաղթեալ՝ ի տար աշխարհս խնդրեցին տեղի ապաստանի։ Եւ զարդիս ոչ առաւելու քան զերիս հազարս թիւ մարդկանն, որ անուանեալ կոչեն զանձինս Հայ և Հովուէին յարքեպիսկոպոսին Լվովայ. բայց և նոքա ազգաման առհասարակ զեկեղեցին Հայոց և սովորութիւնք հայկականք բարձեալ անհետացեալ են ի նոցանէ, որոց միայն գծագիրք դիմաց նոցա յիշեցուցանեն, թէ որդիք իցեն նոքա Անեցւոցն, որոց յքեալ զտուն և զաշխարհ հայրենի՝ պանդխտեցան յաշխարհս օտար, և մատնեցին զանձինս ի վտանգս և ի նեղութիւնս՝ միայն զի անխախուտ ունիցին զհաւատս հարց իւրեանց և պապուց:

Եւ զի՞նչ էին միջոցքն էին հնարից, որովք զխաւարեցաւ իմանդ եւ կորուսաւ Հայկազանց Լեհաստանի։—Ի յառաջեկայ պատմութեանս է ընթեռնուլ զի՛ զերերգութիւնն ողջոյն, յորում բռնութիւնք, և կաշառք, և խաբէութիւն, և խարդախութիւն, և քանսարկութիւն՝ աստուածահաճոյ համարեալ էին միջոցք. յորում ի ձեռն բռնութեանց երկպառակին ի միմեանց հովիւն և հօտ նորա. յորում հովիւն անառակ և ցոփ և անխիղճ, կաշառակեր և ուխտադրուժ նեղէ, հալածէ և ընկճէ, կանգնէ յաղթանակ ի վերայ ժողովրդեանն բարեպաշտի, եկեղեցւոյն Քրիստոսի։ Եւ որ գործակիցք լինէին նմա, և զի՞ ասեմ գործակիցք, սադրիչք և դրդիչք ի գործն չարաչար՝ էին այք, որք զանձինս աշակերտս համարէին Քրիստոսի, զորոց զգանն սուրբ կարգեալ էր ի վարդապետս. այք, որք ոչ խղճէին և գործէին զանօրէնութիւն և զնենգութիւն «ի մեծագոյն փառս Աստուծոյ» այք արդարև ամբարիշտք, որոց ըստ գործոյն ամբարշտութեան ամբարիշտ և գործերն եղեն:

Նա այսպէս փառաթարեալ կորեան Հայկազունք Նահատանի, առաւելեալքն երբեմն ի մեծութիւնս, ի փարթամութիւնս, յուսմունս, ի սէր Հայրենի եկեղեցւոյն և ազգին, որ ազգասէրքն կոչեցեալ էին, և ի նորա անն յանդիման ցուցին զճշմարտութիւնն վաղեմի, թէ ըստ քաղաքական և պատմական բերմանց և հանգամանաց ազգիս՝ որպէս Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցին է Հայութիւն։

ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑ

7 Մայիսի 1884 ամի

Ի Ս. Պետերբուրգ։

ԱՌԱՔԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԱՒՐԻԺԵՑԻՈՅ

# ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ:

## ԳԼՈՒԽ ԻԲ։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԵՂՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՎՇՏԱՑ, ԶՈՐՍ ԿՐԵՑԻՆ ՀԱՅ ԱԶԳԱՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔՆ, ՈՐՔ ԲՆԱԿԵԱԼՔ ԵՆ Ի ՔԱՂԱՔՆ ԻԼՈՎ։

---

[illegible]

Ի վեր անդր ի կարգի պատմութեան, զոր գրեցաք վասն Մելքիսեդեթի կաթուղիկոսին, թէ գնաց նա յաշխարհն Լեխաց. արդ յորժամ եհաս նա անդր և եմուտ ի քաղաք Իլով, յետ անցանելոյ աւուրց ինչ ի նոյն Իլովէ քաղաքէ ոմն արեղայ, որոյ անունն էր Նիկոլայոս՝ զարս ոմանս միջնորդս և բարեխօսս արարեալ առ Մելքիսեդեթ կաթուղիկոսն, զի օրհնեսցէ զնա եպիսկոպոս ազգին Հայոց, որք կան Իլով քաղաքին և որոց շուրջ զնովաւ. վասն զի ի ժամանակին յայնմիկ ոչ

գոյր եպիսկոպոս նոցա։ Եւ միջնորդացն մատուցեալ առ կաթուղիկոսն՝ ընծայեցին զոսկիս բազումս և խնդրեցին առնել զՆիկողայոս աբեղայն եպիսկոպոս։ Եւ կաթուղիկոսին տեսանելով զյօժարութիւն առ ձեռն պատրաստ ոսկւոյն՝ նաև ակնկալութիւն ևս յոլովից ոսկւոյ առաջարկին, հաճեցաւ օրհնել զՆիկողայոսն եպիսկոպոս Իլովայ։

Իսկ քահանայք և ժողովուրդք քաղաքին, իշխանք և ռամիկք ի վաղուց ժամանակաց գիտելով զորպիսութիւն վարուց Նիկողայի աբեղային՝ զումարեցան միահաղոյն ամենեքեան և եկեալ առ կաթուղիկոսն՝ ծանուցին զբանս խորհրդեանն և ասացին. Մե՛ք գիտեմք զդա և զորպիսութիւն վարուց դորա, վասն որոյ ոչ է դա մեզ ընդունելի. մի՛ զդա՝ այլ զայլ ոք արասցես մեզ եպիսկոպոս։

Իսկ կաթուղիկոսն քամահեալ՝ անարգեաց զժողովուրդն և զբանս նոցա և արտաքսեալ յերեսաց իւրոց՝ յետս դարձոյց զնոսա. բայց ժողովուրդքն ոչ թուլացան ի բանից իւրեանց, այլ ի բազում աւուրս բազում բանիւք խօսեցան ընդ կաթուղիկոսին և ոչ թողին օրհնել զՆիկողն եպիսկոպոս։

Ապա կաթուղիկոսն ելեալ ի քաղաքէն՝ գնաց ի վանքն, որ անուամբ սրբուհւոյ Աստուածածնին կայ շինեալ արտաքոյ քաղաքին, զոր Լովացիք Ձաձկատար Աստուածածին ասեն. և անդէն առանց գիտելոյ ժողովրդոցն մեկուսի յանկարծէն ի մէջ գիշերի սկսաւ օրհնել զՆիկող աբեղայն եպիսկոպոս։ Որում իրազգած լեալ ժողովրդականաց քաղաքին՝ առ ժամայն ի նոյն գիշերին իշխանք և ռամիկք վաղվաղակի զումարեցան ի միասին և ընդ փոքր դուռն քաղաքին ելեալ փութանակի հասին ի տեղին. աղաղակէին առ կաթուղիկոսն. Մի՛ օրհներ զդա և մի՛ մատներ զմեզ և զեկեղեցիս մեր ի ձեռս անիրաւի այդմիկ, զի մեք գիտեմք զդա և զորպիսութիւն վարուց դորա, վասն որոյ ոչ է մեզ ընդունելի։ Եւ կաթուղիկոսն նստեալ ի վերայ աթոռոյ օրհնէր զՆիկող աբեղայն եպիսկոպոս, և խաչիւն, որ ի ձեռին էր՝ սաստէր ժողովրդեանն և զբանս ադեգս, զոր ոչ է պարտ յիշել՝ ասէր նոցա։ Եւ թէպէտ ողորմելի ժողովուրդքն ամբոխեալ՝ յաճախակի աղաղակե-

ցին, ոչ լուաւ նոցա կաթուղիկոսն, այլ օրհնեաց զՆիկոլն ե-
պիսկոպոս։

Եւ յետ սուղ ինչ աւուրց կամեցաւ Մելքիսէթ կաթու-
ղիկոսն ելանել ի Լօռւոյ և գնալ ի քաղաքն Սամէնից. և ժո-
ղովուրդքն հնարէին, զի թերևս զՆիկոլն ընդ կաթուղիկոսին
ուղեւորեսցեն ի գնալ։ Իբրև խօսեցան ժողովուրդքն ընդ Նի-
կոլին վասն գնալոյ ընդ կաթուղիկոսին՝ և նա խոբեաց գնաս
ցուցանելով զինքն կամայօժար ի գնալն։ Իբրև գնացին աւուրց
ինչ ճանապարհ՝ ասաց կաթուղիկոսն ընդ Նիկոլին. Բաւական
է այսքան գալն քո՝ այսուհետև խաղաղութեամբ դարձիր ի
տեղին քո և ի գործ եպիսկոպոսութեան քո։ Ասաց Նիկոլն.
Ոչ իսկ աչօք տեսի, զի այնքան հակառակեցան քեզ և ոչ
հաճեցին յիս. և այժմ զիարդ իշխեմ գնալ ի մէջ նոցա։ Եւ
այնքան հնարեաց Նիկոլն՝ մինչ որ կաթուղիկոսն գրեաց բա-
նադրանաց, նզովից և կապանաց գրեալ ի վերայ ժողովրդեանն՝
ետ ի ձեռս Նիկոլայ եպիսկոպոսին. որպէս զի թէ ոք ընդդի-
մակայեալ հակառակեսցի և ոչ ընկալցի [illegible] եպիս-
կոպոսութեան՝ լիցի ի ներքոյ բանադրանաց։ Եւ [illegible] ա-
ռեալ զայս թուղթս և եկն ի Լօռի։ Ասաց ժողովրդեանն. [illegible]
ժողովեցարուք յաւուր կիրակէի [illegible]եկեղեցին, քանզի ունիմ
խօսք ինչ խորհրդական հասարակաց [illegible] ձեզ ամենեցուն։
Եւ յաւուր կիրակէին, յորում և [illegible] ժողովեալ
էին յեկեղեցին՝ հանեալ զթուղթն բա[illegible] ետ ընթեռ-
նուլ ի լուր ամենեցուն։ Իբրև զայն տեսին [illegible] ամենայն
ժողովուրդքն՝ արարեալ մեծաւ աղաղակաւ և վհատեցեալ սրտիւ
ապուշ մնացին և ափիբերան եղեալ լռեցին։ Իսկ կաթուղի-
կոսն Մելքիսէթ, որ գնայր ի Սամէնից՝ իբրև էհաս անդր՝
զկնի սուղ ինչ աւուրց հիւանդացաւ. որ և մեռաւ իսկ յա-
ղուհացից պահոցն ի ծաղկազարդի շաբաթ օրն՝ ի տօնի յա-
րութեան Ղազարու, ի մերում թուականին հազար և եօ-
թանասուն և հինգ. և անդէն թաղեցաւ։ Յետ այսորիկ զկնի
անցելոց աւուրց և ամաց ինչ դէպ եղև Նիկոլայի եպիսկո-
պոսին գալ ի քաղաքն Սամէնից. և ի նոյն քաղաքին զօմն սար-
կաւագ, որոյ անուն էր Խաչօ՝ օրհնեաց արեղայ, փոխեաց
զանուն նորա և կոչեաց Օնոփրիոս։

Եւ Սեւորոցի Գրիգոր վարդապետն, որ առեալ էր ըզ-գաւազան վարդապետական Մովսէսի կաթուղիկոսին՝ էր այր երեւելի. զի վարուքն կարի պարկեշտ էր և չորակաց և իմաստութեամբն փարթամ, բանիբուն և յոյժ հանճարեղ. վասն որոյ անուանի էր նա ի մէջ աշխարհի, որ ամենայն աշխարհ կախեալ կային զնմանէ: Եւ եղև այսորիկ Գրիգոր վարդապետիս յաւուրս յայսոսիկ գալ յաշխարհն Լեհաց, և նախ եմուտ ի քաղաքն Կամենից: Անդ ի Կամենից էր և Նիկոլ եպիսկոպոսն. և կամեցան Նիկոլ եպիսկոպոսն և այլք ոմանք զնորընծայ աբեղայն զՕնոփրիոս արտաքս բերել ի քառաս-նից. վասն որոյ և եկեալ առ Գրիգոր վարդապետն՝ մեծաբանոք հրաւիրէին գալ ի միւս եկեղեցին, յորում զպատարագն մատուցանելոց էր նորընծայն: Եւ նորընծայն դեռ ևս ոչ էր լիով պահեալ զքառասունսն, քանզի տասն և հինգ աւուր օրհնեալ էր, զոր կամէին արտաքս բերել: Վասն որոյ ասաց վարդապետն. Որովհետև ոչ է լցեալ թիւ քառասուն աւուրն, ոչ է պարտ հանել ի քառասնիցն. այլ պարտ է լիով պահել զքառասունսն ըստ աւանդութեան Հայաստանեայց եկեղեցւոյ և կանոնաց Հայրապետաց մերոց. և ապա հրաման է նորընծային մատուցանել զպատարագ և արտաքս ելանել ի քառասնից: Վասն որոյ և նոքա լուեալ զայն շաբաթն և ոչ բերին արտաքս զնորընծայն: Եւ ի գալ միւսում կիրակէին կամեցան Նիկոլն և այլք արտաքս բերել զնորընծայն, վասն որոյ ի շաբաթօջն աւուր միւսանգամ եկեալ հրաւիրեցին զվարդապետն: Եւ վարդապետն ոչ գնաց, այլ ասաց. Խօսքն մեկ կու լինի, որքան չէ լցեր զքառասունքն՝ չէ պարտ որ պատարագ մատուցանէ, այլ կացէք մինչ որ կատարի քառասունքն, ապա առնէ պատարագ և դուրս գայ ի քառաս-նիցն, որպէս որ աւանդութիւն է Հայոց ազգին և կանոնած է ի մեր Հայրապետաց: Իսկ նոքա ոչ եղեն ունկնդիր բանից վարդապետին և ոչ համբերեցին, այլ գնացին, իսկոյն կիրակէին արտաքս բերին զնորընծայն, որ մատոյց զպատարագն: Եւ այս կիրակիս, յորում զպատարագս մատոյց նորընծայն՝ դեռ քսան և երկու օր էր նորա, որ քառասունք էր պահեալ:

Այլ և եպիսկոպոսն Նիկոլ արար յոյժ զանպուգն և զանպատշաճ զգործ ի կերակէրս յայսմիկ, յորում զպատարագն մատուցին: Քանզի զեկեղեցւոյն այնմիկ, յորում էր վարդապետն՝ զդուռն փակեաց ինչպէս և զբանալին առ ինքն կալաւ, ոչ յիշելով զհրամանն Տեառն, Եթէ մատուցանիցես ընդ պատարագն քո և անդ յիշեսցես, եթէ եղբայր քո ունիցի խէթ ինչ զքէն՝ թող զպատարագն քո ի վերայ սեղանոյն և երթ նախ հաշտեաց ընդ եղբօրն քում և ապա եկեալ մատուցջիր զպատարագն քո: Ի վերայ այսմ գործոյ, որ եպիսկոպոսն փակեաց զեկեղեցին՝ յոյժ վշտացաւ վարդապետն, վասն որոյ ասաց. Այն մարդ անիծեալ լինի, որ այսօր գնայ յայն եկեղեցին: Եւ եպիսկոպոսն յետ կատարելոյ պատարագին և արտաքս ելանելոյ ժողովրդեան՝ զայնմ եկեղեցւոյ զդուռն ես փակեաց. և եղեն փակեալք երկուց եւս եկեղեցեաց դրունքն: Եւ էին աւուրք աւագ տօնիցն, որ զկնի նոյն կերակէրին հետազայ յերկու շաբաթոջ աւուր Դաւթի մարգարէին և Յակոբայ Տեառնեղբօրն էր տօն, և յերեքշաբթւոջն աւուր Ստեփաննոսի Նախավկային էր տօն, և այլ ըստ կարգի: Եւ մնացին յայսոսիկ աւուրքս եկեղեցիքն փակեալք առանց ժամի և պատարագի:

Ի վերայ այսորիկ յաւել Նիկոլն այլեւս զնենգութիւն գործել առ վարդապետն և վշտացուցանել զնա. վասն զի գնաց առ փոքրն Սամէնից քաղաքին, որ ի մեծ իշխանէն վերակացու էր կարգեալ Սամէնից քաղաքին, որոյ անունն էր Լուկաշ. խօսեցաւ եպիսկոպոսն ընդ նմա և հաւանեցոյց զնա՝ զի արգելցէ զվարդապետն և մի թողցէ գնալ ի Լով կամ յայլ քաղաքս, այլ ի Սամէնից քաղաքէն դարձուսցէ զնա՝ յետ դառնալ ընդ իւր եկեալ ճանապարհն և գնալ յայլ աշխարհ: Վասն որոյ և Լուկաշ անուամբ փոքրն առաքեաց զպատգամս առ վարդապետն ասելով, թէ մեծ իշխանն մեր թուղթ է ուղարկեալ մեզ՝ թէ այդ վարդապետդ, որ ի Թուրքի աշխարհէն եկեալ է՝ չաշուտ է եղեր. հրաման չկայ որ ի քաղաքէդ ելանէ. մի թողուք, որ երթայ, թէ ոչ՝ ձեր գլուխն կերթայ: Եւ այսպիսեօք բանիւք արգելեցին ի գնալոյ զվար-

դապետն. և վարդապետն կայր անդէն իբրև զգլխաւոր: Ապա արք ոմանք բարեպաշտօնք ի ժողովրդոց քաղաքին մատեան առ վճիռն և ծանուցին նմա զանմեղութիւն վարդապետին. ապա թէ հրաման եղև վասն վարդապետին, զի եկեալ գնասցէ, ոչ թէ ի Լվով, այլ դէպի յետ, ընդ որ եկեալն էր: Եւ վարդապետին եկեալ ի Կամենից և եկն ի Ռուզզան և ի յՍուռումէլի, և ի Ճանապարհէն գրեաց զգիր բանադրանաց, նզովից և կապանաց ի վերայ Նիկոլային և առաքեաց ի Լվով: Եւ Նիկոլն ոչինչ հոգաց ի կողմանէ բանադրանացն, այլ կայր ի կարգի իւրում և ի քահանայագործութեան: Բայց քահանայքն և ժողովուրդքն այնք, որք յառաջն ներհակ էին Նիկոլին՝ ի բերան առեալ խօսէին, նաև յերեսաց ընդդէմ բերէին նմա. նաև ոմանք ոմանք ներհականայքն ևս, և օր աւուր զօրանային ներհակքն ի վերայ Նիկոլին: Այլ և Գրիգոր վարդապետն ամենայն որպիսութիւն անցուածոցս այսոցիկ՝ այլև զանուղղայ վասն Նիկոլին թղթով ծանոյց Մովսէսի կաթուղիկոսին սրբոյ Էջմիածնի և խնդրեաց ի նմանէ, զի և նա բարձու հրամանաւ սրբոյ Էջմիածնի և կաթուղիկոսական իշխանութեամբն բանադրեսցէ զՆիկոլ եպիսկոպոսն: Եւ Մովսէս կաթուղիկոսն ևս գրեաց զգիր բանադրանաց և առաքեաց ի վերայ Նիկոլայի եպիսկոպոսին: Եւ այսու պատճառաւ առաւել ևս զօրացան ներհակքն ի վերայ Նիկոլին և ի չմարդի ունէին զնա:

Ապա ոմանք ի ժողովրդականացն հարցումն արարին ընդ Նիկոլին, թէ ընդէ՞ր ոչ գնաս առ Գրիգոր վարդապետն և առնուս զարձակումն ի նորին կապանացն: Եւ նա պատճառեաց, թէ ոչ ունիմ զթոշակ ճանապարհի. և ժողովուրդքն ժողովեցին զերիս հազար դուռուշ և ետուն նմա ի թոշակ ճանապարհի: Այնուհետև եպիսկոպոսն՝ եթէ յիւրոց ինչ մտածութեանց և եթէ ի տղրեկց յիւրոց բարեկամացն և թէ ի հարկեաց ժողովրդոցն՝ եկեալ ի Լվովայ գնաց ի կողմանս Կոստանդնուպոլսի և Կեսարիոյ, զի թերևս յուրեք գտանէ զԳրիգոր վարդապետն՝ տացէ մեղայ և առցէ զարձակումն ի նորին կապանացն: Եւ գալով եկեալ եհաս ի քաղաքն Բուրսայ: Պատահեցաւ, զի յաւուրսն յայնոսիկ անդ էր և խար-

բերդացի Արիստակէս վարդապետն։ Արդ այս Արիստակէս վարդապետս և այն կեսարացի Գրիգոր վարդապետն ունէին ընդ միմեանս զոխս նախանձու յոյժ սաստիկ։ Եւ թէ զինչ էր պատճառ նախանձու և ոխակալութեան սոցին՝ բազում ժամանակաւ որոնեցի և զհաւաստին ոչ գտի, և զանհաւաստին ոչ գրեցի։ Եւ ի պատճառէ այսմ նախանձու բազում բանիւք և պէսպէս կերպիւ խօսեցաւ Արիստակէս վարդապետն ընդ Նիկողայի եպիսկոպոսին և արգել զնա ի գնալոյ առ Գրիգոր վարդապետն։ Երբեմն ասէր, դու եպիսկոպոս ես և նա՝ վարդապետ. չունի զիշխանութիւն ի վերայ քոյ. երբեմն ասէր, իզուր և ի նախանձու է բանադրեալ զքեզ. երբեմն ասէր, և ես վարդապետ եմ իբրև զնա, ես արձակեմ զքեզ ի կապանաց. և այլ բազում կերպիւ խօսեցաւ և ոչ եթող գնալ ի Կեսարիայ առ Գրիգոր վարդապետն։ Այնուհետև Նիկողն ինքն ոչ գնաց, այլ գրեաց զթուղթ խնդրանաց և աղերսանաց առ Գրիգոր վարդապետն, թէ մինչ ի Բուրսայ եկի և աստէն հիւանդացայ և անկեալ կամ ի մահիճս. վասն որոյ ոչ կարեմ գալ. խնդրեմ զի բարձցես յինէն զբանադրանսն և արձակեսցես ի կապանաց և առաքեսցես ինձ և ժողովրդեանն զթուղթ օրհնութեան, զի թերևս աղօթիւք և օրհնութեամբ քով աստի դարձայց և ողջութեամբ հասից ի տեղին իմ։ Իսկ վարդապետն ի տեսանելն զգիրն՝ անկեղծ մտօք հաւատաց խօսից եպիսկոպոսին իբրև ճշմարիտ խօսից. գրեաց զթուղթ արձակման և օրհնութեան եպիսկոպոսին, այլև զգիր օրհնութեան Իզմիրայ քաղաքին և առաքեաց առ Նիկողն, որ ի Բուրսայ էր։ Եւ Նիկողն առեալ զթուղթն զայնոսիկ դարձաւ և գնացեալ էհաս ի Իզմ։ Եւ Իզմացիք իբրև տեսին զթուղթն Գրիգորի վարդապետին՝ ուրախացան և միաբանեցան ընդ եպիսկոպոսին։ Իսկ Գրիգոր վարդապետն ի ձեռն ճանապարհորդաց և յայլոց գիտողաց հաւաստեաւ ի վերայ էհաս, թէ Նիկող եպիսկոպոսն յորժամ եկեալ է ի Բուրսայ՝ ոչ հիւանդացեալ է և ոչ տկարացեալ, այլ խորհրդակցութեամբ Արիստակէսի վարդապետին զկայ առեալ կացեալ է ի Բուրսայ և հնարիւք և պատրողական բանիւք արձակման զթուղթ առեալ է և գնացեալ ի տեղի իւր։

Եւ ի վերայ այսմ խարէութեանս, զոր արարեալ է եպիսկոպոսն ընդ վարդապետին՝ կարի վշտացեալ է վարդապետն և զամենայն խարէութիւն գործոց նորա գրով ծանուցեալ է Լոռեցւոց. այլև գրեալ է՝ թէ զնոյն առաջին նզովքն և բանադրանքն տակաւին կայ ի վերայ այդմ եպիսկոպոսիդ: Վասն որոյ և Լոռեցիք յետս կացին յեպիսկոպոսէն և ոչ ընդունէին զնա. և անկաւ հակառակութիւն ի մէջ եպիսկոպոսին և ժողովրդոյն յոյժ սաստիկ:

Եւ մնացին այսպիսաւ հակառակութեամբ՝ մինչև հասին ի թուականն մեր հազար և եօթանասուն և ինն. յորում ժամանակի առաքեաց Մոսէս կաթուղիկոսն զմեծ աշակերտն իւր՝ զկեսարացի Խաչատուր վարդապետն, վասն նուիրակութեան արքայ, Էջմիածնի յաշխարհն արեւմտական՝ յԱրաբեստան և ի Հոռոմստան: Եւ էր Խաչատուր վարդապետն այր հեզ և հանդարտ և քաղցրաբարոյ, ոչ անիմաստ և անբան, այլ իմաստուն և բանիբուն, որ լոկ տեսութեամբ միայն շահէր զառ ինքն պատահեալսն, որոյ վասն զնա կարգեցին նուիրակ: Եւ Խաչատուր վարդապետն անցեալ զամենայն տեղեօք՝ եկեալ էհաս ի Կեսարիայ և անդ պատահեցաւ մեծի վարդապետին Գրիգորի: Եւ Գրիգոր վարդապետն զբազում բանս հրամայականս պատուիրեաց Խաչատրոյ վարդապետին՝ թէ ի հասանելն քո ի Լոռ մի՛ դուցէ թէ ընկալցիս զՆիկոլն ի կարգ և ի պատիւ եպիսկոպոսութեանն: Եւ Խաչատուր վարդապետն նուիրակեալ զամենայն տեղիս՝ եկեալ էհաս ի Լոռ, առ որ մատուցեալ ժողովրդականացն՝ սկսան բողոքելով և կսկծալի զամբաստանութիւն առնել զՆիկոլայէն վասն պէսպէս անցուածոց և գործոց, որ ի նմանէ տեսեալ էին և կրեալ: Իսկ վարդապետն ըստ իւրում քաղցր և հեզ բնութեանն ոչ առ երեսս յանդիմանէր զՆիկոլն, այլ մեղմ և խրատօրէն, ինքն և նա միայն, խօսէր ընդ նմա, ըստ պատուիրանին Տեառն, թէ Առաջիր նմա՝ յորժամ դու և նա միայն իցէք: Իսկ Նիկոլն բնաւ ոչինչ հոգայր յամենայնէ, զի ոչ ի վարդապետէն ամաչէր և ոչ ի ժողովրդոց ամբաստանութենէն երկնչէր, այլ իբրև զանշարժ լեառն արձանացեալ կայր ի կամս իւր:

Եւ եղև երբեմն յաւուր կիւրակէի աւետարան կարդալ. և Նիկոլ եպիսկոպոսն հրամայեաց իւրում աբեղային, թէ գնա կարդա. իսկ Խաչատուր վարդապետն ասաց. Թող նա չկարդա՝ այլ այն ոմն. իսկ Նիկոլն ոչ անսաց բանից վարդապետին, այլ իւրում աբեղային ետ կարդալ զաւետարանն։ Իբրև ետես վարդապետն, թէ ի մէջ քահանայից և ժողովրդոցն յայտնի և համարձակ քամահեաց զբանս իւր և ի չմորդի ունի զինքն՝ դարձաւ առ ժողովուրդն և ասաց. Այն մարդն անիծեալ լինի, որ սորա յանէն զծունր դնէ։ Զայս ասաց վարդապետն և ելեալ յեկեղեցւոյն՝ գնաց ի տեղին իւր ի վերնատունն, ուր լինէր ի հասարակ աւուրսն։ Իսկ ժողովուրդքն իբրև զայն լուան և տեսին, ինքեանք ևս ամենեքեան միահաղոյն զրոհ տուեալ ելին արտաքս յեկեղեցւոյն, և մնացին յեկեղեցին Նիկոլն և այլք ոմանք, և զկնի արձակելոյ ժամին՝ նոքա ևս գնացին ի տեղիս իւրեանց։ Իսկ ի ժողովրդոցն Հայոց դատաւորքն և իշխանքն եկին ի նոյն ցերեկին և փակեցին զդուռնն եկեղեցւոյն և առին յինքեանս զբանալին. և մնաց եկեղեցին փակեալ աւուրս ինչ։ Այլ և դատաւորքն և իշխանքն Հայոց խօսեցան ընդ վարդապետին Խաչատրոյ և հաւանեցուցին զնա, զի նստցի յաթոռ և կարգեսցէ ատեան դատաստանի առ ի դատել զՆիկոլն վասն յանդգնութեանն և այլ ևս անկարգութեանն և յանցանացն։ Իբրև իմացաւ եպիսկոպոսն զգործս զայս՝ եբեր առ ինքն զերկուս ոմանս ի վկայից Փռանկաց, որ ի մէջ ամենայն դատաստանի նոքա գան և տան զվկայութիւն, և ըստ նոցին վկայութեանցն դատաւորքն տան զվճիռ դատաստանին, քանզի զայսպիսի կարգս ունին աշխարհն Իլախաց ի մէջ իւրեանց։ Խօսեցաւ Նիկոլն ընդ վկայիցն այնոցիկ և հաճեցոյց զկամս նոցա, զի յորժամ կոչեսցէ զնոսա՝ և նոքա անյապաղ եկեսցեն ի կոչ նորա։ Եւ յաւուր դատաստանին, յորում նստաւ վարդապետն ի դատաստան՝ նստան ընդ նմա և իշխանքն և դատաւորքն Հայոց, կոչեցին և զՆիկոլն առ ի դատել. բայց Նիկոլն յառաջագոյն զվկայսն զայնոսիկ բերեալ էր ի տունն յայն և ի տեղի թաքուն կացուցեալ էր զնոսա առանց գիտելոյ արանցն Հայոց։ Իբրև կոչեցին զՆիկոլն ի ներքս՝ և

նա եկեալ հրամայեաց իւրոց սպասաւորացն դնել զաթոռն իւր ի հանապազորդեան տեղին իւր, զի անդ նստցի ինքն. իսկ իշխանքըն ասացին առ Նիկոլն. Զի՞նչ առնես, զի՞ նստիս, զի ի դատել կոչեցեալ են զքեզ. կաց ի յոտին այդր: Եւ Նիկոլն ասաց. Եւ ո՞վ է դատողն իմ: Ասեն իշխանքն. Եկեալ նուիրակս, զոր տեսանես, և դատաւորքս, որք աստ կան: Յայնժամ բարձու ձայնիւ գոչեաց Նիկոլն առ թաքուցեալ վկայսն, թէ եկայք արտաքս. և նոքա առ ժամայն եկին և կացին ի մէջ հանդիսին, առ որս ասաց Նիկոլն. Վասն Աստուծոյ ձերովք աչօք տեսէք և լերուք ինձ վկայք, զի ես եպիսկոպոս եմ, և սոքա աշխարհականք զօրով ժողովեալք են առ ի դատել զիս, և վարդապետս այս, որ ի Թուրքաց աշխարհէն եկեալ է աստ՝ ի չաշուտութիւն եկեալ է յայս երկիրս, ի գլխել զամենայն ուղղութիւն մերոյ աշխարհին. և սա այժմ սոքօք նստեալ են առ ի դատել զիս: Եւ վկայքն ասեն. Զոր ինչ մերովք աչօք տեսաք՝ սմին վկայեմք, և ուր և տանիս զմեզ՝ տամք զվկայութիւնս: Յայնժամ ամենեքեան ժողովեալքն ի Հայոց՝ եթէ քահանայք և եթէ իշխանք և դատաւորք, եղեն պակուցեալք և զարհուրեալք յերկիւղէն Փռանկաց: Եւ սկսան մի մի ելանել և փախչել. և վարդապետն ևս ելեալ՝ գնաց ի տեղի իւր:

Զկնի այսորիկ Նիկոլ եպիսկոպոսն սկսաւ սաստութեամբ և կեղծաւորութեամբ առաքել միջնորդս և պատգամաւորս առ վարդապետն և առ քահանայսն և առ իշխանսն վասն հաշտութեան առնելոյ. Բաւական է այսքան հակառակութիւնդ ձեր և այլ մի՛ ևս հակառակիք և մի՛ փակէք զեկեղեցին, այլ բացէք զդուռն եկեղեցւոյն: Իսկ Լովացիք ամենեքեան գիտելով զխարդախութիւն նորա, ոչ հաւատային նմա: Բայց վարդապետն նկատեալ իւրովք մտօքն՝ ետես, զի ցորքան գրգռեն ի խռովութիւնն և զվէճ և զպայքար դնեն ընդ եպիսկոպոսին՝ առաւել և բազում յորդեալ յառաջադայի ի նմանէ գործ չարութեան: Վասն որոյ յաղագս վտանգիս այսմիկ ակամայ կամօք կամեցաւ առնել հաշտութիւն ընդ եպիսկոպոսին, զոր և խօսեցաւ ընդ քահանայիցն և ընդ իշխանացն, զի արասցեն զհաշտութիւն. և նոքա ոչ կամեցան: Ասաց վարդապետն. Վասն այսպիսի չարեացն, որ հանդիպեալ է

գալ յեպիսկոպոսէդ՝ երկնչիմ ես և կասկած կրեմ, թէ մի գուցէ ի վերջ յամառութեանս մերոյ մեծագոյն ինչ վնաս կրեսցուք ի դմանէ: Ետուն զպատասխանի. Ամենեքին մի՛ երկիցես, վարդապետ, զի մեք ունիմք զօրագոյն Նոմոս յառաջին և ի վաղեմի թագաւորաց, զի ցորքան պատահիցի դատաստան իւիք ինչ գործոյ՝ մեր Հայոց ազգի դատաւորքն արասցեն զդատաստանս Հայոց և ոչ թէ դատաւորք ազգին Փռանկաց. այլ և ունիմք զապրանս ընդ ազգանաց նոցա և զեկեալս ընդ եկելոց նոցա. և դու զի՞ ես երկնչիս: Եւ վարդապետն ոչ բնաւ հաճեցաւ ի բանս յայսոսիկ, այլ երբեմն հատարակ և երբեմն առանձին խօսէր ընդ նոսա գալ ի հաշտութիւն. և նոքա ոչ կամեցան: Յայնժամ կալեալ վարդապետին իւրով ձեռամբն զփողպատն իւր՝ թօթափելով ասաց. Անպարտ եմ ես ի մեղապարտութենէ դորին, դուք գիտասջիք:

Իսկ Նիկող եպիսկոպոսն՝ իբրև ետես, թէ միջնորդութեամբ իւրոց առաջնոց սուտ և կեղծաւոր պատգամաւորացն Լովացիք ոչ գան ի հաշտութիւն և ոչ բանան զեկեղեցին՝ այնուհետև գնաց առ եկեղեցականս Փռանկաց, որք կան ի մէջ քաղաքին Լովոյ և մանաւանդ առ այնոսիկ, որք ի կարգէն Եզվուիթայ են, միաբանեցաւ ընդ նոսա և եա զձեռագիր անլուծանելի. «Ես Նիկողայոս եպիսկոպոս Հայոց իմով կամաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռոմայ և մտի ի հնազանդութիւն փափին ամեն հետևելովքն իմովք, կատարել զամենայն հրամանս, որք առ ի նմանէ»: Ի վերայ այսորիկ յարեաւ գլխաւորն Եզվուիթայ կարգին, էառ և զայլ ես եկեղեցականս յայլոց ես կարգացն, առին ընդ իւրեանս և զՆիկող եպիսկոպոսն Հայոց և տարան առ արքեպիսկոպոսն իւրեանց: Եւ նա սոքօք առաքեաց զպատգամս առ իշխանն քաղաքին, զի հրամայեսցէ ժողովրդոցն Հայոց՝ կամ հնազանդեսցին եպիսկոպոսին իւրեանց և բացցեն զեկեղեցին, և կամ եկեալ յատեան դատաստանի միմեանց յանդիման լիցին: Եւ ըստ հրամանի արքեպիսկոպոսին արար իշխանն. բայց ժողովուրդքն Հայոց ոչ զեկեղեցին բացին և ոչ ի դատաստան եկին: Մինչև երեք անգամ այսպէս կրկնեաց իշխանն, և Հայք ոչ զեկեղեցին բացին և ոչ ի դատաստան եկին:

Ապա յաւուր միում ժողովեցան բազում եկեղեցականք յԷզվայիթայ կարգէն, նաև յայլոց ևս կարգացն՝ առին և զկարգաւորս ի նմանէ. գնացին առ իշխան քաղաքին և առ դատաւորս՝ առին ի նոցանէ զզօրականս և զդատաւորս ընդ իւրեանս. սոքա ամենեքեան եկին ի դուռն եկեղեցւոյն Հայոց, զոր իշխանք Հայոց փակեալ էին: Եւ աղաչեցին առ իշխանս Հայոց, զի կամ ինքեանք եկեալ բացցեն զդուռն եկեղեցւոյն և կամ զբանալին տացեն: Եւ նոքա ոչ ինքեանք եկին և ոչ զբանալին տացին: Յայնժամ նոքա, որք եկեալք էին՝ հարեալ խորտակեցին զդուռն եկեղեցւոյն և առեալ ըզՆիկոլ եպիսկոպոսն մուծին յեկեղեցին և ի նա յանձնեցին զեկեղեցին ամեն ընչիւք, որ վերաբերի առ եկեղեցի: Այնուհետև եկեալ զօրականացն Փանկաց ի խնդիր երիցանց և իշխանաց Հայոց՝ զի իշխանական բռնութեամբ կալեալ արկանիցեն ի բանտս և ի տուգանս: Եւ նոքա փախուցեալք՝ թաքեան և ոչ բնաւ երևեցան: Եւ ի մէջ եկեղեցւոյն կայր գանձատուն, և ի նմա գիրք և անօթք յոյժ բազումք՝ գրեանք աւելի քան զհազար փերթ, ամենեքեան ընտիրք և պատուականք և վարդապետականք, յորս էին ոսկետուփ Աստուածաշունչք և Աւետարանք և Շարակնոցք և այլք գրեանք բազումք. սոյնպէս և անօթք, սկիհք և խաչք, քշոցք և բուրվառք, կանթեղք և աշտանակք, շուրջառք և եմիփորոնք, թագք և վակասք, սուրբ նշանք և սրբոց նշխարք. և որ ի հարց և ի հաւուց, ի վաղեմի և ի նախկին թագաւորաց ունէին մուրհակք և նամակք, և այլ ևս ինչ յոյժ բազում՝ սոքա ամենեքեան ի մէջ եկեղեցւոյն էին ի նոյն գանձատանն, զորս գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբն Նիկոլն: Ոչ միայն զայս եկեղեցիս, այլ և զայլ եկեղեցիսն և վանորայսն, որք ի քաղաքին և որք շուրջ զքաղաքաւն էին՝ և զամենայն աւանդս նոցա, զտունս և զանդաստանս, զաղօրիս և զխանութս կալաւ եպիսկոպոսն ընդ իւրով իշխանութեամբն ասելով. Ես եմ եպիսկոպոս, իմ են եկեղեցիք ամենեքեանք և աւանդք իւրեանց: Իսկ Խաչատուր վարդապետն և ամենայն ժողովուրդքն Հայոց, որք ի Լվով կային՝ մնացին արտաքոյ եկեղեցւոյ. քանզի թէ մտանէին յեկեղեցին՝ հարկ էր նոցա մտա-

նել ընդ իշխանութեամբ փափին և ընդունել զնորին զաւանութիւնն, այլ և պարտ էր հնազանդել Նիկոլայի եպիսկոպոսին։ Եւ Լվովացիք ոչ անարժէին զայսոսիկ, վասն որոյ եղեն վարանեալք և տարակուսեալք և ոչ կարէին գտանել զճար ինչ։ Եւ մնացին ժողովուրդքն Հայոց, որք ի Լվով քաղաքին էին՝ առանց եկեղեցւոյ։

Եղև զի վարդապետն Խաչատուր ել ի քաղաքէն և գնաց ի Սուրբ Խաչ կոչեալ վանքն. իսկ ի ժողովրդոցն ով ոք որ կամէր գնալ առ նա՝ համարձակութեամբ գնայր և գայր։ Եւ ահա յաւուր միում եկին բազում զինուորք և զօրականք զինուք և պատրաստութեամբ և շուրջանակի պատեցին ըզվանսն։ Եւ ի հարցանելն տեառնացն՝ պատասխանէին զինուորքն, թէ ի Թուրքաց աշխարհէն չաշուտ է եկեալ և ահա ի յայս տեղս է. կամիմք ըմբռնել զնա։ Իբրև սուղ ինչ ժամս էանց ի վերայ և տեսին, զի ահա եկն Նիկոլ եպիսկոպոսն իւրովք սպասաւորօքն և փառօք։ Եւ ի մերձենալն իւր առ զինուորսն հարցանէր զնոսա, թէ վասն է՞ր ժողովեալ էք աստ. ասեն զինուորքն. Ի Թուրքաց աշխարհէն չաշուտ եկեալ է աստ. կամիմք ըմբռնել զնա։ Նա որս ասաց Նիկոլ. Ո՛չ է մարթ և պատշաճ ըմբռնելն ձեր զնա, այլ դուք դարձարուք և գնացէք ի տեղիս ձեր՝ և ես գնացեալ տեսանեմ և խօսիմ ընդ նմա։ Եւ զինուորքն ամենեքեան իսկոյն ցրուեցան և գնացին։ Իբրև այսպէս եղև զլուր գործոյն՝ որոյ վասն կարծեցեալ եղև ի ժողովրդոցն Հայոց, թէ ի հնարից եպիսկոպոսին եկեալ էին զինուորքն վասն կրկեցուցանելոյ զվարդապետն։ Իսկ եպիսկոպոսն գնաց առ վարդապետն, էառ զնա անտի և էբեր ընդ իւր ի քաղաքն։ Եւ մինչ էր վարդապետն ի քաղաքին՝ հանապազ գային առ նա աբեղայք և այլք ոմանք ի Փռանկաց և առնէին զհակաճառութիւն ընդ վարդապետին ի վերայ երկու բնութեան և միոյ բնութեան և իբրև զևտիքէական հերձուածողին խոտորեալ զՀայս՝ և ի տգիտութենէ և յիմարութենէ մոլորեալ։ Իսկ վարդապետին մտածելով զգործս անցելոյն և խորհելով զապառնոյն և տեսանելով զնեկայինն՝ գիտաց, զի ոչ գոյ ինչ օգուտ, այլ զուր աշխատանէր և ի նանիր վաստակ. վասն որոյ ելեալ ի Լվովայ և

զնոյն զճանապարհս իւր, մինչև եկեալ էհաս յԷջմիածին առ Մովսէս կաթուղիկոսն և առ այլ վարդապետսն, որք ամենեքեան ցուցին սրտիւ, արտասուաթոր աչօք սգային վասն ազգին Հայոց, որք էին ի Նոր քաղաքին, թէ զիարդ լինի փրկութիւն նոցա։

Եւ որպէս Տէրն Քրիստոս ասաց. Նախ զհզօրն կապեսցէ և ապա զտունն նորա աւար հարկանիցէ՝ այսպէս արար և Նիկոլ եպիսկոպոսն. Զի յետ գնալոյ վարդապետին, որպէս ըդ-գազանն տեսլեանն Դանիէլի, սկսաւ զամենայն ժողովուրդն և զգանձս և զամենայն ինչս եկեղեցւոյն ուտել և մանրել և զմնացորդսն առ ոտս արկանել։ Քանզի որպէս ի ժամանակս կռապաշտ թագաւորացն ունէին քրիստոնեայքն զհալածանս՝ այսպէս և յայսմ ժամանակի եղև ի վերայ ազգին Հայոց, բնակելոցն ի Նոր քաղաքին։ Քանզի կարի զօրութեամբ զօրացաւ Նիկոլ եպիսկոպոսն և բռնացաւ ի վերայ ժողովրդեանն Հայոց. կալնոյր զերիցունս, առ ով ոք և գտանէր սուղ ինչ վնաս և արկանէր ի բանտ և առնոյր ի նոցանէ զտուգանս զերիս հարիւր և չորս հարիւր ղուռուշս. սոյնպէս և զերխանս, որք և դատաւորք էին կարգեալք՝ կալեալ տուգանէր։ Եւ հասարակ զամենայն ժողովուրդսն վտանգէր. ոչ թողոյր ի թաղել զմեռեալսն վասն գանձի. և յորժամ առնոյր զգանձս ըստ հաճոյից կամաց իւրոց՝ ապա տայր զհրաման թաղելոյ և զտեղի գերեզմանի առ ի թաղել։ Եւ յետ թաղելոյն՝ յորժամ զտապանաքարն ի վերայ գերեզմանին կամէին դնել՝ յայնմանէ պատճառէ միւսանգամ առնոյր զգանձս և ապա հրաման տայր դնել զքարն։ Այն պատճառի վասն և պսակք և մկրտութիւնք խափանեցան, զորս տարեալ յայլ քաղաքս՝ պսակէին և մկրտէին, և զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին։ Եւ զայսոսիկ առնէին ի ծածուկ՝ թարց գիտելոյ եպիսկոպոսին։ Եւ յորժամ իմանայր՝ մեծաւ ցասմամբ զայրանայր և ըմբռնէր զերէցն և զարարօղ այրն, բազում խոշտանգանօք չարչարէր և զծանրագոյն տուգանս առնոյր։

Իսկ երբեմն՝ զի զոմն երիտասարդ կամեցան պսակել ի ծածուկ՝ թարց գիտելոյ եպիսկոպոսին. որոյ վասն երեք քահանայք բերին, զի ի տան անդր արասցեն զպսակն։ Եւ ծա-

նուցեալ եղև այս եպիսկոպոսին, որոյ առաքեալ զօրականս ու-նել զերիցունսն և զուսարս Հարսանեացն և արկանել ի բանտ։ Ամին իրաց իրազգած եղեալ տեարց Հարսանեացն և երի-ցանցն՝ առ երկիւղէն սկսան թաքչել. զոմն յերիցանցն եդին ի մէջ սնդուկի և կողպեցին, իբր թէ կահք և զարդք կա-նայի գոլ, և երկուքն յերիցանցն մտին ի մէջ սօրային, որ շինեալ էին ի մէջ տանն վասն Հրավառութեան։ Իսկ զօրա-կանացն ի յուզելն և ի խնդրելն զերիցունսն՝ գտին ի մէջ սօ-րային, Հանին զնոսա ի սօրայէն և կապեցին ձեռս ի յետս, գլխիբաց և բոկոտանս, սևացեալ երեսօք և մարմնով, զի մուր սօրային սևացուցեալ էր զնոսա. և այնպէս տարան զնոսա առաջի եպիսկոպոսին։ Եւ եպիսկոպոսն յետ բազմաց անար-գանաց և սպառնալեաց էարկ զերիցունսն և զուսարս Հար-սանեացն ի բանտ. և էառ զչորս Հարիւր ղուռուշ յերիցանցն և զչորս Հարիւր ղուռուշ ի տեարց Հարսանեաց՝ և ապա եթող, որք գնացեալք արարին զՀարսանիսն։ Եւ բազում տղայք մեռանէին առանց մկրտութեան, և բազում տղայք կային անմկրտեալք Հնգետասան և վեշտասանամեայ, բա-զում Հիւանդք առանց Հաղորդութեան մեռանէին և բազում մեռեալք միայն անթաղք յամս բազումս։ Դնէին զմեռեալսն ի մէջ փայտեայ տապանի և լնուին զտապանսն կպրով մին-չև որ ծածկէր զմեռեալսն, և դնէին ի ցուրտ տեղիս և պա-Հէին՝ սպասելով այցելութեան Տեառն։ Եւ բովանդակ եօթն խորՀուրդ եկեղեցւոյ և ամենայն ժամակարգութիւն խափա-նեցաւ։ Եւ մնացին ողորմելի ժողովուրդքն ի մէջ անՀնար-նեղութեանց՝ առաւել քան զոր ի ժամանակս կռապաշ-տութեանն։

Ապա ժողովուրդքն յաղագս յոքնակի նեղութեանց իւ-րեանց բողոք բարձին ի սուրբ աթոռն Էջմիածին. վասն զի տէր Սիմօն անուամբ զոմն քաՀանայ և զերևելի այր մի աշ-խարՀական առաքեցին առ կաթուղիկոսն տէր Մօսէս, զի Հո-գասցէ և Հնարեսցէ նոցա զփրկութիւն։ Եւ կաթուղիկոսն գրեաց զնամակս խոՀեմականս և լի իմաստութեամբ, խոնարՀ և մաղթողական բանիւ առ թագաւորն Լեհաց և առ նորին իշխանսն և առ արքեպիսկոպոսն քաղաքին Լովոյ, որ յաղ-

գէն Փռանկաց, նաև առ փափն, և խնդրեաց՝ թէ ողորմեցա-րուք տառապելոյ ժողովրդեանն և շնորհեցէք զեկեղեցին նո-քեանց և մի խափանէք զեօթն խորհուրդ եկեղեցւոյ, զոր ոչ է պատեհ առնել քահանայից Պրիտասսի: Իբրև հասին նո-մակքս այսոքիկ ի Լւով քաղաք, և ժողովուրդքն Հայոց տա-րեալ մատուցին իւրաքանչիւր տեարց, թագաւորին և այլոց: Եւ նոքա հրամայեցին թարգմանել ի գիր և ի բարբառ Իլա-խաց. որոց յընթեռնուլն հաճեալ հաւանէին ամեն բանից և որպիսութեանց: Որոց բանից վերայ զթացաւ սիրտ թագա-ւորին, որոյ անուն էր Վլատիսլաւ, զոր և հրամայեաց, թէ տուք զեկեղեցին Հայոց յինքեանս: Բայց Յեզվայիտայք ընդ-դիմացան և ոչ թողին, ասելով թագաւորին. Այս եկեղեցական և հոգևորական գործ է, որ վերաբերի առ փափն և առ արքե-պիսկոպոսն, և նոքա պարտին հոգալ զսա, որոց անկ է և պա-տեհ, և ոչ քեզ, որ մարմնաւոր թագաւոր ես. վասն որոյ ոչ է քեզ պատեհ խառնել յայս գործ, որ է հոգևոր: Եւ թա-գաւորն վասն զթալոյ ի տառապանս ժողովրդեանն Հայոց, խնդրեաց յարքեպիսկոպոսէն իւրեանց տալ զեկեղեցին Հայոց. ամեն ևս ընդդիմացան Եզվայիտայքն և ոչ թողին տալ: Եւ վասն առաւել զթալոյ թագաւորին ի վերայ Հայոց՝ ինքն թագաւորն յարեաւ և գնաց յեկեղեցին Հայոց, զի տացէ զեկեղեցին Հայոց յինքեանս ի Հայս: Իբրև զայն գիտաց Նիկոլ եպիսկոպոսն՝ խելոյն զգեցաւ զգեստ պատարագի, և բարձեալ զհաղորդ պատարագին ի վերայ գլխոյ իւրոյ և ելեալ եկն ընդ առաջ թագաւորին, որում ի տեսանելն թագաւորին զարհուրեցաւ ի տէրունական խորհրդոյն և ոչ ինչ զօրեաց առնել. այլ թողեալ զամենայն՝ դարձաւ ի տեղի իւր և յա-պարանս:

Այս հարկ եղև Հայոց գնալ ի Հռոմ առ փափն, զոր և բազում աղաչանօք առին զթուղթս բարեխօսութեան ի թա-գաւորէն և յարքեպիսկոպոսէն առ փափն, և գնացին ի Հռոմ: Ետուն ի փափն նախ զխնդրանաց թուղթն Մօսէսի կաթու-ղիկոսին և ապա զթագաւորին և զարքեպիսկոպոսին: Իբրև ետես Նիկոլ եպիսկոպոսն, թէ ժողովուրդքն գնացին ի Հռոմ՝ գնայ ինքն ևս ի Հռոմ. և անդ ևս անիրաւ Եզվայիտայքն

ներհակացն Հայոց և ձախեցին զբանս նոցա, որ ոչ եղև տուեալ եկեղեցին Հայոց. զոր և ունայն դարձան ողորմելի ժողովուրդքն և եկին ի Լվով։ Դարձաւ և Նիկոլ եպիսկոպոսն ի Հռոմայ և եկն ի Լվով։ Եւ կայր ընդ առաջնոյ կարգին՝ վտանգելով զժողովուրդսն և եւս անառակութեամբ։

Թող զառաջինն՝ երկիցս և երիցս եւս առաքեցին Լվովցիք զքահանայս և զերեսփոխանս յԷջմիածին առ կաթողիկոսն Փիլիպպոս. զի Մովսէս կաթողիկոսն վախճանեալ էր և Փիլիպպոս կաթողիկոսն բազում անգամ զանազան կերպիւ զթուղթս գրեաց ի Լվով և յիւրոց աշակերտաց և վարդապետաց առաքեաց ի Լվով. սակայն այնու եւս ոչ եղև օգտութիւն ինչ Հայոց ժողովրդեանն։ Այլ և ի Լվովայ քաղաքէն եկեղեցականք որք բարեպաշտօնք, որք էին աբեղայք և երիցունք, զիւրոց աշակերտք, վասն այսոցիկ հալածանաց եկին յԷջմիածին և անդէն բնակեալ կացին. որք էին որդիք նշանաւոր արանց, յորոց զոմանս ձեռնադրեաց Փիլիպպոս կաթողիկոսն եպիսկոպոս Լվովայ և առաքեաց անդ առ ի հովուել զժողովուրդսն. սակայն և այնու եւս ոչ եղև օգտութիւն ինչ ժողովրդեանն Լվովայ։ Այլ և ի սոյն ժամանակի ի կարգէն Դոմինիկոսի Պօղոս անուամբ վարդապետ ոմն՝ այր իմաստուն և երևելի յազգէն Ֆռանկաց, եկն յերկիրն Նախչուանոյ ի մէջ ախթարմայեցն, որք անդ կան։ Եւ Փիլիպպոս կաթողիկոսն զբազում սէր և զբարեկամութիւնս արար ընդ Պօղոսին այն վասն օգտի ժողովրդեանն մերոյ և փրկութեան եկեղեցւոյն Լվովայ։ Եւ Պօղոսն այն յետ կատարման գործոյ իւրոյ կամեցաւ գնալ ի Հռոմ։ Եւ գնալով զճանապարհս իւր՝ հանդիպեցաւ ի Լվով քաղաք. և Լվովցիք եւս բազում աղաչանօք խնդրեցին ի Պօղոսէ և զբազում մեծարանս արարին նմա, և զգանձս եւս յոլովս առ ի թոշակ ճանապարհի տուին նմա, զի թերևս օգնութիւն ինչ հնարեսցէ նոցա ի դուռն փափին։ Եւ յորժամ եհաս Պօղոս ի Հռոմ՝ և մինչ նա ըղբանս ինչ բարեխօսութեան վասն Հայոց առաջարկեալ էր և խօսէր ի դուռն փափին՝ վաղվաղակի գնաց զկնի նորա և Նիկոլ եպիսկոպոսն ի Հռոմ ի դուռն փափին և խափանեաց զօգնութիւն Պօղոսի ձեռնտուութեամբ Եզվայիթոյն։ Եւ այսպէս յա-

մէն կողմանց խափանիչաւ փրկութիւն և օգնութիւն տառա-
պեալ ժողովրդեան Լովայ քաղաքին։ Եւ ընդ Գօղոսին գնացողքն
տրտում և ունայն դարձան անտի։ Եւ Նիկոլ եպիսկոպոսն ևս
դարձաւ ի Հռոմայ և եկն ի Լով քաղաք. և կեայր ըստ ա-
ռաջնոյ վարուց իւրոց՝ և ևս առաւել անառակ։ Եւ զվերոյ-
ասացեալ գրեանսն և զսրբութեան անօթսն և զամենայն
աւանդս եկեղեցւոյն, զորս վաճառեաց և զորս կաշառս բաշ-
խեաց և զորս ձեռամբ Հրէից խորտակեալ արար զարծաթ
և վաճառեաց։ Եւ զայնքան զբազում և զանթուելի զինչսն և
զգանձսն ցիր և ցան արարեալ՝ բնաւին վատնեաց, որ ոչինչ
մնաց՝ միայն լոկ դատարկ քարեայ եկեղեցին. զի կեայր անա-
ռակ և զեղխ և շուայտ վարուք, յայտնի և համարձակ՝ յոռ-
ումքէ վկայելով։ Եւ բազում գրեանք և անօթք ի Նորին
վաճառելոյն եկին յերկիրս Հայոց և առ մեզ հասին. զորս
վաճառականք գնով առեալ բերին, որ սքանչելի էր տեսողացն։

Եւ ողորմելի ժողովուրդքն Լովայ զվտանկս և զչարչա-
րանս բազումս կրեցին վասն զեօթն խորհուրդս եկեղեցւոյ
խափանելոյն։ Եւ բազում այք երկիւղածք և վրէժխնդիրք
հայրենեաց օրինաց մեկնեցան ի տանց և ի տեղեաց՝ և եկեալք
ի բնիկ աշխարհէն հեռացան՝ անջատեալք յընտանեաց և յազ-
գաց, պանդուխտք և նժդեհք շրջագայեալք յօտար աշխար-
հի. և այնպիսեաւ կենօք հեծելով և յոգւոց հանելով վախ-
ճանեցան։ Եւ զայլ ևս չարչարանս և զնեղութիւնս յոքնակի
կրեցին ժողովուրդքն Հայոց, զի հալածումն մեծ էր ի վերայ
նոցա. որք և զրկեցան յեկեղեցւոյն իւրեանց և յայնքանեաց
ստացուածոցն. և իւրեանց ևս զգանձս վատնեցին ի դրունս
իշխանաց և թագաւորաց և աստ և անդ յուղեկնացութիւնս։
Եւ այնքան աշխատեցան երկոքին կողմանքն՝ այսինքն Նիկոլն
և ժողովուրդքն՝ զի լքան ի բազմօրակի հնարագործութեանց
և ի բազմաժամանակեայ ներհակութեանց. քանզի սկիզբն
խռովութեանս եղև ի հազար և եօթանասուն և ինն թուին,
որ զեկեղեցին յափշտակեաց Նիկոլն. և մնացին այնպէս մինչ
որ հասին ի հազար և հարիւր և երկու թիւն մեր։

Յորում ժամանակի տէր Փիլիպպոս, կաթուղիկոսն սրբոյ
Աթոռոյն Էջմիածնի, գնաց յԵրուսաղէմ, և անտի եկն ի

մեծահանդէս քաղաքն ի Կոստանդնուպօլիս, որոյ գալստեան համբաւն հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, նաեւ ի Լով քաղաք եւս էհաս։

Ի սոյն ժամանակի հանճարեղ խորհրդական Նիկոլ եպիսկոպոսն նկատեալ տեսութեամբ իւրոց մտաց, թէ ժողովուրդքն այսքան չարչարեցան եւ ոչ կարեցան ի բնէր կամաց իւրեանց, այլ տակաւին ի նոյն կամս յամառեալք կան՝ վասն որոյ խորհեցաւ գնալ ի Կոստանդնուպօլիս առ կաթուղիկոսն Փիլիպպոս, զի թերեւս բարձցի յինքենէ անուն բանադրեցելոյ, նաեւ ընկալցի ի նմանէ ի վերայ ժողովրդեանն զթուղթ օրհնութեան եւ առ ինքն հնազանդութեան։ Բայց զի էր դատարկ եւ ունայն ի գոյից եւ ոչ ունէր զպաշար ճանապարհի՝ վասն որոյ խորհէր գտանել ամեն հնար. զոր եւ էգիտ այսպիսու կերպիւ. Եւ էր ի Թոխաթ քաղաքի յազգէն Հայոց այր մի երեւելի եւ անուանի, որոյ անուն էր մահդասի Մարկոս, որ եւս զգանձս յոլովս Սիմօն անուամբ որդւոյ իւրոյ եւ առաքեաց յաշխարհն Լեհաց վաճառականութեան աղագաւ։ Եւ Սիմօնս այս եկեալ էհաս ի Լով քաղաք, հանապազ ուտէր եւ ըմպէր եւ կեայր ի խրախութեան. նաեւ եղեւ ծանօթ եւ բարեկամ ընդ Նիկոլայի եպիսկոպոսին, զոր եւ խոստացաւ եպիսկոպոսին եւ ասաց. Թէ ունիս զկամս գնալոյ առ կաթուղիկոսն՝ մի հոգար վասն պաշարի, զի որքան եւ պիտոյասցի քեզ դրամ վասն ճանապարհի՝ զամենայն ես տամ։ Զոր եւ ըստ իւրում խոստմանն ետ եպիսկոպոսին զերկուս հազար դուռուշ նաղդ դրամ. իբրեւ զայն էառ եպիսկոպոսն՝ ապա ելեալ ի Լովայ եկն ի Բուղդան եւ գնայր առ կաթուղիկոսն Փիլիպպոս։

Զայս տեսեալ ժողովրդականացն Հայոց, որք ի Լով, թէ գնաց Նիկոլ եպիսկոպոսն առ կաթուղիկոսն՝ սահմանեցին եւ նոքա զայր մի երեւելի յիւրեանց կողմանէ, որ էր մի ի դատաւորացն Հայոց՝ որոյ անուն էր Խաչկօ, գնալ առ կաթուղիկոսն Փիլիպպոս՝ տանել նմա զգիրեալ թուղթս եւ ըղպատուիրեալ բանս բազումս։ Եւ Նիկոլ եպիսկոպոսն եւ Խաչկօ դատաւորն որոշ ի միմեանց գնացեալ հասին ի Կոստանդնուպօլիս եւ պատահեցան կաթուղիկոսին։

Եւ ի յոլով աւուրս զկնի բազում խօսից եւ գործոց կա-

տարուամն գործոյն այն եղեւ, զի կաթուղիկոսն Փիլիպպոս հրամայեաց, զի զբանս չորս գլխով յանձն առցէ Նիկոլ եպիսկոպոսն և զայն ձեռնագրով իւրով դրոշմեսցէ և տացէ Փիլիպպոսի կաթուղիկոսին.

Նախ՝ զի զդաւանութիւն Լուսաւորչին և զնորին աթոռակալ Հայրապետացն դաւանեալ խոստովանեսցի Նիկոլն և իւր հետեւողքն, այսինքն եկեղեցականք և աշխարհականք:

Երկրորդ՝ զի զարարողութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ արասցէ ինքն և իւր հետեւողքն:

Երրորդ՝ զի զկնի վախճանի Նիկոլին՝ ի տեղի Նիկոլին եպիսկոպոս նստօղն ի կաթուղիկոսէն Էջմիածնի լինիցի օծեալ եպիսկոպոս և նորին հրամանաւն նստցի ի նոյն վիճակին և նոյն կաթուղիկոսին հնազանդ և հետեւօղ լիցի:

Չորրորդ՝ զի ինքն Նիկոլն միայն յիշեսցէ զանուն փափին, և զայն եւս ի պատարագն միայն և ոչ յայլ ինչ բանս և յարարողութիւնս: Նաև մի խառնեսցէ զջուր ի բաժակ սրբոյ պատարագին: Իսկ յեկեղեցական ժառանգաւորաց և ի կղերիկոսաց ոչ ոք բնաւ յիշեսցէ զանուն փափին. սոյնպէս և մի յիշեսցէ զկնի Նիկոլին նստօղ եպիսկոպոսն զանուն փափին ամենեւին, ոչ ի բանս և ոչ ի գործս, այլ միայն Նիկոլն՝ և զայն եւս ի պատարագն միայն: Եւ վասն յիշելոյ զանուն փափին Նիկոլն ինքն խնդրեաց ի կաթուղիկոսէն, զի այնմ միայն ներումն արասցէ. քանզի Նիկոլն ասաց, թէ ձեռնագրաւն, զոր ես տուեալ եմ Փռանկաց՝ ի կարգէ լուծանեն զիս, զուցէ մահապարտ եւս առնիցեն. վասն այսորիկ ներեաց կաթուղիկոսն: Եւ զայս չորս բանս գրեալ ի քարտէսի, կնքով կնքեալ և ձեռնագրով դրոշմեալ՝ Նիկոլն ետ կաթուղիկոսին Փիլիպպոսի և կաթուղիկոսն ետ Խաչիկ վարդապետին, զի ընդ իւր տարեալ ի քաղաքն Լով ի պահեստի ունիցին վասն առ յապայն զգուշութեան: Եւ ապա կաթուղիկոսն արձակեաց զՆիկոլն ի կապանաց բանադրանաց և ետ նմա զնմանս եպիսկոպոսական իշխանութեան իշխել ի վերայ ժողովրդոյն Լովայ: Եւ պատուիրեաց նմա, զի զգաստացեալ ի թափառական և ի խէնէշ վարուց իւրոց՝ եկեսցէ ի կրօնս և ի բարեշաւիղ ճանապարհս արդարութեան, որ վայել է անուան և աստիճա-

նի եպիսկոպոսութեան: Եւ Նիկոլ եպիսկոպոսն զամենայն հրամանս կաթուղիկոսին հոգւով չափ և յօժար կամօք յանձին կալեալ, և արձակեալ ի նմանէ՝ եկեալ էհաս ի Լւով քաղաք:

Եւ ժողովուրդքն Լւովայ համարէին, թէ զղջացեալ է և թողեալ իցէ Նիկոլն զթիւր վարս իւր. բայց տեսանէին, զի ի նոյն վարս կայ անփոփոխ: Այլ և յիշէին զանչափ զանձուցն իւրեանց և զանօթոյն վարուածն և զբազմապատիկ նեղութիւնսն, զոր հասոյց նոցա եպիսկոպոսն Նիկոլ՝ այրեալ խռովեալ տոչորէին սիրտք նոցա վասն այնորիկ ոչ կամէին միաբանել ընդ նմա. նա ևս առաւել փախչէին և կամէին նզով լինել ի նմանէ:

Եւ մինչ տակաւին ոչ էր գնացեալ Նիկոլ եպիսկոպոսն ի Կոստանդնուպոլիս՝ Փիլիպպոս կաթուղիկոսն ի Կոստանդնուպոլսէ զմի վարդապետ յիւրոց աշակերտաց, որոյ անունն էր Յոհան վարդապետ, որ էր տեղեաւ յԱրղնւոյ՝ այր փարթամ իմաստութեամբ և հանճարեղ բանիւ, առաքեաց գնալ ի Լւով, զի թերևս դուն գործեալ հնար իմն փրկութեան գտանիցէ եկեղեցեաց նոցա: Եւ ի գնալն Յոհաննու վարդապետին ի Լւով և ի գալն եպիսկոպոսին ի Կոստանդնուպոլսէ՝ ի ճանապարհին պատահեցան միմեանց. և Նիկոլ եպիսկոպոսն ի Յոհանէ վարդապետէն ևս էառ զթուղթ առ կաթուղիկոսն վասն ինքեան յանձնարարութեան և գնաց առ կաթուղիկոսն ի Կոստանդնուպոլիս: Իսկ Յոհան վարդապետն հասեալ ի Լւով՝ մնաց անդէն, մինչ որ Նիկոլ եպիսկոպոսն և Խաչկօ դատաւորն ի Կոստանդնուպոլսէ դարձան և եկին ի Լւով:

Իբրև ետես Յոհան վարդապետն, թէ ընդդիմանան ժողովուրդքն եպիսկոպոսին և ոչ կամին հնազանդել նմա՝ սկսաւ միջնորդել ի մէջ ժողովրդեանն և Նիկոլին վասն բառնալոյ զբազմաժամանակեայ զաղմուկն և զխռովութիւնն: Եւ զբազում աւուրս բազում խրատով, քարոզիւ և դասու և առանձնակի խօսելով ընդ ժողովրդեանն և ընդ եպիսկոպոսին՝ բազում ջանիւ և յոլով աշխատութեամբ հազիւ թէ կարաց հաւանեցուցանել զժողովուրդն հնազանդել եպիսկոպոսին: Ապա ի միասին առեալ Յոհան վարդապետն զժողովուրդն և զեպիսկո-

պան բերեալ էմոյծ յեկեղեցին իւրեանց, զոր յափշտակեալ էր եպիսկոպոսն։ Եւ եղև ի մտանել ժողովրդեանն յեկեղեցին՝ որպէս զխառնումն գառանց ի հօտս ոչխարաց մարց իւրեանց, զուռումն և զոչումն և ողբումն և աղիողորմ լաց և փղձկեալ սրտիւ յորդառատ արտասուս հեղուլ ժողովրդոցն յաչաց իւրեանց մեծաւ հառաչմամբ, վասն տարփալի կարօտանաց և փափագանաց որ առ եկեղեցին իւրեանց. և անդէն յեկեղեցւոջ ի նոյն ժամուն սկսաւ Յօհան վարդապետն մխիթարել զժողովուրդն յաստուածայնոց գրոց և ի վարուց և յօրինակաց սրբոց, որոյ բանից վերայ զովանայր սիրտ ժողովրդոց. և անկեալ ի համբոյր հաշտութեան զամենեսեան ընդ եպիսկոպոսին։ Եւ ժողովուրդքն և եպիսկոպոսն մխիթարեալ ուրախացան ընդ սրբոյ վարդապետին և գոհութեամբ օրհնէին զԱստուած։

Եւ էհաս համբաւ հաշտութեանս առ թագաւորն Լեհաց, որոյ անունն էր Եան Գեաժիմիր. քանզի ի քաղաքն Լոռ էր թագաւորն յաւուրս յայսոսիկ. որ և կոչեաց թագաւորն առ ինքն զՅօհան վարդապետն և առանձինն ի սենեկի խօսեցաւ ընդ նմա զբանս բազումս և լուաւ զպատասխանիս հանճարեղս և համեղս բանիւ։ Եւ սիրեաց թագաւորն զվարդապետն և զշնորհակալութիւն արար նմա վասն միջնորդութեանն և հաշտեցուցանելոյն զժողովուրդն և զեպիսկոպոսն և զբազմաժամանակեայ խռովութիւնն բառնալոյն։ Եւ մնաց անդէն վարդապետն Յօհան ամ մի ողջոյն և ապա դարձաւ և եկն ի սուրբ Էջմիածին։ Իսկ ժողովուրդքն Լոռայ և Նիկոլ եպիսկոպոսն կան ի վերայ նոյն պայմանադրութեանն, զոր սահմանեցին Փիլիպպոս կաթողիկոսն և Յօհան վարդապետն մինչև ցայսօր, յորում զպատմութիւնս շարադրեցաք՝ ի թուականիս մերում հազար և հարիւր և ինն, ի Մայիսի ամսոյ տասն։ Եւ խնդրեցուք ի Քրիստոսէ, զի առ յապայն խաղաղութեամբ և սիրով պահեսցէ ի հաճոյս բարեաց կամաց իւրոց և ի գովեստ անուան իւրոյ օրհնելոյն յաւիտեանս. Ամէն։

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ։

Գիրք պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրիժեցւոյ։ Ամսթերդամում 1669։

Պատմութիւն Հայոց Միք. վարդապետի Չամչեան հատոր Գ. Գլ. ԻԸ. Վենետիկ 1784։

Ճանապարհորդութիւն ի Լեհաստան Հ. Մինասայ Բժշկեան. Վենետիկ ի վանս սուրբ Ղազարու. 1830։

Հնախօսութիւն Հայաստանի. Ղ. Վ. Ինճիճեան Վենետիկ 1835 Հա. Ա. էջք 343—349.

Նիկոլ եպիսկոպոս և հալածանք նորա ընդդէմ Հայկազանց Լեհաստանի։ «Մասեաց Աղաւնի» 1857։

Միջնադէպ Հայոց ազգի պատմութենէն։ Նիկոլ կամ Հայոց ազգի կրած տարաբաղդութիւնքը Լեհաստանի մէջ։ Աշխատասիրեաց վերջը կիմնայք։ Ս. Պետերբուրգ. 1864։

Նամակք Մուրադեան Մելքիսեդեկ վարդապետի. «Մասիս» 1874, թ. 1492, 1516, 1517։

Տեղեկագրութիւն Հայոց գաղթականութեան որք ի Մոլտօ-Վալաքիա, Հունգարիա և ի Լեհաստան։ Ուղևորութիւն յամին 1876 Արշակայ Մ. Ալթունեան։ Փօքշան 1877։

Նիկոլ եպիսկոպոս և Պատմութիւն դարձին Հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն, Գաբրիէլի արքեպիսկոպոսի Այվազեան. «Արարատ» 1877, թ. Ա.—Ե.։

Նոյնն տպեալ առանձինն ի Վաղարշապատ. 1877։

Վահան վ. Բաստամեանց քննութիւն դատաստանագրոյն

Հայոց Նկվոկայ, իյառաջաբանի «Դատաստանագրոց Մխի-թարայ Գօշի: Փորձ, 1879, թ 6.

Historia Armenorum Transilvaniae· · · · per Christophorum Lukasci. Viennae 1859:

Le Catholicisme Romain en Russie, par M. le Comte Dmitry Tolstoy. 2t. Paris. 1864·

Sadok Baracz. Pamietnik Dziejòw Polskich. We Lwowie. 1855.

» Zywoty slawnich Ormian w Polsce. We Lwowie 1864.

» Rys Dziejòw Ormianskich. Tarnopol 1869.

Nowe Opowiadania Historycsne D-r. Antoni Y. Wartabied, opowiadanie z dziejow Ormian polskich. Lwow. 1878.

Wiadomosc o Ormianach w Polszcze. Lwow, 1842.

Ormianskie nabozenstwo y wziwanie ludzi narodu tego zacnego do jednosci w wierze y w Milosci kosciola s. katholickiego Rzymskiego, napisane od X. Mattheusza Bembusa soc. Iesu. W Krakowie 1630.

Bischoff D-r, Ferdinand. Ueber das alte Recht der Armenier in Polen. Oesterr. Blätter für Literatur. (Beilage zur Wiener Zeitung, 1857, №№. 28, 33, 37, 39).

» Urkunden zur Geschichte der Armenier in Lemberg, Wien 1864.

» Das alte Recht der Armenier in Polen, in Sitzungsberichte der Kaiserl. Akademie der Wissentchaften. Wien 1862, XL Band II Heft.

# ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՔ

| Եր. | Տող. | Սխալ | Ուղիղ |
|---|---|---|---|
| 21 | 29 | մինչև Ծագլովից | մինչև յԾագլովից |
| 52 | 7—8 | արքեպիսկո-կոպոսին | արքեպիսկոպոսին |
| 54 | 2 | և զբարեկարգութեան | և զբարեկարգութիւն |
| 62 | 14 | ի վտարելոյ | ի վտարելն |
| 63 | 29 | 1665 ամին | 1666 ամին |
| 76 | 19 | ընկմելով | ընկղմելով |
| 82 | 13—13 | կենցա-ցաղէ | կենցաղէ |
| 94 | 9 | ըստ Լատինացւոց | ընդ Լատինացւոց |
| 108 | 1 | Նազ մեղ | Նա զմեղ |
| 128 | 28 | պատճառք եղեն | պատճառք եղև |
| 145 | 21 | և խուղ | այլ և խուղ |
| 149 | 8 | և զայն՝ | և այն՝ |
| 172 | 2 | յայլ հաւատն | յայլ հաւատս |
| 176 | 25 | Եպիփանեցւոյ. այլև կարդինալ | Եպիփանեցւոց. այլև կարդինալք |
| 200 | 28—29 | Այլ ամենայն | Այս ամենայն |
| 203 | 28 | անդերձ յաւել-ուածովք | հանդերձ յաւել-ուածովք |
| 207 | 14 | զի զփոխանորդն ընտրեսցեն | զի մի ընտրեսցեն զփոխանորդն |
| 216 | 21 | իբրև ընկալաւ | ընկալեալ |
| 218 | 8 | ընդ կոունկն դառնալ | ընդ կռունկն դառնալ |
| 224 | 9 | դեսպանան | դեսպանաց |
| 238 | 27 | ազգեաց նմա | ազդեաց նմա |

# ԿԱՐՃԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

## ԶԱՐԴԻ ՎԻՃԱԿԷ ԶՍԿԶԲԱՆԷ ԵՒ ԶԾԱՒԱԼՄԱՆԷ

# ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹԵԱՆՆ

ԱՌ ՀԱՅՍ ԼԵՀԱՍՏԱՆԻ, ՎԱԼԱԽԻՈՅ,

ԵՒ ՄԵՐՁԱԿԱՑ ԱՇԽԱՐՀԱՑ.

ԱՅԼ ԵՒ ԶՍԿԶԲԱՆԷ ԵՒ ԶԿԱՌՈՒՑՄԱՆԷ Ի ՊԷՏՍ ՆՈՑԻՆ ՀԱՅՈՑ ՊԱՊԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻՆ ԻԼՎՈՎԱՑ ԸՆԴ ՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ ՀԱՐՑ ԿՐՕՆԱՒՈՐԱՑ, ԹԷԱԴԻՆՔ ՀԱՍԱՐԱԿՕՐԷՆ ԿՈՉԵՑԵԼՈՑ.

ՄԻՆՉԵՒ ՑԱՄՆ 1669, 31-Ն ԱՊՐԻԼԻ։

[illegible]

[illegible]

Հայաստան ժողովուրդ դուշ առ ինքն յանկուցանէ ըստ բազում մասանց, ևս վասն հնութեան իւրոյ, զի զծագումն և զանուն իւր ունի յԱրամայ, որդւոյ Սեմայ, որդւոյ Նոյի. վասն յոգունց նահատակաց, կուսանաց, վարդապետաց, զօրավարաց, թագաւորաց և իշխանաց, որ զարդք եղեն նմա. վասն բազմամարդութեան իւրեանց, ըստ որում գեր ի վերոյ են նոքա քան զբազում ժողովուրդս, զի ոչ միայն բնակեալ են ի բնիկ աշխարհին իւրեանց, համօրէն ի Մեծ Հայս, այլ և յոլովք ի նոցանէ սփռեալ են ի Պարսկաստան, ի Մարաստան, ի Միջագետս, յԱսորիս, ի փոքրն Ասիայ, ի Պոնտոս, ի Վրաստան, ի Մինգրէլիայ, յՌուսաս, ի Թրակիայ, ի Միւսիայ, ի Թաթարստան, ի Մոլդաւիայ, ի Վալախիայ և ի Լեհաստան, այլ և ի բազում քաղաքս մերոյս Իտալիոյ, ի Գաղղիոյ, ի Սպանիայ, ի Գերմանիայ, ի Փորտուգալիայ, ի Հոլանդայ, յԱնգղիայ եւս և ի կրկին Հնդիկս, յԱրևելեանն և յԱրևմտեանն: Այս ժողովուրդ յամի Տեառն 262 դարձաւ ի սուրբ հաւատս ի ձեռն Գրիգորի, Լուսաւորիչն ընդհանրապէս կոչեցելոյ, որ եղև նոցա առաջին կաթուղիկոս. զի թէպէտ և յառաջագոյն, յամի մարդեղութեան 44 սուրբ առաքեալքն Թադէոս և Բարթուղիմէոս ծաւալեցին ի նոսա զլոյս հաւատոյ, այլ դարձաւ ժողովուրդն անդրէն ի պաշտօն կռոց: Ազգին Յազգին Հայք ի սրբութեան կաթողիկէ հաւատոյ մինչև ցամն 500, այլ յայսմ ամի կաթողիկոս նոցա Ներսէս Աշտարակեցի ըստ հրամանի և բռնութեան պատուհանի արքային Պարսից, արար ժողով ի Դուին, կոչելով եպիսկոպոսունս տասն և մերժեաց անդ զժողովն Քաղկեդոնի, մի բնութիւն տալով Քրիստոսի և յաւել ի Քերովբէական Երգս զՈր խաչեցար,—«Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ

և անմահ, «Որ խաչեցաւ վասն մեր», վասն ցուցանելոյ զանբաժանելի զօրն Երրորդութեան, ըստ մոլորութեան Պետրոսի Փուղ ղոնի և այլոց հերետիկոսաց, և այսու հերձեալ անջատեաց զՀայս յընդհանրական եկեղեցւոյ: Եւ թէպէտ յայնմհետէ և այսօր դառնայր բազում անգամ ժողովուրդն ի սուրբ միութիւն, յայլ և այլ ժողովս, ջանիւք Ս. Առաքելական Աթոռոյն և ի ձեռն փութաջան վաստակոց բազմաց ի կաթողիկոսաց նոցա և թագաւորաց, իշխանաց, նաև կայսերացն Բիւզանդիոյ՝ այլ ըստ անաչառ անօրէնութեանն Սատանայ յաւուր և յաւէր տուեալ ի ձեռս անօրինաց, Մեծ Հայք ի ձեռս Պարսից և Փոքրն՝ ի Տաճկաց, վասն զի ի պատճառս ամպամած խաւարին ոչ ծանեաւ զհին արմատն հերձուածոյն, որպէս զի և զարդիս զհերձուածոյն զակատեալ է զհետ աշխարհն համօրէն և որոշեալ ի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, բաց ի միոյ գաւառէն Նախիջևանու ի Մեծն Հայս, որ ըստ հոգևորին հովուի ի հայրցն Դոմինիկեան կարգի, և յեկեղեցեաց ոմանց Հայոց ի Լեհաստանի, նորոգապէս ի միութիւն մտելոց, զորոց լեցին բանք յառաջիկայսդ:

Իբրև չոգաւ Ս. Գրիգոր ի Հռովմ հանդերձ Տրդատաւ, առաջին քրիստոնեայ թագաւորաւ զկնի Աբգարու, զոր և միաբանեալ էր ընդ ամենայն ժողովրդեանն՝ ընկալաւ ի Ս. պապէն Սեղբեստրեայ արտօնութիւնս մեծամեծս վասն ժողովրդեան իւրոյ և կոչեցաւ տիեզերական պատրիարք և առաքելական փոխանորդ յԱսիայ, ( եթէ հաւատալոյ են բանք պատմագրաց Հայոց որ զայսմանէ ճառեն): Այն այս Ս. Գրիգոր և այլ կաթողիկոսք, յաջորդք նորա, որ նստէին ի թագաւորական քաղաքին Վաղարշապատու ի Մեծն Հայս, (որ աւերակ է զարդիս, բաց ի հոյակապ ապարանից կաթողիկոսացն և երից ամենաճոխ եկեղեցեաց, Ս. Հռիփսիմեայ, Ս. Գայիանեայ և Մայր եկեղեցւոյն, Էջմիածին կոչելոյ) — վարէին զտեսչութիւն եկեղեցւոյն ամս բազումս. այլ ապա ի պատճառս պատերազմաց և այլոց չարեաց և անցից ի վերայ հասելոց, ի չորիս կաթողիկոսութիւնս անջատեցաւ ժողովուրդն, այսինքն են կաթողիկոսն Էջմիածնի, ի Մեծն Հայս, ընդ իշխանութեամբ արքային Պարսից, բուն յաջորդ Ս. Գրիգորի ժառանգութեամբ Աթոռոյն. կաթողի-

կոմն Աղուանից, նոյնպէս ընդ լծով Պարսից, նուազագոյն ունելով սաՀման Հոգեւորի իւրոյ իշխանութեան կաթողիկոսն Աղթամարայ առ երի Ամառ ծովուն, ընդ լծով Տաճկաց և Հուսկ ուրեմն կաթողիկոսն Սսոյ ի Կիլիկիոյ ընդ իշխանութեամբ Տաճկաց, օրինաւոր յաջորդ Ս. Գրիգորի ի մէջ կաթողիկոսաց, որ փոխեաց այսր զաթոռ իւր, և ունի ընդ իւրով իշխանութեամբ քաղաքս բազումս գեղեցիկս և վիճակս, այլև զԵրուսաղէմ, զՀալէպ և զայլս ևս ծովեզերեայս։ Այլ ի վերոյ այսր ամենայնի աւագագոյն է ի սոսա կաթողիկոսն Էջմիածնի, զոր տիեզերական պատրիարք Համարին Համօրէն Հայք արևմտից և մասամբ արևելից. կեայ նա բարեպաշտութեամբ, Համեստութեամբ յոյժ և ըստ արտաքին տեսլեան՝ խիստ կենօք. բնակէ առՀասարակ յապարանս Էջմիածնի, փոխեալ այժմ ի վանս. զգեցեալ է Համդերձ կրօնաւորի և վեղար սրածայր, շուրջ պատեալ բազմութեամբ աբեղայից, որ Վարդապետք կոչին՝ (որոց աստիճանք նոցա բարձր են քան զեպիսկոպոսացն, և չարաչար ի պատուի են առ Հայս), վարէ կենցաղ խաղաղական ըստ կարի, և թէպէտև յաճախակի անիծանէ և նզովէ յարարողութիւնս եկեղեցւոյ զերկաբնակս իբրև զՀերձուածողս՝ այլ յարգէ միշտ և պատուէ զՍ. Աթոռն Հռովմայ, յարգանօք ընդունի զքարոզիչս Լատինացւոց, (սակայն ի բազում ժամանակաց Հետէ չէ առ նմա քարոզիչ և ոչ մի), և ի ծածուկ խոնարՀի ի կամս Ս. Աթոռոյն, որպէս կաթողիկոսն այսր ժամանակի, որում Յակոբ է անուն, և որ յառաջ քան զնա էին կաթողիկոսք, Մելքիսեդեկ անուն, Մովսէս և Փիլիպպոս։ Զչորեսին զայսոսիկ կաթողիկոսունս ի պատուի ունի ժողովուրդն և Հնազանդի նոցա որպէս պապից։ Նոքին Հանապազ կաթողիկոսքն զնուիրակս իւրեանց յաշխարՀս աշխարՀս, առ ի ժողովել տուրս ի ժողովրդենէն, որովք գտանեն զպարէն իւրեանց և Հարկս ծանունս Հատուցանեն Տաճկաց և Թագաւորին Պարսից, թէպէտև ընդ իշխանութեամբ Պարսից արտօնութիւնս մեծամեծս ունին և ազատ և Համարձակ խաղաղութեամբ կատարեն զպաշտամունս եկեղեցւոյ իւրեանց, որպէս թէ ընդ իշխանութեամբ քրիստոնէի ուրուք Թագաւորի։

Իսկ գլխաւոր մոլորութիւնք, զորս դաւանեն Հայք զարդիս

և որովք լի են մասամբք եկեղեցւոյ նոցա՝ հետագայքդ են.

1. Գնդեն ընդ Դիոսկորեայ՝ զոր առ սուրբս ունին, թէ մի լեալ բնութիւն Քրիստոսի։

2. Թէ այնչափ անապական էր մարմինն Քրիստոսի՝ մինչև իսկ ոչ կարօտ լինել կերակրոց, որպէս մարմինք մարդոց. և որ այլապէս ասեն, անարգեն զԱստուած։

3. Խոտեն զպատմութիւն Աւետարանի յաղագս անառակ կնոջն, որում ասաց Քրիստոս. «Ե՛րթ և յայսմհետէ մի մեղանչեր» ստայօդ համարին զայն լինել և վնասակար. այլ այժմ յաւելեալ է այն ի վերջ կոյս Աւետարանին Յովհաննու, թէպէտև յեկեղեցիս ոչ երբէք ընթեռնուն։

4. Գնդեն ընդ Յոյնս՝ թէ ոչ բղխի Հոգին սուրբ և յՈրդւոյ։

5. Խոտեն զմասնաւոր դատաստան և զքաւարան։

6. Ընդունին Քրիստոսի կործանել զդժոխս համօրէն և փրկել զամենայն հոգիսն որ ի նմա։

7. Ասեն՝ թէ ոչ ամբառնան հոգիք սրբոցն յերկինս, այլ յօդս բնակեն մինչև ցվերջինն դատաստան, որում Տեառն. վասն որոյ և աղօթս առնեն հրապարակաւ ի վերայ սրբոց և որոց անդէն յետ մկրտութեան մեռեալ մանկունքն իցեն։

8. Խոտեն զգերիշխանութիւն Հռովմէական եկեղեցւոյ և ի նոտիս զրեն զթուղթս քաւութեան։

9. Մերժեն զԱ. պապն Լևոն և զժողովն Քաղկեդոնի։

10. Ի ժամ պաշտաման սրբոյ պատարագի ոչ յաւելուն ջուր ի բաժակն՝ յօրինակ միոյ բնութեան Քրիստոսի, և յայնչափս զարշեն ի խառնելոյ ջուր ընդ գինին՝ զի դիւրագոյն ևս է արգելք նոցա երդմամբք հրաժարել յամենայն մոլորութեանց իւրեանց, քան յայսմանէ։

11. Ի բազում այլ ևս պահեն ծէսս ինչ մինչև ցայսօր ժամանակի, մանաւանդ որ ինչ հայի ի խտրութիւն սրբութեան և անսրբութեան կերակրոց, ի սրբել կնոջ զաւուրս քառասուն յետ ծննդոց, յօրհնութիւն կենդանեաց և զոհոց, զորս «Մատաղ» անուանեն, և այլն։

12. Մերժեն զխորհուրդ վերջին օծման, այլ սրբապղծութեամբ օծանեն զմարմինս քահանայից մեռելոց։ Արգելուն զեր-

բորդ պսակ և գխտագայս. և ոչ իմացեալ զինչ արհնակցութիւն իցէ՝ ոչ տան Թոյլ ամուսնանալոյ երկուց եղբարց ընդ քորս երկուս:

13. Ոչ պատուեն զքանդակեալ արձանս սրբոց, այլ զնկարեալ պատկերս ևեթ:

14. Բազումք ի նոցանէ հաւատան՝ թէ առ ի փրկութիւն հոգւոյ բաւ է լինել քրիստոնեայ, անփոյթ առնելով զայլմն ամենայնէ:

15. Իբրև փաստ ջատագովութեան Հնոյ տոմարին՝ առակեն նոքա և այլ ամենայն քրիստոնեայք արևելից՝ թէ եսկ-ևիսկ՞լոյն երկնային յաւուր կիւրակէի Զատկի նոցա երևի ի վերայ գերեզմանին Քրիստոսի յԵրուսաղէմ. այլ զայս կեղծաւպատիր առասպել հնարեալ է եպիսկոպոսացն առ ագահութեան իւրեանց, զի ժողովին արծաթ բազում յայժ յեկեղցն յայնժամ յերկրպագութիւն սրբոց տեղեացն:

16. Զձուկն, զիւղ ձիթենւոյ և զգինի պղծել ասեն զպահս:

17. Համարին՝ թէ մարթ է ձեռնադրել զկանայս ի կարգս եկեղեցւոյ, մինչև ցաստիճան քահանայութեան: Պատուեն զընծայսն յառաջ քան զսրբագործելն: ԶՎերովբերականն երգեն հանդերձ յաւելուածովն Պետրոսի Փուղոնի, «Որ խաչեցար վասն մեր»:

Կան ի նոսա և այլ մոլորութիւնք բազումք. այլ քանզի ոչ ամենուրեք են ծաւալեալ ի նոսա և ոչ բացորոշակի են, և մանաւանդ զի նկրողամիտ է Ս. Եթովն յոմանս յայնցանէ՝ վասն որոյ և հարևանցի անցցուք զնոքօք:

1. Ըստ Հնոյ տոմարին ունին զԶատիկն և զայլ տօնս ոչ կարևորս, իսկ յայլ դէպս վարին տոմարօքն իւրեանց և բազումք ի նոցանէ համարին՝ թէ սխալական իցէ Նոր տոմարն:

2. ԶԾնունդ Քրիստոսի տօնեն զօյգ ընդ Մկրտութեան ի 6-րդի աւուր Յունվարի, և պատապարուեն զօրս ի 25-ն Դեկտեմբերի զԾնունդ Քրիստոսի տօնենն:

3. Համարին՝ թէ ի միում եկեղեցւոջ առ նովին սեղանով, որ յարևելս հայի՝ մի միայն պատարագ մարթ իցէ մատուցանել, և զի քահանայն ի միում եկեղեցւոջ զմի ևեթ խորհուրդ կարէ կատարել:

4. Ոչ իմանան զէութիւն խորհրդոցն, այլ ի ժամ մկրտութեան երեքս կրկնեն զբան խորհրդոյն. զխորհուրդ Դրոշմի կատարեն զոյգ ընդ խորհրդոյ մկրտութեան և ոչ առանձինն. և պնդեն՝ թէ զերկոսին զխորհուրդսն ի միասին կարէ պաշտել քահանայ հասարակ: Ի խորհրդեան ապաշխարութեան ապաշաւ կարի ծանր դնեն վասն աննշանի իսկ լուծման երդման, եթէ հարկ իսկ լինել իցէ լուծանել զերդումն ի կարևոր յոյժ դէպս կամ առ վտանգի մահու: Զմանկունս ևս հաղորդեն սուրբ խորհրդոյ պատարագին. և հաղորդեն առհասարակ ընդ կրկին տեսակօք, զմի միայն նշխար անխմոր արկանելով ի կիր, զոր բեկանեն ի մասունս մանունս և արկանեն ի սուրբ արիւնն և ապա հանեն ի սկւոյն զմասունսն, ոչինչ յարգելով զՍ. խորհուրդն: Արգիլեալ է նոցա շեղել յօրինացն, և յայսպիսի դէպս՝ իշխանաւորին պահի թոյլատուութիւն:

5. Յոյժ անկարգօրէն կատարի առ նոսա ձեռնադրութիւն քահանայից, մինչև թուիլ իսկ՝ թէ տան նոցա իրաւունս արձակելոյ ի մեղաց, յառաջ քան տուեալ իցեն նոցա իրաւունք պաշտելոյ զՍ. խորհուրդն հաղորդութեան, թէպէտ և յայսմ մասին բարւոք ջատագովէ զնոսա գերապատիւ Տ. Կղեմենտիոս Գալանոս ի կարգէն Թէատինեանց յերրորդում հատորի գրոցն իւրոց «Concil Eccl. Armenae cum Romana»:

6. Բացարձակ կատարի առ նոսա շնորհավաճառութիւն. վասն որոյ կաթողիկոսունք միայն ունին իրաւունս առ նոսա ձեռնադրելոյ եպիսկոպոսունս, զի մի ի ձեռս այլոց տացեն զայս մենավաճառութիւն, և զի այսու իսկ պատճառաւ վաճառեսցեն զմիւռոնն, զոր պատրաստեն արարողութեամբք բազմօք և մնոտիւք պաշտամամբք, խառնելով ի միւռոնն նիւթս այլ և այլ, ծաղկունս ասիմ և խոտս հասարակս կամ անուշահոտս, զինի բազում և իւղ ձիթենւոյ և բալասան, մինչև իսկ տարակուսութեանց գոլ հարկ, մի՞ գուցէ փոխիցի և նիւթ խորհրդոյն վասն այնքան խառնուածոցն:

7. Յաւուր աւագ Հինգշաբաթու կատարեն Ոտնլուայ կարի հանդիսաւորութեամբ, առ որ գայ համօրէն ժողովուրդն եկեղեցականութեամբ մեծաւ: Նստի եպիսկոպոսն յաստիճանն մերձ ի սեղանն, լուանայ զոտս ամենեցուն օրհնեալ ջրով և

օրհնեալ իւրով։ Բազումք ունէին և ունին իսկ զայս արարողութիւն՝ առ կարևոր և իսկ և իսկ խորհուրդ եկեղեցւոյ։

8. Թէպէտև են առ Հայս միանձունք և կրօնաւորք բազումք, որ համարին ինն հետևողք լինել Ս. Անտոնի անապատականին այլ իսկապէս չեն նոցա կարգք և կանոնք ամենևին, այլ ամենայն ոք ըստ հաճոյից կամաց իւրոց վարի։ Ոչ է տուեալ թոյլ կուսակրօնիցն կատարել զխորհուրդս եկեղեցւոյ, և ժողովուրդն խոստովան լինի առ ամուսնաւոր քահանայից ևեթ։

9. Պահս բազումս ունին յընթացս տարւոյն, զորոց զպատճառս իսկ ոչ գիտեն այժմ։ Եօթնեակ մի պահոց նախ քան զՄեծ պահսն՝ կոչի առ նոսա Առաջաւորք, զորմէ Յոյնք ասեն՝ եպիսկոպոսի ուրուք կարգեալ զայն ի պատճառս սատակելոյ շան իւրոյ սիրելւոյ, որ նովին անուամբ յորջորջէր։ Բայց ստոյգ ամենևին չարախօսութիւն է այս Յունաց՝ որ յոյժ ատեցողք են Հայոց։ Յաւուրս պահոց իւրեանց ի բաց կան Հայք ի ձըկանց, ի ձիթոյ և ի գինւոյ, և ոչ իսկ մատուցանեն պատարագս, բայց միայն յաւուրս շաբաթուց ևեթ և կիւրակէից. և տովին եղանակաւ վարին զՄեծ պահսն ողջոյն։

10. Աստուածապաշտք են յոյժ Հայք և հաւատացողք հրաշից։ Պահեն ընդհանրապէս առ իւրեանց շերտս ինչ թղթոց, երկայն և նեղ, ծալեալ ի ձև գօտւոյ, որ կոչի Հմայիլ, այս ինքն է Բաց, կամ Պահպանութեան Գիր։ Գրեն ի վերայ թղթոյն բանս յԱւետարանէ, հանդերձ գեղեցիկ նկարուք, և այլ ևս նըշանս բազումս մոգականս։ Ես և այս ինչ սովորութիւն՝ զի ի ժամ մկրտութեան քահանայն և զպլին սպասաւոր հիւսեն նարօտ յերկուց թելից, ի գոյն ձերմակ և ի կարմիր, և ընթերցեալ զՍաղմոսն, «Տէր, ոչ բարձրացաւ սիրտ իմ» . . . կախեն զպարանոցէ մանկանն զնարօտն հանդերձ մոմեղէն խաչիւք մանուածք, և հրամայեն թողուլ զայն ի վերայ մանկանն աւուրս ինչ, մինչև կին ոք պատուեալ առաջի արասցէ զկնքահայրն և զկնքամայր ըստ ծիսից իւրեանց և լուանիցէ զմատունս մարմնոյ մանկանն, որ օծեալն են Ս. միւռոնաւ, իմա զճակատըն, զշըրթունսն, զձեռս, զոտս, զունն և զայս թէ զմարմինն բովանդակ։ Այլ իւիք այլ ամենայնի չէ առ նոսա իւղ վասն կոչեցելոց նորապէս ի հաւատս՝ զոր առ ամենայն քրիս-

տոնեայս գտանեմք։ Թևըն յիշատակեալ ի վերոյ՝ կոչի առ նոսա Նարօտ։

11. Զջուրն օրհնեն անգամ մի ի տարին, ի Ծննդեան Տեառն, փառաւորեալ հանդիսիւք, օրհնելով երբեմն զգետն ողջոյն, որպէս առնեն ի Պարսկաստանի։ Յայս հանդէս գայ յաճախակի և ինքն շահն Պարսից, որ ոչ սակաւ հեղու ի գետն յիւղոյ անոյշ հոտոյ, զոր Միւռոն կոչեն։ Զմիւռոնն ոչ պահեն յեկեղեցւոջ այլ ի տունս, և հաւատան սնոտեօք՝ թէ ոչ երբեք ապականի։

12. Այսու միւռոնաւ օծանեն զպատկերս և զխաչս, որք ոչ ի մեծի ինչ պատուի են առ նոսա, եթէ չիցեն օծեալ։

13. Զամն ողջոյն յաւուրս շաբաթուց ունեն միս, բայց ի Մեծի պահոցն և յօրէ Աւագ Շաբաթու, յորում աւուր յետ պատարագին, զոր ընդ երեկոյն մատուցանեն՝—նոյնպէս և ի նաւակատիս Ծննդեան Քրիստոսի՝ լուծանեն զպահսն առատ ընթրեօք, և յետ աւուր Զատկին աւուրս քառասուն ունեն միս, այլև յաւուրս ուրբաթուց։

14. Ոչ ուրեք է նոցա տպարան, բայց միայն յԱմստերդամ քաղաքի, որ երեւք կամ չորեւք ամօք յառաջ հիմնեցաւ. վասն որոյ եռան զեռան յեկեղեցական մատեանս նոցա առասպելք և պատմութիւնք անկանոնականք, զորս հանապազ և գրեթէ զօրհանապազ յաւելուն ի գիրս հեղինակք ըստ հաճոյից իւրեանց, թող և զայն՝ զի չունին յեկեղեցիս իւրեանց տոմարս վասն ծնելոց և մկրտելոց, ուր վասն չէ երբէք հնար գիտելոյ՝ թէ քանի ամք ուրուք իցեն։

15. Նշան խաչի (խաչակնքելն) ի մեծագունի ևս պատուի է առ նոսա՝ քան խորհուրդ Մարմնոյ և Արեան Քրիստոսի. վասն որոյ և հազիւ երբեմն մատուցանեն պատարագ և ի նուազագունի պատուի զնա ունին։

16. Պահանջեն՝ զի նորընծայ քահանայք նոցա նախ քան զպատարագելն իւրեանց յառաջնում նուագի սերտ ի բերան գիտիցեն զպատարագամատոյց գիրս ողջոյն. վասն որոյ և յաճախակի առանց գրոցն զպատարագն մատուցանեն։

17. Ուսմունք նոցա համօրէն յայսմ են եթ բովանդակին՝ զի գիտիցեն ի բերան զամենայն աղօթս եկեղեցւոյ, զմեծագոյն մասն

Ս. Գրոցն (որ ի տեղիս տեղիս առ նոսա յոյժ տարբեր է ի բնագրէն Յունաց կամ ի Լատինացւոց), այլև գծագրոր երգեցողութիւն, որ երբեմն խազիւք գրի, և կոչի Հայական: Այն ինչ ուսանի ոք ի բերան զայս ամենայն և փոքր ի շատէ զարուեստ քարոզելոյ (մանաւանդ թէ առասպելաբանելոյ)՝ պատուով իմն և ակնածութեամբ Վարդապետ կոչեն զնա և հանդիսիւ մեծայանձն առնեն նմա յեկեղեցւոջ զցուպն և կարգեն նմա տեղի (ի դասուն?) ի վերոյ քան զեպիսկոպոսացն, զորս նզովել իսկ կարող են վարդապետքն:

18. Մի միայն աղբիւր արդեանց եկեղեցականաց Հայոց են կամաւոր տուրք ժողովրդեանն, ընդ որում ցածութեամբ և մեղմօրէն վարին առհասարակ:

Այլ են ի նոսա և սովորութիւնք բազումք, արժանաւորք զովեստից և օրինակի. զոր օրինակ, զհարսն և զփեսայ յեկեղեցւոջ միայն պսակեն, (թէպէտև առ ի Լեհաստանի այլապէս ևս վարին). յետ պսակին, առ ժամանակ մի կարգեալ՝ ի խիստ ժուժկալութեան կեան նորապսակքն. այսինքն է, զեօթնեակ մի ի միասին բնակեն և ապա առուրս երիս ոչ գիտեն ամենեւին զմիմեանս: Հրամայեն նորընծայ քահանայից յոտս կալ միշտ յընթացս քառասուն աւուրց: Ամենայն եկեղեցիք նոցա յերկուս մասունս են որոշեալ, միոյն վասն կանանց, որ կոչի Ժամատուն և միւսն վասն արանց.— և այլք բազումք ի նուազագոյն կարևորացն:

Իսկ արդ քանզի լցին մեր բանք զվիճակէ եկեղեցւոյ առաքելութեանն ի Թաթարստան, ի Վալախիայ և ի Լեհաստան՝ հարկ է գիտել զայս ինչ, զի ի Մեծն Հայս, հուպ ի լեառն Արարատ, յորոյ վերայ հանգեաւ, որպէս յայտնի է, տապանն Նոյի յետ ջրհեղեղին՝ էր երբեմն քաղաք մեծ և ճոխ, Անի, որ աւերակ է զարդիս, այլ են դեռևս մնացորդք գեղեցիկք զնի աւերածոցն. ի քաղաքին յայնմիկ, որ շինեալ էր ի միջոց քաղաքացըն Կարուց և Ցեզալի(?)՝ ըստ աւանդութեան Հայոց էին եկեղեցիք իբրև հազար: Անտի գաղթեցին Հայք ի Թաթարստան: Դժուարին է գիտել զժամանակ գաղթականութեանն, այլ յօրէ յորմէ հետէ եկին նոքա ի Ռուսաստան՝ են ամք իբր վեց հարիւր: Ահա այս են քաղաքքն և գիւղք, յորս ունին Հայք եկեղեցիս.

Կաֆա, նաւահանգիստ ծովեզերեայ կարեւոր, ի ձեռս Տաճկաց. ունի եկեղեցիս Հայոց 24 և քահանայս 23, թող զեկեղեցին Լատինացւոց, որ աւերակ է այժմ և թափուր ի քահանայէ։

Բալաքլավա, նոյնպէս նաւահանգիստ ծովեզերեայ, ընդ իշխանութեամբ Թաթարաց. ունի եկեղեցի մի Հայոց և քահանայ մի։

Բախչէսարայ, աթոռանիստ մեծի խանին Թաթարաց. ունի եկեղեցի մի Հայոց և քահանայ մի։

Կարասու. ունի եկեղեցի մի հանդերձ եօթամբ քահանայիւք։

Կոզլով. ունի եկեղեցի մի Հայոց և քահանայս երիս։

Օրաքափի կամ Պերեկոփ, ըստ Հայոց Օրփէքէրան. ունի եկեղեցի մի հանդերձ միով քահանայիւ։

Խրիմ. ունի եկեղեցիս երիս և վանք մի։

Ի վերայ այսոցիկ են ի Թաթարստանի գաւառք չորք, ոչ կարեւորագոյնք, յորոց յիւրաքանչիւրում է եկեղեցի մի Հայոց և քահանայ մի։ Այս ամենայն քաղաքք և եկեղեցիք են ընդ իշխանութեամբ միոյ եպիսկոպոսի։ Զարդիս Մարտիրոս է անուն եպիսկոպոսին, որ ձեռնադրեալ է ի Յակովբոս կաթողիկոսէ և է յերիտասարդ հասակի, ամաց իբրև 35-ից։

Ընդ Վալախիայ և ընդ Թաթարստան են և քաղաքք կարեւորագոյնք, ընդ իշխանութեամբ Տաճկաց, որ երբեմն էին մասն վիճակի արքեպիսկոպոսին Լեհաստանի,—որ ձգէր մինչև ի սահմանս Կ. Պոլսոյ, որպէս երևի ի հրովարտակաց ձեռնադրութեան արքեպիսկոպոսաց բազմաց Իլվովայ,—և զարդիս իսկ ընդ հովանեաւ նորին առաքելութեանն կան. ի սոցա սակի են Ակկերման, Իսմայիլ և Բէնդերի, որ ունին իւրաքանչիւր իւր եկեղեցի և քահանայ։ Երկոքեան առաջինքն նաւահանգիստք են ծովեզերեայք, և երկոքեան են ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին Հայոց Վալախիոյ, որ ձեռնադրեալ է ի նորին իսկ կաթողիկոսէն Յակովբայ, և կոչի Իսահակ. է սա այր ամաց իբրև 50-ից և գիտնական։

Եւ այս են անուանք քաղաքացն Վալախիոյ, յորս են եկեղեցիք Հայոց.

Եաշ, աթոռանիստ քաղաք իշխանին. ունի եկեղեցիս Հայոց երկուս։

Գալաց, նաւահանգիստ ծովեզերեայ. ունի եկեղեցի մի

Վասլուի. ունի եկեղեցի մի Հայոց։

Սէրաթ. ունի եկեղեցի մի Հայոց։

Սէչէվ. ունի եկեղեցիս Հայոց երկուս և վանք մի։

Խոտին. ունի եկեղեցի մի Հայոց։

Ռոմանէ. ունի եկեղեցի մի Հայոց։

Բոգեան. ունի եկեղեցի մի։

Եւ առ հասարակ ի համօրէն եկեղեցիս Վալախիոյ են քահանայք իբրև 20, ընդ իշխանութեամբ յիշատակեալ եպիսկոպոսին Իսահակայ։

Յամի Տեառն 1062 իշխանն Ռուսաց Թէոդոսիոս որդի Գնեմարի, որ վարէր պատերազմ ընդդէմ ապստամբելոց հպատակաց իւրոց՝ կոչեաց ի Թաթարստանէ զՀայս իւր ի թիկունս և ապա յորդորեաց զնոսա կալ մնալ անդ, տալով նոցա արտօնութիւնս բազումս, զորս յետոյ վաւերացուցին և թագաւորք Լեհաստանի, յետ տիրելոյ նոցա Ռուսաստանի։ Բնակեցան Հայք ի քաղաքս Վալախիոյ, ի Ռուսաստան և յՈւկրայնի, իմա ի Կիև, ի Լուցկ, ի Կամենից, ի Վլադիմիր, ի Գալիչ, ի Անատին և յայլս, յորս չեն այժմ այլ ես եկեղեցիք և ժողովուրդք Հայոց։ Եւ եկին նոքա 82 ամօք յառաջ քան զգտանելն Ռուսաց զքրիստոնէութիւն ըստ արևելեան դաւանութեան յամի Տեառն 980, 107 ամօք յառաջ քան զդարձն Լեհաստանի ի կաթողիկէ հաւատս յամին 955, և 324 ամօք յառաջ քան զմկրտութիւն Լիթուայի ըստ կաթողիկէ սրբոց հաւատոց։

Եւ սոքա են քաղաքք և եկեղեցիք Հայոց ի Լեհաստանի, այսինքն յՈւկրայնի՝ ի Ռուսաստան, ի Պոդոլեայ, ի Պոկուտիէ և յայլ աշխարհս հասարակապետութեան այսորիկ.

Կիէվ. ունի եկեղեցի մի Հայոց, այլ քանզի ի ձեռս Յունաց է քաղաքն՝ (այսինքն այնոցիկ, որ ունին զդաւանութիւն Յունաց)՝ վասն այսորիկ սակաւ են ի նմա Հայք։

Լուցկ. ունի եկեղեցի մի Հայոց և քահանայ մի, որում անուն է Անտոն, ի քաղաքէն Կամենիցէ, զոր ձեռնադրեաց արքեպիսկոպոսն Հայոց Թորոսովիչ ամաւ միով յառաջ։ Յընթացս եօթնեկից ինչ եկաց նա ի պապական դպրանոցին Իլվովայ, յորում ուսաւ զվարդապետութիւնս հաւատոյ և զկարգս

խորհրդագործութեանց. այլ յօրէ յորմէ հետէ կարգեցաւ քահանայ յիշատակեալն եկեղեցւոյ՝ ոչ երբէք գրեալ է թուղթ մի առ քարոզիչսն. հազիւ երբեմն մատուցանէ պատարագ, ըստ անփութութեանն, որպէս սովորութիւն է Հայոց յայսմ մասին. ոչ այնպէս կենցաղավարէ, որպէս յուսային, և ըստ ամենայն գործոց նորա երևի՝ թէ չէ այրն այնպիսի ոք, յոր մարթ ինչ լեալ յուսադիր լինել: Զմնի Կրկին Լուցկ քաղաք կարևոր է արքեպիսկոպոսութեանն Հայոց, այլ զուգիս գրեթէ ոչ ոք ի Հայոց բնակէ անդ:

Կամենեց, որ համարի քաղաք անառիկ, և զի ի սահմանս անդ արքայութեանն է՝ կոչի վասն այսորիկ պատուար քրիստոնէութեան. ի նմին ի քաղաքին են եկեղեցիք Հայոց չորք. Վերափոխման սրբուհւոյ Աստուածածնին, որ է մայր եկեղեցին, սրբոյն Նիկողայոսի, Աւետման սրբուհւոյ Աստուածածնին և սրբոյն Ստեփանոսի Նախավկային: Վերջինքդ երկոքին փոքրագոյնք են, զօրէն մատրանց. այլ առաջինքն երկու կարի մեծագոյնք են և ճոխացեալք զարդուք և պատարագօք ուխտից: Շուրջ զեկեղեցեօքն են տունք ոչ սակաւք, որ գոյք են եկեղեցեացն. տուն մի յայսցանէ, որ կառուցեալ է ի գերեզմանատան Ս. Նիկողայոսի՝ երևելի է մանաւանդ ընդարձակութեամբ իւրով. այլ քանզի անբնակ է՝ մերձ է ի կործանումն և զբաղում ժամանակս համարեալ էր լինել ընդ անիծիւք: Ասէին ամենք՝ թէ մարթ է կառուցանել զդպրանոցն պայլին ի տան յայնմիկ, եթէ ոչ գտանէր տեղի յարմարագոյն յԼվով քաղաքի: Եւ արդարև յարմարագոյն իսկ էր բնակարանն ըստ ուսումնական մասին, մանաւանդ զի լինէին արդեօք ի Կամենից պատանիք Հայոց բազումք, այլև հնար էր թերևս հաւանեցուցանել ապա զՀայս Վալախիոյ, զի տացեն զորդիս իւրեանց յուսումն ի դպրանոց անդր: Այլ ըստ միւսում մասին ոչ կարէր յաջողել գործ առաքելութեանն. զի արքեպիսկոպոսն նստէր յԼվով, յաթոռանիստն իւր ի քաղաք, ուրանօր դիւրագոյն ևս էր նմա օժանդակել այլոց եկեղեցեաց: Արտաքոյ քաղաքին են այլ ևս եկեղեցիք Հայոց չորք կամ հինգ թուով, այլ քանզի լքեալ թողեալ էին ի Հայոց՝ վասն այսորիկ տիրացան նոցա Լատինացիք, բաց յերկուց եկեղեցեաց, որ յա-

նուն Ս. Գրիգորի և Ս. Խաչին: Քահանայք Հայոց ի Կամենից միահամուռ են թուով եօթն, որ ամուսնացեալ են առհասարակ, բաց ի միոյ քահանայէն ամուրւոյ, Ներսէսէ, որ նախանդամ է Հոգևոր Վարչութեանն, անցեալ զաւուրբք, աւելի քան 80 ամաց, որ բարեհաճ է այժմ ընդ եկեղեցին Հռովմայ, այլ վասն զանցեալ հասակին և թուլասրտութեան խելոյ աննշան է ամենեքին: Ի բազում ժամանակաց հետէ ոչ մատուցանէ պատարագ. և պնդեն բազումք՝ թէ ամս երկուս, այն է, յորէ մուծման միութեանն՝ չէ հպեալ նորա ի խորհուրդ Սեղանոյ, այլ ինքն մերժէ զայս ամենեքին: Ի չորս քահանայից է և քահանայն Գրիգոր, այր յաղթանդամ, ամաց իբրև 65-ից, որ լաւագոյն է քան զամենեսեան օրինակելի վարուքն իւրովք, այլ վատառողջ մարմնով և հիւանդոտ առհասարակ: Քահանայն Միքայել է այր մտացի, գիտէ սակաւ մի զլեզուն Լատինացւոց. սիրէ խնջոյս և թղթախաղ, և զարդիս իսկ ի գայթակղութիւն համօրէն ժողովրդեանն՝ բացեալ ունի գինետուն ի տան իւրում, հուպ հուպ յեկեղեցին Ս. Նիկողայոսի. խորամիտ է կարի և հնարագէտ, և հնարս խնդրէ, ասեն՝ զի զկնի մահուան Ներսէսի քահանային յինքն կորզեսցէ զպաշտօն նախանդամի: Իսկ անուանք այլոց քահանայից են Թէոդորոս, Զաքարիայ, Գաբրիէլ և Թովմաս, որոց յիշատակեալն նախանդամի, որ յոռի վարուք իւրովք զանցանէ զամենեքումբք, վասն որոյ և առաւել ատեաց զնա ժողովուրդն: Թող զայս ամենայն քահանայս՝ են ի քաղաքին և միանձնուհիք Հայոց 12, այլ անուամբ լոկ են նոքա միանձնուհիք, և յոյժ աննշան է խըտիրն ընդ հանդերձս նոցա և ընդ կանանցն աշխարհականաց: Նոյնց կանանց կեան յընդարձակ տան միոջ եկեղեցւոյն. երիցս անգամ կամ չորիցս խոստովանին ի տարին, և ի պատճառս անառակ վարուց իւրեանց և հաղորդութեանց և տուրց և առից՝ գայթակղութեանց լինին առիթք: Յայսմ քաղաքի է իշխանաւորն Լատինացւոց, ըստ երեցն մայր եկեղեցւոյն, այր արժանաւոր յարգանաց վասն ազնուականութեան ծննդեանն և վասն ուսման իւրոյ, Միքայել Ուլենսկի անուն, եղբայր զօրապետին Գոդոլսկի և քաղաքապետին Կամենեցի, որ և յաճախակի յայց ելանէ եկեղեցեացն Հայոց և փոյթ մեծ ունի՝

զի լուռ կացցեն Հայք յուղղութեանն՝ որ մուծանեն։

Սուլըմէյ, քաղաք փոքր. երեւելի է տօնավաճառն, որ կազմի ամի ամի ի միջնկոյս ամսեանն Փետրուարի, յոր ժողովին բազմութիւն Հայոց յարեւմտից։ Ժողովուրդն Հայոց այսր քաղաքի փարթամագոյնք են եւ հեզամիտք քան զայլոց քաղաքացն, այլ առաւել պակասին յուսմանց եւ ի քաղաքավար բարուց։ Ի միջավայրի քաղաքին է եկեղեցի մի, եւ վանք մի արտաքոյ քաղաքին, թափուր ի միաբանից, եւ մատուռն մի։ Իսկ կրօնաւորքն երեք, որ հանդիսացեալք են ի բարեպաշտութեան՝ բնակեալ են ի քաղաքի անդ, իւրաքանչիւր ի տան իւրում։ Բայց ի կրօնաւորացս յայտնանէ են ի քաղաքին եւ քահանայք հինգ, որոց անուանք են. Ներսէս, նախանդամ, 62 ամաց, ամուսնացեալ եւ հիւանդոտ, խոշորաբարոյ եւ պարզամիտ. Յակոբ, ամուսնացեալ, ամաց 40-ից, ծանրաբեռնեալ բազմութեամբ որդւոց. Յովհաննէս քահանայ, ամաց իբրեւ 35-ից, չեւ եւս մտեալ ի կարգ աշխարհի, այլ բանիբուն լաւ կարի. Ստեփանոս քահանայ, մնացի նոյնպէս եւ կարծեմ հաստատելից առաջնոյն։ Սոքա երկոքին վերջինքս եկին այսր յԼվովայ ի ժամանակին՝ յորում տեսուչ կարգեցաւ Տ. Կղեմենտիոս, եւ զամենայն ջան եդին ի գործ՝ զի ձեռնադրեսցէ զնոսա արքեպիսկոպոսն, թէպէտ եւ տգէտք էին. այլ իբրեւ հակառակեցաւ այսմ բանի Տ. Կղեմենտիոս՝ հարկեցան նոքա ամիս ինչ ուսանել ի դպրանոցին զաստուածաբանութիւն բարոյական ի լեզու Հայոց, եւ հուսկ ապա ձեռնադրեցան եւ այժմ բարւոք վարեն կեանս։ Իսկ հինգերորդն, որ է քահանայն մեր, Պետրոս (Աստուածատուր) Ներսէսովիչ, որդի նախանդամին, ամաց 24-ից, աստուածաբան եւ քարոզիչ մշտնջենաւոր յիշատակելոյն տաճարի՝ է պատանի բարեպաշտ յոյժ եւ արժանաւոր պաշտամանն իւրոյ. եբաց յայսմ քաղաքի ուսումնարան, եւ ունի աշակերտս առաւել քան զ50, զորս մարզէ մեծաւ խնամով ի սուրբ հաւատս կաթողիկաց, ի բարեպաշտութեան եւ ի լեզուս Հայոց եւ ի Լատինացւոց։ Էր ի քաղաքիս եւ այլ ոմն քահանայ Արիստակէս, մնեալ ի կարգ աշխարհի, ամաց իբրեւ 46-ից եւ պարզամիտ, այլ բնակէ այժմ ի Կամենից, որ բնիկ քաղաք է նորա։ Ին յՆապլովից եւ բազում եկեղեցիք Յունաց հերձուա-

ծողաց և մատուռն Լատինացւոց, որ է փոխանակ Ծխական եկեղեցւոյ, այլ երկիցս կամ երիցս անգամ ևեթ յամի մատուցանի անդ պատարագ. վանք կրօնաւորաց կարգին Դոմինիկեանց, որոյ վանահայրն է այր ուսեալ և կարևոր: Այս քաղաք, որ գտանի ի սահմանի թեմին եպիսկոպոսին Կամենեցի՝ ոչ է արքունի, որպէս առաջինքն երկոքեան, այլ ստացուածք է Կամենեցկոլսկեայ, որ մի է յաւագ իշխանաց պետութեանն:

**Սնեատին**, քաղաք արքունի ի վիճակի արքեպիսկոպոսին Իլվովայ, որ աւուր միոյ ճանապարհաւ հեռի է յՍտաղովեցէ. ունի եկեղեցի մի Հայոց և քահանայ մի, որոյ անուն Թէոդորոս կոչի, ամաց 46-ից, այր խոշորաբարոյ, պարզամիտ, ամուսնացեալ: Տնանկ է այս քահանայ, զի սակաւաթիւ են ծուխք նորա, և կեայ որիւք, զոր բերեն Հայք Ստաղովեցի, խնամ ունելով եկեղեցւոյն: Յիշատակեալն ի վերոյ քահանայն Ստաղովեցի Յակոբ, ի վերջնում նուագի՝ յորժամ եկեալ էր յայցելութիւն եկեղեցւոյն Սնատինի՝ խոստացաւ քահանայիս այսմիկ Թէոդորոսի՝ զի բանիւ կամ գրով խնդրեսցէ ի Սոբեսկեայ, Մեծէ հեթմանէն կամ զօրավարէն Լեհացւոց՝ զի բարձցեն ի նմանէ զանուրս ընդ որովք նեղէր և զծանրութիւն բնակութեան զօրացն, որք ի տուն անդր նորա եկեմուտ առնէին:

**Ստանիսլաւով**, քաղաք զօրավարին Կրեկի, Անդրէասայ Պոտոցկեայ, որ սուղ ինչ ժամանակաւ յառաջ կառոյց զայն, հեռի յՍտաղովեցէ ութիւ լեհացի մղոնաւ կամ փոքու ինչ աւելի քան աւուր միոյ ճանապարհաւ. գտանի ի վիճակի արքեպիսկոպոսին Իլվովայ, ունի եկեղեցի մի Հայոց և քահանայ մի յԻլվովայ, զԳրիգոր Բալսամ, որ ամուսնացեալ է: Աշակերտ է սա Հ. Կղեմենտեայ և ձեռնադրեալ ջանիւք մերովք, և որպէս կարծեմ՝ է ամաց 32-ց. քաջ գիտէ զլեզուս Տաճկաց և զԹաթարաց, զԼատինացւոցն և զգիրսն Հայոց. հանդիսացեալ փութաջանութեամբ իւրով ի գործ Ս. կաթոլիկ հաւատոյ, որում բազում անգամ եցոյց փաստս ապացուցից և մանաւանդ ամօք երկու յառաջ ի Վարշաւայ, ուրանօր ըստ պատուիրելոյ իմում, այնպիսի հմտութեամբ բանակցեցաւ ընդ Նորին Արքայական Մեծութեան, ընդ նուի-

բակին Պիգնատելլեայ և ընդ արքունի քարտուղարին ընդդէմ ժողովրդեան Հայոց Կամենիցի, որք ոչ կամէին ընդունել զկարևոր ուղղութիւնս եկեղեցւոյ՝ զի առաջի նոցա յաղթահարեաց զպատգամաւորս Հայոց ի բերանացի հակաճառութեան և յաղթանակաւ դարձ արար առ իս ի Կամենից, բերելով ընդ իւր զամենայն թուղթս կարևորս, ի ձեռն որոց յաջողութեամբ ի գլուխ ելին գործ Միութեան։

Զամոստէ քաղաք ի թեմին Խոլմի, աւուրց իբրև երկուց ճանապարհաւ հեռի յԼվովայ, ստացուածք է Վ.խինեվիցկեայ, բատ կարի ամրացեալ, ունելով լիճ գեղեցիկ հուպ ի պարիսպսն. են աստ եկեղեցի մի և քահանայք երկու, որ են Յովհաննէս քահանայ Քրիստոստուրովիչ, ամաց իբրև 47-ից, ամուրի, այր երևելի մտօքն և առաքինութեամբք, քաջ գիտակ լեզուացն Լատինացւոց և հնոյն Հայոց, յոր լեզու գրեալ է խորհրդածութիւնս գիտնականս յոյժ. այլ և կարի փութաջան է ի գործ Ս. Հաւատոյն, որոյ ապացոյց են օրինակելի կարգք եկեղեցւոյն, որոյ նա է երէց՝ և ժողովուրդն, որ խրատու նորա և յաճախակի քարոզութեամբք վարժեալ է ի ծանօթութիւնս եկեղեցւոյ։ Կամէր իսկ թագուհին Մարիամ Լուդովիկէ (որոյ յիշատակին օրհնութեամբ) ամբառնալ զնա ի պաշտօն նախանդամի ժողովոյ եպիսկոպոսին Հայոց Լվովայ։ Պետրոս քահանայ, այր երիտասարդ, ամաց 32-ուց, որ գիտէ զլեզուս Լատինացւոց և զՀայոց և է կաթոլիկ ճշմարիտ. և ըստ մերում միջնորդութեան ձեռնադրեցաւ, յետ ուսանելոյ նորա ամիս ինչ ի պապական դպրանոցին Լվովայ։

Լվով քաղաք արքունի և մայրաքաղաք Ռուսիոյ, ուրանոր ունին իւրեանց բնակութիւնս եպիսկոպոսունքն Լատինացւոց և Հայոց, հանդերձ փոխանորդիւք իւրեանց, այլև հերձուածող եպիսկոպոսն Ռուսինաց համօրէն գաւառին։ ԶԿիևվ ասեն լինել նախկին աթոռանիստ քաղաք արքեպիսկոպոսին Հայոց, ուրանոր պատրիարք կոչէր արքեպիսկոպոսն և էր ընդ իշխանութեամբ կաթողիկոսին Էջմիածնի, որպէս և զարդիս ընդ իշխանութեամբ սորա է պատրիարքն Կ.Պօլսոյ, այլև իրաւունս ունէր ձեռնադրելոյ եպիսկոպոսունս։ Հարկ է, զի ունիցի այժմ արքեպիսկոպոսն քաղաքիս այսորիկ իրաւ-

ունս ձեռնադրելոյ եպիսկոպոսունս. քանզի անպարման յոյժ է գիտել ի Հայաստան ի պէտս ձեռնադրելոյ յեպիսկոպոսութիւն, վասն ազգի ազգի վտանգաց. զի որ կաթողիկէք համարին՝ ոչ առձակին ի բաց. կամ գտանեն յետս՝ խափանել ամենեւին: Արդ են եկեղեցիք Հայոց յԻլ վայրի՝ Վերափոխման Ս. Աստուածածնին ի ներքս ի քաղաքի անդ և է մայր եկեղեցի. սրբուհւոյն Աննայի, որ հասարակօրէն կոչի եկեղեցի վանական, յարուարձանի քաղաքին, որ յառաջագոյն մայր եկեղեցի էր և արքեպիսկոպոսական. էին անդ կրօնաւորք բազումք և տունք նոցա, դուռք եկեղեցւոյն, այլ զարդքն կործանեալք են տունքն յարայս պատերազմին և արկեղքն փլրափառեալք կամ մեռեալք: Այժմ աննշանք և չնչինք են դուռք եկեղեցւոյն բաց ի միոյ ընդարձակ պարտիզէն: Ունի և տաճարին մատուռն յանուն սրբուհւոյ առաքելոյն Յակոբայ և բնակարանս ինչ վիմաշէնս և փայտաշէնս: Զբազում ժամանակս լքեալ թողեալ էր եկեղեցիս այս, այլ երեք ամօք յառաջ զկնի մեծամեծ ուղղութեանցն ի Հայս Իլովայ՝ եղեն միջնորդութիւնք՝ զի կարգեսցի ի նմա քահանայ, վասն որոյ կարգեաց արքեպիսկոպոսն անդ զքահանայ մի Ալէքսան անուն, կրօնաւոր Հայոց ի Զամոստեայ քաղաքէ, ձեռնադրեալ ի Հայս, որ ապա վասն հերետիկոսական վարդապետութեանն իւրոյ մերժեցաւ ի Զամոստեայ ի ձեռն յիշատակելոյն Յովհաննու ծխատէր քահանային: Այլ կրօնաւորն դարձաւ անդրէն յետս, խորամանկութեամբ գողացաւ զմիտս ամենեցուն, և թոյլ ետ արքեպիսկոպոսի ումեմն Թոփտակեցւոյ Պօղոսի, նուիրակի կաթողիկոսին՝ մուծանել անդրէն ի ներքս զմոլորութիւնն, որ մերժեալք էին և ուղղեալք, վասն որոյ կոչեցին զնա առաջի և փակեցին զեկեղեցին: Այլ յետոյ, իբրև ծանուցաւ՝ թէ յաջողէ մոլար վարդապետութեանցն և հերետիկոս է ինքն, և փախստական իսկ կործեցաւ ի գործս սխալանաց՝ արկին զնա ի բանտ և յետ եօթնեկաց ինչ վտարեցին զնա յաշխարհէն. և այժմ գերեալ ի վանս ինչ ի Մեծն Հայս: Յետոյ առ թախանձագին խնդրոց ժողովրդեանն, յանձն առաւ եկեղեցին ի ձեռն Յակոբայ Մարկոսի քահանային, աշակերտի պատուական վարդապետին մերոյ, որ յետ ամաց ինչ ի վերայ ձեռնադրութեան անցանելոյ՝ կարգեցաւ

քահանայ ծխատէր այսր եկեղեցւոյ։ Երկրորդ եկեղեցին է յանուն Ս. Խաչին, նոյնպէս յարուարձանի քաղաքին և ունի պարսպեալ գեղեցիկ և տուն վիմաշէն. այլ վասն յարձակմանց խուդախացն, խափանեալ ի ներգործութենէ ժամանակին՝ լքեալ է ի բազում ամս, և ի կործանումն և յաւերակս դարձեալ արգելք, եթէ ոչ դարման տարցին խնամս ընդ հուպ, որպէս և կամք են ժողովրդեանն, որ և ցարդիս ոչ դադարի ի հայհոյեաց զարքեպիսկոպոսն, զի ոչ ետ հրաման զկարգս աստուածպաշտութեան կատարելոյ յայսմ եկեղեցւոջ։

Իսկ քահանայք Հայոց յԻլֆովի սոքա են.

Յակոբ քահանայ Երաւկի յարևելից, ամաց իբր 47-ից, ամուրի յերից ամաց հետէ, այր խորամանկ և հնարագէտ։ Նմա իբրև 15-ուք յառաջ եկն նա այսր, ի պատասատուն համգերձս և աղքատ, այլ հնարեցաւ ինն այնպէս յանկուցանել յինքն զախտս ազանցն՝ զի ի սուղ ժամանակի կարգեցաւ աւագ երէց մայր եկեղեցւոյն, և յայսմ պաշտաման եկաց մինչ նա մինչև ցայս մեր և մեծամեծ զուղ զութիւնս յեկեղեցին, զորս ոչ կամէր նա, վասն որոյ հեռացեալ հրապարակեցաւ և արկաւ ի պաշտամանէ իւրոյ, ընդ որ յոյժ տրտմեցաւ արքեպիսկոպոսն, այլ և զաս բանութեամբ ի հաւանութիւն էած կաթողիկ արքեպիսկոպոսն Իլֆովայ։ Իսկ յետ երկուց ամաց դարձտրտալով յաքսորանացն, զղջացաւ ի վերայ նախկին մոլորութեանց իւրոց. և գրեաց առ իւ նուիրակն Գրիգորիսի՝ զի ընկալցի զնա, և ես կատարեցի զկամս նորա, այլ պայմանս եդ եդի ի վերայ. այն է, զի հրապարակաւ դաւանեսցի զհաւատս (կաթոլիկաց), և զի մի այլ եւս խոստովանի սրտագէտ զժողովուրդն, զի ոչ պահէ ի ծածուկ զգաղտնիս խոստովանութեան, յոյժ յաւանդեալ յարքեպիսկոպոսն, որում բարձուկ էր նա ասէր։ Վասն այսորիկ և մինչև ցայսօր ժամանակի կակածելի է այրն, մանաւանդ զի չշունչ է ի ժողովրդեանն՝ թէ ուրացող է նա և մահմետական և հանապազ հաղորդութիւն ունի ընդ Հայաստանի։

Երկրորդ քահանայն Հայոց Իլֆովայ է Պօղոս ի Կոստանդնուպոլսոյ, ամաց իբրև 46-ից, որ առաջէն ձեռնադրեցաւ յարքեպիսկոպոսէն, որոյ ընդ ունեմ ապագային անուանեցեալ է.

պարզամիտ է և անմնչան։ Իսկ երրորդն, Արսէն քահանայ է ամաց իբրև 60-ից, ծննդեամբ Իլվովեցի. ոչ է մնեալ ի կարգ աշխարհի և պարզամիտ է նոյնպէս։ Ի սկզբան անդ բնակեալ էր յԱրտուասդէմի, և եկեալ աստ յԻլվով ընդ Արսէնի քահանայիւ՝ հաստատացուցանէր զժողովուրդն ի ճշմարտութիւն բուսոյն, որ եկեալ ի միջոյ գերեզմանին Քրիստոսի. և զայս առնէր մինչև ցգալուստ մեր. այլ և խոստովանահայր է արքեպիսկոպոսին, և առանց խայթոցի ինչ խղճի առ նմա որձակուէր, ոչինչ հայեցեալ ի գործս նորա գայթակղութիւն, և եթէ ոք հարցանէ ի նմանէ զնենգաւորութիւն նորա զաղագն՝ առ զգուշութիւն այնպէս առնէր առէ, զի մի երկրորդ անգամ արկցի ի բանտ, զոր օրինակ արկաւ զամ մի, յորժամ ոչ կամեցաւ արձակել զարքեպիսկոպոսն. այլ ամենեքեան առհասարակ ի պատուի ունին զնա, քանզի քաջ գիտէ զերգս եկեղեցւոյ և ընդ երկոցունց քահանայիցն, յիշատակեաց ի փերոյ՝ խոստովան առնէ զժողովուրդն։ Չորրորդ քահանայն է Ստեփան, ամաց 50-ից, ոչ ամուսնացեալ. այր խոհեմ է, գիտէ զլեզու Լատինացւոց և վարէ զպաշտօն քարտուղարութեան առ արքեպիսկոպոսին և քարոզէ երբեմն ժողովրդեանն. Իլվովեցի է ծննդեամբ, և ի բազում դէպս ոչ բարեհամբաւ գըտաւ կասուցման գայթակղին այսր։ Հինգերորդն է Յովհաննէս քահանայ Նէկիապրովիչ, եղբայր միոյ ի գաւառորդացն Հայոց Իլվովայ, և ունի խնամութիւն ազգականութեան ընդ երեկելի առնս Հայոց. այր փոքրուէ հասակաւ, ամաց իբրև 36-ից. գիտէ սակաւ մի զլեզու Լատինացւոց, այլ թեթևամիտ է և ոչ խորագէտ. չէ մնեալ ի կարգ աշխարհի, և ձեռնադրեալ է ի քահանայութիւն ի կաթողիկոսէն Էջմիածնի և առն ինչ գեղեցիկ ունէր յուսումն. ամենայն ջանիւք խորհէ նկրտի ունել երբեմն զաթոռ արքեպիսկոպոսութեանն, որ թէպէտ և յաջողեցի նմա. բայց ըստ ամենայն մասանց փնտանօր լեցի այս, մանաւանդ զի թեթևաբարոյ է, և ի հաստիլ պատանեկութեան իւրոյ խմորեցաւ հերձուածով և մոլորութեամբք հերետիկոսութեան. վասն որոյ և հարկ է յոյժ զգուշանալ զամենայն գջանս նորա։ Վեցերորդն՝ Յակոբ քահանայ Մարխեկիչ Իլվովեցի, ամաց 26-ից, որ ուսաւ ի դպրանոցի մե-

րում և ձեռնադրեցաւ ըստ մերում միջնորդութեան. է կառաւեալ կաթողիկէ, և թէպէտ չունի ձիրս մեծամեծս շնորհաց, այլ գիտէ չափաւոր զլեզուն Լատինացւոց և զգրոցն Հայոց այլ և զբարոյական աստուածաբանութիւն: Զարդիս առաջ երէց է եկեղեցւոյն Հայոց, որ յարուարձանի է և կոչի վանական, որպէս ի վերոյ ասացաւ: Եօթներորդն՝ Գաբրիէլ քահանայ Զախնովիչ ամաց 25-ից յԻլվովայ, ի հին յոյժ և պատուական ցեղէ Հայոց, եղբօրորդի առաջ պատուաւորին Հայոց Իլվովայ այլ յայսր ամենայնի վերայ, որդի է աղքատին յոյժ ծնողաց, աշակերտ պապական դպրանոցին, աստուածաբան հմուտ և քարոզիչ մայր եկեղեցւոյն Հայոց, ճարտար ի քարոզութեան, մանաւանդ յորժամ բանք իցեն զուտ զութենէ վարուց: Տեսուչ է նորոյ ուսումնարանին Հայոց վասն մանկանց, օժանդակութեամբ սարկաւագի ուրումն Ոնուփրեայ, աշակերտի պապական դպրանոցին, և յիւրաքանչիւր եօթնեկի գայ աշակերտօքն համերձ ի դպրանոցն՝ զի առաջի մեր աւանդեսցէ նոցա զհրահանգս հաւատոյ ի լեզու Լեհացւոց: Բայց ինչ բարի մարթ է յուսալ ի նմանէ, զոր սիրեն ամենեքեան առ հասարակ վասն հեզութեանն և բարութեան, այլ զի կարճ է հասակաւ՝ չունի փառահեղութիւն դիմաց և հասակի:

Ի վերայ այսոցիկ քահանայից է և այլ ոմն քահանայ, զոր ոչ եդի ի կարգս սոցա, քանզի ոչ է ընդ իշխանութեամբ արքեպիսկոպոսին, այլ ի դպրանոցի անդ է և ըստ կարի իւրում ծառայէ ըստ յանձնարարութեան Ս. Ժողովոյն, որ ի հերուն ամի, յորժամ գնացեալ էր նա ի Հռոմ՝ կարգեաց նմա թոշակ 12 արծաթոյ (սկուդից) ամի ամի: Նմա ամաց 24-ից է. ոչ կարի բազմաձիր, այլ հրեշտակային ունի սրբութիւնս, փութաջան և կաթոլիկ անվեհեր, որ օժանդակութիւնս մեծամեծըս մատոյց առաքելութեան մերում, զի յետ դարձման մերոյ ինքն առաջին եղև, որ իբրև հեծուկս ինչ առնելով կամաց արքեպիսկոպոսին՝ կատարեաց զկարգս աստուածպաշտութեան ըստ արարողութեան կաթողիկեաց և օգնական եղև մեզ և լինի ի բազում իրս. Կ. Գոլեկցի է ծննդեամբ և ամս հինգ աշակերտեցաւ Դպրանոցին Տարածման հաւատոյ, (Congr. de propaganda fide), առ սուս Հ. Կղեմենտեայ, վասն որոյ և

կարի հմուտ է գրոց լեզուին Հայոց և բաղդատական աստուածաբանութեան։ Անուն նորա կոչի Յակոբ Գրիգորիս կամ Գրիգորովիչ, զի անուն հօր նորա էր Գրիգոր. և քանզի չունին Հայք զսեփական ազգանուն՝ վասն որոյ ի կնքահարց անուն զանուանս և կամ ի հաւուց, որով և յանուանցդ Թորոս, Ներսէս, Բէրնարդ՝ ածանցեն մականուանս Թորոսովիչ, Ներսէսովիչ, Բէրնարդովիչ, և այլն։

Եկեղեցիքն Հայոց Վալախիոյ և Թաթարստանի դեռ ևս ի հերձուածի անդ մնան, որպէս և այլ եկեղեցիք յարևելեան Հայաստան։ Իսկ միութիւն եկեղեցեացն Լեհաստանի և Ռուսաստանի եղև այսպէս։

---

Յամի Տեառն 1623 մեռաւ արքեպիսկոպոսն Իլվովայ, նախորդն Թորոսովիչի։ Իբրև ամիս ինչ թափուր մնացեալ էր աթոռն արքեպիսկոպոսութեան՝ եկն այսր կաթողիկոսն Էջմիածնի Մելքիսեդեկ։ Եւ իբրև լինէին հակառակութիւնք ի ժողովրդեանն, թէ զո՞վ ընտրեսցեն՝ կաթողիկոսն, որպէս ասեն, կաշառեալ ոսկւով, հովանաւորեաց յիշատակեալն Թորոսովիչի, 22 ամաց, որ կղերիկոս էր ի ժամանակին, և փակեալ դրամբք ձեռնադրեաց զնա եպիսկոպոս ի միում յեկեղեցեաց քաղաքիս, որ անուանեալ կոչի վանական։ Իբրև ծանեաւ զայն ժողովուրդն, զայրացաւ յոյժ յոյժ, զի փոքր մի ևս՝ և զէն առնուլ և ի մասունս մասունս կոտորէր զկաթողիկոսն և զձեռնադրեալն ի նմանէ զարքեպիսկոպոս։ Այլ ճարտար իմն հնարիւ ի չքմեղս եղև կաթողիկոսն՝ թէ չէին նորա կամք ձեռնադրել զԹորոսովիչն արքեպիսկոպոս վասն Լեհաստանի, այլ վասն միոյ ի վիճակաց Հայաստանի։ Յետոյ կամեցեալ դառնալ ի հայրենիս իւր՝ մեկնեցաւ գնաց ի Կամենից (ուր և մեռաւ ապա և թաղեցաւ) և հետազօտութեամբ էած ընդ իւր զԹորոսովիչն մինչև Եազլովից քաղաք, ուրանօր յանկարծակի ուրեմն եկեալ զնա փութանակի, պատուէր հրամանի եղեալ ի վերայ ժողովրդեանն սպառնալեօք ամբաւ նզովից՝ զի ընկալցին զարքեպիսկոպոսն, զոր և նոքա առին յակամայս։

Անցին յայնմհետէ ամք երկու ի խաղաղութեան, այլ դա-

տաւորացն Հայոց ի ձեռս իւրեանց կորզեալ զբարձրագոյն իշխանութիւն ի վերայ եկեղեցականաց կրօնից իւրեանց՝ բարկանային ի վերայ արքեպիսկոպոսին, զի ի բազում տեղիս ոչ միաբանէր ընդ նոսա և ոչ հնազանդէր նոցա, որպէս նախորդք նորա: Խորհէին իսկ դատաւորքն գնել զնա ի բանտի և հանել ի նմանէ զաստիճան արքեպիսկոպոսութեանն օժանդակութեամբ նուիրակի կաթողիկոսին, Խաչատուր վարդապետին. իսկ յառաջագոյն ընդ նզովիւք արկեալ էր զարքեպիսկոպոսն այլ ոմն վարդապետ, Գրիգոր Սեսարացի, հերետիկոս եղեալ: Վասն որոյ խնդրէր արքեպիսկոպոսն հնար ինչ հաշտութեան ընդ դատաւորսըն և խոստացաւ իսկ երթալ յարեւելս և խնդրել ի Գրիգոր վարդապետէն՝ զի լուծցէ զնա ի նզովիցն, զոր և արար իսկ: Բայց դոռողամիտն այն վարդապետ ոչ շատ համարեալ որչափ սատրացոյցն զարքեպիսկոպոսն՝ եդ ի վերայ նորա նզովս երկրորդ անգամ: Արքեպիսկոպոսն կենցաղավարէր ըստ առաջնում կարգին *), վասն որոյ կամէր դատաւորացն՝ զի դատեսցէ զնա նուիրակն, յորմէ ծառայութեամբ խոյս տուեալ արքեպիսկոպոսին, չոգաւ յեկեղեցի Հարցն Կարմելեանց Բոկոտնից և հրապարակաւ յայտ արար՝ թէ կաթոլիկ է ինքն: Կազմեցան անդէն պատրաստեցան հանօրէն կաթոլիկք առ ի պաշտպանել նմա, և յեկեղեցւոյ անտի Կարմելեանց, պաշտպանութեամբ զինուորաց և հանդիսաւոր յուղարկաւորութեամբք եկեղեցականաց, իշխանաց և քաղաքացեաց՝ տարին ածին զնա ի մայր եկեղեցին և անդաստանի խնդութեամբ երգեցին «Օրհնեալ Աստուած փառաւորեալք». և մատուցեալ անդ արքեպիսկոպոսին պատարագ ըստ ուղղափառութեան կաթոլիկաց՝ զնոյն առնէ մինչև ցայսօր ժամանակի: Իսկ ժողովուրդն Հայոց անտի և այսր յամառեալ կայ ի հերձուածին և անգոսնէ զուղղութիւնն արարողութեանց, և ահա ամք են 26 և աւելի ես՝ զի մարտնչի ընդ նմա սաստկաբար յոյժ, որչափ կար իցէ մարդոյ, ոչինչ խնայելով յարծաթ, որպէս զի անանկացան ամենեքեան որ յառաջագոյն մեծատունքն էին առ հասարակ: Իշխանաւորքն Հայոց հանին յեկեղեցեացն զամենայն տուրս ժողովրդեանն, որ էին.

*) Որպէս տեսցուք՝ հեռի էր յոյժ ի բարեպաշտութենէ արքեպիսկոպոսն: Թարգմ.

արգիւնք եկեղեցականաց նոցա, և ոչինչ փոյթ տաճարին վասն եկեղեցեացն և զի համախոհս իւրեանց ունէին զքահանայս, բաց ի միոյ քահանայէն Սրսենայ, համախոհի արքեպիսկոպոսին, զորս և բանք եղեն ի վերոյ՝ զատեն մի տաճարին իւրեանց եկեղեցի և հրամայեցին՝ զի կատարեսցեն անդ զամենայն խորհուրդս եկեղեցւոյ, և զԹաղումն իսկ։ Եւ քանզի ունէին արտօնութիւնս, յորոց կարևորագոյնն էր ազատութիւն դաւանութեան հաւատոց՝ այնչափ յաջողեցան ի խնդրին իւրեանց առ իշխանս Լեհացւոց և առ Թագաւորն՝ զի հրաման եղև արքեպիսկոպոսին, որպէս զի տացէ նոցա Թոյլ ունել գէԹ զմի յեկեղեցեացն։ Այլ երբև ոչ հնազանդեցաւ հրամանացն արքեպիսկոպոսն՝ վերստին անդրէն եկն հրաման ի Թագաւորէն, և առաջարկէին իսկ նմա արծաԹ բազում (որպէս ասէր Ինքն արքեպիսկոպոսն), այլ ընդունայն եղեն այս ամենայն, զի զօ-հիւք արդարութեան վասնեաց Աստուած զսիրոյ նորա։ Կուսկ ուրեմն առաքեաց արքայն գործակալս, պատուիրեալ նոցա յայտնապէս՝ մի՛ յետս դառնալ, մինչև կատարեսցին հրամանք բանից նորա կամաւ կամ բռնութեամբ։ Ըստ օրինի յարգանաց ընկալաւ գնաց արքեպիսկոպոսն. այլ յորժամ երկիցս և երիցս անգամ եկին գործակալք զինու զօրութեամբ տիրանալ եկեղեցւոյն, (և ոչ ոք ի քաղաքին օգնէր նոցա, քանզի յայս տաճարին պաշտօնեայք քաղաքին՝ Թէ հայցեն զներողութիւն Նորին Մեծութեան, այլ ոչ կամին ընդդէմ կալ եկեղեցւոյն Կամենից, որ այնչափ արտօնութիւնս են նոցա ի նշան հաւատարմութեան իւրեանց), առաջի անձէր նոցա արքեպիսկոպոսն զկուրծս իւր։ Եւ յայլ եւս նուագի, ի կարևոր յայդ հարկի, ընդ առաջ եկ նոցա ի դրունս եկեղեցւոյ, ունելով ի ձեռին զՍ. Խորհուրդն, և որոտաց բարձր ձայնիւ. «Ահա, սպանջէք զիս։ Վասն որոյ ըստ սովորութեան այսր քաղաքի բողոք ի ներքս ի դատարան քաղաքին մատուցին գործակալքն, և արքեպիսկոպոսն բողոք ընդդէմ նոցա։ Եւ զործն այսպէս ձեռնանայն ի Վարշաւայ։ Ոչեաց ապա գնա արքայն առ Ինքն, բայց հրաման եո յառաջագոյն իշխանին, որ Թագաւորեացն ասպա՝ զի նախ քան զանակցութիւնն, յընդունարանի անդ արասցէ ազգարարութիւն խիստ արքեպիսկոպո-

սին և սպառնալիս մեծամեծս դիցէ ի վերայ, եթէ ոչ հաւանիցի արքեպիսկոպոսն կատարել զկամս արքային, որ համաձայնք են արտունութեանց Հայոց։ Բանից իշխանին այսպէս պատասխանի առար արքեպիսկոպոսն. Խնդրեմ ի Նորին Մեծութենէն՝ զի ներեսցէ ինձ. այլ քանզի արքեպիսկոպոս եմ ես կաթողիկէ՝ ոչ կարեմ տալ ս. տալ եկեղեցի մի ի ձեռս հերձուածողաց. խնդրեմ՝ զի ծանուսցես Նորին Մեծութեանն, զի եթէ հաճեսցի՝ հրաման տացէ սպանանելոյ զիս. յայնժամ եղիցի նա Բոլեսլաւս և ես եղէց Ստանիսլաւս *)։ Խանդաղատանցաւ արքայ յայս բան, որ արդարև արժանի է անմահ յիշատակի, և հիացեալ և շատ ազատական յանօթոյ՝ արձակեաց զնա յետս, և ոչ կամեցաւ մտանել ի գործին ունել յայնմհետէ։

Ի յաւահատութիւն մնալ Հայոց՝ եղին ի միոյ դարս ինչ, զի փախնան առաւելն նմա և կորուսեն յերեսաց երկրի։ Գամ մի, յորժամ վասն այսպիսի գործոց երթայր ի Վարշաւայ, կամ դառնայր անտի ի Ճանապարհի անդ, որպէս պատմէ ինքն՝ յարձակեցան ի վերայ կառացն աւազակք ծպտեալք երեսօք, այլ ոչ գտին զնա ի կառսն, զի նա յառաջագոյն եկեալ էր արտաքս անտի և հետիոտս երթայր զառաջոյ։ Երկիցս և երիցս անգամ գեղ եռուն նմա նշխարք, զորս ի կեր արկանէր ի պատարագին, այլ փութանակի զարմանօք ազատեցաւ ի մահուանէ ողորմութեամբն Աստուծոյ։ Երբեմն ի գիշերութիւնս և ի մեկութիւնս ձեռնարկէին, զի հիմեսցեն զնա և ի ձեռն ոզւոյ արհաւիրս ի վերայ նորա արկցեն։ Գամ մի ի Սամենեց քաղաքի,—որում վկայեն անձինք, որ ականատեսք եղեալ էին—առաջի արքեպիսկոպոսին կորզեցին զեկքն ի սեղանէն զպատանեակ մին, ամաց 20-ից և ինչ առաւել վարեալ ածին զնա ի գերեզմանս մերձակայ եկեղեցւոյն Հայոց, անդրա թին հեղուլ մացին ի ծակ մի փոքր որմոյն և գայեցին. առին այս և ծակեալ զնա իբրև վարշամակ մի՝ բերին անդրէն ի սեղանն. և անկեալ գնէր նա փայտացեալ, ոչինչ ցուցանելով նշան կենաց մանն քառասուն, որում յայց եկ քաղաքն համօրէն։ Յետ բազում

*) Ընթերցէ ի նահատակութիւն եպիսկոպոսին Կրակովի Ստանիսլաւայ, հրամանաւ Բոլեսլաւայ Բ-ի արքայի Լեհաց ին, ի ԺԱ. դարուն։

խնամոց և աղօթից հուսկ ուրեմն նորա արքեպիսկոպոսն՝ թէ աւետարանն, զոր հանապազ ընդ իւր ունէր՝ շարժեցաւ ինքնին ի տեղւոջէն, գնաց և հանգեաւ ի վերայ բերանոյ մեռելոյն, որ յանկարծակի յօդւոց եհան և խնդրեաց ջուր յըմպել. և զկնի աւուրց ինչ ապաքինեցաւ ամենևին և պատմէր՝ թէ յայց ել ծերունւոյ ումեմն փառաւորեալ, որոյ դէմք իւր նման էին պատկերի Ս. Պետրոսի, որ բժշկեաց զնա, հրամայեալ համբուրել զՍ. Աւետարանն։ Ամբաստան եղեն զարքեպիսկոպոսէն ի Վարշաւայ, թէ վհուկ է և ունի ընդ իւր յուռութս զանազան, զորս արկանէ ի վերայ ամենեցուն։ «Ահա վկայն իմ, ասաց արքեպիսկոպոսն առաջի արքունի քարտուղարին և եհան ի գրպանէն զնկար Ս. Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց, զոր ընդ իւր կրէր անհատապէս, Ահա մոգութիւն իմ և յուռութք։ Հիացաւ ընդ այս քարտուղարն և ծանեաւ՝ թէ զրպարտութիւն էր զոր զնմանէն ասացին, այլ զի Աստուած, որ հաճէր ի միութիւն Հայոց ընդ Ս. եկեղեցւոյն Լատինացւոց՝ էր ընդ նմա և յաղթանակաւ ազատէր զնա յամենայն արկածից։

Սա ի նշանաւոր քահանայից Հայոց վիճէր ընդ արքեպիսկոպոսին ժամու ինչ զբանական հոգւոյ, և ասէր իբրև ոք անաստուած՝ թէ զայն ոչ Աստուած ստեղծանէ, այլ հայրն և մայրն, զօրէն կայծի, որ ի բաղխմանէ երկուց գայլախազից զգայնոյ. այլ յետ աւուրց ինչ եղեւ զպատիժ իւր յԱստուծոյ. զի կին քահանային ծնաւ հրէշ մի եղջերաւոր, հանգոյն որպէս հասարակօրէն զդեւս պատկերացուցանեն։ Ի թիւս բազում երազոց, զորս արքեպիսկոպոսն տեսանէր—այլ ոչ կարեմ համարիլ զայսոսիկ, քանզի գիտեմ թէ մնապաշտք են յոյժ Հայք և ի կարգի աննշան իրս—նոսա և զգլխաւոր մոլորեցուցիչ վարդապետն Հայոց զՅովհան Օձնեցի, որ զժողովուրդն Հայոց զատեաց անջատեաց գլխովին ի Ս. եկեղեցւոյն՝ կարի տառապելութեամբ ի մէջ հրոյ բոցբոցելոյ, որ գոչէր ահարկու ձայնիւ. Զի՞նչ, զի՞ լուցանես զհուրն իմ։

Յայսմ ժամանակի կրկին անգամ չոգաւ արքեպիսկոպոսն ի Հռովմ առ պապն Ուրբանոս Ը., որ սիրով ընկալաւ զնա և ետ արտօնութիւնս բազումս այլ և զեմփորոն, զոր ոչ ու-

նէին նախորդք նորա, թէպէտ և կոչէին արքեպիսկոպոսք ըստ սովորութեան Հայոց։ Իսկ վէճքն և հակառակութիւնք հուսկ ի վերջոյ դադարեցան. բայց մնացական եղեն վասն երկոցունց կողմանցն. զի աղքատացաւ ժողովուրդն առհասարակ, սպառեցան (ի ձեռս արքեպիսկոպոսին, ասեն) գանձք եկեղեցւոյն, որ ի ճոխագունից անտի էր ի Լեհաստանի վասն մեծագնի արծաթեղինաց և ծանրագին սպասուց։ Յայնժամ միաբանեցան դատաւորքն, ըստ առակին՝ թէ «Յուսահատութիւն ի վանս մտէ» *), զի գոնէ ի վերին եղեալ կաթոլիկս գանձին ընծայեցուցին, որպէս զի գէթ այսու լիցի հնար յաղթահարել զարքեպիսկոպոսն, որ ընդ նոսա իբրև ընդ հերձուածողս վարէր՝ յաջողէր միշտ, քանզի օժանդակ և հովանի իւր ունէր զեկեղեցին Հռովմայ։ Յուսացեալ էին՝ թէ յորժամ եկեղեցիքն յիշխանութիւն իւրեանց մնասցեն անդրէն՝ կարգեսցեն զամենայն ըստ առաջնումն կարգի։ Աստի առաջի արարին արքային զդաւանութիւնն հաւատոյ, զոր հասարակօրէն ընթեռնուին արքեպիսկոպոսքն Հայոց ի ժամ ձեռնադրութեան իւրեանց, մինչև ցժամանակս վերջին հերձուածոյն յիշատակելոյն Յովհաննու Օձնեցւոյ. յայնմ դաւանութեան էր երդումն հնազանդ լինելոյ Ս. Պետրոսի, Գրիգորի Լուսաւորչին և նմանց օրինաւոր ժառանգաց նոցա. այլ և ընդունելի էին եօթնեքեան ժողովքն առաջինք և նմանք յետնոցն։ Ընկալաւ արքայ զդաւանութիւնն, այլ վասն առաւել հաստատութեան պահանջեաց՝ զի վաւերացուսցէ կաթողիկոսն զայն դաւանութիւն։ Փութանակի անդէն առաքեցին Հայք զայնպիսի դաւանութիւն եպիսկոպոսական, այլ օրինակ կարի հնագոյն՝ զի մի անկցի կասկած ինչ ի միտս կաթողիկոսին ի վաւերացուցանելն, զոր և կատարեաց իսկ կաթողիկոսն բարի Փիլիպպոս, որ ի Կ. Պոլիս էր յայնժամ (նախորդն. արդի կաթողիկոսին)։ Իբրև ծանեաւ զայս արքեպիսկոպոսն՝ ոչ ի խորս անկանել կամեցաւ, այլ մանաւանդ խնդրելով հնարս հաշտութեան ընդ ժողովրդեանն՝ փութացաւ գնաց և ինքն ի Կ. Պոլիս կառօք սուրհանդակաց, ուստի դարձ արար, ըստ ողորմութեանն Աստուծոյ՝ յետ ստորագրութեան

*) Իմաստ առակիս է՝ թէ առ յուսահատութեան և վանս մտանեն մարդիկ. Թարգմ.

թղթոյն դաւանութեան։ Իսկ պատգամաւորին Հայոց ընկալեալ զԹուղթն դաւանութեան, դարձաւ այսրէն փութանակի զանխուլ յարքեպիսկոպոսէն։ Յարգանօք մեծաւ ընկալաւ կաթողիկոսն զարքեպիսկոպոսն. թէպէտ չէ յայտ հաւաստեաւ զի՛նչ ինչ իւրոց բանակցութիւն ի՛ նոսա եղև՝ բայց յանկարծակի հրաման եղև արքեպիսկոպոսին, զի խոստասցէ զդաւանութիւնն, զոր ունէին բազումք, ըստ ողորմութեանն Աստուծոյ, և զպատճէնն ունին մինչև ցայսօր ժամանակի. թող զայս, հաւանեցաւ արքեպիսկոպոսն և յայլ պայմանս ի յայտնի վասն Ս. Հաւատոյն վասն որոյ և ընկալաւ ի կաթողիկոսէն իւրմէ Թուղթս և կոնդակս առ ժողովուրդն, յորս յորդորէր զնոսա կաթողիկոսն հնազանդիլ իշխանութեան արքեպիսկոպոսին։ Եւ այսպէս դարձաւ արքեպիսկոպոսն յաթոռ իւր և զամենայն ինչ կարգեաց ըստ այնմ՝ որպէս էր յառաջ քան զխոստովանութիւն իւր (դաւանութեան Հռովմայեցւոց) և ի նորոյ յանդիմանել կայր վասն հերետիկոս առաջնորդութեանց քահանայս ոմանս, որ կուսակիցք էին նմա, այլ ասա հետացեան ի նմանէ, ի ժամանակս հակառակութեանց նորա ընդ ժողովրդեանն և առ ի դիւրագոյնս խաբելոյ՝ ջանային փախչել ըստ առաջնորդութեանց Լատինացւոց և զգենուլ զապարագ հանդերձից նոցա։ Ի նորոյ ընկալան զնա Հայք, որ կարի զուարճանային ի սկզբան իւրեանց, զի զամն հնար Մխիթարեան զանձինս ընծայեցուցանել և այնու պահել զարտաքնութիւնն, զորս փայլէին մինչև ցայսօր՝ մնալով կալով ի նախնի հաւատս իւրեանց։ Վասն որոյ սահմանեցին առն իւրեալ, որ յայնմհետէ և այսր հանդիսի առնի ի մայր եկեղեցւոյն ամի ամի ի 11-որդ կիւրակէին յետ յինանորդէից, և կոչի Տօն Մխիթարեան, և արդարև, միաբանեցան նոքա ընդ միմեանս, այլ ոչ ընդ Ս. Եկեղեցւոյն։ Սակաւ անջատումն մանաւանդ եղև յԵկեղեցւոյն քան միութիւն, զի յայնմհետէ մեծաւ եւս ջերմեռանդութեամբ պաշտէին զհերետիկոսական առաջնորդութիւնս իւրեանց, թէպէտև քահանայքն, յորժամ հարկ լինէր նոցա մատուցանել պատարագ ի Լատին եկեղեցւոջ՝ յաւելուին ջուր ի գինին, որով դիւրագոյն եւս խաբէին զկաթոլիկոսն։ Այս միութիւն պատճառ հաստատեցաւ 12 կամ աւելի եւս ամօք յառաջ քան զգալուստն մեր այսր։ Չէ ինձ տատա-

նոր ի ձմահ խօսել զմարուց արքեպիսկոպոսին, որ անպատշաճք էին բարձր աստիճանի նորա՝ և գերեւելի գործոց նորա. Թողում զայս համբաւոյ, որ ծանուցէ առհասարակ զամենայն գործ փառաց՝ զպակասորդն սոսա պատմութեանս իմոյ լնուլ, զի ոչ կամիմ ես հրապարակել զայնպիսի իրս, զորովք հարկ է լռութեամբք բանիւք անցանել:

Աղում անգամ աշխարհից եղեն յայսմ գործի հանգուցեալն ի Տէր Թագուհին Մարիամ Լուդովիկէ և Սրբազան նուիրակն Պիգնատելլի, որ ի բռնութիւն ես արկին ձեռն և բանսարկ համին տարամերժեցին կին մի, զոր ոչ էր օրէն ունել ընդ իւր արքեպիսկոպոսին, որ յափշտակեալ էր զկինն ի փառացն, յորում միանձնուհի էր, և կրկին անգամ կոչեաց զնա առ ինքն, յորժամ փախեցին: Յաւուրս մեր դարձաւ այսրէն կինն համերձ որդւոյ իւրով, զոր ետուն նմա ի սպասաւորացն արքունի և կեայ մին- չև ցայսօր, որոյ անուանել՝ թէ սիրելութիւնս յայն ընդ արքե- պիսկոպոսին առնէ կինն իւր և յաճախակի յայցելութիւն նորա զնայ՝ ի բաց կեայ ի նմանէ, վասն որոյ և հիւանդացաւ կինն: Այլ արքեպիսկոպոսն ընկալաւ զնա ի նմանս իւր, և ոչ խնայեաց ի ծախս՝ պահել զնա ի միում յեկեղեցեաց արուարձանին, որ յա- նուն Ս. Խաչին, թէպէտ և ի խոր խոցեցան և տրտնջէին զայն- մանէ ժողովուրդն համայն: Անդանօր մեռաւ կինն, որպէս համարիմ, եօթն և տասն ամօք յառաջ. և զի խնդրեաց ժողո- վուրդն ուժգին յարքեպիսկոպոսէն և միջնորդեաց առաջ սար- կաւագն և նախանդամն մայր եկեղեցւոյն Լատինացւոց Պետա- կովսկի, մի թաղել զմարմին կնոջն յեկեղեցւոջ Հայոց՝ թաղեաց զնա յեկեղեցւոջ Ս. Աւքսենտեանց, որ յարուար- ձանի անդ, մեծաւ շքով և հանդիսաւորութեամբ և բազմածախ տրպարաւ, առանձնելով զբուռ և բերանցի յորդորանացն, զոր առնէաք առ արքեպիսկոպոսն՝ զի թողուցու զայն գործ յիմա- րութեան, որ նսեմացուցանէ զպատիւ աստիճանի նորա: Այն- պէս հաճեցաւ Աստուած, զի այս Հեղինէ եղեւ վերջինն: Եթող նա որդիս երկուս, զորս յարքեպիսկոպոսէն յղացաւ, որ առ յաւի զատախազութեան իւրեանց այնպէս իմն թուէին՝ թէ ոչ լաւագոյնք ինչ լեցին քան զհայր իւրեանց: Ոչ այլ ինչ եթող կինն զկնի իւր, այլ յիշատակ միայն տրտմական, զի

փոքր միւս ևս՝ և լինէր պատճառք կործանման արքեպիսկոպոսին, լաւագունի վիճակի արժանաւորին, եթէ չէր օգնեալ Աստուծոյ յայտնի գործի, որպէս և յառաջագոյն եցոյց զզօրութիւն իւր. ծագելով ի միտս արքեպիսկոպոսին խորհուրդ երթալոյ ի Հռոմ, յոր ինչ մանաւանդ յորդորէր զնա նուիրակն Մարէսկոտի: Այլ դարձցուք անդրէն ի շար պատմութեանս:

Յամի Տեառն 1662 ժամանեաց այսր վասն վճռելոյ զգործս հասարակաց արքայն Յովհան Կազիմիր հանդերձ Թագուհւոյն Մարիամու Լուդովիկէիւ. եկն ընդ նոսա և նուիրակն Պիղնատէլլի: Տեսին նոքա, զի տրտնջէին յոյժ Հայք զարքեպիսկոպոսէն և ասէին, թէ ոչ այլ ևս համբերել կարեն նմա վասն անառակութեանն, բռնութեանցն, կողոպտելոյ եկեղեցեաց և վաճառելոյ զինչս եկեղեցեաց և վասն բազմաց այլոց պատճառաց, որովք մարթ էր կազմել հատոր մի ստուար գործոց դատաստանի: Խոստացաւ նուիրակն, որպէս սովորութիւն էր նմա յամենայն ժամանակս նուիրակութեան իւրոյ՝ բառնալ զայն ամենայն ի միջոյ, և տեսեալ զյարմարութիւն առթին, պարտաւորեաց զՀայս վասն ազատութեան եկեղեցականաց նոցա և խաղաղութեանցն յեկեղեցիս նոցա, մանաւանդ զի ինքն և համօրէն Լեհացիք առ կաթողիկէս և միաբանեալս զնոսա ունէին՝ և խոստացաւ նոցա, զի եթէ հաւանեսցին՝ խնդրեսցէ ի Ս. Աթոռոյն վարդապետս, վասն ուսուցանելոյ զպատանիս նոցա: Եւ քանզի դժուարին էր Հայոց մերժել զայն առաջարկութիւն, որ անարգութիւն արդեօք լինէր նոցա՝ ամենեքեան ըստ ազդեցութեան իմն Հոգւոյն սրբոյ՝ միաձայն խնդրեցին առ նոյն վարդապետս զՀ. Կղեմենտիոս Գալանոս, զոր քաջ իսկ գիտէին վասն հանրածաւալ համբաւոյ նորա, որ այնչափ ամս աշխատ եղև վասն նոցա և փառաւորեաց զանուն ժողովրդեանն բազմօք երկերի երկոցն իւրովք: Հիացաւ նուիրակն ընդ այն առաջարկութիւն, զոր խնդութեամբ ընկալեալ՝ հրամայեաց արքեպիսկոպոսին, որ ծանուցեալ էր զայն ի լինելն իւր ի Հռոմ՝ և զատաւորաց ոմանց ատորգել խնդրոյն, զոր անդէն փութանակի առաքեաց ի Հռոմ հանդերձ ինչ ինչ պահանջիւք եկամտից: Զայսոսիկ զպահանջս յաւել արքեպիսկոպոսն, որ տրտնջէր՝ թէ զինչ մուծման

Մխիթարեանն՝ նուազունք են յոյժ տուրք ժողովրդեանն, որովք ոչ շատանայ կենցաղավարել։ Նորեհաճ յոյժ գտաւ Ս. Ժողովն ՝Տարածման Հաւատոյ ընդ տեղեկութիւնն ընդ այնոսիկ և խոստացաւ լնուլ զպէտս եկեղեցւոյն, եթէ ոչ ի մեծամեծ նեղութեան՝ շատացեալ չափաւոր թոշակաւ։ Այլ վասն Տ. Կղեմենտեայ՝ (որ մտադէտ էր ամենեւին խնդրոյն) ոչ պատշաճ համարէր Ս. Ժողովն առաքել յայնպիսի հեռաւոր տեղիս զծերունին, որ ի բազում ժամանակաց հետէ վաստակաւոր էր։ Իբրեւ լուան Հայք զայս պատասխանի Ս. Ժողովոյն՝ երկրորդեցին զխնդիր իւրեանց, (ոչ գիտեմ, առ վայելչութեան՝ թէ զօգուտն զմտաւ ածեալ) և զնուիրակն միջնորդ արկին. իսկ արքեպիսկոպոսն առաջարկեաց տուն վասն նորոյ գլխանցն, ասելով՝ թէ անձկանօք մեծաւ ձգան պատանիք Հայոց բազմաց նորա։ Ուստի յայնժամ Ս. Ժողովն զՏ. Կղեմենտոս և յայտ արար նմա զամենայն, սակայն ոչ բացատրեաց զկամս իւր, այլ ապաստան արար ի կամս նորա առնել զինչ և կամեսցի և զոր ինչ ազդեսցէ նմա Աստուած. բայց հարեւանցի ինձ ծանոյց՝ թէ արժան է նմա երթալ անդր և վերահասու լինել՝ զինչ կաթողիկութիւնն իցէ Հայոց Իլվովայ՝ ընդ որ կասկածէր հանապազ Տ. Կղեմենտոս, որ ծանօթն էր Հայոց և գիտէր զբարեբարոյ բարս նոցա։ Ահաւասիկ եմ ես, առաքեցէք զիս անդր, գոչեաց Տ. Կղեմենտոս առաքելական եռանդեամբ և համարձակութեամբ, և յայտ արար՝ զի շնորհք մեծ են նմա յԱստուծոյ և ի Ս. Ժողովոյն, եթէ լիցի նմա մեռանել վասն Հայոց և ի մէջ Հայոց, զորս ի խնամս նորա յանձն արարեալ են Աստուած և Ս. Աթոռն ի բազմաց հետէ, որպէս թուէր նմա։ Ոչ սակաւ զարմացան ընդ այսպիսի արիութիւն հոգւոյն Տ. Կղեմենտեայ, վասն որոյ փութանակի արկին զնա յուղի, տալով նմա օգնական մի վանական և զնա, որ զուրկ էր յարժանեաց ամենեւին, այլ յայն սակս համարեցաւ արժանաւոր գործակից գոլոյ նմա և վկայ վաստակոց նորա՝ զի թերեւս չէր հնար գտանել ի կարճ ժամանակին զայլ ոք յարմարաւոր և զի յայնմ ժամանակի ի փոքր կայր ի վանս Ս Անդրէասի Մոնտէգէկավալլոյ, որոյ վանահայր էր յայնմ ժամանակի Տ. Կղեմենտոս։ Մեկնեալ այսպէս ի Հռովմայ յամի Տեառն 1663 յետ տօնի Ս. Միքայէլի, ձմեռ-

ցաք ի Մինմէն քաղաքի ի Բուսարիոյ, և յ17-ի ամսոյ Ապրիլի 1664 ամի ժամանեցաք ի Վարշաւայ, ուրանօր սիրով մեծաւ ընկալաւ զմեզ նուիրակն Պիգնատելլի և հիւրընկալեաց ի տան իւրում։ Նա Նորին Մեծութիւն Թագաւորին, առ ատրակայութեան արքային՝ հիւրասիրեաց զմեզ սիրով և ասպնջականութեամբ։ Յետ աւուրց փոքուց, առեալ թուղթս ի թագաւորէն և ի նուիրակէն առ արքեպիսկոպոսն և առ ժողովուրդն Հայոց՝ մեկնեցաք ի Վարշաւայ յԼվով, ուր և ժամանեցաք ողորմութեամբն Աստուծոյ անվտանգ յ1-ում աւուր Մայիսի 1664 ամի. այլ յուղւոջ անդր և մանաւանդ ի քաղաքին Զամաստիէ փիրահասու եղաք, հայեցեալ ի փեձակ եկեղեցւոյն և բազ պատմութեան ծխատէր քահանայի քաղաքին Յաժհաննու Պիտաստաուրովիչի՝ թէ կեղծեօք միայն և ի վերին երեսս է Միութիւն Հայոց ընդ եկեղեցւոյն Հռովմայ։

Ըստ անտիրութեան, որով ընկալան Հայք զՏ. Կղեմենտիոս, ծանեաւ առ իւրն՝ թէ յայն մասս թախանձայքն աղաչէին Հայք առաքել զնա՝ զի ջերմեռանդն կաթոլիկք եկեղեցին, համարելով անշուշտ, թէ առ ակալութեան անձին թերեւս ոչ գայցէ նա, կամ զի յայժ փոփոխամիտք են Հայք, եթէ այնպէս փութանակի դարձան ի հերձուածոց իւրեանց։ Իսկ արքեպիսկոպոսն Հայոց բազ ամօթական սիրելութեան իւրում, սիրով ընկալաւ զմեզ և ի նուազս նուագս կոչեաց զմեզ ի սեղանն իւր, այլ մնացօղս սրտի զխոստումն իւր յաղագս ընդկալանին վասն զգլխանացին, (յոր անկեալ անկաւ Սերփիցիոս, որդի քարտուղարին Ա. Ժողովոյն Տարածման Հաւատոյ ի զրուցը պատուիրանս իւր, զոր առեալ էր մեզ), և նա իբրև կութիւն անձնակ մի, յորում անդուոջ և գարդիս ընկեալք ընդ չարեաց սրանց, ընդ քահանայի միում Հայոց, և միում Նաախնայեաց, ընդ զինուորի ումեմն Նեհացւոյ և ընդ սպասաւորին. և ապահապանեց է ընդերութիւնս մեր, զի նեղեմք ի վերայ խաղս, զոր սփանեն բազ ամօթութեան պատճէկ տեղեացս ի վերայ գետնի։ Այլ եթէ յայտնեաց Տ. Կղեմենտիոս զկամս իւր, թէ գտանիցէ անդրէն յՌուսիոյ, եթէ ոչ տացեն նմա ընդ կութիւն պատշաճաւոր՝ առ աւչի կամ վասն հրամանաց Թղթոյն արքայի, հանեն զշորեսին արան ի սենեկէն և

եռուն զայն ի ձեռս մեր, յաւելին և սննեալ մի փոքր հեռաւոր ի պէտս խոհանոցի։

Յայսմ առաջնում սենեկի ձեռն արկաք ուսուցանել պատանիս աշխարհականս մեց կամ եօթն թուով, զորս մարթ եղև մեզ ժողովել։ Թիւ նոցա յաւելաւ ապա մինչև ց16 և անդր։

Առաջինն յաշակերտաց, որ եմուտ ի դպրանոցն և ապա զայլս ոմանս էած՝ էր Զախոմիչն, զոր ի վերոյ անդր յիշատակեցաք ի նկարագրին մեր զ վիճակ քահանայից Հայոց Ելփոխայ։

Զախոմիչ ուսեալ էր առ տէր Հ. Յովսէփեանց, որպէս ասենն և հասեալ մինչև ցարուեստ քերթողական *), վասն որոյ ի դպրանոցի մերում սկսաւ ուսանել զճարտասանութիւն և զլեզու Լատինացւոց ընդ միւս աշակերտսն, յորոց կարգի էին կղերիկոսք երեք Հայոց, որք իրօք սպասաւոր էին յեկեղեցւոջ. և են, Մարտէոս, որ ձեռնադրեալ է այժմ քահանայ, որպէս ասացաւ ի վերոյ. եթող սա զբարձրագոյն ուսմանսն, ի խորս անկեալ այլոց ուրումն, որպէս պատմեն, որ փանեցաւ յեկեղեցւոյն և կեայ այժմ իբրև աշխարհական շրջմոլիկ, իսկ այս Մարտէոս թէպէտ և նուիրէր համապատ զանձն յուսմունս՝ այլ այնչափ սակաւ յաջողէր յայնոսիկ՝ զի ընկերք նորա ամենեքեան ուսեալք են և հմուտ աստուածաբանք, խօսին համարձակ ի լեզու Հայոց և Լատինացւոց, այլ ինքն սակաւիկ մի գիտէ լատիներէն և համարի յանձին, թէ և ի քերթողութիւն իսկ իցէ թերակատար։ Միւսն յեռ ամաց ինչ զկնի գալստեան մերոյ՝ սպանաւ դիպուածով ի հարուածոյ հրացանի, յորժամ ի պատահանէ անտի հայէր ի կոխ հրէից ընդ քրիստոնեայս, որոց սպանեալ էր հրեայս ոմանս յերկուս կռիւս։ Էր և այլ ոմն դպիր եկեղեցւոյն Հայոց որ անուանեալ կոչէր Յովհաննէս Նաւանոյիչ, ծննդեամբ ի քաղաքէն Կամենեցի, պատանի լի շնորհօք, (զարդիս դպիրք չորք և եթ են

---

*) Իսկ մինչև ցդասարանն Դ։ Յայնմ ժամանակի դասարանք հինգ էին յուսումնարանս Լեհացւոց. յորոց երեքն առաջինք կոչէին քերականութեան, չորրորդն՝ քերթողութեան և հինգերորդն՝ ճարտասանութեան։ Թարգմ։

ի մայր եկեղեցւոջն Հայոց, զգեցեալ ըստ տարազու աշխարհականաց և ադէտք գլխովին), այլ չեղև մեզ հնար յարել զնա ի մեզ. քանզի աղքատ էր պատանին և պահէր զնա առ ինքն և պահէ մինչև ցայսօր քահանայն Ըրոսկի, որ ասաց, թէ լաւ իցէ նմա երկան իշոյ կախել զպարանոցէ և անկանել ի ծով, քան թողուլ զնա ուսանել առ ասա հայրն. այլ Հայք ոչ այնպէս փառաւոր համարէին զայս, որպէս զի թողեալ զմեզ, որ ծանօթքս եմք ուսմանց կարևորաց վասն նոցա՝ առաքեցին զորդիս իւրեանց այլուր վասն ուսման. մանաւանդ զի և Ա. Ժողովոյն իսկ յայտնի է, որպէս երևի ի յիշատակեալ պատուիրանացն՝ զի որ ոք այլուր ուսանի, կամ յաճախակի մերժի ի բաց կայ ի հաւատոց իւրոց (Հայաստանեայց եկեղեցւոյ), կամ մնայ ի մոլորութիւնս հայրենակցաց իւրոց, այլ ոչինչ օգտակար գոլով ժողովրդեան իւրում:

Յայսմ եկեղեցւոջ (Հայոց), թող զբազում մոլորութիւնս և հերետիկոսութիւնս արևելեայց, (բաց ի զոհարկութենէ կենդանեաց և այլոց ինչ ինչ չար կիրառութեանց) տեսաք՝ զի բազում էին սեղանք և ծածուկ պատարագք, (զի ի Հայս զմի միայն զծածուկ պատարագն մատուցանեն հասարակօրէն), և արկանէին ի կիր արձանս քանդակեալս առ խորանաւ Ա. Ընծայիցն և առ սեղանովն, և այլ ևս իրս, ոչ արժանաւորս գովութեանց: Համոզէիր լինէաք առ արքեպիսկոպոսն՝ զի մուծցէ ուղղութիւնս ինչ յեկեղեցիս, ընդ որ հաճեցաւ նա ի սկըզբան անդ, բայց յետոյ և ոչ պատասխանւոյ իսկ արժանի զիս արար, զի մի սատանդանիցէ ուխտին իւրում ընդ կաթողիկոսին, կամ երկուցեալ՝ թէ գուցէ միաբանեսցին ընդ մեզ ժողովուրդն ընդդէմ նորա, յորժամ ծանիցեն՝ թէ բարեհաճ է ընդ մեզ արքեպիսկոպոսն և թէ ինքն միջնորդեաց, զի տացի մեզ նորա այս բնակութիւն, յորում եմքս. (յայսմ սենեկի բնակէին յառաջագոյն. զանազան մարդիկ, և շուրջ պատեալ էր շեղջ շեղջ աղբևսօք և քակոտուս ձիոց և արջառոց. յայսպիսի փաոթար վիճակի յանձն արարին մեզ զսենեակն վասն բնակութեան): Խոստացաւ իսկ արքեպիսկոպոսն՝ զի յարդարեսցէ և մաքրեսցէ զսենեակն և կազմեսցէ յայնմ սենեակս երիս փոքունս, յարմարութիւնս ինչ յաւելով ի ներքս ծախիւք Հայոց, զոր և արար

զկնի սուղ ինչ ժամանակի։ Նա հրաշս ինչ համարիցաք մեք զայս, զոր ոչ երբէք ակնկալէաք։ Եւ այս եղև շնորհ առաջին և վերջին ի Հայոց առ մեզ, յորոց բազումք ցանկան յոյժ ի սրտէ՝ զի հնազանդեսցուք և լիցուք ի նոյանէ, քան որչափ եմքս։ Որ ուրեմն հաճեցաւ արքեպիսկոպոսն հրամայեաց՝ զի զանուն Ս. Հօրն յիշատակեսցեն նախ քան զանուն Ս. Կաթողիկոսին, և այս եղև ի 21-րդի աւուր Սեպտեմբեր ամսոյ 1664 ամի, յաւուր տօնի Ս. առաքելոյն Մատթէոսի, իսկ ըստ տոմարին Հայոց ի տօնի Վերացման Ս. Խաչին։

Թող զքահանայսն Եւդոկիոյ յիշատակելոյ ի վերոյ՝ էր աստ և եպիսկոպոս ոմն յարևելից Նատանիոս անուն՝ փոխանորդ Եւդոկիոյ, այր պարզամիտ, որ մեռաւ յետ սուղ ինչ ժամանակի զկնի գալստեան մերոյ։ Աշխատ յոյժ եղաք առ ի սրբելոյ զարքեպիսկոպոսն յօծանելոյ զմարմին նորա, որպէս սովորութիւն է հերետիկոսաց Հայոց։ Այլ սակս՝ թէ ի հնձուկս ջանից մերոց կատարեաց քահանայն Երասխի ի ծածուկ զօծումն մարմնոյ նորա. այս Աստուծոյ և եթ է գիտելի։ Էր և քահանայն Յակոբ Գորիկայ, որ նոյնպէս վախճանեցաւ ի սուղ ժամանակի, զորմէ ի նկերոյ լեցի ինձ պատմել։ Յովսէփ քահանայ, ծննդեամբ ի Գարսիատանէ, խաբեբայ յոյժ և խորամանկ, որ ի սկզբան անդ աշխատէր էր զպլանօզի Օուալման Հռոմայ, ուրանօք ընդ փախանօք կեցցէ վասն վատթար բարոյիցն. ուսուց սակս առ Հ. Կղեմենտեայ կարի քաջ զգիրսն լեզուի Հայոց և զաստուածաբանութիւն բարոյական, և փոխանակ այսր ամենայնի ընկալաւ զպաշտօն քահանայութեան Հայոց ի քաղաքին Սանտիպաւլոյ, զորմէ միջնորդեցաք մեք առ տէր քաղաքին, որ զօրավար Կինմի է զարդիս Հռուսկ ուրեմն, զկնի բազում խռովութեանց վանեցաւ ի Կարշաւէ և գնաց ընդ արքունի գնդապետին առ Գրանն Օմաննեանց, Տ. Նոյիմոֆսկեայ՝ յաշխարհն ռուսի էր կին նորա։

Յակոբ քահանայ Վալաքի, որ կամի գնալ ի Կ. Պոլիս յայն սակս՝ զի ձաղկեցաւ և ի բանտ արկաւ հրամանաւ արքեպիսկոպոսին վասն հանապազօր արբեցութեանն։ Լաւ՝ թէ ի մահմեդականութիւն դարձեալ իցէ զարդիս։ Գրիգոր քահանայ, խաբեբայ և արբեցող, որ մինչ պատանին էր, եկն ի Հռոմ

և ուսայ առ Տ. Սիմէոնեայ և այս ի դպրանոցի Ս. Ժո-ղովոյն, այլ իբրև արտաքս անտի ընկեցաւ՝ ոչ գիտեմ որպի-սի եղանակաւ՝ զանխուլ ի Ս. Ժողովոյն ընկալաւ Թուղթս յանձ-նարարութեան առ պատրիարքն Խաչատուր, որ նոյնպէս աշա-կերտ էր Տ. Սիմէոնեայ, այլ խորհրդոյ որպէս և այլքն, և գնա-ցեալ առ նա՝ ձեռնադրեցաւ քահանայ և վարդապետ, եկն ապա այսր, զի մաքրեցուսցէ զժողովուրդն, այլ առեալ ինչ յետոյ զինի մեծամեծ ուղղութեանցն յեկեղեցիս՝ մեկնեցաւ յԷլ վաղվաղ և չո-գաւ ի Զամոստիէ, ուրանօր քահանայն բարի Յովհաննէս ծա-նեաւ զգայլն և ապաստանելոց բանսի ձեռնեաց զնա մեկնել ի քաղա-քէն: Չոգաւ նա յայնժամ ի Վարշաւայ, ուրանօր Տէրք զեկու-ցոյն ես ի խարս անկանին, քանզի չէն ընդ մերով տեսչութեամբ, ընծայեցոյց անդ զանձն կաթոլիկ ջերմեռանդն և ընկալեալ ի Արքայն նուիրակէն Պիգնատելեայ և թերևս յայլոց Թուղ-թըս յանձնարարութեան ի Հռոմ՝ չոգաւ անդր վաղվաղակի Այլ ոչ բարւոք ընկալան զնա անդ, զի թերևս լուեալ նուիրա-կէն, որպիսի ոք է անձն՝ գրեաց ի Հռոմ Թուղթս ի հա-կառակ միտս: Փոքր մի ևս՝ և ունէին զնա և արկանէին ի Լիվորնոյ ի բանտ, այլ հնարիւք իմն մազապուր ճողոպրեցաւ: Իբրև բազումք յարանցդ յիշատակելոց ի վերին երեսս ի կողմն մեր դառնայցին՝ զամենայն ջան ի գործ արկաք ընդ յիշատա-կեալն քահանային Գրիգորի, հաստատեալ միաբանելոյ ընդ Ս. Եկեղեցւոյն՝ զի ձեռն արկցէ արքեպիսկոպոսն յուղղութիւնս եկեղեցեաց: Այլ իբրև ծանեաք՝ թէ յամբարար յոյժ յառաջէ գործն և ոչ համախոհք են մեզ Տեարք ի գործ բարեփոխու-թեանցն, որպէս երևեցուցանէին զանձինս՝ խորհեցաք թէ վասն ածելոյ զարքեպիսկոպոսն զերագոյն ևս ի հաւանութիւն՝ հարկ էր մեզ վարել ի ձեռն Յակոբեայ քահանային, որ կա-թոլիկ էր կատարեալ և ձեռնադրեալ ի Հռոմ քաղաքի յեպիս-կոպոսէն Նորգանիոյ, Յովհաննէ Միրետովիչէ: Այն այս քա-հանայ ժամանեաց յԼվով յառաջ քան զմեզ և արքեպիսկո-պոսն ոչ ետ նմա թոյլ՝ զի, որպէս կամէրն՝ մատուսցէ պատա-րագ ըստ արարողութեան Լատինացւոց, խառնելով ջուր ի բաժակն, այլ ընդհակառակն սորին՝ ի հալածանս եարկ հանա-

պատ վասն յարկելոյ իւրոյ ի հաւատս կաթողիկաց։ Վասն որոյ խնդրեցաք յարքեպիսկոպոսէն՝ զի տացէ նմա թոյլ երթալ ի Վարշաւայ կամ ի Հռովմ կամ այլուր, ուր մարթ իցէ նմա համարձակ պաշտել զկաթողիկէ հաւատս իւր, ցուցեալ այնպէս՝ թէ տուեալ իցէ մեր պատուէր քահանային ի ծածուկ՝ զի յայտ արասցէ արքային և Ս. Ժողովոյն զոր ինչ կրեացն։ Ողորմութեամբն Աստուծոյ յաջողեցաւ մեզ խորամանկութիւն մեր բարեպաշտօն, քանզի արքեպիսկոպոսն, որ կարի երկնչէր յարքունեաց՝ ակամայ կամօք ետ ուրեմն թոյլ եւ մատուցանել պատարագ ըստ արարողութեան կաթողիկեաց. և այս եղև յ18-րդի աւուր Օգոստոսի 1664 ամին։

Ապա ուրեմն ամք երկու եղեն, որ ըստ արարողութեան Լատինացւոց զպատարագն մատուցանէին յեկեղեցիս Հայոց, խնա ինքն արքեպիսկոպոսն և Յակոբն Գրիգորեան, այլ զի՞նչ էին երկուք սոքա առ մնացելովքն, զորս ոչ ունէաք։ Յաւելաք մեք զճիգն և զջանս՝ զի ի կէտ նպատակիս մերոյ հասանիցեմք. այլ յընդունայն եղեն այն ամենայն, քանզի յամառեալ պնդեալ կայր արքեպիսկոպոսն ի բանի իւրում, քանզի տեսանէր՝ թէ ահաձեալ սարսեաւ ինմանէ ժողովուրդն ի ժամանակին՝ յորմէ հետէ ետ թոյլատուութիւն Յակոբայ քահանային։ Էր ի ժողովրդեանն յայնմիկ այր ոմն բարի, Վալար Արմէնովսկի անուն, որ ամօք ինչ յառաջ ընկալեալ էր զպատիւ ազնուականութեան Լեհացւոց, և զի շրջեալ էր յաշխարհս աշխարհս՝ գիտէր լեզուս 78, այլ կայր էր ի բազում ամաց հետէ, թէպէտ և նիւթին մարդն յուսացեալ էր կենսատու լուսոյն Ս. Հաւատոյ։ Նախանձախնդիր էր փառացն Աստուծոյ և դարձուցանելոյ զհայրենակիցս իւր ի ճշմարտութիւն կաթողիկէութեան, որոց և քարոզէր հանապազ և յեկեղեցիս հայեցուցանէր ոչ միայն բանիւ լոկով, այլև բազում օրինակօք բարի բարի գործոց, աղօթից, պահոց, արհամարհելով զկեանս, գնալով յեկեղեցի յամենայն պաշտամունս՝ և այլովք։ Ի բազում կրս օձոյն եղև այն տարբերութեան մերում, զի ի Հռովմ և ի Կ. Պոլիս ծանուցեալ էր զՀ. Կղեմէնտիոս, վասն որոյ և կարի ուրախացեալ ընդ գալուստ մեր՝ յայցելութիւն մեր գայր, և զայս ինչ ի կարևորացն տեղեկացոյց մեզ՝ զի համարձակեսցուք ի գործ Մի-

ութեան առ արքեպիսկոպոսին և առ ժողովրդեանն, քանզի ոչ որ լեցի որ բառ ձեռս մեր եղէ, ոչ արքեպիսկոպոսն, որ դաւանեաց զամ մի զհաւատս կաթոլիկաց և երդուաւ, և ոչ ժողովուրդն՝ որ ընկալաւ արդէն արտօնութիւնս բազումս փոխանակ պատիր միութեանն։ Այս խորհուրդ շահաւոր եղև մեզ բառ կարի, որով յուսացաք, թէ հասանիցեմք ուրեմն ի կէտ նպատակի մերոյ։ Օգնութեամբ Աստուծոյ յաւելաք և ևս ազդել յարքեպիսկոպոսն և յայլս, զի ի գլուխ ածցէ զգործըն սկսեալ, արմատախիլ հանցէ յեկեղեցեացն զբազում հերձուածողութիւնս և զմոլորութիւնս, որ յայտնապէս հակառակ են ոգւոյ միութեան Եկեղեցւոյ, և եթէ ոչ հաւանեսցի՝ հարկեմք արդեօք զեկուցանել արքայական Մեծութեանն՝ թէ կեղծեալ է Միութիւնն։ Առ այս յայտարարութիւն մեր, որ դժգոհի էր միշտ արքեպիսկոպոսին՝ տրտնջել կալաւ նա զժողովրդեանն, թէ չև ևս է պատրաստեալ յայնպիսի փոփոխմունս դժուարինս և թէ լաւ ևս էր մնալ առ ժամանակ մի և այն ունել բարեպատեհ ժամու։ Դիմեցաք անդէն առ ժողովուրդն, իսկ նորա առ արքեպիսկոպոսն ակնարկէին, ոչ կամելով ձեռնամուխ լինել յայն գործ,—կամ յայտնապէս հակառակիլ, առ աչի արքային կամ յայտնապէս բարեհաճ գոլ, առ աչի նզովից կաթողիկոսին։

Առ ժամանակ մի յերկարեցաւ խայն, մինչև փորձահաս եղաք՝ թէ խոչընդոտն ամենայն գործոց և կամաց մերոց է նոյն ինքն քահանայն Երոսկի (զորմէ ի վերոյ յիշատակեցաք), զակատեալ խափանել ի հերետիկոսութեան, որ ընդ բանիւ իւրով ունէր զարքեպիսկոպոսն և զժողովուրդն, վասն որոյ և աշխատ եղաք՝ զի հալածեսցի յաշխարհէն, որ և եղև յ7-րդի աւուր Նոյեմբերի նորին 1664 ամի բառ միջնորդութեան արքեպիսկոպոսին Լատինացւոց և Նախանգամին Պեասկովսկեայ, (աւագ սարկաւագի զորդիս), որք մեծաւ եռանդեամբ աշխատ եղեն վասն այսր գործոյ։

Յետ փախստեան Երոսկեայ, որ մինչև գրգռեաց զ—այս ընդդէմ մեր, զի անդէն հանին զորդիս իւրեանց ի դպրանոցէ մերմէ՝ ըստ ամենեցուն և որ կարի յամառքն իսկ էին՝ յաղագս փախստեան նորա և թղթոյն, զոր գրեաց մեզ վասն այսր պատ-

ճառի հանգուցեալն ի Տէր Թագուհին Մարիամ Լուդովիկէ, և առ սակաւ սակաւ յաւելան հարկս յարգանաց մեզ հարկանել: Հուսկ ուրեմն գաւառոյքն Հայոց միահամուռ չոգան առ արքեպիսկոպոսն և յայտ արարին՝ թէ չեն ինչ նոքա հակառակ ուղղութեանցն, զորս մուծցէ ի պէտս բարեկարգութեան եկեղեցւոյ, զի յայն իսկ հոգւով կարգեալ է նա, ուստի և արասցէ՝ որպէս և զինչ ազդիցէ նմա Աստուած: Զայս ասացին գաւառոյքն կամ կարծելով՝ թէ չէ մարթ արքեպիսկոպոսին առնել զայն վասն ուխտին իւրոյ ընդ կաթողիկոսին, կամ յայն դրդեցան յարանց երկուց երևելեաց, ի Զախնովիչէ և ի Կապբովսկեայ, յորոց առաջինն գլխաւոր է նոցա և ի պատուի է առ ամենեսեան, իսկ երկրորդն, որ վարէ զպաշտօն քարտուղարին Հայոց՝ է ծերունի ամաց 86-ից, այլ առոյգ է և բարի և գիտուն յոյժ, որ ի լեզու Լեհացւոց թարգմանեաց ի Հայ և ի Լատին լեզուաց հատորս երիս երկոց Հ. Կղեմենտեայ յաղագս Միաբանութեան եկեղեցւոյն Հայոց ընդ Հռովմէականին. երկոքեան կաթոլիկք են ջերմեռանդն և պաշտպանք առաքելութեան: Արքեպիսկոպոսն, որ յանձինս կրթեցաւ ընդ այսպիսի յայտարարութիւն համարձակ՝ կշտամբանօք ասաց ցնոսա և զայս ինչ, թէ որովհետև կամին նոքա հաւանեցուցանել զնա, զի միաբանեսցի ընդ Հռոմայ՝ լսէ ինքն խոհական բանից նոցա և առնէ միանգամայն զայն, ամենայն՝ զոր պահանջեն ի նմանէ, իսկ ապա և այլ բազում ինչ յաւելուցու: Կամէին ոմանք զմիտս հաճել նորա, բայց անհնարին եղև այն: Այսպէս ուրեմն հաւանեցաւ արքեպիսկոպոսն, այլ եղ անդէն ի մտի իւրում՝ զի մի ամենևին հասուցէ զինքն յայնպիսի անարգութիւն: Եւ այս երկպառակութիւն բարեյաջող, որ պատճառք եղև ճշմարիտ Միութեանն՝ ծագեցաւ ի 25-րդի աւուր Դեկտեմբերի 1664 ամի, յաւուր Ծննդեան Յիսուսի Քրիստոսի:

Ի միւսում ամին, որ էր 1665՝ ի 5-ն Յունվարի ուր ուրեմն հրամայեաց արքեպիսկոպոսն համօրէն քահանայից Հայոց մայր եկեղեցւոյն՝ զի ի մատուցանելն զպատարագն խառնեսցեն զջուր ի բաժակն, որ դժուարին էր քան զամենայն ուղղութիւնսն: Յուզեցան խռովեցան ժողովուրդն առհասարակ և քահանայք, յորոց ոմանք հնազանդեցան, իսկ այլք տեղի

տալով ի հրամանէն՝ զազարեցին ամենեքին մատուցանել պատարագ. իսկ յորժամ ըստ միջնորդութեան մերոյ կրկնեաց անդրէն արքեպիսկոպոսն գրով զհրամանն առ մի մի նոցանէ արանալիք ընծայրանաց՝ յայնժամ ապա հարկեցան ամենքեան մատուցանել պատարագ ըստ արարողութեան Լատինացւոց։ Ի 24-րդի աւուր Փետրուարի, որ ըստ տոմարին Հայոց է տօն Ընծայման Քրիստոսի ի տաճարն՝ ձեռնադրեցան դպիրք երեք ի սորին աստիճանս կարգի, և զայն առաջինն խոստովանեցան հրապարակաւ զդաւանութիւն կաթոլիկաց, և անուանք նոցա են. Գաբրիէլ Զախնովեչ, Աստուածատուր Նեքսևովեչ, (որ ձեռնադրեալ է զարդիս ի քահանայութիւն) և Քրիստափոր Գաբրիէլովեչ, որ ի դպրանոցի մերում է այժմ։

Յ18-րդի աւուր Մարտի առաքեցաւ ծխական քահանայն կաթոլիկ Յովսէփ, որ անուանեալ կոչէր Սրեպցի՝ յեկեղեցին Հայոց ի Ստանիսլաւով, այլ չեղև նմա հնար մուծանել զուղղութիւնն։ Յաւուր 19-րդի կամ 20-րդի յղեաց արքեպիսկոպոսն թուղթ առ Յովհաննէս Քրիստոստուրովեչ, ծխական քահանայ եկեղեցւոյն Հայոց ի Զամոստէ, յաղագս հարկաւոր ուղղութեանցն և հնազանդեցաւ քահանայն հրամանին, թէպէտ և արանջէին զայնմանէ ժողովուրդն, և մանաւանդ հակառակեցաւ կարի կրօնաւորն Հայոց ի Զամոստէ, Աբիքոն (զորմէ ի վերոյ յիշատակեցաք ի թուղթն մեր զեկեղեցւոյ Հայոց ի Լեհաստանի), որ այնչափ ջերմեռանդն էր, զի յաւուր յորում զուղղութիւնն արարին՝ ի մտանելն միոջ եկեղեցւոյ զայս ինչ նշանակեաց. «Մեռաւ այսօր հերետիկոսութիւն յեկեղեցին Հայոց Զամոստոյ»։

Յաւուր 21-րդի Մարտի ի տօնի Ս. Գրիգորի Լուսաւորչին ըստ տոմարին Հայոց՝ ուղղադարձեցաւ երգն Ներովբէական, զոր յառաջագոյն երգէին Հայք հանդերձ յաւելուածովն հերետիկոսապետին Պետրոսի Փուլլոնի, այսպէս. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ. զայս երգէին ի դէմս Ս. Երրորդութեան և այսու ընդ հերետիկոսապետին դաւանէին զԵրրորդութիւնն խաչեալ։ Մինչև ցայս վայր ժամանակի ոչ հրամայեաց արքեպիսկոպոսն յապաւել զայն յաւելուած և երգել զայն պարզաբար, որպէս և

ընդհանրական Եկեղեցին, այլ ուղղագրեաց զկրգն ըստ կանոնաց կաթողիկէ ժողովոցն Հայոց Ատանայի և Սսոյ *), յորս սահմանեցաւ միութիւն ընդ Եկեղեցւոյն կաթոլիկաց, բառ որոց յաւել ի միջի զանուն Քրիստոսի, այսու օրինակաւ. «Սուրբ Աստուած, Սուրբ Քրիստոս, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»: Ի նմին աւուր ուղղագրեցան և երգք ինչ ի պատարագին, յորոց մին սկսանի այսպէս, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, Որ Էնն Աստուած աստ բազմեցաւ», և միւսն՝ «Մարմին տէրունական և արիւն փրկչական», զորս երգէին նախ քան զսրբագործութիւն ընծայիցն, զի մոլորեալք համարէին՝ թէ ի ժամանակի հասարակ աղօթից քահանային սկսանին փոխիլ հացն և գինին ի մարմին և յարիւն Քրիստոսի, և թէ զամ քան զզամ սրբագործի ընծայն, ի սկզբանէ պատարագին մինչև ցվերջն, հանգոյն որպէս պնդէին հերետիկոսք ոմանք Հայոց և բազում այն՝ թէ ի ձև աղօթիցն կախեալ կայ սրբագործութիւնն:

Ուղղեցաւ և ի Հանգանակի հաւատոյ տեղին, որ ասէ. «Հաւատամք ի սոյն կաթողիկէ եկեղեցի», յապաւելով զբանն «ի սոյն», որ բաժանէր իմն զմիութիւն կաթողիկէ եկեղեցւոյ:

Ի նմին ամին 1665, յերկրորդի աւուր Ապրիլի՝ ուղղագրեցան ի Մաշտոցին Հայոց մոլորութիւնք 30, յօրհնութիւնս ջրոյ և ձիթոյ և ոտնլուային ի տօնի աւագ Հինգշաբաթու, զոր բազումք խորհուրդ առանձինն համարէին նորոյ կտակարանի:

Ի չորրորդի աւուր նորին ամսեանն հրամայեաց արքեպիսկոպոսն՝ զի յաւուր աւագ Շաբաթու մի միայն պատարագ կատարեսցի ըստ սովորութեան կաթոլիկ եկեղեցւոյ: Իսկ ի չորեքտասաներորդի աւուր հրապարակաւ յեկեղեցւոջն եղև հրաման ժողովրդեանն՝ զի մի կրկնեսցեն ծունր ի ժամ ընծայաբերութեանն, յորժամ չև ևս սրբագործեալ են ընծայքն, իսկ քահանայիցն՝ զի մի նոքօք զժողովուրդն օրհնեսցեն, որպէս առնէին յառաջագոյն, որով մոլորեցուցանէին զժողովուրդն՝ թէ սկսեալ իցէ արդէն սրբագործութիւնն:

---

*) Ի բնագրի անդ է Եղիզենի (elizeńskiego), որ վրիպակ է անշուշտ փոխանակ Սսոյ (sizeńskiego): Թարգմ.

Սկսաք այսպէս առ սակաւ սակաւ ուղղագրել բառ կարգի—որպէս և առնեմք իսկ մինչև ցայսօր, թէպէտ և չեն մեր ակնկալութիւնք առաւելոյ զայն առանց հայերէն տպարանի—զանխլի մոլորութիւնսն, զհերետիկոսութիւնս, և զաստուածանարգութիւնս, զորս զուռնեն հետևողք վարդապետութեան երկուց բնութեանց ի Քրիստոս, որ ասեն Եւտիքեանք և Նեստորականք՝ ընդդէմ Լևոնի Մեծի և Ս. Փլաբիանոսի, Ս. Պուղխերիայ և Ս. Ժողովոյն Քաղկեդոնի, և զայլ ևս մոլորութիւնս բազում, որ նման են յիշատակեալ մոլորութեանցդ, որովք լի և զեղեալ են մատեանք նոցա, թողում զայլ անմտաւոր պատմութիւնս, զվէպսն անհեթեթս և զառասպելսն, որ մանաւանդ առաւելեալ են ի Ճառանց Վարդան, որ առ նոսա կոչին Յայսմաւուրք: Այս մատեան հոծ է յոյժ իբրև Կալեպինք *) երկու իմիասին. վասն որոյ և դժուարին է ուղղագրութիւնն. հարկ լիցի անշուշտ նորոգել զամենայն միահամուռ:

Ի նմին ամսեանն, որ օր 12-րդ էր՝ բառ պահանջելոյ մերում մերժեցին արտաքս ընկեցին յեկեղեցւոյ զգալին Յովհաննէս Սարանոֆեչ, որ անեալ էր ի տան քահանային Սրակեայ, զորմէ և բանք եղեն ի վերոյ, թէ չեղև մեզ հնար ոչ յորդորանօք և ոչ սպառնալեօք հաւանեցուցանել՝ զի մնասցէ յուսումն ի դպրանոցս մեր, որպէս ընկերակիցք նորա զայլքն. քանզի ոչ կամէր փարել ընդ առաջնորդութեամբ ուրուք. այլ զղջացաւ վաղվաղակի ի վերայ մոլորութեան իւրոյ և եկն խնդրել թողութիւն: Ընկալաւ զարձեալ յեկեղեցին և առաւ եմուտ ի դպրատունն ի 24-րդի աւուր նորին ամսեանն, և յայնմհետէ բարւոք ունի զինքն. է պատանի համեստ և հնազանդ, գեղեցիկ դիմօք և բարի վարուք և յառաջէր արդեօք յոյժ ի յաջողութեան, եթէ չէր անկեալ դիւրաւ ի խորս այլոց, որպէս ի վերայ պատմեցաւ:

Իբրև ծանեայց մեզ քահանայն Զամատեայ, Յովհաննէս Քրիստոստուրովեչ, չարամիտ ընթացից յիշատակեալն հեր-

*) Է բառագիրք ընդարձակ այլ և այլ լեզուաց. կոչեցեալ այսպէս յանուն հեղինակին. Ամբրոսեայ de Calepio. Թարգմ.

ձուածողի և կեղծաւորի, կրօնաւորին Հայոց Սիմէոնի՝ հրամայեցաք անդէն ի ձեռն արքեպիսկոպոսին՝ զի եկեսցէ այժմ։ Եւ այն ինչ ժամանեաց այսր առ մեզ՝ կատարեաց անդէն զպաշտամունս եկեղեցւոյ ըստ արարողութեան կաթոլիկաց, զոր չառնոյր յանձն ամենևին մինչ էրն ի Զամոստիէ։ Հնարեցաւ առ ժամանակ մի պատրել զմեզ, այլ ուր ուրեմն ծանեաք զնա։ Ժամանեաց նա այսր յ3-րդի աւուր Մայիսի 1665 ամի։

Էր յայսմ ժամանակի յԼվով քաղաքի պատանի ոմն Հայ, բնիկ Լվովայ, Գրիգորիոս Բարսամ անուն, մանուկ ի կարգ աշխարհի, որ թէպէտ գիտէր կարի զլեզուս Տաճկաց, Լատինացւոց և զզրոցն Հայոց՝ այլ անյօդդոդ խարխափեալ ի հաւատս հարց իւրոց՝ ոչ մտանէր ամենևին ընդ մեզ ի հաղորդութիւն, մինչև դէպ եղև նմա յաւուր միում գալ պատահարար առ մեզ յաղագս գործոյ, որ հայէր ի Հ. Գալանոս և յընթերցուածս երկոց նորա. (այսպէս սահմանեաց Նախաւած վասն բարեաց առաքելութեանս մերոյ)։ Եւ այնչափ պատրաստական գտաւ յընդունել զճշմարտութիւն քրիստոնէական հաւատոյ՝ զի ի սուղ ժամանակի եղև հնազանդ և պաշտպան և ջերմեռանդն քարոզիչ Ս. Հաւատոյն ի ժողովրդեանն. վասն որոյ և զոհանայր զՆախաւծոյ. և իբրև համոզեաց ապա զնա Հ. Կղեմէնտիոս զի քահանայացի՝ սիրով ընկալաւ զայն առաջարկութիւն. իսկ կին նորա ոչ հաճէր ընդ այս, որ և յետ բազում աղերս և աղաչանաց՝ ուր ուրեմն հաւանեցաւ, քանզի զղջէին զնա ընդդիմանալ խորհրդոյ առն իւրոյ ժողովուրդն, որ ոչ կամէին զձեռնադրութիւն առնն, որ վառեալ էր այնպէս հոգւով կաթոլիկութեան և ուրացող իսկ յամենից յորջորջէր։ Նոյն արքեպիսկոպոսն, որ ի ժամանակաց անտի վերջնոյ ուղղութեանն յաջողէր մեզ յամենայնի վասն ամի ամի թոշակին 200 դահեկանաց՝ զոր տայքէր նմա Ս. Ժողովն յորէ անտի ժամանելոյ մերոյ ի Լեհաստան՝ կոչեաց առ ինքն զկինն Գրիգորի Բարսամի յաւուր 23-րդի Մայիսի 1665 ամին, առ ժամանակ մի յորդորէր զնա և իբրև լուաւ զհաւանութիւն կնոջն՝ եած անդրէն զայրն նորա յեկեղեցի և մինչև լու եղեալ զայսմանէ ժողովրդեանն՝ ձեռնադրեաց զնա ի

չորս խոնարհագոյն աստիճանս կարգի, զկնի դաւանելոյ նորա հրապարակաւ զհաւատս կաթոլիկաց, և ընդ նմա զերկուս ևս այս, որ զնոյն դաւանութիւն խոստովանեցան, զՍիմէոն Ռուստովսկի և զԳաբրիէլ Միրովիչ, որ ի դպրանոցի են զարգել։ Վասն ձեռնադրութեանս այսորիկ բարկացան յոյժ դասաւորքն, որ պնդէին՝ թէ չեն արքեպիսկոպոսին իրաւունք ձեռնադրել զոք առանց թոյլտուութեան նոցա, թող թէ զանխուլ ի նոցանէ, վասն որոյ յարեան ամենեքեան և եկին առ նա, զի յայտ արասցեն զտրտունջ իւրեանց, այլ ընկալեալ զարժանին պատասխանի՝ հարկեցան հնազանդել հաւանութեամբ։

Ի 14-րդի աւուր Յունիսի նորին ամի ի տօնի եկն Ս. Գրիգորի ի վիրապէն և ի 22-րդի աւուր նորին ամսեանն՝ ի տօնի գիւտի նշխարաց Ս. Գրիգորի՝ յիշատակեալն կրօնաւոր ի Զամոստեայ Սիմէոն քարոզեաց յեկեղեցւոջ ըստ ոգւոյ կաթոլիկութեան (դէթ ըստ արտաքին ձևոյն), վասն որոյ ըստ թախանձագին խնդրանաց ժողովրդեանն ի նմին իսկ աւուր կարգեցաւ առաջ երէց եկեղեցւոյն Հայոց յարուարձանի Իլվովայ, վանական կոչեցեալ։ Այլ զկնի չորից աւուրց՝ ի թախիծ և ի տրամութիւն ամենեցուն՝ կոչեցաւ անդրէն յետս ի քաղաքըն, յայն դուցէ սակս, զի ոչ հաճոյ երևեցաւ յաչս արքեպիսկոպոսին խանել զնա ժողովրդեանն յեկեղեցի անդր վանական, քամահեալ զմայր եկեղեցեաւն, կամ վասն այլոց ինչ պատճառաց։

Զայսու ժամանակաւ կամ սակաւ մի յառաջ, որպէս կարծեմ՝ յաւուր միոջ կիւրակէի, յորժամ վասն գործոց ինչ մեկնեալ էր արքեպիսկոպոսն ի քաղաքէն վասն երկուց կամ երից աւուրց՝ քարոզեաց ի մայր եկեղեցւոջն քահանայն Հայ, որ ջատագովել թերևս կամէր զծէսս իւրեանց, (այլ հաւանիմ թէ առ ազնուութեան իւրոյ)՝ ասաց այսպիսի ինչ, թէ մի յաճախեսցեն Հայք յեկեղեցիս Լատինացւոց, զի լաւագոյն է երթալ ի բնիկ եկեղեցիս իւրեանց, զի օրհնութիւնք նոցա ոչ իմիք ազդեն։ Յարեաւ խռովութիւն վասն անձնհաւոր բանիցս այսոցիկ։ Եւ իբրև դարձաւ արքեպիսկոպոսն Հայոց յԻլվով, բողոքեաց անդէն առ նա արքեպիսկոպոսն Լատինացւոց զքահանայէն։ Այլ զկնի սուղ ժամանակաց հիւան-

դասու քահանայն և յետ հիւանդութեան ծանու, որ ամիս ինչ ձգեցաւ՝ մեռաւ թշուառաբար, ոչինչ ցուցեալ նշան կաթոլիկութեանն իւրոյ և ոչ առեալ պաշար վասն ուղւոյն յանվախճան կենացն. եթող որդիս, որ կաթոլիկք եղեն և յարեալ են յառաքելութիւնս մեր։

Իբրև ծանեաք, թէ ուղղութիւնքն, զորս մուծաք յեկեղեցին այսր քաղաքի և ի Զմմառայ ոչ ծառայեն ի ժողովըրդեանն, որ դեռ ևս յամառեալ մնացեալ կան ի սովորութիւնս նախնեաց իւրեանց և մնացեալ հանդիսաւորութեամբ յայժ փառաբանեն զընծայսն պատարագին չև ևս սրբագործեալ՝ պահանջել կոչեաք յարքեպիսկոպոսէն՝ զի ինքնին քարոզեսցէ յեկեղեցւոջն և այլոց ամենեցուն արգելուցու զայն խոտի. և արքեպիսկոպոսն սիրով կատարեաց զայս և ի կիր էարկ զբնական ձիրս ճարտարխօսութեանն իւրոյ զարմանալւոյ յ8-րդի աւուր Օգոստոսի և ի 6-րդի աւուր Սեպտեմբերի 1665 ամին։

Յառաջ քան զաւուրս զայսոսիկ ի 11-րդի աւուր Յուլիսի 1665 ամի ժամանեաց այսր նուիրակ կաթուղիկոսին Հայոց, Պօղոս եպիսկոպոս Թոխաթեցի հանդերձ այլով կրօնաւորաւ Հայոց Յովհաննու և սարկաւագաւն Վարդանաւ, վասն ժողովելոյ զնուիրակ կաթողիկոսին ի ժողովրդենէն, որպէս առնէ երբեմն կաթողիկոսն, առաքելով զնուիրակս իւր ժողովել տուրս վասն հատուցանելոյ զհարկս Տաճկաց և Պարսից։ Այն այս եպիսկոպոս զանցեալ ըստ սահմանս պարտուց իւրոց՝ ջանայր խռովել զժողովուրդն և զատանել զնա ի միութենէն, որ հաստատեալ էր, քանզի ասէր՝ թէ բռնութեամբ մուծեալ է միութիւնն և միայն ըստ ինքնագլուխ հրամանաց արքեպիսկոպոսին, ընդդէմ կամաց ժողովրդեանն և առանց հաճութեան նորա (և չէն ինչ սուտ բանք նորա). և զի հարկ է ժողովել զնոսա յեկեղեցին և լսել զկամս նոցա. և միւանգամ ասէր՝ թէ աննշանակ և անօգուտ է միութիւնն, որով եղանակաւ իսկ հաստատեալ իցէ՝ մինչև հաւանեսցի ընդ այն կաթուղիկոսն Յակոբ, զէթ ի մասին ուղղութեանցն մուծելոց յեկեղեցին. խօսեցաւ և բազում այլ ինչ վնասակար, յորոց մարթ էր խռովել ժողովրդեանն, որոց սիրտք նոցա յարևելս քան յարևմուտս յարին, մինչև կեայ սիրունդն հին, որ ծնեալ է և սնեալ

ի հերձուածին։ Այլ Տ. Կղեմենտիոս եռանդեամբ յոյժ ընդդէմ եկաց նմա և սատանային և հրապարակաւ, մինչև ընդունայն արար զամենայն ջանս եպիսկոպոսին։

Այլ ի 23-ն Յուլիսի եկն այսր կրօնաւոր քահանայ մի Հայոց Վարդան անուն, որ համարէր կաթոլիկ, զի և ի Հռովմ քաղաքի այնպէս երևէր, այլ արդեամբ հաւատեաւ էր այր ճարտար յոյժ, որ յամենայն ժամ յարէր ի կողմն հզօրագունին որպէս և սա և ի Վաղախիայ և յայլ ես տեղիս։ Հանգուսցէ զնա Աստուած յարքայութեան իւրում։ Ամօք երկու յառաջ մեկնեցաւ աստի ի Հայաստան, առեալ ընդ իւր սակաւ արծաթ, այլ ի ձմեռնապարհի անդ սպանաւ ի ձեռն աւազակաց։

Իսկ յայնժամ եկն այսր, ի դառնալն իւրում յԱմստերդամայ, ուրանօր ահա ամք ինչ են, բացեալ կայ տպարան Հայոց կարի փառաւոր ժողովրդեանս այսմիկ, քանզի տպագրեն անդ գիրք հերետիկոսականք և ոչ ուղղափառք։ Եբեր նա ընդ իւր աստ արքեպիսկոպոսն թուղթս ի վերակացուէ տպարանին, եպիսկոպոսէն և վարդապետէն Հայոց Ոսկանայ, որ կաթոլիկն համարիւր և երևի՝ վասն հաւատոյ իւրոյ հեռացեալ էր ի Հայաստանէ, բայց երբեք ոչ յաջողեցաւ ի խընդրուածս իւր ի Հռովմ քաղաքի՝ դարձաւ միացաւ անդրէն ընդ կաթողիկոսին Էջմիածնի, և ըստ հրամանի նորա վերակացու է տպարանին, տայ նմա համար վասն արծաթոյն, զոր ժողովէ ի վաճառմանէ գրոցն և առաքէ ի Հայս, զոր ինչ պատուիրեալ էր առնել և աշակերտին իւրում Վարդանայ, որ սպանաւն։

Ի թուղթս անդ իւր, թող զայլն ամենայն՝ և զայս ինչ կարի խնդրէր Ոսկան յարքեպիսկոպոսէն՝ զի ընկալցի սա ըզտպարանն և յարդարեսցէ յԼվովի, իբր զի նեղութիւնք բազումք հասանեն նմա յԱմստերդամ քաղաքի. (Թուի թէ չէր տեղեակ Ոսկան զալստեան մերոյ յԼվով)։ Ուրախացաք մեք յոյժ ընդ այս առաջարկութիւն, որով հնար լինէր խափանելոյ զաւելի բազում չարեացն, վասն որոյ և համոզէր Տ. Կղեմենտիոս զարքեպիսկոպոսն՝ զի կոչեսցէ զՈսկան գալ փութանակի յԼվով հանդերձ տպարանաւն իւրով, և ծանուսցէ նմա՝ թէ աստէն զոհ լիցի ըստ ամենայն մասանց։ Հա-

ւանեցաւ արքեպիսկոպոսն և եցոյց մեզ գնամակ իւր կարի հանճարաւոր, զոր գրեացն նմա։ Նոյն անգիտանամ ամենեին, զի՞նչ ինչ պատահեաց յայնժամ, քանզի յայնմհետէ ոչ ևս եղև յիշատակութիւն գործոյն. կամ զի շրջեցաւ ի խորհրդոց իւրոց Ոսկան, կամ զի լուաւ՝ թէ բնակեմք մեք աստէն, կամ այլ ինչ այսպիսի. այլ եկին հասին այսր մատեանք Հայոց նորոգապէս տպագրեալք, անուանեալք Ժամագիրք, որ լի են բազմութեամբ մոլորութեանց և հերետիկոսութեանց, (թէպէտ և ի չքմեղս լինի Ոսկան՝ թէ տպագրեալ են մատեանքն նախ քան զգալուստ իւր յԱմստերդամ) և Հրահանգք Հաւատոյ մանուկք և կրթեցողութիւնք եկեղեցւոյ, որ լաւ են քան զԺամագիրսն և կոչեն Շարականք, հանդերձ բազում սաղմոսիւք, ի վերջ կոյս որոյ, չգիտեմ ընդէ՞ր, յաւելեալ են աղօթք քանի մի ուղղափառք, որ կամ փոփոխեալ վերագրին մեծի կաթողիկոսին Հայոց Ս. Ներսիսի, կամ շարագրեալ են ի Նմանէ նախ քան զգտանել նորա և միանալ ընդ Ս. կաթողիկէ Եկեղեցւոյ, ի ձեռն Թէոփիլոսի ուրումն քաջ աստուածաբանի, զոր առաքեաց առ Նա կայսրն արևելից Եմմանուէլ։

Ի նմին ամի յամսեանն Յունիսի, որ օր 27-րդ էր՝ յետ բազմապատիկ աղաչանաց ժողովրդեանն, ի կարի խնդութիւն նորա՝ հանդիսիւ մեծաւ յանձն առարաւ դարձեալ եկեղեցին Հայոց վանական, որ յարուարձանին՝ ի ձեռս յիշատակելոյն ի վերոյ կրօնաւորին Հայոց Սիմէոնի։

Ի 10-րդի աւուր Օգոստոսի, իբրև ժողովեցան դատաւորքն առ արքեպիսկոպոսն՝ ջանաց դարձեալ նուիրակն Հայոց խօսել զժողովուրդն, և զնոյն բան արար և յ18-րդի աւուրն, բայց ողորմութեամբն Աստուծոյ ոչինչ յաջողեցաւ նմա ի կրկին նուագն, — թէպէտ և էին նորա կողմնակիցք ոչ սակաւ, — քանզի բացարձակ հրաժարեցաւ արքեպիսկոպոսն փոփոխութիւնս ինչ առնել յայնմ, զոր կարգեալն էր միանգամ։ Զկնի աւուր ինչ ժամանակի խնդրեաց նա հրաման յարքեպիսկոպոսէն, մատուցանել պատարագ յեկեղեցւոջն Հայոց, խոստանալով պահել զայն ըստ ամենայն ուղղութեանցն, բայց ի խառնելոյ ջրոյն ընդ գինին։ Իբրև հար-

ցու Ք. Կղեմենտոս վասն բանիս այսորիկ՝ պատասխանի ետ՝ թէ չէ հարկ ամենեւին զեջանել ի խնդիր նորա, եթէ ոչ առանուցու յանձն խառնել ջուր ընդ գինին, որ կարեւորագոյն է անշուշտ յուղղութիւնն. վասն որոյ և ոչ եառն նմա թոյլ:

Նոյն ի 14-րդի աւուր Սեպտեմբերի նորին 1665 ամի՝ ի պատճառս զբօսանաց չոգաւ Նուիրակն յեկեղեցին՝ որ անուանեալ կոչի վանական և հրամայեաց երգել զերգեցողութիւնսն առանց ուղղութեանցն: Իբրև լու եղև մեզ զայսմանէ՝ հարկեցաք զարքեպիսկոպոսն, որ յայնմ աւուր իսկ տեղեկացեալ ամենայնի՝ հրամայեաց փակել զեկեղեցին, իսկ աւագ երիցուն Սիմէոնի, որ փաստակար գտաւ ի յանցանսն՝ արգել այնուհետև մատուցանել պատարագ:

Վասն իրացս այսոցիկ ըստ յորդորանաց մերոց առաքեաց արքեպիսկոպոսն Լատինացւոց զկնի. երից աւուրց կանոնիկոսս երկուս և գնացին առ Նուիրակն Հայոց և առաջարկեաց՝ զի վաղ վաղակի մեկնեսցի յաշխարհէն և մի իշխեսցէ ընդդէմ կալ բանի և գործով Միութեանն, որ հաստատեալն էր, ապա թէ ոչ՝ ածցէ չարիս ի վերայ իւր: Ծանուցեալ անդէն Նուիրակին՝ միաբանութեամբ ամենայն քահանայիցն Հայոց, առաջի որոց զյանցանսն գործեաց՝ պատասխանի արար հեզութեամբ, թէ կամի անձամբ անձին երթալ առ արքեպիսկոպոսն յաւուրն երկրորդի և յայտնել նմա զհաւատոյ պատճառս գալստեան իւրոյ, քանզի չէ երբէք նորա խորհուրդ գործ փաստակար գործելոյ ընդդէմ միութեան կամ խռովելոյ զխաղաղութիւն հասարակաց: Յաւել և այլ բանս բազումս, և ես համեմատս ի ձեռն թարգմանչացն, քանզի պատճառս օրինաւոր ածել ի մէջ ոչ կարէր. իսկ մեզ չէր անկ, որպէս համարէաք՝ միջամուխ լինել յայն գործ յայտնապէս, որպէս զի մի ածցեմք ի վերայ մեր զբարկութիւն ժողովրդեանն:

Իսկ ի վաղիւն, որ օր 19 էր Սեպտեմբերի՝ չոգաւ Նուիրակն ըստ խոստմանն իւրում առ արքեպիսկոպոսն (Լատինացւոց) Իլվովայ, հանդերձ համօրէն դասուն եկեղեցականաց և իշխանօքն Հայոց և ջատագովեալ անձին յաղագս սխալանացն, զոր արարին ի վանական եկեղեցւոջն և արարն-

ջերմ գանխորհրդութեանն. ընկերաց իւրոց՝ յայտ արար մեծաւ ցածութեամբ՝ թէ չէին նորա երբէք խորհուրդք սահանելոյ միութեանն, զի ոչ միայն կամի միութեանն լինել աստէն, այլ և յարենէս այլ և ի համօրէն աշխարհի։ Իբրև լուաւ արքեպիսկոպոսն զայն ամենայն՝ գիրկս էարկ զնովաւ և կոչեաց զնա գալ յաւուրն երկրորդի ի ճաշ իւր ընդ արքեպիսկոպոսին Հայոց։ Ի շրջել գործոյն յայս կերպարան՝ լաւագոյն ոք թուեցաւ մեզ և պատուաւորաց ոմանց Հայոց Նուիրակին, գէթ յարտաքին դէմս, քանզի երկեաւ ի սպառնալեացն, զոր առաքեաց յայտնեաց նմա ի վանսն արքեպիսկոպոսն Ել վոխոյ, որ յայնմ իրի փարեցաւ ըստ բանին, զոր ասէր միշտ՝ թէ բռնութեամբ մանաւանդ քան խոհականութեամբ մարթ է համբոյրս առնել զՀայս։

Եւ ի վերայ այսր ամենայնի ծանուցեալ Նուիրակին՝ թէ ոչինչ այլ ես կարեմ առնել՝ խնդրէր անդէն՝ թէ որով եղանակաւ մատուցէ պատարագ յեկեղեցւոջ Լատինացւոց առանց խառնելոյ ջուր, մանաւանդ զի լուաւ ի չարամտաց ոմանց Հայոց ասացեալ նոցին իսկ Լատինացւոց՝ թէ ի Ս. պատարագին ջուրն ոչ է նիւթ էական, այլ լոկ արարողութիւն է և խորհուրդ, (բայց ոչ իմանան Լատինքն որ զայս ասացին, թէ այսու անկանին ի հերետիկոսական վարդապետութիւն միոյ և եթ բնութեան Քրիստոսի, որպէս դաւանին յԱրևելս ամենեքեան, որ ոչ ի կիր առնուն ջուր ի Ս. պատարագին, որպէս ասացաւ ի վերոյ. վասն որոյ դիւրագոյն ևս հաճեցան նոքա թոյլ տալ Նուիրակին մատուցանել պատարագ անապակ գինեաւ, քան արքեպիսկոպոսն Հայոց, որ հաւանեալն էր ի հեղինակութիւն մտաց Հ. քարոզչաց), և կայր մնայր Նուիրակն ի խորհրդեան իւրում, թէպէտ և լուեալ զայսմանէ Հ. Կղեմենտեայ՝ պատուիրեաց նմա յայտնել արքեպիսկոպոսին Հայոց, զի յորդորեսցէ զնուիրակն ըստ օրինակի վերջնոյն նուագի՝ յետս կալ ի խորհրդոցն, զի մի հերետիկոս ծանիցի, այլ և յայտ արասցէ նմա, թէ չեն հաւատալոյ իրքն, հաճել երբէք քահանայի ուրուք ծխատիրի կամ աբբայի վանաց իւիք Լատինացւոց՝ ընդ այնպիսի յանցանաւորութիւն։ Վասն որոյ ժողովեաց Նուիրակն զառուրսն և կամէր երթալ ի Զա-

մտածէ, յաղագս նորին նուիրման. այլ իբրև ոչ տուաւ նմա հրաման երթալ անդր՝ եդ ի մտի դառնալ յարևելս ի 29-րդի աւուր Հոկտեմբերի 1665 ամին. և արքեպիսկոպոսն Թոյլ ետ նմա յուղւոջ իւրում անցանել ընդ Լեոպոլիս, զի մի մնասցէ զէթ ի Կամենից, (այլ նուիրակն եմուտ և ի Կամենից ընդդէմ խոստմանն իւրոյ և չարիս ոչ սակաւս արար անդ)։ Հարկ համարեցաք յայտնել, զի կայ փոքր փաստակի հրաման՝ մեծանալ զուգ զուարթունս յեկեղեցին Կամենիցի և յաւուր զայն ամէն, չէ եւս ժամանակ անդր նուիրակին և զղջալ զժողովուրդն ընդդէմ կալ ուղղութեանց իւրեանց։ Այս գործ ընտրեցաւ միջնորդութեամբ սակայն ի վերայ կիտասարկաւագն Գրիգորիոս Բարսամ և փութանակի տարեցաւ ի Կամենից կարօղ սուրհանդակաց հանդերձ կարևոր թղթովք։ Այլ ի զուր և ընդունայն եղեն ջանք նորա և ձիգն, զի ժողովուրդն և դասք եկեղեցականաց համօրէն փակեալք իբրև կեղեքութիւն՝ ոչինչ հայէին յանէծս և ի նզովս արքեպիսկոպոսին, զորս սպառնայրն նոցա, եթէ ընդդէմ դարձցին հրամանաց իւրոց. վասն որոյ սպառեալ Բարսամայ ի հարկէ՝ ածեալ եւս առանց իրիք յաջողութեան, մանաւանդ զի տեսանէր՝ թէ վասնզի ոչինչ է առանց զօրու օգնականութեան ի վէճ գալ ընդ ժողովրդեանն բորբոքելոյ։ Ի սմին սակի ոչինչ օգտեցին և թուղթքն արքեպիսկոպոսին, զորս գրեաց առա խստագոյն յոյժ բանիւք, քանզի չև էր հասեալ ժամանակին։

Օգնէր մեկնելոյ գնալոյ նուիրակին յաջողէր գործն միութեան ի նորոգել եկեղեցեաց Իլփովայ և Զամոստեայ. վասն որոյ յառաջնում աւուր Նոյեմբերի գրեաց երկու ծննդեանբ յԼեպոլսէ, որ կարի ուսեալ էին առ նոսա Հ. Կղեմենտոսի գերս Հասառայ և զհայր կատարման խորհրդոյն՝ ձեռնադրեցան կիսասարկաւագ ընդ երկուս այլ պատանիս ի Զամոստեայ և ի Կամենիցէ, որք յետ խոստովանելոյն զդաւանութիւն կաթողիկ հաւատոյ՝ ընկալան զչորեքին խոնարհագոյն աստիճանս կարգի։ Երկոքեան առաջինքն, որ յԼէոպոլսէ՝ կոչէին Դաւիթ և Մարտիրոս, իսկ որ ի Զամոստեայն՝ Յովհաննէս Բարդողոմէոս և որ ի Կամենիցէ՝ Բաղդասար Բարէկ։

Ի 14-րդի աւուր Նոյեմբերի 1665 ամին ժամանեաց այսր

ի Հռովմայ եպիսկոպոսն Ռոգգանիոյ, Յովհաննէս Կերեմովիչ, ծննդեամբ Իլվովեցի և ազգակից արքեպիսկոպոսին, ընդ քեռ որդւոյ ամուսնացեալ էր եղբայր նորա. այր բարեբարոյ և գիտուն, որ զբարձրագոյն ուսմունս և զփիլիսոփայութիւն ուսաւ յաստէն առ Հ. Յիսուսեանց և զաստուածաբանութիւն առ Հ. Դոմինիկեանց. կարծ՞ էր նա հասակաւ և կայր ի գլխուածոյ իմեքէ: Իբրև վախճան առար ուսմանն՝ չոգաւ ի Հայաստան, ձեռնադրեցաւ քահանայ և ապա եպիսկոպոս Ռոգգանիոյ, (թէպէտ և ոչ կամէր ժողովուրդ գաւառին լինել նմա իւրեանց եպիսկոպոս), և յետոյ կացեալ ամս վեց կամ եօթն յԵրուսաղեմ, ուրանօր վերահասու եղև պատրանաց հրաշեցն իջման լուսոյն ի վերայ գերեզմանին Քրիստոսի յաւուր Զատկի՝ չոգաւ անտի ի Հռովմ: Դաւանեաց անդ զհաւատս կաթողիկութեան, եկաց ամս չորս կամ հինգ առ Ս. Ժողովոյն, առաքեցաւ ապա անտի ի Լիվոռնոյ և հասեալ ուրեմն յԻլվով, ըստ միջնորդելոյ Հ. Կղեմենտեայ հաւանութեամբ արքեպիսկոպոսին Հայոց, որում ոչինչ փոյթ էր զնմանէ մինչև ցայն վայր ժամանակի, որպէս թուէրն, այլ իբրև եկն եհաս այսր՝ վաղ վաղակի անդէն կարգեաց զնա փոխանորդ իւր: Ս. Ժողովն Տարածման հաւատոյ ետ նմա աստիճան առաքելական քարոզչի և կարգեաց նմա թոշակ ամի ամի դահեկանս 120. և յարեցաւ եպիսկոպոսն ջերմեռանդն սըրտիւ ի միութիւն և ի ծառայութիւն Ս. հաւատոյ. այլ են նորա թշնամիք բազումք, քանզի չէ համբոյր բնութեամբ և սիրելախօս, որպէս արքեպիսկոպոսն: Իբրև խնդիր եղև վեց կամ եօթն ամօք յառաջ, թէ զով կարգիցեն յաջորդ արքեպիսկոպոսին՝ մերժեաց զնա իսպառ Ս. Ժողովն յընտրելեացն, քանզի համարէր՝ թէ այր խորագէտ իցէ նա, որ կարող է հածիլ ընդ ամենայն ինչ առանց խարոցի: Այլ յայսմ ժամանակի չիք ոք աստ, որ արժանաւորագոյն քան զնա իցէ ունել զաւազն արքեպիսկոպոսին:

Ի 6-րդի աւուր Դեկտեմբերի 1665 ամին հրաժարեցաւ արքեպիսկոպոսն ի ձեռնադրելոյ զյիշատակեալն Ռալամ ի սարկաւագութիւն, քանզի ընդդէմ էր ձեռնադրութեանն ժողովուրդն, կամ վասն եռանդեանն, որով չոգաւ Ռալամն

յԷջմիածնից Թղթովքն հանդերձ և վասն ջանից նորա ի մանաւանդ զուգութեան յեկեղեցի անդր առաջի Նուիրակի կաթողիկոսին, կամ առ այն՝ զի առանց հրամանի զատաւորացն ձեռնադրեալ էր նա ի կիսասարկաւագութիւն, զոր յառաջնումն պահու հարկ էր առնել։ Յայնժամ զայս խորհուրդ առաք Բաղտասարայ՝ զի երթիցէ առ դատաւորսն և խնդրեսցէ ի նոցանէ միջնորդել վասն նորա առաջի արքեպիսկոպոսին յաղագս սարկաւագութեան նորա և հաշտութեան ընդ ժողովրդեանն, և հաճեսցէ սուտ զմիտս ժողովրդեանն վասն մեծագոյն օգտի, որպէս զի մի յապաղեսցի այնուհետև արքեպիսկոպոսն ի ձեռնադրելոյ զնա, պատճառանս ի ներքըս ածելով։ Այլ ոչ յաջողեցաւ գործն, քանզի Բաղտասար, որպէս ասեն ոմանք՝ ոչ եգիտ առ դատաւորս հեզութիւն, որպէս անկն էր, այլ պահանջս մանաւանդ եդ ի վերայ նոցա, քան խնդրեաց. վասն որոյ բորբոքեցան խռովեցան յոյժ դատաւորքն վասն բանից ինչ նորա, յարուցեալ ապա միահամուռ եկին առ արքեպիսկոպոսն և կարի Թախանձանօք խնդրեցին ի նմանէ՝ զի մի ածցէ յաւագ աստիճան զայրն, զոր վնասակար համարէին նոքա վասն ժողովրդեանն յաղագս ինչ ինչ պատճառաց. վասն որոյ հարկ եղև մեզ զգենուլ զհամբերութիւն առ ժամանակ մի, մինչև հանդիցէ սակաւիկ մի սրտմտութիւն նոցա։

Ի սկզբան սոյն ամին 1666 յիշատակելոյքս, ի վերայ կիսասարկաւագունք, որ յԷջմիածնէ՝ ձեռնադրեցան ի սարկաւագութիւն և ապա ի քահանայութիւն, և յետ փոխելոյ անուանցն՝ կոչեցան Յովհաննէս և Ստեփանոս. նոյն նոքա նախ քան զձեռնադրութիւնն երդուեալ Թղթով՝ Թէ ցմահ վախճանի իւրեանց ունիցին զուգութիւնն, մնասցեն ի մայր եկեղեցին։ Իսկ յորժամ արձակեցան ի տեղի իւրեանց՝ կացին յուխտին, մատուցանելով պատարագ ըստ արարողութեանն կաթողիկեաց, որպէս հրամայեցաւ նոցա առնել. և այս եղև պատճառ վերստին զայրանալոյ ժողովրդեանն և եկեղեցականացն։ Վասն որոյ եկին այսր նախանդամն Հայոց Ներսէս քահանայ, զի եկն աղագս գոյցէ հաշտութեան. այլ ըստ ողորմութեանն Աստուծոյ, ի բուռն հրամանէ արքեպիսկոպոսին, որպէս

ազդեաց սմա Հ. Կղեմէնտիոս՝ և աղաչանօք որդւոյ իւրոյ Աս-տուածատրոյ, որ նմուտ յուսումն ի դպրանոցն մեր՝ հաւա-նեցաւ՝ Ներսէս ընդ Միութիւնն և յ1-րդի աւուր Փետրուարի 1666 ամին մատոյց պատարագ հանդիսաւոր ի մէջ եկեղե-ցւոյ բաց ամենայն ուղղութեանցն։ Ի ժամանակի յայսմիկ ժամանեցին յՆապլովէց և Թուղթք նուիրակին Հայոց ի Վաղախիոյ, որով գրգռէր զժողովուրդն ընդդէմ արքեպիսկո-պոսին և մեր, (Թէպէտ և յանուանէ ոչ կոչէր զմեզ), իբրու թէ օրէնազիրս կամիցիմք լինել, մուծանիցեմք ի նոքս աղա-րտութիւնս և ծէսս բաց հանիցեմք և եթ կամաց մերոց. վասն որոյ, ասէր, հարկ է ընդդէմ կալ նոցա և մի հնազան-դիլ։ Այլ քանզի ընկալեալ էր Ներսէսի քահանայքն զմիու-թիւնն՝ վասն այսորիկ ընդունայն եղեն ջանք նուիրակին։

Ի 14-րդի աւուր Մայիսի 1666 ամին, յետ երկօրեայ կամ չորեքօրեայ հիւանդութեան, փոխեցան հասանէր Հ. Կղե-մէնտեայ Գալանոսի, ի հասակի 56 ամաց, որ զամենայն ժա-մանակս կենաց իւրոց եկաց ի սպասաւորութեան Սանին և ծառայման Ս. Հաւատոյ նա մանաւանդ ի Հայս, յորոց մի-ջի և Թաղել ցանկացաւ, ի գերեզմանս մայր եկեղեցւոյն, և Թաղեցաւ իսկ յ17-րդի աւուր նորին ամսեանն։ Տրտա-մեցան յոյժ առհասարակ ազգ բարեմիտք վասն նորա և մա-նաւանդ արքեպիսկոպոսն (Լւովինեցւոց) Նիկողայ, որ և առաջնեայ զնա հոգեհանգստեան նորա հանդերձ դասու եկեղեցականաց իւրոց և Հ. գաւառապետաւն և գրեթէ հան-դերձ ամենայն ուխտիւ Հ. Դոմինիկեանց և բազմութեամբ կրօնաւորաց կաթողիկաց։

Այն ինչ փոխեցանեցաւ Հ. Կղեմէնտիոս՝ և ահա որք թուլամիտքն էին ի միութեան՝ համարեցան, թէ ընդ հարկա-նիլ հովուին ցրուեսցին ոչխարքն. թէ յետ մեռանելոյ առն այնպիսւոյ ի չէք դարձցին դպրանոցն և աշակերտութիւնն։ Վասն որոյ յարձակէին հզօրապէս ի վերայ իմ, որ պատա-նիս էի անփորձ և անտեղեակ, հանդերձ արքեպիսկոպոսաւն, որ իրաւունս ասէր ունել կնքելոյ զդպրանոցն և ի գիր և ի համար առնլոյ զհանդերձեալսն, որ մնացին զկնի Հ. Կղեմէն-տեայ, այլ և անօրինելոյ ըստ կամաց իւրոց, մինչև գայցէ պա-

տուէր ի Ս. Ժողովոյն։ Ոչ սակաւ խռովեցայ վասն անծանօթութեան, քանզի միայնակ ինն էի ընդդէմ այնքանի թշնամեաց։ Վասն այսորիկ, իբրև լուայ ի բարեկամաց ումանց և մանաւանդ ի փոխանորդէն Հայոց դէպ խորհուրդս արքեպիսկոպոսին՝ հրաման եառ փակել զընթերցարանս գրքանոցին կարի զգուշութեամբ, և առեալ ընդ իս արծաթ սակաւ, որ մնացեալ ի վարձուց աշակերտաց՝ և զամենայն թուղթս կարևորս՝ չոգայ առ արքեպիսկոպոսն Իլփոփայ, առ պաշտպանն մեր զօրաւոր, զի անկայց յոտս նորա և ապաստանաւաթօր աջոյ խնդրեցից ի նմանէ ի գլխոց Ս. Ժողովոյն, որպէս զի հաճեսցի ընդ իս և մի թողուցու զիս յայնմ վտանգի տարակուսից։ Եւ իբրև ի վեր հանի նմա զամենայն անկեղծութեամբ՝ այնչափ յաջողեցայ ի գործին՝ զի արքեպիսկոպոսն անտես արարեալ զհիւանդութիւնն, զոր խօթացեալն էր՝ ցանկացաւ գալ անձամբ ի գրատունն։ Նաև ես հրաման միում յաշակերտացն ողջունել զնա ձայնիւ ի լեզու Լատինացւոց, յաղագս մահուան Հ. Ակեմենեանց. և ապա առաջի արքեպիսկոպոսին, որում ոչ կարի հաճոյ թուեցաւ այս հանգէս, և առաջի գաւառորացն Հայոց և արանց այլոց բազմաց՝ աղաչեցի զնա, զի հաճեսցի հովանաւոր լինել ապաքինութեանն և գրատանցն։ Բարձր ձայնիւ խոստացաւ զայս արքեպիսկոպոսն և քաջալեր եղև առ աշակերտսն, զի ջերմեռանդն լիցին յուսմանս իւրեանց ընդ զեկավարութեամբ ընկերակցին Հ. Ակեմենեանց, որ յուսացեալն է, որպէս ասաց նա՝ ողորմութեամբն Աստուծոյ փոխանակել լոյս զփորձառական հանգուցելոյ, որում և ինքն օգնական և բարեհաճ եղիցի յամենայն ժամ։

Իբրև հայեցաւ և եսես արքեպիսկոպոսն զանձնականն եկեալս, որ ի սորին զանկանին՝ հրամայեաց, զի ածցեն զնոյն ի վեր ի անձնականն, զոր սուղ ինչ ժամանակաւ յառաջ շինեալ էր Հ. Ակեմենեանց, որպէս լիցին բանք ի յետագայս։ Յայնժամ տայցի ես բարձր ձայնիւ, որպէս զի լուիցէ և արքեպիսկոպոսն Հայոց, որ կամէրն կոչել և հանել ի մէջ զանձնականն, շինեալ ի Հ. Ակեմենեանց ի պէտս իւր. Ահաւասիկ սենեակն նոր, զոր շինեաց Հայրն Արժանապատիւ։ Եւ այս պատասխանի արար արքեպիսկոպոսն Իլփոփայ՝ գոհութիւնս մատուցանելով Տեառն

մերոյ վասն հայրենաւոր նախախնամութեան, և գովելով բդ-կարգ և զբարեկարգութիւն ի խուցն ի պէտս աշակերտաց՝ մեկնեցաւ ի դպրանոցէ անտի, յանդորր զամենեսեան կացուցեալ և մերժեալ զկասկածս տարակուսին վասն ապագային։

Այլ յայսր ամենայնի վերայ, քանզի ի կասկածանս էր զնա և կամէր՝ զի անշնորհն իսկ լիցի արքեպիսկոպոսին խաւսել զնա՝ խորհեցաւ, թէ հարկ է խաւսել զնա նիւթն և ծանրանալ ի վերայ նորա, յուշ առնելով նմա զձեռնադրութիւնն Ռուսա-մայ, զմուծումն քաղաքութեան յեկեղեցին իւր, ընդ որս չև ևս էր հաճեալ, զմուծումն ուղղութեանց և բարեկարգութեանց յեկեղեցիս Կամենիցի, երթալով նորա անդր անձամբ անձին, որպէս և խոստացեալ իսկ էր նորա Հ. Կլեմենտեայ, քանզի ոչ հնազանդեցան թղթոց նորա և բանադրութեանց ժողո-վուրդն անդրոյ, այլ մինչև ցայսօր ժամանակի խարխափին ի հերձուածի անդ, թէպէտ և ընկալեալ էին զամ մի զմիութիւնն նախ քան զվախճանել Հ. Կլեմենտեայ։ Եկեղեցիսն Հայոց որ ի Ստանիսլաւով և ի Սնեատին՝ արկեալ ընդ վերակացու-թեամբ մերով, ի ձեռն կաթողիկ ծխատէր քահանային և կար-գելով անդր առաջ երէց զքահանայն Յակովբ, որ ընտրութիւն ունի ընդհանրապէս յԼագլովիկ քաղաքի, իսկ անդ ունի փո-խանորդ իւր զոմն քահանայ Թէոդորոս անուն, որպէս յիշա-տակեցի ի վերոյ։ Այն այս Յակովբ գործելով չարիս ոչ սակաւ ընդ նուիրակին Հայոց, զոր մինչև ի Կամենից յուղարկա-ւորեաց՝ երկուցեալ ապա յարդարացի պատժոց՝ եկն այսր ի կոչ Հ. Կլեմենտեայ, որ յայտնեաց քահանային ի ձեռն այլոց՝ զի եթէ ընկալցի զմիութիւնն՝ թողցին նմա ամենայն յանցանք նորա։ Եւ արար քահանայն ըստ այսմ բանի, այլ ոչ դիւ-րաւ, քանզի դժգոհ էր արքեպիսկոպոսն, զի կորզեցաւ ի ձեռաց իւրոց քահանայն, յորմէ ժաէր և առնոյր արդեաք զգումարն արծաթոյ ոչ սակաւ, զոր պահանջէր ի նմանէ, որպէս զի ար-ձակեսցէ զնա ի բանտէն և ազատեսցէ յայլոց ևս պատժոց կա-րևորաց։ Վասն այսորիկ ըստ առաջարկութեան իմում ա-ռաքեաց արքեպիսկոպոսն Ի վոփոյ զաւրկաւաց իւր առ արք-եպիսկոպոսն Հայոց ուժգին խնդրեալ, զի մի այլ ևս յամա-ռեսցէ ընդ զայսոսիկ երեք իրս, (զձեռնադրութիւն Ռուսա-

մայ, զմուծումն քարոզութեանց և միութեան), որ այնչափ օգտակարք էին և կարևորք վասն հօտի նորա. յայտ ևս առաջի նմա, թէ գայթակղութիւն մեծ է, զի կաթոլիկ գոլով արքեպիսկոպոսն՝ ոչ կամի զկաթոլիկս ձեռնադրել. և թէ, մինչդեռ բաց էին դրունք եկեղեցեացն Լատինացւոց վասն քարոզչացն Հայոց, եթէ զոցին պատրաստականք՝ ընդէ՞ր է այն, զի ոչ տայ թոյլ արքեպիսկոպոսն, առ ի չգոյէ քարոզչաց Հայոց՝ քարոզել Լատինացւոց յեկեղեցիս Հայոց, որ օգտակար իսկ համարի և ցանկալի. և ուր ուրեմն՝ թէ եկն եհաս ժամանակ, զի երթիցէ արքեպիսկոպոսն ի Կամենից և վճարեսցէ զգործ միութեանն, որ հաստատեալ արդէն համարի յամաց ինչ հետէ. մի գուցէ լուեալ արքայի զխօսս կասկին ժողովրդոց Կամենիցի ի խստութիւն արկցէ ձեռն: Առ այս ամենայն պատասխանի առաջի արքեպիսկոպոսն ըստ սովորութեան իւրում, այսինքն է բաց բանիւք և ընդունայն խոստմամբք: Այլ սարկաւագն, ըստ պատուէրին, որ առեալն էր նմա՝ ևս քան զևս ձեպէր զարքեպիսկոպոսն, զի երթիցէ ի Կամենից, և ուր ուրեմն ընկալաւ խոստումն ի նմանէ՝ թէ զկնի սուղ ինչ աւուրց երթիցէ անդր. այլ տակաւ ոչ պահեաց զխոստումն իւր: Այս բանակցութիւն եղև ի 5-րդի աւուր Յունիսի 1666 ամին, և թէպէտ ոչինչ յաջողութիւնք եղեն ի նմանէ, այլ քանզի զրժեաց արքեպիսկոպոսն խոստմանն իւրում՝ մարթ էր յուշ առնել նմա զայս և աշխատել զնա սպառնալեօք սրտմտութեան արքեպիսկոպոսին Լվովայ, որ անդամ է Սենատոսին և է այր զօրաւոր յոյժ ի պետութեանն:

Այլ իբրև վերահասու եղէ, թէ ոչինչ կարեմ հանել զմիտս արքեպիսկոպոսին ընդ առաջարկութիւնն, զոր առաջի սարկաւագն եդի ի միտ յայլ ինչ գործ կարևոր ձեռնարկել, զոր աւանդեաց ինձ Հ. Կղեմէնտոս, այն է վարել զկրօնաւորն հերետիկոս, զքահանայն Սիմէոն, որ զկնի մեկնելոյ Նուիրակին վարէր անդրէն զտեսչութիւն վանական եկեղեցւոյն յարուարձանին Լվովայ: Կեայր մնայր նա անդ խաղաղութեամբ մինչև ցժամանակս Զատկի. իսկ Հ. Կղեմէնտեայ ծանուցեալ՝ թէ ժողովուրդ քաղաքին, որ սիրէին զնա՝ առ նա երթալոց էին ի տօնին, և կասկածելով իսկ, զուցէ և խոստովան առասցէ զժողովուրդն առանց հրամանի և ընդդէմ պատուի-

բանաց արքեպիսկոպոսին, որ գժկամակ էր միշտ ընդ բարե-
կամութիւն ժողովրդեանն ընդ Սիմէոն քահանայի՝ խնդրեաց
յարքեպիսկոպոսէն, զի յաւուրս անդ ամենից՝ իբրև յօգ-
նականութիւն Սիմէոն քահանային՝ կարգեցաւ առ նմա
զքահանայն Յակոբ Գրիգորեան, զայրն հաւատացեալ բո-
լորով սրտիւ իւրով, որպէս ի վերոյ յիշատակեցաք, և փառ-
եալ խորհրդովք համաձայնովք մանաւանդ քան հայովք:
Տուաւ նմա պատուէր՝ զի զգուշասցի գործոց Սիմէոն քահանայ-
ին զոր և յաջողութեամբ կատարեաց, և զայս ինչ ծանեաւ՝
թէ կեղծաւոր է քահանայն և է գայլ ի հանդերձս ոչխարի:

Եւ խոտորեցաւ քահանայն Յակոբ ի ճշմարիտ ճանա-
պարհէն առ սպառնալեաց և առ խոստմանց մեծամեծ պատա-
րագաց զրամովք, առ հանապազօր խնջոյից և խաղից, զոր
տայր նմա ժողովուրդն. այլ ընդդէմ սորին՝ զայր առ մեզ յա-
ձախակի և յայտ առնէր զթիւրութիւնս քահանային այնորիկ
և որբապղծութիւնս, զի հայհոյէր անդադար զՍ. Պապն Լև-
ոն և զսուրբ Ժողովն Քաղկեդոնի: Նա պատուիրեաց Տ.
Կղեմենտեայ՝ յայս սորա նա զայսմանէ արքեպիսկոպոսին,
բայց առ ոչ կամեցաւ ձեռնարկել ինչ վասն իրացն, քանզի ան-
փոյթ էր առհասարակ ամենայնի, յոր ոչ վարիւր կամ առ
շահու անձին, կամ հարկեալ յաղաչանաց և ի ժամանց, թէ-
պէտ և կարող իսկ լինէր առնել գործ այսպիսի ի վասն Աս-
տուծոյ: Վասն որոյ զժուարին ինչ համարեցաւ Տ. Կղեմէն-
տիոս զվճարումն գործոյն առ ժամայն, և յանձն արար ի
խնամս Աստուծոյ, մինչև գայցէ ժամանակ պատշաճաւոր վե-
րարկելոյ զփորձիչն ի քաղաքէն: Բայց ի նմին ժամանակի փոխե-
ցաւ նա յերջանիկ կեանսն. իսկ իմ տեսեալ, թէ վասնզի յա-
ւելուլ ևս քան զևս, զուցէ և ի մոլորութիւն իսկ շրջէր անդ-
րէն ժողովուրդն՝ խնդրէի եկի աստս խափանելոյ զչարիսն.
այլ հարկ համարեցայ ազդել զարկաւագն, մի զայս խոր-
հուրդ ի վեր հանել արքեպիսկոպոսին, զի մի յետս կացցէ յա-
ջողութենէն իւրոյ ի Կամէնեց, որ յոյժ կարևոր էր յայս իմ:

Ի քանի մի աւուրս այդ արարի զայս փոխանորդին Տ. այ-
ոց և սպառնացայ իսկ, զի եթէ ոչ անօրինեսցէ արքեպիս-
կոպոսն որպէս անէն է՝ խնդրեսցիս ևս զօգնութիւն արքեպիս-

կաթողիկոսին Եղիվարդայ, և իշխանութեամբ նորա արկեալ ի բանտ գծերեալիցն։ Ծանիցս զայս փոխանորդն արքեպիսկոպոսին, որ խոստացաւ փոյթ ունել զայսմ գործոյ, այլ ոչինչ կատարեաց. իսկ ի տօնի Գալստեան Հոգւոյն Սրբոյ զժկամակեալ, զի երթայր առ նա ժողովուրդն զանգատանաց խոստովան լինել նմա, որում արգելն խոստովան առնել՝ կոչեաց զնա ի քաղաք և առանց հարցափորձից հրամայեաց արկանել ի բանտ։ Իբրև տարածեցաւ համբաւ զայսմանէ՝ խռովեցաւ ժողովուրդն վասն արկածիցն դժբաղդութեան, բրդեալ ի սրամտութիւն՝ զի յայնպիսի փիձակ էհաս առաքելոյն իւրեանց և հայրն հոգևոր. և յետ բազում խորհրդոց եկին գաւառօրքն յաւուրն երկրորդի առ արքեպիսկոպոսն և առաջարկեցին՝ զի նոյնժամայն արձակեսցէ զկալանաւորն, նա զի զքահանայէն, զանէն սրբոյ, որպէս ասէին՝ բամբասեալ են ապարապարաւ։ Նա այս առաջարկութիւն պատասխանի արար արքեպիսկոպոսն, որ զայրացեալ էր ընդ բանս ինչ նոցա՝ խստութեամբ մանաւանդ քան թէ ողոքանօք, թէ ոչ կատարեսցէ զկամս նոցա և զի չէ արժան նոցա լքանել զգործս իւրեանց աշխարհայինս և միջամուխ լինել ի վարչութիւն եկեղեցւոյ։ Նա այս պատասխանի նորա խիստ այլ արդարացի՝ ամբարձին գաւառօրքն զձայնս իւրեանց, և մինչև արարեալ զգաստութիւն. զոր պարտ էին առ հովիւն իւրեանց՝ ածին ի վերայ նորա անարգութիւնս բազումս և սրամտութեամբ մեծաւ մերժեցին անտի, յայտ արարեալ արքեպիսկոպոսին՝ թէ ունիցին ի մտի զանիրաւութիւն նորա։ Իսկ իմ լուեալ ի պատահմանէ անտի զպրանդցին զկարգն խայտառակ՝ չոգայ յերեկոյին առ արքեպիսկոպոսն, ջատագով այնուհետև ընդդիմութեանն, որով անյօգուտ եկաց ընդդէմ անիրաւ պաշտօնեայց գաւառօրացն, զոփել զնա և յուղ առնել, զի մի ամենեքին երկիցէ ի գործս Տեառն և Ս. Հաւատոց։ Նոյն խնդրեաց յինէն արքեպիսկոպոսն, զի ծանուցանիցեմ վաղ վաղակի արքեպիսկոպոսին Եղվարդայ՝ թէ ոչ ակնածեցին ի նմանէ գաւառօրքն, այլ բարձին աղաղակ և գոչ ի վերայ նորա։ Օրինաւոր թուեցաւ ինձ առաջարկութիւնն, մանաւանդ զի ջանայի ես յամենայն զգուշութեամբ խնամել առանձ յարակել զխաղաղութիւն զաւա-

ւորացն և զգուշանալ՝ զի մի ծագեսցի տարաձայնութիւն։ Վասն որոյ և անդէն իսկ կատարեցի զկամս նորա, ոչինչ յայն հայեցեալ՝ թէ զի՞նչ էր, և չոգայ յապարանս արքեպիսկոպոսին Եղիփոփայ, որ հանդերձէրն երթալ ի հանդիստ գիշերոյ, բայց ընկալ զիս սիրելաբար ըստ սովորութեան իւրում և լուեալ զբանս իմ՝ խոստացաւ ընդ այգն առաւօտին կազմել ժողով արտաքոյ կարգի հանդերձ կանոնիկոսօքն իւրովք և իշխանաւորօք և դարմանս առնել չարեացս այսոցիկ։ Հուսկ ուրեմն — պատմեցից կարճ ի կարճոյ — հրամայեաց կոչել ի ձեռն սարկաւագին զաւագ դատաւորն Հայոց, որ կոչի Երեսփոխան, որ ի ժամանակին էր ծերունի ոմն, Քրիստափոր Բերնարդոմէշ (հանդուցեալ զարդիս) այր մտացի և մեծատուն։ Աշտամբեաց զնա խիստ բանիւք վասն համարձակութեանն, որով պաշտպանել կամէր նա հերետիկոսին հանդերձ ընկերօքն իւրովք, ընդդէմ Միութեանն, զոր հաստատեալ էին ընդ Ս. կաթոլիկէ եկեղեցւոյն և ընդ արքային։ Հրամայեաց նմա թողուլ զայն ամենայն և մի ևս միջամուխ լինել ի գործս հոգևոր դատաստանաց, և սպառնացաւ իսկ նմա՝ թէ զգլուխ իւր տուժեսցի նա, եթէ խռովութիւն ինչ ապստամբութեան յարիցէ։ Պատասխանէր զանձն ծերունին՝ թէ չէ նորա յանկացեալ երբէք և ոչ յանկայ պաշտպանել առն հերետիկոսի, և զի եթէ յիրաւի հերետիկոս իցէ քահանայն կալեալ՝ պատուհասեսցեն զնա ըստ յանցանացն, որում ոչինչ հակառակ է ինքն։ Յաւել, թէ այս ինչ են նմա ցաւք՝ զի հնարս խնդրէ արքեպիսկոպոսն Հայոց խռովելոյ զժողովուրդն և աւերելոյ զեկեղեցիս, քանզի յանկացեալ է յոյժ՝ զի զամ քան զզամ խոպանասցին եկեղեցիք և մարթ լիցի նմա այնուհետև համարձակօրէն առնել զայնոսիկ ի բնակութիւն կանանց և հրէից։ Բազում և այլ ինչ ասաց վասն փարուց և ախոթական զնացից արքեպիսկոպոսին։ Նոյն ես խնդրեցի ուժգին աղերսանօք յարքեպիսկոպոսէն Եղիփոփայ, զի առ փոքր մի թողցէ զգործ հերետիկոսին, այլ կոչեսցէ առ ինքն զարքեպիսկոպոսն Հայոց և զդատաւորն՝ հաճեսցի խլել ի միջոյ զպատճառս երկպառակութեան նոցա։ Նա ընկալեալ ի սարկաւագէն զպատուիրանն՝ հանդերձ ամենայն դատաւորօքն չոգայ առ արքեպիս-

կայսրն Նլ փոխոյ և զնոյն պատրաստս երկրորդեցի: Պատասխանի տուաւ արքեպիսկոպոսն՝ թէ կամի գիտել զխորհուրդ իմ և լսել յինէն անգիտութիւնս լուալ: Յետ այսորիկ չորս կալայ նմա ի գլխոյ Ս. Ժողովոյն վասն ջերմեռանդութեանն, որով աջակիցն լինէր Ծաւալման Ս. Հաւատոյն, և խնդրեցի չձեռնարկել ինչ, զի մի խռովեսցի արքեպիսկոպոսն Հայոց և այնու խախտեսցին այլք, քանզի վասն պատճառաց ինչ չէր անկ ի ժամանակին երկուցանել զնա: Եւ զարարեցին յայնմհետէ զատաւորքն պաշտպանել հերետիկոսին, զանգիտեալ՝ զուցէ և ինքեանք ի կասկածանս անկցին. այլ ապատան թողին ի ժողովուրդն և ի կանայս՝ պատասուօք և պատարագօք մխիթար մատուցանել կալանաւոր քահանային: Այլ հաճեցաւ Աստուած հանել զժողովուրդն ի մոլորութենէն և ծանուցանել նմա զայն անիրաւութիւն: Քանզի դէպ եղև քահանային Յակոբու (որդւոյ Գրիգորի), որ առաջ երէց էր յայնժամ Պոնտական եկեղեցւոյն՝ գտանել ընդ ծածկոցիւ սեղանոյն ի խորանի թուղթ ինչ ծալեալ, որ էր թուղթ մոգութեան: Ի սկիզբն էին նշանագիրք ինչ անծանօթք, զորս համարէաք արաբական զոլ, և զհետ զայլն նշանագիրք ի ժողովրդական լեզու Հայոց: Թող զբազում խրատս մտախս վասն գտանելոյ զանազան յաջողութեանս՝ էր ի թղթի անդ և այս ինչ. Որ ոք կամիցի ընդ իշխանութեամբ իւրով արկանել զոք ի զատաւորաց կամ ի կանանց՝ գրեսցէ զանուն իւր ի վերայ սպիտակ մոմոյ և ունիցի առ իւր և այլն: Իսկ ի միջավայրի թղթոյն նկարեալ էր պատկեր ծերունւոյ ուրումն ալևորի ձեռնամած յաղօթս, այլ և հատիկք ինչ ի գոյն սեաւ, հանդոյն սերմանց այգանի ի թղթեայ պահարանի, լազուարդի տառատու և փոքր ձիթանդաւ, որոց եղեալք ոսկեօծք էին: Գտեալ զթուղթն քահանային Յակոբայ՝ ըստ իմում պատուիրանի տարաւ անդէն առ արքեպիսկոպոսն: Իսկ նորա ամբարձեալ զձեռս իւր յերկինս՝ գոհանայր, զի եղև նմա հնար ցուցանելոյ ժողովրդեանն առուգիւ, թէ որպիսի ոք էր այրն, զոր առ սուրբս ունէին: Եւ պատուիրեաց ինձ գալ առ ինքն հանդերձ փոխանորդաւն, զի խորհեսցուք ի միասին զինչ ինչ

անկելոյս իցեմք։ Զայս խորհուրդ տուաք մեք ՚նմա՝ զի կոչեսցէ փաղփաղակի զդատաւորսն և ցուցցէ ՚նոցա զթուղթն։ Եկին ժողովեցան անդէն դատաւորքն հանդերձ քահանայիւքն և կարի յարգուշ հարան վասն անակնկալ յանցաւորութեանն, ոչ գիտացեալ զինչ ասիցեն՝ զայս ինչ կցկցեցին, թէ չեն թուղթքըն ի Սիմէոնէ քահանայէ, բայց յայլմէ ումեքէ, որ առ չարամտութեան կամ առ այլոց պատճառաց եղեալ իցէ զայնոսիկ յայն տեղի։ Իսկ արքեպիսկոպոսին համեմատեալ զձև գրչութեան թղթոյն ընդ այլոց թղթոց, գրեալ ձեռամբ կրօնաւորին՝ ասէր, թէ ՚նորա իցէ գրուածն։ Յայնժամ խնդրեցին յարքեպիսկոպոսէն, զի կոչեսցէ զամբաստանեալն ի հարցափորձ առաջի նոցա։ Եկն եկաց ՚նա յատենի, խռովեալ իմն երեսօք և իբրև հարցաւ յարքեպիսկոպոսէն, թէ զի՞ իցէ արդեօք զթուղթսն՝ պատասխանի ետ, թէ արդարև առ ՚նորա էին թուղթքն, այլ ոչ էին ՚նորա, քանզի պատահարար իմն եղեն, և զի չէին անդ տասանք, ոչ ճարմանդ և ոչ սերմանք։ Եւ ո՞վ եղ զայսոսիկ անդր, եհարց արքեպիսկոպոսն զայրացեալ, և ընդէ՞ր ունէիր զայն ընդ ծածկութի սեղանոյն, և ո՞ ոք առաւել քան զքեզ բղձացեալ է, ընդ իշխանութեամբ իւրով ՚նուաճել զդատաւորս և զկանայս։ Յայնժամ ասացին դատաւորքն. Եկեսցէ քահանայն որ զայս եգիտ և երդմամբ առաջի ամենեցուն պատմեսցէ հանդամանօրէն, թէ երբ և որպէս և ուր եգիտ զթուղթն զայն։ Եկն քահանայն Յակոբ ի կոչ արքեպիսկոպոսին և հաւաստի երդմամբ յայտ արար՝ թէ զթուղթն եգիտ և զամենայն որ ինչ ի նմա։ Իսկ ամբաստանեալն ոչ ուրանայր յանձն, թէ ՚նորա իցէ գրեալ զայն թուղթ. ուստի ածաւ անդրէն ի բանտ, և դատաւորքն զեջան փոքր մի ի խստութենէն։ Եւ յայնմհետէ մինչև ցայսօր բազումք գան առ իս, որ ունին զայն թուղթ մօրութեան՝ տեսանել զայն և փորձառու գոլ, թէ արդարև Սիմէոնի քահանային իցէ ձև գրչութեանն, որ զի թէպէտ և հաւատարիմ յայտ թուէր, այլ չեղև հնար ստուգելոյ. վասն որոյ խորհուրդ ետու արքեպիսկոպոսին, զի դադարեսցէ ի քննութեանցն և հարցափորձից, զոր պահանջէր ժողովուրդն, արձակեսցէ զկալանաւորն և ի ծածուկ վտարեսցէ արտաքս յերկրէ պետութեանս, քանզի և

ամբաստանեալն խնդրէր, զի արձակեսցի։ Եւ յայն սակս մա-նաւանդ զայս խորհուրդ եառ արքեպիսկոպոսին, զի մի եւս համոզեալ ժողովրդեանն ի փաստիցն այնոցիկ յանիրաւութիւն կրօնաւորին՝ ոչ դադարէր կոչել զնա սուրբ եւ նահատակ, եւ խնդրէր իսկ զթուղթս մաքրութեան հնարել արքեպիսկոպոսին՝ զի այնու ապացուցէ արժանի ի քահանայէն, եւ իմ՝ զի այնու մերժեսցեն զնա ի պաշտամանէ, նորա առ այդ երկրութեան վա-նացն, եւ առցցեմ զպաշտօնն հակառակորդին նորա, Յակոբու քահանային։ Եւ արձակեաց զնա արքեպիսկոպոսն, (որպէս պատմեն Լատինացիք) յետ թախանձանաց ասորս ինչ եւ կա-տարեաց, զոր ինչ խնդրեցին։ Եւ այսպէս փրկեցաւ կրօնա-ւորն ազատութեամբն Աստուծոյ ի 16-րդի աւուր Յուլիսի 1666 ամին։ Մեկնեցաւ անտի ի Կաֆա, ուրանօր այլ զակամք էն նորա, եւ յետ ժամանակաց ինչ չոգաւ անտի ի Հայս եւ վանահայր է զարգիս ի վանս ինչ։ Զկնի յաջող կատարածի այսր գործոյ, աշխատ եղէ նոր ի նորոյ վասն հրամանի ձեռ-նադրութեան յիշատակելոյն Նարսամայ, եւ վասն յաջողութեան եղեն միջնորդ կարգոյ սորա բազում եկեղեցիք։ Հասեալ ուրեմն հարկ եղեւ արքեպիսկոպոսին զիջանել ի յաճախակի խնդրուա-ծոց Անդրէի Գոստեկեայ, արքունի գրօշակակրի յայնմ ժամա-նակի, որ զարդիս զօրապետ է Կիևի, որ խնդրէր յարքե-պիսկոպոսէն կարգել առաջ երէց եկեղեցւոյն Հայոց ի քաղաքին Ստանիսլաւով, զոր ինքն շինեալ էր. քանզի թափուր էր եկեղեցին ի ծխատէր քահանայէ, յետ մեկնելոյ անտի Յովսեփայ քահա-նային արեւելցւոյ։ Զնոյն խնդրէր եւ արքեպիսկոպոսն Իլ փոփոյ։ Եւ այսպիսի եղանակաւ ձեռնադրեցաւ Նարսամ ի քահանայու-թիւն ի 20-րդի աւուր Յուլիսի 1666 ամին, ընդ որ զուարճ եղեւ մեծագոյն մասն ժողովրդեանն։ Եւ զայն զդաւանութիւնն կաթոլիկ հաւատոյ՝ հրամայեաց նմա արքեպիսկոպոսն Հայոց երկնել յեկեղեցւոջն հրապարակաւ՝ թէ միացեալ զվախճան ի Ստանիս-լաւով քաղաքի առ եկեղեցեաւն, յորում կարգեցաւն երէց։

Յետ այսորիկ, քանզի նորատաւոր թուէր ինձ ժամա-նակն՝ փութացայ անդրէն պատրաստել զարքեպիսկոպոսն Հայ-ոց—զի թէպէտ եւ պատանի էր տիորք, այլ իբրաւ իբր զնալի բաս չուզայ Հ. Կղեմենտեայ, գործոն քարոզչին եւ ու-

տուչէին ինձ — որ այնչափ մեղմեցաւ, զի կամաւ կամ ակամայ տանէր զամենայն, զոր ինչ խրատամբք պահանջէի ի նմանէն. ապա սկսայ պնդութեամբ թախանձել՝ զի արասցէ զուղևորութիւնն ի Կամենից, զոր խոստացեալն էր: Այլ իբրև ծանեայ՝ թէ ոչ կարէ ինձ յօժարել ընդ այս սիրտ նորա, խնդրեցի ի նուիրակէն Պրիմատելլեայ, զի հաճեսցի գրել առ արքեպիսկոպոսն յայտնապէս: Ընկալեալ նուիրակին զձև նամակին, զոր ես ինքնին յօրինեցի՝ համաձայն պատրաստել թուղթ բառ առ բառ համանգոյն թղթոյն ինձ և հրամայեաց տալ զայն յանուն իմ, որպէս զի համարձակ ես լցեմ ի գործելս իմում: Եւ այս է պատճէն թղթոյն:

«Վերապատուելի Հայր. խնդամ յոյժ ընդ թուղթն ձեր, յորում ծանուցանէք զջերմ եռանդն արքեպիսկոպոսին Հայոց, զոր ցուցանէ ի պատժելն զՀերետիկոսս և ի վարելոյ ի հօտէ իւրմէ զգայլսն գժոխայինս. այլ վասն ընդդիմադարձութեանն և խռովութեանց արանցն, հակառակորդաց գործոյն Աստուծոյ՝ յորդորեմ ի սրտէ զՎերապատուելի Հայրդ՝ մի զանգիտել ի նոցանէ, ախոյեանդ ամենեցուն, որ ձեզն հակառակ կան. ջանացայց խնդրել ի Սրբոյն Առաքելական Մեծութենէն, կամ ուստի անկն է՝ զի գոջէք օգնութիւն և պաշտպան յամենայն ժամանակի, յորժամ հարկ օրինաւոր կայցէ ի մէջ: Այլ ընդ այն զարմանամ, զի չէ ինչ փոյթ արքեպիսկոպոսին երթալ ի Կամենից, զոր ինուագս նուագս խոստացաւ Առաքելական Մեծութեանց, որպէս յուշ արար ինձ կանոնիկոսն Մախոմակի, և արքեպիսկոպոսին Իլփովայ և հանգուցեալ Հօրն Կղեմենտեայ և նոյն իսկ և հաւսկ ապա սարկաւագին Իլփովայ, որ աւուրբք ինչ յառաջ զայսմանէ գրեաց ինձ: Վասն որոյ յանձին կալջիք, Հայր Վերապատուելի, յուշ առնել նմա՝ թէ կարևոր է այս գործ: Անշուշտ լիջիք, թէ զայսմ գործոյ արքեպիսկոպոսին և զատուբերմանէ նորա բանք բազում լիցին յաջողուն: Ուստի հարկ համարիմ, զի Վերապատուելի Հայրդ հարցանիցէ ի նմանէ յայտնապէս՝ կամիցի՞ արդեօք գնալ անդր թէ ոչ, զի ըստ այնմ փութացայց և ես: Եթէ ոչ կամիցի, կամ կարիցէ իսկ ոչ երթալ ի Կամենից յընթացս եօթնեկի միոջ՝ ստիպեցայց խնդրել ի Սրբոյն Մեծութենէն՝ զի այլով իւիք եղանակաւ հարկե-

ցուցէ յուղղութիւնն զքաղաքին, որ համարի միաբանեալ գոլ և ունի զպարտաւորութիւնն, շնորհելոյ միաբանելոցն, այլ մինչև ցայսօր ժամանակի յարատևէ ի միաբանութեանն և ի հնազանդութեան: Զայս կամեցայ տալ վերապատուելի Հօրդ, որում մնամ բարեկամակամ և մատուցանեմ համբոյր Աջոյն:

Ի 10-ն Յուլիսի 1666. Առաքելեալ.

Ի Վարշաւայ: Եպիսկ. Լարիսայ, Պիգնատելլի:

Իբրև ընկալայ զԹուղթն, որ ծանուոր էր յոյժ խորհրդոց մերոց՝ տարայ անդէն առ արքեպիսկոպոսն Հայոց, որ հրաման ետ թարգմանել զայն ի լեզու Հայոց և Լեհացւոց, և խորհեալ առաւել երիս՝ ուր ուրեմն յայտնեաց ինձ, թէ կամք են նմա ընդ հուպ գնալ ի Կամենից, և խնդրեաց՝ զի ծանուցից զայս սրբազան նուիրակին: Արդ մեծու յանձնառու եղէ կատարել զայս, այլ կարի երկնչէի, զուցէ ոչ կայցէ ի բանին, որպէս առնէր բազում անգամ: Բայց տեսեալ, թէ պատրաստի աճա յուղևորութիւն՝ կարեւոր վարկայ զնոյն առնել, զի ուղեկից նմա եղէց: Ոչ կամէի թողուլ զնա երթալ առանձինն, զի մի ի խորս արկցէ զնա երկրորդ անգամ՝ թէ մեծ զգուութիւնն յաջողութեամբ, և ոչինչ արասցէ գործով: Վասն որոյ, քանզի ժամանակ արձակուրդին էր՝ յանձն առի զվարչութիւն զպրոցացն քահանայցն Յակոբու և առի ընդ իս չորեսին աշակերտս զպրոցին մերոյ, որ ի Կամենիցէ և յՅազլովիցէ գոլով ծննդեամբ՝ նպաստաւոր լինէին արդեօք առ ի ձգել ի մեզ զսիրտ ժողովրդեանն և ի համոզել զնոսա յուղղափառութիւն եկեղեցական մասնկացն. և զի մարթ իսկ էր նոքօք հիմնարկել անդ զպրոցս նոր, եթէ հարկ լինէր, քանզի ուսանէին նոքա յայնժամ զքերականութիւն և զթուաբանութիւն. և այսպիսի պատրաստութեամբ անկաք յուղի ողորմութեամբն Աստուծոյ ի 27-րդի աւուր Յուլիսի 1665 ամին: Ընդ մեզ էին և փոխանորդն Հայոց, թէպէտ և սակաւ մի խռովեալ էր յաւուրսն յայնոսիկ:

Յամին 1666-ի յ31-րդի աւուր Յուլիսի ողջամբ ժամանեցաք յՅազլովից, ուրանօր սիրելապէս ընկալեալ եղաք ծառից և հանդիսաւոր պատրաստութեամբ և տանեցաք անդ

զԱյլակերպութիւն Տեառն, որ տօն երեւելի է ի Հայս։ Հան-
դէս արար եկեղեցւոյն փոխանորդն մեծաւ շքով և գեղեցիկս
կարգաց յորդոր քահանայից՝ զի ջերմեռանդն լիցին ի պաշտա-
մանս իւրեանց և պահեսցեն զմիութիւնն, ի բաց թօթափելով
զմոլորութիւնս, զորս խոտէ կաթողիկէ եկեղեցին, այս ինքն է
զերրակի կրկնութիւն բանին ի խորհրդեան մկրտութեան,
զծունր քահանայից մեկնոց, զպաշտօնն աստուածային, զոր
մատուցանէ ժողովուրդն՝ նշխարին և բաժակին յառաջ քան
սրբագործել իւրեն պատարագաւ. ուսոյց նոցա օծանել
զհիւանդս, զոր ի բազում ժամանակաց հետէ խափանեն Հայք։
Նաև ուղղագրեաց ընդ իս գիրս նոցա եկեղեցականս, իմա-
զգիրսն երգոց որ Շարակնոց կոչի և զՄաշտոցն և զՅայսմա-
ւուրս, որ է փոքր սրբոց հայերէն։ Այլ ի փոխարինութիւնս
անոյ սրբոց, որ երկարաձիգ են յոյժ և արգել, բայց լի են մոլո-
րութեամբք՝ ոչ միայն ուղղագրեցաք զմոլորութիւնս, զորս
ի քաղաքի անդ Կիլիկեցւոց արարեալ էր մեր, այլ և զՀե-
տագայոյ.

Ի 21-րդի աւուր Օգոստոսի ի տօնի Ս. Յուստինիանոսի՝
—յառաջագոյն յաշխանի էր անծանօթ Հայոց. այլ արդ փառօք
Հնով ասմարաւ.—Թէ էջ Քրիստոս ի տարտարոսն և ազա-
տեաց անտի զգերեալսն զամենեսեան։

Ի 22-րդի աւուր Օգոստոսի ի տօնի Ս. Առաքելոյն Թով-
մասու՝ Թէ յորժամ ոչ կամէր Թովմաս գնալ ի Հնդիկս վասն
մեծի տաղդին, վաճառեաց զնա Քրիստոս Հնդկի ումեմն, որ
խնդրէր ճարտարապետ. և ստացաւ բազում աշակերտս։

Յ3-րդի աւուր Սեպտեմբերի. զյիշատակութիւն պա-
տիր հրաշից ինչ ընդդէմ սրբոյն Լեւոնի և Ս. Ժողովոյն Քաղ-
կեդոնի։

Ի 6-րդի աւուր Սեպտեմբերի. զի յաւուր յիշատակու-
թեան Հինգ Հազար կուսանացն վկայից Հերեւեիկոս կոչեն զկայս-
րըն Յուստինիանոս, որ Հաւանեաց զՀայս ընդունել զժողովն
Քաղկեդոնի։

Ի 10-ն Սեպտեմբերի. ի տօնի Ս. Պօղոսի եպիսկոպոսին
յիշատակի երկրորդ անգամ, թէ ազատեաց Քրիստոս զհոգիս
կապելոցն ի դժոխս։

Ի 20-ն Սեպտեմբերի. յիշատակի ձեռնադրութիւն կնոջ ուրումն ի սարկաւագութիւն. քանզի համարին Հայք՝ թէ ընդունակք են կանայք բարձրագոյն աստիճանաց կարգի։

Յ13-ն Սեպտեմբերի. ի նախատօնակի Գիւտոյ Ս. Խաչին պատմի, թէ զտօն Գիւտոյ Ս Խաչին կատարէր Ս. Հեղինէ զոհիւք ըստ Հրէից և զենմամբ խոյոց. ասի նոյնպէս, թէ, մայր ազգաց է եկեղեցին Հայոց։

Ի 15-ն Սեպտեմբերի. վասն յիշատակելոյ ի վերայ պատճառաց կոչեն զկայսրն Յուստինիանոս հալածող քրիստոնէից։

Ի 24-ն Սեպտեմբերի. զտանջանս դժոխոց ոչ անվախճան գոլ ասեն։

Ի 25-ն Սեպտեմբերի յիշատակի հերետիկոսն Սարգիս։

Ի 27-ն Սեպտեմբերի, յաւուր տօնի Ս. Կալիստրատեայ ասեն՝ թէ ոչ անդէն յետ մահու լինի հատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց. և թէ սուրբքն Աստուծոյ չև ևս իցեն յերկինս և ոչ տեսանիցեն զերեսս Աստուծոյ։

Ի 28-ն Սեպտեմբերի. թէ չէր անփորձ և անարատ Ս. Յովսէփ, ընդդէմ ընդհանրական կարծեաց Կաթոլիկ եկեղեցւոյն։

Յ2-ն և ի 4-ն Հոկտեմբերի, ի յիշատակութեան Ս. Դիոնեսեայ ասեն՝ թէ ոչ սրով վկայեաց այլ հրով։ Այլ ոչ ի կարևորաց են իրքն։

Յ3-ն Հոկտեմբերի, ի յիշատակութեան Ս Կիպրիանոսի ասեն՝ թէ ձեռնադրեաց նա զՅուստինէ ի սարկաւագութիւն։

Ի 4-ն Հոկտեմբերի. յիշատակի որձակումն սատանային, որ կապեալ էր ամս հազար ըստ Յայտնութեանն։ Ասի անդ և այս՝ թէ անհնարինք էին հրամանք Աստուծոյ։

Ի 6-ն Հոկտեմբերի. յիշատակութիւն Ս. կուսին Գայիանեայ վկայուհւոյն, յորում պատմի, թէ կաթողիկոսն և Լուսաւորիչն Հայաստանի Սուրբն Գրիգոր տօնեալ իցէ զյիշատակ կուսին զենմամբ խոյոց և ոչխարաց։

Ի 14-ն Հոկտեմբերի. յիշատակի Ս. Ժողովն Եփեսոսի, և են անդ բանք բազումք հայհոյականք ընդդէմ Ժողովոյն Քաղկեդոնի և Ս. պապին Լևոնի, Ս. կայսրուհւոյն Պուղխերեայ և բարեպաշտ կայսերն Մարկիանոսի։

Ի 21-ն Հոկտեմբերի. յիշատակի հերետիկոս ոմն Մակա-

րիոս անուն։ Ի 23-րդի, ի 24-րդի և ի 26-րդի աւուրս Փետըր-վարի յիշատակի, թէ Ս. Յովսեփայ չեղէ լեալ անարատ։

Յ17-ն Նոյեմբերի տօն է Ս. առաքելոյն Փիլիպպոսի, և պատմի, թէ մինչ ի վերայ խաչին էր, ոչ ժուժեալ տանջանացն՝ հայհոյել կալաւ զդահիճն և զժողովուրդն անհաւատից, որ նեղեալ էին անդր, և թէ վասն այսորիկ ոչ ընկալաւ հոգի նորա անդէն յարքայութիւն, այլ յետ քառասնօրեայ զղջման։

Ի 5-ն Դեկտեմբերի տօն է Ս Սաբբանոսի կրօնաւորին, և են բանք հայհոյութեան ընդդէմ Ս. Ժողովոյն Քաղկեդոնի։

Յ19-ն Դեկտեմբերի՝ խօսակցութիւն հերետիկոսական ընդ Ս. Գրիգոր Լուսաւորիչ և ընդ հրեշտակին, ընդդէմ փըրկարար տեսլեանց։

Ի 25-ն Դեկտեմբերի տօն է սադմոսողին Դաւթի և Յակովբայ առաքելոյն, յորում ջատագովէ չար սովորութիւնն Հայոց, զի զԾնունդ Քրիստոսի տօնեն ի 6-ն Յունվարի։

Ի 27-ն Դեկտեմբերի տօն Ս. Պետրոսի և Պօղոսի, և են անդ հայհոյութիւնք ընդդէմ Ս. Ժողովոյն Քաղկեդոնի։

Ի 6-ն Յունվարի տօն Ծննդեան Յիսուսի Քրիստոսի, զոր հարկ է տօնել ի 25-ն Դեկտեմբերի. զայսմ խոստովանէ նոցա է ջատագովութիւն և ի 25-ն Յունվարի։

Յ2-ն Փետրուարի՝ տօն Բարսամայ կրօնաւորի, հերետիկոսի։

Ի 6-ն Փետրուարի տօն Վարդանայ, նոյնպէս հերետիկոսի։

Ի 16-ն Փետրուարի տօն Ս. Գրիգորի վարդապետին, աշակերտի յիշատակեալն Վարդանայ. սա ևս համարի հերետիկոս։

Ի 10-ն Մարտի. խօսակցութիւն ծաղրական ընդ Քրիստոս յետ յարութեանն և ընդ անդամալոյծ ոմն վաղօրեայ։

Ի 14-ն Մարտի՝ տօն Գրիգորի Տաթևացւոյ, վանդաւոր հերետիկոսապետին։

Ի 16-ն Մարտի պատմութիւն ծաղրական վասն յարութեան Ղազարու և ազատութեան նորա յիշխանութենէ սատանայի։

Ի 28-ն Մարտի՝ յիշատակին հրաշք ինչ պատիրք ի ջատագովութիւն կեղծ լուսոյն Երուսաղէմի ի վերայ գերեզմանին Քրիստոսի։

Յ17-ն Ապրիլի՝ տօն Յովհաննու Օձնեցւոյ, չարաչար հերետիկոսապետի և հեղինակի հերձուածոյն Հայոց։

Յ19-ն Ապրիլի՝ ջատագովութիւն կեղծ լուսոյն։

Ի 28-ն Ապրիլի յիշատակի Ժողովն Մանազկերտի, յորում ընկալան Հայք զհերետիկոսականն վարդապետութիւն՝ թէ մի կամք և մի բնութիւն իցէ ի Քրիստոս, և խոտեցին զՍ. Ժողովն Քաղկեդոնի։

Ի 28-ն Ապրիլի յիշատակ հերետիկոսաց ոմանց տարիստանեայց մարտիրոս կոչեցելոց, զորս պատուին Յոյնք։

Ի 24-ն Մայիսի, անհաւատալի փոխումն մասին Ս. Պետրոսի առաքելոյն ի Հայաստան։

Ի 27-ն Մայիսի հայհոյութիւնք զՍ. Ժողովոյն Քաղկեդոնի, ի յիշատակութեան հերետիկոսաց ոմանց։

Յ30-ն Յունիսի՝ յիշատակ երկոտասան առաքելոցն, յորում կրկնի առասպելն յաղագս չժուժելոյն Ս. Փիլիպպոսի ի վերայ խաչին։

Ի 21-ն Յուլիսի, ի տօնի Ս. վկային Աբիձոնի եղեալ են բանք անվայելք։

Ի 24-ն Յուլիսի՝ տօն Ստեփանոսի հերետիկոսին ի Սիւնէ։

Յ30-ն Յուլիսի, ի յիշատակի Ս. Գրիգորի Անեցւոյ են զարմանալ հայհոյութիւնք զՍ. Ժողովոյն Քաղկեդոնի։— Եւ այլ առասպելք բազումք, զորս ուղղագրեցաք ըստ կարգի։

Ի շարս սորա քահանայից, եկելոց յՆաղովեց ի տօնավաճառն, որ ի յոյժ երեւելեացն է ընդ ամենայն աշխարհն՝ էր և ծխատէր քահանայն Սեբաստինի, Թէոդորոս անուն, որ հաստատէր միշտ՝ թէ ծնեալ է յեկեղեցին իւր զուգղութիւնն. և յիրաւի, առաջի մեր զպատարագն մատուցանէր նա ըստ արարողութեան Լատինացւոց։ Այլ և ցանկացաւ գալ ընդ մեզ ի Կամենից, յոր անկաք յուղի ի միասին ի 10-րդի աւուր Օգոստոսի, կացեալ յՆաղովեց քաղաքի աւուրս սակաւս։ Մինչ անդն էաք՝ ընկալաւ արքեպիսկոպոսն ի ժողովրդենէն ոսկիս 30 գրեթէ ստիպմամբ և այլ եւս ոսկիս մաճառս 70 իբրև տուգանս ստիպմամբ հարկի եհան ի վարդապետէ ումեմնէ Հայոց, քահանայէ արեւելցւոյ, զի զգեցեալ նորա համգերձս աշխարհականի տանէր վաճառականութիւն. (և հարկեցաւ նա և այլոց եւս քահանայից Հայոց ընդ մեզ եկելոց տալ կաշառս, զոր օրինակ, ոսկիս 40 փոխանորդի արքեպիսկո-

պոսին. իսկ քահանայն մեր Գրիգորիոս Բալասան ոչինչ կամեցաւ առնուլ)։ այսու գլխաւորք գնոց էառ արքեպիսկոպոսն երիվարս հինգ տաճիկս, զի ապա վաճառեսցէ արդեամբ։ 312-րդի աւուր Օգոստոսի ժամանեցաք ի Կամենից, ուրանօր, հանգոյն որպէս յՆազլովից քաղաքի՝ ընկալան զմեզ եկեղեցականքն և ժողովուրդ Հայոց, ընդ առաջ ելանելով մեզ մղոնս ինչ ձիովք կամ կառօք, հանդերձ քահանայիւք ոմանք, զորս առաքեալ էր հոգևոր վարչութեանն Լատինացւոց քաղաքին։ Յետ ողջունից խնդակցութեան յամենից ոմանց զգալըտենէ մերմէ և յետ ճառախօսութեանց ի լեզու Տաճկաց և ի Լեհացւոց, որպէս սովորութիւն է նոցա՝ ետու հրաման ումեմն յաշակերտաց մերոց, Բաղդասարայ Բալէկչի, Կամենեցւոյ ծննդեամբ՝ զի տասցէ ճառ ողջունի առ արքեպիսկոպոսն ի գեղաւոր լեզու Հայոց, ընդ որ բերկրեցաւ ժողովուրդն, թէպէտ և ինքն գոյզն ուրեք վարէր այնու լեզուաւ։ Իբրև եմուտ արքեպիսկոպոսն ի քաղաքն՝ չոգաւ ի մայր եկեղեցին Հայոց, և զի իսկ և իսկ ժամ էր երեկոյեան պաշտաման՝ հրամայեաց իսկոյն կատարել զպաշտամունսն ըստ ամենայն ուղղութեանցն, մուծելոց ի մայր յաթոռանիստ եկեղեցին, և ոչ ոք ընդդէմ եկաց այսմ հրամանի։ Այլ իբրև յուզարկեցին զատաւորք զարքեպիսկոպոսն ի տուն աւագ երիցուն և կարգեցին նմա բնակարան կարի պատշաճաւոր՝ տրտնջել կալան զչարաչար ամբաստանութեանց զնոցանէ առ Նորին Սրբազական Մեծութիւնն, իբր թէ հերետիկոսք իցեն և անհնազանդք. և յայտ արարին համարձակ ձայնիւ՝ թէ միաբանեալք են նոքա և հպատակք իշխանութեան իւրեանց։ Առ այս պատասխանի ետ արքեպիսկոպոսն, թէ դիւրին է յոյժ ցրել զամբաստանութիւնսն, հնազանդ գոլով ամենայնի, զոր ինչ հրամայեն նոցա Սրբազական Մեծութիւնքն, և զի յորժամ կատարեսցեն զայնոսիկ՝ յերթալն իւրում ի Վարշաւայ՝ բարի յոյժ զնոցանէ խօսեսցի։ Յուսացեալ արքեպիսկոպոսին իբրև զատաւորացն թերևս առաւել քան զչափն՝ ի նմին իսկ երեկոյի հրամայեաց երկուց քահանայից Կամենեցի ի վաղիւ անդր մատուցանել պատարագ (ըստ արարողութեան Լատինացւոց)։ այլ նոքա արարին պատասխանի, թէ չեն պատրաստք յայն ինչ.

առ որ յանդիմանենաց արքեպիսկոպոսն լի սրտմտութեամբ՝ թէ է գիշեր մի բովանդակ ի պէտս պատրաստութեանց. և նոքա հնազանդեցան և չեկին ի վէճ:

Ելեալ ապա նոցա արտաքս յարքեպիսկոպոսէն չոգան անդէն առ դատաւորսն, (ըստ դաշանցն յարձակման և պաշտպանութեան, կնքոց ընդ միմեանս յառաջագոյն քան զժամանել մեր անդր) և յայտ արարին՝ թէ հարկ եդ ի վերայ նոցա արքեպիսկոպոսն ի վաղիւ անդր մատուցանել պատարագ, խառնելով ջուր ի բաժակն (որպէս կարծէին) և պաշտելով զարարողութիւնն զամենայն մուծեալս յայլ եկեղեցիս: Եւ դատաւորքն ետուն նոցա խրախոյս՝ զի մի յետս կացցեն ի սովորութեանց իւրեանց, այլ մնասցեն յար ի բանին առանց իրիք երկիւղի: Վասն որոյ յաւուրն երկրորդի կանխեալ ընդ քահանայից յառաջ քան զարշալոյսն՝ յետ բազում խորհրդոց եկին ամենեքեան առ արքեպիսկոպոսն և պաղատէին, մի մուծանել արարողութիւնս նորաձև յեկեղեցի իւրեանց: Պատասխանի ետ նոցա արքեպիսկոպոսն խստութեամբ՝ թէ չեն նորա կամք մուծանել նորաձև ինչ յեկեղեցին, այլ ուղղել և եթ կամի մոլորութիւնս ինչ, որ մուծեալ են յումեմնէ ի հերետիկոսաց ումանց, և հակառակ են վարդապետութեան Ս. Գրիգորի և այլոց Ս. Հարց: Խնդրեցին ապա, զի հաճեսցի զնոսա թողուլ յապաղել զայն մինչև ցօրն երկուշաբաթու (քանզի ուրբաթ էր օրն), որպէս զի լուր ևս վերահասու լիցին ճշմարտութեանն: Եւ քանզի հաւանական իրքն թուեցան՝ վասն որոյ և տուաւ նոցա ժամանակ մինչև ցօրն, զոր խնդրէինն: Այլ նոքա զայնու ժամանակաւ առաւել ևս պատրաստեցան ի հզօրագոյն դիմադրութիւն: Եւ յետ բազում խորհրդոց եկին դարձեալ առ արքեպիսկոպոսն ի պայմանեալ աւուրն հանդերձ այլ և այլ մատենիւք և հեղինակութեամբ սրբոց, զորս թիւր իմանային, որպէս զի ցուցցեն մանաւանդ՝ թէ չէ հարկ խառնել ջուր ընդ գինի բաժակին ի ժամ պատարագի, որպէս և ամենայն եկեղեցիք ունին զայս այսպէս: Ի շարս իմաստակութեանցն, ինչքս բերեալ առ ի ջատագովութիւն՝ ցուցանէին և մատեան մի, զոր գտեալ էր նոցա ըստ պատահման և կոչէր. «Պատարագամատոյց գիրք ըստ

պատարագութեան Հայոց, յօրինեալ ի կանոնիկոսէ Անդրէասայ Լեւբլենեցւոյ, քարոզէ Ռոմնեցւոց»*) տպագրեալ յամի Տեառն 1549, ի Կրակով քաղաքի։ Յայսմ մատենի ի մեկնութեանն իւր զայն ասէ, յորում խառնէ քահանայն ջուր ի բաժակն ասելով, «Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» զայս ինչ գրէ յօրինողն. «Թուի ինձ, թէ վասն այսմ մասին Հայք, որք ոչ խառնեն ջուր ի բաժակն. քանզի խափե հրամայեաց պապն Աղեքսանդր Ա. որ կեայր շուրջ զամօք 114, խառնել ջուր ի բաժակն ի ժամ պատարագին, որպէս զի համօրէն բովանդակ կատարեսցէ զչարչարանս Քրիստոսի մատուցանողն պատարագի, և զի ի ձեռն խառնման զօգեալ թուեսցին բազմութիւնք հաւատացելոց ընդ այնմ, յոր հաւատանն։ Վասն այսորիկ մեղ է քահանայից մերոց, որ առ մատուցման կամ առ յուլանալոյ ոչ խառնեն ջուր, թէպէտ և հաւատեան սրբագործեն իսկ ընծայքն ի ձեռս նոցա։ Այսպէս գրեալ է ի մատենին. վասն որոյ և յանձնառեալ յայն ակնարկէին Հայք Կամենեցի, զի զայս ինչ գէթ հաստատեսցեն՝ թէ մարթ իցէ մատուցանել պատարագ առանց գինւոյ և զի ոչ ի Քրիստոսէ պատուիրեցաւ պատարագութիւնն, այլ յԵկեղեցւոյն Հռովմայ, որ և պահէ զայն մինչև ցայսօր։ Նոր և նոցա պատասխանի որպէս անկն էր, ցուցանելով զհնութիւն և զկարևորութիւն խառնմանն ըստ նոցին իսկ գրոցն Հայոց, զորս բերեալ էի ընդ իս յԼվովայ. (այլ զերկարութիւնս Հ. Կղեմենտեայ, զորս ունէի նոյնպէս ընդ իս՝ մերժէին Հայք և ոչ թողուին յայնցանէ բերել նոցա փաստս, քանզի ասէին՝ թէ մատեանքն չեն նոցա, այլ հնարուածք են Փռանկաց. առվին օրինակաւ մերժէին զվկայութիւնս հարց սրբոց և ժողովոց, անդ ի նկլքս ածելոց). իսկ Հայք պնդեալ յամառէին ի վերապահն կարծիս իւրեանց, թէ պատարագութիւնն՝ ընիկ և սեփական է Եկեղեցւոյն Հռովմայ և չէ աւանդութիւն առաքելական կամ պատուիրան Քրիստոսի, զոր ինչ վկայեն պատարագամատոյց գիրք Ս. Պետրոսի, Ս. Յակովբայ և բազմաց այլոց սրբոց, և Ս. Կղեմենտեայ պապին, Յուստինեայ և Իրենեայ նահա-

*) Խորագիրն է Լատիներէն Liturgia seu messa Armenorum ritu, և այլն։

տակացն, Կիպրիանոսի, Բասղի, Ոսկեբերանի, Թէոդորոսի, Գրիգորի, Եփրեմեայ, Հերոնիմեայ, Աւգոստինոսի, Գերմանոսի պապերն Աղեքսանդրի Ա-ոյ եւ Յուլիոսի Ա-ոյ, այնպէս եւ ժողովոցն Կարթագինեայ Գ-ի, Աւրելեայ Գ-ի, Անտիսիոդորոյ, Բրագարէնի Գ-ի, Տրուլանի, Տրիբուրգի եւ Փլորենտեայ, այլ եւ ժողովոցն նոցին իսկ Հայոց, Տարսոնին ասեմ եւ Սսոյ եւ Ատանայի. Թէ այսու արարողութեամբ վարէին միշտ համօրէն եկեղեցիք արեւելից եւ արեւմտից եւ Հայք իսկ, մինչեւ ցժողովն Մանազկերտի, յորում ջնջեաց մերժեաց զայս ի բաց չարադրյն հերետիկոսապետն Օձնեցի, վասն սերմանելոյ ի Հայս զհերձուածն լրիւ եւ իսպառ անհետ առնելոյ զամենայն նշոյլ երկուց բնութեանց ի Քրիստոս: Ոչ սակաւ խոժոռեցան Հայք ընդ գեղեցիկ վկայութիւնն, զոր գտաք ի հնագոյն մատենի միոջ Հայոց, Շարական կոչելոյ, որ ի մեծի պատուի է առ նոսա, յորում զայս ինչ ընթերցաք ի տօնի Ս. Ղուկասու աւետարանչին. «Յիշատակէ Ղուկաս զխառնումն զմիւռոյն խորհրդարար եւ զբեկումն հացին, զոր անբարբառ կատարէ իմաստութիւնն» *): Միով աւել բանիւ, յայս ինչ հակաձայնութիւնքն յանգեցան՝ զի խնդրեցին Հայք վերստին ժամանակ յարքեպիսկոպոսէն, առ ի մտանել ի բանակցութիւն ընդ կաթողիկոսին, քանզի առանց յատուկ հրամանի նորա եւ առանց թոյլտուութեան պապին ոչինչ կարեն առնել, ըստ պատուիրելոյ վերջնոյ նուիրակի կաթողիկոսին ի քարոզս իւր եւ ի թղթին, զոր գրեաց նա նոցա ի Վալախիոյ. (այնու ակնարկել թուէին, թէ ոչ ըստ յատուկ հրամանի Հռովմայ կամիցին զուգդութիւնս մուծանել, այլ մանաւանդ ըստ ազատ հաճոյից մերոց): Պատասխանի արար արքեպիսկոպոսն՝ զի թէպէտ եւ պապին է իշխանութիւն յայսմ մասին՝ այլ չէ հարկ առնել զհրաման նորա, զի ի բազում ժողովս եւ ի սրբոց հարց կարգեալ է արարողութիւնն. եւ զի կամք նորա յայտնի են ապաքէն ի թղթոց նուիրակի նորա եւ այնու՝ զի անդէն աւանիկ է քարոզիչն առաքեալ ի Ս. Աթոռոյն ի պէտս գործոյ Միութեանն. իսկ վասն կաթողիկոսին՝ զի թէպէտ եւ պատուէ

*) Ցարդ ի Շարակնոցի մերում չիք ուրեք բան այսպիսի: Թարգմ.

գնա և համարի իշխանաւոր մերձաւորագոյն ի վերայ իւր և յաջորդ օրինաւոր Ս. Գրիգորի Լուսաւորչին, — որպէս և առ հասարակ համարի զամենայն կաթողիկոսունս ընտրեալս կանոնական կարգաւ, եթէ հնազանդ միայն լիցին Ս. Եկեղեցւոյն Հռովմայ զօրէն Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ — այլ յայնմ գործի ոչ կարէ և կամի իսկ ոչ թոյլ հրամանի նորա։ Յաւել արքեպիսկոպոսն, թէ թուղթն նուիրակին գրեալ ի լեզու Թաթարաց, յոր ակնարկէինն, ոչ ի նուիրակէ անտի է յօրինեալ, քանզի ոչ էր տեղեակ նուիրակն լեզուին Թաթարաց. այլ հաւանօրէն այլ ոք եւս զայն և խարդախօրէն գրեաց զնա ստորագրել, մինչ հանդերձէր մեկնել ի Կամենիցէ, վասն որոյ և առ ոչինչ ունի զայն թուղթ. և հուսկ ասաց՝ թէ ոչ միայն կշտամբեալ է զարգիս նուիրակն ի կաթողիկոսէն ըստ պատշաճին, որ հաւանական է յոյժ կարծել, այլ և տացին հրովարտակք յարքունուստ՝ զի այնուհետև մի ևս ի պետութիւնն մտանիցեն խառնակիչք այնպիսիք։ Ոչ կարի հաճոյ թուեցաւ այս ի քիմս նոցա, վասն որոյ և խնդրեցին աւուրս ինչ յաղագս խորհելոյ. հարկ եղև կատարել զխնդիր նոցա, զի մի խռովութիւն յարիցէ ի նոսա։ Մ՛ինչև մեկնել յԼ՛վովայ, խնդրեալ էր մեր զգիտութիւն նուիրակի պապին յայնպիսում ծանր գործի, և ըստ այսմ ընկալաւ արքեպիսկոպոսն հրովարտակս երկուս յարքունուստ, մին յանուն զօրապետին Պոդոլսկեաց, ամրոցապետին Կամենիցի, զի տացէ մեզ պահապանս և զօրս, եթէ խռովութիւն ինչ ծագեսցի. երկրորդն յանուն նորին իսկ արքեպիսկոպոսին, այլ ոչ այնու տարազեւ, որպէս մեքն կամէաք առ ի ցուցանելոյ զայն ժողովրդեանն Հայոց. քանզի փոխանակ յայտնապէս պատուիրանին ուղեւորելոյ ի Կամենից, անգիտանամ զնորդ՝ գրեալ էր անդ վկայութիւն և եթ բարի կ գայլանոցէն մերմէ։ Ոչինչ ճահաւոր եղև մեզ հրովարտակն առաջին, քանզի ի ժամանակին յայնմիկ չէր ի Կամենից զօրապետն Պոդոլսկեաց, և ևս անօգուտ երկրորդն, քանզի չէր ի նմա յիշատակութիւն ինչ զՄ՛իութենէ Կամենից քաղաքին։ Ուստի եթէ խռովեալ էր յայնժամ ժողովրդեանն համարձակ յայտնապէս՝ ծանրանայր ապաքէն վիճակ մեր. այլ դատաւորքն և քահանայք հաճե-

ցին զմիտս ժողովրդեանն, թէ յուշինչ արկցեն ձեռն, չեւ ընկալեալ հրաման ի կաթողիկոսէն և յարքայէ: Այլ և ամենք, որ համոզէին զՄեզ խնդրել զօրավիգն ի փոխանակէ ամիրացապետին, որ ժամանակաւոր վարէր զայն պաշտօն և սիրելաբար յանձն առնուլ օժանդակել Մեզ: Այլ ոչ ի ձեռն համարեցաք մեք զայս, զի մի և ես զրգռեսցի ժողովուրդն և կասկածանս ունիցի, թէ բանագրօսիցեմք զնա ի գործն: Իսկ Մեզ հարկ եղև երթալ առ զատաւորս ամենս, որք ըստ մեծի մասին խօսին ի լեզու Լատինացւոց՝ առ ի համոզել զնոսա, թէ քանի անճահաբար վարին, յորժամ պահանջեն կալ մնալ պատասխանւոյ ի կաթողիկոսէն, և ի ցուցանել՝ թէ վասնզի իսկ է ապաքէն կաթողիկոսին ընդդէմ կալ կամաց մերոց, զոր և զուցէ արասցէ, զրգռել ի բազմութիւն թշնամեաց եկեղեցւոյ շուրջ զնովաւ եղելոց, քանզի այնու խռովութիւնք անշուշտ ի ներքս անկանէին: Իսկ եթէ զանց արարեալ զայնու ամենայնիւ, հաճեսցի կաթողիկոսն ընդ ուղղութիւնն, ընդ որս հաւանեալ են նոքա (զատաւորքն), վասն Միութեանն կալելոյ ընդ արքային, յորմէ և շնորհս բազումս գտին յառաջս այնորիկ՝ և առաքեսցէ նոցա պատասխանի բարեյաջող՝ հակառակորդք նորա անշուշտ ամբաստան լեցին զնմանէ առ Տաճիկս, որով զուցէ ի կաթողիկոսութենէն վարեսցի ի բաց կամ զոնեա տուժեսցի զվիճակն, որ ընդ իշխանութեամբ նորա են յերկրին Օսմանցւոց:

Թէպէտ և օրինաւոր համարէին զատաւորքն զփաստս զայսոսիկ, այլ պնդեալ յարատևէին ի խորհուրդս իւրեանց. վասն որոյ պատշաճ վարկայ զիմել ի հոգևոր Վարչութիւնն Լատինացւոց վասն գտանելոյ օգնականութիւն յիրսն դժուարինս և վասն պահելոյ ունելոյ և առ այս՝ զոր ինչ յաջողէր Մեզ Տէր ի ժամանակին յայնմիկ: Սիրելաբար ընկալեալ եղէ ի Վարչութենէն և առաջի արարի զպատճառս զալստեան իմոյ և թէ ընդէր առաքեցաք այսր ես և բարեյիշատակ Տ. Աղեքսանդրոս ի Ս. Ժողովոյն Ծաւալման հաւատոյ, և յանուն նորին Ժողովոյն խնդրեցի ի Վարչութենէն խորհուրդս և օժանդակութիւն ի դժուարին գործին, զոր ձեռնարկեալս էի: Ճարտարախօս բանիւք արար առ այս պա-

տասխանի վերատեսուչ Վարչութեանն, քահանայն Լեչինսկի (կամ Լեշչինսկի), ջերմեռանդն պաշտպան պապականութեան մերոյ, գովելով զՍ. Աթոռն, որ այնպիսի փութաջանութեամբ և այնքանի ծախուք ի պէտս քարոզչաց և առաքելութեանն՝ հետամուտ է ի բովանդակ ծագս աշխարհի զարձուցանել խառնել զմոլորեալ ոչխարս ի հօտն Քրիստոսի, և խոստացաւ մեզ օգնութիւն առհասարակ և օժանդակութիւն: Առաջարկեցի ապա նմա զհետագայ կէտս, զորս կարեւոր համարեցայ առ ի պահել յապայ ժամանակի զՄիութիւնն, զոր գլխաւորել յուսացեալ էի օգնութեամբն Աստուծոյ.

Կէտք առաջարկեալք Գերապատուելի Հօրն Վարչութեան Կամենեցէ է Պ. Ալիշանեան Մ. Պետրոս, վասն կրօնաւորէ և պարունակէ Առաքելական Ս. Աթոռոյն առ Հայս, վասն միութեան Եկեղեցւոյն Հայոց Կամենեցէ ընդ Ս. Եկեղեցւոյն Հռովմայ:

1. Որպէս զի գլուխն լիցի պահպանել յապագային զՄիութիւն եկեղեցւոյն Հայոց Կամենիցի ընդ Ս. Եկեղեցւոյն Հռովմայ (որ ի սուղ ժամանակի կատարեցի, որպէս յուսամքս)՝ արժանի վարկայ, զի կարգեսցին արք ոմանք Լատինացիք, երեք կամ չորք թուով, յաշխարհականաց կամ ի միանձանց կամ յամուսնաւոր եկեղեցականաց՝ որք ընդ խոգայցեն տեսանել զարարողութիւնս Հայոց և քաջ տեղեկասցին ուղղութեանցն, որ մուծցին յեկեղեցին. որպէս զի ի բացակայութեան մերում տացեն մեզ խկոյն տեղեկութիւն, եթէ խոտորեսցին ինչ Հայք յուղղութեանցն: Վասն այսորիկ անկ է արքեպիսկոպոսին առ մեծարգոյ արանցն կամ արժանապատիւ հարցն հրաման քարոզելոյ:

2. Քանզի կարեւորագոյն և դժուարագոյն քան զամենայն ուղղութիւնս է խառնումն ջրոյ ի բաժակն ի ժամ Ս. պատարագի՝ վասն այսորիկ կամիմ յայտ առնել ամենայն եկեղեցականաց Լատինացւոց առհասարակ, միանձանց և ամուսնացելոց՝ որպէս զի զգուշասցին լիցին ընդ Հայս յայսմ մասին, քանզի յաճախ պատահէ, զի և արք ուսեալք, որոց չէ ընթերցեալ զեկեղեցական գիրս Հայոց, այնչափ անփոյթք են յայսմ մինչև կարծել ոմանց առ անփութութեան նո-

ցա՝ թէ չէ մասն կարեւոր ի պատարագի ջուրն, զոր և մարթ իսկ է անտես առնել ի կիրառութեան. և թէ հնար է Միութեանն գոլ առանց խառնման ջրոյն. և մտանեն՝ զի թէպէտ և մեղ մեծ է քահանային լատինացւոյ, եթէ ոչ խառնիցէ ջուր, այլ կարի ևս մեղք են հայ քահանային: Ներեռիկասութիւն է այս, զի հերետիկոսապետ ոմն Հայոց յայն իսկ ասէր մերժեաց զկիրառութիւն ջրոյն, որպէս զի այնու յայտնի ցուցանիցէ զմի բնութիւնն ի Քրիստոս. այլ խառնումն ջրոյն, թող զայլ խորհուրդս՝ և երկուց բնութեանց Քրիստոսի է նշանակ, որպէս երևի ի հետագայ աղօթից պատարագի. «Թող տուր մեզ, տէր մեր Քրիստոս, հաղորդել աստուածութեան քում ի ձեռն խորհրդոյս ջրոյ և գինւոյ, որ հաճեցար զգենուլ պատկեր մարդկային»: Վասն որոյ հարկ է խորհուրդ տալ Լատինացւոց՝ կալ հաստատուն յայնմ, զոր ինչ կարգեաց Քրիստոս կանխաւ, և ոչ յիշատակել զմիւս խորհուրդս խառնման, որք չեն այնչափ համոզիչք վասն Հայոց: Հարկ է խառնել ջուր, քանզի խառնեաց Քրիստոս, որպէս ուսուցանեն բազում պատարագամատոյց գիրք առաքելոց և սրբոց այլ և ժողովք տասն և տասնել ևս: Զայս ամենայն մարթ է գտանել յերրորդի հատորի հայ և լատին երկասիրութեան Տ. Կղեմենտեայ Գալանոսի, ուխտեալ կղերիկոսի, ընդ խորագրաւ. «Միութիւն Եկեղեցւոյն Հայոց ընդ Հռովմէական Եկեղեցւոյն»: Բայց յոյժ է ընդօրինակել անտի զպատշաճաւոր տեղիս, որպէս արարին Տ. Բոկտան Կարմելեանք:

3. Վասն հզօրագունի հաստատութեան գործոյ Միութեանն պատշաճ յոյժ վարկանիմ, զի մեծարգոյ և արժանապատիւ տեարքն (ընտրեալք) խնդրեսցեն յարքեպիսկոպոսէն Հայոց, որպէս զի տացէ թոյլ Լատինացւոց քարոզել յեկեղեցիս Հայոց, և ընդ հակադարձն՝ լիցի հրաման քարոզչացն Հայոց վարդապետել ի բեմէ յեկեղեցիս Լատինացւոց. սոյնպէս և վասն պատարագի, քանզի ոչ կարեն Լատինացիք մատուցանել պատարագ ի սեղանս Հայոց առանց խղճի, վասն չլինելոյ անդ նշխարաց սրբոց՝ վասն այսորիկ հարկ է յորդորել զարքեպիսկոպոսն, զի նախ քան զմեկնելն իւր աստի՝ հրամայեսցէ դնել

մասունս սրբոց ի սեղանս ամենայն և ոչ ի խաչս միայն, որպէս արարին յՆաղրովկց քաղաքի, զի այս ոչ բաւէ ի լրի-կատարումն կանոնական սահմանաց:

4. Զի յաւուրս մեծահանդէս տօնից հրաւիրեսցին քահանայք Հայոց կատարել զօրէնս աստուածպաշտութեան յեկեղեցիս Լատինացւոց և հանգոյն ամին կոչեսցին Լատինացիք յաստուածպաշտութիւնս Հայոց, որպէս զի այսու փոխադարձ հաղորդութեամբ պահպանեսցի միութիւն խորհրդոց և հաւատոց:

5. Հարկ է վերահաստատ գոլ՝ զի մի ի բացակայութեան մերում օծանիցեն Հայք սրբագզծօրէն զմարմինս մեռեալ քահանայից, որպէս սովորութիւն է Հայոց առնելոյ. այլ զի ըստ սովորութեան կաթողիկէ եկեղեցւոյ կատարեսցեն զխորհուրդ վերջին օծման ի վերայ օրհասական հիւանդաց:

6. Հարկ է նոյնպէս յաճախագոյն ևս առընթեր գոլ նոցա ի ժամ մկրտութեան, զի մի երեքս կրկնեսցեն զբան խորհրդոյն յընկղմելն զերեխայն երիցս անգամ ի ջուրն, որպէս արարողութիւն է առնելեան եկեղեցւոյ. քանզի սրբագզծարար երիցս անգամ մկրտեն զերեխայն, յորժամ ընկղմելով զայն ի ջուր երիցս անգամ ասեն. «Մկրտեմ զծառայս Քրիստոսի (այս անուն) յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ամէն». այլ հարկ է մի և եթ անգամ ասել զբանն սովին օրինակաւ. «Մկրտեմ զծառայս Քրիստոսի (այս անուն) յանուն Հօր ([illegible]) և Որդւոյ ([illegible]) և Հոգւոյն սրբոյ», ([illegible]):

Յետ բացատրութեան միոյ միոյ ի կէտից, յինէն առաջարկելոց՝ ի զինմայ ամենեցուն խոստացաւ վերատեսուչ քահանայն, թէ արասցէ յոր ինչ ձեռնհաս լիցի, վասն պահպանելոյ զՄիութիւնն լրիւ ճշտութեամբ. և հրամայեաց զգուշել ի մասնաւոր զկէտս և զնել ի դիւանի վասն մշանջենաւոր յիշատակի իրաց: Նոյն ի խօսելս ինում ընդ արքեպիսկոպոսին՝ հարևանցի ինձ ծանուցի նմա, թէ և ոչ ինքն այլապէս արդեօք վարէր յայնմ գործի. և թախանձել կալայ՝ զի ձեռնարկեսցուք զգործն, զոր սկսաքն, և օժանդակու-

թեամբ փոխանորդին, որ հիւանդացեալն էր յերկրորդէ ան-տի օրէ ժամանակոյ մերոյ ի Կամենից՝ ածի զարքեպիսկո-պոսն ի հաւանութիւն, որ կոչեաց զ.քահանայս և այնպէս յորդոր եղև նոցա՝ զի զկնի երկուց կամ երից աւուրց խոս-տացան ի ծածուկ, թէ մատուսցեն պատարագ ըստ արարողու-թեան Լատինացւոց: Իբրև լու եղև ժողովրդեանն զայսմա-նէ՝ սաստիկ ես խռովեցան և ի հրապարակս անդ աղաղա-կէին. «Ահա բռնաբար փոփոխեն զարարողութիւնս մեր և զծէսս. վկայ է Աստուած, զի դիմեսցուք առ արքայ. Առ արքայ բողոքեմք, առ արքայ բողոքեմք»: Դէպ եղև ինձ յայսմ ժամանակի ի հրապարակի անդ գոլ և դողայի առ ահի, մի և ես յանձնեսցեն խռովութիւնքն. վասն որոյ աշխատ եղէ, որչափ կար էր իմ, անցել զժողովուրդն, յորում և յաջո-ղեցայ. քանզի խոստացայ նոցա, զի թէպէտ և ոչ եմ տեղեակ բնութեանց ինչ, այլ ոչինչ ուղղութիւն մուծցի ի ներքս առանց հաւանութեան նոցա, և զի եթէ ոչ կամին զՄիու-թիւնն՝ տացեն ինձ գրով զկամս իւրեանց, որով լիցի ինձ հնար յայտ առնել Սրբազան Մեծութեանցն, թէ խորշե-ցայց ի բաց կացեն յամենայնէ, և թէ ի վաղու անդր մեկնե-ցայց անտի ի Վարշաւայ, ոչինչ հաղորդութիւն այլ ես ու-նելով ընդ նոսա: Ընդ այս բան իմ աղաղակէին նոքա, թէ Միաբանեալք են նոքա և կամին մնալ ի Միութեանն. (իբրև այն՝ թէ մարթ է լինել միութեան ընդ հերետիկոսութեան): Վասն որոյ ետու նոցա պատասխանի կարի ցածութեամբ. Թոյլ տուք ինձ երթալ առ արքեպիսկոպոսն, լսել ի նմանէ տեղեկութիւնս լնուլ ի զպատճառաց տրտնջմանց ձերոց և յոր-դոր լինել նմա, զի ամենայնիւ հաճեսցէ զմիտս ձեր: Եւ այս-պէս զերծեալ ի ձեռաց նոցա՝ խոյս ետու ի նոցանէ և չոգայ առ արքեպիսկոպոսն: Ընդ փոխանորդին, որ դեռ ես հիւանդ էր, զայս ինչ խորհեցաք յաղագս խռովութեանցն ծագելոց՝ թէ յայնժամ յաջողեցեմք յիմիք, եթէ առ արկցուք զոմանք ի խռովչացն: Վասն այսորիկ կոչեցաք ի ձեռն փոխանակի զօ-րապետին Պոդոլեկեայ զՎոյթն Հայոց կամ զփնտտարանն, որ խռովարար էր քան զամենեսեան, և սպառնացաք նմա պատիժ սաստիկ յոյժ՝ եթէ ոչ կացցէ յետս ի յուզելոյ յամբոխելոյ

զժողովուրդն և զկղերս զնոսա առնանել հրամանաց Նորին Արքայական Մեծութեանց։ Այս ամենայն կատարեցաւ յաւուրն երկրորդի։ Այլ զի՞նչ արդեօք։ Նոյն ինքն փոխանակն ամրոցապետին ոչ միայն ոչ էարկ առ գնդաւ, այլ և ինքն զարհուրեալ ընթացաւ եկն առ արքեպիսկոպոսն և խնդրէր՝ զի եթէ մարթ ինչ իցէ, մի ևս խռովեսցէ զժողովուրդն Հայոց, որոց ի ձեռս նոցա է քաղաքն Կամենից, քաղաք կարևոր, ուր պատուական համարեալ առ օտարս։ Եւ զայն յուշ առնէր՝ թէ սակաւք ոմանք ի Լեհացւոց բնակեն ի Կամենից, իսկ յուսալ ի Ռուսինան հերձուածողս չէ մարթ. այլ ընդհակառակն ամէն ի ժամ պաշարման հարկ է հսկել և ի վերայ տանց նոցա, զի մի մուծցեն զթշնամին ի ներքս ի քաղաքն. և այնպէս ինքն կարծէ, թէ անկ է արքեպիսկոպոսին գրել թուղթս առ արքայ և առ նուիրակն և ակն ունել պատասխանւոյ. քանզի խոստանայ ժողովուրդն Հայոց առնել զամենայն, որ ինչ յանուանական հրովարտակի արքային իցէ։ Ոչ կարի հաճոյ թուեցաւ առաջարկութիւնն արքեպիսկոպոսին, որ երկնչէր, գուցէ յապաղեսցի յերկարեսցի գործն և պատճառք լիցի մեծամեծ ծախուց վասն բազմաթիւ սպասաւորացն որ գնդաւ և բազում երիվարօք և որսկան բարակաց և այլոց. և զի եթէ խնդրեսցէ յԱրքայական Մեծութենէն պայմանաժամ ամիս երկուս՝ գուցէ ոչ տացի նմա և հարկեսցի նա կորագլուխ անօթահար դառնալ անդրէն յետս, և հուսկ ուրեմն՝ թէ ոչ կարէ կրել զծանրութիւն այնքանի ծախուց. թէպէտ և իւրք պարտն միայն զծախսն հոգայր։ Յաւել արքեպիսկոպոսն, թէ ոչ կարէ կեալ անդանօր աւելի քան եօթնեակս երկուս կամ երիս. և զի զնախնի պատուիրանագրութիւնս, ըստ որոց կալեալ էին արքեպիսկոպոսք Հայոց կեալ ամիս վեց յԼվով և ամիս վեց ի Կամենից հանդերձ լութեամբ պետոյն՝ յայն մասս հարկ է խնամել, զի յառաջագոյն զայն արքեպիսկոպոսքն երկոքումբք և եթ քահանայիւք և երկու դպրօք. այլ յետ սուղ ինչ ժամանակի յայտ արար՝ թէ հաւանի կալ մնալ անդէն ըստ առաջարկութեանն։ Եւ արդարև եկին դատաւորքն Հայոց հանդերձ քահանայիւք և խոստացան, թէ յորժամ ընկալցին զհրաման

նուիրակին և զարքային՝ անդէն և անդ զամենայն կատարեա-
ցին, տուանց ումն ունելոյ այլոց հրամանաց: Յուսկ ուրեմն,
ըստ միջնորդութեան հօրն Վարչութեանն Լատինացւոց՝
հաւանեցաւ ընդ այս արքեպիսկոպոսն և ահա եղաք ի մոլի,
ըստ կարի փութապէս առաքել սուրհանդակս ի Վարշաւայ
վասն իրացն այնոցիկ: Այլ այն ինչ խորհէաք մեք, զի՞նչ հարկ
իցէ գրել Նորին Սրբազան Մեծութեանն՝ և ահա դատա-
ւորք երկու Յայոց եկին առ արքեպիսկոպոսն յողջոյն հրա-
ժեշտի, յայտ առնել՝ թէ երթան ի Վարշաւայ պատգամա-
ւոր: Ոչ սակաւ խռովեցաւ արքեպիսկոպոսն ընդ խորամանկ-
ութիւն դատաւորացն, որ ասէին յառաջագոյն գրել միայն
առ արքայ, և այժմ կարգեցին առաքել պատգամաւորս, որս
կարի անհամբոյրս, զեղբայրն ասեմ իշխանապետին Յայոց և
զայլ ոմն հանդգոյն նմին: Վասն որոյ արձակեաց զնոսա ըն-
կայն, նստոյց զիս ի կառս իւր և եկաք ի հօրն Վար-
չութեանն Լատինացւոց վասն խորհելոյ զերպս զգուշանալ:
Եւ կանոնիկոսացն ամենեցուն, որ անդ էին՝ տեսեալ զկարե-
ւորութիւն գործոյն, հարկ համարէին՝ զի և մեք առաքեսցուք
զոք ի Վարշաւայ, քանզի երկնչէին՝ գուցէ սոփեստական զա-
ւակքն իւրեանց մոլորեցուսցեն զմիտս Նորին Մեծութեանց
պատգամաւորքն Յայոց: Այլ իբրև ըստ ինքեան անկաւ, թէ
զո՞ ոք առաքելոց իցեմք՝ ոչ դիւրաւ միաբանեցան ամենեքեան,
քանզի կամէին ոմանք, զի ես ինքնին գնացից և այլք ոմանք
կամէին զաշակերտն մեր զԳրիգորիոս Բալաամ, զոր գիտէին
ամենեքեան առ մեծի ջերմեռանդութեան նորա ի Ս. Հաւատս.
իսկ քահանայն Լեչչինսկի եցոյց, թէ որպիսի հարկ ի վերայ
կայցէ, զի մի մնասցէ արքեպիսկոպոսն միայնակ առանձինն,
որում առ ընթեր հարկ է ինձ լինել հանապազօր և փոխելոց
զմիտս իւր յայս մասին, զի մի ծագեսցին անհամաձայնու-
թիւնք: Եւ արդարև զգուշացաւ նա վտանգին (որպէս տեսաց
ապա յունիսին իմ), զի մի գուցէ ի բացակայութեան անդ
իմում միաբանեսցի արքեպիսկոպոսն ընդ ժողովրդեանն, — որ-
պէս արարեալ էր նորա յառաջագոյն, զի ընկալեալ զումար
զբանից նշանաւոր ի գահհից՝ ոչ միայն թողեալ էր զեկեղեցիս
ի հերձուածի և ի հերետիկոսութեան ըստ առաջնում կարգին,

(թէպէտ և ոմանք եղեն իսկ ի Միութիւնն), այլ և խոստացեալ էր Հայոց գրով զի մի ինչ փոփոխեսցէ կամ մուծցէ նոր ինչ երբէք. սոյն զայսոսիկ պայմանս ուխտի նորա ի նեղքս բերեալ՝ բազում անգամ կշտամբէին զնա գաւառոյքն յանդիման երեսաց նորա հարցանելով, թէ իցէ՞ արդեօք նմա յուշ նախկին ուխտ իւր։—Վասն որոյ միաբանեցան ամենեքեան, զի ըստ կարի փութով առաքեսցեն զքահանայն Բալասան հանդերձ թախանձագին թղթովք առ Նորին Սրբազնական Մեծութիւնս, առ սրբազան Նուիրակն և առ գլխաւոր իշխանաւորս։ Ուստի գրեցաք ամենեքեան մեք թուղթս, յորս հայցեաք յարքայէն և ի Թագուհւոյն, ուշի ուշով միտ դնել կարևոր գործոյն, զի եթէ ոչ յաջողեսցի այս գործ առ պակասելոյ ի մէնջ շնորհաց նոցա կամ առ սխալանաց մերոց՝ անշուշտ ի հերձուածն անկցեն գաւառացն ամենայն եկեղեցիք Հայոց և քաղաքքն, որ եկեալ են արդէն ի Միութիւնն։ Պաղատանօք խնդրէաք, զի մի տացի ժամանակ երկամենայ կամ եռամենայ, զոր խնդրեն պատգամաւորքն Հայոց յայն և եթ միտս՝ որպէս զի յայնմ միջոցի հարցանիցեն խորհուրդ ի կաթողիկոսէն իւրեանց և ընկալցին ի նմանէ պատասխանի, ոչ բարեյաջող անշուշտ վասն մեր, որ արհամարհութիւն է յայտնապէս կաթոլիկ եկեղեցւոյն. և այլ բազում պատճառս յաւելաք կարևորս։ Յուղի եղ ապա քահանայն Գրիգորիոս Բալասան ի 22-րդի աւուր Օգոստոսի և ըստ փութաջանութեան իւրում ի գործի Ս. Հաւատոյ, կանխեաց ի Վարշաւայ յառաջ քան զպատգամաւորս Հայոց, որ մեկնեալ էին յառաջագոյն քան զնա։ Յընթացս վեցից եօթնեկաց, յորս կացաք մնացաք վերադարձի պատգամաւորին մերոյ՝ ոչ սակաւ եղեն նեղութիւնք մեր. թողում աստ զհիւանդութիւնս, զորս ախտացան ոմանք ի մէնջ և մանաւանդ փոխանորդն, որ կալեալ էր ի ջերմոյ և զի չէր մարթ գտանել յայնմ վայրի զարման բժշկութեան՝ հատեալ իսկ էր յոյս մեր ի նմանէ.—սոյնպէս հիւանդացաւ և արքեպիսկոպոսն Հայոց, որ հարեալ ի կաթուածոյ՝ կծկեաց զշրթունսն յոյժ, մինչև զարհուրել մեզ առ վտանգին.—այլ մանաւանդ առ հանապազօր յուզմանն յաղագս գործոյն մերոյ՝ կարի նեղէաք. մանաւանդ զի գիտէաք, թէ առաքեալ էր

դատաւորացն թուղթ առ կաթողիկոսն ի ծածուկ, վասն որոյ և պաղատէին անշուշտ պատգամաւորքն գեշխանաւորս ի Վաղարշապատ՝ զի առ կախ ձգեսցի գործն մինչև ի վերադարձ սուրհանդակին իւրեանց: Դայնն առ ևս յաճախակի յիշատակեալքն ի վերոյ քահանայք Նազլովեցի, Տէր Յակոբ և Տէր Ստեփան և արտասուալից պաղատէին, մի՛ տալ նոցա թոյլ դառնալ ի քաղաքն իւրեանց, զի մի՛ զամօթի հարցին յայն սակս՝ թէ ընկալաւ արդէն ժողովուրդն Նազլովեցի զՄխիթեան, իսկ Կամենիցւոց չև ևս է ընկալեալ: Լռելեայն անցանեմ զշար նշանացն, զորս ըստ մնահաւատութեան իւրում մեկնէր արքեպիսկոպոսն և հանապազ յերկիւղի կայր նոցին ադագաւ. քանզի յիշէր զգաւազան իւր, որ բեկաւ յուղւոջ, ի ժամանելն մեր հանդէպ դրանց Կամենիցի, և զայս գուշակէր ոչ բարեյաջող համարելին նշան: Այլք յուզէին խռովէին զնա ստայօդ տեղեկութեամբք ի Վաղարշապատէ: Թէպէտ և ոչ սակաւ տարուբերէին միտք իմ, այլ ջանայի յամենայն զօրութենէ իմմէ խրախոյս տալ ամենեցուն՝ զի յԱստուած յուսասցին, որ ոչ լքանէ զգործ իւր և զՍ. Հաւատոյ: Աղօթէին առ Տէր հանապազ կղերականքն Լատինացւոց և պատարագս բազումս մատուցանէին, մաղթելով կատարած բարեյաջող ձեռնարկութեանս մերում: Այլ ընդ այն առաւել դժկամակէաք՝ զի կարի ճշտութեամբ կատարէր ժողովուրդն Հայոց զպատուիրան նուիրակի կաթողիկոսին, զորմէ եղեն բանք, թէ մի՛ ինչ արասցեն առանց հաճութեան կաթողիկոսին, և զի այնչափ յարգէին զյիշատակ նուիրակին՝ մինչև պահել պատուով զկենդանագիր պատկեր նորա, իբրև զսրբոյ ուրուք: Եւ եղև հասանել պատկերին ի ձեռս արքեպիսկոպոսին. ոմանք ի հոգևոր Վարչութենէն Լատինացւոց յորդորէին զնա, զի այրեսցէ զայն հրապարակաւ. այլ այսմ խորհրդոյ բռնութեան ընդդէմ եղեն ոմանք խոհեմութեամբ, որ ջանային հանապազ խոյս տալ յառթից մեծամեծ վտանգաւոր խռովութեանց: Յայս իսկ միտս՝ իբրև տեսի՝ թէ պարէին Հայք ընդ հանապազօր պատարագելս իմ յեկեղեցւոջ իւրեանց ի վերայ շարժական սեղանոյ, (քանզի ոչ կամէր մատուցանել պատարագ ի վերայ սեղանոյն, որ օծեալ էր ի հերետի-

կեաց և թափուր էր ի մասանց որոց)՝ ունկնդիր եղէ խորհրդոց ումանց և սկսայ պատարագել ի վերայ սեղանոյ նոցա, հանգոյն այլոց քահանայից Լատինացւոց, որք ի տանի Վերափոխման Ս. Աստուածածնին գային մատուցանէին անդ պատարագ. քանզի համարէի, թէ լաւ եւս է մեղանչել քան գայթակղեցուցանել զժողովուրդն յայնպիսի դիպուածս: Զայնու ժամանակաւ ոչ կամեցեալ իմ ժամավաճառ լինել ընդունայն՝ երբեմն երբեմն խօսէի ի ծածուկ ընդ միանձնուհւոյ ումեմն Հայոց ի Կամենիցէ, որում անուն էր Մարիամ, ամաց իբրև 35-ից, որոյ քանզի այցելեալ էր ամենայն աշխարհի և Հայաստանի և Ս. տեղեացն և Իտալիոյ՝ գիտէր զլեզուս Իտալացւոց և Հայոց, թող զբնիկ լեզուս իւր, զՌուսերէնն իմա և զԹաթարերէն: Նա քանզի տրտնջէր զանկանոն և զանկարգ կենցաղէ այլոց կուսանաց Հայոց, ընկերուհեաց իւրոց, զորոց յառաջագոյն յիշատակեցի՝ վասն այսորիկ յորդոր եղէ առ արքեպիսկոպոսն, որպէս զի երթիցէ և յայց ելանիցէ նմա և ըստ կարի իւրում աշխատ լիցի անհետ առնել զանկարգութիւնն, որ սպրդէին առհասարակ ի ներքս ի վարս կանանց միայնակեցից, մանաւանդ եթէ չիցեն կանոնք կամ տեսուչք, որպէս առ նոսա: Զայս անդր արքեպիսկոպոսն, ետես զփիճակն խառնիճաղանճ, յորում բնակէին, զկազ և զկոխ, յորում ազօրեալ էին միանձունքն, և զայն՝ զի ըստ հրամանի աշխարհական և եթ իշխանութեան, իմա զատաւորացն՝ ընտրէին միանձունքն, առանց հրամանի կամ օրհնութեան եպիսկոպոսին կամ քահանայի. և յորժամ ըստ իմում խորհրդեան հանդերձեալ էր արձակել զամենեսեան ի տունս իւրաքանչիւր՝ եթէ ոչ ընկալցին զուղղութիւնն և կանոնս միանձանց՝ ընդդէմ եկաց նմա մայրապետ վանացն, կին ոմն Աֆերովէ՝ զրքանչ առաջ զատաւորին Հայոց, յամառեալ ի հերետիկոսութեան, որ ունէր հաղար եւ յանձնէ պատգամաւորացն վասն ուղղութեանն ի Վարշաւայ, և ապա յղեաց նոցա այլ եւս արծաթ ոչ սակաւ: Տեսեալ ապա իմ, թէ յամէ յոյժ Ռուստամ դառնալ ի Վարշաւայէ՝ խնդրեցի յարքեպիսկոպոսէն, զի հրամայեսցէ տալ ինձ ի ծածուկ զեկեղեցական մատեանս, որպէս զի ուղղագրեցից զայնսիկ

օժանդակութեամբ աշակերտաց իմոց, որպէս և արարի իսկ առաջի արքեպիսկոպոսին ըստ կամաց նորա։ Թող զայս՝ ուսուցանէի հանապազօր չորեցունց աշակերտացն իմոց, զորս ընդ իս ածի՝ զամփոփական ուսմունս տրամաբանութեան և բնագիտութեան, ի լեզուս Լատինացւոց և ի Հայոց, ըստ սահմանեալ դասընթացին։ Երկիցս և երիցս կարգեցաք մասնաւոր հարցաքննութիւնս, յորս գային սիրով Հայք ամենք ոչ կարի ընդդէմ Միութեանն։ Եւ զայս ինչ հնարեցայ առնել՝ զի կոչէին Լատինացիք զարքեպիսկոպոսն ի հանդիսաւոր տօնս ժամանակին այնորիկ մանաւանդ ի հրապարակական թափօրս ընդ քաղաքն, յորս ինքն արքեպիսկոպոսն տանէր զՍ. Ընծայսն. իսկ ի մայր եկեղեցւոջն Լատինացւոց նստուցանէին զնա յաթոռ արքեպիսկոպոսին Լատինացւոց, որ տարակայ էր յայնմ ժամանակի։ Հուսկ ուրեմն խնդրեցին ի նմանէ Հ. Դոմինիկեանք, զի մատուսցէ արքեպիսկոպոսն պատարագ հանդիսաւոր ի լեզու Հայերէն յեկեղեցւոջ անդ իւրեանց։ Սակայն ոչ ընկալաւ զառաջարկութիւն նոցա արքեպիսկոպոսն, առ ի չգոյէ անդ պատշաճաւոր դպրաց. զի թէպէտ և ի մասին դպրութեան ճոխագոյն է Կամենից քան զամենայն քաղաքս Հայոց ի Լեհաստանի, ունելով երգեհոն շարժական և խումբ երգեցիկ՝ այլ արքեպիսկոպոսին ցանկացեալ փայլել ամենայն շքով ոչ էառ յանձն պատարագել, որպէս սովորն էր, զի ոչ ոք էր բաւական լնուլ զպահանջս նորա։ Իսկ ուրախ եղև նա յոյժ, զի ուր ուրեմն սկսան Լատինացիք քարոզել յեկեղեցիս նորա, որպէս արարին ի մեծահանդէս տօնս ինչ քահանայն Սուլինսկի, աւագ երէց կանոնիկոսաց, կրօնաւոր ոմն ի Դոմինիկեանց և ոմն Յիսուսեան, ընդ որս կարի ուրախ եղաք։ Յայնմ ժամանակի եկն եհաս և քահանայն մեր Գրիգորիոս Բարսամ մեծաւ յաղթանակաւ, բերելով պատասխանիս բարեյաջողս թղթոց մերոց ի Նորին Մեծութենէ Թագուհւոյն, (զի չէր լեալ արքայն ի Վարշաւա յայնմ ժամանակի), ի սրբազան նուիրակէն Գիգնատեկլեայ, յՈւրբանի քարտուղարէն և յայլոց։ Եւ այս է պատճէն թարգմանութեան թղթոյ Թագուհւոյն, գրելոյ ի լեզու Գաղղիացւոց.

«Հայր արժանապատիւ. ընկալաք զթուղթ ձեր և հաճութեամբ մեծաւ լուաք զյաջողութիւնս առաքելութեան ձերոյ. քաղցր է մեզ, եթէ և առ յապա տացէք մեզ երբեմն տեղեկութիւնս զգործոցն. և մեք ոչ հեղգասցուք օժանդակել գործոյն բարեպաշտութեան, որչափ կար իցէ մեր։ Յայտնեաց մեզ քարտուղարն, թէ կատարեսցէ զամենայն զոր ինչ կամեցարուք. իսկ յորժամ ժամանեսցէ այսր Նորին Մեծութիւնն Արքայն, յանձն արասցուք նմա անյապաղ զգործս, զորոց հոգամք յայն սակս մանաւանդորէն, զի ձեռնարկեալք են ի փառս Աստուծոյ, յորմէ մաղթեմք հանապազ, մատակարարել ձեզ զշնորհս իւր և զօգնականութիւն։

Ի 16-ն Սեպտեմբերի 1666 ամի　　　Ստորագրեալ

Ի Վարշաւայ։　　　Լուդովիկէ Մարիա Թագուհի։

Իսկ այս է պատճէն նամակին Պրիմատելեայ գրեալ ի լեզու Լատինացւոց.

«Գերապատիւ Հայր ի Քրիստոս. Առաքեալն ի ձէնջ այսր քահանայն Հայոց յանձն արար ինձ զթուղթ գերապատուութեան ձերոյ. և ուրախ եղէ յոյժ, ծանուցեալ զքնութիւն ջանից գերապատիւ Հօրդ, յաղագս ի Միութիւն ածելոյ և զեկեղեցին Հայոց Կամենեցի։ Առաւել բարի յայտնեմ գերապատիւ Հօրդ, զի ի կողմն մեր գտանին պատգամաւորքն Հայոց Կամենեցի, որ եկեալ էին այսր, որպէս ընդարձակագոյնս պատմեսցէ զայսմանէ յիշատակեալն քահանայ Հայոց։ Յղեմ ընդ նամակիս իմում զթուղթ արքունի քարտուղարին, առ եկեղեցականս և առ ժողովուրդն Հայոց, որով, անշուշտ եմ, մերժեսցին իբրաց հակառակութիւնքն ամենայն։ Իսկ քահանայն յայն սակս յամեաց ի վերադարձն, զի չև ևս մեկնեալ էին աստի պատգամաւորքն Հայոց, յոյր սակս հարկ համարեցաւ կալ մնալ մինչև զմեկնիլ նոցա, զի մի ի բացակայութեան իւրում չար ինչ յօդեսցին։ Այլ և թուղթ Թագուհւոյն անդրան ուրեմն ընկալաւ յատենէ քարտուղարին, զի գործք բազումք էին Թագուհւոյն։ Մի իրացեալ արասցէ Տէր ի ձէնջ զշնորհս իւր ի փրկարար ձեռնարկու-

թեանց յայգմիկ։ Աղօթարար վասն առողջութեան և բարօրութեան գերապատիւ Հօրդ՝ Պիգնատելլի Արքեպիսկոպոս Լարիսայ։

Ի 15-ն Սեպտեմբերի 1666 ամի ի Վարշաւայ։

Վասն համառօտութեան ոչ անեմ ի ներքս զայլ թուղթս սրբազան նուիրակին Պիգնատելլեայ և զարքունի քարտուղարին առ եկեղեցականս և առ ժողովուրդն Հայոց Կամենիցի, յորս հրամայէին նոցա բացէ ի բաց՝ յանձն առնել փութանակի զամենայն ուղղութիւնս հարկաւորս վասն Ս. Միութեան ընդ եկեղեցւոյն Հռովմայ, մանաւանդ զխառնուածս ջրոյն ի ժամ Ս. Պատարագին, որպէս առնեն այլ քահանայք Հայոց ի Լեհաստանի։ Յետ երկարաձիգ վիճաբանութեանց, (որպէս պատմեաց մեզ պատգամաւորն մեր, Գրիգորիոս քահանայն Նալեան), որ ծագեցան ի Վարշաւայ ընդ նա և ընդ զաւառորս Հայոց, եկեալս անդր պատգամաւորութեամբ՝ առաջի նուիրակին և արքունի քարտուղարին զայլ և այլ յօդուածոց ուղղութեանցն՝ յաջողութեամբ բազդի համօրէնց զնոսա պատգամաւորն մեր, որ ներկայ էր բանի հաւատոց և ունէր ընդ իւր զգիրս հաւանութեանց հօրն մերոյ Կղեմենտեայ և զայլ ևս մատեանս։ Խնդրեցին ուր ուրեմն պատգամաւորքն Հայոց, զի զնեա ի միա ասցեն զուխտս պայմանի, կեալս ընդ արքեպիսկոպոսին Հայոց առաք ինչ յառաջ, յաղագս պահելոյ նոցա զարտօնութիւնս. յաւելին և զայս խնդրել, զի գրեսցի արքեպիսկոպոսին, թողուլ զհին ամարն իւրեանց և զպաշտօն ըստ ծիսի իւրեանց։ Պատասխանի արար առ այս Գրիգորիոս քահանայ, թէ չէ նմա յայտնի, զի գուցեն պայմանք այնպիսիք, այլ ինքն խնդրէ թախանձագին ինոցանէ ի դիմաց արքեպիսկոպոսին, զի յարտօնութեանցն, զորս ունել ասեն՝ ի բաց ընկեսցեն զարտօնութիւնն դատելոյ զքահանայս, (եթէ գուցէ արտօնութիւն ինչ այսպիսի), և տացեն զայլսն ի քննել, առ ի գիտելոյ՝ չիցեն ինչ արգելք ինոսա բանք հակառակ ազատութեան եկեղեցւոյ. այլ վասն պահոցն և ոչ զմտաւ իսկ անեալ է արքեպիսկոպոսին ջնջել զայնոսիկ, մանաւանդ

զի խոստութեամբ մեծաւ պահէին Հայք. ի դպրանոցի իսկ պապին յԼվով աշակերտքն ոչ արկանեն ի կիր ձեռնս յաւուրս պահոց։ Եւ վասն տոմարին՝ թէ ոչ երբէք խորհեալ է արքեպիսկոպոսին փոխել զհին տոմարն, թէպէտ և վրիպական իցէ, քանզի և այնու տոմարաւն, որ ոչ վերարկելի ի գործ հաւատոյ՝ մարթ է Միութեանն լինել։ Զի թէպէտ և խնդրեցին արքեպիսկոպոսն Լատինացւոց և քաղաքին Հայք ի նուագս նուագս ի գաւառացւոց Լվովայ, զի խափանեսցեն զչար կերպարանութիւն տօնելոյ զծնունդն Քրիստոսի ի 6-ն Յունվարի ընդդէմ սովորութեան համօրէն եկեղեցեաց, — ի ծաղր և ի ծանակ ժողովրդեանն Լեհացւոց և Ռուսաց, որ կշտամբէին զՀայս, սկսանել նախապէս զամանորն, տօնել զթլփատութիւն Քրիստոսի և հուսկ ապա թող տալ Քրիստոսի ծնանել, (բայց Հայք ոչ ի տօնէ թլփատութեան զնոր տարին սկսանեն, այլ ի Ա. Նաւասարդէ)՝ — բայց արքեպիսկոպոսն Հայոց ոչ երբէք ընդ այս հաճեցաւ և ոչ իսկ զարդիս փոփոխութիւնս կամի տանել յայսմ մասին։ Վասն այսորիկ գրեաց պապական նուիրակն զհետագայ թուղթ առ ժողովուրդն Կամենիցի.

«Այլ վասն զաշանցն, զոր կռեալ առէք ընդ արքեպիսկոպոսին Հայոց, հաճեցիք, տեարք, յղել զպատճէնն առ իս ի Վարշաւայ առ ի քննել և վերահաստատ լինել, թէ իցէ ինչ հնար վաւերացուցանելոյ։ Իսկ վասն պահպանութեան նախնի տոմարին մի ինչ հոգայք, զի յայսմ մասին ոչինչ փոփոխութիւնս արասցէ արքեպիսկոպոսն։ *)

Անդէն յետ վերադարձի Գրիգորիոս քահանայի՝ դարձ արար և մին ի գաւառացւոց-պատգամաւորաց Հայոց, եղբայրն առեալ Վոյթին կամ ռուագ գաւառորին Հայոց, իսկ միւսն եկաց մնաց ի Վարշաւայ վասն գործոց իւրոց։ Եւ ով կարէ պատմել զառագնաց տարակուսանաց գաւառացւոցն Հայոց ի լսելն նոցա՝ թէ պարտեցաւ կողմն իւրեանց, յետ այնքանի ծախուցն ի պէտս ուղւոյ պատգամաւորացն և մա-

*) Ոչ թուղթ առանձինն է այս Նուիրակին Պիգնատելլեայ, այլ մասն և եթ թղթոյ նորա առ եկեղեցականս և ժողովուրդն Հայոց, որպէս երևի յերկրորդ մասին գործոյս։ Թարգմ.

նուանդ ի պէտս ընծայից առ բազումս ի գլանիկ տրանցն. (Թէպէտ և սրբազան նուիրակն ոչ ումեք տայր Թոյլ երբէք, որոց գնովան էին՝ առնուլ ինչ ի նոցանէ)։ Նաև ամենք ծախել նոցա ոսկիս իբրև 2000, այն է զհազար ոսկիս, զոր ետ յիշատակեալն ի վերոյ կուսանն Հայոց Անֆերովեր, և զմիւս եւս հազար, զոր ժողովուրդն ետ։ Այլ մեք տեսաք Գրիգորիոս քահանային, որոյ էր տալ մի և երկվարք կրկին՝ ոսկիս մնձաոս չորեքտասան և եթ ի պէտս ուղւոյն, և զայն եւ միայն եառ, քանզի հրաժարեցաւ արքեպիսկոպոսն օգնել մեզ յայսմ մասին։ Իբրև ընկալան զԹուղԹսն քահանայքն և գաւառորք Հայոց՝ ժողովեցան անդէն ի խորհուրդ, Թէ զինչ արժան իցէ առնել։ Յանկարծեալ գաւառորացն բերել յանձանց զմեզն՝ առաջարկեցին քահանայից մնալ առ ժամանակ մի, մինչև ցրուումն ժողովոյն (Մէյմ), որ կազմելոց էր յամսեանն Դեկտեմբերի. և զի ի Թղթի պայծառափայլ քարտուղարին էր հրաման առ նոսա, յղել նմա զպաշտման հանգերձ արտաւորութեանցն՝ հարկ է, ասէին, օգտել ի ժամանակէն և ակն ունել պատասխանւոյ կաթողիկոսին, առ որ առաքեալ էին ի ծածուկ։ Իսկ քահանայքն (որոց արգելեալ էր յորէ անտի ժամանելոյ մերոյ ի Կամենից մատուցանել պատարագ՝ եԹէ ոչ կամիցին մատուցանել ըստ արարողուԹեան կաթոլիկոսց) պահանջէին, զի խորհեսցին նախապէս զենդիր փարձաւորութեան ծխասուց իւրեանց, զոր կրեցին զայնու ժամանակս, որպէս և խոստացեալ էր նոցա գաւառորացն։ Ամենք ի գաւառորացն եառն առ այս պատասխանի, Թէ զժամարին է այս գործ և չէ իսկ հնար առնուլ ինչ ի ժողովրդենէն, որ զայրացեալ է զարդիս և խռովեալ վասն ընդունայն ծախուցն ի պէտս ուղևորութեան պատգամաւորացն ի Վարշաւայ։ Յարևան յայնժամ փութանակի քահանայքն սրբամտութեամբ մեծաւ և ոչ խիստ անսացեալ՝ չոգան անդէն առ արքեպիսկոպոսն, հայցեցին Թողութիւն վասն վաղեմի մոլորութեանցն իւրեանց և խոստացան հնազանդ լինել նմա յամենայնի։ Սիրով ընկալաւ զնոսա արքեպիսկոպոսն և փոխանորդն (որ ապաքինել սկսաւ զայնու ժամանակաւ), խոստանալով հատուցանել նոցա փոխանակ ծխասուցն, զոր մերժեն

գատաւորքն անիրաւութեամբ։ Կարգեցաք իսկ անդէն, զի հաճեսցուք զմիտս քահանայից՝ մատուցանել պատարագ փութանակի ըստ ամենայն ուղղութեանց, այլ քահանայք կամէին թողուլ ձգել մինչև ցմիւս եօթնեակն, (քանզի չորեքշաբաթի էր օրն, երեսներորդն Սեպտեմբերի, տօն Ս. Հերոնիմեայ)․ այլ քանզի տարակուսէաք, զուցէ նոր ինչ ևս պատահեսցեն և որոսսցեն զնոսա գատաւորքն ի կողմն իւրեանց՝ պնդեցաք թախանձեցաք՝ մինչև հաւանեցան ամենեքեան մատուցանել պատարագ ի վաղիւ անդր, որ օր առաջին էր ամսոյն Հոկտեմբերի 1666 ամին։ Եւ ըստ ողորմութեանն Աստուծոյ արարին ամենեքեան, բաց ի միոջէ փոխանորդէն, որ խնդրեաց ի բաց կացուցանել զնա ի պատարագելոյ, քանզի անցեալ էր զաւուրբք և ոչ ևս մատուցանէր պատարագ յերից ամաց հետէ. այլ մեր ասեալ, թէ առաւել քան զօգտութիւնն առ նա զի մեր ժողովուրդն կայր, կոչելով զնա սուրբ և հայ Ճշմարիտ՝ խնդրեցաք կարի մատուցանել պատարագ, զի ցուցցէ ժողովրդեանն, թէ և ինքն ընկալաւ զՄիութիւնն և զկաթոլիկ ուղղութիւնն։ Եւ արդարև պատարագեաց նա առաջի մեր, ընդ որ ուրախ եղեն յոյժ միւս քահանայքն, որ կարի զայն խնդրէին։

Յետ այսորիկ, որպէս յԷսպլովեցն՝ այց եղ փոխանորդն համօրէն եկեղեցեացն որ ի քաղաքի անդ. ուղղափառեցան մաշտոցքն, զորս ցայն վայր ոչ կարէաք ի ձեռս բերել, քանզի առ քահանայից էին. օրհնեցաւ իւղ վասն օծման հիւանդաց, և ի բաց մերժեցան կիրառութիւնք բազումք չարք ի պաշտամունս խորհրդոց։ Եւ ոչ սակաւ ինչ էին այսոքիկ, ոյք ազդեալ էին ի ներքս առ տգիտութեան քահանայից կամ առ յամառութեան կուրացեալ ժողովրդեանն ի պահպանութեան սնոտի ծիսից, որպէս են զոհքն ըստ Եբրայեցւոց, զորս Մատաղ կոչեն ի Հայս, ոյք մատուցեալ լինէին և ի Կամենից ամօք ինչ յառաջ, որպէս պատմեաց ինձ նախանդամն Հայոց, թէ մատուցանեն երբեմն Հայք զայսոսիկ զոհս մեծաւ հանդիսիւ։

Մուծին զամ մի յեկեղեցին զզոհն, խոյ զեղմն, զարդարեալ ծաղկամբք, և մոմովք լուցելովք յեղջիւրս և կապեալ ձոխ ի թիկունս։ Յայնմ վայրի արձակեալ ոմն հրացան յան-

կարծակի առթիւ. խրտուցեալ եղեին ի յեղակարծում արտա-մանէն՝ փախեան և փակէր ընդ քաղաքն ընդ տիգմն հանդերձ զարդուքն, ընդ քարշ ածելով զկնի զգորգն գեղեցիկ, ի ծաղր և ի կատականս համօրէն Լեհացւոց և Ռուսաց, որ զուարճանային յոյժ, զի ոչ յաջողեցաւ նոցա ծէսն հրէական:

Յետ կարգելոյ մեր այսպէս զայս ամենայն՝ աշխատ եղաք և զժողովուրդն ամոքել, որ ըստ պատուիրանի նուիրակի կաթողիկոսին ոչ գային ամենեւին յեկեղեցիս, յետ մուծանելոյ մեր անդր զուղղութիւնն: Բազումք երթային առ մղձկելոյ սրտից իւրեանց յեկեղեցիս Լատինացւոց և այլք կամէին յաւուրս տօնից լսել պատարագ ի Խոտին քաղաքի ի Վալախիայ, որ երկու կամ երիւք մղոնիւք հեռի էր ի Կամենեցէ: Կամէին իսկ տանել զայս յաւուր տօնի ծննդեան ամենասուրբ Կուսին, այլ ըստ միջնորդութեան մերոյ արգել զայս նոցա փոխանակն զօրապետի Պոդոլսկեայ, որ խափանեաց զգլխաւորութիւն նոցա, ոչ տալով նոցա թոյլ ըստ քաղաքն ելանել յաւուրս նախատօնակին և տօնին: Այլ Աստուած եցոյց մեզ ելս հնարս, զի այնպէս իմն սահմանեալ է Նախախնամութիւնն Աստուծոյ, զի յորժամ չարիք ինչ ծագեսցին՝ գտցի և բուժումն զարմանի: Յայս իսկ է, թէ պատճառք կարեւոր ընդդիմութեան ժողովրդեանն էր թուղթն մոլորեցուցիչ նուիրակին Հայոց. այլ ծանուցին մեզ, թէպէտ և անագան ուրեմն՝ թէ է ի ձեռս դատաւորացն այլ իմն թուղթ նորա, ամենեւին հակառակ առաջնոյն և յայնմ թըղթի հրամայէ հնազանդ գոլ արքեպիսկոպոսին յամենայնի, և թոյլ տայ խառնել ջուր ի բաժակն ի ժամ Ս. պատարագին: Վասն որոյ առ ի ձեռս բերելոյ զայն թուղթ և գլխաւորելոյ զայլ գործս՝ կարեւոր համարեցաք, զի կոչեսցէ արքեպիսկոպոսն զդատաւորս, որ յօրէ անտի դառնալոյ Գրիգորիոսի քահանային՝ առ սրամտութեան կամ առ ամօթոյ ոչ ևս գային առ նա: Փոխանորդն որ միջնորդ էր ընդ արքեպիսկոպոսն և ընդ ժողովուրդն՝ լաւ ևս համարէր կոչել զնոսա յանուն իւր: Այլ ի դերև ելին յոյսք նորա, քանզի զայրացեալ էին ընդ նա դատաւորքն վասն բազմագլխի յորդորանաց նորա առ քահանայս ի մահճէ անտի, յորում դնէրն՝

զի հնազանդ լիցին արքեպիսկոպոսին, ոչինչ անկանելով հրամանաց թագաւորին և խառնեցին ջուր ի բաժակին. և առէին, թէ ոչ երբէք քարոզեալ իցէ նոցա այսպիսի ինչ ի Հռոմ և յԵրուսաղեմի, ուրանօր եկաց ամս բազումս. վասն որոյ զչարեալ արարին պատասխանի, թէ ոչ ամենեքին ճանաչեն զփոխանորդն, շատ է նոցա արքեպիսկոպոսն, առանց այլոց վերակացուաց: Ոչ սակաւ սրտմտեցաւ ընդ այս արքեպիսկոպոսն. այլ մեք վասն յայտնին պատճառաց՝ խնդրեցաք ի նմանէ մի գնել այնմ միտ, այլ կոչել զնոսա յանուն իւր: Նոեղև առ այս առիթ յարմարաւոր, վասն յանձն առնելոյ արքեպիսկոպոսին ուղեկիցս նմա չորս հեծեալս և այլս չորեսին զօրս առաց էին արքեպիսկոպոսին ի դէտս մերձակայ վերադարձի նորա: Երբև կոչեցան գաւառացիքն՝ եկին վաղվաղակի և յուսթեամբ անցեալ զայլովքն՝ իբրև լուան զկամս արքեպիսկոպոսին զվերադարձէ նորա՝ խնդրեցին թախանձագին, կալ մնալ և այլ ևս աւուրս չորս կամ հինգ, մինչև կազմեսցեն յարդարեսցեն զայլսն և զայսն և մանաւանդ զարծաթն, յոյր սակս գժգոհութիւնք էին հանապազ ընդ ժողովուրդն և ընդ արքեպիսկոպոսն, որ ոչ նուազ քան սակս երեք հարիւր պահանջէր: Այլ որ չար էր քան զամենայն՝ յորժամ արտաքսել կալան քահանայք վասն զլանալոյ խոստացելոց նոցա ի գաւառացւոցն՝ թէ ոչ ևս յայսմհետէ հնազանդեսցին արքեպիսկոպոսին՝ իսկ գաւառացիքն ետուն զօրութեամբ պատասխանի, թէ մանաւանդ պատժոց իցեն արժանի քահանայքն քան վարձուց,—զի խոստացան հանդիսապէս տալ մանաւանդ զանձինս ի խոշտանգանս և ի պատանդ զօրէն Մակաբայեցւոց, քան առնել ինչ ընդդէմ օրինաց հայրենի, և ապա սանձեալ խորհրդոց նոցա՝ զընդդէմ գործեցին վաղվաղակի՝—հրամայեալ յայնժամ արքեպիսկոպոսն հանել զնոսա և տալ ի գանձուց իւրոց սակս երկերիւր: Բայց ապա եհան յեկեղեցեացն սպասս արծաթիս, խոստանալով յետ դարձուցանել զայնոսիկ, յորժամ ընկալցի զարծաթ իւր ի գաւառացւոցն, բայց սակայն ունի առ իւր զսպասն մինչև ցայսօր ժամանակի: Ողորմութեան Աստուծոյ է արժանի, զի չև ևս ծագեցաւ խորհուրդ ի նմա վաճառել զսպասն և տալ զգրամն առ-

փածուայ իւրոց և որդւոց, որպէս արարն յայլում նուագի։ Վասն որոյ հրամայեցին դատաւորքն, նախ քան զժամանելն մեր ի Կամենեց, զատել ի պահպանս զմեծագոյն մասն սպասուց և զարդուց եկեղեցւոյ, երկուցեալ՝ գուցէ առնուցու զայնոսիկ արքեպիսկոպոսն։ Յայն խորհուրդ միաբան կայր արքեպիսկոպոսն, զի դարձցին սպասքն ի նախնին տեղի ընդ հակառակութեամբ քահանայից, այլ ոչ դատաւորացն, որպէս սովորութիւն է առ նոսա։ Այլ ես ծանեայ՝ թէ միաբանեցաւ ապա ընդ քահանայս, զի փախուսցէ զմեծագոյն մասն սպասուցն և գնոց առնուցու գիւղ մի յեկամուտ քահանայիցն։ Ոչ հաճոյ թուեցաւ այս փոխանորդին և ինձ, որ երկնչէի խռովութեան ինչ ծագել ի ժողովրդեանն, թէպէտ և յայլում ժամանակի ոչինչ հակառակէի այնմ. վասն որոյ չոգայ գիշերայն առ մի ոմն ի դատաւորացն, զոր կոչեն Սրեափոխան, առ ի ծանուցանել նմա զայն խորհուրդ և ցուցանել նմա այսու համոզողական փաստիւ զհոգածութիւն Ս. Առաքելական Աթոռոյն, որ ոչ միայն չկամի զյափշտակութիւն եկեղեցեաց, այլ զի ճոխք իցեն եկեղեցիքն ըստ կարի և զպաշտամունս աստուածայինս կարի շքով և հանդիսիւ մատուցեն։ Ի չորեսին աւուրս վերջինս՝ յորում կազմէին հանդերձէին զպէտս վերադարձին՝ դատէր արքեպիսկոպոսն հանդերձ դատաւորօքն, որոց տուեալ էր թոյլ առ ժամանակ մի վարել զհոգեւոր դատաստանս հանդերձ քահանայիւքն, ըստ վաղեմի սովորութեան իւրեանց, այլ այսու պայմանաւ՝ զի մի յայտնեսցէ դատաւորացն զքահանայս, որպէս յառաջագոյն առնէին։ Կարեւոր վարկաւ նա չահանելոյն առնել առ ժամանակ մի զայն չար սովորութիւն, զի մի թողցէ զնոսա չարակամս և զժգոհս։ Այլ իմ գոլով հանապազօր ի աքնութեան, մինչև տեսանիցեմ զյափշտակեալն թուղթ նուիրակին Հայոց՝ յաջողեցայ ուր ուրեմն առնուլ ի ձեռս արքեպիսկոպոսին զայն թուղթ ի դատաւորէ ումեմնէ, որ ի դադանիս պահէր զայն. և իբրև ծանեայ, թէ ճահաւոր է ի հանդարտել զժողովուրդն՝ հրաման ետու թարգմանել զայն բառ առ բառ ի լեզու Թաթարաց և ընթեռնուլ հրապարակաւ յեկեղեցւոջն։ Եւ այս է պատճէն թղթոյն, թարգմանեալ ի լեզու Լատինացւոց.

«Պօղոս, նուիրակ ընդհանրական կաթողիկոսին Հայոց առ ժողովուրդն Հայոց Կամենիցի.

Ծառայ Յիսուսի Քրիստոսի, Պօղոս վարդապետ և ողորմութեամբ Աստուծոյ եպիսկոպոս և նուիրակ բարձուսրբոյ և մեծի Աթոռոյն Էջմիածնի, յորմէ հասցէ գիր պաշտպանութեան և օրհնութեան ըստ շնորհաց Արարչին և նախախնամութեան Աստուծոյ՝ առ աստուածապահ քաղաքդ Կամենիցի, առ սիրելեաց ժառանգդ մեծի Լուսաւորչին և առ հաւատարիմ և մնկրիմ որդիսդ մօրս լուսոյ Էջմիածնի, առ արդարադատ և իմաստուն դատաւորսդ և առ ամենայն հաւատացեալ ժողովուրդդ, ըստ իւրաքանչիւր աստիճանի և հասակի. շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ, ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ և ի Հոգւոյն սրբոյ կենդանարարէ և շնորհաբաշխէ. ամէն: Օրհնեսցէ զձեզ Աստուած յերկնից և յերկրի, ի ծովու և ի ցամաքի, յերկրէ հրեշտակաց և մարդկան, և տացէ ձեզ զարդարել յամենայնի, ի պատիւս և ի փառս յաշխարհի, հանդերձ որդւովք ձերովք և դստերօք. ամէն:

Եւ ընդ օրհնութեանս ծանուցանեմք, քանզի եկաք առ ձեզ նուիրակութեամբ վասն սովորական տրոցն, և պատուով և սիրով մեծաւ ընկալեալ եմք ի ձէնջ, վասն որոյ շնորհ մեծ ունիմք զձէնջ, օրհնեմք զձեզ յամենայն ժամ և աղօթեմք վասն ձեր: Այլ վասն թղթոյն, զոր ձեզ գրեցաք, յորում յորդորէաք իմն զձեզ մի ընդունիլ զարքեպիսկոպոսն ձեր, այլ մանաւանդ ամի ունել հրամանի վեհափառ Ս. Հօրն ձերոյ (կաթողիկոսին), իսկ իբրև ժամանեցաք ի Խրիմ. լու եղև մեզ զի հրամանաւ Տաճկաց Եղեազար, անուանեալն պատրիարք (Կ. Պոլսոյ), արրէ ամենայն աշխարհին Հոռոմոց և նեղէ, վասն որոյ ծանուցանեմք, թէ անհնարին իմն է՝ վեհափառ հօրն հասանել մեզ յօգնականութիւն, որպէս խոստացաք, զի և ինքն ի վիշտ ծանունս տառապի, մանաւանդ իբրև ծանոյց մեզ յԼվովայ ամենասիրելի եղբայրն մեր Յովհաննէս վարդապետ, թէ պատճառ եղև խռովութեանց թուղթն, զոր գրեցաք ի Խոտինէ: Այլ ես ի բաց կամ ի յարուցանելոյ խռովութիւնս զօրէն Խաչատուր վարդապետին, որ յԼվովի էր և զոր յիշէք անշուշտ. զխաղաղութիւն կամիմ ես: Վասն որոյ իբրև գայցէ

տա ձեզ արքեպիսկոպոսն՝ մի՛ ի՛նքս ածջիք զխռովութիւն զայն ի վճիռ հակառակութեանցն ընդ ձեզ և ընդ նա. անպարտ եմ ես, զոր դուք իսկ գիտէք։ Համարիմ այնպէս՝ թէ հարկ է ձեզ հնազանդ գոլ նմա իբրև հովուի, զի որպէս աստի, ոչ իւիք կարէ օգնել ձեզ հոգևոր Տէրն մեր։ Վարեսջիք ընդ արքեպիսկոպոսին ձերում որպէս վայել է ձեզ ազնուաց, զի մի ժամանես-ցին ձեզ, որ ինչ Իլվովեցւոցն, որ սակս դժնդակի խռովութեանց բազում անգամ բազումս նեղեցան. իսկ մեք տալոց եմք համարս առաջի Քրիստոսի ամենայն գործոց մերոց։ Վասն այսորիկ աղաչեմ զձեզ՝ մի՛ ունել ի մտի զխռովութիւն իմ, եթէ պատճառք լիցի խռովութեանց. զի նոյն ինքն Քրիստոս է, որ հանուր ուրեք պատարագի։ Զխորհուրդ խառնեն նշանակէ ջուրն. և մեք առանց ջրոյ ընծայեմք (կատարեմք), և այս և մերն ճշմարիտ են։ Զայս միայն աղաչեմ զձեզ՝ զի սիրով վարեսջիք ընդ արքեպիսկոպոսին ձերում և մի՛ կոչեսջիք զիս միջնորդս։ Ողջ լերուք։ Որ կատարէն զպատուիրանս իմ՝ օրհնեսցի ի Տեառնէ. ամէն։

«Զսոյն գիր յանձն արարաք Վարդանայ, զի պահեսցէ առ իւր, եթէ ի խաղաղութիւն յանգեսցի գործն ընդ արքեպիսկոպոսին. իսկ եթէ խռովութիւնք ինչ ծագեսցին՝ ցուցցէ ձեզ։ Նաւարտեցի։

Ի Խիլում, յամի մարդեղութեան 1666, ի 20-ն Մայիսի։*)

Ընդ այս թուղթ ոգի առին սակաւ ինչ Հայք Կամենեցի։ Իսկ մեր կարգեալ զամենայն ըստ այսմ օրինակի՝ մեկնեցաք ի քաղաքէն ի 6-րդի աւուր Հոկտեմբերի, և կացեալ յԽազլովեց աւուրս երկուս՝ ի նմին ամսեանն, որ օր 16-րդ էր՝ ժամանեցաք յԻլվով, ուրանօր մեծաւ ցնծութեամբ ընկալան զմեզ ամենեքեան և մանաւանդ արքեպիսկոպոսն Իլվովայ, որ կարի զուարճանայր, զի առ կենդանութեամբ իւրով հաճեցաւ Աստուած կոչել զոչխարսն մոլորեալս ի գաւիթն ճշմարիտ և զխաւարեալ զցանկալին Միութիւն Հայոց Լեհաստանի ընդ Հռոմէական Եկեղեցւոյն, յոյր սակս աշխատ

*) Ի մի կողմն թղթոյն (ի տեղւոջ կնքոյ) յաւելեալ է. «Ես Պօղոս վարդապետ եպիսկոպոս Թոխաթեցի, նուիրակ Ս. Աթոռոյն Էջմիածնի, իմով ձեռամբ գրեցի»։

եղեն նախորդք իւր և բազում այք մեծամեծք, որպէս վկայէ յիշատակարան Անդրէաս Լեհբլենցի ի հայերէն պատարագամատուցի իւրում, տպագրելոյն ի Կրակով յամի Տեառն 1549, որ ի թղթի իւրում ձօնելոյ եպիսկոպոսի ումեմն Կամենիցի գրէ այսպէս.

«Քո է, Հայր գերապատիւ, յորդորել զպատրիարքն մեր զՊետրոս Ստարժեխովսկի, միտրապոլիտն Լվովայ, զանցեալն զաւուրբք, որ աչօքն տկարացելովք տեսանել կամէր զցանկալին միութիւն Հայոց և Ռուսաց ընդ Լատինացւոց։ Ի յորդորելն քո ջերմեռանդն փութով դարձցին և այլ եպիսկոպոսք Սարմատացւոց, յորժամ տեսցեն զքեզ, զի յաճախակի յորդորանօք և փաղաքշելով գործուցանես զվարդեմի քրիստոնեայս Հայկազեան ազգն ի միութիւն հօտին Քրիստոսի և հրամն Հոգւոյն սրբոյ սպառես և այրես զհերձուածն ամօթական, որ ընդ ձեզ ծագեցաւ և ընդ նոսա, առ անփութութեան և անփութութեան հոգևոր պաշտօնէից, որում ցանկան ամենեքեան ի խորոց սրտից, զի հասցէ ի կատարած»։ Այսպէս գրէ յիշատակարանի հեղինակն։

Օ՜հ, ի վճարման ծանրագունի և կարևորի գործոյն՝ զհետ լինելոյն ես հետևէին այլ իրք, և տակաւ տակաւ խոր ես արմատացաւ ի սիրտս Հայոց հաւատն սուրբ. այլ մեծապէս խափան լինէին ամենայնի անկարգ վարք և կենցաղ արքեպիսկոպոսին Հայոց։ Վասն յաջողութեան այսր գործոյ և այլոց ինչ սխրագործութեանց, իբրու թէ կատարելոց ի ձեռն իւր՝ խնդրէր արքեպիսկոպոսն պարգևս մեծամեծս յարքայէն, որ հրաժարեցաւ տալ նմա փոխանհայրութիւն կամ զեօղ, որպէս պահանջէր արքեպիսկոպոսն, պատճառելով թէ չէ նա ազնուական, և զի տարապայմանք են ժամանակք։ Վասն այսորիկ իբրև ընդունայն եղեն թուղթք Ս. Ժողովոյն Ծաւալման Հաւատոյ առ Նորին Արքայական Մեծութիւնն՝ աշխատ եղէ համոզել զարքեպիսկոպոսն երթալ ի Հռովմ, ուրանօր գտցէ լուծումն բղձից իւրոց։ Եւ ահա փափագելի հաւանեցաւ նա ի բանս իմ, և ես գրով զեկուցի զայս սրբազան Նուիրակին Պիգնատելլեայ. այլ քանզի ծախս կարի մեծամեծս պահանջէր արքեպիսկոպոսն ի պէտս ուղւոյն, զոր

ոչ կարէր տալ նուիրակն (որպէս ասէր) առանց հրամանի Ս. Ժողովոյն, և զի պահանջէր, զի ուղեկից եղէց նմա և ես, վասն վկայելոյ սխրագործութեանց նորա առաջի Ս. Աթոռոյն, —որ անհնար իմն էր ի ժամանակին, քանզի միայնակ էի՛—վասն որոյ առ կախ մնաց այս գործ:

Այլ ի 14-րդի աւուր Հոկտեմբերի ամին 1666՝ դարձաւ այսրէն ի Հայաստանէ նախանդամն Հայոց Իլվովայ, քահանայն Յակոբ Ռոսկի, որ տարագրեալ էր աստի ըստ միջնորդութեան Հ. Կղեմենտեայ, զօրն հերետիկոս յամառեալ. վասն այսորիկ չոգայ վաղվաղակի առ արքեպիսկոպոսն Հայոց, խնդրել ի նմանէ, զի կամ տարագրեսցէ զնա վերստին կամ դիցէ իրաւունս, քանզի ըստ հաճոյից կամաց իւրոց եկն այսր, առանց հրամանի մերոյ: Իբրև ծանեայ՝ թէ պաշտպանէ նմա արքեպիսկոպոսն և կամի առ իւր ունել զնա ընդ հենոյն բանից և բողոքանաց մերոց, և թուէր ինձ այնպէս, թէ նորին իսկ արքեպիսկոպոսին կոչեցեալ զնա իցէ՝ ծանրացաւ յայնժամ վիճակ իմ, մանաւանդ զի չէին իմ յայնժամ պաշտպանքն սովորականք, այն է արքեպիսկոպոսն Իլվովայ Տարնովսկի և նախանդամն Պետրկովսկի, որ սարկաւագ է զարդիս և պաշտպան հզօրագոյն էր առաքելութեանս մերոյ: Չոգայ յայնժամ ի հոգևոր Վարչութիւնն, ի դատարանն և առ եկեղեցականս, յարուցանել զքաղաքն ամենայն ընդդէմ արքեպիսկոպոսին առ այն՝ զի կամի զհամօրէն ժողովուրդն Հայոց դարձուցանել անդրէն ի հերձուածն ի ձեռն հերետիկոսին, որ ի պատուի մեծի էր առ ամենեսեան: Զիջաւ արքեպիսկոպոսն ընդ բանն, զոր առաջին նմա թող զայլս և փոխանորդն Հայոց Սերեմովիչ, վերատեսուչ քահանայն Կամենեցի Լեչինսկի, որ յամենայն պատահարս օգնէր մեզ հզօրապէս, Հ. Անտոնիոս, որ ի ժամանակին յայնմիկ գաւառապետ էր Հարցն Դոմինիկեանց. և ի 16-րդի աւուր ամսեանն արգել նմա մտանել յեկեղեցին. և վասն հաճելոյ զսիրտ իմ, առաքեաց առ իս բարեկամս բազումս և զնոյն ինքն Ռոսկի, որ յայտ արար թէ պատրաստական է ի դառնալ զհաւատս, զոր և կամեցիմ: Այլ ծանուցեալ իմ զկարամանկութիւն Հայոց, որք յածախակի ընդունեն ի վերին երեսս զդաւանութիւնս ստուգ այլ ոչ փոխեն զհաւատս իւրեանց՝ ոչ կամէի մնալ առն այնպիսւոյ ի մէջ

ժողովրդեանն. քանզի համարէր զնա ուրացող զոլ, որ առաքեալ իցէ ի Հայաստանէ յօժանդակութիւն արքեպիսկոպոսին առ ի դարձուցանել զժողովուրդն ի հերձուածն, եթէ յետ մահուան Հ. Կղեմենտեայ խարխափեցի առաքելութիւնս մեր, որպէս բողոքք կարծէին. կամ զի գտեալ եկեալ իցէ ջատագով զոլ հակառակութեանցն և սատար ամենայն յաջողութեան եկեղեցեաց միութեան: Բայց սրբազան նուիրակն Պիգնատելլի, որում զեկուցի զնմանէ՝ հրամայեաց ինձ ընդունել զնա, եթէ զի կաթոլիկ համարի զինքն և խոստովան լինի զմեղս իւր զառաջինս յանձն առար զնա ինձ և քահանային Պեասկովսկեայ յաղագս դաւանութեան և այլոց պայմանացն, ըստ որոց մարթ լինէր նմա մնալ աստէն. յայնժամ ընկալաք զնա, յետ դաւանելոյ նորա զկով զհաւատս կաթոլիկաց: Եւ զերկրորդ պայմանաւն, ըստ որում արգելեալ էր նմա խոստովան առնել զժողովուրդն առն եւս՝ ծաղր առնէր արքեպիսկոպոսն. իսկ որ մասն ունէին յայսմ իրի, ինձ արքեպիսկոպոսն Իլվովայ Տարնովսկի և նուիրակն Պիգնատելլի և քահանայն Պեասկովսկի և այլք՝ ոչ կարացին մինչև ցայսօր ժամանակի համոզել զԲոսկի, զի կատարեսցէ զուխտ պայմանին, թէպէտ և կասկածելի իսկ զնա համարէին կաթոլիկքն և ոմանքին եւս ոմանք, թէ ընկալեալ իցէ նորա զմահմետականութիւն և կորուսեալ զաստիճանն երիցութեան: Բայց նա զգուշաւոր էր յամենայնի, բայց ի խոստովան առնելոյն զժողովուրդն ընդ հինգն պայմանին զոր կնեաց. այնպէս զի չէին մեր առիթք կարեորք վտարելոյ զնա ի սահմանաց պետութեանն:

Իսկ ի 14-րդի աւուր Դեկտեմբերի ամին 1666, ժամանեցին այսր առ մեզ ի Հռովմայ օժանդակք երկու քարոզիչք ի կարգէն Թէատինեանց, Հ. Անջելոյ Պեկիրատի, ծնընդեամբ ի Ֆերրարայ և Հ. Ֆրանցիսկ Դարիոյ ի Վենետկէ, որ զեռ եւս սարկաւագ էր. երկոքին ամաց 24-ից կամ 25-ից, պատանիք հանդիսացեալք յիմաստութեան և ի գիտութեան, որք օրինակելի վարուքն իւրեանց և երևելի երկօքն պարծանք եղեն առ Ս. Աթոռոյն և կարգին իւրեանց: Եւ այսպէս յաջողութեամբ ի յանդ ել ամի 1666 և յայնմհետէ — յետ փարատելոյ զհերձուածն եկեղեցւոյն Հայոց և զալստեամբ

յիշատակեալ Հայոցն—հաստատ յոյս չարաչարեացն, ուր համա-
րէին թէ փոխճանեսցի ընդ իւ և գործն, զոր սկսայ: Այլ ողոր-
մութեամբ Տեառն Աստուծոյ եւս քան զեւս յաջողէր գործն։

Յամսեանն Մարտի 1667 ամի, որ օր 28-րդ էր՝ հոգւո
Հ. Անջելոյ Պետրոսի յԱռագոնից ընդ միում յաշակերտաց
մերոց, որ հանդերձէր երթալ ընդ նմա առ ի պատրաստել ի լա-
ւագոյն փոխճան զհայրն իւր հիմնադրեալ ծանրայէ: Այց
ել անդ եկեղեցւոյն, զոր ի բարեկարգութեան եդիտ և զի կա-
րի ճշգրտութեամբ պահէին Հայք զուղղութիւնն, բայց ի
սովորականէն առ նոսա անկարգութենէ, իբր զի ոչ կարի
միտ դնէին գաւառօրքն աշխարհականք ազատութեան եկեղե-
ցւոյ, մինչ զի հրամայեաց վարչութիւնն Հայոց, առաջի նո-
րին Պետրոսեայ՝ փակել յեկեղեցւոջն զժամահարն յայն սակս՝
զի եհար զզանգակ նախատօնակին առանց հրամանի Արեփո-
խանին, աւագ գաւառորին Հայոց. այլ ըստ միջնորդութեան
նորա արձակեցաւ անդրէն ժամահարն: Առաքեաց ապա Հ.
Անջելոյ յԻլվով առ արքեպիսկոպոսն զքահանայն Հայոց զԱ-
րիստակէս, զորմէ էր ամբաստանութիւն, թէ ի քանի մի նուա-
գըս մատուցեալ իցէ պատարագ ի տան իւրում առանց ուղ-
ղութեանցն և հաղորդեալ իցէ Ս. Խորհրդոյն արս ոմանս,
որ ի վերին երեսս կաթոլիկ երևէին, այլ ի սրտի իւրեանց ու-
նէին զհերձուածն և զհերետիկոսութիւն. բայց քահանայն
երդմամբ արդարացոյց զանձն իւր, և Աստուծոյ միայն մնաց
յայտնի, թէ յանցաւոր արդեօք իցէ նա: Չոգաւ անտի Հ.
Անջելոյ ի Անեատին, ի մեծի վտանգի եդեալ զանձն, քանզի
զհետ նորա պնդեցան աւազակք զմեծագոյն մասն ճանապար-
հին: Միրիլարս ը ընկալան զնա անդ աւագ երէց եկեղեցւոյն,
քահանայն Թէոդորոս և ժողովուրդն Հայոց, որ աղքատ են
յոյժ, զի խաշնարածութեամբ միայն կեան ամենեքին: Փայ-
տաշէն և փոքր էր անդ եկեղեցին, այլ պահիւր խնամով ի
բարեկարգութեան. իսկ քահանայն Թէոդորոս թէպէտ և վա-
րէր առաջի նորա ըստ ամենայն ուղղութեանցն՝ այլ երբեմն
ի հարկէ զիջանէր և ի պահանջս ժողովրդեանն, մանաւանդ
յորժամ գային անդր Հայք ի Վալախիոյ, և մատուցանէր
զպատարագն ըստ հաճոյից նոցա: Վասն այսորիկ յանդիմա-

նեաց զնա խաւսի քահանայն Անջելոյ, եւ նմա տուրս բաւ կանի իւրում, եւ յանձն առնելով զնա վերատեսչի Հարցն Դոմինիկեանց՝ դարձաւ յԷրզրումից, եկաց անդանօր աւուրս ինչ ի պատճառս ջերմոյն՝ եւ ապա չոգաւ ի Սամնխալաւով, քանզի ոչ կարէր երթալ ի Կամենից, որպէս կարգեալն էր՝ վասն վտանգի ճանապարհին յերեսաց աւազակացն, որ Օդ-ՃԷԼԷԼԻ կոչին. տեսեալ անդ զջերմեռանդութիւն Գրիգորիս քահանայի Բալասանայ ի գործի միութեան, յանձն առնէ զնա վերստին վերատեսչի քաղաքին եւ դարձ առ մեզ առնէ ի վերջ կոյս Ապրիլի նորին ամին 1667-րդի:

Մինչդեռ շրջէր քահանայն Անջելոյ ընդ եկեղեցիս ընդ այսոսիկ՝ զայրացեալ զատաւորացն Հայոց ընդ արքեպիսկոպոսն իւրեանց վասն անտանի վարուցն, յորում յարատեւէր եւ մեծամեծ նեղութեանցն, զորս նեղէր զնոսա ի դէպս պատկաց եւ թաղմանց եւ վասն տանելոյ նորա յորդորանաց մերոց եւ խնդրանաց՝ զխմեցին զօրէն առաջնոյն նուագի՝ առ արքեպիսկոպոսն Իլվովայ Տարնովսկի, խնդրելով եւ հնարս գտանել ընդդէմ չարեացն: Նոյնպէս մեծարգոյ ծերունին առ արքեպիսկոպոսն Հայոց, զի հաճեսցի երթալ առ նա, իսկ սորա զխտելով զընդէրն, հրաժարեցաւ երթալ: Յայնժամ զրով եսուն զատաւորքն արքեպիսկոպոսին Իլվովայ զամբաստանութիւնն, յորում էին կէտք կարեւորք եւ արժանիք մտադրութեան, զոր փաղփաղակի յղեաց առ արքեպիսկոպոսն Հայոց եւ խնդրեաց՝ զի գրեսցէ զրով պատասխանի ապացոյց: Իսկ իբրեւ եւ այսու ոչինչ ընկալան՝ կարգեցին ամենեքեան զոյկ թուղթ խնդիր առ սրբազան նուիրակն Պիգնատելլի, խնդրելով ի նմանէ՝ զի հաճեսցի զարման ինչ տանել այնմ ի ձեռն լիազօր փոխանորդին իւրոյ. եւ թող զայս՝ խնդրեցին, զի եւ նա գրեսցէ առ Նորին Մեծութիւնն, Թագուհին Մարիամ Լուդովիկէ, զոր եւ արարի իսկ փոյփաղանի, եւ գնեսցի զամենայն թագուհւոյն բառ կամաց նորա: Օրթուղթն յանձն արարի միում յընկերաց մերոց, Ֆրանցիսկեայ Դարիոյ, որ երանէր ի Վարշաւայ ձեռնադրել քահանայ, քանզի սա զժուարութիւնս ինչ ծագեցան յայս սակս, զի չեւ էր հասեալ նորա ի հասակ սահմանեալ, թէպէտ եւ էր նորա ի Ս. Աթոռոյն արտօնութիւն ձեռնադրելոյ առաւ մի յառաջ:

Վասն այսորիկ յուղի անկաւ յիշատակեալ Հ. Դաւիթ ի Վարշաւայ յերկրորդի աւուր Մայիսի 1667 ամին հան- գիրձ թղթովքն, բայց երբև ժամանեաց անդր՝ լուաւ թէ աւուրբ յառաջ քան զգալուստ նորա փոխեցաւ Թագուհին յերջանիկ կեանս, ի սուգ ընդհանուր ամենեցուն, որ բարե- հաճքն էին ընդ առաքելութիւնս մեր, որում պաշտպանէր Թագուհին ալքայական փութաջանութեամբ, որոյ մահ եւր կորուստ անփոխարինելի եղև մեզ։ Պատմեն, թէ երբև լուաւ զայս լուր տրտմութեան արքեպիսկոպոսն Հայոց՝ բացագան- չեաց. «Մեռաւ ուր ուրեմն աստուած նոցա։ Այլ վրիպեցաւ նա, քանզի ծառայեմք մեք Աստուծոյ, որ ոչ երբէք մեռանի. և ծառայ նորա, նուիրակն Պիգնատելլի փութացաւ սփո- փել զվիշտս և զարտասուս ժողովրդեանն իւրոյ. և գիտելով թէ քանի ազդու էին բանք սարկաւագին Պեասկովսկեայ, ար- գի նախանգամին Իլվովայ՝ որ յամենայն ժամ ցուցանէ զեւր զբուռն սէր և զհաւատարմութիւն առ Ս. Աթոռն և առ առաքելութիւնս մեր՝ գրեաց նմա թուղթս երկուս, օրինակ զայս.

«Արքայան և գերապատիւ Հայր. Զի՞նչ ինչ զայթակղու- թիւնքն իցեն տարօրինակք, զորս առնէ արքեպիսկոպոսն Հայ- ոց Իլվովայ՝ լքանելով զեկեղեցին, զորս յանշքութիւն վայր ածէ, թէպէտ և մնանեն ի զանձանակն տուրք բարեպաշտօն պրանց ի պէտս բարեզարդութեան եկեղեցեացն, ունելով կանայս կախաձեւելս ընդ որս կեայ և հաղորդութիւնս առնէ, անփոյթ զոլով զեկեղեցականացն, զորս ոչ յորդորէ լսել զդասս Տեղեացն՝ զորս աւանդեն Հայքն Թէատինեան կարգի այդր յԻլվով։ Դրե- ցի ես առ նա թուղթ յորդորանաց. բայց քանզի գիտեմ զթուլու- թիւն նորա՝ գիտեմ այսու առ առաքելական ջերմեռանդութիւն որբագան գերապատիւ Հօրդ, որ երևելեղ էք ի բարեպաշտու- թեան և յեռանդն ի փառս Աստուծոյ և ի բարի բարի գործս զի յարեաջէք առ յիշատակեալն արքեպիսկոպոս և յորդոր լեջէք նմա կատարել զպարտիս, որ եդեալ են ի վերայ նորա և ելանել ի տղմոյն, յորում թաթաւեալն է, (որպէս լսեմ)։ Այս քան առաքելական ճահաւոր է յոյժ բարեպաշտութեան գերապա- տիւ Հօրդ, և մի թուեսցի ծանրաբեռն։ Լուայ զարձեալ՝ զի քահանայն, որոյ հրաժարեալ ի հերձուածոյն ցանկացեալ էր

մտանել անդրէն յեկեղեցին Հայոց և ի սկզբան անդ ջերմե-
ռանդն երևէր ի գործի հաւատոյ՝ արծարծէ զարդիս կարծիս
մոլորականս, կասկածելիս և օտարս ի ճշմարիտ հաւատոյ, և
կամ այսպիսի ինչ, զոր լուայ զնմանէ։ Աղաչեմ զձեզ, հաճես-
ջիք յանձն առնել արքեպիսկոպոսին, զի հանցէ ի նմանէ
զերաւունս խոստովանութեան, որպէս զի մի և յայլս ճարա-
կեսցի ախտն։ Գիտելով իմ զփութաջանութիւն և զջերմե-
ռանդութիւն գերապատիւ և սրբազան Հօրդ՝ համարձակեցայ
գրել ձեզ զբանս զայսոսիկ, յորս յաւելում զաղօթս իմ, զի
առատացուսցէ Տէր զշնորհս իւր ի ձեզ։

Ի 21-ն Մայիսի 1667 ամի։ Ստորագրեալ.
Ի Պարշաւայ։ Արքեպիսկոպոս Լարիսայ։

Կատարեաց վաղվաղակի սարկաւագն զյանձնարարութիւն
նուիրակին, այլ ոչինչ շահեցաւ առ արքեպիսկոպոսին Հայոց.
վասն այսորիկ գրեաց առ նա նուիրակն թուղթ երկրորդ ան-
գամ, զայս օրինակ.

«Սրբազան և գերապատիւ Հայր. Ոչ անգէտ է գերապա-
տիւ Հայրդ ջանիցն, զորս ի գործ եդաք, որպէս զի ի բաց
փարեսցէ արքեպիսկոպոսն Հայոց ի Լվովայ զանձինս, զորոց
կասկած է անստակութեան, և զի կեցցէ որպէս պատշաճն է
աստիճանի նորա և կոչմանն։ Նա իսկ, յորժամ յԼվովի էր՝
ջանացայ համոզել զնա, զի արձակեսցէ զատրփածուն իւր։ Նա
թէպէտ հնազանդեցաւ ինձ յայնժամ, այլ ժպրհեցաւ կոչել
անդրէն առ ինքն զկինն, զոր արձակեալն էր միանգամ։ Իսկ
զարդիս ի չարագոյն ևս յանցանս զառածի, ոչ շատացեալ
կնաւն։ Ոչ ամաչէ արդեօք ծերն զառամեալ՝ զի արանց աշ-
խարհականաց գայթակղեալ ի վերս նորա՝ բորբոքին յատեան-
դրն առաքելական ընդդէմ զարշ կենաց նորա և պահանջեն
հանապազ դարման կարևոր վասն փառաց եկեղեցւոյն Աս-
տուծոյ։ Կամ էր Ս. Ժողովոյն կոչել զնա ի Հռովմ, և ես իսկ
բարեյաջող վկայութեամբք իմովք ոչ սակաւ եղէ սատար, որ-
պէս զի ընկալցի նա անդ թեմ ինչ եպիսկոպոսական կամ այլ
ինչ եկամուտ ըստ աստիճանի իւրում և կեցցէ վայելչու-
թեամբ։ Նա ընդունէր անշուշտ զայս, եթէ ունկնդիր լեալ էր

խորհրդոց իմոց. քանզի խոստացաւ իսկ Ս. Ժողովն հաւանել ընդ առաջարկութիւն իմ. բայց թուի ինձ, թէ այրդ բարի լաւ ևս համարի կալ միայ յաղօթողութեան և յարատևել ի տեղի անդ: Այլ որպիսի՞ են չարիքն, և ո՞վ ոք իցէ, որ ոչ տեսանիցէ զայնոսիկ: Արդարացի յոյժ բողոքեն այլք աշխարհականք՝ թէ պատիւ եկեղեցւոյ պահանջէ վախճան ուրեմն առնել զարչ և մեղկ տափանաց ծերոյն: Այլ իմ չէ ևս ձեռնարկեալ հնարս խստագոյնս՝ զիմեմ յօժանդակութիւն սրբազան գերապատիւ Հօրդ, որոյ ազնուութիւն և եռանդն առաքելական ի փառս Աստուծոյ և Եկեղեցւոյ յայտնի են ինձ անձամբ այլ և վկայութիւնս բարիս յոյժ ընկալայ վասն ձեր: Ուստի համարեցայ, թէ չէ ևս ի կիր արկեալ հնարս սաստկութեան՝ հարկ է յանձն առնել զայս գործ գերապատիւ Հօրդ, որոյ յաջողութիւնք և ճարտարութիւն յայտնի են: Անշուշտ եմ՝ թէ ջանիւք և յորդորանօք գերապատիւ Հօրդ կատարեսցի, զոր ինչ խնդրեն հաւատացեալքն ի Կրիմաս և յաւատնն իրաւամբ՝ զի մերժեսցի զայթակղութիւնն ի բաց: Վասն այսորիկ հաճեսցի գերապատիւ Հայրդ ըստ ջերմեռանդութեան և խոհեմութեան իւրում կարգել այնպէս՝ որպէս զի թողցէ հովիւն զկենցաղ իւր խայտառակ, արձակեսցէ զկանայսն, անջատեսցի ամենեքին ի նոցանէ և վարեսցէ կեանս բարւոք և ողջախոհ: Ոչ միայն այսու զհարկ ծառայութեան կատարեսջիք, այլ և պատիւ մեծ գտջիք, յորժամ զայս գործ գերապատիւ Հօրդ ծանուցից Ս. Աթոռոյն: Իսկ եթէ յընդունայն եղեն ամենայն վաստակք և ջանք ձեր՝ զեկուսջիք ինձ յայնժամ, որպէս զի ձեռնարկեցից հնարս ազդողագոյնս և խստագոյնս: Յանկամ առողջութիւն գերապատիւ Հօրդ, և յանձն առնեմ զինքն իմ սրտի Ձերում:

Ի 4-ն Յունիսի 1667 ամի: Արքեպիսկոպոս Լարիսայ:
Ի Վարշաւայ:

Ըստ այսմ թղթոյ՝ վերստին կալաւ սարկաւագն համոզել զարքեպիսկոպոսն բարւոքել զկենցաղավարութիւնն անառակ· այլ յընդունայնանալ ջանից նորա յայտնի ևս նուագի յայտնեաց սրբազան նուիրակին, որոյ յաղճիւս կրթեալ ընդ յա-

մտութիւն անխոհեմ արքեպիսկոպոսին՝ առաքեաց ի ձեռն յիշատակեալ քահանային Դաւթի յԻլվով յանձնարարութիւն առ երեսին եպիսկոպոսունս, որ հանդերձեալ էին գալ այսր վասն հաստատելոյ գործոց, առ արքեպիսկոպոսն ասեմ Իլվովայ և առ եպիսկոպոսն Պողնանի և Պերեմիշլի։

Ի 28-րդի աւուր ամսեանն Յունիսի ժամանեաց այսր Դաւթի քահանայն և զյանձնարարութիւն նուիրակին առաջի արար արքեպիսկոպոսին Իլվովայ և եպիսկոպոսին Պերեմիշլի, քանզի ոչ էին այսր արքեպիսկոպոսն Պողնանի, որպէս յուսայինն։ Իսկ արքեպիսկոպոսին Հայոց կամելով ծածկել զյանցաւորութիւն իւր՝ յամենայն զօրութենէ իւրմէ ջանայր հաճել զմիտս եպիսկոպոսին Պերեմիշլի, որ չէր ինչ քաջ տեղեակ գործոց և արարոց նորա, որպէս արքեպիսկոպոսն Տարնովսկի։ Ցուցանէր իմն փափագ մեծ ելանելոյ ի Հռովմ, զոր բազումք կամէին. վասն որոյ բարւոք թուեցաւ ինձ յետս կալ եպիսկոպոսացն ի կատարելոյ զյանձնարարութիւն պատուէրին, զի մի այսու խափանեսցի այն խորհուրդ օգտակար, որում ձգայր անհամբերութեամբ. այլ գիտացեալ, թէ չէ մարթ ի ձեռն թղթոց ի հաւանութիւն ածել զնուիրակն Պիգնատելլի յաղագս ծախուց, զորս պահանջէր արքեպիսկոպոսն ի պէտս ուղւոյն՝ խորհուրդ ետու նմա երթալ ի Կրակով ի յուղարկաւորութիւն թագուհւոյն Մարիայ Լուդովիկեայ և անդ բանակցել ընդ նուիրակին, յորմէ ընկալցի արդեօք կատարումն ամենայն պահանջմանց իւրոց օրինաւորաց և թուղթս բարեխօսս յարքայէն և անցագիրս, զորս խնդրէր։ Հաճոյ թուեցաւ արքեպիսկոպոսին խորհուրդ իմ, մանաւանդ զի յուսացեալ էր այսու յեղանակաւ ընդունել հրաման՝ զի և ես ուղեկից եղէց նմա յԻտալիայ։ Եւ ահա յուղի անկաք մեք ի Կրակով յ18-րդի աւուր Սեպտեմբերի 1667 ամի և օգնականութեամբ Տեառն ժամանեցաք անդր յաջողութեամբ ի 28-րդի աւուր ամսեանն։ Դէպ եղև մեզ անդ տեսանել զքահանայն Յովսէփ Կարացիոլի, զոր առաքեալ էր Ս. Ժողովն յԻտալիոյ ի պաշտօն Վերատեսչի առաքելութեան, ըստ առաջարկութեան իմում։ Ի պատճառս գալստեան Հ. Կարացիոլեայ, որ ընդունակ էր վարելոյ պաշտօնս ծանունս՝ զի-

բացաւ յայտ գործն, վասն որոյ խոստացաւ նուիրակն Պիգնատելլի տալ սկուդս 500 ի ծախս ճանապարհին, այլ և ինձ ևս թոյլ ուղեկից գոլ նմա, և այս ոչ հաճոյ եղև Հ. Կարացինելեայ, որ յուսայրն՝ թէ ի սկզբան փարելոյ իւրոյ զգործս առաքելութեանն օգտակար անշուշտ եղէց նմա փորձառութեամբ իմով, զոր ստացայ յընթացս ամաց: Իսկ յորժամ կարգեցաւ, կազմեցաւ ամենայն ինչ ի պէտս ուղւոյն, զոր փութացուցանէր կարի Նորին Մեծութիւնն, խաւսեւ յանդիմանելով զարքեպիսկոպոսն ըստ առաջարկութեան նուիրակին՝ ընկալաք յանկարծ լուր յԼվովայ, թէ ջոկերք թաթարաց և խաղախաց ի հուր մատնեալ բազմութիւն գիւղորէից ի Պոդոլեայ և ի Ռուսիայ՝ մերձենան տակաւ յԼվով, և է վտանգ պաշարման քաղաքին: Արքեպիսկոպոսն ոչ փոխեաց զխորհուրդ իւր վասն իւրոյն, այլ ընդ հակառակն նախին՝ կամելով խոյս տալ ի վտանգէն՝ ևս քան զևս փութացուցանէր զուղևորութիւնն, թէպէտ և յառաջագոյն, մինչև էր խօսեցեալ ընդ արքային՝ խնդրէր եօթնեակս ինչ ժամանակ, առ ի յարդարել զգործս տան իւրոյ: Այլ նուիրակին Պիգնատելլեայ երկուցեալ՝ զի մի դժպհի թուեսցի ի Հռովմ ուղևորութիւնն յայնպիսի դէպս, որ փախուստ թուէր մանաւանդ՝ հրաժարեցաւ տալ զարծաթն, զոր խոստացեալն էր, և ոչ ևս սկուդս երեքհարիւր, որոց շատանայր ուրեմն արքեպիսկոպոսն, փութացեալ մեկնել ի Հռովմ, և ոչ տայր ինձ թոյլ ուղեկցել նմա, յայտ արարեալ՝ թէ հարկ է ձմեռել վաղվաղակի յԼվով, առ ի վճարել զպէտս աշակերտացն ի ծանր ժամանակին: Եւ ահա յոչինչ լուծաւ գործն, և արքեպիսկոպոսին զայրացեալ յայտ արար, թէ յայնմհետէ ոչ ևս խորհեսցի զուղևորութենէն, բայց եկաց մնաց առ ժամանակ մի ի Կրակով, մինչև ապահովեցին ճանապարհքն ի վտանգէն: Իսկ ի նմին ժամանակի, յորում ի մեծի տարակուսանս էր աշխարհն բովանդակ սակս հինիցն՝ ցանկացեալ Հ. Կարացինելեայ ըստ կարի փութով տեսանել զԼվով կամէր, զի թողուցուք զարքեպիսկոպոսն և յուղի եղցուք: Աւուրս երկուս կամ երիս շրջեցաք խնդրեցաք ընդ բոլոր քաղաքն, այլ ոչ ոք ի կառավարացն առնոյր յանձն ի վտանգի դնել զանձն, առ սէր վարձուց արծաթոյն: Մեր ու-

րեմն զգեցեալ արքեպիսկոպոսին զզէն արութեան՝ զի ոչ կարէր հայթայթել ի Կրակով քաղաքի զծախս բազմաթիւ սպասաւորացն իւրոց և երիվարաց՝—եդ ի մտի յուղի ելանել. և տեսեալ՝ թէ ոչ կարեմք գտանել երիվարս՝ գթացաւ ի մեզ և էառ ընդ իւր։ Եւ մեկնեցաք մեք ի Կրակովէ ի 6-րդի աւուր Նոյեմբերի 1667 ամի, և փոքր մի եւս և մտանէաք ի ձեռս թշնամւոյն, որ թէպէտ փախեալ և որջացեալ էր ի քաղաքէն Պոդհայցի,—որ աւուր միոյ կամ երկուց ճանապարհաւ հեռի է յԼւովայ—այլ սփռեալ էր նորա ընդ ամենայն շրջակայ գաւառս զհեծեալս քանի մի հազար, և եթէ չէր կալեալ զնա ի գլխաւորջն այրն Սոբեսկի, մեծ հեթմանն արքայական—որ սակաւաձեռն գնդաւ պաշարեաց զթշնամին՝ մինչև կազմեսցէ Հանրապետութիւնն զօրս կամաւորաց, —և չէր հարկեցուցեալ այսու զթաթարս նահանջել յետս՝ կնքեալ ընդ նոսա հաշտութիւն և խոստացեալ հատուցանել զտուգանս ըստ պայմանի՝ ծաւալէր արդեօք հրկիզութիւնն մինչև ի ծոց Հանրապետութեանն։ Այլ մեք ողորմութեամբն Աստուծոյ ժամանեցաք յաջողութեամբ յԼւով, ի 19-րդի աւուր նորին ամսեանն։

Իբրև եկեալ ժամանեցաք մեք յԼւով՝ յանձն արարի անդէն զվերատեսչութիւն առաքելութեանն և դպրանոցին ի ձեռս Հ. Կարացիոլեայ մեծաւ յօժարութեամբ, որպէս զի գտնէ սակաւ մի հանգեայց ի վաստակոցն, զորս վաստակեցայ յետ մահուան Հ. Կղեմենտեայ։ Այլ ծանեայ ընդ հուպ՝ զի թէպէտ և հանճարեղ յոյժ էր և իմաստուն Հայրն Կարացիոլի, բայց քանզի անփորձ էր վարելոյ ընդ արքեպիսկոպոսին և ընդ Հայս՝ վասն այնորիկ ոչ ընդ երկար տևելոց էր խաղաղութիւնն։ Եւ ոչ վրիպեցայ. քանզի զայրացաւ արքեպիսկոպոսն ընդ Հ. Կարացիոլի, առ այն զի չունէր ի Ս. Ժողովոյն թուղթ առ նա, (համարէր իմն ի մտափառութեան իւրում արքեպիսկոպոսն՝ թէ չէ անկ փոփոխութեանց ինչ լինել ի դպրանոցին և յառաքելութեան զանխուլ ի նմանէ) և բազում անգամ ասէր՝ թէ ոչ ընդունի զՀ. Կարացիոլի ի վերատեսուչ, մինչև ընկալցի ի Հռովմայ առանձին յայտարարութիւն զայսմանէ, և ոչ շատանայ թղթով Ս. Ժողո-

վոյն, որով կարգի նա վերատեսուչ։ Ոչ փոյթ ինչ արար այսմ քահանայն Կարացիոլի, այլ առեալ ի ձեռս զղեկ վարչութեան՝ հեզութեամբ իւրով և քաղցրութեամբ ընդ փոյթ յինքն յանկոյս զսիրտս ամենեցուն։ Ի թիւս այլոց թերութեանց դպրանոցին—յորոց ոմանք անտես լինէին ի նախորդաց ∸. Կարացիոլեայ, աննշանք փոլով, իբր զի չէր մարթ այնպիսում մեծի հաստատութեան առանց դժուարութեանց լինել—էր և թերութիւն մի, զորով զանց առնէաք, որպէս զի մի զրգռեսցուք զժողովուրդն, որ սակս դուզնաքեայ ինչ փոփոխութեան, զոր ի ներքս մուծանէաք՝ համարէր անշուշտ, թէ մուծանիցեմք յեկեղեցի նոցա զկրօն մեր և խռովէր. վերատեսուչ քահանայն թերութիւն կարեւոր համարեցաւ զայս՝ զի չէր (ի դպրանոցի) մատուռն առանձին վասն աղօթից, այլ մինչև ցայն վայր աղօթէաք առաջի պատուականի պատկերի միոջ։ Քննեաց, զննեաց զամենայն անկիւնս և ծերպս բնակարանին և իբրև առ անձկութեան տեղւոյն ոչ եգիտ տեղի յարմարաւոր վասն դասուց թուագիտութեան, յորում հանգիստցեալ էր ինքն, հրամայեաց խորտակել զմի ի սենեկացն, յորում բնակէր սպասաւոր դպրանոցին և էին անօթք այլ և այլք՝ զի կազմեսցէ անդ զմատուռնն։ Զայս յայտ արարի ես արքեպիսկոպոսին. իսկ նորա համարեալ, թէ չէր հնար այնմ լինել առանց հրամանի իւրոյ՝ ընդդէմ եկաց գործոյն յամենայն զօրութենէ իւրմէ և յանձն արար փոխանորդի իւրում յայտնել ինձ՝ թէ ոչ զոք գիտէ տեսուչ առաքելութեան, բայց միայն զԱ-լյիխոս Մարիուս։ Պատասխանի առ այս արարի՝ թէ ոչ ես միջամուխ եմ ես ի գործ վարչութեանն, զոր հանի յինէն (որպէս և էր արդարև). այլ պարապեալ եմ ի գիտութիւնս և հնազանդ հանապազ, մինչ զի փոխեցայ ի վերատեսուէն բնակարանին յառանձինն սենեակ, որպէս զի ազատ ես լիցին տեսուչն և որք ընդ նմա այք առնել՝ զոր ինչ և ազդիցէ Աստուած ի սիրտս նոցա։ Այլ ոչ շատացեալ արքեպիսկոպոսին պատասխանեաւն իմով յայտ արար, զի եթէ ոչ առից ես յանձին փարատել զանկարգութիւնն՝ գացէ ինքն հնարս խափանելոյ զայնոսիկ։ Իսկ քահանայն Կարացիոլեայ այսպէս արարեալ զայտաքումբք՝ ի սկիզբն գործոյն՝ հրամայեաց զնոց առնուլ զե-

բանս հարկաւորս, կոչեաց ատաղձագործս, չափեաց զերկայնութիւն և զլայնութիւն մատրանն և կանգնեաց ի մէջն սեղան։ Զայրացեալ յոյժ արքեպիսկոպոսին ընդ այս՝ արգել աշակերտացն քարոզել յեկեղեցւոջ, որպէս առնէին նոքա յետ Միութեանն Կամենիցի մինչև ց15-ն Նոյեմբերի 1667 ամին։ Առաքեաց ապա կրկին անգամ զերկուս ի քահանայից իւրոց առ տեսուչն հարցանել, թէ որո՞վ իրաւամբ շինէ զմատուռնն, և հուսկ ուրեմն հրամայեաց յայտնել նմա խիստ և զկծողական բանիւք՝ թէ ոչ տայ նմա թոյլ յառաջ վարել զշինութիւնն։ Եւ իբրև ոչ գոհացաւ բանիւ պատասխանւոյ տեսչին —որ սրտմտեալ սաստեաց ասել ցնա, թէ գոլով ի պապական դպրանոցին և վերատեսուչ նորին, ունի ազատ իրաւունս վարել որպէս և կամիցի ի մեծագոյն փառս Աստուծոյ՝—յարեաւ յայնժամ և եկն անձամբ ի դպրանոցն և հրամայեաց գործաւորացն դադարել ամենևին ի գործոյն, զոր և արարին նոքա անդէն, որպէս պատուիրեացն նոցա. և չէր հնար յորդորել այլ եւս զնոսա ի գործ, ոչ աղաչանօք և ոչ սպառնալեօք։ Յաւել ապա բանս խիստս ընդդէմ քահանային Կարապետեայ և մեկնեցաւ անտի, պանծացեալ՝ թէ կատարեցան կամք նորա։ Այլ վրիպեցաւ արքեպիսկոպոսն. քանզի տեսչին և աշակերտացն առեալ գործիս հիւսանց՝ զօր և զգիշեր գործէին և յաւուրս երկուսի ի գլուխ հանին զմատրանն շինութիւն, ընդ որ սրտմտեցաւ նա յոյժ և սպառնացաւ խորտակել զայն ամենայն և անիծանել զաշակերտսն, որք ոչ յուշի կալան զբարկութիւն նորա։ Եկն մերձեցաւ նա ժամ մի գիշերայն հանդերձ սպասաւորօքն իւրովք ի պատուհան սենեկին, յորում գործէր տեսուչն հանդերձ աշակերտօքն, և առեալ վէմ մի ծանր՝ արկ ի ներքս, այլ ոչ եհաս վէմն մինչև ցպատուհանն և անկաւ յերկիր։ Իսկ նորա երկուցեալ, զի մի ծանիցեն աշակերտքն զարկանող վիմին և հարցեն իւրք զգլուխ նորա՝ ոչինչ յաւել առնել և գնաց ի տուն իւր։ Այլ այսու վարուք իւրովք այնպէս զրգռեաց զժողովուրդն ընդդէմ մեր, մինչ զի գոչէին ամենեքեան առհասարակ, թէ զմի միայն կամին քարոզել, զԱղայխինոս Մարինոս, որ միայն գիտէ զլեզուն Հայոց։ Զի թէպէտ և ուսեալ էր քահանայն Կարապետ ի

Հ. Կղեմենտեայ զլեզուն Հայոց, այլ քանզի չէր արկեալ զայն ի կիր ամս ինչ՝ բազում ինչ մոռացեալ էր. և կարի համեստ գոլով ոչ կամէր բացատրել զգիտութիւն իւր ի հրապարակական հանդէսս կամ ի վիճաբանութիւնս ի լեզու Հայոց և ոչ առաջարկէր աշակերտացն խնդիրս ի ջատագովութիւն, որպէս առնէաք մեք յառաջագոյն յաճախակի նախ քան զգալուստ նորա աստ. վասն որոյ և կայր մնայր ժողովուրդն ի վերջական կարծիս իւր: Այլ ինձ ոչ հաճոյ էին խռովութիւնքն, մանաւանդ զի ոչինչ օգուտ էր յայնցանէ կրօնից կամ Միութեանն, բայց ծագեցան յաղագս առանձին նորամուծութեան իրիք, որ ոչ կարևոր ինչ էր. վասն այսորիկ, ըստ առաջարկութեան տեառն քահանայից, հետամուտ եղէ հաշտեցուցանելոյ զհակառակորդսն, և ի ձեռն փոխանորդին կարգեցաւ հաշտութիւնն յ19-րդի աւուր Նոյեմբերի 1667 ամին այսու պայմանաւ՝ զի մնասցէ և առ ապա մատուռնն նոր, այլ ի բաց բարձցի սեղանն, որ կանգնեալ էր ի նմա, և փոխանակ նորա դիցի սեղան փայտեայ, որպէս և է մինչև ցայսօր. որպէս զի մատուցեն անդ պատարագս առ հարկի միայն կամ ի դէպս տկարութեան: Այլ ոչ ընդ երկար տևեաց հաշտութիւնն, քանզի ոչ կամէր արքեպիսկոպոսն տալ թոյլ աշակերտացն քարոզելոյ. և իբրև ի կիւրակէի անդր կոչեցաւ կրօնաւոր ոմն Լատինացի քարոզել յեկեղեցւոջն՝ հրամայեաց տեառն քահանայն՝ մեկնել յեկեղեցւոյն աշակերտացն ամենեցուն և դառնալ ի դպրատունն, ընդ որ կարի զչարեալ արքեպիսկոպոսին՝ չոգաւ առ սարկաւագն և յայտ արար նմա զդժգոհութիւն իւր վասն ընթացից տեսչին:

Իսկ զայնու ժամանակաւ առ գոլորշեաց կրոյն, որով բռնեալ էին քարեղէն որմունք բնակարանին ի խոնաւ և ի ցուրտ ժամանակի, կամ առ խանձին ի ջերմացեալ յոյժ վառարանացն—զի աշակերտացն ընկալեալ հրաման ի տեսչէն՝ առանց չափու և քանակի յաւելուին փայտ ի վառարանս—կամ առ այլոց իրիք պատճառաց՝ ի26-րդի աւուր Նոյեմբերի խօթացան ջերմամբ աշակերտք ինն կամ տասն, զրեթէ ի մի և ի նոյն ժամանակի, իսկ յետ նոցա ինքն տեառն և հայրն Դարիոյ. մինչ զի քահանայն Անջելոյ միայն մնաց առողջ առ ի

դարմանել զհիւանդսն։ Եւ արդարև խնամեաց նազ մեզ հօթնեակս քանի մի ըստ հոգևորին և ըստ մարմնաւորին մեծաւ անձնանուիրութեամբ և հրեշտակային արդարև սիրով. բայց յորժամ ապաքինեցան ամենեքեան, բաց յայնոցիկ, որ մեռանն՝ հիւանդացաւ և նա ի մահ։ Եւ ո՞վ կարէ պատմել զնեղութիւնս, զորս կրեցաք ի հիւանդութեան մերում առ անձկութենէ բնակարանին,—իբր զի ամենեքեան ի միում և եթ սենեկի դնէաք, ախտացուցանելով այր զընկեր իւր,—առ ի չգոյէ սպասաւորի, զի ամենայն քաղաքն համարէր՝ թէ փարանկեչ ախտացեալ իցեմք զախտ, վասն որոյ և ոչ ոք յայց մեզ ելանէր, սոյնպէս և առ պակասութեան կարեւոր իրաց. զայս ամենայն դժուարին է պատմել։ Նոյն արքեպիսկոպոսն ոչինչ հայեցեալ ի թշուառութիւնս մեր՝ (իբր զի ոմանք ի մէնջ և ես հաղորդեցաք Ս. Խորհրդոյն և զրկեցաք ի բանէ), փոխանակ զթալոյ ի մեզ՝ ոչ շատ համարեցաւ, զի Լատինացեք ոմանք առ ի հաճոյս նմա ամբարձին զձայնս իւրեանց յամբիոնէ անտի ընդդէմ մեր,—յորոց մին պատժեցաւ ապա խստիւ ի Նուիրակէն և ըստ միջնորդութեան իմում ընկալաւ ի նմանէ՝ ներումն,—այլ և կոչեաց առ ինքն զպատուաւորս Հայոց, խորհուրդ ի մէջ առեալ հանել ի դպրանոցէն զերկոսս կամ զերիս աշակերտսն, որ անձնանուիրութեամբ մեծաւ խնամէին զմեզ ի ցաւսն, որք ժամանեցին մեզ։ Պատճառէր արքեպիսկոպոսն թէ երկնչի, գուցէ փարանկեցին աշակերտքն ախտին և մեռացին. բայց խորհրդոյ նորա այսմիկ ընդդէմ եկաց հզօրապէս քահանայն Սնջելոյ, որ ասաց՝ թէ լաւ ևս է պեղել փոս ընդարձակ ի գերեզմանի և թաղել զամենայն հիւանդսն կենդանւոյն նախ քան զձեռնարկելն յայն գործ զմնէութեան՝ քան առ նոցա մեռանել տակաւ տակաւ յայնպիսում թշուառութեան։ Լուեալ արքային զայս ամենայն՝ գրեաց թուղթ խիստ առ արքեպիսկոպոսն, զորոյ զթարգմանութիւն յարեմ աստ։

«Յովհան Կազեմիր, ողորմութեամբ Աստուծոյ Թագաւոր Լեհաստանի. Մեծ Իշխան Լիթուայի, Ռուսիոյ, Պրուսիոյ, Մազովիայի, Լիֆլանդիոյ, Սմոլենսկի, Չերնիգովի. Արքայ Շվեդաց, Գոթաց և Վանդալաց. Գերապատիւ ի Քրիստոս

և սիրելւոյ մերում Արքեպիսկոպոսին Հայոց Իլֆովայ։

Լուաք թէ նեղեալ յոյժ ի ձէնջ հայքն Թէոդոսիանք և աշակերտք պապական դպրանոցին, որք պահին յԻլֆովի ծախիւք Ս. Հօրն ի ծառայութիւն փառաց Տեառն Աստուծոյ, որպէս զի ոչ միայն չհոգայք զքահանայիցն՝ կարևորաց ի տաճար Աստուծոյ, այլ և խուէք զնոսա յարաժամ ի ձեռն անձահ հնարից, զրդուէք զնոսա հանապազ և արգել իսկ լինիք նոցա վճարել զպաշտօն իւրեանց և զպարտիս, յորոց սակս եկեալ են այդր ծայրագոյն աստիճանաւ, և գրեա թէ սպանանէք զնոսա։ Արգահատեմք և ճանաչեմք մեք զվաստակ նոցա և զնեղութիւնն, իբր այն՝ թէ մեր իսկ իցեն, և յայտ առնեմք՝ թէ են նոքա և իցեն իսկ ընդ հովանեաւ պաշտպանութեան մերոյ. և եթէ ոչ փոխեսջիք զերապատիւ Հայրդ զնդանակ վարուց ձերոց ընդ նոսա՝ ածջիք ի վերայ ձեր զցասումն մեր արդար։ Վասն որոյ յորդոր լինիմք առ զերապատիւ Հայրդ, զի եթէ ոչ վասն նոցա՝ գոնէ վասն մեր, որ պաշտպանս եմք նոցա՝ դադարեսջիք ի հալածելոյ զնոսա։ Յուսացեալ մեր, թէ ոչ ընդունայն լիցի յորդոր մեր այս, մաղթեմք զշնորհս Աստուծոյ ի վերայ Ձեր։

Ի Վարշաւայ, ի 20-րդի աւուր Դեկտեմբերի 1667 ամին, և թագաւորութեան մերոյ ի Լեհաստան և ի Շուէդս յերկոտասաներորդի։

Զայսու ժամանակաւ յաշակերտացն հիւանդացելոց առաքեցան առ ծնողս իւրեանց երկուք վասն լաւագունից խնամոց, (մին ի նոցանէ վախճանեցաւ անդ), իսկ այլքն ապաքինել սկսան առ սակաւ սակաւ, բաց ի միոյ հօրէն Պարացիոլեայ, որոյ հիւանդութիւն նորա ծանրանայր ևս քան զևս՝ Հուսկ ուրեմն հիւանդացաւ ծանր և Հ. Անջելոյ, որ ի խնամելն իւրում զնեղ պարտաւեցաւ յոյժ. իսկ Հ. Պարացիոլի յետ աւուրց ինչ, այնէ յ30-ն Դեկտեմբերի 1667 ամին, յեօթներորդ ժամու երեկոյին, յետ հաղորդելոյ ջերմեռանդութեամբ ամենասուրբ Խորհրդոյն՝ փոխեցաւ յերջանիկ կեանս ի հասակի 39 ամաց, յետ երեսնօրեայ և երկքօրեայ հիւանդութեան։ Այր երևելի էր նա ըստ բազում մասանց, ըստ սրտին ասեմ, ըստ գիտութեանց և ըստ բարեպաշտութեան·

էր թուպէտ և աստուածաբան կարևոր, այլ մանաւանդ հանգիտացեալ ի խոհական աստուածաբանութեան և սիրոյն առ Աստուած, զորմէ ոչ լռէնայր երբեք խօսել յամենայն ժամ: Զքնող էր խոնարհութեամբ, և թէպէտ վատառողջ էր մարմնով, այլ յօժարէր մեռուցանել զմարմինն, մինչև կարծել ոմանց՝ թէ զմահ նորա ճեպեցին մտաւորական վաստակք նորա և ննջելն ի վերայ սեղանոյ և այլ իրք այսպիսիք, մինչև վարժեալ էր մարմինն կլիմայի այսր աշխարհի:

Եւ ահա ընդ փախճանել ամին 1667-րդի հարկ եղև ինձ առնուլ զգեստ վարչութեան առաքելութեան, մինչև ցնոր կարգադրութիւն Ս. Ժողովոյն վասն պաշտաման տեսչութեանն որ թափուր մնաց յետ մահուան Հ. Կարացիլեայ: Տեսեալ իմ զանբարեհաճ վարս ժողովրդեանն առ մեզ, յաղագս հակառակութեանցն ընդ արքեպիսկոպոսին և ընդ նախնի վերատեսչին՝ աշխատ եղէ յամենայն զօրութեանց իմոց ի մեզ յանկուցանել զսիրտ նոցա ըստ առաջնումն, զոր և յաջողեաց ինձ Աստուած, այցելութեամբ աւագ արանց, և սահմանելով ի դպրանոցին ճառախօսութիւնս աշակերտաց և այլովք ևս հնարիւք: Եւ զայս ինչ արարի, ընդ որ կարի ուրախ եղև ժողովուրդն՝ զի զոմն յաշակերտաց դպրանոցին, Անտոնիոս անուն, որ ձեռնադրեալ էր քահանայ՝ կարգեաց արքեպիսկոպոսն աւագ երէց եկեղեցւոյն Հայոց ի Լւովի, որ լքեալ էր ի բազում ժամանակաց հետէ, վասն սակաւաթիւոց ժողովրդեանն: Յիշատակեալն քահանայ յուղի անկաւ ի տեղի պաշտաման իւրոյ ի 10-րդի աւուր Մարտի 1668 ամի, և զայնու ժամանակաւ այց եղ Անջելոյ քահանայ Պեկերանի եկեղեցւոյն Հայոց Զամոստեայ, զոր եգիտ ի բարեկարգութեան յամենայնի, ջանիւք և փութով ծխատէր քահանայի եկեղեցւոյն Յովհաննու Քրիստոստուրովիչի:

Յ2-ն Մայիսի 1668 ամի արքեպիսկոպոսն Հայոց, որ յարատևէր ի յամառութեան իւրում, ոչ անսացեալ ումեք, ոչ կանոնիկոսացն, ոչ Նուիրակին Պիգնատելլեայ, որ հրամայէր մի ձեռնադրել զանարժանս, և անսևս արարեալ զընդդիմանալն մեր՝ ձեռնադրեաց կիսասարկաւագ զեղբօրորդին իւր, պատանի անհմուտս և ապուշ, առաջի արքեպիսկոպոսին Սար-

դեաց, այսինքն է Սոֆիայ քաղաքին Բուլղարիոյ, որ ընդ անցանելն ընդ Իլվով ասա էր գայթու ժամանակաւ։ Այլ ապա հաճեցոյց զփոխանորդն՝ խոստանալով չձեռնադրել զպատանին ի բարձրագոյն աստիճանս կարգի, եթէ ոչ գտցեն ի նմա ձիրք կամ յաջողութիւն, որ և անհնարին իմն է յաղագս բնատուր բթութեան նորա։

Իբրև դարձաւ ի Հռովմայ ի 15-ն նորին Մայիսի 1668 ամի քահանայն մեր Յակոբ Գրիգորեան, որ գնացեալ էր անդր յուխտ երկրպագութեան և առեալ էր ժողովրդեանն, գոլով ջերմեռանդն կաթոլիկ՝ արգել նմա արքեպիսկոպոսն մատուցանել պատարագ յեկեղեցւոջ իւրում, համարելով թէ ամբաստանեալ իցէ քահանայն զնմանէ. բայց ապա ըստ առաջարկութեան փոխանորդին թոյլ ետ նմա։

Յ31-րդի աւուր Յուլիսի 1668 ամին մեկնեցաւ արքեպիսկոպոսն Հայոց ի Կամենից և յՅազլովից ի պէտս գործոց իւրոց, այն է վասն գնոյ անդոյ երկվարս ի տնամածառի անդ և վաճառելոյ զնոսա յԼվով ծանրագնի։ Յայն դէպս յայց եկի և ես եկեղեցեացն Հայոց վայրացն և տեսի՝ զի թէպէտ և ըստ կարի բարւոք վարէին կարևոր ուղղութեամբքն, բայց և անկարգութիւնս մեծամեծս գործէին չար սովորութեամբքն, զորս չէ մարթ փարատել, մինչև նստցի արքեպիսկոպոս ոք նպաստաւոր։ Ոչ ումեք մատուցեալ էր մինչև ցայն վայր խորհուրդ վերջին օծման, թէպէտ և ի լինելս իմ անդ՝ հրամայեցի բաշխել ամենայն եկեղեցեացն իւղ սրբեալ։ Տեսի անդ քահանայ մի, որ երբեք կրկնէր զբան խորհրդոյ ի ժամ մկրտութեան և զայլ ևս, որ յետ պատարագելոյն կատարեաց խորհուրդ ինչ, այլ ոչ կամէր և այլում զայն խորհուրդ մատուցանել, համարելով թէ չէ հարկ միում քահանայի խորհուրդս երկուս կատարել ի միում և նմին աւուր։ Տեսի զի արկանէին ի կիր մատեանս յեկեղեցիս հանդերձ ամենայն հերետիկոսութեամբք, որ ուղղեալքն էին և այնպէս առաքեալք ի Վալախիայ. զի չէին յեկեղեցիս մատեանք ծննդոց և ոչ նշանք ամենևին մկրտութեան, յորմէ բազում անճահութիւնք եղանէին, մանաւանդ ի ձեռնադրութիւնս,—քանզի ոչ լինէր մարթ գիտել զհասակ առնն ձեռնադրելոյ,—և ի պակաս ամուսնու-

թեան, վասն անկարգութեանցն՝ յորժամ հարկ լինէր քննել
զատուցման արենակցութեանց և խնամութեանս։ Զիջեալ
արքեպիսկոպոսին ի խնդրուածս իմ և ի քահանային Փրան-
ցիսկեայ Դարիոյ ընկերին իմոյ, որ օժանդակէր ինձ ի մարտնչելս
իմում ընդդէմ անկարգութեանցս այսոցիկ՝ սպառնալեօք
անիծից բուլոց հռոմէական քահանայիցն ճշդութեամբ պա-
հել զսուրբ կանոնսն։ Թող զայս, համոզեցաք ես զնա, դնել
մասունս ինչ որոց յեկեղեցին, յորս չէին ամենևին մասունք։
Ոչ սակաւ մխիթարեցաք ընդ սոս ժողովրդեանն, որ ամօք
իբր երկու յառաջ ալեկոծէր խռովէր, այլ զայնու ժամանա-
կաւ հեզ էր և խոնարհ, այլ և բարի և գոհ ընդ ուղղութիւնն,
զոր մուծաք։ Այլ վասն ուղղափառութեան մասանցն, (զորս չէ
մարթ ըստ ամենայնի ուղիղ աւարտել, մինչդեռ ձեռագիրք են),
խնդրեցաք յարքեպիսկոպոսէն, կարգել հոգաբարձու այնմ զքա-
հանայն Աստուածատուր Նիկոխոսմէջ յԱտալովեցէ, զա-
տուածաբանն քաջ և քարոզիչն, որ սուղ ինչ ժամանակաւ յա-
ռաջ ել ի դպրանոցէն մերմէ, ուրանօր յընթացս երից ամաց կե-
լոյ նորա անդ ուսաւ զքերականութիւնս Լատինացւոց և Հայ-
ոց զարմանալի իմն հմտութեամբ։ Մինչդեռ քննէաք մեք ի Կա-
մենից զվիճակ եկեղեցեացն, չոգաւ մին յընկերաց մերոց, քահա-
նայն Փրանցիսկոս Դարիոյ ի Խոտին քաղաք Մոլդաւիոյ, որ
մղոնիւք ինչ հեռի է ի սահմանաց Ռուսիոյ, ուրանօր բնակին
Հայք նուազունք թուով և է եկեղեցի Հայոց, յոր եկանեն
ի ծածուկ ի Կամենիցէ որ ընդդէմքն են Միութեանն, մա-
նաւանդ մին ի գլխաւոր զատաւորացն Վասկոյ անուն, բա-
րեկամ մերձաւոր արքեպիսկոպոսին Հայոց, զորոյ զեկամուտս
հոգայ։ Տեսեալ անդ քահանայն Դարիոյ զքահանայն Հայոց
հերձուածող, ագէտ որպէս այլք առ հասարակ, որ եցոյց նմա
զեկեղեցին, այլ ոչինչ կամեցաւ, զի մատուցի պատարագ անդ
կամ այլուր առաջի նորա։ Կազմեալ զամենայն, որպէս ի վե-
րոյ ասացի, դարձ արարաք յԼվով ի 6-ն Սեպտեմբերի
1668 ամի։

Զայսու ժամանակաւ յանձն արար արքեպիսկոպոսն զե-
րիցութիւն եկեղեցւոյն Հայոց Իլվովայ Վանական կոչեցելոյ
որ յարուարձանի քաղաքին՝ նորընծայ քահանային Հայոց,

Յակովբու Մարխեւիչի, որ գոգ ամս երկուս եկաց ի դպրանոցի մերում և ուսաւ հիմնապէս զլեզուս Լատինացւոց և զգրոցն Հայոց, այլ և զտրամաբանութիւն և զբարոյական աստուածաբանութիւն ի լեզու Հայոց։

Ի նմին ժամանակի իբրև փոխանակ Անտոնիոսի Պիգնատէլլեայ, արքեպիսկոպոսին Լարիսայ՝ կարգեցաւ ի Նուիրակութիւն արքեպիսկոպոսն Կորնթոսի, Գալէացցոյ Մարեսկոտի՝ կարեւոր համարեցաւ զի մեկնեսցի ի Հռոմ արքեպիսկոպոսն Հայոց, Նիկող Թորոսովիչ։ Վասն որոյ մեծաջանիւք նոր ի նորոյ ձեռն էարկ ի բանակցութիւնս, զոր սկըսեալ էր սրբազան Նուիրակին Պիգնատէլլեայ, և այնչափ յաջողեցաւ — ի ձեռն թղթոց իւրոց առ արքեպիսկոպոսն և առատութեանն, որով կարգեաց ոսկիս 500 ի ծախս ճանապարհի, զորս ընդունիլ ունէր արքեպիսկոպոսն մասնակի ի զանազան տեղիս, որպէս զի մի լիցի ինչ խարէութիւն, — զի ուր ուրեմն զգաց արքեպիսկոպոսն, թէ յոյժ ծանրանան ի վերայ իւր երախտիքն և հարկեցաւ խորհիլ զուղեւորութենէն, զոր և արար իսկ ի 11-րդի աւուր Հոկտեմբերի 1668 ամին։ Նա ընդ իւր արքեպիսկոպոսն զքահանայն Դարեյ, որ վասն տկարութեան աչացն, ըստ խորհրդոյ բժըշկաց և հրամանաւ Նուիրակին գտանայր ի հայրենիս իւր։ Ի սպասու արքեպիսկոպոսին էին այլք իբրև 23, յորոց ի թիւս և որդիք նորա կրկին, այլ և երկուք ութեւտասն։ Եւ այսու բազմութեամբ ուղեկցաց ժամանեաց արքեպիսկոպոսն յաջողութեամբ ի Հռոմ, յ31-րդի աւուր Դեկտեմբերի 1668 ամին, ի բերկրութիւն իմաստնագունիցն և խոհականաց արանց Հայոց և յօգուտ առաքելութեանս մերոյ։

Այլ ժամ է մեզ, ի մի կողմն թողուլ զառաքելութիւնն և ասել սակաւուք յաղագս սկզբանն և յառաջադիմութեանց պապական դպրանոցին Լվովայ։

## ՍԿԻԶԲՆ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆՔ

## ՊԱՊԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻՆ ԻԼՎՈՎԱՅ

### ԸՆԴ ՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ ՀԱՐՑ ԿՂԵՐԱԿԱՆԱՑ,

### ՈՐ ՀԱՍԱՐԱԿՕՐԷՆ ԹԷԱՏԻՆՔ ԿՈՉԻՆ։

Յաջողութիւնք տպագրական քարոզչութեանն ի Հայս կանխաւ կամ ապաքէն զպապական դպրանոցէն Իլվովայ, յորմէ ելցեն գիտնական և կաթոլիկ քահանայք որ ի պաշտպանել Ս. Հաւատոյ ի դէպ ժամու, փոյթ ունելով զհոգւոց և զփրկչութենէ եկեղեցւոյ, և ի ծաւալել զհաւատս ի Հայս, որք ձգեն մղեն իմն ի հերետիկոսութիւն, որպէս ապարին խոկ ի նուագս նուագս առ ի չգոյէ պատշաճաւոր արանց, (խոկ Հայք համարին, թէ անջատ ինչ են դպրանոցն և տպագրութիւնն, տեսչութիւն սորա և տեսչութիւն նորա, որ թէպէտ և ի միում անձին բովանդակին, այլ տարբեր են ըստ եղանակի վարչութեան, զի մին պարունակի յանձուկ սահմանս որմոցն և միւսն ծաւալի ի համօրէն եկեղեցիս Հայոց Լեհաստանի, Մոլդաւիոյ, Վալախիոյ, և մերձակայ գաւառացն). այլ ինձ պատշաճ թուեցաւ առանձինն կարգել զտեղեկութիւնս յաղագս դպրանոցին, քան տպագրութեան։

Որպէս զի մի երկրորդեսցուք, զոր ինչ ի վերոյ ասացաք ի պատմութեան Միութեանն՝ զայս և եթ յիշատակեսցուք, զի օր առաջին էր ամսեանն Մայիսի 1664 ամի, յորժամ ժամանեցաք յԻլվով Հ. Կղեմէնտիոս Գալանոս, Բոնավենտուրի Կոստուցցի յաշխարհական կարգէ և ես, և ընկալեալք յեկեղեցականացն և ի ժողովրդենէն պատուով մանաւանդ քան

թէ սիրով բնակիցաք ի սենեկին, յորում և կեամքս մինչև ցայսօր։ Աշխատ եղաք անդէն ըստ կարի մերում ժողովել աշակերտս, զի մատիցուք փութանակի ի կատարումն պարտեաց, յորոց սակս առաքեալս էաք։ Վասն նորութեան եկեցն, ուսուցչաց Հռովմայեցւոց այլ և Հայոց, որ գիտէին զլեզու Հայոց՝ ի սուղ ժամանակի յարեցան ի մեզ գրեա թէ համօրէն պատանիք, որ ուսանէին ի դպրանոցի Հարց Յիսուսեանց. այնպէս զի ընդ երից դպրացն եկեղեցւոյն Իլվովայ՝ միահամուռ եղեն ութ աշակերտք. այլ յետ եօթնեկաց ինչ կրկնապատիկ աճեցաւ թիւ նոցա, քանզի որ եկեալն էին աշակերտք, ածին զհետ իւրեանց և զկրտսերագոյնս, որ զայբուբենս Հայոց ուսանէին առ քահանայի ումեմն Հայոց Եփրեմայ, քարտուղարի արքեպիսկոպոսին Հայոց, որոյ դպրոց փակեցաւ յայս սակս։ Սկսաք յայնժամ ուսուցանել նոցա ի լեզու Լատինացւոց ոճն զքերականութիւն և ոճն ըզճարտասանութիւն, իւրաքանչիւր ըստ յաջողակութեան իւրում և պատրաստութեան, այլ մանաւանդ ուսուցանէաք նոցա զլեզու Հայոց, զոր հարկ էր աւանդել ի սկզբանց անտի քերականութեան։ Յետ երկուց ամսոց կամ երից, տեսեալ մեր, թէ ընդ դպրանոցն մեր գոհ է ժողովուրդն՝ որ հաճութեամբ իւրն տեսանէր հանապազօր, զի ածէաք զաշակերտս մեր յեկեղեցի զոյգ զոյգ կարգաւ՝ կամեցաք հանդիսացուցանել առաջի նոցա զերախայրիս անդուլ վաստակոց մերոց՝ զի տեսցեն և ուրախ լիցին. և քանզի ոչ յաջողեցան մեզ քարոզութիւնքն ի լեզու Լատինացւոց, զոր ոչ իմանայր ժողովուրդն, խնդրեցաք յարքեպիսկոպոսէն՝ զի տացէ թոյլ աշակերտացն մերոց առնել ճառս յեկեղեցւոջ ի լեզու Լեհացւոց ի տօնս և ի հանդիսաւոր աւուրս։ Այլ ոչ հաճեցաւ ընդ այս արքեպիսկոպոսն, զի մի հարթեսցի այնու ճանապարհ քարոզութեանցն ի լեզու Լեհացւոց, զոր միայն իմանայր ժողովուրդն, այլ ինքն կարի առէր. վասն որոյ հարկեցաք համբերել առ ժամ մի, ակն ունելով բարեյաջող ժամանակի։

Երբ և տարագրեցաւ յԷ-րդի աւուր Նոյեմբերի 1664 ամի քահանայն Յակոբ Արոսկի, նախանդամն Հայոց հերձուածող. ըստ միջնորդութեան մերոյ՝ զայրացեալ ընդ այս ժողո-

վրդովմանն, հանէին ի դպրանոցէս մերմէ գրեթէ զամենայն աշակերտսն։ Եւ թէպէտ խնդրեցաք մեք ի Հարց Յիսուսեանց, զի մի ընկալցին զնոսա, զոնէ ամիս մին՝ յօգուտ Ս. Հաւատոյ, որոց առնեցողք գոլով Հայոց լքին զմեզ՝ բայց և այսու ոչինչ կարացաք առնել։ Գաբրիէլ Զախնովիչ, որ յառաջագոյն ուսանէր զքանաստեղծութիւն առ Յիսուսեանս և զառաջինն եկն առ մեզ՝ նոյնպէս առաջին եղև, որ մեկնեցաւ ի մէնջ և զհետ իւր ձգեաց զայլսն որ կային առ մեօք, այնպէս զի մնացին ի դպրանոցի մերում երկուք կամ երեք հանդերձ դըպրօքն եկեղեցւոյն Հայոց։

Յայնու ժամանակաւ փոխեցաք մեք ի նոր սենեակ, զոր պատրաստեաց մեզ ժողովուրդն, (որպէս ի վերոյ յիշատակեցաւ) ըստ առաջարկութեան Աւետիքայ-Նիկողայոսի Թորնարովիչի, բարեկամին մերոյ, որ օժանդակէր մեզ, քանզի յուսացեալ էր, զի եղբայր իւր Յովհաննէս Թորնարովիչ ժամանեալ այսր ի Հայաստանէ՝ ուսցի ի մէնջ և հասցէ ի բարձրագոյն աստիճանս. (այլ փոքր մի վրիպեցաւ ի յուսոյն, քանզի դարձ արարեալ եղբօրն, թող զյիմարութիւնն զորս արար և առնէ՝ դժուարաւ իմն հաւանեցաւ ի միութիւնն և ի կարևոր ուղղութիւնս)։ Յայնմ ժամանակի առաքեաց Ս. Ժողովն Տարածման Հաւատոյ ոսկիս հռովմայեցիս չորս հարիւր ի պէտս ամի ամի ծախուց ապագայ դպրանոցին մերոյ, զոր բացաք վերստին յաջողութեամբ բազդի ի 24-րդի աւուր Յունվարի 1665 ամին, յորում էին ուսուցիչք երկու, այն են, Հ. Կղեմենտոս Գալանոս որ ուսուցիչ էր և ես, Եղիսէոս Մարիոս քահանայ Պիոսի. էին այլ և ընտանին, Բոնավենտուրի Կաստուցցի աշխարհական (որոյ դարձ արարեալ ի հայրենիս յ19-րդի աւուր Փետրուարի վասն կլիմայի տեղւոյս, որ վնասակար էր նմա՝ վախճանեցաւ ի Կրակով քաղաքի) և քահանայն Հայոց Յակոբ Գրիգորեան, խոհարար մի և աշակերտք երեք, որ են.

Գէորգ կամ Աստուածատուր Ներսեսովիչ, ամաց իբրև 20-ից, յՍտաղովից քաղաքէ։ Էր նա որդի ծխատէր քահանայի այնր քաղաքի, յաջողակ յոյժ, ուշեղ, բարձր հասակաւ, երևելի գլխօք, աստուածասէր և բարեպաշտ յոյժ։ Եկն

նա այսր յՅազլովեցէ, զի ուսանիցի առ մեզ, այլ ի սկզբան մտց թուեցաւ անոպայ, ոչ մնացի, և ոչ գիտէր զլեզու Լատինացւոց, որ վասն յարհամարհանս էր․ այլ ոչինչ յայս հայեցաւ նա և կամեցաւ կալ ծով յԻլվովի։ Զօգաւ բնակեցաւ նա ի տան արքեպիսկոպոսին Հայոց և գայր առ մեզ յաճախակի, երբեմն երկիցս յաւուր։ Այն ինչ ծանեաւ Հ. Կղեմէնտոս՝ թէ են ի նմա ձիրք գեղեցիկք՝ գթացեալ ի նա ընկալաւ ի դպրանոցն եօթնեկօք յառաջ քան զբացումն նորա, զի գիտէր զնեղութիւնն, յորում կայր նա առ երի արքեպիսկոպոսին, ուրանօր և կերակուր իսկ ոչ գտանէր և այլ իրս կարևորս։

Յակոբ Մարխեւիչ, յԻլվովայ, ամի իբրև 21. գայր, որոյ ընկալեալ էր զչորեսին խոնարհագոյն աստիճանս կարգի և սպաս հարկանէր ի մայր եկեղեցւոջն Հայոց․ բնութեամբ մելամաղձոտ, միջակ ի յառաջադիմութեան և հասակաւ։

Գաբրիէլ Զախնովիչ նոյնպէս յԻլվովայ, ամի իբր 21, եղբօրորդի աւագ վարդապետին Հայոց Իլվովայ․ կարճ հասակաւ, յաջողակ յոյժ և բարեբարոյ, համեստ և քաղցրաբարոյ, որ յետ բազմադիմի զգջանաց յանցանացն, զոր ընդդէմ մեր գործեաց՝ ըստ միջնորդութեան արքեպիսկոպոսին Հայոց եգիտ ներումն ի մէնջ և ընկալաւ ի դպրանոցն։

Զսոսա երեսին զգեցուցանէաք ի հանդերձս ի սեաւ կերպասոյ, զոր օրինակ զգենուն աստ եկեղեցականքն ամուսնաւորք․ իսկ յաղագս անձկութեան բնակարանին զայս հնար խորհեցաք՝ զի անջատեցաք զանկողինս նոցա անջրպետօք ի տեղւոջէն, որ դասարան է այժմ և սեղանատուն։

Ի սոյն ժամանակի ուսաւ Նիկոսովիչ զքերականութիւնս լեզուաց Լատինացւոց և Հայոց, զորս ի սկզբանէ անտի սկսաւ, իսկ Զախնովիչ զճարտասանութիւն, վասն որոյ սկսան ի միասին ուսանիլ զտրամաբանութիւն յերկոսին լեզուս, իսկ Մարխեւիչ յետս եկաց, զի չէր ուշիմ որպէս նոքա։

Ի 10-րդի աւուր Ապրիլի 1665 ամի մտին ի դպրանոցն աշակերտք երկու.

Սիմէոն Բուռնովսկի, յՅազլովեցէ, ամաց իբրև 17-ից, եղբօրորդի ազնուականի ուրումն Հայոց՝ նովին մականուամբ և ազգակից արքեպիսկոպոսին Հայոց Թորոսովիչի․ պատանի

յաջողակ, միջակ հասակաւ։ Զնա առաջարկեաց մեզ յիշա-տակեալն ազնուական և յանձն արար մեզ արքեպիսկոպոսն։

Գաբրիէլ Միրոզվեչ ՚ի Վիլնէ, ամաց իբր 16-ից. մի-ջակ յաջողակութեամբ և հասակաւ, հիւանդոտ և վատա-ռողջ, և բարի յոյժ և համեստ։

Ռուսանովսկի ուսանել սկսաւ քերականութիւնս լա-տիներէն և հայերէն լեզուաց ՚ի սկզբանց անտի, իսկ Միրօ-զվեչն զճարտասանութիւն և քերականութիւն Հայոց, զոր յայ-բուբենից անտի սկսաւ, զի և ընթեռնուլ իսկ ոչ գիտէր հայ-երէն. ուսեալ էր առ Յիսուսեանս մինչև ցբանաստեղծութիւն։

Յ9-րդի աւուր Յուլիսի 1665 ամի եմուտ ՚ի դպրա-նոցն Մելխիոր-Նիկողայոս Սրբէնովեչ (Սրաէնովեչ) ՚ի Զա-մօստեայ, ամաց իբրև 25-ից, ազգական ծխատէր քահանայի քա-ղաքին Պխտոտարովեչի. միջակ ՚ի յաջողակութեան, բարձր հասակաւ, սակաւ ինչ թեթևամիտ, որոյ դոյզն ինչ ուսեալ էր զերկոսին լեզուս առ տոս քահանային։ Այլ զկնի աւուրց ինչ անցանելոյ, մինչև զգեցեալ էր ըստ տարազու մերում՝ ոչ կարացեալ կեալ ըստ կարգաց դպրանոցին, զի յարբունս ուրեմն հասեալ էր, կամ առ անձկութեան բնակարանին՝ կամ առ այլոց պատճառաց, դարձաւ անդրէն ՚ի քաղաքն իւր։

Սա տեսեալ Հ. Կղեմենտեայ, թէ չէ հնար հիմնել դպրա-նոց յերկուս սենեակս և հայեցեալ յանձկութիւն բնակու-թեան աշակերտացն, որոց թիւ յաւելոյր եւս քան զեւս՝ ՚ի խնդիր եղ ՚ի քաղաքին յարմարաւոր իրիք բնակարանի, այլ ոչ եգիտ զայն առ երի եկեղեցւոյն։ Բայց լուաւ, թէ է սե-նեակ ընդարձակ հուպ ՚ի դպրանոցն, յորում դատաստանս առնէին դատաւորքն Հայոց, ուրանօր մարթ էր կազմել բնակարան նոր և յարմարաւոր վասն աշակերտացն։

Վասն որոյ գրեաց զայսմանէ փութանակի առ Ս. Ժո-ղովն, և ընկալեալ հրաման և օժանդակութիւն դրամոց 150 մաճառ ոսկւոյ՝ ձեռն արկ անդէն ՚ի շինութիւնն յանուանէ արքեպիսկոպոսին, և ոչինչ հայեցեալ յողբս և ՚ի զայրոյթ ժողովրդեանն՝ գլխաւորեաց յաջողութեամբ զշինութիւնն յամիս երկուս կամ երիս, թէպէտ և վասն ձմերանն ՚ի վերայ հասելոյ փոխեցաք անդր ոչ կանուխ քան յամսեանն Մայի-

սի 1666 ամի։ Յօրինեաց անդ պատուհանս մեծամեծս վեց, հնոց մի մեծ և խուցս տասն, անջատեալս ի միմեանց տախտակօք, ուրանօր ընակէին այժմ աշակերտք 10. և այլ ևս խուցս երիս փոքրագոյնս ի միում կողի, անջատեալս ի միմեանց փոքու սեամբք։

Նոյն յ30-ի աւուր Յուլիսի 1665 ամի եմուտ ի դպրանոցն որդի ալքունւոյ պաշտօնէի, Բաղդասար Բալեակի կամ Բալեվեչ ի Կամենիցէ ամաց իբրև 15-ից, մանաւանդ ջերմեռանդն ի հաւատս կաթոլիկաց. աշխոյժ, ձայնեղ, բարեպաշտ, բայց ոչ կարի սիրող գիտութեանց։ Ակսաւ անդէն ուսանել զլեզու Հայոց, զոր ոչ գիտէր ընաւ ին, և զճարտասանութիւն, քանզի առ Հայրս Յիսուսեանս ի Կամենից եհաս նա մինչև ցքանաստեղծութիւն։ Յառաջադիմէ զարդիս յեկեղեցական ճարտարխօսութեան։

Սուղ ինչ յետոյ, ի 11-րդի աւուր Օգոստոս ամսեանն եմուտ ի դպրանոցն Նարանովեչ ի Կամենիցէ; զորմէ բանք եղեն ի վերոյ, և էր նա դպիր, ամաց իբրև 19-ից, ունելով զչորեսին խոնարհագոյն աստիճանս կարգի, և սպասաւորէր ի մայր եկեղեցւոջն Հայոց. միջակ յաջողակութեամբ, խոհեմ և համեստ և ձայնեղ, որոյ ոչ գիտելով ընաւ ին զքերականութիւն, սկսաւ անդէն ուսանել զերկոսին լեզուս, զլատիներէնն սակս և զհայերէնն։

Եմուտ նոյնպէս ի 20-րդի աւուր Հոկտեմբերի 1665 ամի Յովհաննէս Բարթոսովեչ յԼվովայ, թէև ընակէին ծնողք նորա ի Զամոստիէ քաղաքի. ամաց իբրև 18-ից, թոյլ կազմութեամբ մարմնոյն, գեղեցիկ դիմօք, յոյժ յաջողակ և ջանասէր յամենայն իրս, գիտակ ժողովրդական բանաստեղծութեան, քաղաքավար, համարձակ և սիրող խօսից։ Ի սկզբան անդ ուսանէր ի ճեմարանին որ ի Զամոստիէ և եհաս մինչև ցքանաստեղծութիւն։ Գեղեցիկս պատրաստեալ էր ի կաթոլիկ հաւատս ի ձեռն ծխատէր քահանային Զամոստեայ, Յովհաննու Քրիստոստուրովեչի, որ վարձատրեցաւ արժանապէս ի Ս. Ժողովոյն Տարածման Հաւատոյ։ Միով բանիւ ասել, յոյսք մեծ են ի նմա, եթէ միայն ժուժկեսցէ կեալ կուսակրօնութեամբ, այլ նա ոչ կարի միտեալ է յայս։ Մայր նորա զգուէ

և սիրէ զնա յոյժ, տայքէ նմա արծաթ և ի թուղթս իւր հանապազ յիշատակէ նմա զմտերմութիւնն, որ յարուցանէ ի նմա սնափառութիւն և սէր աշխարհի։

Ընդ նուիրակի կաթողիկոսին Հայոց եկն այր ի 11-րդի աւուր Յուլիսի 1665 ամի, որպէս յիշատակեցաւ ի վերոյ, պատանի ոմն Հայ, սարկաւագ ի Թոխաթ քաղաքէ ի Մեծն Հայս, Վարդան Յովհաննեան, ամի իբրև 21, յաջողամիտ յոյժ, ճարտար և խոհեմ, որ ի մանկութենէ անտի մարզեալ էր ի լեզու Հայոց, ի գրաւորն և յաշխարհիկն, և տաւել ևս յաջողակ ի շարագրել։ Եկն առ մեզ ի ծածուկ և տեսեալ ըզվարժս աշակերտաց մերոց, հարաւ սիրտ նորա ի նոսա և մանաւանդ ազդեալ մերոյս Գրիգորի Գալանոսյ՝ մերկացոյց առաջի Հ. Կղեմենտեայ զխորհուրդ իւր գեղեցիկ, և հնար խնդրէր ածել զայն ի կատար ընդ հենգն հերետիկոս նուիրակին։ Խնդրեաց ապա Յովհաննեանն ի Կղեմենտեայ Հօրէն ի գաղտնիս ունել զբանն, մինչև յայտնեսցի ժամանակ մեկնելոյ նուիրակին. զի կամէր փախչել և թաքչել առ մեզ, ի նստել անդ նուիրակին ի կառս։ Զայս ամենայն կարի ճարտարութեամբ արար նա, զի յորժամ ել ուրեմն նուիրակն արտաքս քան զպարիսպս քաղաքին հանդերձ յուղարկաւորութեամբ, յոր գնացեալ էր արքեպիսկոպոսին, եկեղեցականացն, պաշտօնէից և ժողովրդեանն Հայոց և մեր՝ և կամէր դարձ առնել առ կաթողիկոսն՝ սպրդեալ խոյս ետ անտի պատանին և եկեալ ի գպրանոցն՝ թաքեաւ ի գետնափոր մառանի։ Այլ նուիրակին պատահմամբ իմն յուշ եկեալ՝ մինչ դեռ ոչ հեռի էր յարուարձանէ քաղաքին՝ դարձաւ անդրէն յԻլվով, և (քանզի զգայր, զոր ինչ եղեն) բանիւք հայհոյութեան յայտ արար, թէ ոչ մեկնեսցի անտի, մինչև դարձուսցեն նմա զսարկաւագն։ Ժողովեալ առ այս արքեպիսկոպոսին և դատաւորացն Հայոց՝ հրամայեցին խնդրել զկորուսեալն յամենայն վանորայս և առ մեզ։ Եւ իբրև ընդունայն եղև խոյզ խնդրոյն՝ երկուցեալ նուիրակին զի մի զչարեսցի ընդ նա արքեպիսկոպոսն Իլվովայ վասն անհիմն կասկածանացն, և յարուցէ ի վերայ նորա նեղութիւն նոր՝ ի նմին իսկ աւուր, ի 29-ն Հոկտեմբերի մեկնեցաւ անտի սրտմտութեամբ մեծաւ։ Իսկ մեր

ոչ կամեցեալ զրգռել զժողովուրդն՝ առաքեցաք զիշխայն ըղ-
սարկաւագն առ փաշատական ոմն Խալըացի Ամիրէանի ա-
նուն, առ որում եկաց աւուրս երիս, և ապա (ըստ խորհրը-
դոյ մերում) չոգաւ առ արքեպիսկոպոսն Հայոց և խնդրեաց
ի նմանէ, զի միջնորդեսցէ առաջի մեր, ընդունել զնա ի դպ-
րանոց մեր, ապա թէ ոչ, յայտ արար, երթիցէ ի Հռոմ
յուսումն, և ոչ կարէ խափան լինել նմա նուիրակն, որում
ծառայէր ըստ ազատ կամաց իւրոց, այլ չէր ստրուկ նորա։
Գիտաց արքեպիսկոպոսն զխորամանկութիւն նորա անմեղ
և հաճեցաւ խնդրոյն ընդ խնդիր սարկաւագին, յանձն առար
զնա մեզ և հրամայեաց զրել զնա համարձակ ի թիւս աշա-
կերտաց մերոց։ Իսկ ապա չգիտեմ ընդէր, կամ զրգռեա՞լ յայլոց
կամ առ երկիւղի, զի մի զրպարտեսցէ զնա նուիրակն
ի Հռոմ, քանզի չէր առեալ նորա համար զարծաթոյն և
զայլոց իրաց, զոր ի պահեստի առ իւր ունէր՝ արգել
սկսաւ և հոգալ, և զինի աւուրց ինչ խնդրեաց հրաման ի Հ.
Ագեմենտեայ երթալ յԻտալիկ, ուրանօր զանզի կալեալ էր
նուիրակին՝ տալ նմա համար լիովին յամենայնի, և խոստա-
ցաւ հրապարակաւ դառնալ անդրէն ի դպրանոցն։ Տրամեցաւ
ընդ այս Հ. Ագեմենտոս և կորուսեալ ուրեմն համարէր զնա,
քանզի ոչ հաւատայր խոստմանց նորա. և իբրև ոչ կարաց
համոզել զնա զի յետս կացցէ ի խորհրդոցն՝ յակամայից թոյլ
ետ նմա։ Վ.ասն որոյ յուղի անկաւ նա յԻտալիկ և
փճարեալ անդ զգործս իւր դարձաւ անդրէն յԻզմիր, ոչինչ
անսալով աղաչանաց և սպառնալեաց նուիրակին և ժողովըր-
դեանն, և եմուտ ի դպրանոցն յ8-րդի աւուր Յունվարի
1666 ամի։ Է՛ սա պատանի յոյժ պատուական և ամբիծ
մեծամեծ յուսոյ։

Ի 4-րդի աւուր Ապրիլի 1666 ամի առհմանեցաք, զի
մեզ խոստովանեսցին աշակերտքն և ոչ քահանայիցն Հայոց,
ագիտաց և անբարեկամաց, քանզի ծանեաք զկարևորութիւն
հարկի մարդկոյ զնոսա ոչ միայն յուսմունս և ի գիտութիւնս,
այլ մանաւանդ ի բարեպաշտութեան։ Իսկ աշակերտացն ոչ
հաճեցեալ ընդ այս՝ չոգան ի ծածուկ առ արքեպիսկոպոսն,
որ զայրացեալ էր յայնժամ ընդ Հայրն Ագեմենտոս վասն

բազմադիմի յորդորանաց նորա ի բարեկարգել զեկեղեցիս և յազգս պայմանելի փարուցն. վասն որոյ խրախոյս ետ աշակերտացն հաստատուն կալ ի բանի իւրեանց և մի՛ անսալ յանձն զնորամուծութիւնս, զի չէ իսկ նոցա հարկ հնազանդ լինել հարցն յամենայնի առ հասարակ։ Ունկնդիր լեալ աշակերտացն թիւր խորհրդոյն, յայտ արարին համարձակ թէ ըստ կամաց անձանց փարեսցին յայնմ գործի։ Ոչ հանդուրժեալ Հ. Կղեմենտեայ ապերասանութեան այնպիսւոյ՝ հրամայեաց, մինչդեռ յեկեղեցւոջ անդ էին աշակերտքն՝ հանել բառնալ ի խցից նոցա զձեռագիրս և զմատեանս. ընդ որ զայրացեալ աշակերտացն, չոգան միահամուռ առ արքեպիսկոպոսն, (բաց ի միոյն• որ առ հիւանդութեան ի մահիճս դնէր), և խնդրեցին հրաման ի նմանէ, զի մեկնեսցին երթիցեն իւրաքանչիւր ի տուն իւր, զի ոչ կարէին համբերել նեղութեանցն, զոր ի հարցն առէին կրել։ Յորինեցին ևս իրս մասնաւորս, տրտըն-ջելով մանաւանդ, (որպէս ամենայն աշակերտք առհասարակ ի դպրանոցս՝) զյոռութենէ և զաղքատութենէ կերակրոց։ Հրամայեաց նոցա արքեպիսկոպոսն կալ մնալ սակաւ մինչ ի տուն իւրում, և խոստացաւ տալ նոցա պատասխանի և գոհացուցանել զկնի ժամու միոջ։ Այլ և ինքն տարուբերեալ ի միտս իւր, թէ զի՞նչ առնել իցէ հարկ, դժգոհեալ իմն ընդ այնպիսի արծարծումն գործոյն և մտամբ ևս ուրախ, զի եգիտ ուրեմն հնար նուաճելոյ զմեզ և բեկանելոյ յայնմհետէ զընդդիմութիւն մեր կամաց իւրոց, և այսպէս վարանեալ չոգաւ առ փոխանորդն Հայոց, որ հիւանդ էր ի նմին ժամանակի։ Յորդոր եղև առ նմա շիջուցանել զկայծն, զի մի ծաւալեալ բորբոքեսցի և աճեսցէ ի վերայ նոցա զօրութիւն Արքայական Մեծութեանց, առ այն զի պատճառք եղեն խափանման պատական դպրանոցին, որ այն ինչ բացեալ էր. այլև ծանոյց թէ անպատշաճ է աստիճանի նորա և պատուոյ յարուցանել աշակերտս տղայս չարեօքն ընդդէմ վարդապետաց նոցա։ Այսպիսի փաստիւք համոզեաց զարքեպիսկոպոսն, որ յորդոր եղև ուրեմն աշակերտացն զգենուլ զէն համբերութեան և դառնալ ի հնազանդութիւն հարցն, իսկ զխնդիր խոստովանութեանն բարեկարգել խոստացաւ ապա ժամանակաւ, և առաքեաց

զնոսս ի դպրանոցն. խնդրեաց ապա ի Հ. Կղեմէնտեայ, զի հաճեսցի ներել նոցա զյանցանսն, այլ զպարագլուխս և եթ պատժել զխռովութեանն: Իսկ աշակերտացն դառնալով առ մեզ՝ զայրացեալ յոյժ ընդ արքեպիսկոպոսն, որ խրախու-սեացն զնոսա ի սկզբան և ապա խոտեաց, դրժեալ բանին իւրում՝ պատմեցին մեզ առ հասարակ զամենայն: Եւ Հ. Կղե-մէնտեայ ծանուցեալ՝ թէ յայնմ ոչ նոցա է մեղ՝ ներեաց ամենեցուն. իսկ մեք հասաք ի կէտ նպատակի մերոյ, զի յայնմհետէ առաջի մեր միայն խոստովան լինէին աշակերտքն:

Ի 14-րդի աւուր Մայիսի 1666 ամի փոխեցաւ Հ. Կղե-մէնտոս Գալանոս յերջանիկ կեանս, որ տեսուչ էր առաքե-լութեանն և դպրանոցին, և զպաշտամունս զայսոսիկ յան-ձին կալայ ես զկնի նորա:

Ի 27-րդի աւուր Մայիսի 1666 ամին, հանդերձեալ իմ առ հարկի երթալ ի Կամենից ընդ արքեպիսկոպոսին վասն գլխաւորելոյ անդ զգործ Միութեանն՝ կարգեցի փոխանակ իմ զՅակոբ քահանայ Գրիգորեան, որ մեծաւ խնամով և ջա-նիւք վարեաց զայն պաշտօն ցվերադարձ մեր յԼվով, ցՀոկ-տեմբեր ամիս 1666 ամի, օգնութեամբ և պաշտպանութեամբ արքեպիսկոպոսին Լվովայ, Տարնովսկեայ և աւագ սարկա-ւագին Պեասեկովսկեայ:

Սուղ ինչ յետոյ, իբրև դարձ արարաք ի Կամենիցէ՝ քա-րոզել սկսան աշակերտք դպրանոցին, նախ յեկեղեցւոջ Հայ-ոց և ապա կաթողիկաց, ի բերկրութիւն սրտի ամենեցուն: Եւ յայնմհետէ ցնծութեամբ տեսանեմք, զի ի ձեռն հանա-պազօրեայ վարժից յառաջադիմեն նոքա ի հոգևոր պերճա-բանութեան, ամենեքեան անխտիր, յորում վայրի և ծնեալ իցեն, ի Լեհաստան կամ յարևելս: Ընդ որ ի նախանձ շարժէին Ռուսք ոչ կաթոլիկք, իսկ Լատինացիք զարմանային եկեղեցա-կանք առհասարակ և աշխարհականք, և զայն խնդրէին ի մէնջ հանդիսիւ, զի առաքեսցուք զնոսա յեկեղեցիս իւրեանց:

Իբրև ընկալաւ Հ. Կղեմէնտոս ամաց ինչ յառաջ քան զմահ իւր՝ օժանդակութիւն 600 ոսկւոյ ամի ամի ի պէտս դպրանոցին ի Ս. Ժողովոյն Տարածման Հաւատոյ, (յայնմ ժամանակի կրկնակի դիւրագին էր ամենայն ինչ)՝ խոստացաւ

ունել ուսուցիչս երիս, աշակերտս տասն և սպասաւորս երկուս կամ երիս։ Իսկ յետ մահուան նորա կամեցեալ իմ ի մեզ յանկուցանել զսիրտ ժողովրդեանն և փարատել զհամբաւն, թէ փակեալ է դպրանոցս մեր՝ հարկեցայ յուղևորութեան իմում ի Կամենից յաղագս գործոյ Միութեանն՝ ածել անտի ընդ իս աշակերտս երիս, զորս առաջարկեցին ժողովուրդքն Կամենիցի և Յազլովիցի և յանձն արար ինձ արքեպիսկոպոսն ի 16-րդի աւուր Հոկտեմբերի 1666 ամին, որ են.

Գրիգոր Գաբրիէլովիչ ի Կամենիցէ, ամաց իբրև 14-ից, որդի քահանային Հայոց Գաբրիէլ կոչեցելոյ. բթամիտ, ձայնեղ, համեստ և անոպայ։

Գաբրիէլ Նիկոլայովիչ յՅազլովիցէ, ամաց իբրև 14-ից, եղբայր յիշատակելոյն ի վերոյ աշակերտին Աստուածատրոյ Նիկոլայովիչի. հանճարեղ, բարեկամ, աստուածասէր, բարեպաշտ, սիրող գիտութեանց և տածիչ մեծամեծ յուսոց։

Անդրէաս Աւագովսկի յՅազլովիցէ, յազնուական այլ ազգատ ծնողաց, անցեալ զ14 ամն, ազգական Նիկոլայովիչի. բարեկամ, սակաւ ինչ բթամիտ, և գոյն մի անոպայ ի վարս, այլ հնազանդ և խոնարհ։

Ի 23-րդի աւուր Նոյեմբերի 1666 ամի վասն թախանձագին աղաչանաց արքեպիսկոպոսին Հայոց և փոխանորդի նորա և այլոց բազմաց, հարկեցայ առնուլ ի դպրանոցն և զայլ մի աշակերտ, որ է

Խաչատուր Պաւլովիչ յԼվովայ, որդի Պօղոս քահանայի Հայոց ի Կ. Պոլսոյ անուանեցելոյ ընդ միում յազգակցաց արքեպիսկոպոսին, ամաց 16-ից. գիտէր սակաւ ինչ զլեզու Լատինացւոց, զի ուսեալ էր առ ժամանակ մի առ Հ. Յիսուսեանս. բարեկամ, միջակ ի յաջողակութեան, ոչ կարի սիրող ուսմանց։

Ի 4-րդի աւուր Դեկտեմբերի 1666 ամի ժամանեցին այսր ի Հռովմայ քարոզիչք երկու նորք, քահանայքն Դաւիթ և Պեվերատի, արք երևելիք սրբով և իմաստութեամբ իւրեանց։ Այնուհետև առաւելան յաջողութիւնք մեր, զի մին ի նոցանէ աւանդել սկսաւ փիլիսոփայութիւն և միւսն աստուածաբանութիւն, երկոքեան ի լեզու Լատինացւոց. և ի սոյն ժամանակի կարի յառաջադիմեցին աշակերտքն։

Ի 10-րդի աւուր Դեկտեմբերի 1666 ամի, ըստ խնդրոյ դատաւորացն Հայոց ընկալաք ի դպրանոցն և զայլ ոմն աշակերտ, ոչ առանց դժուարութեան, քանզի լցեալ էր սահմանեալ թիւ երեսուն աշակերտացն. իսկ նորեկն էր,

Յովհաննէս Կապրովսկի յԼվովայ, ամաց իբրև 18-ից, եղբօրորդի Տեառն Գաբրիէլի Կապրովսկւոյ, (որ զերկրորդն ունի տեղի ի դատաւորս Հայոց և է կաթոլիկ ջերմեռանդն). էր սա պատանի ձրիւք, այլ հիւանդոտ և սակաւ ինչ յամառ. ուսեալ էր յառաջագոյն առ Հայս Յիսուսեանս մինչև ցարուեստ բանաստեղծութեան:

Ի ժամանակին, յորում մեկնեցան աշակերտքն ի դպրանոցէն, այն է ի 4-րդի աւուր Ապրիլի 1666 ամի՝ երկուք յաւագացն՝ Յակոբ Մարխեիչ և Յովհաննէս Աղանովիչ, ըստ զրդման յոյժ ջերմեռանդն կաթոլիկաց ոմանց՝ խնդրեցին և առին խոստումն ի Հ. Կղեմենտեայ՝ զի արձակեսցէ զնոսա ի վերջ կոյս 1666 ամի, յորժամ ուսանիցեն զքերականութիւն Հայոց և սակաւ մի գրաբարական աստուածաբանութիւն, որպէս զի ամուսնասցին ըստ սովորութեան արևելեայց՝ նախ քան զձեռնադրելն ի կիսասարկաւագութիւն: Յետ մահուան Հ. Կղեմենտեայ՝ հարկ եղև ինձ կատարել զխոստումն նորա. այլ հրամայեցի, զի նախ հարցաքննեսցին զուսումն առաջի արքեպիսկոպոսին Հայոց, փոխանորդացն Լատինացւոց և Հայոց և բազմաց եկեղեցականաց Հայոց և Լատինացւոց, ընդ որ գոհացան յոյժ հրաւիրեալքն: Ապա երկոքեան խոստացան գալ և առ յապա ի դպրանոցն ի լսել զդասս աստուածաբանական վիճաբանութեանց, զոր յառաջագոյն ուսանէին: Այլ յետոյ ի բաց ընկեցին զխորհուրդս իւրեանց և կացին ամուրիք, և են այժմ քահանայք երկոքեան և բարւոք վարին. փոխեալ Աղանովիչն զնախնին իւր մականուն և կոչի այժմ Անափիրաս քահանայ:

Յ2-րդի աւուր Ապրիլի 1667 ամի ի տօնի Ս. Գրիգորի կաթողիկոսին Հայոց բարկացաւ արքեպիսկոպոսն ընդ քարոզութիւն Գաբրիէլի Զախնովիչի առ այն՝ զի յիշատակեաց ի բանին զխոստովանութիւնն, որ կարի ատելի էր արքեպիսկոպոսին: Հրամայեաց յայտ առնել աշակերտին (որ հանդերձեալն

քարոզել միւսանգամ), զի սանձ դնիցէ բանից իւրոց, ապա թէ ոչ խորտակեսցէ զոտս նորա։ Իսկ մեր զահի հարեալ ընդ սպառնալիսն՝ ոչ եւս կամէաք քարոզել աշակերտացն, այլ յետոյ միջնորդութեամբ փոխանորդին Հայոց խաղաղութիւն եղեւ յայսմ։

Իբր յ7-րդի աւուր Օգոստոսի 1667 ամի վերստին ընկալաք ի դպրանոցն զՆիկողայոս ոմն ի Կամենեցէ, ամաց գրեթէ 30-ից. գղիր, որ այրի էր ի բազում ժամանակաց հետէ. այր ձայնեղ, բարեկազմ և բարեձեւ, հնազանդ և համեստ, և միջակ ի յաջողակութիւնս։ Յորժամ ուսաւ զլեզուն Հայոց ըստ կարի և զպաշտօն խորհրդոց, ձեռնադրեցաւ քահանայ և ի յաջորդ ամին ի 10-րդի աւուր Մարտի առաքեցաւ ի Լուցկ, լինել երէց եկեղեցւոյն Հայոց, և կոչի այժմ Անտոնիոս քահանայ։

Յ19-րդի աւուր Հոկտեմբերի 1667 ամի ժամանեաց այսր ի Հռովմայ Յովսէփ քահանայ Կարացիոլի, զոր առաքեաց Ս. Ժողովն Տարածման Հաւատոյ ի պաշտօն տեսչութեան առաքելութեանն և դպրանոցին փոխանակ հանգուցելոյ Հ. Կղեմենտեայ։ Յանձն արարի ես նմա զղեակ վարչութեան, այլ զկնի սուղ ինչ ժամանակի հարկ եղեւ ինձ վերստին ստանձնել զայն պաշտօն, քանզի մեռաւ Հ. Կարացիոլի, յ30-րդի աւուր Դեկտեմբերի 1667 ամի, որպէս յիշատակեցաւ ի վերոյ։ Յայնմհետէ վասն հակառակութեանցն, որ ընդ արքեպիսկոպոսն Հայոց և ընդ տեսուչն Կարացիոլի՝ արգելաւ աշակերտաց մերոց քարոզել յեկեղեցիս Հայոց, այլ նոքա քարոզեն յեկեղեցիս կաթոլիկաց, ընդ որ գոհ են ամենեքեան, բաց ի միոյ յարքեպիսկոպոսէն։ Իսկ զկնի մեկնելոյ նորա ի Հռովմ փոխանորդն Հայոց զժուարաւ ինձ թոյլ ետ անդրէն քարոզելոյ ըստ պատուիրանի նուիրակին, յորմէ խնդրեալ մեր զայս, ընկալաք անդէն զխնդրելին։

Յ12-րդի աւուր Յունվարի 1668 ամին ի ժամանակի յորում ախտացաւ դպրանոցս մեր զախտն փտանդաւոր, որպէս յիշատակեցաւ ի վերոյ՝ մեռաւ Յովհաննէս Կապրովսկի, աշակերտ դպրանոցին։ Իսկ աւուրբք ինչ յառաջ, այն է յ8-ն Յունվարի, արձակեցաւ ի դպրանոցէն այլոց յօրինակ, Խաչատուր Պաւլովիչ վասն յամառութեանն, որ ոչ կամէր հնազանդել ուսուցչացն. և է այժմ ի Հռովմ ընդ արքեպիսկոպոսին։

Իբրև գործ արար Տ. Ոսկանայ Վարդապետի յայցելութե-նէն իւրմէ եկեղեցւոյն Ամստերդամայ, էած ընդ իւր, ի 14-րդի աւուր Ապրիլի 1668 ամին զաշակերտ մի նոր, Յակոբ Գա-լեչ անուն ի Ամստերդամայ, ամաց իբրև 18-ից, որ ի ծննդա-րանին Ամստերդամայ ուսաւ մինչև ցբանաստեղծութիւն. բարե-կազմ և գեղեցիկ դիմօք, այլ փոփոխամիտ, միջակ ի յաջողա-կութեան. վասն որոյ յետ սուղ ինչ ժամանակի, յ8-ն Յու-լիսի արձակեցաւ ի տուն իւր հանդերձ եղբարբն իւրով, որում պարգևեալ էր ազատութիւն. քանզի ոչ միայն չէր յա-ռաջադէմ, այլ և ոչ կարէր կեալ մերովս փակեալ կենօք, զո-րով յառաջագոյն ի սպասու զինուորութեան:

Ի 5-րդի աւուր Յունիսի 1668 ամի եկ ի տպարանս Գաբրիէլ Զախնովեչ, որ ձեռնադրեալ էր յառաջագոյն եւ քահանայ՝ յետ ուսանելոյ հիմնապէս զճարտասանութիւն ի լեզու Լատինացւոց, զլեզու Հայոց, զփիլիսոփայութիւն և զաստուածաբանութիւն յերկոսին լեզուս և յետ ջատագո-վելոյ հրապարակաւ խնդրոցն, զորս առաջարկեցաք: Եկաց նա ի տպարանի մերում ամս երիս և կէս, պատուեալ ի մէնջ վասն հեզութեանն և համեստութեան իւրոյ, և է զարդիս քարո-զիչ մայր եկեղեցւոյն Հայոց և վարէ զայս պաշտօն յաջո-ղութեամբ ի բերկրութիւն ժողովրդեանն:

Վասն այսորիկ իրաւամբ վարձատրեցաւ ի Ս. Ժողովոյն ամի ամի թոշակաւ 40 հոլանդեցի ոսկւոյ, այնու միայն, զի խոստովանեցուսցէ զժողովուրդն, զոր և առնէ նա յօգուտ մեծ ամենեցուն, այլ և կոչի յաճախակի առ վտանգաւոր հի-ւանդս. իսկ փութովն և յաջողութեամբ ի պաշտաման իւ-րում յինքն յանկոյց զսէր և զհիացումն ամենեցուն:

Նոյնպէս և յ31-րդի աւուր նորին ամսեանն առաքեաց յայս յաջողութեամբ զընթացս ուսման իւրոյ ի տպարանին Աստուածատուր Ներսէսովեչ, զասակից Զախնովեչի, այլ ոչ յաջողակ զորէն նմին: Սա ես ձեռնադրեալ էր քահանայ. ուսաւ ի տպարանին զքերականութիւնս հայերէն և լատի-ներէն լեզուաց ի սկզբանց անտի և քաջարար ջատագովեաց աստուածաբանական խնդրոցն ի յիշատակ հանգուցեալ Սրբոյ Հօրն Կղեմենտեայ Թ-ի. առաքեցաւ ապա յՆապոլիս, ի

ընիկ քաղաք իւր, ուրանօր ընկալեալ ի ժողովրդենէն սիրով մեծաւ՝ յանձն էառ զպաշտօն քարոզչի առ եկեղեցեաւն քաղաքին։ Վասն նորա մտին ի գրկոյն, որ հիմնեալ էր անդ յառաջագոյն, մանկունք աւելի քան զվաթսուն, զորս մարզէ յուսմունս և ի բարեպաշտութեան։ Նա՝ քանզի հեզ է ժողովուրդ քաղաքին և առնէ զոր ինչ պահանջեսցեն՝ հիմն էարկ Աստուածատուր քահանայն բարեպաշտօն եղբայրութեանց և ընկերութեանց, այլ և կարգեաց առնել յիշատակ որոց յուղղափառութեան իցեն վախճանեալ. և մխիթարէ զամենեսեան ճառիւք և բնմաստութեամբ աշակերտաց իւրոց։ Վասն որոյ առ ի քաջալերել զնա վասն փութաջանութեանն, զի յարատեւեսցէ յընթացս իւր՝ առաքեաց նմա Ս. Ժողովն պարգեւ 10 մաճառ ոսկւոյ։

Ի 14-րդի աւուր Յունիսի ժամանեաց այսր վերստին յիշատակեալն Մելքոր Նիկողայոս Արիէնովէչ ի Զամոստեայ, հանդերձ խնդրագրով Յակովբայ Քիստոստուրովէչի, ծըխատէր քահանայի եկեղեցւոյն Զամոստեայ, յորում ծանուցանէր, զի ուսեալ է Արիէնովէչն ըստ կարի զերկոսին լեզուս և զկարգ կատարման խորհրդոց, յորս և վարժ իսկ է, և խնդրէր՝ զի ձեռնադրեսցի նա քահանայ ըստ կարի փութով և առաքեսցի ի տեղի իւր. (զի դպիր գոլով զչորեսին խոնարհագոյն աստիճանս և եթ ունէր կարգի). զնոյն խընդրեաց և արքեպիսկոպոսն Հայոց։ Զխնդիր նոցա կատարեցաք. ձեռնադրեցաւ նա քահանայ ի սկզբան անդ Յուլիս ամսոյ և դարձաւ անդրէն ի քաղաքն իւր, ուրանօր օգնական է երիցուն բարւոյ, որ միայն էր անդ. կոչի այժմ տէր Պետրոս քահանայ։

Ի 17-րդի աւուր Յունիսի 1668 ամի ժամանեաց այսր յարեւելից, ի Կաֆա քաղաքէ Թաթարստանի՝ ոմն Յովհաննէս Խալդապրօղլու, ամաց իբրեւ 26-ից և խնդրէր մտանել յաշակերտութիւն դպրանոցին, յայտ արարեալ՝ թէ հրացեալ ընդ համբաւ պապական դպրանոցին՝ ի պէտս ուսման եկ ի բնիկ քաղաքէն իւրմէ և եկն այսր։ Սա ուրեմն ընկալաք զնա, ոչ առանց դժուարութեանց, զի յոյժ հաստատուն թուեցաւ յաչս իմ և յաջողակութեամբ միջակ. այլ ընկալաք

յայն սակս՝ զի խրախուսեսցին օրինակաւ նորա և եկեսցեն առ մեզ յուսումն յարևելից։ Այլ անձնեայ էր նա և այնպէս ջերմեռանդն ի Ս. Հաւատս ի քարոզելն իւրում առ Հայրենակիցս իւր՝ զի գային բազումք տեսանել զնա։ Ի սկզբան անդ քարոզէր յեկեղեցւոջ ի լեզու Տաճկաց, ուստի ապա զքերականութիւն լեզուին Հայոց և գոյզն մի զտրամաբանութիւն, և այժմ ուսանի զաստուածաբանութիւն բարոյական ի լեզու Հայոց։ Հնազանդ է և աստուածասէր, այլ սիրէ զօղի, ուստի ոչ գիտեմ, զինչ լինիցի, յորժամ եկեսցէ ի դպրանոցէս մերմէ։

Յորժամ ի վերջնումն նուագի յամսեանն Օգոստոսի և Սեպտեմբերի 1668 ամի յայց եկաք ընդ արքեպիսկոպոսին Հայոց եկեղեցւոյն Կամենիցի՝ դատաւորք քաղաքին առաջարկեցին ինձ ի 6-րդի աւուր Սեպտեմբերի աշակերտս չորս, զորս հարկ էր ընդունել. և են սոքա.

Յակոբ Նանովիչ ի Կամենիցէ, դպիր. ունի զչորեսին խոնարհագոյն ատենանս կարգի, է ամաց իբրև 25-ից, և ամուսնացեալ է ի սուղ ժամանակաց հետէ և սպաս հարկանէր երբեմն յեկեղեցւոջ Կամենիցի. է անձնեայ, միջակ յաջողակութեամբ, ձայնեղ, խելամուտ և հնազանդ, եռանդուն և նախանձաւոր Ս. Հաւատոյ. ունի ձիրս քարոզութեան. ուսաւ արդէն զքերականութիւն Հայոց և զսկզբունս տրամաբանութեան. ուսանի այժմ զբարոյական աստուածաբանութիւն, որպէս զի ըստ կարի փութով աւարտեսցէ զուսումնս իւր։

Քրիստափոր Գաբրիէլովիչ ի Կամենիցէ, եղբայր յիշատակելոյն Գրիգորի Գաբրիէլովիչի, որդի քահանային Կամենիցի դպիր, ունի զչորեսին խոնարհագոյն ատենանս կարգի, է ամաց իբրև 23-ից. անձեայ և բարեդէմ, ձայնեղ յոյժ, գիտէ զերգեցողութիւնս Հայոց, նման առաջնոյն. բթամիտ է. աստուածասէր և համեստ, այլ դժնեայ և ծածկամիտ. թուի թէ կամի կեալ ի կուսակրօնութեան, այլ ոչ է նախանձաւոր Ս. Հաւատոյ։ Գիտէ սակաւ մի զլեզու Լատինացւոց և ունի ձիրս քարոզութեան, և քարոզէ արդէն յեկեղեցւոջ։ Ուսանի զնոյն, զոր ինչ և առաջինն։

Ստեփանոս Եաղինովիչ ի Կամենեցէ, ամաց իբրև 15-ից. բարեկազմ, ձայնեղ յոյժ, գիտէ նոյնպէս սակաւ մի զեկեղեցական երգեցողութիւն Հայոց, այլ թոյլ է յաջողակութեամբ: Նոյէն և ընդ ի մանկունս ուսանել սկսաւ զքերականութիւնս Հայոց և Լատինացւոց, այլ զկնի ամաց հնգից, ի 21-րդի աւուր Փետրուարի 1669 ամի, յորժամ խնդրեաց ասաց երէցն Զամոստեայ գալ ի դէպս եկեղեցւոյ՝ առաքեցաք զնա անդր, ընդ որ ոչ կարի յուսացեալ էաք:

Քրիստափոր Աբիմնովիչ ի Կամենեցէ, ամաց իբրև 13-ից, միջակ յաջողակութեամբ, բարեկազմ և հրեշտակային վարուք: Յորժամ եմուտ ի դպրանոցն՝ զայն միայն գիտէր, զոր ինչ ուսեալ էր ի մօրէն իւրմէ, այսինքն է խօսել ի լեզու Ռուսաց և գոյգն ինչ ի Լեհացւոց, այլ այժմ գրէ և ընթեռնու լեհերէն, խօսի սակաւ մի լատիներէն և հայերէն, երգէ յեկեղեցւոջ, քանզի ձայնեղ է, և այնպէս քաջ գրէ ի լեզու Հայոց, զի ոչ ոք յԼվով գիտէ որպէս նա, բաց ի Վարդանայ, որ զնոյն ուսուցանէ: Եւ այնպէս հարաւ նա ի սէր ուսմանց, զի հարկ լինի երբեմն սաստկագոյն պատժով անջատել զնա ի գրոց յազատութեան ժամս, ի դէպս հանգստեան:

Ի 11-րդի աւուր Նոյեմբերի 1668 ամի, իբրև մեկնեցաւ տէրն ի Հռոմ Փրանցիսկոս քահանայ Պարից ընդ արքեպիսկոպոսին Հայոց, մնացին ի դպրանոցին երկու և եթ ուսուցիչք:

Զկնի մեկնելոյն տեառն արքեպիսկոպոսին Հայոց հիմնեցաք ի տեղւոջ գերեզմանատանն, յորում էաքն՝ դպրոց վասն ուսանելոյ քերականութիւնս հայերէն և լատիներէն լեզուաց, ուրանոր ուսանին այժմ աշակերտք աւելի քան զերեսուն ընդ առաջնորդութեամբ աշակերտաց պապական դըպրանոցին, աւարտելոց զընթացս ուսման իւրեանց, Գաբրիէլի տեառն Զախնովիչի և Անտոնի Նալբանովիչի: Ածեն զնոսա յաւուրս շաբաթուց զոյգ զոյգ կարգաւ ի դպրանոցն մեր և ուսուցանեն նոցա յանգիման մեր զմանր ուսմունս Հաւատոյ, մեզ ի գոհութիւն մեծ:

Ի 21-րդի աւուր Փետրուարի 1669 ամի ընկալաք ի

դպրանոցն զԿազիմիր Մուրադովեչ ի Կամենիցէ. պատանի է սա ձայնեղ, յաջողակ, ոչ քաջառողջ, աստուածասէր և բարեպաշտ. քաջապէս պատրաստեալ յուսմունս. գիտէ զլեզուս Թաթարաց, Լեհացւոց, Ռուսաց և Լատինացւոց, այլ և առ Հայս Յիսուսեանս ուսեալ է և զճարտասանութիւն. յոյժ մեծ են մեր ի պատանեակն, որ է որդի աւագ դատաւորին Հայոց Կամենիցի։ Յառաջագոյն իսկ խոստացան ինձ տալ զնա յուսումն առ մեզ, մինչդեռ գնացեալս էի ի Կամենից վասն գործոյ Միութեանն. այլ ապա, յորժամ հարկեցան Հայք ըստ արքայական հրամանին հաւանել ի կամս մեր յետ բազում ծախուցն և հակառակութեանց՝ ոչ ևս հաճեցաւ հայր նորա առաքել զնա առ մեզ, այլ առաքեաց զնա յուսումն ի Զամոստիէ, առ վաճառական ումն Հայ։ Ոչ հաճոյ թուեցաւ այս պատանւոյն, որոյ էին յաջողուածք ի մտանել յայլ իմն ասպարէզ։ Ի ձեռն աւագ երիցուն Զամոստեայ ջանացաք այլ և այլ հնարիւք առ մեզ զնա յանկուցանել, այլ նա ոչ կամէր, զի մի տրտմութիւն լիցի հօրն իւրում։ Նաև զնա զամ մի նախանդամ Հոգևոր Վարչութեանն այսր յԻլվով ի տօնավաճառն, և եւս պատանին ըղհանդէս վիճաբանութեան նորեկ աշակերտացն. դիւրաւ յայնժամ հաւանեցեր զնա արարաք թողուլ զվաճառականութիւն և գալ յուսումն ի դպրանոցն մեր, զոր և արար նա, այլ միայն զի արձակեսցուք զնա, եթէ ոչ հաճեսցի ընդ այն հայր նորա։ Իսկ հայրն ոչ հակառակ եկաց նմա ողորմութեամբն Աստուծոյ, հաճեցեալ ի խնդիր Լեշչինսկեայ քահանային, եկեղեցականին Կամենիցի. և յառաջագիմէ այժմ պատանին յուսմունս ևս քան զևս։

Նաև Հայքն Իլվովայ տրտնջեն ուրեմն կային, թէ ահա դպրանոցն ողջոյն լի է աշակերտօք ի Կամենիցէ և յՍտանիսլավէ, իսկ զպատանիս յԻլվովայ իբր թէ ոչ ընդունիցիմք։ Այլ զի՞նչ էր մեզ առնել, քանզի որ կարի յաջողակք էին ի նոցանէ՝ մտանէին ի վաճառականութիւն, և որ նուազագոյն յաջողակք՝ պատանիք երկուք կամ երեք, կամէին զի կոչեսցուք զնոսա մեզէն ի դպրանոցն և մուծանիցեմք այնու անկարգութիւնս ի նմա։ Այլ քանզի հարկ էր պահել յաւէտ զբարեհամբաւութիւն

ժողովրդեանն, մանաւանդ յորժամ արգելու արքեպիսկոպոսն ի Հռոմ՝ հաւանեցայ առ հարկին ընդունել զՕտախնովիչ ոմն Լվովեցի, ամաց իբրեւ 14-ից, զազգակիցն ասաց՝ դատաւորին Հայոց Լվովայ, որպէս թոյլ և բթամիտ:

Թող զայս ամենայն աշակերտս, զորս յիշատակեցաք, էին և այլ ևս աշակերտք վեց կամ եօթն, որ գային լսել ըզդասս և դառնային ի տունս իւրեանց: Էր ի սոսա դպիր ոմն, որ ունէր զշնորհսն խոնարհագոյն աստիճանս կարգի, Թէոդորոս Ագոստոնովիչ անուն, ամաց իբր 13-ից, եղբօրորդի միոյ ի դասաւորացն, յաջողակ յոյժ, ունելով պատրաստութիւն քաջ յուսմունս. աստուածասէր և բարեպաշտ, ձայնիւ, փառառողջ անձամբ, գեղեցիկ դիմօք: Զսա առաջին մարթ է համարել աշակերտաց մերոց, զի այն ինչ ժամանեալ էր մեր այսր՝ տեսեալ ի հրապարակի զհայր մանկանն՝ ընկալաք անդէն ի նմանէ խոստումն, զի տացէ զորդի իւր յուսումն առ մեզ, զոր և արար ընդ հուպ: Իսկ այժմ պատանեակն հայերէն և լատիներէն, և ըստ միջնորդութեան մերում ընկալաւ աստիճան դպրի:

Իսկ վասն գիտութեանցն հարկ է ասել զայս ինչ, զի Հ. Անջելոյ Պեփերատի աւանդէ զաստուածաբանութիւն ի լեզու Հայոց և ի Լատինացւոց հնգից աշակերտաց, իմա Վարդանայ, Բուտանովսկեայ, Միխալովիչի, Բաղովիչի և Բարթոսովիչի, որք մերձ են յաւարտ ուսմանն. և նա աւանդեն զփիլիսոփայութիւն ի լեզու Հայոց երից աշակերտաց, իմա Գրիգորի Ներսեսովիչի, Աւագովսկեայ և Մուրադովիչի և երկուց աշակերտաց երթեւեկելոց: Իսկ այլք ամենեքեան ուսանին զքերականութիւն երկոցունց լեզուացն:

Գրիգորիոս քահանայ Բալամ, որ առաջ երէց է այժմ եկեղեցւոյն ի Ստանիսլաւով քաղաքի՝ ջատագովեաց ի դպրանոցին խնդրոց ի բարոյական աստուածաբանութենէ, զոր ուսաւ առ ժամանակ մի ի Հ. Կղեմենտեայ, և ապա այլ և այլ աշակերտք մեր ջատագովեցին այլոց խնդրոց յաստուածաբանութենէ և ի փիլիսոփայութենէ յերկոսին լեզուս, որ գրեալ են և տպագրեալ յՆապղովեց, ի Կամենից և աստ յԼվովի, ձօնեալք յանուն պապին Կղեմենտեայ Թ-ի,

նուիրակին Պիգնատելլեայ, արքեպիսկոպոսին Իլվովայ՝ Տառնովսկեայ, արքեպիսկոպոսին Հայոց՝ Թորոսովիչի, Տեառն Սոբեսկեայ, որդւոյ մեծի զօրավարին Պողոնեայ, աւագ սարկաւագին Իլվովայ՝ Պեասկովսկեայ քահանային, աւագ քահանային Կամենիցի՝ Սուլինսկեայ, Տեառն Անդրէասայ Պոտոցկեայ, որ զօրապետ է զարդիս Կիեվի, Տեառն Ռուսանովսկեայ ազնուականի Հայոց յՅազլովիցէ և այլոց: Եւ զարդիս պատրաստին այլ խնդիրք, առ ի ձօնել փոխանորդին Իլվովայ՝ Գնեճինսկեայ, փոխանորդին Հայոց՝ Կերեմովիչի, զօրավարին Պողոնեայ՝ Տեառն Նիկողայոսի Պոտոցկեայ, սեննեկապետին Կամենիցի՝ Լեանցկորոնսկեայ, դրօշակակրին Կամենիցի՝ Մեասկովսկեայ և այլոց: Ոչ սակաւ վաստակք են աշակերտաց մերոց վասն այսոցիկ, առ ի չգոյէ ապարանի Հայոց, քանզի ժամանակ բազում ծախի յընդօրինակութիւն ջատագովութեանցն, այլ պատիւ մեծ է այս պարգևաց դպրանոցին:

Եւ մոռացօնք եղեն մեզ մուծանել ի դպրանոցն վարժս օգտակարս և ախորժելիս բեմասացութեանց և ողբերգութեանց, որով մարզէին աշակերտք մեր լինել քաջ ատենախօսք, և յանկուցանէաք ի մեզ զբարեհաճութիւն համօրէն դասուց ժողովրդեանն, որ գային հաճութեամբ գունդագունդ ի հանդէսն և հարկէին յաճախ հիացուածովքն լսել խաղացութեամբ բանս ճշմարտութեան: Կարևորքն յողբերգութեանց սուրբ և ճառից, գրելոց ի լեզու Հայոց ատենաւոր բանիւ են՝ «Մահ Կեսարու», «Նուեզծուածք Սողոմոնի», «Մահ Հերովդեայ», «Սրբուհի Կոյսն Հռիփսիմէ» և այլք ևս: Եւ այժմ ունիմ ի ձեռի հրամայել, զի ի գալ ժամանակաց արձակուրդին հանդիսացուսցեն աշակերտքն զմահ Թէոդոսի Փոքուն ընդ խորագրաւ՝ «Սրբուհի կայսրուհին Պուլքերիա», առ ի ջատագովել սմա ընդդէմ չարախօսութեանց և բամբասանաց հերետիկոսացն Հայոց, որ ատեն յոյժ զնա, քանզի ջանիւք նորա գումարեցաւ Ժողովն Քաղկեդոնի, ըստ հրամանի Ս. Լևոնի:

Այս այս են կարգ և կանոնք կենցաղավարութեան աշակերտացն:

Յառնեն ընդ առաւօտն ընդ արշալոյսն ըստ ժամանակի տարւոյն և ըստ կոչմակի եկեղեցւոյն Հայոց, և ի ձայն զանգակի ժողովին ամենեքեան ի մատուռն դպրանոցին և ասեն բարձր ձայնիւ աղօթս և մաղթանս առ սուրբս ոմանս և զաղօթս վասն սիրոյ և գոհութեան առ Աստուած, կարի չքնաղս, յօրինեալս ի լատին լեզու ի Տ. Կղեմենտեայ։

Յետ աղօթից գնան իւրաքանչիւր ի սենեակս յարդարել զանկողինս իւրեանց, աւել ածեն առանձինն և հասարակաց սենեկացն, ուսանին սակաւ մի, ըստ ժամանակին, մինչև ցզանգակ Օրհնութեանցն յեկեղեցւոջ, յոր և գայ ժողովուրդն, (քանզի զԺամն Գիշերային պաշտեն քահանայքն միայն և ընթեռնուն զվարս հարանց Հայոց)։ Երթան յայնժամ յեկեղեցի, ուրանօր մնան ժամս երկուս կամ երիս կամ աւելի ևս, որպէս յաւուրս կիրակէից և մեծահանդէս տօնից։

Զկնի Օրհնութեանց զան նախաճաշել հացիւ, եթէ չիցեն կոչեցեալք սպաս հարկանել ի պատարագի, և ուսանին մինչև ցԺամն Ճաշու, և յետ գտանելոյ զԹուղթս առաքելոց, զորս ընթեռնուլ ունի ոք ի նոցանէ՝ երթան անդրէն յեկեղեցի, մինչև ցսահմանեալ ժամանակ, բաց յայնոցիկ, որոց ունին հրաման կալ մնալ ի տան վասն դասուց աստուածաբանութեան կամ փիլիսոփայութեան, կամ յաղագս այլոց ինչ կարևոր պատճառաց։

Զկնի Ճաշու Ժամուն ուսանին վերստին, և յետ պատմելոյ միմեանց զդաս իւրեանց և առնլոյ առաջ քննչին կամ վերակացուին՝ զան տալ համար դասուցն առաջի հարցն։

Յետ դասուցն, որ հասարակօրէն ձգին ընդ երկար վասն ազգի ազգի ուսմանցն և զի պարապեալք են հայքն յաճախակի ի գործս առաքելութեան՝ լինի ճաշ զմիջօրէիւ։ Զաղօթսն նախ քան զսեղանն՝ ասեն ի լեզու Հայոց և յետ մաղթանացն Oculi omnium («Աչք ամենեցուն») ընթեռնուն ըզսաղմոսն Exultabo te Domine, Deus meus rex և այլն («Բարձր առնեմ զքեզ, Աստուած իմ և թագաւոր իմ. . . Սաղ. ՃԽԴ») և ապա ոմն ի հարցն օրհնէ զսեղանն հայերէն։ Ի ժամ ճաշու մինչև ցվախճանն ընթեռնուն նախ հայերէն զՍուրբ

Գիրս, (զարդիս ընթեռնուն զԹուղթս Ս. Պօղոսի) և ապա երկասիրութիւնս պատմութեանց ի լեզու Լատինացւոց, (ընթեռնուն այժմ զհամառօտութիւն պատմութեանն Տուրսելինայ) *) և հուսկ ուրեմն գիրս ինչ ի լեզու Լեհացւոց, զոր օրինակ զՎարս հարանց զարդիս։ Զկնի ճաշուն ընթեռնուն աղօթս ի կանոնական ժամագրոցն Հայոց, յետ որոց անդէն ծունր եդեալ աղօթէին կիսաձայն կամ կրկնէին երբեմն զուսմունսն ուսանելոյ յառաւօտեան պահուն։

Զկնի ճաշուն է ժամանակ ազատ իբրև գէթ ժամ մի, մինչև ցաւարտ երկրորդի պատարագին։ Յընթացս ամաց ինչ լինէին յայսմ պահու փարժութիւնք ի լեզու Իտալացւոց, զոր կարեւոր յոյժ համարէին, որպէս զի մարթ լիցի աշակերտացն ընթեռնուլ գիրս Իտալական լեզուաւ և ուսանել քարոզել, որպէս արարին աշակերտքն որ եկին ի դպրանոցէն, Աստուածատուր քահանայն Ներսէսովիչ և Գաբրիէլ քահանայն Զախնովիչ ի մեծ օգուտ անձանց իւրեանց։ Այլ քանզի ոչ ամենեցուն հաճոյ թուեցաւ այս՝ վասն որոյ և ի բաց արկաք սակս կարեւոր պատճառաց։

---

*) Երկասիրութիւն երևելի է այս. «Historiarum a condito mundi libri X» անուանեալն Որատիոսի Տուրսելլինոսի, ի Յիսուսեան կարգէն (1543—1609)։

# ԸՆԴԱՐՁԱԿ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

## ՋՄԻԱՆԱԼՈՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ ՀԱՅՈՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ

## ԸՆԴ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

### ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1676.

Հայաստան ժողովուրդ, սերեալ յերանելի ծննդոցն Յաբեթայ, որդւոյ Նոյի՝ բնակեալ է յերեւելին ի բովանդակ Ասիոյ յաշխարհի, պանծացելոյն բարձրաբերձ լերամբքն, որք երբեմն պատսպարան եղեն փառն Նոյի և համօրէն աշխարհի հեղեղելոյ ջրհեղեղաւն և յորդութեամբ գետոց, Տիգրիսի մանաւանդ և Եփրատայ, որք ըստ Գրոց ի դրախտէ անտի բղխեն: Առ ընդարձակութեան երկրին, փառն պանծալի թագաւորաց և զօրավարաց, հեղմամբ արեան անթիւ նահատակաց, բարեպաշտութեամբ իշխանացն, յորոց կարգի Աբգար, անդրանիկն ի քրիստոնեայ թագաւորս, և բազմօք իւրք այլովք գուշատ ինքն հայեցուցանէ ազգն Հայոց: Յորում վայրի և բնակեցէ, յո և երթիցէ՝ համօրէն ի մասունս աշխարհի և ի կրկին կիսագունդս՝ երեւելի է հանուր ուրեք: Նախագոյն քան զամենեսեան ընկալաւ նա զհաւատս քրիստոնէութեան քարոզութեամբ սքանչելի առաքելոցն Թադէի և Բարթուղիմէոսի, յամի Մարդեղութեան 44, բայց փոխեալ անդրէն ի պաշտօն կռոց՝ վերստին ածաւ ի քրիստոնէութիւն ի սկիզբն Դ. դարուն ի ձեռն Գրիգորի նահատակի, Հայաստանեայց հայրապետին:

Յամի Տեառն 500 կաթողիկոսն Հայոց Ներսէս Աշտարակեցի հրամանաւ արքային Պարսից կոչմամբ ի Դուին քաղաքի ժողով ոչ յոգնաթիւ, մերժեաց զժողովուրդն ի կաթոլիկ Եկեղեցւոյ և ընկալաւ զհերետիկոսայինն վարդապետութիւն Միափնակացն և զաստուածաչարչարից. և թէպէտ յայնմհետէ յայլ և այլ ժողովս կաթողիկեայս, որ ի Հայս գումարեցան՝ Ատանայի սսոն և Տարսոնի և Սսոյ և Խեր-

նալեայ (?) ջանիւք կաթողիկոսաց և թագաւորաց և սրբոյ քարոզչին Բարթուղիմէայ գտանայր. իսկ ժողովուրդն ի ծոց կաթողիկէ Եկեղեցւոյ, այլ փութանակի ի հերետիկոսութիւն մոլորէր անդրէն, յաղագս որոյ իսկ ըստ անաչառ տնօրէնութեան Աստուծոյ Հայք Մեծ ընդ լծով նուաճեցան Պարսից և Փոքր Հայք ընդ լծով Տաճկաց, և յարատևեն ի հերձուածին ընդ կաթողիկէ Եկեղեցւոյն մինչև ցայսօր ժամանակի, բայց ի միոյ գաւառէն Նախիջևանու որ ըստ հոգևորին հովուի ի հարց Դոմինիկեանց, այլ և յեկեղեցեաց ոմանց ի Լեհաստանի, նորոգ յուղղափառութիւն ածելոց:

Յիշատակեալն ի վերոյ Ս. Գրիգոր, որ անուանեալ կոչի Լուսաւորիչ՝ եկեալ հրամանաւ Տրդատայ արքային Հայոց ի չարչարանս անլուրս և դժնդակս վասն հաւատոյն որ ի Քրիստոս՝ արկաւ ապա ի վիրապ գաղիր և անջրդի, յորում հրաշիւք իմն անվնաս պահեցաւ ամս չորեքտասան խնամօք Տեառն. իսկ երբև թագաւորն զխոզի զգեցաւ կերպարանս վասն սպանանելոյն զՍ. Հռիփսիմէ հանդերձ ընկերօքն, երեսունիւք և երիւք կուսամբքն՝ արձակեցաւ յայնժամ Ս. Գրիգոր ի վիրապէն, ըստ հրամանի Տեառն առ քոյր թագաւորին առ Խոսրովիդուխտ, էած զարքայն վերստին ի կերպարանս մարդոյ, մկրտեաց զնա և զաշխարհն ամենայն, զորմէ ընդարձակագոյնս պատմեն Ս. Սուրինոս և այլ ժամանակագիրք:

Յամի Տեառն 311 չոգաւ Ս. Գրիգոր ի Հռովմ ընդ Տրդատայ արքային, (եթէ հաւատալոց են բանք պատմագրաց Հայոց և վաղեմի աւանդութիւնք) և ձեռնադրեցաւ ի Ս. պապէն Սեղբեստրեայ ի տեղեկական պատրիարքութիւն Հայոց և յառաքելական փոխանորդութիւն Ասիոյ. բայց ապա պատերազմաց և այլոց իրաց պատճառաւ ի չորեսին պատրիարքութիւնս անջատեցաւ Եկեղեցին Հայոց.— յԱրտաշատայ, որ կոչի ընդհանրապէս Էջմիածին, յԱղուանից, ընդ իշխանութեամբ Պարսից, Սսոյ՝ ի Կիլիկիայ և Աղթամարայ՝ ընդ իշխանութեամբ Տաճկաց: Ծայրագոյնն ի սոսին է կաթողիկոսն Էջմիածնի, յաջորդն սրբոյն Գրիգորի, ընդ որոյ իշխանութեամբ են եկեղեցիքն, որ ի Պարսս, ի Մեծ Հայս, ի Թրակիայ, ի մեծագունի մասին Արևելից և որ ընդ Արև-

մուտս են և ի Հնդիկս։ Զերկրորդն ունի զտեղի պատրիարքըն Սսոյ, որ ճշմարիտ յաջորդ է Լուսաւորչին ի կարգի կաթողիկոսաց, և ընդ իշխանութեամբ իւրով ունի երկիր լայնածաւալ, հանդերձ եպիսկոպոսական երեւելի վիճակօք, եւ և գեղեցկին որ յՈրուսաղէմ։ Կրտսեր են քան զոսա իշխանութեամբ միացեալքն երկոքին։ Ի վերայ չորեցունց այսոցիկ զաթոռս պատրիարքութեան ընկալաւ և արքեպիսկոպոսն Հայոց Կ. Պոլսոյ, հպատակի սակայն կաթողիկոսին Էջմիածնի, որոյ անգի բնակութեան իւրոյ է մայրավանքն Էջմիածնի, (որ ձայնէ Իջումն Միածնի, կոչեցեալ այսպէս յաղագս երեւմանն Յիսուսի Քրիստոսի և յայտնութեան խորհրդոյն առ Ս. Գրիգոր. այս տաճար ընդ երից այլոց վանաց, Շողակաթին, Հռիփսիմեայ և Գայիանեայ նշխարեցան մինչև ցայսօր ի մեծի քաղաքն Արտաշատու, որ երբեմն մայր էր քաղաքացն Հայոց, զորոյ ամրոցին զմի մասն կալմեալ ասեն զայս վանս մեծաշուք.)—ուրանօր շուրջ պատեալ բազմութեամբ վարդապետաց և եպիսկոպոսաց՝ վարէ զկեանս կենցաղ վանական, զօրհանապազ ի պահս և յաղօթս զգեբեալ։ Իսկ որ ի խստագոյն եւ ճգնութիւնս նուիրել զանձինս ցանկանայցեն՝ փոխին յընդարձակ անապատն մօտաւոր, վակին ի խուցս խուցս կարի նեղինս, մինչև ոչ իսկ մարթ լինել կանգուն կալ յոտին, պաղեղինօք կերակրին և բուսեղինօք, համակ միայնակեցիկք և տան զանձինս յերգս սաղմոսաց և աղօթից, ի խոկմունս և յայլ ճգնութիւնս հոգեւորս։

Ոչ հեռի յԱրտաշատայ, որ Վաղարշապատ եւ երբեմն կոչէր՝ ամբառնայ լեառնն բարձր Արարատ կամ Մասիս, յորոյ յանմատոյց ի գագաթան պահեալ ասեն զտապանն Նոյի ամբողջութեամբ, բայց ի տախտակէ միոջէ, որ տուաւ սըրբոյն Յակովբայ Մծբնեցւոյն և մեծաւ զգուշութեամբ պահի յեկեղեցւոջ ուրեք։

Դուռն ուրեք վարին Հայք Թուականաւ մարդեղութեան Քրիստոսի, այլ ի 551 ամէ անտի ունին ընդհանրապէս զըսկիզբն Թուականութեան իւրեանց. (յայնմ ամի, որպէս կարծի, եղև գիւտ այբուբենիցն Հայոց ըստ ազդեցութեան Բարձրելոյն) վասն այսորիկ և Թուականս մեր 1676 համարի առ

նոսա 1125. իսկ զԹուականուԹիւն իւրեանց յայն սակս ի 551 ամէ սկսանին, զի յայնմ ամէ հետէ ջանիւք վարդապետին իւրեանց Մեսրովբայ ի կիր սկսան արկանել զգիրն իւրեանց բարբառ հայկական փոխանակ յունին ի պաշտամունս և յարարողուԹիւնս եկեղեցւոյ: Յոյնք, որ ատեցողք յոյժ են Հայոց՝ մոլորուԹիւնս բազումս գրեն նոցա, (զորս հանդոյն յիշատակաւ սխալանօք վերագրեն և մատենագրաց Լատինացւոց), և յանիրաւի ամենեւին անուանեն զնոսա Կինդարի Կելլրէ *), իբրև յայն՝ Թէ պաշտօն մատուցանիցեն ի տաճարս իւրեանց շան սևոյ, և պնդեն՝ Թէ առ սատակման շան միոյ սիրելւոյ պատրիարքի նոցա ուրումն պահեն աւուրս հինգ մեծաւ հանդիսիւ և այն մերձ ի տօնն Զատկի, և կոչեն զպահն՝ Առաջաւորաց, բառ անուան շանն սատակելոյ. և առ ի հաստատուԹիւն առասպելեացս այսոցիկ ակնարկեն Յոյնք կուրօրէն ի գիրս Ս. Նիկոնի հայազնի, որ զհայրենին ուրացեալ զհաւատ՝ ընկալաւ զդաւանուԹիւնն Յունաց և գրեաց զմոլորուԹեանցն, զորս դաւանէին Հայք յայնմ ժամանակի: Եկեաց նա ամս իբրև 86, հանգիսացեալ ի մատենագրուԹիւնս, յարուեստի հռետորուԹեան և ի հրաշագործուԹիւնս: Իսկ գլխաւոր մոլորուԹիւնք արդի Հայոց, յորս ամբաստանեալ են մանաւանդ նոցա՝ հետագայքդ են.

Յամառեալ պնդեն ընդ Դիոսկորեայ, զոր առ սուրբս ունին՝ Թէ մի բնուԹիւն ունիցի Քրիստոս, այլ ոչ կարեն բացատրել զորն. դաւանին սակայն զՔրիստոս Աստուած և մարդ:

Մերժեն ընդ Յոյնս զբղխումն Հոգւոյն Սրբոյ և յՈրդւոյ. այլ և զքաւարան և զերանելին տեսուԹիւն առաջի ահեղ դատաստանին:

Ընդունին Քրիստոսի կործանել զդժոխս համօրէն և փրկել զամենայն հոգիս որ ի նմա:

Համարին զհոգիս մեռելոյն յօդս բնակել մինչև ի յարուԹիւն մեռելոց. յոր սակս և աղօԹս առնեն հրապարակաւ

---

*) Թերևս Κυνὶ ἀτρῆ κελλάραι — «Դանդաղանք շան սևոյ», ի յունացեալ լատինական բառից ater, սեաւ և cellarius, գանդաղան: Թարգմ.

վասն սորա և վասն որոց անդէն յետ մկրտութեան մեռեալ մանկունքն իցեն։

Խոտեն զգերիշխանութիւն Հռովմէական Եկեղեցւոյ և յերգի ուրեք շարականաց զլուխ զնեն առաքելոց զՍ. Յակոբ զԵրէցն։ Ի մտոխ գրեն զԹուղթս քաւութեան։

Նզովեն զպապն Լևոն Մեծ և զժողովն Քաղկեդոնի, քանզի ի նմա դատապարտեցաւ հերձուած միաբնակաց. նզովս բազում արձակեն և ընդդէմ պարագլխոց ժողովոյն, վկայեն նաև Փլաբիանոսի, Պուղքերիայ կուսին և կայսերն Մարկիանու։

Զաւետարանական պատմութիւն ստատակ կոչեն, որում զմեզան եթող Քրիստոս՝ յանկանոնականս դասեն և սուտ ասեն լինել և փաստակար։ Այս պատմութիւն եղեալ կայ ի միում եւեթ հայերէն Աստուածաշնչին, տպագրեալ յԱմստերդամ. բայց յեկեղեցիս ընթերցեալ լինի ոչ երբէք։

Ի բազում այլ ևս պահեն ծէսս մինչև ցայսօր ժամանակի, մանաւանդ որ ինչ ի սրբութիւն հայի և յանսրբութիւն կերակրոց և ի դռհարկութիւն կենդանեաց ի դրունս եկեղեցւոյ։

Մերժեն ի խորհրդոց Եկեղեցւոյ զԽոստովանութիւն. օծանեն զխոստովանեալսն և արձակեն իսկ ի մեղաց առանց խոստովանութեան. հանդոյն սմին մերժեն և զՎերջին Օծումն, այլ փոխանակ սորին սրբապղծութեամբ օծանեն զմարմինս մեռեալ քահանայից։

Ոչ պատուեն զքանդակեալ արձանս սրբոց, այլ զնկարեալ պատկերս և եթ։

Արգելուն զերրորդ պսակ և զխտապայս, նոյնպէս ամուսնանալ երկուց եղբարց ընդ քորս երկուս. ոչ իմանան, զի՞նչ իցէ խնամութիւն, և շփոթեն զայն երբեմն ընդ ազգակցութեան։

Բազումք ի նոցանէ, մանաւանդ որ ընդ արևելս կոյս բնակեալն են՝ հաւատան, թէ առ ի փրկութիւն հոգւոյ բաւ է լինելն իսկ քրիստոնեայ։

Յարգեն զլոյսն, զոր յԵրուսաղեմի երևիլ համարին ի վերայ գերեզմանին Քրիստոսի յաւուր Աւագ Շաբաթու, և

ընդ ամենայն հաստատկիցս իւրեանց արեւելեայս պատուեն զայն իբրեւ զլոյս արդարեւ երկնային։ Մերժեն զնոր տոմար եւ վարին հնովն։

Դաւանելով ի Քրիստոս զմի միայն բնութիւն՝ զմի միայն հեղուկ արկանեն ի կիր ի պատարագին, այսինքն զգինին անապակ. եւ չէ իւիք հնար համոզելոյ առնել զնոսա, զի ջուր ընդ գինին խառնեսցեն։ Յայսմ մոլորութեան յամառագոյնս պնդեալ են, եւ ի նորին ջատագովութիւն նկրտեն, ապացուցութիւնս ինքս ածելով մտահնարս բազումս եւ վկայութիւնս սրբոց հարանց եղծեալս։

Զ՝Դեկտեմբերականն երգեն զօր ամենայն ընդ անգամ ի պաշտամունս իւրեանց, հանդերձ յաւելուածովն Պետրոսի Փուլոնի եւ աստուածաչարչարից՝ այսպէս. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ», եւ զայս ի դէմս Ս. Երրորդութեան, որպէս ի գրոց պաշտամանց անտի նոցա յայտնի է։

Զձուկն, զեւղ ձիթենւոյ եւ զգինի պղծել ասեն զպահս, վասն որոյ եւ յաւուրս պահոց իւրեանց ի բաց կան ի նոցանէ։

Զկանայս հանդիսիւ ձեռնադրեն ի սարկաւագութիւն եւ յամենայն սորին աստիճանս կարգի։

Ձեռնադրութիւն քահանայից այնչափ անկարգօրէն առ նոսա կատարի՝ մինչեւ բազմաց երկմտել ի կարեւորութիւն արարողութեանն. սակայն բարւոք ջատագովէ զձեռնադրութիւն նոցա Հ. Կղեմենտոս Գալանոս կրօնաւոր, յերկրորդի հատորի գրոց իւրոց «Concilatio Ecclesiae Armenae cum Romana», (այսինքն է Միաբանութիւն Եկեղեցւոյն Հայոց ընդ Հռովմէականին)։

Լայնարձակ կատարի առ նոսա շնորհավաճառութիւն, քանզի կաթողիկոսք անձանց միայն պահեն զիրաւունս ձեռնադրութեան եպիսկոպոսաց եւ օրհնութեան միւռոնի, զոր մեծաւ հանդիսիւ կատարեն կաթողիկոսքն Էջմիածնի եւ Սըսոյ յեկեղեցւոջ աւուրս քանի մի ընդարձակ արարողութեամբք, շուրջ պատեալք դասու դասու եպիսկոպոսաց եւ վարդապետաց, խառնելով յիւղն եւ ի բալասանն զինի բազում եւ ծաղկունս եւ բոյսս, մինչեւ զի տարակուսից զօլ՝ մի

փոխեցի բուն նիւթ մեւռոնին։ Յորժամ ի խառնմանէ նիւթոցն որպէս յեւանգն զայ խառնուածն՝ հրաշս կոչեն զայս և վերագրեն աջոյն Ս. Գրիգորի Լուսաւորչին և մեւռոյ սրբոյն իւրեանց, զոր Նեղսէս անուանեն։ Ռուսքն ապա զայն մեւռոն ի համօրէն եկեղեցիս, որ են ընդ իշխանութեամբ իւրեանց, յաճախակի առիպելով գնոց առնուլ զայն՝ որոց ոչ կամին, և այսու ոչ զուգնաքեայ ինչ ժողովեն գանձ։

Ըստ հերետիկոսութեան ունին զատերութիւն մաշտոցին մերոյ և զնորոգումն տօմարին, զհապօրդութիւնն ընդ մեոյ տեսակս, զկիրակաւութիւն զինւոյ և ձկան յաւուրս պահոց և այլ բազում ինչ, զորս խոտեն նոքա և կոչեն հերետիկոսութիւն Փռանկաց, իմա Լատինացւոց։

Ոչ հատու եղեալ էութեան խորհրդոց՝ երիցս կրկնեն ի մկրտելն զայս ձև բանի. «Մկրտեմ զծառայս Քրիստոսի (անուն) յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ», և երիցս ընկղմեն զերեխայն ի ջուր։

Յաւուր Ըստ Հինգշաբաթու ի ժամ Տէրունական Ընթրեաց կատարի առ նոսա Ոտնալուայ հանդիսափառ, առ ինչ ոչ միայն զջուրն արկանեն ի կիր, զպատրաստեալն օրհնութեամբք բազմօք և ընթերցմամբք թղթոց առաքելոց և Աւետարանի, և իւղ, զոր սրբեն հանգոյն նմին, և որ պաշտէն զխորհուրդըն, կաթողիկոսն կամ եպիսկոպոս՝ զգեցեալ հանդերձս հանդիսաւորս՝ դրոշմէ այսու նշան խաչի բութ մատամբն աջոյ ձեռին ի վերայ լուացեալ աջոյ ոտին և համբուրէ զայն։ Յայնպիսում պատուի ունին Հայք զարարողութիւնս զայս՝ մինչև ոմանց երբեմն զխորհուրդ եկեղեցւոյ ունել զայն, թէրևս և զարդիս իսկ ունիցին։ Յաւուր յայսմիկ կաթողիկոսն կամ եպիսկոպոսն շուրջ պատեալ ամբոխիւ մեծաւ ժողովըրդոց կատարէ զարարողութիւն լուացման ոտից և օծութեան իւղոյն առ ամենեսեան, յաւագագունիցն և ի խոնարհ։ Են առ Հայս արարողութիւնք և չար սովորութիւնք բազումք, զորոց ոչ է մարթ մեզ աստէն զանց առնել զյիշատակօք։

Են առ նոսա աբեղայք բազումք, զգեցեալ հանդերձս մոխրագոյն ընդ սրածայր վեղարի, և կոչեն կրօնաւորք կարգի սրբոյն Անտոնի, թէպէտ և չեն նոյա ոչինչ կանոնք կրօնաւո-

րութեան, բայց ի միոյ ուխտէն կուսակրօնութեան։ Ոչ ունին նոքա հրաման կատարելոյ զխորհուրդս Եկեղեցւոյ և ոչ իսկ զխոստովանութեան, բայց միայն զխորհուրդն հաղորդութեան. քանզի համարին Հայք՝ թէ քահանայից և եթ ամուսնացելոց իցէ օրէն և արժան խոստովան առնել զժողովուրդն։

Ի մասին ամուսնութեան վարին քահանայք ըստ կարգի Յունաց. կղերիկոսք նոցա չև ևս օրհնեալ ի կիսասարկաւագութիւն՝ ունին իրաւունս ամուսնանալոյ և կելոյ ընդ կնոջն յետ քահանայանալոյն իսկ. բայց եթէ մեռանիցի կինն յետ այսր ձեռնադրութեան՝ չունին հրաման անդրէն յամուսնութիւն մտանել։

Զեպիսկոպոսունս և զվարդապետս ընտրեն ի կրօնաւորաց, որք սրբութեամբ ունին զկուսակրօնութիւն։

Վարդապետք Հայոց պատուաւոր են յոյժ յազգի իւրեանց, մինչև զեպիսկոպոսունս ևս ընդ նոքիւք արկանել։ Ի նշան աստիճանի իւրեանց ունին ցուպ հովուական, հանգունաձևեալ յունական տաու գ։ Որ ծայրագոյնքն ի նոսա են՝ ունին իշխանութիւն ձեռնադրելոյ զմիմեանս, իսկ խոնարհագոյնքն (աբեղայք) զուրկ են յիշխանութենէ աստի։ Ձեռնադրութիւն նոցա կատարի մեծաւ հանդիսաւորութեամբ և պաշտամամբք մեծամեծօք և հարցափորձիիւք ի Ս. Գրոց. և յետ այսր ամենայնի տան զցուպն ի ձեռնադրելոյն, որ անդէն ընդարձակ քարոզութեամբ հանդէս առնէ պաշտաման վարդապետութեան իւրոյ, որ մանաւանդ ի քարոզելն յանգի և ի վարդապետել։ Բովանդակ ուսմունք նոցա յայս ինչ և եթ բովանդակին՝ զի գիտասցեն երգել յեկեղեցւոջ, (որ ոչ ի դիւրագոյնիցն է, այլ ունակութեամբ և եթ վարժութեան գայ ի ձեռս. քանզի չեն Հայոց ձայնանիշք, բայց նշանք ինչ անիմանալիք միայն, ցուցիչ եղանակաց, հանգոյն շեշտից), ընթեռնուլ ի բերան սաղմոս, զաստուածաշունչ մատեանս, զպատարագամատոյց գիրս և զմաշտոցս, և այլ բազում առասպելս աննշանս, յորոց վերայ զքարոզութիւնս իւրեանց հիմնեն և մոլորեցուցանեն զժողովուրդն։

Եկեղեցականք Հայոց ոչ ունին իւրեանց ստացուածս, այլ կեան տրիւք ժողովրդեանն. նաև ինքն կաթողիկոսն գրեաթէ ամի ամի առաքէ ի գաւառսն, որ ընդ իւրև՝ այս նուիրակս

ի ժողովել նուէրս և ի վաճառել զմիւռոնն։ Զորս ոչ կամօքն գայցենն ի նուիրատուութիւն կամ յանձինս զրաւիցեն զհատ կաթողիկոսին՝ առնլեն զնոսա ազատնալեօք նզովից, և բանի հանեն ի բաց ելս, զորս ոչ տան նոքա։

Են առ նոսա վարդապետք, որոց շրջել ընդ քաղաքս և ընդ գեօղս քարոզեն, և կոչեն Անարծաթք, քանզի զարծաթ ոչ առնեն, այլ ընդ որ անցանեն՝ կերակրոց և եթ ընդունին պաշարս։ Վերծանողք են նոքա բառ մեծի մասին և ի ժամ պաշտամանց Եկեղեցւոյ հնարին զարմանալի իմն արուեստիւ արտասանել արտաքոյ, յայն ինչ նկատելով, զի ըղ-նոսա առ սուրբս ունիցի ժողովուրդն։

Մի միայն կատարի յեկեղեցիս նոցա պատարագ, այն է ձայնաւորն, և երբեմն ամենեւին ոչ գոն պաշտամունք. չունին պատարագս ի թիւ, որպէս և առ հասարակ ամենայն եկեղեցիք քրիստոնէից որ յարեւելս։ Նա դուզնաքեայ ինչ ունին զպատարագ և զհաղորդութիւն Ս. Խորհրդոյն. երկիցս և երիցս և եթ յամի ընդունին զհաղորդութիւն, բազումք անգամ մի, իսկ այլք՝ սակաւագոյն եւս։ Զպաշտօն պատարագին մատուցման յանձն առնեն եպիսկոպոսունք և վարդապետք սորին զատուն քահանայից, որ ոչ քահանայագործեն առանց նուիրաց։

Յաւուրս քառասնորդականից և այլոց պահոց պատարագս մատուցանեն ի շաբաթս և ի կիւրակէս միայն. ի ճրագալոյցս Ծննդեան Տեառն և Զատկին, յետ հանդիսաւոր պատարագին, զոր յանագան ժամու մատուցանեն առհասարակ՝ կաթամբ միայն կերակրին. իսկ ի տաւն զատկան մոմովք լուցելովք, զորս յետ ընթրեաց ուրեմն շիջուցանեն։

Յաւուրս պահոց, որպէս ի վերոյ ասացաք՝ ի բաց կան ի գինւոյ և ի ձիթոյ և ի ձկանց. այսու միտ դնեն յորակն մանաւանդ կերակրոց քան ի քանակ։

Արարողութիւնք նոցա նման են յոյժ Յունացն։

Պատարագամատոյցն Հայոց կազմեալ թուի գոլ ի պատարագամատուցից Ս. Բարսղի և Յովհաննու Ոսկեբերանի։ Յայտնի է ապաքէն, զի Ս. Գրիգոր Լուսաւորիչ յեպիսկոպոսութեան ձեռնադրեցաւ յատեանին ի Կեսարիա ե-

պիսկոպոսէն Կեսարացւոց, և զի պատրիարքն Հայոց ի շարս կրտսերաց ընդ իշխանութեամբ է պատրիարքին Անտիոքայ։

Թէպէտ և ի Զատկին և ի Պաղատեան Հոգւոյն Սրբոյ և ի Համբարձման Քրիստոսի և յայլ տօնս, որ զայսցանէ կախեալ կան՝ վարին Հայք զոյգ ընդ Յունաց տոմարաւն հնով, այլ վասն այլոց տօնից սեփական ունին իւրեանց տոմար, ըստ որում զՕծնունդն և զՄկրտութիւն Քրիստոսի տօնեն ի վեցերորդի աւուր Յունվարի, (յութ և տասներորդի ըստ նոր տոմարի) և ի մասին այսմիկ անարգեն զհետեւողս այլոց դաւանութեանց։

Կարի երկարինք են եկեղեցական պաշտամունք Հայոց, որ յերգս օրհնութեան, ի սաղմոս, զորս ընթեռնուն քահանայք երկու առաջի աւագ սեղանոյն ի լուր հասարակաց, յայլ երգս (շարականաց), ի գիրս մարգարէից, յառաքելոց ի Թուղթս և յաւետարանի բովանդակին։ Յաւուրս հանդիսաւոր տօնից քահանայք իբր երկոտասան կամ աւելի ևս երգեն զայսոսիկ ի զանազան անկիւնս եկեղեցւոյն։ Յաւուր տօնի Զատկին, յարեագալի ժամուն կատարեն երիցս անգամ թափոր շուրջ զեկեղեցեաւն և ընթեռնուն աւետարանս չորս, դառնալով ի չորեսին կողմանս աշխարհի, զորս յաճախագոյն ևս օրհնեն ի տօնս յոչ երևելիս։ Զայս օրհնութիւն, զոր Անդաստանն կոչեն՝ կատարեն քահանայք զգեստաւորեալք հանդիսապէս, խաչ ի ձեռին, (առանց խաչի ոչ օրհնեն նոքա երբէք), դառնալով մի ըստ միոջէ յիւրս՝ զորս օրհնել ունին։

Անգամ մի ի տարին, յաւուր Ծննդեան Քրիստոսի՝ օրհնեն զջուր, զորմէ յայս աւելորդապաշտութիւն մոլորեալ են, թէ ոչ երբէք ապականիցի, վասն միւռոնին, որ հեղեալ է անդր։ Զայն ջուր պահեն ի տունս իւրեանց և ոչ յեկեղեցիս. իսկ որ յարևելս բնակեալն են՝ գնան առ հասարակ ի գետ մի և օրհնեն զայն համօրէն։

Զառաջին աղօթս իւրեանց յեկեղեցւոջ կատարեն ժամուք երկու յառաջ քան զարշալոյսն, յորում քահանայք միայն ունին մասն. զոր իբրև պաշտեն՝ գան ապա ընթերցմունք երկարինք յոյժ, վկայաբանութիւնք սրբոց, որ լի են բազմա-

թեւամբ ծաղկական տռտալելեաց և խօսից Փառաւորաց։ Յետ այսորիկ սկսանին զաղօթս, զորս ըստ մերումս Laudes կոչել էր մարթ և զոր նոքա Ղարց կոչեն. յայսմիկ աղօթս զայ ժողովուրդն ջերմեռանդն սրտիւ և յետ աւարտելոյն երթայ իւրաքանչիւր ի գործ իւր կամ ի վաճառականութիւն, զի ի ժամանակի սոսս մերում Ղայք ամենայն քահանայք են կամ վաճառականք: Իսկ ի պատարագն զան յաւուրս տօնից միայն և զայն ոչ բազում: Ի վերջ պատարագին օրհնէ քահանայն պատարագիչ հաց մեծ, տաւար և տափարակ, (զՆշխարն անուանեն), բեկանէ ի մասունս և բաժանէ ժողովրդեանն, որ զանն համբուրել գնայն և տան նմա նուէր կամաւոր: Ի Լեհաստանի ի կիր առնուն հաց տաւար, անխմոր, փոխանակ տափարակին: Ի պատարագս վարին անխմոր հացիւ, ոչ ըստ Յունաց, թէպէտ և յառաջագոյն վարէին խմորելով. սակայն նշխարք նոցա չեն հանգոյն Լատինացւոց՝ այլ տաւարք են և թանձունք և բոլորաձևք, ունելով զնշան Խաչին, զդրոշմեալ փայտեղէն կաղապարաւ և եփեալք ի վերայ երկաթեայ կաւկարայի:

Ի ժամ պատարագի զմի միայն արբազործեն զնշխար, և յանցանս համարին արբազործել աւելի: Սովին անխմոր նշխարաւ, զոր ի մասունս մանունս բեկանեն և թաթախեն յարեան՝ հաղորդեն զժողովուրդն, յորժամ հարկ իցէ, ընդ կրկին տեսակաւ: Բայց այս նշխար բաւէ միշտ ի հաղորդել, քանզի նուազունք են թուով որք հաղորդին: Իսկ ի տափի այլուր պահեն մասունս թաթախեալս յԱրեան և ցամաքեալս՝ վասն հիւանդաց: Յիրաւունս անզանեն Յոյնք զայս ձև հաղորդութեան, անձնահաճ զայն համարելով. քանզի հանեն քահանայքն ի սկզբն զմասունսն և պաղամբ թաթախեն ի Ս. Արեանն:

Նորընծայ քահանայք աւուրս քառասուն բնակեն ի գաւթի եկեղեցւոյ, ուրանօր ննջեն և ուտեն. ընթեռնուն մանաւանդ զաւետարան գիրս չորեցունց աւետարանչաց. իսկ յետ լրման քառասնօրեայցն կատարեն պատարագ մեծահանդէս և ապա հանգիստաւոր թափօրաւ համօրէն պաշտօնէից եկեղեցւոյ երթան ի տուն մեծատան առն միոջ, որ կամովին առնել իցէ

յանձն գհօր պարտէս և զամենայն ծախս զգեստաւորութեան նորընծային և զխնձոյիցն ըստ սովորութեան, յորում ոչ ունի մասն նորընծայն, այլ յետ ընթեռնլոյ զաւետարանն վասն Զաքէոսի*) և օրհնելոյ զտունն՝ դառնայ անդրէն յեկեղեցին հանդիսաւոր գնացիւք որպէս յառաջն և անդ մնայ, մինչև դարձցին յետս պաշտօնեայքն և այլք, որ ի խնձոյս անդ լեալ էին։ Եպիսկոպոսն վերատեսուչ տայ խրատս նորընծային պահել ի մայ զերկեամ մի կամ զերեամ։

Հայք պահեն յաւուրս չորեքշաբաթու, բայց ուտեն միս յաւուրս շաբաթուց. իսկ ի քառասնորդկայսն, որ ընդ Զատկին և ընդ Համբարձման Քրիստոսի՝ ուտիք է նոցա յաւուրս չորեքշաբաթուց իսկ և ուրբաթուց, և բազում այն է, զի և զկաթնեղէնս իսկ ոչ առնուն ի կեր։

Սնոտիապաշտք են յոյժ Հայք և հաւատան երազոց և գուշակութեանց այլոց բազմաց. և առ այս կրեն ի վերայ իւրեանց շերտս թղթոց երկայնս և նեղէնս, զոր Հմայիլ կոչեն, (այս ինքն է Գիր պահպանութեան), յորոյ վերայ գրեն հատուածս յԱւետարանէ և այլ աղօթս, և նկարեն պատկերս սրբոց և մերթ ընդ մերթ նշանագիրս սնոտիս։

Ի ժամ մկրտութեան քահանայն և որ առ նովաւ սարկաւագ՝ առնուն ընդհանրապէս նարօտս ճերմակ և կարմիր, և ոլորեն անտի հիւսկէն, երգելով զաղմոսն, «Տէր, ոչ բարձրացաւ սիրտ իմ...», կախեն զհիւսկէնն զպարանոցէ մանկանն հանդերձ խաչիւք մանուածք մոմեղէնօք. կոչեն ապա պատաւ մի, որ առաջի կնքահօրն և կնքամօր հանէ զայն ի բաց ծիսիւք մեծամեծօք, և լուանայ ջինջ զամենայն մասունս մարմնոյ մանկանն, որ միւռոնաւ իցեն օծեալ, իմա զճակատն, ըղչըթունսն, զձեռս, զոտս և զուսսն։ Չունին Հայք իւղ վասն ապաշխարողաց, որպէս գտանեմք առ միւս քրիստոնեայս։ Իսկ հիւսկէնն խորհրդաւոր կոչի առ նոսա Նարօտ։

Չեն առ նոսա տպարանք, վասն որոյ վարին ձեռագրօք, առ հասարակ կազմելովք ըստ հաճոյից կամաց. վասն այսորիկ

*) Աւետարան ըստ Ղուկասու գլ. ԺԹ։

պատարագամատոյցք առ նոսա են գրեա թէ ըստ թուղթ քաղանայեցն: Բայց ամօք ինչ յառաջ եպիսկոպոս ումն Հայ Ոսկան անուն տպագրեաց ի Հայս զԱստուածաշունչ մատեանն և այլ ես գիրս ինչ. և ուղղեալ զվերոյականն՝ չոգաւ ի Մարսիլեայ, առ ի յաւարտ գործոյն ձեռնարկութեան ածելոյ, և անդէն մեռաւ ամօք երկու յառաջ: Յայնժամ Ս. Ժողովն Տարածման Հաւատոյ յանձն առնր զհայ տպարանն քաղաքայի ումեմն հայոյ կաթողիկի, որոյ Յովհաննէս է անուն, այր փոքր յառաքինութեան, որ յամաց ինչ հետէ բնակեալ է ի Հռոմ:

Զպատարագս և զպաշտամունս միով և նթ եղանակաւ կատարեն ի Հայս զամ ողջոյն, յաւելլով միայն աղօթս ինչ և յիշատակս սրբոյն, զորոյ զտօնախմբութիւն կատարեն. իսկ տօնքն չեն բազմաթիւք առ նոսա, քանզի ընդ լծով անհաւատից զոլով Հայոց՝ ոչ կարեն տօնել յաճախակի, այլ փոխադրեն զտօնս սրբոց յաւուրս կիւրակէից. բայց զտօնս տէրունականս ոչ երբէք փոխադրեն յայլ աւուրս, որպէս Յոյնք առնեն. այլ եթէ Աւետումն Աստուածածնի ընդ Զատկին դիպեսցի՝ զերկոսին ի նմին աւուր տօնեն: Զփառք ի բարձունս ոչ ի ժամ պատարագին, այլ յԱռաւօտեան Ժամու երգեն ժողովուրդն ամենայն հանդերձ ընդարձակ ինչ յաւելուածով: Երկիցս զՆշխարհայն առնեն ի հողեհանգստեան մեռելոց. իսկ զյիշատակ մեռելոց կատարեն հնգիցս ի տարին մեծաւ հանդիսիւ, այս ինքն է յաւուր Նաւագ Շաբաթու, ի նաւակատիս Գալստեան Հոգւոյն Սրբոյ, յԱյլակերպութեան Տեառն, ի Վերափոխման Ս. Աստուածածնի և ի տօնի Խաչվերացին, զորս Տաղաւարս կոչեն. և յայնժամ բազումք ի ժողովրդենէն մոմովք լուցելովք լուսաւորեն զտապանս հանգստեան հարց իւրեանց և ազգականաց, և սփռեն ծաղկունս ի նոսա:

Ոչ ամբառնան զՍ. Ընծայսն անդէն ընդ սրբագործելն զնոսա, այլ յետ Հայր մեր-ին. զբան սրբագործութեանն ի լուր առնեն, առ որ երգեն դպիրքն, «Ամէն»: Ի ժամ պատարագին և յայլ ես աղօթս յիշատակեն յաճախակի զանուն կաթուղիկոսին իւրեանց ի լուր:

Համօրէն եկեղեցիք նոցա յերկուս մասունս են անջա-

տեալ. ի ստորնագոյնին ժողովին կանայք, իսկ ի վերնագոյնին միւս ժողովուրդն հանդերձ դասու եկեղեցականաց, մերձ յաւագ սեղանն, որ շինեալ է այնպիսի յեղանակաւ՝ զի քահանայն պատարագիչ կարէ ի ժամ ընծայաբերութեանն, ըստ սովորութեան Յունաց շրջել զնովաւ ընդ դպրին, հանդերձ Ս. Ընծայիւքն. իսկ սարկաւագն խնկարկէ նմա և սպասաւորք եկեղեցւոյ հարկանեն զծնծղայս, որպէս կոչնակս, որոց ախորժելի հնչեն ձայնք,

Ըստ բերման փոփոխական բաղդին և յաղագս պատերազմաց բազմաց նեղեալ Հայոց յաշխարհէն իւրեանց՝ ցրըուեցան ի զանազան աշխարհս, և մանաւանդ անցանելով ընդ ծովն Սեաւ ի Թէոդոսիա, որ Կաֆայ զարդիս կոչի՝ բազմութեամբ մեծաւ բնակեցին ի Տաւրեանն Խերսոնի, զոր ունին Թաթարք Պերեկոպի, և բնակեն անդ մինչև ցայսօր: Եկեղեցիս բազումս ունին յանուանի քաղաքս, որպէս ի Բալակլաւայ, ի Բախչէսարայ, որ քաղաքամայր է խանին Սկիւթացւոց, ի Խարասու, ի Կոզլով, յՍրակս, ի Խրիմ և ի յիշատակեալն ի վերոյ ի Թէոդոսիայ. յորում քսան եկեղեցիք են նոցա և քահանայք քսաներեք. են և եկեղեցիք և վանք նոցա ի քաղաքս գաւառաց: Սոքա ամենեքեան են ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին, որ ի Թէոդոսիայ նստի. իսկ եկեղեցիքն Հայոց Ակկերմանու, Իսմայիլի և Բենդերի, որ ընդ լծով Տաճկաց են՝ նոյնպէս և Կաֆա ընդ տեսչութեամբ են եպիսկոպոսին Վալախիոյ, զոր հոգևոր գլուխ իւրեանց ունին բազում Հայք, որ բնակեալ են յԵասսի, մայրաքաղաքին իշխանին Մոլդաւացւոց, ի Սերաթ, ի Գալաչ, ի Սոչաւ, յՌոմանի, ի Բոտշան և ի Խոտին, որ կործանեալ է զարդիս ի ձեռն Տաճկաց, յորում էին ոչ եկեղեցիք միայն, այլ և վանորայք:

Ի թուականութեան 1062 իշխանն Ռուսիոյ Թէոդոսիոս որդի Դեմետրի կոչեաց ի մերձաւորն Խերսոնեայ զՀայս առ ի խաղաղեցուցանել զհպատակս իւր հեռաւորս. յորոյ ի կոչ նորա եկին Հայք բազումք, և իբրև յաղթահարեցան ապըստամբքն օգնութեամբ Հայոց՝ յորդորեալ զնոսա իշխանին և տալով պէսպէս արտօնութեանց (որ ի վերջնում ժամանակի հաստատեցան յարքայից Լեհացւոց՝) կացին և բնա-

կեցին Հայք ի քաղաքս Ռուսաց՝ մանաւանդ ի Կիև, ի Վլադիմիր, ի Լուցկ, ի Կամենից, ի Սնեատին, ի Գոլէչ և յայլս ևս, ընդ որս արժան է յիշատակել զՅազլովից, զԶամոստէ, զՊոդհայցի, զԲրատի, զԺվանից, զԳորոդենկայ և զՍտանիսլաւով, յորս կոչեցին զՀայս իշխանք Լեհաց բազմօք ամօք յետոյ քան իւրեանց փախստականութեան յաշխարհացն Մոլդաւիոյ և Վալախիոյ: Վասն այսորիկ աւագանին Հայոց, որ բնակեալ են ի քաղաքս յիշատակեալս ի վերոյ՝ մինչև ցայսօր ժամանակի գիտեն գլխովին զլեզուն Սկիւթացւոց. իսկ որ ի յետինսդ բնակեալ են ի քաղաքս՝ աշխարհաբարու միայն վարին խօսիւ, ընդ որ և ընդ գրաբառն խառն զոդ այնչափ է, որչափ ընդ լեզու Իտալացւոց և ընդ Լատինացւոց: Հայք արևելեայք վարին աշխարհիկին բարբառով, որ խառն է ընդ բառից Պարսից, Տաճկաց և Լեհաց, ըստ այնմ թէ յորում վայրի բնակիցեն: Իսկ երկրորդն, այն է լեզուն գրոց անհետացեալ է գրեթէ, և ի պատարագամատոյց գիրս և եթ և յԱստուածաշունչ մատեանս դեռ ևս գտանի:

Յամի Տեառն 1664, յորժամ զգործ Միութեան Հայոց ընդ Հռովմէական Եկեղեցւոյն մեծաւ ևս փութով վարել կալան (Լատինացիք)՝ ի քաղաքսն Զամոստէ, ի Սնեատին և և ի Լուցկ էին արդէն տաճարք Հայոց և ապա կառուցան ի Ստանիսլաւով և ի Պոդհայցի, բայց որ ի Լուցկն էր՝ թափուր էր ի ժողովրդոց, իսկ ժողովուրդքն, որ ի Գորոդենկայ և ի Ժվանից՝ զուրկ էին յեկեղեցեաց: Երեք էին եկեղեցիք յԻլվով, աթոռանիստն (մայր եկեղեցին) ի քաղաքի անդ, և միւսքն երկու արտաքոյ քաղաքին. երկու եկեղեցիք յՅազլովից, չորք ի Կամենից:

Ի Լեհս կրկին եպիսկոպոսք էին Հայոց, արքեպիսկոպոսն կամ մետրոպոլիտն, որ յԻլվով նստի և փոխանորդն նորա, եպիսկոպոս պատուաւոր Վալախիոյ: Բաց երեք են քահանայք, ամուսնաւորք մասամբ և մասամբ կուսակրօնք, և դպիրք ոմանք, որ զգեցեալ են աշխարհական տարազս ըստ սովորութեան արևելից: Թիւ բովանդակ Հայոց համարի աստ երեք հազար, իսկ յետ աւերածին, որ յայսմ պատերազմի՝ զկնի կործանման Կամենիցի, Պոդհայեցի և աւարման Յազլովից, Սնեատին, Ժվանից և Գորոդենկայ քաղա-

քաց՝ ոչ սակաւ նուազեցաւ թիւ նոցա. թէպէտ և այլուստ յաւելաւ թիւ եպիսկոպոսացն գալստեամբ յԻտալիոյ եպիսկոպոսի միոյ պաշտամամբ յաջորդութեան:

Յամի Տեառն 1626, յետ մահուանն Մեսրովպայ արքեպիսկոպոսին Հայոց Իլվով քաղաքի, երբև անկաւ երկպառակութիւն մեծ ի Հայս վասն ընտրութեան նորոյ հոգևոր հովուի (քանզի ժողովուրդք և եկեղեցականք Հայոց Իլվովայ համարին ունել իրաւունս անկախ ընտրութեանց)՝ եկն ժամանեաց յԻլվով ինքն կաթողիկոսն Էջմիածնի, Մելքիսեդեկ, և կաշառեալ բազում ոսկւով յաւուր միում ընդ տասուօտս յեկեղեցւոջն Հայոց որ հուպ ի քաղաքն է և կոչի Վանական՝ ձեռնադրեաց արքեպիսկոպոս զորդի վաճառականի ուրումն Իլվովայ, զՆիկողայոս (Նիկոլ) Թորոսովիչ. որ ի ժամանակի յայնմիկ կուսակրօն քահանայ էր ամաց 22-ից, և նախ զառաջինն խորամանկութեամբ և հուսկ յետոյ նզովիւք բազմօք հարկեաց զժողովուրդն մտանել ընդ լծով հովուին, որ ոչ ումեք էր սիրելի և ոչ արժանաւոր այնմ աստիճանի և այնպիսեաց պարտուց, վասն հասակի ամացն և վասն բուսոյ բարուց իւրոց: Յետ այսորիկ երբև դարձ անդրէն առնէր կաթողիկոսն յարևելս՝ մեռաւ ի ճանապարհի անդ ի Կամենից:

Նիկոլ, որ համբաւեալն էր յանզուգն գոռոզութեամբ և բարկացոտ բարուք՝ ի սուղ ժամանակի հակառակորդս իւր յարոյց զպատուաւորս Հայոց, որոց պահեալ էր մինչև ցայն վայր զինքնավարութիւն իւրեանց և անփորձք էին իշխանութեան հոգևոր պաշտօնէից: Հուսկ ուրեմն յետ բազում կշտամբանաց յանդիմանութեան երկոցունց կողմանցն և համաձայնութեանց՝ վարդապետ մի հասարակ յարևելից Գրիգորիոս Կեսարացի նզովեաց ի Կամենից քաղաքի զարքեպիսկոպոսն, երբև առ այն՝ թէ խախտեալ իցէ նորա զօրէնս հայրենի եկեղեցւոյ լուծանելով ի պահոց զնորընծայ մին ըզքահանայ: Բայց· ապա ի փախուստ դառնայր վարդապետն, քանզի նկրտէր Նիկոլ լռեալ զնա ընծայեցուցանել Տաճկաց յաչս Լեհացւոց, աջակցելոց յայնմ ժամանակի: Իսկ երբև մերժեաց հօտն լսել Նիկոլի և առ ապա՝ խորհուրդ եառուն

նմա ոմանք երթալ յարևելս և խնդրել ի Կեսարացւոյն արձակումն ի Նզովից։ Ոմն ի բարեկամաց նորա ետ փոխ նմա արծաթ ի ճանապարհ։ Հաճեցեալ Նիկոլի ընդ այս խորհուրդ՝ չոգաւ ի Կոստանդնուպօլիս. և իբրև ոչ եգիտ անդ զԳրիգորիոս, որպէս ակն ունէր՝ յուղի անկաւ անտի ի Կեսարիա։ Զկէս ճանապարհայն պատահեաց նմա վարդապետ ոմն հայազգի, Երիստակէս անուն, որ իրաց իրիք աղագաւ չէր հաճ ընդ Կեսարացւոյն և խորհուրդ ետ Նիկոլի մի գնալ ի Կեսարիայ, այլ կեղծեօք հիւանդութեան՝ զլով փախճան առնել գործոյն։ Լուաւ խորհրդոյն արքեպիսկոպոսն, գրեաց թուղթ առ Գրիգորիոս, խոստովան եղև զմեղս իւր և արձակեցաւ ի Նզովիցն։ Բայց ապա իբրև յայտնի եղեն պատրանք և խաբէութիւն Երիստակեայ՝ հանաւ ի Նիկոլէ արձակումն և վերստին Նըզովք եղան ի վերայ նորա։

Դարձ արարեալ Նիկոլի յուղւոյ անտի՝ ազանեցի վարուքըն այնչափ զզուեաց զժողովուրդն, զի և կաթողիկոսին Մովսիսի, որ զՄէլքիսեդեկ յաջորդեալ էր յաթոռ Հայրապետութեան՝ հատաւ յոյս խաղաղութեան, վասն հանապազոր խռովութեանցն. և առաքեաց յԻլվով զնուիրակն իւր զԽաչատուր յամի Տեառն 1630, ընկենուլ զՆիկոլ ի պաշտամանէ նորա։ Զամենայն ջանս եդ յայնժամ Նիկոլ ի գործ՝ թերևս յինքն զնուիրակն շահեսցի, բայց իբրև ետես, թէ ահա ի զուր եղանին աքնութիւնք նորա բովանդակ, մանաւանդ զի հակառակորդք նորա հանապազ զրգէին զնուիրակն՝ ոչ հանդուրժել նախատանացն, որ յարևելից ի կաթողիկոսէն ազդեցան՝ եդ ի մտի զրժել ուխտի հպատակութեան իւրոյ առ կաթողիկոսն. վասն որոյ չոգաւ յեկեղեցի հայրն Կարմելեանց Բոկոսնեց, խոստովանեցաւ հրապարակաւ զդաւանութիւն հաւատոյ և արբանեկեցաւ կաթոլիկ Եկեղեցւոյն։

Զանգիտեաց Խաչատուր առ ի յանդուգն գործոյ անտի Նիկոլի, և վերահասու լեալ, թէ ոչ ընդ միում առն էր յայնմհետէ գալ ի պայքար, այլ ընդ ամենայն եկեղեցականութեան Լեհացւոց, ընդ որս ի կարգ աշխարհի մնալ և որ կուսակրօնքն իցեն, — քանզի եկեղեցականքն Լեհացւոց առ ջերմեռանդն հաւատոյ իւրեանց ընկալան զՆիկոլ ընդ

հովանի պաշտպանութեան իւրեանց — խոյս ետ այրն ի շփոթից և չոգաւ ի Հայս, առ Համոյս կաթողիկոսին գանյաջող ելից հրեշտակութեանն իւրոյ։

Իսկ եկեղեցականացն Հայոց ամենեցուն զահի հարեալ վասն աղէտալի լրոյն, և զոր ինչ գործել արժանն իցէ ադիտացեալ` կափուցանեն զդրունս եկեղեցեաց ամուր փականօք և ուխտեն երդմամբ` ի չարչարանս ամենայն գալ մանաւանդ քան ի ծառայութիւն ուրացելոյն Նիկոլի. իսկ սա շուրջ պատեալ ամբոխիւ մեծաւ կաթոլիկաց ջաղխէ զփականսն մայր եկեղեցւոյն, և նստի անդրէն յաթոռ իւր. իսկ յետ երգելոյն հանդիսապէս զTe Deumն` մաղթանս փառաբանութեան կատարեն վասն բարեյաջող սկզբանն Միութեան եկեղեցեաց։

Իբրև տիրանայր արքեպիսկոպոսն սովին օրինակաւ և այլոց եկեղեցեացն` ի բաց կացին ի նմանէ ժողովուրդն առ հասարակ, հաստատեալք յուխտի իւրեանց, բաց ի միոյ կամ յերկուց անտի քահանայից և ոմանց ազգակցաց Նիկոլի սակաւուց. «Թող, ասէին, միաբանեսցի Նիկոլ ինքնին և անձին իւրում լիցի արքեպիսկոպոս». և իբրև ոչինչ ազդեցին Նիկոլի ոչ աղաչանք և ոչ սպառնալիք, զի դարձուսցէ նոցա զէթ զմին յեկեղեցեացն` աղօթարան արարին իւրեանց տուն մի մասնաւոր և զպաշտամունս կատարէին, թողեալ, զի տիրեսցէ Նիկոլ թափուր եկեղեցեացն։ Իսկ իբրև անդ ևս նեղել դնաակայան և թելադիր լինել Նիկոլի, զի հալածեսցէ զքահանայս հաւատարիմս ուխտի եկեղեցւոյն` մինչ նոքա դատախազք յատեան արքունի, ամբաստան եղեն զՆիկոլէ և պահանջեցին թախանձագին, զի ըստ իրաւանց արտունութեանց, տուելոց նոցա յիշխանացն Ռուսաց և հաստատելոց անդրէն յարքայից Լեհացւոց ամենեցուն` թողեալ լիցի նոցա ազատութիւնն դաւանութեան հաւատոց, դարձուսցին նոցա զէթ եկեղեցի մի, և զի մի հակառակ կամաց իւրեանց հարկեսցին ի Միութիւն ընդ Հռովմէական Եկեղեցւոյն։ Ոչ անտեղի ինչ յուսս դատաւորաց թուեցաւ խնդիր Հայոց։ Մինչ դուն գործէին երկաքանչիւր կողմանքն կաշառօք սատանալ զվճիռ բարեյաջող` յերկարէր գործն յայժ յայժ և բազմա-

նոյին պատարագըն առ գասաւորս, քանզի անխոնջն և աներկիւղն Նիկող հրամանաց իսկ սանանէր թագաւորաց, զոգցես հանդերձեալ ի պատերազմ վասն հաւատոց:

Յերկարելն անդ խռովութեանցն այսոցիկ ընդ արքեպիսկոպոսն և ընդ ժողովուրդն, ձգելոց իբրև ամս քսան՝ ապառեցան հասան անթիւ զանձք եկեղեցեաց Հայոց Նկովայ: Երկիցս չոգաւ Նիկող ի Հռոմ, ուր ընկալաւ զնա պապն Ուրբանոս Ը. պատուով մեծաւ և արդարացոյց յամբաստանութենէն, թէ հերետիկոս իցէ, և ընծայեաց նմա նժխորոն: Թէպէտ և եպիսկոպոսք Հայոց զգենուն առ հասարակ վերարկուս, բայց Նիկող անդէն յետ դաւանելոյն զհաւատս կաթոլիկ Եկեղեցւոյն ի կիր արկանել սկսաւ զգեստ ծիրանի, որպէս կարդինալքն, (մերթ եւս զգեստ սպիտակ յաւուրս հանդիսաւոր տօնից), և կնգուղ պապից, զորս զգենու մինչև ցայսօր, արտաքոյ բնակելով Հռոմայ. և ոչ ոք է որ դիմակալ նմա լիցի, այլ հաճ են ընդ նա ամենեքեան վասն կարի սիրելութեան նորա: Իսկ Նիկող պատմէ բազում անարգութեանց յայնմ ժամանակի յեկեղեցականացն Հայոց լինքն հասանել, զի գնէին նմա որոգայթս և ծանակէին զնա ծանակս անձահս. եդուն նմա զամ մի նշխար գիջեալ, յայլ նուագս ահաբեկէին զնա երեւութիւք գիշերական խօլից, արուեստիւք մոգականօք կորզէին զծառայս նորա ի տանէ ապաստ և փոխէին յայլ անկիւն պալատանն. իսկ որ համախոհքն էին նորա՝ այլազգ նիւթէին նմա կատակս, որպէս զի զամ մի լոգանալ նմա ի ջուր, յորում եդեալ էին նշխարք երեք սրբագործեալք: Զհաւատարմութենէ իրացս այսոցիկ պատասխանատու լիցին՝ որ պատմեցինն: Բայց վկայեն՝ որ ծերունիքն են յՆկովայ՝ թէ արիաբար դիմադրուէր արքեպիսկոպոսն փորձութեանց հերետիկոսացն, վստահելոց ի շնորհըս արքային՝ և գործակալաց արքունի, և քաջարար պաշտպանէր եկեղեցեաց իւրոց. կազմէր երբեմն, ասեն, զունդ զօրաց և պատսպարեալ ի նոսա՝ պատրաստական զանձն ցուցանէր զօրութեամբ վանել զզօրութիւն: Յաւուր միում պաշարեցին գործակալքն յանկարծակի զեկեղեցին, յորում նոյն էր ընդ արանց ոմանց սակաւուց, կալան զգլուխն, զի ու-

նիցին զնա և տայցեն ի ձեռս հերետիկոսացն Հայոց ի կատարումն հրամանի արքային: Իսկ արքեպիսկոպոսին ընթացեալ ի խորանն, առ ի սկհոյն զՍ. Խորհուրդն և այնու զինու, իբրև վահանաւ վանեաց զնոսա յեկեղեցւոյն և հալածականս արար: Արժանի է յիշատակութեան և այն ինչ, զի ցասուցեալ արքային Վլադիսլաւայ Դ-ի ընդ Նիկոլ վասն անարգանացն առ ի նմանէ ի գործակալս իւր հասելոց և վասն բազմապատիկ ընդդիմանաց նորա հրամանացն արքունի՝ կոչեաց զնա ի Վարշաւայ և յանդիմանեաց զնա խստիւ յարքունի ատենին. և յորժամ եղբայր թագաւորին Վլադիսլաւայ, արքայազն Յովհան Կազիմիր (որ թագաւոր եղև ապա Լեհացւոց), յաւել բանս սաստիկս՝ պատասխանի ետ յայնժամ Նիկոլ առանց զգուշելոյ. «Արասցէ ընդ իս արքայ, զինչ և կամք իցեն նմա. ես ոչ ունկն լուայց հակառակ Աստուծոյ. հրամայեսցէ սպանանել զիս և լիցի Բոլեսլաւ, այլ ես եղէց Ստանիսլաւ»: Հիացեալ արքային՝ արձակեաց զնա և դադարեաց յայնմհետէ պաշտպանել հակառակորդաց նորա:

Իբրև անտագան ուրեմն ծանեան Հայք, թէ յաղթահարին ի դատի խորհրդոց ընդ Նիկոլի՝ որում որպէս տեղայնի Հռովմէական Եկեղեցւոյն՝ ոչ պակասէին արդեօք օճան և պաշտպանութիւն ի կաթողիկ պետութեանն՝ (քանզի այնպէս հաճեցաւ Աստուած, զի զոգէսն և զոհանն՝ ի Միութիւն Եկեղեցւոյ ածցէ զխուրագոյն և ամօք եղանակաւ)՝ խորհեցան այլազգ վարել, կաթոլիկս ընծայեցուցանել զանձինս և ուղղափառս, խակ և խակ այնպիսիս, որպէս Նիկոլն էր: Գըտանեն ի հին մաշտոցի ուրեք Հայոց զդաւանութիւն հաւատոյ, զոր եպիսկոպոսունք նոցա ի ժամանակի միութեան ընդ Եկեղեցւոյն Հռովմայ ընթեռնուին առաջի կաթողիկոսին նախ քան զձեռնադրիլն յաստիճան եպիսկոպոսութեան, և առաջարկեն զայն եկեղեցականացն Լատինացւոց, որոց քննեալ զայն և հաճեցեալ ընդ այն—քանզի գրեալ էր յայնմ թէ հպատակին Հայք Ս. Պետրոսի աթոռոյն, Լուսաւորչին և յաջորդաց նոցա, այլ և ընդունին զեօթանեսին տիեզերական ժողովս առաջինս—առաջի ատենի արքային ի Վարշաւայ: Ընծացաւ յոյժ ընդ այն թագաւորն. բայց քանզի

գիտէր, թէ առ յուսահատութեան կամին Հայք դառնալ ի կաթողիկաց հաւատս՝ շնորհս արքունուստ խոստանայ նոցա՝ եթէ համոզեսցեն զկաթողիկոսն իւրեանց վաւերացուցանել զայն դաւանութիւն հաւատոյ։ Նաւեն անդէն Հայք ի Կ. Պոլիս, ուր եկեալ էր ըստ յաջողութեան բաղդի կաթողիկոսն Էջմիածնի Փիլիպպոս, յաջորդն Մովսէսի, մտանեն ընդ նմա ի բանակցութիւնս յաղագս ստորագրութեան թղթոյն դաւանութեան։ Զկնի բազում խորհրդածութեանց հաճի ուրեմն կաթողիկոսն յայն բան, երկուցեալ՝ գուցէ դարձցի ժողովուրդն բոլորովին ի ծոց Հռոմէական Եկեղեցւոյ։ Հրամայէ ապա փարգապետի ումեմն Յովհաննու բերել զայն թուղթ կարեւոր, պատուիրելով նմա մի առաջի անել զայն, բայց միայն ի ծայրագոյն հարկի։

Իբրեւ ծանեաւ արքեպիսկոպոսն, թէ ահա մերձ է ի կործանումն, եթէ միայն կշռեսցէ ժողովուրդն զայն հարուած յիւր վերայ՝ և իբրեւ ծախեաց զամենայն ինչս իւր՝ սկսաւ ապա հնարս խնդրել հաշտելոյ ընդ ժողովրդեանն, չոգաւ և ինքն փութապէս առ կաթողիկոսն, աղաչէր և հայցէր հեզաբար, ների նմա զամենայն զյանցանս իւր, և տայր գրով երդումն ուխտի, թէ յայնմհետէ հպատակ լիցի Աթոռոյն Էջմիածնի, յանձն առնոյր և այլ պայմանս անպատեհս, բաւ համարելով եթէ ունիցի արտաքուստ զծէսն կաթողիկաց. հուսկ ուրեմն ընկալաւ ի կաթողիկոսէն թուղթս առ եկեղեցականս և առ ժողովուրդն, յորս յորդորէին նոքա հնազանդ լինել արքեպիսկոպոսին, զի մի ի գլուխս իւրեանց նզովս մեծամեծս ածցեն։ Իսկ ստորագրութիւն թղթոյն դաւանութեան յանվաւերս համարեալ՝ հրամայեալ լինէր ջնջել զայն գիր։

Իբրեւ դարձաւ Նիկոլ յԼւով խնդութեամբ մեծաւ ընկալեալ եղեւ յամենեցունց առ հասարակ վասն թղթոց կաթողիկոսին. հրապարակէ առ հետեւողս Լատին Եկեղեցւոյն, աղէտս լինելին Հայոց՝ զմիութիւն իւր ընդ ժողովրդեանն, փոխանակ միութեանն որ ընդ Եկեղեցւոյն Կաթոլիկաց, և սահմանէ տօն գոհացողական մաղթանաց առ Աստուած վասն այսպիսի մեծի շնորհաց։ Իսկ քահանայքն, որ ի ժամ երկպառակու-

թեանն ընդ Նիկոլ և ընդ ժողովուրդն դարձեալ էին ի կաթոլիկութիւն նմա ի շնորհուկս՝ դառնան անդրէն վերստին ի նախկին մոլորութիւնս և յարարողութիւնս հերետիկոսականս, ի խաբ զլեհացիս արկանելով ի ձեռն յաճախակի պատարագացն նոցա կազմելոց և պահպանութեան ծխիցն Լատինացւոց: Այս միութիւն պատիր եղև յամին 1652, որոյ վասն արտօնութիւնս մեծամեծս գտին Հայք յարքայէն Յովհաննու Կազիմիրայ:

Բայց թէպէտ և Հայք այսպէս վախճան արարին խռովութեանն ընդ արքեպիսկոպոսին՝ այլ ոչ գտանէին հանգիստ առ կենցաղավարութեան և բարուց հովուին իւրեանց, որ առիթք էին հանապազօր տրտնջմանց, և ոչ գիտէին որպէս արժանն իցէ վարիլ. ամս մետասան բովանդակ յակամայից իմն ժուժէին, քանզի ունէր Նիկոլ հոյս մի յազնուական տոհմէ, զոր յափշտակեալ էր ի վանաց՝ իբրև գլխին իւր օրինաւոր, և բազումք ի Լեհացւոց համարէին մարթ լինել ամուսնանալոյ եպիսկոպոսացն Հայոց: Էին Նիկոլի ի կնոջէն որդիք յորբունս հասակի:

Իսկ յորժամ յամի Տեառն 1662 եկն յԼվով նուիրակ պապին Պիղնատելլի, հանդերձ արքունի պայտատականօք վասն հասարակաց գործոց՝ ամբաստան եղեն առ նա Հայք զարքեպիսկոպոսէն իւրեանց, կարի խնդրելով զի բարձցէ հնարիւք իւիք զչարն ի միջոյ: Արդ ի մօք հետամուտ եղև գործոյն նուիրակն, յորդորեաց զՆիկոլ ինքնին և ի ձեռս այլոց, այլ իբրև ծանեաւ, թէ կամակորեալ նորա ի չարիս՝ արհամարհէ զամենեսեան և ոչ կամի վարել կենցաղ սուրբ՝ զօրութեամբ իշխանութեան իւրոյ և աջակցութեամբ թագուհւոյն Մարիամու Լուդովիկէի հրամայեաց բռնի կորզել ի նմանէ զտարփածու նորա հէգ, զոր ամուսնացուցանէ ընդ զինուորականի ումեմն, տալով օժիտ փարթամ, այնու զի ածցէ զնա այլն ի հեռաստան վայրս աշխարհին, և մի տացէ նմա թոյլ դարձ յԼվով անդր: Իսկ զինուորականին ծախեալ զօժիտ կնոջն՝ սանդանէ ուխտին և ընդ փոյթ արձակէ զնա յԼվով և յանձն առնէ զկինն ախտացեալ հիւանդութեամբ ի խնամս առաջնոյ տարփաւորի նորա: Յետ բազում չարչարա-

նաց մեռաւ ուրեմն կինն յամին 1668, և արքեպիսկոպոսն առեալ զնա թաղէ մեծաւ հանդիսիւ և նուագարանօք ըստ օրինի ազնուականացն Լեհացւոց յեկեղեցւոջ հայրցն Ռեֆորմատեանց, ոչինչ անսալով Ադամայ Պժեղովսկւոյ, նախանգամի Հոգևոր Վարչութեանն Լեհացւոց, որ խափան կամէր լինել գործոյն։ Իսկ Հայք զայս ինչ միայն շահեցան, զի միջնորդութեամբ քարոզչացն Թէատինն կրօնաւորաց խոստացաւ Նիկոլ չթաղել զնա յեկեղեցւոջ Հայոց, որպէս եդեալն էր յառաջագոյն ի մտի։

Ծանուցեալ Նուիրակին զպատուէրն բարեյաջող ի քննել զկարգս և զբուն վիճակ եկեղեցեացն Հայոց Լեհաստանի՝ ետես զի խախուտ է հրատարակեալն Միութիւն Եկեղեցւոյ և տարակուսելի յաղագս ուղղութեան քահանայից, վասն որոց իւրաց ճարտարութեամբ մեծաւ և տքնութեամբ համոզակեր սկսաւ լինել առ արքեպիսկոպոսն և առ դատաւորս ժողովրդեանն, զի կամովին կամ առ ի պատիւ նմա բերցեն խնդրել ի Ս. Ժողովոյն Տարածման Հաւատոյ, զի առաքեսցէ նոցա զՀ. Կղեմէնտիոս Գալանոս, զկղերիկոսն ի կարգէն Թէատինեանց, ուսուցանել որդւոց նոցա մանաւանդ զհայրենին բարբառ։ Եւ նուիրեցին իսկ Հայք զտունն վասն դպրանոցին։ Այս Կղեմէնտիոս ի պատուի մեծի էր առ ժողովրդեանն Հայոց, քանզի քաջ տեղեակ էր լեզուաց և գիտութեանց աստուածայնոց և արտաքնոց. այլ և երևելի էր վաստակովքն առաքելութեան իւրոյ յարևելս, հմուտ գիտնական մատենից բազմաց հակաճառութեանց և պատմութեանց, տպագրելոց ի Հայ և ի լատին լեզու։ Յայնմ ժամանակի հասեալ ի ծերութիւն վաթսնամենի՝ դնէր ի Հռոմ վասն վատառողջութեան անձին և այլոց խօթութեանց ի վերայ հասելոց առ ծանրութեան վաստակոցն իւրոց. բայց հզօր էր ցանգ մտօք, անձնատուր գոլով բոլորանուէր ի գործ հաւատոյ։ Յօժարութեամբ սրտի և արիութեամբ ընկալաւ զյանձն արարեալն նմա ի Ս. Աթոռոյն զպաշտօն առաքելութեան առ Հայս, որ ի Լեհս, ի Վալախիայ և ի գաւառս մերձաւորս. խնդրեաց իւր ընկերս երկուս աջակիցս, զՀ. Ալոյսիոս Մարիուս Պիտու և զեղբայրն Բոնավենտուրայ

Կաստուցցի, և յուղի անկաւ ի Հռովմայ յետ տօնի Ս. Միքայէլի հրեշտակապետին յամի Տեառն 1663, ձմերեալ ի Մինխէն քաղաքի ի Բաւարիայ, և ժամանեալ ի Վարշաւայ յ17-րդի աւուր Ապրիլի 1664 ամի, ուրանօր սիրելութեամբ մեծաւ ընկալեալ եղև ի նորին իսկ Պրիմատեկեայ, և յառաջնում աւուր Մայիսի նորին ամի եկն եհաս յԼվով, բերելով թուղթս ի Թագաւորէն առ արքեպիսկոպոսն Նիկոլ և առ ժողովուրդն։

Սիրով բազմաւ ընկալաւ Նիկոլ զհայրն և աւուրս ինչ հիւրասիրեաց զնոսա ի տան իւրում. ապա իբրև ինքն և խորհրդականք իւր զժկամակեցան տալ զտունն ի բնակութիւն դպրանոցին և յուրաստ իսկ կացին՝ թէ խոստացեալ իցէ նոցա երբեք զտունն կամ կոչեցեալ զԳալանոս՝ ետուն նոցա ի բնակութիւն յանշէն և ի հեռաւոր մասին քաղաքի սենեակ մի անպատրաստ, ուրանօր ի վերայ յարդի հարկեցան ննջել ընդ զեռուլս ամառն և ընդ ցրտոյս։ Յայնժամ ցուցին նոքա գատաւորաց զթուղթս արքային, զորս ի դէպս ծայրագոյն հարկի և եթ ունէին ի գործ արկանել ըստ պատուիրելոյ նուիրակին, և խնդրեցին՝ զի տացեն նոցա թոյլ դառնալ անդրէն յԻտալիայ։ Իսկ Հայոց երկուցեալ, զի մի ընդ այն զժկամակեսցին անձինք մեծարոյք և երկպառակեալս զնոսա յԵկեղեցւոյն ծանիցեն, եթէ մերժեցին այնու անարգի եղանակաւ զայրն երևելիս վաստակաւորս, յանձն առաքեալս նոցա պատուով մեծաւ՝ խորհեցան կասեցուցանել զնոսա, տալով նոցա տեղի բնակութեան ի ցանկապատի մայր եկեղեցւոյն, ուստի ի բաց հանին զգինուորսն և զօրայս, ընդ հուպ ապա յաւելով զայլ ևս սենեակս երիս, անջատեալս երկու անջրպետօք, յորոց զմինն ի գաւիթ փոխեցին և զերկրորդն ի խոհանոց։ Ի բնակարանի անդ բացին հայքն անյապաղ դպրոց վասն հայ և լատին լեզուաց, և յանկուցին յինքեանս զբազումս վասն նորութեան առարկայիցն, զորս աւանդէին մանկանց. և ծնողք սոցին յօժարամիտ զնոսա անդր տանէին, զհամեստ բարս տեսանելով վարդապետացն և զսիրելութիւն։ Սրտառուչ էր արդարև տեսիլն, թէ զեարդ Հ. Գալանոս, այր երևելի

գիտութեամբ և վարուք՝ ուսուցանէր մանկանց զպարուբենն
Հայոց և զսկզբունս հաւատոյ, նոյնպէս և Սլոյխնոս, որոյ
անգէտ գոլով ցայն վայր հայացի բարբառոյն, ըստ հրամանի
իշխանութեանն աշակերտէր այլում, միանգամայն և ինքն
զայլս ուսուցանէր։ Բայց ի սուղ ժամանակի, քանզի բանի-
բուն էր ի լեզուս և փութաջան յոյժ՝ այնչափ վարժեցաւ
ի հայերէն լեզուի, զի զկնի ամի միոյ վարէր այնու անսայ-
թաք, և ի պայքար մտանէր ընդ այս արևելեայս զկարևոր
իրաց ի մասին հաւատոց։

Մինչդեռ վարէր Հ. Գալանոս սրտի մտօք զպաշտօն իւր
ուսուցանելով մանաւանդ զմանկտին, որ կայրն յարմարաւոր
թուէր հնար դարձուցանելոյ զժողովուրդն և ծաւալելոյ զՍ.
Հաւատն՝ ոչինչ յուլանայր ամենայն ջանիւք իւրովք յոր-
դոր լինել արքեպիսկոպոսին՝ զի ձեռն արկանիցէ ի ջնջումն
մոլորութեանց և հերետիկոսութեանց (յորս մեղանչել ասէր
զեկեղեցի նոցա), որք անծանօթք էին Լատինացւոց, յաղագս
անգիտանալոյ սոցա զլեզուն Հայոց, և ի մեծումն Միու-
թեան Եկեղեցւոյն արդեամբ փոխան պատրուակելոյն։ Ոչ կա-
րի յօժարութեամբ հաւանէր արքեպիսկոպոսն ի խորհուրդ
Պղեմենտեայ, նա մանաւանդ, զի յուշ էին նմա զաշինք
ուխտին ընդ կաթողիկոսն և երկիւղ՝ մի՛ յետս կացցէ այնու
ժողովուրդն ի սովորական արոց իւրոց։ Իսկ Ս. Ժողովոյն
Տարածման Հաւատոյ գուշակելով զպատճառս տարտամե-
լոյն՝ կարգեաց նմա թոշակ դաշնեկանս հոռվմայեցիս երկու հա-
րիւր ամ ըստ ամէ, որ յառաջնումն իսկ ամի, անգէն յետ զա-
լստեան հարցն՝ առաքեցաւ նմա ի ձեռս նոցա։ Այլ արքեպիսկո-
պոսին ի պատրուակս մտեալ, որպէսզի զթախանձանս զերջուցէ
զՊղեմենտեայ՝ ասէր, թէև ոչ ներկուռ ի գիտութիւնս իցէ, այլ
կաթոլիկ է և միաբանեալ, թէ բաւ իցէ այս վասն վիճակին
և թէ յընթացս այնքանի ամաց ոչինչ այլ ինչ պահանջեալ
էր ի նմանէ առաքելական Ս. Աթոռոյն և պապին Ուրբանոսի
Ը. (այլ այսմ գործոյ ոչ բարւոք հասու լեալ էր Ս. Աթոռն)։
Բայց հուսկ ապա, զկնի յոգնեկար ջանից և բանադրանացու-
թեանց ընդ եկեղեցականաց և ընդ ժողովրդեանն, իբրև զան-
գիտէր Նիկոլ, զի մի՛ զթոշակն կորուսցէ և ժողովուրդն՝ զար-

տուչութիւնս շնորհեալս նմա յարքայէն Աղէքսիոյ յուսով Միութեան Եկեղեցւոյն, և մանաւանդ յահէ անոխի ցասման Թագուհւոյն Մարիամու Լուդովիկէի, որ յաճախակի թղթովք առ գաղղիացի հայրն Ելյիխիոս օճան կայր գործոյն գլխաւորութեան,—ամբոգոյնք երևեցան Հայք և և հաւանէին ուղղել զմոլորութիւնս մի զմիոյ կնի, այլ ոչ զամենայնն ի միասին, որպէս զի ի կարծիս լիցի կաթողիկոսն, թէ ակամայ կամօք և ի հարկէ վարեալ զիժէ Նիկոլ ուխտին և դաշանց խորոց:

Կարի զժուարին եղև հաւանեցուցանել զնոսա խառնել ջուր ի սուրբ բաժակն հաղորդութեան ի ժամ Ս. պատարագին, քանզի քահանայք նոցա յամառեալք ի մոլորութիւնս իւրեանց՝ ընդ միով անապակ գինւոյ զմի բնութիւն Քրիստոսի իմանային և ոչ կամէին այլայել զայն՝ մինչև հարկ լինել Նիկոլի առն առն քահանայի առանձինն հրամայել խառնել ջուր ընդ գինի ի ժամ պատարագին, և հեստողաց բանին նզովս սպառնալ:

Քանզի ծառայման Միութեանն հակառակէր յոյժ խորհրդական արքեպիսկոպոսն Յակոբ Տրոսկի, ծնընդեամբ յարևելեց՝ աջակցութեամբ արքեպիսկոպոսին Լվովայ՝ Տարնովսկեայ, առն բարեպաշտի յոյժ, և առաջ սարկաւագի նորա Գեսակովսկեայ, երկոցունց արանցս ջերմեռանդից ի ծառայութեան հաւատոյ և ի պաշտպանութիւն առաքելութեանն՝ վարեցաւ յիշատակեալն Տրոսկի ի գաւառէն, յամին 1664 յ7-ն Նոյեմբերի: Թէպէտ և բազումք, որ բարեկամք էին նորա՝ ցասուցեալ ընդ հայրն առ վտարման նորա, հանէին զորդիս իւրեանց ի դպրանոցէ անտի և ետուն յուսումն առ Լատինացիս, յորոց ոչ կարի խիստ երկնչէին, զի ըստ բազմաց փորձոց գիտէին, թէ ի դպրոցս նոցա ընդ վարժութեամբ վարդապետաց անհմտացելոց զհայ լեզու՝ որդիք նոցա հազիւ ուրեմն կամ ոչ երբէք փոխին ի հաւատոյն.—բայց սակայն ամենքեան յետ սուղ ինչ ժամանակի ի դպրանոցն անդրէն դարձան, բաց յամենայն կարի սակաւուց, մինչդեռ քարոզիչքն ոչինչ նպաստ օգնականութեան գտանէին յայնմ

գործի ի վարդապետաց Լատինացւոց յօգուտ հաւատոյ, թէպէտ թախանձագին պաղատէին զնոսա։

Մուծին ապա ի պատարագամատոյց գիրս զխոստովանութիւն անուան պապին նախ քան զկաթողիկոսին, զոր յիշատակեն մինչև ցայսօր, յուսացեալ ածել զնա զամ մի ի Միութիւն ընդ Արևմտեան Եկեղեցւոյ։ Զերգն Քերովբէական ոչ կամեցաւ արքեպիսկոպոսն փոփոխել ամենևին ըստ ձևոյ Եկեղեցեացն Արևմտից և Արևելից, այլ զի մի թուեսցի Ս. Երրորդութեանն խաչեցեալ զոլ՝ յաւել զանուն Քրիստոսի այսու օրինակաւ. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ Քրիստոս, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ»։ Հրամայեցին ժողովրդեանն, զի ի ժամ բերելոյ ընծայիցն մի դնիցեն ծունր և պաշտօն աստուածային մատուցեն զոհոյն չև ևս սրբագործելոյ։ Ուղղեցին ի պատարագին զերգն վեր-պականս, զդաւանութիւն Հաւատոյ (զՀաւատամքն) և ըզ-կարգ Ս. Խորհրդոյն. ջնջեցին ապա զհերետիկոսական մոլորութիւնս ի գրոց նոցա, ի Ժամագրոց և ի Մաշտոցէն և մանաւանդ ի Յայսմաւուրաց, թէպէտ և անհնարին իմն էր ուղղել ամենևին զվերջինն, այլ միայն կազմել հարկ էր նոր ի նորոյ, քանզի հատոր մեծադիր է, իբրև Կալեպինոս երկու, և լի է ծաղրական առասպելօք և պատմութեամբք։ Զնոյն իմն և վասն այլոց մատենիցն, զի հարկ էր վերստին տպագրել զայնոսիկ, և առ այս բազում ժամանակաց պէտք էին և ծախուց։ Եւ այս ամենայն յաւարտ ածան ի սկզբան ամին 1665։

Իսկ Հայրքն նուիրեալ զանձինս յանդուլ տքնութիւնս դաստիարակութեան Հայազն մանկութեան, ունելով աշակերտս երկուս որպէս մուրացիկս, որոց զգեցուցանէին վերարկուս սևս կրօնաւորաց ըստ սովորութեան Լատինացւոց՝ արկին հիմն պապական դպրանոցին յԼվով քաղաքի, յամին 1665 ի 24-ն Յունվար ամսոյ, և վասն օժանդակութեանն վեց Հարիւրոց Հռովմայեցի դահեկանաց, զոր խոստացաւ տալ նոցա ամի ամի Ս. Ժողովն՝ Հայկեցան, հայելով ի վիճակ Լեհաստանի յայնմ ժամանակի՝ պահել աշակերտս տասն ի Հայոց, ուսուցիչս երկու և սպասաւորս ումանս։ Եւ քանզի բազում երթե-

եկող աշակերտք էին, որք ուսանէին ի դպրանոցին, Թող զաշակերտն որդեգրեալս, որ ի դպրանոցի անդ օթէին՝ վասն որոյ սուղ ինչ յետոյ քան զմուծումն ուղղութեանցն յեկեղեցիս՝ կարգեաց արքեպիսկոպոսն քարոզիչս երիս յաշակերտաց դպրանոցին ի պէտս եկեղեցւոյն Հայոց, և չորեցունց ևս զխոնարհագոյն աստիճանս կարգի, յետ դաւանելոյ նոցա հրապարակօրէն զդաւանութիւն Հաւատոյ Կաթողիկաց. և զայս սովորութիւն պահեն մինչև ցայսօր ժամանակի յամենայն ձեռնադրութիւնս:

Բանզի ընդունակք են Հայք և միտեալք ի բարեպաշտութեան կենցաղ, եթէ յայնմ վարժեսցին ի մանկական անտի տիոց՝ ի յաջողութիւնս մեծամեծս եհաս դպրանոցն ի մասին ուսման, զի յորոց քահանայս 17, վարդապետ մի, եպիսկոպոս մի, որ յաջորդ է այժմ արքեպիսկոպոսին, այլ և աստուածաբանս բազումս և քարոզիչս, յորոց երեքն, Իլփովայն ասեմ և Կամենեցին և Տագլովեցի՝ զնախապատիւ ունին զտեղի առ Լատինացւովք իսկ: Որչափ մեծ էր յաջողուած գործոյն, զի շինեն արդ Հայք ամբիոնս գեղեցիկս վասն աշակերտաց դպրանոցին, մինչ դեռ յառաջագոյն չունէին նոքա ամբիոնս յեկեղեցիս իւրեանց, և քարոզութեան տային Թոյլ վարդապետաց և եթ իւրեանց, քարոզչաց ագիտաց արևելեայց, որոց կանգնեալ ի միջոցի բեմին՝ ընդ ռնգունս երգէին զառասպելս իւրեանց: Զառաջինն անդ մուծան և գրութիւնք և խնդիրք աստուածաբանականք և փիլիսոփայականք ի լատին և ի հայ լեզուս, ձօնեալք յանուն պապին, առաքելական նուիրակացն և իշխանաց Լեհացւոց, կազմեալք յոճ գիտնական մեծաւ խնամօք և ջանիւք, մասամբ ի Հ. Գալանոսէ և մասամբ Թարգմանեալք ի Նախնի ձեռագրաց. սովին եղանակաւ և մուսայք հանդիսագոյնս բարբառեցան ի լեզու Հայ. իսկ եղերերգութեամբք և ողբերգութեամբք բարեպաշտիւք սիրելիս առհասարակ զանձինս ընծայեցուցանէին աշակերտքն:

Բայց յաջողութիւնք այսոքիկ գեղեցիկք, հանգոյն վարդից՝ չէին զերծ և ի փշոց. զի քահանայ մի Յուցի անուն շարժեալ ի նախանձ՝ ատեան յարեաւ հարցն զրով և բանիւ

և ընդ այլոց ամբաստանութեանցն, զորս կցկցեալ զգովելի վարուց հարցն և զաշակերտելոցն՝ և զայս ինչ գրեալ ի Հռովմ, թէ զբովանդակ արծաթն Ս. Ղազարոյն յամինեալ ի տեսարանս թատերաց ծախեն և ի խնճոյս։ Բայց անդէն և անդ ազդ արարին զայսմանէ Ս. Ղազարոյն և Նուիրակին և եպիսկոպոսք ոմանք և քաղաքէք, որոց ի գիմէլն ի Հռովմ յաշխարհաց աշխարհաց ընդ Վենետիկ՝ ականատես լեալ էր վիճակի դպրանոցին և առաքինութեանն և մանաւանդ օրինակելի վարուց աշակերտացն և յաջողութեանց նոցա յուսմունս, յորոց չորքն առաքեալ իսկ էին ի դպրանոցն Հռովմայ. զորոց վկայէր արքային կարդինալն Կոլոննայ, թէ չեղեն նոքա պատանիք, այլ հրեշտակք վարժեալք յերկնից Տեառն։ Ի վերայ այսր ամենայնի և այն ինչ եղև յայտնի՝ թէ ծախքն յիշատակեալք ի վերոյ, ոչ կարի մեծամեծք այլ կարեւորք վասն հաստատեալ դպրանոցաց՝ ոչ թոշակաւն առեալ ի Հռովմայ ընկերին, բայց կամաւոր նուիրօք հարցն, որոց չէր օրէն ըստ կանոնաց կարգին իւրեանց պահանջել արծաթ յամէքէ, թէպէտ և յառաքելական պաշտաման իսկ լինէին. այլ զի ընդհանուրն նոքին իսկ ծախէին զումար մի արծաթոյ, զոր ընծայեալ էր նոցա վաճառականի ոսկուոյ Վ. ալեքսեայ, որոյ խոստովանահայրք էին նոքա, և ոչ յետս պահանջէին։ Սոր ոսկին չէջու յայլ փոխթորկին այնորէն, յորմէ զայս ինչ խնդոյ ընկալեալ հայքն քաղաքէք, զի մի զերթեալին ի փաստաւոր ջանիցն և մի խնդրեսցեն ծորեհ և զգուշանս յաւելեալ անսալ։

Իսկ երբեմն ամենայնքն եկեալ, զորս վերագոյն յիշատակեցաք՝ ոչ բաւեցին վասն բնակութեան ուսուցչաց և աշակերտաց, որոց թիւ աճեցաւ մինչև ց12՝ յայնժամ Հ. Գալանոս արծաթովքն յաւելովք ի Ս. Ղազարոյն շինեաց ի մէտաւոր անշէն հրապարակին տուն նոր կամարակապ, ըստ ամփոփութեան Վենետկոյ, յորում բովանդակէին ամենայնք փայտեղէնք տան. և ի տանն յայնմիկ կայմեցաւ դպրանոցն ամս վեց։ Այլ քանզի և այս բնակարան փոքր թուեցաւ և անառողջաբար, զի շինեալ էր ի խոնաւուտ տեղւոջ քաղաքին, և զի ցանգ հիւանդանային և մեռանէին աշակերտքն և վարդա-

պետք, բայց արքեպիսկոպոսն, խոստանայր առ հասարակ ի գործս աստուածահաճոյս, ոչ առնոյր յանձն տալ սենեակ մի աննշան՝ յետ մեկնելոյ նորա ի Հռոմ, զկնի երկարաձիգ դժուարութեանց ամիսս ինչ տևելոց, անխոնջ ջանիւք առաքելական նուիրակին այնր ժամանակի, կարդինալին ՙՆերլեայ, հրամանաւ և շնորհօք ՙՆորին Մեծութեան արքային, որ զարգիս բարերարաբար թագաւորէ, և սրբազան արքեպիսկոպոսին Լվովայ՝ Կորիցենսկեայ և Վոյեվոդին (զօրավարին) Ռուսաց՝ Յաբլոնովսկեայ ուր ուրեմն ընկալան քարոզիչքն յարուարձանին տուն մի, որ թէպէտ անշքացեալ էր և կիսաւեր ի ժամանակին, այլ յետ նորոգութեանց ինչ լինէր մի ի գեղեցիկ և յարմարաւոր տանց քաղաքին, դահլիճ ունելով ընդարձակ և պարտէզ հանդերձ լայնանիստ պարսպօք յողորկեալ վիմաց: Զատուցս զայս ընծայեաց Ս. Ժողովոյն (այլ յակամայից) փոխանորդն ՙՍիկոլի, և վաւերացոյց զընծայն արքեպիսկոպոսն ի Հռոմ քաղաքի. սակայն յինքն պահեաց զգերեզմանատունն, բաժանեալն ի տանէն քարեղէն պարսպօք և զեկեղեցին գեղեցիկ, որ կառուցեալ էր նոյնպէս ողորկեալ վիմօք, զորմէ հարկեցան հարք տալ խոստումն, թէ հրաժարին յամենայն մասնակցութենէ իրաւանց ի վերայ եկեղեցւոյն. (և զայս մնացուանդ խնդրոյ ժողովուրդն, որ հակառակէին այսմ գործոյ), և ի տուն անդր փոխեցին զդպրանոցն յամին 1671: Յաւելաւ դրուն եղան դրոշմք պապին և արքային ընդ վերնագրիւ Collegium Pontificium. (այն է ՙԴպրանոց պապին): Այլ զի ոչ առաքէ Ս. Ժողովն և ոչ դրամ մի ի պէտս նորոգութեանց տանն, զոր ի բազում նուագս խոստացեալ է՝ և զի հարկ եղև հարցն գէթ փոքր մի մասամբ նորոգել զյարկ տանն, զհրդեհեալն ի պատերազմին Տաճկաց, որպէս զի եղիցի նոցա տեղի, ուր զգլուխս իւրեանց դիցեն՝ և զի մի կործանեսցի տունն առ հասարակ, կիսով մասամբ ծածկեալն յարկաւ մինչև ցայսօր ժամանակի, ապաստան ի ձիւն և յանձրև՝ և զի ըստ արդի վիճակի երկրին չէ հնար վեց հարիւր դահեկանօքն զայսպիսիս ընուլ ծախս, եթէ ոչ առաքեսցի յԱստուծոյ նպաստ ինչ օգնականութեան՝ վասն այսորիկ ի մեծ նեղեալ է հարցն խնդրել, զի տացի նոցա

հրաման դառնալ յԻտալիայ անդրէն ի վանս իւրեանց, և զի յանձն արասցի այլոց ամբոխ գործոյն, զոր ոչ կարացին ածել նոքա ի կատար, յորժամ իշխանաւորքն ոչ ընձեռեն զխոստացեալն նպաստ։

Իսկ ի մասին գործոց առաքելութեանն արժան է յիշատակել, զի յետ տարագրելոյն յաշխարհէն զաղանդաւորն խորհրդական արքեպիսկոպոսին՝ եղին քարոզիչքն ի մոխ վարել յեկեղեցւոյն և զաշակերտս նորա համբաւաւոր կամ զսպասաւոր նորա, զհանդոյն նմին անարժանն. իսկ նա եմուտ ի դպրանոցն պապին և ոչինչ ընդհատ է այժմ յայլոց ի համեստութեան, յազնիւ բարս և յօրինակելի վարս։

Ըստ օրինակի եկեղեցւոյն Հայոց Լեվովայ եկն ի միութիւն և եկեղեցին որ ի Զամոստիէ, որոյ աւագ երէցն Քրիստոսատուրովիչ, այր երևելի գիտութեամբ իւրով և բարեպաշտութեամբ՝ յառաջագոյն իսկ կաթոլիկ էր ի ծածուկ, և անձկանօք ծայր ուղղութեան եկեղեցւոյն իւրոյ, և յաճախակի թղթովք առ Հ. Պալանոս պահանջէր զայն յարքեպիսկոպոսէն։ Եւ յաւուրն, յորում ըստ բղձիցն ընկալաւ զթուղթըն, այսինքն է ի 22-րդի աւուր Փետրուարի 1665 ամի՝ եմոյծ անդէն և անդ զուղղութիւնն համօրէն ըստ ամենայնի, որպէս արարեալն էր յաւագ եկեղեցւոջն Լեվովայ։ Այլ այս գործոյ զխափանիչ լինէր կրօնաւոր ոմն կեղծաւոր, նորոգ եկեալ յաշխարհէն Հայոց, ուրանօր տոգորեալ ի մանկութենէ անտի յամենայն մոլորութիւնս արևելեայց՝ ջանայր ամբոխել զժողովուրդն և սատան լինել աստուածային գործոյն։ Իբրև ազդ եղեն Նիկոլի մոլորութիւնք նորա՝ կոչեաց զնա յԼեվով. այլ նա հնարիւք նախնի խորամանկութեանն կաթոլիկ զինքն անուանեաց և այնպիսի իմն ճարտարութեամբ կեղծաւորեցաւ, մինչև մերձ լինել ի խաբել և զնոյն զՊալանոս, որ հաւանեցաւ կարգել զնա յերիցութիւն եկեղեցւոյն Հայոց մերձ ի քաղաքն, յանուն սրբուհւոյ կուսին Մարիամու։ Բայց ոչ ընդ երկար հնարեցաւ ծածկել զգայլն հանդերձիւ ոչխարի, և իբրև ակն յանդիման եղև, թէ զայթակղեցուցանէ զժողովուրդն նա մանաւանդ զկանայս, զորս խոստովանեցուցանէ ընդդէմ պատուիրանի արքեպիսկոպոսին, և յորժամ յայց ամենեցուն

վերայ գալու սա նմա թուղթ մաղթութեան՝ ի կասկածանս եկեալ թէ մեծագոյն ևս յանցանս գործեալ իցէ նորա՝ եղեն ի բանտի և զնի եօթնեկաց ինչ ի վերայ անցելոց մերժեցին հալածեցին զնա յաշխարհէն, որ դարձաւ անդրէն ի Հայս և կեայ մինչև ցայժմ, փառաւորեալ պատուով և յարգանօք վասն արիաբար պաշտպանելոյ նորա գործոյ Հաւատոյ:

Անկանուք յառաջ քան զյանդիմանութիւն կեղծաւորութեան կրօնաւորին եկն յարևելից այլ ոմն կրօնաւոր համախորհուրդ և համախոհ առաջնոյն, նոյնպէս փարթեալ և տգորեալ յամենայն մոլորութիւնս ժողովրդեան իւրոյ, որում անուն էր Յովհաննէս Նիկոմեդիացի, Իզմիրեցի ծննդեամբ, այր վեթխարի հասակաւ, մօրուօք, այլ ոչ հեստես որպէս թուէրն: Պատմէր սա զկեղծաւորիր հրաշագործութեանց կաթողիկոսին Փիլիպպոսի, բաժանէր առ ամենեսեան հող ի շիրմէ նորա և կոչէր արծաթ անհնարին: Այլ քանզի աշկարայ հակառակորդ էր Ս. Աթոռոյն և առաքելութեանն՝ հալածեցին արդեօք զնա ևսկոյն յաշխարհէն, բայց երկնչէին ի ժողովրդենէ անտի, զի մի խռովեսցի. քանզի ազգակից է այրն համօրէն իշխանաւորաց և երևելի արանց քաղաքին, այլ և ի ձեռն շողոքորթութեան և բաղում ընծայից սիրելի եղև յաչս արքեպիսկոպոսին, որ առ ի զիւրագոյնս զնա կողոպտելոյ՝ յուսով պատրէ զնա, թէ խնդրեսցէ վասն նորա զաստիճան եպիսկոպոսութեան, որում յոյժ ցանկայ այրն:

Այրի տարբեր էր ի սմանէ պատանին կոչեցեալ Գրիգոր Նարամովիչ, յԻլով քաղաքէ, որ ոչ կարի ներկեալ էր հայոցի և լատինական ուսմանց, և անուանեցեալ էր սուղ ինչ ժամանակաւ յառաջ: Ի սկզբան անդ գժկամակ էր նա ընդ հարսն, քանզի ջատագով այր էր հաւատոց և սովորութեանց ազգին իւրոյ, այլ ապա համոզեալ յընթերցուածոց Վիճաբանութեանցն Գաղանոսի և ականատես գոլով առաքինութեանց և բարեպաշտութեան նորին, զոր ետես ի Պրագայ քաղաքի յանցանելն իւր ընդ այն ի Լեհաստան՝ (զի ի նմին ժամանակի ցանկայր վանմափայլ իշխանն Մարտինեց, արքայական մարզպանն Չեխաց հիմնել անդ զվարդ կղերիկոսաց, որ և յետ սակաւ ժամանակի յաջողեցաւ նմա) յա-

ճախել սկսաւ առ Հայսն, և ունէին զնելով զասուց վարժութեանց նոցա, ընդ փոյթ այնչափ յառաջեաց ի հաւատս, զի ընկալաւ (այլ դժուարութեամբ մեծաւ) զհաճութիւն կնոջ իւրոյ, եղև կրօնաւոր և ձեռնադրեցաւ կիսասարկաւագ ի Հ. Գալանոսէ. և յետ այնորիկ տպագրեցին զքննական ճառ նորա ի բարոյական աստուածաբանութենէ, իբրև փորձ հմտութեան նորա ի գիտութիւնս։ Այլ կարի եռանդեամբն իւրով ի գործ Հաւատոց ած ի վերայ իւր զցասումն և զատելութիւն զաւառորացն, որք յորդորանօք կամ զրամօք ցայն վայր ածին զարքեպիսկոպոսն՝ զի ընդ երկար հրաժարէր ի ձեռնադրելոյ զնա, և ուր ուրեմն յետ մահուանն Հ. Գալանոսի յանձն էառ ձեռնադրել զնա, թախանձանօք արքեպիսկոպոսին Տարնովսկեայ, (ըստ խնդրելոյ Հ. Նշխեայ՝ զոր միայն սիրէր)։ Այս Բալսամովիչ կամ Բալսամ ոչ սակաւ նպաստաւոր եղև հայցն ի ծաւալելն նոցա զՄիութիւնն, և ցարդ ես ոչ դադարէ վաստակել ի նոյն՝ յեկեղեցւոջն Հայոց Ստանիսլաւովի, յորում կարգեալ է երէց։

Տեսեալ Հ. Գալանոսի, թէ քանիօ՛ն օգտակարք են ժողովրդեանն Հայոց արք ուսեալք՝ տխրէր հոգւով չափ ընդ այն՝ զի որ յաջողագոյնքն ի նոսա էին՝ ի վանս վանս մտանէին, իսկ հետևողս ճշմարտութեան կաթոլիկ Եկեղեցւոյ գործ էր խնդրել ի նուաստագունի կարգի ժողովրդեանն։ Առաւել ևս ընդ այն տրտմէր, զի վանականացն զանցաւոր կենցաղոյս ըզվայելչութեանց արարեալ մանաւանդ փոյթ քան զգործոց փրկութեան հոգւոյ՝ յորդորեցին զբազումս ի ժողովրդոց, զկանայս մանաւանդ, (որոց ասէին, թէ նոքա միայն կարող են բանալ զդրունս երկնից), նուիրել նոցա զերևելի մասնն ընչից իւրեանց, որ զեան է երբեմն և հարազատ ժառանգաց նուիրողացն. իսկ ամուսնաւոր եկեղեցականք Հայոց, որպէս յայտ է՝ կեան միայն արիւք ժողովրդեանն։ Թէպէտ ջանացաւ Հ. Գալանոս կարճել զայս սովորութիւն յոռի, այլ ոչ յաջողեցան նմա իղձն ըստ ամենայնի, քանզի և մինչև ցայսօր չէ յայտնի, թէ որով եղանակաւ իցէ հնար եղծանել զայն սովորութիւն վնասակար նուիրուց և կտակաց յօգուտ վանացն։ Զայսու ժամանակաւ առաքեցաւ ի Հռովմայ ի ձեռս նուի-

րակին Պիգնատէլեայ բանադրութիւն վասն Հայոցն, որոց միանգամ ընկալեալ զՄիութիւն Եկեղեցւոյն՝ յայլ հաւատն անդրէն փոխեցին. այլ ոչ եմ հասու, թէ ընդէր չիցէ այս հրատարակեալ, և ընդէր չիցէ զեկուցեալ ամենայն տեսչաց գաւառաց *) Լեհաստանի պատուիրանագրութիւն Ս. Ժողովոյն, թէ մի՛ կատարեսցեն եկեղեցականք Հռովմայեցւոց վասն Հայոց զխորհուրդս Եկեղեցւոյ, բաց ի խորհրդոյ խոստովանութեան և մի ընկալցին զնոսա ի կրօնաւորական կարգս կաթոլիկաց: Եւ քանզի ոչ կատարեն վանորայք զայս պատուիրան՝ խորհեցան Հայքն զայն միայն առնել, որ ինչ ի նոսա հայի, ապաստան արարեալ զայլն ամենայն ի կամս Աստուծոյ:

Իբրև ծանեան Հայքն, թէ կարի փառաւոր է գործոյ առաքելութեանն և դպրանոցին սովորութիւնն ձեռնադրելոյ ի քահանայս ըստ առաջնումն կարգի արս տգէտս և անյաջողակս, (որք առ փոքր մի արծաթոյ կամակար յուրաստ կան ի հաւատոցն և վերստին ի նոյն դառնան), հարկեցան կռուել ընդ դատաւորս Հայոց բազում ժամանակս, զի ընկալցին ի նոցանէ խոստումն օժանդակութեան յայնմ գործի, և առ ի կատարումն նպատակի իւրեանց՝ էր զի յորդորանօք վարէին և էր զի սպառնալեօք: Կարի յաջողութեամբ ձգի գործն մինչև ցայս վայր, իբր զի որք յետ հիմնարկութեան առաքելութեանն ձեռնադրեալ են՝ գրեթէ ամենեքեան ուսեալ են ի դպրանոցի անդ: Իբրև ի Հռովմ էր արքեպիսկոպոսն, (ուրանօր երդուեցաւ չձեռնադրել յայնմհետէ զորս ոչ հարցաքննեալք իցեն ի դպրանոցին)՝ թէպէտ և հրատարակեաց փոխանորդն Հայոց զպատուիրանագրութիւն Ս. Ժողովոյն զայսոցիկ իրաց՝ այլ խախուտ է ցարդ գործն և անհաստատ:

Ուստի իբրև եկին հասին ի սկզբան անդ Միութեանն կղերականք երկու հասակաւորք ամուսնաւորք յՆագլովեց քաղաքէ, բերելով ի ժողովրդոց քաղաքին թուղթս յանձնարարութեան առ արքեպիսկոպոսն, և կամէին ձեռնադրել ի քահանայութիւն՝ խափան եղև այնմ Հ. Գալանոս, և ոչ այլազգ հաւանէր ընդ այն՝ բայց եթէ ուսանիցին նոքա զէթ զմի

*) Վանահայրք կրօնաւորական կարգաց: Թարգ:

ման բարոյական աստուածաբանութեան և զպաշտամունս խորհրդոց: Ուր ուրեմն յանձն առին կրօնաւորքն կեալ ամիսս ինչ ի գիւղանոցին և ուսանել, և յետ այսորիկ իբրև ուսան ըստ կարի զպարտս կոչմանն իւրեանց հոգևորի և զէութիւն մի միայն լինելոյ կաթողիկէ հաւատոյ՝ ձեռնադրեցան ապա ի ցնծութիւն ամենեցուն և դարձան ի բնիկն երկիր իւրեանց, յորում վայրի ախոյեանք եղեն զովելիք օգտից եկեղեցեացն իւրեանց:

Յայնմ ժամանակի խիզախեալ հայցն ի ծառայութիւն Միութեանն՝ յղէին Թուղթս և պատուիրանս արքեպիսկոպոսին ի համօրէն եկեղեցիս Հայոց Լեհաստանի, (բայց ոչինչ ազդեցին նոքա). և ահա կաթողիկոսն Էջմիածնի փոյթ արարեալ զգուշացոյց հօտին իւրոյ և ձեռնարկեալ հնարս սաստիկս, զի մի ի կորուստ մատնեսցի ժողովուրդն՝ առաքեաց յԼեհս զնուիրակ իւր զՊօղոս, զարքեպիսկոպոսն Թոխատու, այր արդարև երևելի ըստ մտաց և ըստ մարմնոյ, այլ ադէտ, որպէս առ հասարակ վարդապետքն արևելեայք: Եկեղեցականք և ժողովուրդք Հայոց ընկալան զնուիրակն փառաւորութեամբ մեծաւ, որպէս օրէն էր աստիճանի նորա, իսկ հայքն հռովմէական հրաւիրեցին զնա սիրելարար ի գիւղանոցն ի վիճաբանութիւն հրապարակական զինուորոց փիլիսոփայութեան ի լեզու Լատինացւոց և ի Հայոց: Կարի յոյժ զարմացաւ նուիրակն ընդ այն, զի վարդապետացն Հռովմայ ուսուցեալ էր Հայոց զլեզուն Հայոց և նոցին իսկ վարժեալ յոյժ բանախօսութեան յայն լեզու՝ հետազօտեն զճշմարտութիւնն գեղեցիկ իմն և ցուցանէին անծանօթիւ եղանակաւ ապացուցութեանց և պատասխանեաց: Դիպեցաւ զամ մի խօսել նուիրակին ընդ արքեպիսկոպոսին և ընդ Հ. Գալանոսի զՄիութենէ Եկեղեցւոյն, զոր խոստովանէր յոյժ համարէր, մինչև համոզեալ իցէ ընդ այն կաթողիկոսն և վաւերացուցեալ: Նոյն ի նմին կշռեաց զպատասխանիս Հ. Գալանոս բոլորովին եռանդեամբ, և յայտնեցեալ ոչ ևս կամէր հաղորդութիւն ընդ նմա առնել, բայց թոյլ ետ նմա զկալել և խօսել զերաց հաւատոց ընդ Հ. Սլըյխեայ, զոր նովին օրինակաւ համոզել ջանայր նուիրակն ի կեղծ հրաշն երկնային լուսոյն, որ յաւուրս Աւագ Շաբաթու ի վերայ գերեզմանի Տեառն երևի:

Յօգուտ ի կիր էարկ զայն Հ. Սղլխիոս, զի զկնի ժամանա-
կաց յանդիմանեացէ զատութիւնն. այլ գանձիկքն այնպէս հա-
ւատացեալ են հրաշիցն՝ զի աններելի յանցանս վարկա-
նէին, եթէ ոք փոքր մի տարակուսիցի ընդ այն, և երկնչէին,
գուցէ կլանիցէ երկիր զայլն այնպիսի, որպէս զԴաթան և
զԱբիրոն:

Բազում անգամ ցանկացաւ Նուիրակն մատուցանել պա-
տարագ առանց նորամոյծ ուղղութեանցն, այլ ի զուր կանէ-
ին ջանք նորա, քանզի քարոզչացն երկուցեալ՝ գուցէ խառ-
վեսցի ժողովուրդն՝ յայն ինչ պնդէին զօրհանապազ, զի կամ
ըստ արարողութեան կաթոլիկաց մատուսցէ զպատարագն,
կամ մի մատուսցէ ամենևին: Իսկ յետոյ մերժեցին և զկամս
Նուիրակին, որ հաւանէր մատուցանել զպատարագն ըստ ա-
մենայն ուղղութեանցն ինկքս մուծելոց, բայց ի խառնմանէ
ջրոյ ընդ գինին, զի կարի հակառակք են Հայք արևելեայք
արարողութեանս այսմիկ: Յաւուր միում, իբրև լուաւ Նուիրակն
ասել, թէ ուսուցանեն Լատինացիք ոչ կարգել ջրոյն ի պա-
տարագի էութիւն Ս. զոհոյն, այլ նիւթ միայն զոլ անբա-
ժանելի, և թէ բազումք ի նոցանէ չգիտեն իսկ, թէ յայն
սակս ոչ առնուն Հայք զջուրն ի կիր, զի միաբնակք են —
որպէս գրէ զայսմանէ ի պանծալի շարադրութեան իւրում
զիրաց պատարագի սրբազան կարդինալն Բոնայ, — գաղտ
չոգաւ ի մի ի վանացն, այլ ոչ եգիտ յաջողութիւն: Բայց ոչ
բեկաւ այսու ի յուսոյն, այլ զկնի եօթնեկի միոջ եւ արտաքս
քան զքաղաքն իբրու ի պէտս մաքուր օդոյ. և հրաման ա-
ռեալ յարքեպիսկոպոսէն՝ բնակեցաւ մերձ յեկեղեցին Պանա-
կան յարուարձանին. երթեալ անդ զերդան հերետիկոսականս
առանց վկայից, որով ի խար հնարէր զհարսն արկանել ըղ-
հետամուտս մէն մի շարժուածոյ նորա: Բայց այլազգ ելքն
կատարեցան, զի իբրև ազդ եղև զայսմանէ հարցն՝ զայրացան
նոքա կրաւամբ ընդ այնպիսի գործ Նուիրակին, և եկին պատ-
մեցին զայս արքեպիսկոպոսին Տարնովսկեայ, որոյ առաքեալ
անդէն զերկուս ի կանոնիկոսաց իւրոց և զփաստաբան հոգե-
ւոր ատենին՝ հրամայեաց նոցա ազդ առնել Նուիրակին խիստ
բանիւք, զի թողցէ մեկնեսցի յաշխարհէն կամ մի ժպրհե-

ցի այնուհետեւ յայնպիսի գործ յանդգնութեան: Եւ եւս նուիրակն արդարեւ զխոստումն հարկին, զոր արքեպիսկոպոսն պահանջէր, իսկ ի փաղեւ անդր գայր առ արքեպիսկոպոսն Տարնովսկի եւ ըստ սովորութեան Լեհացւոց աստիճանականութեամբ մեծաւ եւ սիրով ընկալեալ լինէր ի նմանէ: Իսկ եկեղեցին այն Վանական փակեցաւ յայնմհետէ վասն այսոցիկ իրաց:

Հուսկ ուրեմն իբրեւ եւես նուիրակն, թէ ոչինչ կարեմ առնել առաջի աչաց զգուշաւոր հարցն՝ հարկեցաւ անցի առ, վասն որոյ ժողովեալ առուրս ոչ բազում մեկնեցաւ յԼվովայ յամի Տեառն 1665 ի 29-րդի աւուր Հոկտեմբերի. եւ ընդդէմ խոստմանն իւրոյ չմտանել ի Կամենից եւ յայլ քաղաքս, յորս էին եկեղեցիք Հայոց՝ դէմ եդեալ չոգաւ եւ եմուտ յԵազլովից եւ ի Կամենից, յորս ի ձեռն մոլար քարոզութեանց իւրոց այնչափ խափան եղեւ ծաւալման Միութեանն, մինչեւ ժողովրդոցն Կամենիցի ոչ կամել այլ եւս լինել Միութեանն ի քաղաքին իւրեանց, բայց միայն եթէ առնիցեն հրամանաւ արքունի կամ առ եկեղեցի զարտուղութիւնս կրաւսանելոց, եւ ժողովուրդն Եազլովիցի թշնամանօք ընկալաւ զՆապասմովէչն մեր յիշատակեալն ի վերոյ, որ առաքեալ էր անդր հանգերձ նորով պատուիրանաւ արքեպիսկոպոսին առ ի մուծանել զուղղութիւնս յեկեղեցիս քաղաքին:

Էր նուիրակին այնորիկ Պօղոսի պատանի ոմն սարկաւագ կուսակրօն 21 ամի, օգնական նորա, որում անուն էր Վարդան Յունանեան, որ յաթոռանիստ վանս կաթողիկոսին ամս ինչ ուսեալ յեկեղեցական երգեցողութեան եւ ի բերանացի ուսումն երգոց սրբոց, յորս միայն բովանդակին համօրէն ուսմունք նոցա: Յարեալ էր նորա ի Պօղոս, իբրեւ ի վարդապետ հռչակաւոր, եւ ակն ունէր թեւակոխել նովաւ յուսմունս խորագոյնս: Այլ իբրեւ ի դէպ եւ եկանէր յայս ակնկալութեան նորա, քանզի տեսանէր, թէ ոչ բազում ինչ ուսանիցի ի վարդապետէն անփորձ եղելոյ յասպարէսի գիտութեանց, որում հաւատարիմ եւ զինքն համարէր, եւ քանզի մեծաւ փափագանօք ցանկայր ուսանել գիտութիւնս աստուածայինս եւ արտաքինս, զորս աւանդէին ի դպրանոցի պապին

ի բնիկն իւր լեզու, զորմէ իսկ յանձինս կրթէր՝ — գաղտ չոգաւ առ Հ. Գալանոս և ի վեր եհան նմա զխորհուրդն կամացն, որոյ ընկալեալ զնա կարի սիրելութեամբ՝ պնդեաց ի խորհուրդն բարեպաշտութեան, եղ բանս խրախուսանաց, թէ ընկալցի զնա դպրանոցն իբրև զորդի և թէ ոչինչ վնասիցի Վարդանն, եթէ ի բաց կացցէ ի վարդապետէն մոլորութեան: Եւ իբրև անտես արար Նուիրակն զխնդիր սարկաւագին, զի տացէ նմա թոյլ կեալ բնակել յԻլվով քաղաքի՝ յաւուր յորում հանդերձէր Նուիրակն մեկնել ի քաղաքէն՝ փախուցեալ ի նմանէ սարկաւագին ապաստանեցաւ ի դպրանոցն և անտի առ Իտալացի ոմն, առ որում թագեաւ առ ժամանակ մի: Ցասուցեալ ընդ այս Նուիրակին, որ մեկնեալ ուրեմն էր ի քաղաքէն իբրև կէս մղոնաւ՝ դարձ անդրէն առնէ ի քաղաքն ի խնդիր սարկաւագին, այլ ոչ գտեալ զնա՝ ստիպի վերստին յուղի ելանել: Իսկ Վարդանայ գնացեալ նախ առ արքեպիսկոպոսն յայտ առնէ, ըստ այնմ, որպէս ուսուցին նմա հայրքն՝ թէ ի մտի ունի երթալ ի Հռովմ յուսումն, եթէ ոչ ընկալցին զնա ի դպրանոցն: Ոչ անագանեաց արքեպիսկոպոսն տալ զհաճութիւն իւր և առաքեաց զնա առ Հ. Գալանոս, քանզի գիտէր, թէ այսու խնդութեան նորա լիցի պատճառ: Իսկ Վարդան, որ չէր ինչ ի վաղագոյն տես՝ այնպէս յաջողեցաւ ի վարժս գիտութեանց և լեզուաց ի սուղ ժամանակի, զի ընդ հուպ առաքեցին զնա ի Հռովմ, ուրանօր նախ ձեռնադրեցաւ քահանայ ի դպրանոցի քաղաքին և ապա կարգեցաւ եպիսկոպոս Նախիջևանեցւոյ· այլ կարգեալ Ս. Ժողովոյն արժանաւոր քան զամենեսեան համարէին զնա ի պաշտօն յաջորդի արքեպիսկոպոսին: Այլ զյաջորդութենէն լիցին մեզ բանք ի սորա:

Իբրև անցին աւուրք վեշտասան զկնի մեկնելոյ Նուիրակին՝ եկն ի Հռովմայ յԻլվով Յովհաննէս Կերեմովեչ բնիկն Իլվովայ, եպիսկոպոսն Բոգդանիոյ, որ ազգական էր արքեպիսկոպոսին վասն քեռ սորա, ընդ որում ամուսնացեալ էր եղբայրն Յովհաննու: Էր սա այր կարճ հասակաւ, օրինակելի վարուք կենցաղավարութեան և փոքր մի ուսեալ: Յաղագս իւրոյ ինչ դժբաղդութեան կաղ էր ոտիւքն, այլ ըստ

հոգւոյն առաւել եւս ախտացեալ էր քան ըստ մարմնոյն։ Ենրիկեայ ինք, զի եթէ չէր նորա երկիւղ կորուսանելոյ ըզթոշակ իւր 120 հռովմայեցի դահեկանաց ամի ամի, զոր կարգեալ էր նմա Ս. Ժողովն՝ հնարիւք խորամանկութեամբ իւրով և կեղծաւորութեամբ հպատակութեան մեծ եւս զեան առաքելութեանն նիւթէր, քան ինքն արքեպիսկոպոսն, (թէպէտ և օգտակար եւս էր մերթ ընդ մերթ)։ Ընդ երկար ժամանակս շրջեցաւ ի Հայս և յԵրուսաղէմ, ուրանօր ձեռնադրեցաւ վարդապետ և եպիսկոպոս, ուստի զվարդապետութիւն Լատինացւոց, գոլով դեռ եւս ի հայրենի երկրին, յածաւ գրեթէ յընդհանուր արեւելս, քարոզելով ընդ ամենայն եկեղեցիս, որպէս սովորութիւն էր վարդապետաց ժամանակին։ Հուսկ ուրեմն ժամանեալ ի Հռովմ և դաւանեալ անդ զհաւատս կաթողիկաց՝ ընկալեալ եղև ի Ս. Ժողովոյն Ծաւալման Հաւատոյ և ջանիւք Հ. Գալանոսի առաքեցաւ ի Լիվոռնոյ և անտի դարձ արար ի Հռովմ՝ թոշակ ունելով ըստ կարի բաւարար։ Յայնժամ իսկ ցանկայր գալ յԼվով, այլ զանգիտեալ յարքեպիսկոպոսէն վասն անսիրելութեան նորա՝ զտեղի կալաւ, մինչեւ եկն Հայր նորա յԼէվով, որոյ իսկ յորդորանօք հաճեցաւ արքեպիսկոպոսն ընդ գալուստ նորա, և ապա կարգեաց նմա Ս. Ժողովն զթոշակն զայն։ Այլ սուղ ինչ յետոյ զկնի գալստեան իւրոյ եցոյց ապերախտութիւն փոխանակ այնչափ բարեաց, զորս եգիտ ի Ս. Աթոռոյն, քանզի հետեւող եղեւ ծերոյ ումեմն արբեցողի, որ ոչ կարի ջերմեռանդն էր ի կաթողիկութիւն, ընտրեաց զնա իւր խոստովանահայր և ոչ ի բաց կայր ի նմանէ հակառակ կամաց հօր իւրոյ, մինչեւ մեռաւ ծերն։ Ոչինչ ազդեցին նմա յորդորանք և սպառնալիք, զի գոնեայ զամ մի յեկեղեցւոջն քարոզեսցէ ի ջատագովութիւն հաւատոյ կաթողիկաց, կամ խրատ ինչ խօսիցի առ ժողովուրդն դեռ եւս տարտամեալ, որ պատուէր զնա յոյժ։ Ծպտեալ ի բարեպաշտութեան և խաբելով զնուիրակս և զքարոզիչս՝ փոքր մի եւս և հասանէր յըղձացեալն իւր ի նպատակ, քանզի յոյժ սիրէր զնա արքեպիսկոպոսն, իսկ դպրանոցն և առաքելութիւնն յաջողէին նմա, մինչ զի գոգ ինքնիշխան տիրէր. բայց քանզի

գոռոզ էր յոյժ և բարձրամիտ և արհամարհէր զամենայն՝ կորոյս ըստ յիմարութեան իւրում՝ զոր այնպէս յանիրաւին ստացաւ՝ յորժամ կոչեցին հայքն զարքեպիսկոպոսն (ի Հռովմայ) և փոխանակ Կերեմովիչի զայլ ոմն նստուն նմա յաջորդ:

Մինչ այս մինչ այն՝ մեռանէր ի Կրակով քաղաքի եղբայրն Բոնավենտուրայ, ի դառնալն իւրում յԻտալիոյ. և զհետ նորա յամին 1666 ի 14-րդի աւուր Մայիսի փոխեցաւ յերջանիկ կեանս ինքն Հ. Գալանոս, ի սուգ համակելով զամենեսեան վասն իւր: Էր նա այր արդարև առաքելական, յորում զարմանապէս բարեխառնեալ էր բարեպաշտութիւն ընդ ուսման և ընդ մեծի յոյժ համեստեան կրօնից: Յորժամ առաքեալն էր ի պապէն Ուրբանոսէ Ը. ի Կ. Պոլ՝ ընթերցմամբ և եթ գրոց, առանց իրիք օժանդակութեան հրաշիւք իմն ուսաւ զգրաբառ լեզուն Հայոց և զայն լեզու շարադրեաց մատեանս բազումս երևելիս պատմութեանց և վիճաբանութեանց: Երբև առաքեցաւ անտի ի քաղաքն Ա. Գոլոյ ի հունձս առաքելութեանցն՝ հրապարակական քարոզութեամբք իւրովք. արժանի եղև չուջառի վարդապետաց Հայոց, հակառակ հրամանաց իշխանաց. և զի պատրիարքս Հայոց բազումս և եպիսկոպոսունս և զորս խոնարհագոյնք էին զարձոյց ի հերձուածոյն ի ճշմարիտ վարդապետութիւն՝ կալան զնա Տաճիկք և գանեցին ի մահ: Այլ ըստ յաջողութեան բաղդի փրկեաց զնա ի մահուանէն դեսպանն Գաղղիացւոց դը լա Հէ (de la Haye): Յետ այնորիկ դարձաւ Գալանոս ի Հռովմ, ուր անօր յընթացս քանի մի ամաց մինչև ցօրն մեկնելոյ անտի ի Լեհս՝ աքնէր զօրհանապազ վասն ժողովրդեանն Հայոց: Ի մեռանելն իւրում ցանկացաւ, զի թաղեսցի մարմին իւր ի գերեզմանս մայր եկեղեցւոյն Հայոց, ուր և հանգչի մինչև ցայսօր ընդ որմով նորոյ հանդերձատանն, յարևմտից կուսէ:

Յետ մահուանն Հ. Գալանոսի զլուխ մնաց առաքելութեանն և դպրանոցին Հ. Լուդովիկոս Մարիոս Պիտու, ազգաւ գաղղիացի, փոխանորդն նորին, ամաց իբրև 28-ից, որ թէպէտ միջակ էր յուսմանս, այլ քաջի յաջողակ ևս էր

ի լեզուս՝ զկարիս պաշտաման իւրոյ ընդր մասամբ, մանաւանդ զի գիտէր զլեզուն Հայոց, զոր ուսաւ ի կարի սուղ ժամանակի։ Ընդ հուպ ապա Տ. Պիոս կարգեցաւ փոխանակ տեսչի ի Ս. Ժողովոյն ըստ առաջարկութեան նուիրակին Պրգնատելեայ ի ցնծութիւն ամենեցուն, այլ մանաւանդ արքեպիսկոպոսին Իլվովայ՝ Տարնովսկեայ և համօրէն հոգևոր Վարչութեանն կաթողիկաց, (զորոց զախտս յանկուցեալ էր նորա յինքն)։

Ոչ սակաւ ուրախացան ընդ այս և աշակերտքն պապական վարժանոցին, որոց ծանրաբեռն յոյժ թուէր լուծն Տ. Գալանոսի, մանաւանդ վասն սղութեան կերակրոցն և կարի խնայողութեան նորա։ Յայս իսկ սակս զամ մի փախեան աշակերտք ոմանք ի վարժանոցէ անտի ըստ հաւանութեան և ըստ գրգման արքեպիսկոպոսին Հայոց, այլ ածան անդրէն ի վարժանոցն։ Արդ ակն ունէին նոքա դիւրագունից կարգաց ընդ իշխանութեամբ երիտասարդ տեսչին, որոյ բոյսք բարուց նորա ամոքագոյն իսկ էին և համբոյր։ Այլ սակաւիկ մի վրիպեցան նոքա ի յուսոց իւրեանց, զի և Սկզյախիոս խնայասէր էր հանգոյն Գալանոսի։

Սոյն այս Սկզյախիոս խստիւ պահպանեաց զկարգ և զբարեկարգութիւն, որպէս հաստատեալն էր Տ. Գալանոսի, (միայն նորեկ ընկերքն նորա մուծին փոփոխութիւնս ինչինչս) և բարւոք օրինակաւ իւրով և փութաջանութեամբ, սիրելութեամբն և ազգի ազգի հոգածութեամբ յինքն շահեցաւ զսէր և զսիրտ աշակերտացն։ Ինքն ընկալաւ զպետակ վարչութեան առաքելութեանն, և յետ բազում ճգանց հուսկ ուրեմն հնարեցաւ տալ ձեռնադրել զԳրիգորիոս Ալսամովեան, որում հակառակ էր Տ. Վարչութիւնն Հայոց, և կարգել զնա աւագ երէց Ստանիսլաւով քաղաքի. եւս հրամանաւ վարել զ՝ ի վերայ յիշատակեալն կրօնաւոր, զինքնամանն Արմէօն և հուսկ ապա ընկալեալ զհարկաւոր նամականին ի նուիրակէն Պրգնատելեայ և զթոյլատուութիւն թագուհւոյն Մարիամու Լուդովիկէի Գազզեացւոյ՝ ճնշեաց զարքեպիսկոպոսն վեհերոտ, զի փութասցի ելանել յուղևորութիւն ի Կամենեց։

Եւ ահա ի 27-րդի աւուր Յուլիսի յիշատակեալն 1666 ամի, արքեպիսկոպոսն Նիկոլ յուղի անկաւ յԼվովայ բազմութեամբ սպասաւորաց, յորոց կարգի և փոխանորդն Հայոց և Հ. Պիտու, փոխանակն անուշեն, և չորեքին աշակերտք պապական դպրանոցին, զորս ընտրեաց և էառ ընդ իւր Հ. Պիտու յաւագագունիցն, զի մի խռովութիւնս ինչ յարուսցեն, յորժամ ի բացեայ ինքն իցէ. իսկ զղեկավարութիւն դպրանոցին յանձն արար քահանայի ումեմն Հայազնի Կոստանդնուպոլսեցւոյ՝ Յակոբու Գրիգորեան, որոյ աշակերտեալ էր նորին Հ. Գալանոսի և ուսեալ ի դըպրոցի Ուրբանեան, պատանի փոքր յառաքինութեան և ջեռմեռանդն կաթոլիկ։ Ի սկզբան անդ թեթևամիտ էր նա սակաւ ինչ և յեղյեղուկ, իսկ այժմ ահա ամք երկու են, յորմէ հետէ հրաժարեալ նորա ի կարգելոյն նմա ի Ս. Ժողովոյն ի թօշակէ 12 դահեկանաց ամի ամի՝ շրջի ընդ Բելճիգա և ընդ Իտալիա։

Եկաց Թեաց արքեպիսկոպոսն առ ժամանակ մի յԾագլովեց քաղաքի, ուրանօր անուանեալ երևելի էր գայնու ժամանակաւ, և ժողովուրդն հանդերձ դասու եկեղեցականաց ընկալան զնա մեծաւ հանդիսիւ։ Յանձն արար տեղակալի իւրում այլ կրանել եկեղեցեացն, իսկ սա հանդերձ փոխանակաւ անուշեն ճշգրտօրէն զիւր պաշտօնս կատարեաց, մեծանելով բարի բարի կարգս, մերժելով զմոլորութիւնս ի կատարման խորհրդոց և ի գիրս եկեղեցական պաշտամանց. Եւ եկեղեցականաց զիւղն օրհնել փոխ օծանելոյ զմեռոնոյ. և խոստի հրաման եղ ի վերայ կատարել զայս խորհուրդ, որ առ Հայս առ սակաւ սակաւ անտես ուրեմն լինէր։

Իսկ յետ տօնի Այլակերպութեան Քրիստոսի, որ ըստ ծիսի Հայոց ի կարի հանդիսաւոր տօնս է համարեալ՝ մեկնեցաւ արքեպիսկոպոսն ի Կամենից։ Ընդ առաջ ելին նմա իբրև մղոնաւ միով արտաքս քան զքաղաքն եկեղեցականք, իշխանք քաղաքին և պատանիք Հայոց կառօք և երիվարօք, և այսր ամենայնիւ փառաւոր էր մուտն ըստ բազմութեան, ըստ կարգի և շքեղութեան։ Իբրև ողջունեցին զնա բազումք ըստ սովորութեան Լեհաց, ձայնելով իւեղու Թաթարաց

և ի Լեհաց՝ ածին առն զարքեպիսկոպոսն մեծաւ փառաւորութեամբ յապարանսն, զոր պատրաստեալ էին նմա մերձ յեկեղեցին Հայոց յանուն Ս. Նիկողայոսի։ Եւ քանզի 12-րդ օր էր Օգոստոսի և նախատօնակ Վերափոխման Ս. Աստուածածնին՝ էջ նոյն արքեպիսկոպոսն յեկեղեցի, և հրամայեաց՝ զի ըստ ամենայն ուղղութեանց կատարեսցին պաշտամունք նախատօնակին այնր տօնի, որում աշակերտք միայն Հռոմանդեցան պապական դպրանոցին և քահանայք, եկքն յԵւրոպայ, յՆապոլիցէ և յայլոց տեղեաց. իսկ ուխտ եկեղեցւոյն Կամենից քաղաքի լռեալ առ հասարակ։ Դարձ արարեալ արքեպիսկոպոսին ի տուն՝ պատուէր հրամանի եդ ի վերայ երկուց քահանայից, զի ընդ առաւօտն զպատարագն մատուսցեն ըստ ուղղագրեալ ծիսի. բայց սոքա ոչ միայն ոտնհար եղեն հրամանի նորա, այլ ըստ պայմանի ուխտին, որ ընդ եկեղեցականս և ընդ վարչութիւնն Հայոց ստացեալ յառաջ քան զգալուստ արքեպիսկոպոսին՝ ընթացան առ դատաւորն, և սոքա անդէն և անդ չոգան առ արքեպիսկոպոսն և աղաչանօք, լացիւ և յուսադրութեամբ բարեկաջող եկեց գործոյն ընկալան եռօրեայ միջոց հաշտութեան։

Իսկ թէ առ ինչ փախձան նպատակի զանկախութիւն գործոյն խնդրեցին՝ այս յայտնի եղև ի չորրորդում աւուր։ Քանզի եկին ժողովեցան առ արքեպիսկոպոսն և յայտ արարին, թէ կամին ըստ ամենայնի հաւատարիմ մնալ միաբանութեանց հարցն իւրեանց, և ոչինչ փաստս ապացուցի բերէին ի մէջ, այլ յամառեալ անդէին ի կարծիս իւրեանց, թէ զոր ինչ ի նոցանէն պահանջէին՝ այն ամենայն կամ նորամուծութիւնք էին, ամենեւին խոտելք ի հարցն իւրեանց, կամ մանրակրկիտ ծէսք են Լատինացւոց ընդունայնք՝ որ ոչինչ մասն ունին ի Միութեան հաւատոց, կամ թէ անմիտ և շաղփաղփին հնարաւանք իցեն այնքիկ արքեպիսկոպոսին և քարոզչացն, այլ ոչ պապին կամ թագաւորին։ Աստի ակն յայտնի երևի, թէ կեղծեօք միայն զՄիութիւն եկեղեցւոյ ընկալան նոքա։ Առ այս ամենայն բարւոք պատասխանի արար արքեպիսկոպոսն. ի թիկունս հասանէր նմա և փոխանակն տեռչին, որ յանդիմանէր Հայոց, վերծանելով ի գրոցն

Գաղանոսի, զոր ընդ իւր ունէր՝ վկայութիւնս ի հայց ե-կեղեցւոյն Հայոց։ Այլ նոքա ոչ խնամային և ոչ տեղի ևս տային, ագխտանալով զգլոց լեզուն իւրեանց միանգամայն և զաշխարհիկն, քանզի զլեզուն Թաթարաց ևեթ արկանէին ի կիր, խառնելով ի նա բառս լեհականս։ Հարկ եղև (կաթոլիկաց) և այլ ևս ուրուք ինչ առկախել զգործն, զի մի յանդիմանեսցին, թէ չէք ի նոսա հեղութիւն առաքելական ի գործի հաւատոց։

Իսկ փոխանակն տեսչին գնացեալ ի Հ. Վարչութիւն Լատինացւոց՝ խնդրեաց յանուն Ս. Աթոռոյն, զի մատու-ցեն նմա օժանդակութիւն յայնպիսում ծանրագոյն գործի։ Եւ առդէն իսկ խոստացան նմա զոր խնդրէրն, ի ձեռն դե-կանին Լեշչինսկեայ առն ճարտարախօսի, որ փոխանակ ամե-նեցուն խօսեցաւ, և սահմանեցին պահել զայն խնդիր ի դիւա-նի կառավարութեանն ի յիշատակ յաւիտենից։

Այլ առաջնորդն Հայոց միաբանեալ ընդ միմեանս՝ յա-պաղեցուցանէին զգործն հնարիւք խորամանկութեան և կեղ-ծաւորութեան, առ այն զի արքեպիսկոպոսն ոչինչ օգնեալ և ոչ այլ ևս համբերել կարացեալ յապաղմանցն և ծախուցն, առ որս վասն բազմութեան ազատաւորացն ոչ բաւէր քանակ դրամոցն, զորս տայր նմա ժողովուրդն ըստ պայմանին և տաղտկել ևս իսկ՝ թողեալ զնոսա և դարձեալ ի տուն իւր, և մի այնուհետև հաւանեցի եղանել յայնպիսի ուղևորու-թիւն դժուարին։ Վասն այսորիկ և բազում անգամ առէին Հայք ցփոխանակն տեսչի, թէ ոչ միայն չէ նպաստաւոր, այլ մանաւանդ վնաս մեծ լիցի միութեան համօրէն ազգին Հայոց. զորմէ Ս. Աթոռոյն է ջանալ՝ եթէ վասն այնպիսի ուղղու-թեանցն, յանարար մուծելոց ի մի միայն քաղաք զայն ինչ հայազն ժողովրդեամբ՝ խէթացի կաթողիկոսն Էջմիածնի, որ յոյժ յարգէ զպապն և հանդերձեալ իսկ է եղանել ի Հռովմ և յայտնել պապին զհպատակութիւն իւր, (կեղծիք սովորա-կան էր այս առ ի ցուցանել, իբր թէ կաթոլիկ իցէ կաթողի-կոսն). եթէ ուղղութիւնքն մուծցին զանխուլ ի նմանէ՝ (ի կա-թողիկոսէն), ոչ բարիոք լիցին հետևանքն. այլ ընդհակառակն, եթէ գրեսցեն առ կաթողիկոսն և առ ժամանակ մի յա-

պաղեցին ձեռնարկել զգործն՝ յոյս մեծ է, թէ ոչ միայն զեր-ուլի հաճութիւն իւր տացէ կաթողիկոսն ի սուղ ժամանակի, այլ պարտաւոր այսու սիրելութեամբ նոցա՝ յարեւելս եւ զնոյն հրաման տացէ, նախ քան զուղեւորելն իւր (ի Հռովմ)։ Այլ փոխանակին տեսչի քաջ գիտացեալ զխորամանկութիւն նոցա՝ ասէ ցնոսա, թէ ի զուր որոգայթս գնեն իբրեւ թռչնոց. ընդէր կորուսա լեցի ժամանակին. զի կամ կաթողիկ է կաթողիկոսն, կամ չէ. եթէ չէ նա կաթողիկ՝ յապաղելով գործոյն ոչինչ օգտիցին ոչ կաթողիկոսն եւ ոչ նոքա։ Իսկ եթէ կաթողիկ է, որպէս ասեն՝ ապա եւ յետ կատարման գործոյն ընկալցի եւ հաճեսցի ընդ այն, որ ինչ արարեալ իցէ աստ, նա զի եւ ոչ կարէ զնոյն իր հրամայել յարեւելս կամ այլուր, առ եպիսկոպի հերձուածողացն եւ Տաճկաց։ Եւ զայն ինչ հարկ է գիտել, զի այնպիսւոյ հրամանի կաթողիկոսին ծանր յոյժ լիցին հետեւանք, եւ վտանգ մեծ նմա հասանիցէ, քանզի առ հերձուածողս զնա ունիցին (Հայք)՝ եթէ կեղծեաք միայն կաթողիկ եղիցի, կամ մերժիցեն զնա ամենեւին յիշխանութենէ, եթէ հաճեսցի ընդ մեծամեծ ուղղութեանցն։ Իսկ ուղղութիւնքն, զորս ժտէ արքեպիսկոպոսն՝ ոչ միայն չեն նորամուծութիւնք, այլ եւ փարատումն է հնաւանդական նորամուծութեանց եւ մոլորութեանց. քանզի ոչինչ նոր ի նորոյ մուծանեն նոքա ի նիւթս, այլ զոր ինչ ուսուցանէր Քրիստոս եւ զոր ունէր միշտ համօրէն եկեղեցին ի ժամանակաց անտի հետէ առաքելոցն։

Ընդ լսման սահմանեալ ժամանակին, յորժամ Հայք նոր ի նորոյ այլ եւ այլ պատրուակօք ջանային այլ եւս յերկարել զժամանակն՝ սրամտեալ բարկացաւ արքեպիսկոպոսն, եւ իբրեւ ետես, թէ ի խաբս արկաւ մնասցէ ի փաստաբանէ ուժգնէ, որ պնդեալ էր յոյժ եւ ջերմեռանդն ի պաշտպանութիւն նախնի օրինացն իւրեանց՝ կոչեաց զնա առ ինքն ի ձեռն արքունի գործակալին, որ երեցփոխան էր ի ժամանակին, զի թէպէտեւ երկիւղ ի նա արկցէ բանիւք սպառնալեաց, բայց ոչ որպէս յուսայրն՝ այնպէս եղեւ. քանզի այնքանի եռանդեամբ ջատագով եղեւ գործոյն փաստաբանն, զի յանձն առեալ զգործ պաշտպանութեան Հայոց՝ մերձեցաւ

առ արքեպիսկոպոսն և ծանր բանիւ խնդրեաց ի նմանէ յետս կալ յամենայն բռնութենէ, զի մի՛ հարկեսցին գաղթել այլուր, նա զի նոքին իսկ են հաւատարիմ պահանորդք ամրոցին այնորիկ կարեւորի, առ կասկածելի հաւատարմութեան Ռուսաց։

Զմի և զնոյն խնդրեցին և Հ. Վարչութիւնն Լատինացւոց և փոխանակն տեսչի վասն այլոց պատճառաց. այլ անողոքն Նիկոլ յայն միայն հայեցեալ, թէ զետեղ փութով դարձցի ի տեղի իւր՝ ոչ անսաց նոցա, այլ բազում հնարիւք կոչէր առ ինքն ի տուէ և ի գիշերի զօրս ի քահանայից ամոքագոյնս համարէր և երկչոտս, և զօրն գործէր խոստամամբք զնոսա յինքն յանկուցանել. և իբրև հաստատեալ գնդեցան նոքա ի միտս իւրեանց և ոչինչ զանգիտեցին ի սպառնալեաց կարգընկէցս զնոսա առնելոյ, (զոր և արար իսկ Նիկոլ) այլ անդէն ի նմին յայտ արարին, թէ ոչ երբէք հաճեսցին զպատարագն ըստ ծիսից Լատինացւոց մատուցանել՝ փոքր մի և ևս և ի յայտնի խռովութիւն յանգէր գործն։ Զի տպագրեալ փաստաբանն ի հրապարակի անդ, թէ «Եհա բանաբարեն զմեզ. առ արքայ բողոքեմք, առ արքայ բողոքեմք»։ Իբրև ծանեաւ փոխանակն տեսչի հանդերձ Հ. Վարչութեամբն, թէ այլով եղանակաւ պարտ իցէ գործել՝ խոստումն ետ, զի խնդրեսցէ յարքեպիսկոպոսէն ամոքագոյնս ընդ եկեղեցականս վարել և մի ևս գործել բռնութիւն, և զլով յայտնեաց, (քանզի քաջ գիտակ իսկ էր, թէ վայելեն Հայք Լեհաստանի յազատութիւն խղճի և կրօնից) թէ հաճ է ինքն ընդ այնպիսի Միութիւն եկեղեցւոյ, զոր ընկալեալ է այլոց քաղաքացն, և զի թողեալ զարքեպիսկոպոսն՝ փութապէս եկեց ի Վարշաւայ առ ի հաղորդս առնելոյ զարքայ և զնուիրակն պատճառացն անյաջող ելից գործոյն։ Եւ այս իրրև պատասխանի ետուն Հայք, (երկուցեալ զի մի զպատունութիւնան կորուսցեն, որ տուեալ էին նոցա յազգս գործոյ միութեանն), թէ և նոքա ի Միութեան եկեղեցւոյ են՝ յանդիմանեաց Եպիսկոպոս, թէ չէ հնար Միութեանն լինել առանց ուղղութեանցն անհրաժեշտից։ Հուսկ ուրեմն հաւանեցան ամենեքեան, և իշխանքն և եկեղեցականք՝ երթալ

առ արքեպիսկոպոսն և արժանաւոր մեծարանօք խնդրել ի Նմանէ, զի ամրագոյնս ընդ Նոսա վարեսցի և զի միարան ջանիւք զկնի հնարս խնդրեսցեն զհաշտութեան։

Մեծայոյսք էին Ռուսք ի բարեհաճութիւն արքունեացն, քաջալերեալք յարքունի գործակալաց, զգործն անդխտացելոյ. վասն այսորիկ իբրև անտես արար արքեպիսկոպոսն ըղ-յաճախակեն Նոցա զխնդիր, զի տացի Նոցա թոյլ գրել առ կաթողիկոսն՝ պաղատիլ սկսան առ Նա, զի տացէ Նոցա իրաւունս գրելոյ առ Թագաւորն և խնդրելոյ ի Նմանէ պատասխանի հրամանաց, որում անտարտունջ հնազանդել ուխտեցին։ Ի սկզբան անդ անախորժ թուեցաւ յոյժ Նիկոլի այս տաջարկութիւն, որում և ոչ հաւանել իսկ կամէր, այլ քանզի և Ռ. Վարչութիւնն և Ալգյախոս հաճ էին ընդ այն բան, որպէս զի միջոց անխափան վարկանէին զայն առ ի յաջողուած գործոյն, յաղագս շնորհացն արքային և բարեհաճութեան Թագուհւոյն՝ հաւանեցաւ և արքեպիսկոպոսն, և երկոքին կողմանքն ձեռն արկին իսկոյն ի պատրաստութիւն թղթոց առ Թագաւորն և առ Նուիրակն և առ բարեկամս իւրեանց։ Այլ իբրև լուաւ արքեպիսկոպոսն, թէ դատաւորքն Ռուսոց հանդերձեալ են առաքել ի Վարշաւայ ոչ միայն թուղթս, այլ և խորհրդականս երկուս հանդերձ ընծայիւք հակառակ պայմանին իւրեանց՝ զայրացեալ սրտմտեցաւ և մերժէր իսկ անշուշտ զկնեալն երկուստեք զուխտ պայմանին, բայց ի դէպ ժամանակի ժամանեաց փոխանակն տեսչի, որոյ ժողովեալ ըղ-Ռ. Վարչութիւնն, խափան եղև մերժելոյ զմիաբանութիւն կողմանցն՝ թէ արքունուստ ընկալցին զվճիռ գործոյն, քանզի կարի յուսացեալ էր յարքունիս և ոչ համարէր, թէ բարեհաճ նա լիցի վասն ընծայիցն, առ որս, որպէս ասաց ոմն ի Ռուսոց, ծախեալ էր Նոցա ոսկիս քանի մի հազար։

Այլ արդ Ռ. Վարչութեանն լաւ համարեալ զգուշաւոր լինել ընդ այնպիսի մարդկան և ի Վարշաւի, զի մի առ չափազանցն փառահութեան իւրեանց վասնզի ինչ ծագեսցին՝ խորհուրդ ետ արքեպիսկոպոսին և փոխանակին տեսչի, քանզի առաքեն արդ Ռուսք պատգամաւորս, որպէս զի աշխատ լիցին վասն ընդհանրական գործոյն, առաքեսցեն և

նորա այր մի, որ կարող լիցի ճշտիւ բացատրել զայնպիսի գործ անհրաժեշտ արքային և իշխանացն, վաստակեցի վասն ցանկացեալն կատարածի գործոյն և ընկալցի զհրամանն արքունի։ Իբրև բանք եղեն զանէն, զոր ունէին ընտրել յայն ուղևորութիւն կարևոր՝ ամենեքեան առ հասարակ զաչս իւրեանց ի փոխանակն դարձուցին տեսչին. այլ այսմ խափան եղև զեկանն Լեշչինսկի, և յոյժ ի դէպ, (զի յայտ արար նա համարձակ, թէ ոչ կարի հաւատայ նա ի միամտութիւն արքեպիսկոպոսին և տարակուսի իսկ, զի մի ընդ հեռանալն Նիկողայ, հաշտեսցի ընդ Հայս և խաբեսցէ զԼատինացիս), և առաջի առնէր նոցա ընտրել յայն պաշտօն յիշատակեայն ի վերայ զԳրիգորիոս Բալասանովեց, որ սակաւ մի ժամանակաւ յառաջ ձեռնադրեալ էր քահանայ, աշակերտ Գալանոսի, այր երևելի ի գիտս և ի նախանձաւորութիւն, որում և Նիկողոս ետ արծաթ ի պէտս ուղւոյն։

Խորհրդականքն Հայոց յուղի անկան միով կամ երկու աւուրբք յառաջ քան զԲալասանովեցն, այլ առ յառաջնոց քան զնոսա, յորժամ յամեցին նոքա ի Պոլշայի քաղաքի առ հեթմանին Պոտոցկեայ, խնդրելով ի նմանէ թուղթս յանձնարարութեան, և ժամուք ինչ յառաջ ժամանեալ ի Վարշաւայ և զառաջինն զթուղթն առ թագուհւոյն, նուիրակին և այլոց իշխանացն, (քանզի բացակայ էր թագաւորն)։

Այն ինչ երկուստեք աշխատ լինէին պատգամաւորքն փութաջանութեամբ յաղագս գործոյն, յանձն նոցա եղելոյ՝ վասն բարեյաջող կատարածի նորին կատարէին մաղթանք ի տեղիս տեղիս, այլ և յԼվով քաղաքի, ըստ պատուիրելոյ արքեպիսկոպոսին Տարնովսկեայ, որ հրամայեաց կախել ի խորանս եկեղեցեաց ծանուցումն և խնամով յանձն առնել զայս գործ հոգևորական զաւակն իւրում. իսկ յորժամ բազումք, և մանաւանդ քահանայք Հայոց այլոց քաղաքաց յերկիւղի էին, զի մի յաղթանակեսցէ ժողովուրդն Կամենիցի, քանզի յայնժամ խափանէր Միութիւն ժողովրդոցն այնոցիկ, որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին, նա մանաւանդ, եթէ լինէր թոյլտուութիւն ժողովրդեանն Կամենիցի յարատևել ի հերձուածին, և յորժամ փոխանորդն և արքե-

պիսկոպոսն ըստ երկչոտութեան մտացն զերազմն իւրեանց ըստ սովորութեան մեկնաբանէին իբրև կարի չարագուշակս՝ յայնժամ զայս ինչ կարգեցին, զի քննութիւն արասցեն եկեղեցւոյն։ Որոշեցին կազմեցին ատյա մի ըստ միոջէ, թէ զինչ այն ինչ իցէ, զոր արժանն իցէ ուղղել. և ի վերայ այսր ամենայնի մեծին ուղղութիւնս բաղումս ի մատեանս եկեղեցականս, զի ամենայն ինչ պատրաստ լիցի ի ժամ վերադարձի Բուլամոզլեշին հանդերձ յուսացեալ հետևանօքն, որպէս զի անդէն իսկ յուղի եղցին յԼվով։

Ի թիւս այլոց և այս ինչ ըստ կարծեաց նորին իսկ արքեպիսկոպոսին պէտս ունէր փութանակի լիակատար ուղղութեանց, զի էր ուխտ միանձնուհեաց Հայոց, հիմնեալ թոյլատուութեամբ դատաւորացն Հայոց, այլ չէին նորա ոչ սահմանք և ոչ կանոնք, ոչ երգատունք և ոչ վանահայր, և ոչ պահէին զօրէնս միայնակեցութեան և յաճախակի հաղորդութեան Ս. Խորհրդոցն, համանգամայն ասել՝ ոչինչ էր այնր ուխտի, որ արժանաւորն լինէր կոչման իւրում, այլ ընդհակառակն վնասակար էր, քանզի անդադար կագիւ և կռուով և դարտվիլի հաղորդութեամբն ընդ օտարաց յարուցանէր գորատունջ անձանց բարեպաշտից։

Վասն այսորիկ կարգեցաւ քննութիւն և եղև հրաման սաստիկ՝ զի ցրուեսցին միանձնուհիքն և երթիցէ իւրաքանչիւր առ ծնողս իւր. այլ նորա կացին մնացին անդէն, քանզի որ վանամայրն էր ուխտին, իբրև մատոյց առ այցելուն մատանի մի մեծագին, (որպէս պատմեաց հայրն այր ոմն) մեղկացաւ նա ի խստութենէն և տեղի ետ միրիկն, թէպէտև կարի հակառակեցաւ Նշյխանոս այնմ զօշաքաղութեանն։

Իբրև փոյթ ապացուցի այսպիսի զօշաքաղութեան մերթ է բերել ի նեղքս և զայն, որ ինչ պատահեացն յԼազովից քաղաքի, ի ժամանակս գալստեան արքեպիսկոպոսին անդր Ալան ի տնավաճառի անդ զվարդապետ ոմն Հայոց յարևելից, որոյ զգեցեալ հանդերձս վաճառականի, ի վաճառականութիւն էր պարապեալ։ Արգել զնա Նիկոլ ի կալանս և սպառնալիս պատժոց խստագոյնս եդ ի վերայ. բայց սակայն արձակեցաւ վարդապետն, քանզի ետ արքեպիսկոպոսին գումար

մեծ արծաթոյ, և կաշառեաց զպահապանսն և զդատաւորս, զծառայս և զնոյն ինքն զփոխանորդն, (թէպէտ և հեղոյր առ բազում արտասուս ի ժամ պատարագի)։ իսկ Նղյի-սիոս և Բալասանովեչ և այլ աշակերտքն արհամարհեցին և ոչ ընկալան զպատարագն ոսկեղէնս, ի մեծ յանդիմանութիւն արևելեայցն։

Ի ժամանակին յայնմիկ պատահեցաւ դիպուած ինչ յորմէ կարող էր գուշակել փոխանակին անուշէ, եթէ հմտագոյն ևս լեալ էր, թէ ո՛րպիսի ոք լեցի ինքն փոխանորդն, եթէ երբէք ընտրեսցի յարքեպիսկոպոսութիւն Իլվովայ։ Զի այն ինչ եկն եհաս նա ի Կամենից՝ ախտացաւ սաստիկ ջերմով, կամ առ վաստակոցն յուղւոյ, կամ առ փոփոխութեան կլիմային․ և քանզի զուրկ էր ի դարմանոց բժշկաց՝ ապաքինեցաւ ոչ կանուխ քան զվերադարձն Բալասանովեչէ ի Վարշաւէ, և վասն խօթութեան իւրոյ այնչափ ահ էարկ յՆղյիսիոս (որ ընդ յարկաւ ուրեք կարի պատշաճաւորաւ, հուպ յաւագ եկեղեցին Հայոց, ուսուցանէր չորեցունց աշակերտացն զաստուածաբանութիւն և զփիլիսոփայութիւն ի լատին և ի հայ լեզուս, այլ և մարզէր զնոսա յառանձինն վիճաբանութիւնս, յորս ոչ սակաւ անգամ այցելէին ի բերկրութիւն սրտի նորա անդամք վարչութեանն և ժողովրդեանն Հայոց) զի կարգեաց աշակերտաց իւրոց ըստ կանոնաց դպրանոցին առանձինն աղօթս և մաղթանս, բաց յաղօթիցն սովորականաց ընդ առաւօտս և ընդ երեկոյս, վասն առողջութեան եպիսկոպոսին։ Եւ թէպէտ ապաքինեցաւ և կազդուրեցաւ նա ըստ մարմնոյ, այլ դուն ուրեք էր տեսանել զնա առողջ հոգւով և շրջահայեաց։ Ձայն եղև երբեմն Նղյիսեայ, թէ հանդերձեալ է արքեպիսկոպոսն առնել ձեռնադրութիւն երից ադիտոց և ապիկարից․ փութայ անդէն առ նա և բանիւք ողոքանաց այլ ակն յայտնի համարձակ յայտ արար, թէ հեռասցի ի գործոցն, եթէ հանիցէ արքեպիսկոպոսն զհոգեորական պաշտամունս յուսկոց անտի և տացէ սրանց այնպիսեաց, և ընկալաւ առ այս ամբ պատասխանի, (զի թէպէտ և ոչ ետ արքեպիսկոպոսն որոշ պատասխանի, այլ դադարեաց յայնմհետէ և առ յապա ձեռնադրել զայնպիսի ոգէս)։ իսկ երբև յետ այ-

սորին չոգաւ Եղիախոս առ փոխանորդն յաջողութիւն՝ յանդիմանելոց զնա խստիւ փոխանորդն առաջի հայ քահանայի միոյ Լվովիցւոյ, Յովհաննու Ներնադովչի, զորմէ բանք եղեն ի վերոյ. գրովելոց զնա թէ մեծամիտ իցէ և զեկավարել կամիցի արքեպիսկոպոսին և եպիսկոպոսին. և քանզի չէր հնար բանաւոր պատճառօք համոզել զնա առնել՝ արտաքս անտի ել Եղիախոս տխրեալ, երկուցեալ զի մի առ սրտմտութեանն, զոր զայրացեալ էր եպիսկոպոսն՝ դարձցի ջերմն անդրէն վերստին, և վիշտք մեծ լինէին նմա, թէ քանի՜ թիւր էին նախատեալ կարծիք Տ. Գալանոսի զառնէն զայնմանէ: Թէպէտ և ի վտանգի էր փոխանորդն վասն հիւանդութեանն, այլ կարի մեծ ևս վտանգ ժամանեաց յարքեպիսկոպոսն, այլ առ սուղ մի ժամանակ: Զի իբրև դարձ առնէր զամ մի ի խնճոյից առ ազնուականի ումեմն լեհացւոյ՝ կաթուած յանկարծակի եհաս ի նա, մինչ զի և ամենեցուն յոյս հատան ի նմանէ, որոց անդն կային և տեսանէին զշրթունս նորա կծկեալ. այլ ընդ հուպ ապաքինեցաւ անդրէն և ըստ յաջողութեան բաղդի չքացաւ վտանգն հանդերձ հիւանդութեամբն, վասն դեղօրէիցն, զորս ետ նմա ոմն կրօնաւոր յուխտէ բոկոտն Կարմելեանց:

Ի ձեռն է աստանօր գովութեամբ յիշատակել զայս ուխտ բոկոտն Կարմելեանց, քանզի ի գործս Միութեանն Կամենեցւոց ոչ ոք ի կրօնաւորացն պաշտպանեաց փոխանակին տեսչի ջերմեռանդն սրտիւ հանդոյն նոցա, որք հանապազ խընդրէին ի նմանէ, զի՞նչ այն ինչ խորհք իցեն ընդ Հայս և ընդ Լատինացիս, զի ըստ այնմ դիւրին լիցի նոցա աջակից լինել կատարածի Միութեանն կամ պահպանել և ծաւալել զընկալեալն արդէն զՄիութիւն:

Իսկ Թորոսովիչի կատարեալ ի Վարշաւայ օգնականութեամբ Թագուհւոյն Մարիամու Լուդովիկէի (առ բացակայ լինելոյ արքային Կազիմիրայ) և նուիրակին Պիգնատելլեաց զամենայն զոր յանձն առեալ էր նմա, և յաղթահարեալ զհակաճառականսն Հայոց առաջի նորին իսկ նուիրակին և արքունի քարտուղարին Պրեժմովսկեայ՝ յաղթանակաւ դարձ առնէր ի վերջ կոյս ամսեանն Սեպտեմբերի,

բերելով զպատասխանիս Թղթոցն, հանդերձ արքունի հրամանաւ առ եկեղեցականս և առ ժողովուրդն Հայոց, զի յամենայնի հնազանդ լիցին արքեպիսկոպոսին իւրեանց, (և մինչև ցայսօր ժամանակի պահին Թուղթքն ի պապական դպրանոցին յԼվովայ)։ Նաև քանզի դատաւորքն, մանաւանդ որք ի Կամենիցէ քաղաքէ՝ յաճախակի ակնարկէին յայն, Թէ կամել իցէ նոցա ուխտ դաշանց ընդ արքեպիսկոպոսին, (այլ Թուի Թէ յանձնառուԹիւնն իցէ այս, զոր ետ նա կաԹողիկոսին Փիլիպպոսի, զի մի մուծցէ ոչինչ նոր յեկեղեցիս Հայոց) և հանապազ խնդրէին մի այլայլել զտոմար նոցա, որ զմիջոց աւուրց ունէր ընդ հինն և ընդ նորն՝ վասն այսորիկ յաւել Պիգնատելլի ի վերջ Թղթոյն առ Հայս զհետագայ բանսդ. Այլ որ ինչ յուխտ դաշանցն հայի, զոր իբրու Թէ կամել իցէ Զեր, Տեարք, ընդ արքեպիսկոպոսին Հայոց, աղաչեմ զձեզ, զի յղեսջիք զայն առ իս ի Վարշաւայ առ ի քննել և վերահասու լինել, Թէ իցէ ինչ հնար վաւերացուցանելոյ զայն։ Իսկ վասն պահպանուԹեան նախնի տոմարին մի ինչ հոգայք, զի յայսմ մասին ոչինչ փոփոխուԹիւնս արասցէ արքեպիսկոպոսն։ Ըստ այսմ բանի և քարտուղարն գրեաց։

Իբրև ընկալան զԹուղԹսն՝ աւագանին և դպիրք և քահանայք և դատաւորք Հայոց եդեալ ի գործ զամենայն ճիգն և զջանս առ ի մերժելոյ զհարուածն. զայն յանձանց՝ խորհեցան խնդրել վերստին ժամանակ, զի առաքեսցեն զուխտըն դաշանց ի Վարշաւայ, ըստ պատուիրելոյ նուիրակին և քարտուղարին։ Յուսային զի յայնմ ժամանակի ընկալցին զպատասխանի կաԹողիկոսին, առ որ գրեալ էին Թերևս, և զի առ յերկարման գործոցն ընկճեսցի յամառուԹիւն արքեպիսկոպոսին և հարկեսցի ուր ուրեմն դառնալ յԼվով։ Նաև յաջողէր իսկ արդեօք խորամանկուԹիւնն, այլ խափան եղեն այնմ քահանայք, որոց հաւանեալ էր արդէնք առձկաց, զի ընդ այն երկարուԹիւն ժամանակի հանեալ էր արքեպիսկոպոսին ի նոցանէ զիշխանուԹիւն պաշտելոյ զհոգևոր պաշտամունս իւրեանց. արդ երկպառակեալ նոցա ի դատաւորաց՝ որոշեցան ի նոցանէ, չոգան առ արքեպիսկոպոսն, յայտ արարեալ Թէ կամին հնազանդել հրամանաց նորա։

Խնդացեալ ընդ այս արքեպիսկոպոսին՝ մեծաւ սիրով ըն-կալաւ զնոսա և խոստումն հանդիսաւոր եառ, զի զամենայն զոր ինչ պատուորացն հանեալ էր ի նոցանէ՝ ինքն տացէ նոցա յանձնէ։ Նա և եկաց արդարև ի բանի իւրում, այլ այ-սու միայն խորով, զի առնլով յանձնէ՝ իմանայր զգոյս եկե-ղեցեաց, վասն որոյ կորզեաց հան յեկեղեցւոյն իրեղէնս ինչ արծաթեղէնս, և ոչ դարձոյց յետս, մինչև հատուցին դա-տաւորք Հայոց զարծաթն, զոր առեալ էր նոցա եկեղե-ցականացն։

Վասն այսորիկ ոչինչ այլ ևս յապաղելով, զի մի ազդի-ցէ նոր ինչ ոգին չարութեան՝ ի միւսում իսկ աւուր, որ օր առաջին էր Հոկտեմբերի, ի տօնի Ս. Հերոնիմոսի, Լատինա-ցւոց վարդապետի՝ քահանայք համօրէն կատարեցին զհոգևոր պաշտամունս ըստ արարողութեան Լատինացւոց բայց ի նախագահէ Հ. Վարչութեանն, որում անուն էր Ներսէս, հասեալ ի ծերութիւն իննսնամենի, որ զերկարութիւն ամաց ինչ զադարեալ էր արդէն ի պաշտամանց, այլ և նա յերկրոր-դում աւուր մատոյց պատարագ, զիջանելով յաղաչանս այլոց։ Իսկ փոխանորդին առողջացեալ, ձեռամբ իւրով ուղղեաց զգիրս պաշտամանց և այց եկեալ եկեղեցեացն հանդերձ փոխանակաւն տեղւոյն, ջնջէր զչար սովորութիւնս, ուսուցանէր քահանայից՝ որպէս ուղղորդ զՍ. Խորհուրդն պաշտեսցեն, նա մանաւանդ զՎերջին Օծումն, հանգոյն որպէս յՆազովրեցին արարին։

Յետ ուղղութեանցն մեծելոց յեկեղեցիս և յարարո-ղութիւնս, թուէր ինձ այնպէս՝ թէ աւա լիովին հաստա-տեալ է միութիւն։ Բայց ոչ այսպէս էր արդեամբ, քանզի գոյր միութիւնն միայն ի բարբառի և ի գիրս, այլ խորհուրդք ժողովրդեանն և պատուորացն հնացեալ մեկուսի էին ի նմանէ։ Որոշեցան նոքա և ոչ ևս երթային յեկեղեցիս Հայ-ոց, այլ զնացեալք զմեհին ի Լատինացւոցն, ըստ օրինակի և ըստ թիւր ջանից վանամօր միանձնուհեացն յիշատակելոյ, կնոջ յոյժ սնապաշտի, որոյ կացեալ առ դրունս մայր եկե-ղեցւոյն Հայոց՝ բանիւք և շարժմամբ սարսուցանէր զորս գային։ Հաստատեցին ապա Հայք, զի յաւուրս տօնից և հանդիսաւոր աւուրց երթիցեն ի քաղաքն Մոլդաւացւոց ի

Խոտին, որ հեռի էր ի Կամենիցէ երկու մղոնիւք և աւերեալ էր հիմնովին ի Տաճկաց՝ զի այսու զվրէժս լուծցեն զհարուածոյն, որ ի Թագաւորէն առ նոսա եհաս։ Զայնմանէ միայն էին մէջքն, զի մի խառնիցին ջուր ի բաժակն, զոր ինչ անկրելի գործ վարկանէին և ոչ անսայլին ամենևին ապացուցից և հեղինակաց. այլ ի մեծ փարանս անկան, յորժամ գտեալ եղև ժողովածու հին հայերէն երգոց, ընծայեալ յարքեպիսկոպոսէն փոխանակին նորա, յորում աշկարայ գրեալ էին ի տօնի Ս. Ղուկասու աւետարանչին բանքդ որ զկնի. «Ղուկաս, որ ուսոյց վասն զինուոյն խորհրդաբար խառնելոյ և վասն հացին, զոր խմորոտն կատարէ»։ Որպէս սահմանեաց Աստուած ողորմութեամբ իւրով, զի այր ոք անյայտ (այլ զայս պատիւ փոխանորդն իւր համարի) ետ ի ձեռս արքեպիսկոպոսին զթուղթն յիշատակելոյն ի վերոյ արքեպիսկոպոսին Խոխանեցւոյ Պօղոսի, նուիրակի կաթողիկոսին, զծածկեալն մինչև ցայն վայր, զոր գրեալ էր նուիրակն առ ժողովուրդն Կամենիցի, և նպաստաւոր էր յոյժ առ ի փարատել ի ժողովրդենէն զանհիմն կասկածանսն վասն խառնելոյ ջրոյն։ Եւ այս է պատճէն թղթոյն. *)

Սակայն մեծ էր, թէ ոչ միայն ջանաց փոխանորդն գտանել զայս թուղթ, այլ զի ինքնին զայն գրեաց։ Եւ արդարև, այսպիսի միաբանութիւն յայտնի Քրիստոսի ընդ Բելիարայ, խառնեալ զինւոյն ասեմ ընդ անխառնին՝ շատ է ի վկայութիւն հնարագիտութեան մտաց նորա, որ հայթայթէր նպաստաւոր գոլ երկոցունց եւս կողմանց։ Այլ որպէս և իցէ, ի վեր քան զչափ հաւատալեաց բարեյաջող եղև հրապարակական ընթերցումն թղթոյն յեկեղեցւոջ և կարի ազդեաց ի խորհուրդս ժողովրդեանն, փարատելոյ հանգոյն եկեղեցականացն իւրեանց և յաղթելոյ այլ և այլ եղանակօք, որ և ուր ուրեմն եկն ի միութիւն և դարձ առաւ յեկեղեցիս իւրեանց, թէպէտ և սատան այսմ լինել ի զուր աշխատ լինէին ոմանք ի ծերազգունից, այլ և նոքա ապա

*) Տես ի վերոյ, յէջսն 93 և 93։

հարկեցան հետեւոյ լինել օրինակի բազմութեանն, դէթ ի վերին երեսս, զի մի ի Լատինացւոցն կոչիցին հերձուածողք, որ կարի անհաճոյ էր ի լսելիս նոցա։

Արդ յաջող լեալ Միութեան ժողովրդեանն Հայոց Կամենիցի ընդ Հռովմէական Եկեղեցւոյն ի 4-րդի աւուր Հոկտեմբերի 1666 ամին՝ ողորմութեամբ Տեառն կատարումն եղեւ միութեան համօրէն Հայոց բնակելոց ի սահմանս պետութեանն Լեհացւոց, շնորհիւ աջակցութեան երանելի Թագուհւոյն Մարիամու Լուդովիկէի և անխոնջ ջանից նորին սրբութեան Նուիրակին Պիգնատելլեայ։

Զկնի փառաւոր սխրագործութեանս այսորիկ դարձ արար արքեպիսկոպոսն յԼվով ի 16-րդի աւուր Հոկտեմբերի և խնդութեամբ մեծաւ ցնծութեան ընկալաւ ի Լատինացւոցն և ի Հայոց. անդրէն ի դպրանոցն դարձաւ և փոխանակն տեսչի, որում անհամբեր ակն ունէին աշակերտք, որք տագնապեցեալ էին ի վարչութենէ միւսոյ տեսչին։ Յետ այսորիկ կամ եղեւ Ալեխսայ ցուցանել, թէ զկնի մահու Հ. Գալանոսի ոչ նուազագոյն են յառաջադիմութիւնք դպրանոցին քան զառաջնոյութեանն. վասն որոյ ոչինչ հայեցեալ ի ծախս ուղեւորութեանն՝ ընկալաւ և այլ եւս աշակերտս հինգ, զերկուս յԼվովայ, զերկուս յՆաղոլովեցէ և զմին ի Կամենիցէ, և այսու յաւելան թիւք աշակերտացն մինչեւ ցչորեքտասան։ Երկուք ի նոցանէ ընդ հուպ ելին ի դպրանոցէն, զի ըստ կարի չափու ուսան զբարոյական աստուածաբանութիւն, զլատին և զհայ լեզուս և համեմատապէս հարցաքննեցան։ Նոքա խնդրեաց և էառ հրաման ի Նախանդամէ Լատինացւոց այնր ժամանակի ի Պետրոկովսկեայ, որ յոյժ նպաստէր դպրանոցին՝ զի այլ երկու աշակերտք քարոզեսցեն յեկեղեցիս Լատինացւոց. Թող զայս խնդրեաց յարքեպիսկոպոսէն Նիկոլէ, ըստ առաջարկութեան փոխանորդին, իրաւունս քարոզելոյ յեկեղեցիս Հայոց, և զայս առնէր, որպէս արժան է ասել՝ ոչ վասն բերման ցանկութեան անձին, այլ ըստ խնդրոյ այլոց. և ընդ այս կարի ուրախ եղեւ ժողովուրդն, որ քաղցեալ էր այնմ կերակրոյ։ Վասն այսորիկ ի սուղ ժամանակի շինեաց հիւսն մի ճարտարարուեստ ամբիոն ի մայր եկեղեցւոջն, որպէս ոչ եր-

րէք էր լեալ ցայն վայր, քանզի ոգէտ վարդապետք Հայոց (և այն սակաւ անգամ) զառաջեալսն իւրեանց պատմէին կալով ի միջոցի բեմին և յեցեալ ի ցուպ: Նորին իսկ փոխանակին տեսչի ի քանի մի նուագս քարոզեալ էր ըստ հրամանի Տ. Գալանոսի նովին եղանակաւ, այլ փոխանակ ցպոյն յեց կալով ի գրակալն, յորոյ վերայ ընթեռնուն հասարակօրէն զԱւետարանն և զԹուղթս առաքելոց: Իսկ որ նորընծայ քարոզիչքն էին՝ վասն հանապազօր վարժից յայնպիսի կատարելութիւն հասին, զի և Լեհացիք ի պատուի մեծի ըզնոսա ունին մինչև ցայսօր ժամանակի:

Ի վերջ կոյս 1666 ամին եկին ժամանեցին յԻտալիոյ քարոզիչք երկու նոր, Տ. Անջէլոյ Պիկիրատի ի Ֆերրարայ և Տ. Ֆրանցիսկ Դարիոյ ի Վենետիկէ, երկոքին ի հասակի 25-ից կամ 26-ից ամաց, հանդիսացեալք ի բարեպաշտութեան և յուսմունս, նա մանաւանդ Տ. Անջէլոյ. այլ ցաւք են արդարև, զի նոքա որպէս և այլք բազումք, բայց ի հարցն Գալանոսէ, Ալոյիսեայ և Կարացիոլեայ անծանօթք էին լեզուին Հայոց: Դպրանոցն և առաքելութիւնն ի պատճառս այսր օգնականութեան զօրացեալք սկսան բարգաւաճել. կարգեցան յայլ և այլ ժամանակս քննութիւնք եկեղեցեաց Հայոց Լեհաստանի, խոտեցան մերժեցան չար սովորութիւնք, որ զեռ ևս պահէին յառաջնոց ժամանակաց կամ յետոյ վերստին սպրդեցան ի ներքս զենի միութեանն: Լինէին և հանդէսք վիճաբանութեանց ի հայ և ի լատին լեզուս ի խնդրոց աստուածաբանութեան և փիլիսոփայութեան, ի պատիւ Ս. Հօրն Կղեմենտեայ ԺԱ, նուիրակին Պիգնատելլեայ, արդի արքայորդւոյն Յակովբայ Սոբեսկեայ, արքեպիսկոպոսացն Տարնովսկեայ և Թորոսովիչի, փոխանորդացն ծխիցն Լատինացւոց և Հայոց, այլ և բազում զօրավարաց և իշխանաց. անօրինակ էր տեսիլն առ հասարակ, ընդ որ բերկրէին և զարմանային՝ ուր տեսանէին: Բազումք յաշակերտելոցն ձեռնադրեցան ի քահանայս և առաքեցան գրեթէ յամենայն քաղաքս պետութեանն, յորս բնակեալ էին Հայք, որպէս ի Ստանիսլաւով, ի Լուցկ և ի Զամոստիէ, յՅազլովից և ի Կամենից. ընդ սմին և Թիւք աշակերտացն յաւելան մինչև ցերկոտասան և ցչորեքտասան:

Այն ունէր արքեպիսկոպոսն Նիկոլ առատաձեռն պարգեւաց վասն վաստակոց իւրոց ի գործի անդ միութեանն. բայց որովհետեւ դժուարին էր գոհացուցանել զնա, զի չեղեւ հնար տալ կարգել նմա թոշակ ի պետութեանն, թէպէտ եւ գրեաց յայս սակս Ս. Ժողովն Տարածման Հաւատոյ առ արքայն Կազիմիր (այն է Յովհան Կազիմիր), եւ քանզի ինքն ոչ էր արժանի շնորհաց, այլ վարէր կեանս զեղխութեան եւ շուայտութեան ըստ առաջնում կարգին՝ խորհուրդ արարին ի Հռովմ, զի կոչեսցեն զնա պատուով անդր, եւ մի արձակեսցեն յետս յԼեվով, մինչեւ տացէ յոյս անխաբ ուղղութեան բարուցն: Այլ յառաջագոյն զփորձ առնուլ կամեցան, թէ թերեւս հնար ինչ լիցի ամոքագոյն եղանակաւ ածել զարքեպիսկոպոսն յուղղութիւն. վասն այսորիկ բազում անգամ երթային առ նա հարքն թախանձագին խնդրով: Ազդ արարին արքեպիսկոպոսին Տարնովսկեայ, զի առ մեծամեծ վաստակոց արքեպիսկոպոսին Թորոսովիչի ի գործի հաւատոց եւ եկեղեցւոյ՝ զգուշաւոր լիցի ըստ կարի եւ խափանիցէ զամենայն խոչընդոտն, զի թերեւս առատ առատ պարգեւօք յանկուցանիցեն զսիրտ Նիկոլի առ Ս. Հայրն եւ առ Ընդհանրական Մեծութիւնն: Ըստ այսմ խորհրդոյ պատուէր ետ Նուիրակն Պիգնատելլի՝ որոց առաքեցանն յԼեվով ի կողմանէ հասարակապետութեանն Լեհացւոց վասն հաւատակաց գործոց, եպիսկոպոսացն սահմ Պերեմիշլի եւ Կուլմանի, եւ նախանդամին Պետրակովսկեայ, որ աւագ [illegible] է զարգիս, եւ այլոց: Այլ ձեռնունայն դարձան նոքա ի ջանս իւրեանց. քանզի իբրեւ մեռաւ առաջին տարփածու Նիկոլի, որոյ ոսկերք ընդ երկար ժամանակ հանգչէին ընդ յարկաւ միով արտաքոյ քաղաքին, ի տեղւոջն՝ յորում շինեալ է այժմ դպրանոցն, հուպ յեկեղեցին Հայոց յանուն Ս. Կուսին գործեաց ազատ, ըստ սովորութեան Սարմատացւոց, որպէս թէ յետ մահուան օրինաւոր կնոջ իւրոյ, եւ ոչ ամաչեաց կոչել յայն եւ զքարոզիչսն. այլեւ եղեալ էր արքեպիսկոպոսն ի մահ թաղել ապա զմարմինն ի նմին յեկեղեցւոջ մեծաւ հանդիսիւ շքոյ: Բայց խռովեցաւ յոյժ ժողովուրդն Հայոց, յայտ արարեալ՝ թէ ոչ ոք ի նոցանէ այնուհետեւ երթիցէ յայն եկեղեցի, եթէ

տացեն թոյլ Հարքն անդանօր զմեռեալն թաղել. վասն որոյ գրեաց փոխանակն տեսչի առ արքեպիսկոպոսն թուղթ ազդու և խնդրեաց ի ձեռն թղթաբերին Հ. Անջէլոյ, զի մի զլզուեսցէ զժողովուրդն այնպիսի անճահ հանդիսիւ յուղարկաւորութեան և մի տացէ զանձն իւր յայն սակս յայպն և ի կատականս համօրէն ժողովրդեան։ Այլ ոչինչ ազդեաց բանն, զի ոչ միայն ոչ արար արքեպիսկոպոսն պատասխանի թղթոյն, այլ կամեցաւ իսկ բռնի պահել զՀ. Անջէլոյ յազգային, յորում էր և փոխանորդն, բայց ոչ յաջողեաց նմա։ Իսկ փոխանորդն թուի թէ ակամայ կամօք արար զայն, թէպէտ և դժուարին է զնա արդարացուցանել, զի յաստուածային գործի հարկ էր խիզախել համարձակութեամբ առնն եկեղեցականի, որ վասն այնր գործոյ ընդունի թոշակ ամ ըստ ամէ ի Ա. Ժողովոյն և արժանաւորեալ է կոչման և իրաւանց առաքելական քարոզչի։ Իբրև անօգուտ եղեն խնդրուածք հարցն՝ այլ միջոցք հնարից ի գործ արկան։ Հրամայեաց նախանդամն Պեասկովսկի յանդիման առնել արքեպիսկոպոսին, զի եթէ սանանիցէ նա իրաւանց մետրապոլտական ժողովոյն Լատինացւոց և ոչ յեկեղեցւոջ Լատինաց թաղեսցէ զմարմին տարփածուին իւրոյ՝ համարս տալոց է առաջի այնորիկ, որ գիտիցէ անշուշտ դատել զնա վասն անարգութեանցն զոր հասոյց, և վասն արհամարհելոյն զբարեկամութիւն և զիշխանութիւն. տեղի ետ ուր ուրեմն արքեպիսկոպոսն ի հզօրագունէն և ի ձայն նուագարանաց և երգեհոնի փոխադրեալ զմարմինն յեկեղեցին Հ. Ռեֆորմատեանց, որ նոյնպէս յարուարձանի քաղաքին էր շինեալ՝ թաղեաց անդ զհամբիշն իւր սիրելի։ Այլ քանզի ընդ հուպ էառ նա առ ինքն փոխանակ մեռելոյն զայլ ոմն կին մանկագոյն իբրև աղախին, ի մեծ գայթակղութիւն ամենեցուն՝ ըստ ազդողական գրգման կարծեցեալն փութաջան փոխանորդին և դատաւորաց ոմանց Հայոց, (որոց թերևս և յառաջագոյն խէթ ինչ էր զարքեպիսկոպոսէն և վասն այսորիկ զպարապս նորա իբրև յանցանս կարևորս ընծայեցուցին յաչս միամիտ և նախանձաւոր փոխանակին տեսչի), զայս ինչ կարգեցին՝ զի զնա հրաժարեցուսցեն ամենևին։ Ոչ դժուարին ինչ եղև Այլեխեայ համոզել զարքեպիսկոպոսն, թէ հարկ է նմա

երթալ ի Հռովմ, քանզի արքեպիսկոպոսն փափկանէր զան-ձըն արժանաւոր յոյժ առատ պարգևաց և ակն ունէր անշուշտ՝ թէ ընդունիցի։ Այլ քանզի արծաթ բազում պահանջէր արքեպիսկոպոսն ի ռոճիկ ճանապարհին և զի կամ էր փոխանակին տեսչի, եթէ հնար ինչ էր՝ ուղեկ-ցել նմա ի Հռովմ առ ի վճարել անդ զգործս առաքելու-թեանն և զգպրանոցին և անձամբ անձին պատմել Ս. կար-դինալացն զբուն վիճակ գործոյն՝ յուղի անկաւ ընդ արք-եպիսկոպոսին ի Կրակով քաղաք, ուր կատարել ունէին հոգեհանգիստ վասն հանգուցեալ թագուհւոյն Մարիամու Լուդովիկէի, և էած զՆիկոլ առ Նուիրակն Պիգնատելլի, զի միաբանեսցին նոքա երկոքեան զորքանութենէ դրամոց ի պէտս ճանապարհին և յաղագս ուղեկցութեանն Եղի-սեայ, որ ցանկալի էր յոյժ։

Յաւուր 26-րդի Սեպտեմբերի ամսեանն յամի Տեառն 1667 եկն ժամանեաց արքեպիսկոպոսն ի Կրակով հանդերձ փոխանակաւն տեսչի, և ի նմին իսկ աւուր եկն անդր ի Սպա-նիոյ (յորում տեղւոջ արքայ էր վանուցն Թէատինեանց) Հ. Յովսէփ Կարացիոլի, ծննդեամբ ի Նապոլի քաղաքէ, զոր Ս. Ժողովն կարգեաց տեսուչ առաքելութեանն Հայոց, և որում ի ժամանակաց հետէ Հայր Եղիսէոս, որ ծանօթ էր նմա անձամբ։ Մաթեմատիկոս էր Հ. Կարացիոլի և ու-սումնական երևելի, այլ և հանդիսացեալ ի բարեպաշտութեան և ի մեծի փութաջանութեան ի փրկութիւն հոգւոց, և յայսմ մասին ոչինչ ընդհատ էր և խոնարհ քան զՀ. Գա-լանոս, որոյ և ընկեր էր ի Հռովմ քաղաքի, յորժամ հիմնե-ցին անդ զգպրանոցն Հայոց, (այս դպրանոց վասն անյաջող ելից գործոցն փոխադրեցաւ յԼվով) և ուսաւ անդ ի նմա-նէ զսկզբունս լեզուին Հայոց։ Ծանուցեալ Նուիրակին զկա-րևորութիւն ուղևորութեանն Եղիսեայ՝ հաւանեցաւ, զի երթիցէ ընդ արքեպիսկոպոսին, որում կարգեաց յետ սուղ ինչ բանակցութեանց դահեկանս հռովմայեցիս հինգ հարիւր ի ռոճիկ ճանապարհին, յաւել և այլ ևս դահեկանս հարիւր, հանելով զայն ի փոխանակէ տեսչին, որ ընկալեալ էր զայն դրամ ի ծնողաց իւրոց ի Գաղղիոյ։ Անկնգիր եղև արքեպիս-

կոպոսն յորդորանաց բանից ալքային Կազիմիրայ, որ յոյժ տեղեակ էր գործոյն, և մնայր միայն արծաթոյն, հանդերձեալ գոլով ըստ ամենայնի յուղի անկանել։ Այլ իբրև ուշի ուշով խելամուտ եղև Պիգնատելլի գործոյն և լաւագոյն համարեաց կալ մնալ հրամանաց Ս. Ժողովոյն, զորս յուսայրն ընդունել զծախուց ճանապարհին և զԱլոյսեայ ուղևորութենէն՝ փոխեաց յանկարծակի զմիտս իւր, ի վերին երեսս ակնարկեալ ի վտանգն, որ ի Թաթարաց և ի խազախաց։ Զի խազախքն բազմութեամբ մեծաւ յարձակեցան յանկարծ ի սահմանս Ռուսաց և վտանգէին անպատրաստ և անզէն պետութեանն. այլ միայն առի ալքայն ըստ սովորութեան՝ սակաւաձեռն զօրու ել ընդ առաջ նոցա, պատնէշ անպարտելի եկաց առ Պոտչայցի քաղաքաւ, յորում ինքն փակեցաւ կամովին և յետ պատուաւոր ուխտի պայմանին կնքոյ՝ մերժեաց յետս զջոկս հինիցն։ Արդ յայս իսկ ի պատճառս յԼվով անդրէն առաքեաց զնոսա Նուիրակն (թէպէտ և տրտնջէին նոքա ի ծածուկ վասն բանին և կարի դժգոհք էին), ասելով թէ չիցէ օրէն հովուին ի ժամ վտանգի թողուլ լքանել զհօտն։

Իբրև դարձ արար Ալոյսիոս յԼվով հանդերձ Հ. Կարացուեաւ յիններորդի աւուր Հոկտեմբերի՝ յանձն արար նմա զփականս առաքելութեանն և զդպրանոցին և մնաց ինքն յայնմհետէ և առ յապա ի պաշտաման փոխանակի տեսչին։ Ուրախ էին ամենեքեան, որպէս և արժանն էր, ընդ գալուստ այնպիսւոյ տեսչի երևելւոյ. բայց ոչ ընդ երկար տևեաց խընդութիւն նոցա։ Յետ տաժանելի ուղւոյն՝ ոչ հանգեաւ ի վաստակոցն Հ. Կարացիոլի և ոչ փոքրեան մի ժամանակի, այլ ջանասիրութեամբ մեծաւ ետ զանձն յուսումն լեզուին Հայոց։ Ոչ ամօթ ինչ համարէր նա, որպէս այլքն, երգել սաղմոս և օրհնութիւնս յեկեղեցիս Հայոց, որպէս զի փութով ևս մարզեսցի ի լեզուին։ Յանկոյց արդէն առ ինքն ըզսիրտ ժողովրդեանն, այլ այս ինչ խափան եղև բարի համբաւոյ նորա՝ զի յոյժ բարեմիտ և ներող էր առ աշակերտսն և թուլացոյց զկարևորն ի Հայս զխստութիւն կանոնաց, զոր մուծեալն էր ի դպրանոցն Հ. Պալմոսի և պահ-

պահել Ներսիսեայ։ Ըստ համբոյր բարուցն իւրոց համարէր Կարապետին, թէ ընդ որս ունիցի վարիլ՝ նոյն արքայքն են Սպանիոյ, և մոռացաւ թէ մանկունք են նոքա Հայոց, մնալք ըստ աշխարհական կարգի։ Որչա՜փ մեծագնի են բազմամեայ փորձառութիւնք ի գործի ղեկավարութեան այլոց։

Որպէս թուի, չէր երբէք հաճ՝ արքեպիսկոպոսն ընդ Տ. Կարապետին, յայն սակս՝ զի ի պատճառս նորա հանաւ տեսչութիւնն յՆերսիսեայ, զոր սիրէրն յոյժ, կամ որպէս համանութեան է՝ յայն սակս, զի ոչ ունէր թուղթ ի Ս. Ժողովոյն առ ինքն, որպէս նախորդ նորա Տ. Գալանոս։ Վասն այսորիկ, քանզի սիրտք նոցա ոչ հաճեցեալ էին ընդ միմեանս՝ դիւրաւ բրդեցան ի հակառակութիւն յայտնի, առ դոյզն մի պատճառաց։ Ի յանձուկ յոյժ շինութեան դպրանոցին, որ կից էր եկեղեցւոյն՝ կամեցաւ Տ. Կարապետին շինել մատուռն, ընդ որ ոչ հաւանէր Ներսիսիս. կալեալ էին արդէն գործաւորքն ի վարձու, յորժամ արքեպիսկոպոսին լուեալ զայսմանէ՝ յայտնեաց, թէպէտ և յանիրաւի, թէ ոչ տայ թոյլ շինելոյ։ Բազում անգամ յայտ արար արքեպիսկոպոսն ի ձեռն փոխանորդին զտրտունջ իւր առ Ներսիսէս, զոր միայն համարէր ինքն, ըստ բանից իւրոց, տեսուչ դպրանոցին, և միշտ զայս պատասխանի առնէր նմա Ներսիսէս՝ թէ Կարապետին է տեսուչ դպրանոցին և զի դիմել հարկ է առ նա վասն գործոյն. ապա առաքեաց արքեպիսկոպոսն քահանայս երկուս առ Կարապետին բանիւք խստիւք և սպառնալեօք, այլ երբև և նոքա արհամարհանօք դարձան յետս՝ եկն ինքն արքեպիսկոպոսն ի դպրանոցն, և նախատեալ զտեսուչն բանիւք հայհոյութեանց՝ հրամայեաց գործաւորացն դադարել ի շինութենէն։ Անկնդիր եղեն նմա գործաւորքն լեհացիք, որպէս առն նշանաւորի, թէպէտ և կրկին չափով վարձս խոստանային նոցա քարոզիչքն Նոյ օգնութեամբ գործեացն, զորս թողեալ էին գործաւորքն, և աշակերտացն, որք ի տուէ և ի գիշերի հանապազ աշխատ լինէին հանդերձ նովին հարբն Կարապետիւ՝ ի սուղ ժամանակի գլխաւորեցաւ շինութիւնն բովանդակ։ Զայրացաւ սրտմտեցաւ յոյժ ընդ այս արքեպիսկոպոսն և ձեռնարկէր անշուշտ հնարս ազդողագոյնս, բայց ըստ

յաջողութեան բաղդի, յետս կացոյց զնա փոխանորդն ի դիտաւորութեանցն։ Այլ քանզի խնդրէր առիթ մի, զի զվրէժն առնուցու՝ նախ արգել աշակերտացն քարոզել յայնմհետէ յեկեղեցիս իւր. առ այս Կարացիոլի առաջի բազմութեան ժողովրդոցն և հովուապետին հրամայեաց աշակերտացն ելանել յեկեղեցւոյն և դառնալ ի դպրանոցն, և ոչ միայն յեկեղեցւոջըն գալ և ոչ մի ի պաշտել զպաշտաւորութիւն Տեառն։ Վասն այսորիկ գիր ամբաստանութեան ետ արքեպիսկոպոսն զհայրցն ի Ս. Վարչութիւնն Լատինացւոց, որում ոչ հաճոյ թուէին վէճքն վասն մատրան միոջ, ոչ կարի պիտանւոյ։ Դրդեաց ապա զժողովուրդն, զի աղաղակեսցեն և ասիցեն ի հրապարակի՝ թէ անօգուտք են ամենեքին հայքն, բաց ի միոյն Եղիսեայ, որ արդարև սիրէ զժողովուրդ իւր։ Վիճակք եղեն վասն գործոցն փոխանակի տեսչին, թէպէտ և ուրախանայր ի սրտին, զի ոչ յաջողեցաւ զոր ինչ ձեռնարկեցին առանց հաւանութեան նորա, այլ ըստ հաւանութեան ընկերաց իւրոց, որք կամէին հաճոյանալ յաչս նորոյ տեսչին։ Եղիսէոս ըստ թոյլատուութեան տեսչին յանձն ընկալաւ զգործ միջնորդի, զի հաշտեցուսցէ զհակառակորդսն. և թէպէտ բազում ինչ ի սկզբան անդ պահանջէր արքեպիսկոպոսն, այլ հուսկ յետոյ կնքեցաւ այս պայման խաղաղութեան՝ զի խնդրեսցէ Կարացիոլի զներողութիւն արքեպիսկոպոսին վասն անզգուշաբար չարախօսութեանն առաջի յիշատակեալ քահանայից զվարուց նորա, զի զնոյն արասցեն և աշակերտքն, որ թէպէտ և անմեղք էին, այլ մասն կալան ի շինութեանն, և զի ամբողջ պահելով զշինութիւնն՝ քակտեսցեն զսեղանն, քանզի անվայելուչ է կազմել սեղան առ քարաշէն որմով, (բայց փոխանակ այնորիկ կազմեցին ապա սեղան շարժական)։ Այլ ամենայն կատարեցաւ անդէն ի նմին ժամանակի, բայց աշակերտացն ոչ ևս եղև հրաման քարոզելոյ։ Եդեալ էր Եղիսեայ ի մտի միջնորդել վասն սոցա, այլ ոչ կատարեաց զխորհուրդ իւր, ըր վասն, այլ և վասն կարի մեծարանաց նորա առ արքեպիսկոպոսն՝ յանդիմանեցաւ նա յընկերակցացն և կասկածելի թուեցաւ յաչս նոցա։

Այն ինչ չքացեալ էին չարիքս այսոքիկ՝ կարի մեծ հա-

սանէր ի դպրանոցն դժբաղդութիւն, որ մինչև ի գահավէժ կործանումն ածէր զդպրանոցն, ի պատճառս մահուանն Կարացիոլեայ։ Անձկութիւն անյարմար բնակութեանն ի խոնաւութ և ի հին շինութեան և ևս առաւելաւ վասն յաւելման թուոյ հարցն և աշակերտացն և վասն անխորհրդաբար շինելոյ հարցն խուցս ի վերոյ և ի ներքոյ այնր շինութեան, որով խափան լինէր ամենևին մտանելոյ մաքուր օդոյն։ Վասն այսորիկ ի 27-ն Նոյեմբերի 1667 ամի յառաջ քան զամենեսեան հիւանդացաւ Ալոյսիոս ծանու ջերմամբ, զկնի նորա Հ. Վարդան, որ յաջորդ է զարդիս, ապա գրեա թէ համօրէն աշակերտքն և հարքն, իբրև ի ժանտ ախտէ ի վերայ հասելոյ, մինչև առողջ մնալ միայն Հ. Անջելոյ (որ և նա ախտացաւ ապա ծանր հիւանդութեամբ) և երից աշակերտաց ըստ նախախնամութեան Աստուծոյ, զի խնամեսցեն զայլս, և յիրաւի անդադար խնամելով զհիւանդսն, անխոնջ վաստակօք և զարմանալի փութով վճարէին զպարտսն։ Ցաւալի էր արդարև տեսիլ պապական դպրանոցին, որ ի միում կամ յերկուս աւուրս փոխեցաւ գրեա թէ յիսկ և իսկ հիւանդանոց, ուստի խոյս տային ամենքեան։ Համարէին Հայք, թէ ժանտ ախտ իցէ այն, իսկ Լատինացիք կասկած անհիմն ունէին զնոցին իսկ Հայոց՝ իբր թէ դեղեալ իցէ նոցա զքարոզիչսն։ Այլ ոչ խափան եղև զնոսա ողորմութիւն Աստուծոյ, որ օգնէ իւրայոցն յամենայն ժամ. զի յետ ծանու ջերմանն և նշանաց խելագարութեան, որով ախտանային առ հասարակ ամենայն հիւանդքն, յետ ամսոյ միոջ անցանելոյ, օգնութեամբ հրէի միոջ բժշկի բժշկեցան ամենքեան առ հասարակ, բայց ի Հ. Անջելոյ, որ անդ ուրեմն հիւանդացաւ և Հ. Կարացիոլեայ, զոր եհան յաստեացս բաղդն, նախանձելով ընդ բարեպաշտ ժողովուրդն, դեռ ևս ի կայտառ հասակի, քանզի ամք 39 էին նորա ի ծննդենէ։ Յաւուր 30-րդի Դեկտեմբեր ամսեանն 1667 ամի վախճանեցաւ այրն, որ յոյս մեծ ազդէր և որ, զի ի ժամանակի բարդաւաճման դպրանոցին հանդիսացեալ էր ի գիտութեան և ի բարեպաշտութեան՝ կարէր ապա ի ձեռն հաւատոցն բազում ինչ մեծամեծս առնել։ Իսկ Հ. Անջելոյ ապաքինեալ ի սուղ ժամանակի յուղարկաւորէր և

նա Թաղմանն Կարացիոլեայ, զորոյ զմարմինն հանգուցին ի մայր եկեղեցւոջն Հայոց հուպ ի սեղանն Ս. Երրորդութեան, Թէպէտ և կամէր նա ինքն, զի յեկեղեցւոջ Դոմինիկեանց թաղեսցի:

Սուղ ինչ յառաջ քան զմահն Կարացիոլեայ, իբրև լուաւ արքայն Կազիմիր զհիւանդութեանցն, զոր Հայքն ախտացան, համարեալ թէ վասն խռովութեանցն ընդ արքեպիսկոպոսին իցեն այնոքիկ՝ առաքեաց առ նա Թուղթ մի ծանր և խիստ, (որոյ պատճէնն պահի ի դպրանոցին մինչև ցայսօր), յորում աշկարայ յայտ առնէ նմա, զի ընդ առանձինն արքունի պաշտպանութեամբ են առաքելութիւնն, դպրանոցն և հայք, և առ յապա եղիցին: Թէպէտ և անագանեաց Թուղթն՝ այլ յետ ժամանակաց նովաւ հնար եղև սանձահարել զարքեպիսկոպոսն:

Յայնու ժամանակաւ, յորժամ կալեալ էին Հայքն ծանու հիւանդութեամբ, յորում կարեկցութիւն և օգնութիւն ունէին պէտս, այլ ոչ չարախօսութիւն և անարգութիւն՝ պատահեաց գիպուած ինչ այսպիսի, զի Լատինացի ոմն, որ կոչեցեալն էր քարոզիչ յեկեղեցւոջն Հայոց, ըստ դրդման քահանայի միոջ Հայոց՝ որպէս կարծեմն՝ կասկածանս ի վերայ հարցն յարոյց, թէ խորամանկութեամբ աղուեսու տիրացան ստացուածոցն Հայոց, մանաւանդ եկեղեցեացն և կալուածոց: Իբրև յայտնեաց Հ. Անջէլոյ Պիվերատի զայս բան նուիրակին, արգել սա իսպառ քարոզել Լատինացւոյն. բայց զկնի սուղ ինչ ժամանակի տուան նմա նախկին իրաւունքն ըստ յօգնաջան Թախանձանաց Նիկոլեայ, որ միշտ խնդրէր՝ զեւրդ սիրելի լեցի ժողովրդեանն: Ըստ այսմ օրինակի ոչ գովելի ինչ գործեաց նոյն Նիկոլայոս լռելով զյանդրգնութենէ այլոյ ուրումն կրօնաւորի Լատինացւոյ, որ առանց պատճառաց և առանց հրամանի չոգաւ փութապէս առ հիւանդ ոմն կին հայազն, վասն մատուցանելոյ նմա ըզվերջին օծումն, Թէպէտ և զայս խորհուրդ յառաջագոյն կատարեալ էր ի վերայ հիւանդին հայ քահանային, որում անկն էր: Յանդիմանեաց սաստիկ Նիկոլայոս զժողովուրդն, յորժամ գտեալ սոցա զկրօնաւորն յայնմ գործի յանցաւո-

րութեան՝ քրթմնջէին զանճահ գործոյ նորա և ոմանք ի նո-
ցանէ անիծանէին իսկ զմիութիւնն։ Այլ եղեն ոմանք, որ ար-
դարացուցանէին զԱղյիսիոս, ասելով՝ թէ ոչ հրապարա-
կաւ էր գործն և ոչ ապացուցեալ, զորմէ յայտ իսկ են ա-
բարեալ փոխանորդքն Լատինացւոց, և զի մարթ էր Աղյի-
սեայ և հարկ իսկ էր յուղ զգործոյն ի պատճառս խաղաղու-
թեան, նա զի և ոչ ի նա իսկ հայէր գործն։

Յամի Տեառն 1668 վասն ցրելոյ զամբաստանութիւնն,
զոր համբաւեալ էր Հայոց ի ժամանակս խռովութեանցն
ընդ արքեպիսկոպոսն և ընդ Վարացիոյն, թէ ոչ ոք ի դըպ-
րանոցին ուսանի, քանզի հայքն առ ոգխտանալ իւրեանց
զլեզուն Հայոց ոչ ուսուցանեն զնոսա՝ հանդիսացուցին աշա-
կերտքն յԹ-րդի աւուր Ապրիլի և յերեսին աւուրսն որ զկնի՝
ողբերգութիւն մի, զոր ըստ յանձնարարութեան տեսչին ա-
բարեալ էր Աղյիսեայ ոտանաւոր բանիւք ի լեզու Հայոց
զչարչարանաց Ս. Կուսին Հռիփսիմեայ ի Հռոմ քաղաքէ,
որ ի Հայս նահատակեցաւ։ Ծանրակշիռ էր այս գործ, յորում
յաւելեալ էին մեկնութիւնք ի լեզու Լեհացւոց։ Ցնծու-
թեամբ կարի մեծաւ ընկալաւ զողբերգութիւնն քաղաքն հա-
մօրէն, Լատինացիք ասեմ և Հայք և Ռուսք, որոց եպիսկո-
պոսք ամենայն և եկեղեցականք հանդիսատեսք էին տեսա-
րանին։ Առանց իրիք ծախուց վճարեցաւ գործն, քանզի ըզ-
նկարէն առագաստս պատրաստեցին նոքին իսկ աշակերտքն, իսկ
զխումբ նուագարանին արդեամբք իւրովք ի վարձու կալաւ
աւագ սարկաւագն։ Փոխանորդն Հայոց այսու յանցաւորիլ
զհարսն համարէր, և թէպէտ ի վերին երեսս գովարանէր ըզ-
գործն՝ այլ զաղտնապէս գրեաց և եցոյց զայն Ս. Ժողովոյն
անդերձ յաւելուածովք և սուտ տեղեկութեամբք, բայց
անձին իւրում նիւթեաց այսու նա չարիս. իսկ հայքն, ընդ-
հակառակն նորին, ընկալան ի սրբազան կարդինալացն հաւաս-
տիս գովասանութեանց։

Քանզի այսպանեալ վարուք կենցաղավարէր արքեպիսկո-
պոսն, և յետ յորդորանաց իսկ խստից նուիրակին ոչ դա-
դարէր ի ձեռնադրելոյ զանձինս անարժանս՝ սրբազան կարդի-
նալն Մարեսկոտտի, որ փոխանակ Պիգնատելլեայ կարգեցաւ

նուիրակ Լեհաստանի՝ մեծաւ ևս պնդութեամբ քան զյառաջագոյնն առաջարկեաց, զի մերժեսցեն զնա ի պաշտօպանէն, որում ոչ սակաւ աջակից եղև փոխանորդն ճարտարամիտ, որ համոզեաց յոյժ յաչս Նորոյ նուիրակին, բարեպաշտ զանձն ընծայեցուցանելով և փոյթեռանդն և ամիսս քանի մի Թղթակցելով ընդ նուիրակին, իսկ առ ի ծածկել ըզհեղինակ Թղթոցն, կնքէր զայնոսիկ օրինական կնքով։ Այլ և Ալյխսիոս, որպէս յանձն առեալն էր նմա՝ յորդոր լինէր առ արքեպիսկոպոսն գնալ յԻտալիայ, բայց խորհուրդ տայր նմա, զի մի յուղի ելանիցէ առանց Նորա։ Իսկ նուիրակն ոչ հաւանէր ընդ ուղևորութիւնն Ալյխսեայ, վասն որոյ անդրէն յերկարէր գործն։ Յուսկ ապա յետ Նորոյ և օգտաւէտ քննութեան եկեղեցեացն Հայոց Կամենեցի և Ստաղովեցի հանդերձ փոխանակաւն տեսչի և հայրն Դարիոյ՝ յանձանօթի ուրումն ի դրդմանէ՝ համոզեաւ արքեպիսկոպոսն յուղի ելանել։ Ս. Ժողովն պատուիրեալ էր Ալյխսեայ տալ նմա ի պէտս ճանապարհին դահեկանս իբրև 600, եթէ ոչ հաւանեսցի առանց դրամոցն երթալ. արդ ըստ երկաքանչիւր հաւանութեան ընկալաւ արքեպիսկոպոսն դահեկանս 500 և անդէն հանդերձեցաւ յուղին հանդերձ երկոքումբք ուղեւորօքն իւրովք երիւք քահանայիւք և բազմութեամբ ծառայից և շանց յամին 1668, որ օր 11 էր Հոկտեմբերի։ Առաքեաց Ալյխսիոս ընդ նմա առանց ծախուց ինչ զՀ. Փրանցիսկ Դարիոյ, որ ամս քանի մի նեղէր տկարութեամբ աչացն և՛ յորոյ սակս բեռն ինչ համարեալ էր առաքելութեանն։

Ի վերջ կոյս ամսեանն Դեկտեմբերի ամին 1668 ժամանեաց արքեպիսկոպոսն ի Հռովմ հանդերձ ամենայն ազխիւն, որ էին արք 20 և երիվարք 21, զոր սիրով ընկալաւ սրբազան կարդինալն Կոլոննայ, որ քարտուղար էր Ս. Ժողովոյն ի ժամանակին։ Ետուն նմա բնակարան գեղեցիկ մերձ ի քաղաքական դպրանոցն և կարգեցին նմա Թոշակ առ ամիսն 50 հռովմայեցի դահեկանս։ Իսկ իբրև ընդ անցանել ամսորեայ ժամանակաց ոչ կատարեցան յոյսքն, զորս սնէր միամիտ ծերունին, այլ մանաւանդ հարկեցաւ ինքն, յետ երկար հակառակելոյ իւրովսանն՝ արձակել զմի մասն ծառայից իւրոց,

զոյս կամէր առ իւր պահել ի պատառոտուն հանդերձս և զինաթէ մերկանդամ՝ համարեցաւ թէ ըմբռնեալ է ի թա-կարդի, զոր եդեալ էցէ նմա Տ. Ներսիսիս, վասն որոյ և կարի խստութեամբ ամբաստանել կալաւ զնմանէ, յա-ձախակի անուանելով զնա շուն և գաւաճան, և առաքէր թուղթս յանդգնաբար առ ժողովուրդն իւր և եկեղեցականս յԻլվով, ուրանօր տուանջէր զանուէն, թէ նիւթեալ էցէ նորա գաւս փառթարս, որպէս զի յինքն կորզեսցէ զաթոռ արքեպիսկոպոսութեանն։ Բայց ոչ դժուարին ինչ եղև Ներսի-սեայ զանձն արդարացուցանել երդմամբն, զոր ետ առաջի գատաւորացն Հայոց։

Ի սկզբան անդ պայմանք երկու առաջի եդան արքեպիս-կոպոսին, ընդ որս եթէ հաւանեալ էր նորա խոկոյն՝ թերևս անդէն իսկ դառնայր ի տուն, ընդունելով և թոշակ նոր, վասն շնորհացն և խնամոցն, զոր ունէին ընդ նա Ս. Ժողովն և Ս. Աթոռն։ Եւ այս էր առաջին պայմանն, զի կարգեսցէ նա իւր յաջորդ վասն ծերութեան հասակին իւրոյ,—70 ամք էին նմա յայնժամ—որպէս զի յետ մահուան նորա մի ընտրեսցին հերձուածողքն արևելից յարքեպիսկոպոսութիւն այլ ըստ համօրինակ իւրեանց և մի վտանգ հասուցանիցեն նորաբողբոջ գործոյ Միութեան, և երկրորդ՝ զի ի պէտս յար-մարութեան դպրանոցին Իլվովայ տացէ զսենեակն, որ ի ներ-քոյ դպրանոցին, (զոր բազում անգամ խնդրեալ էին հայքն առաջի առնելով նմա գին վարձու յոյժ բաւական)։ Յայնմ սենեկի, ըստ անզգուշութեան ծերունի արբեցողի ուրումն հայ քահանայի, կրկին անգամ եղև հրդեհ, որ ահաբեկեաց զքաղաքեան և զաշակերտս համօրէն, այլ շիջուցաւ յաջո-ղութեամբ ի ձեռն ժողովրդեանն՝ որ շուրջ բնակեալ էին և փութային խոկոյն յօգնութիւն հրդեհելոցն։ Մերժեաց արք-եպիսկոպոսն զերկոսին զպայմանսն, այլ առաւել ևս բորբոքեալ յանձին իւրում՝ կոտտաբեր թղթովքն իւրովք յաւել ևս խռովել զմիտս ժողովրդեանն Իլվովայ, վասն այսորիկ ըստ հրամանի պապին պատուիրեցաւ նմին, զի առանց թոյլտու-ութեան մի ելցէ արտաքս քան զքաղաքն, քանզի երկնչէին, թէ գուցէ առանց ողջունի հրաժեշտի թողցէ փախիցէ ի

Հռովմայ և հասեալ ի քաղաք իւր՝ զամենայն ինչ վեր ի վայր շրջեցէ։ Այլ համարեալ արքեպիսկոպոսին, թէ ոչ ի կարևորացն է ըստ ամենայնի հնազանդիլ այնմ հրամանի, եւ որպէս կարծեմ՝ ընդ դրունս Ցիլեմնոսանի յանձահաւոր ժամանակի, զորոյ զպատճառն անգիտանամ, որով կարծիս ազդեաց թէ ի փախուստ նկրտի. վասն այսորիկ կալան զնա պահապանքն և ածին ի կղզի Ս. Բարթուղիմեայ։ Թերևս բազում ժամանակս մնայր նա անդէն ի գառագեղին, ծախս սակաւագոյնս նիւթելով Ս. Ժողովոյն, այլ միջնորդութեամբ Նորին Մեծութեան Թագուհւոյն Շվեդացւոց, որ գրով հրաշխաւոր եղև վասն նորա, այլև իշխանին Աղեքսանդրի Օստրոգսկւոյ, որ զայնու ժամանակաւ եկեալ էր ի ի Հռովմ, արդ ըստ միջնորդութեան սոցին երկոցունց՝ թողին նմա զյանցանսն և արձակեցին ի հսկմանէ պահապանաց։

Մինչդեռ այս ամենայն անցք անցանէին ի Հռովմ՝ անհանգիստ էին հայքն որ յԼվովի։ Ըստ պատուիրելոյ Ս. Ժողովոյն չոգաւ փոխանակն տեսչի ի Հոգևոր Պաշտութիւնն Լատինացւոց, վասն հարցանելոյ զմիտս արքեպիսկոպոսին Տարնովսկեայ, զփոխանորդի նորա, սոյնպէս և զոմանց կանոնիկոսաց՝ թէ հարկ իցէ արդեօք արգելուլ զարքեպիսկոպոսն Հայոց ի Հռովմ քաղաքի, և եսես, զի գրեա թէ ամենեքեան հաւան էին ընդ արգելումն, մանաւանդ բարեպաշտն Տարնովսկի, որոյ զձեռն ի կուրծս եդեալ՝ պնդեաց, թէ անհրաժեշտ իցէ պահել արգելուլ զարքեպիսկոպոսն ի Հռովմ։ Այլ ոչ կարէր փոխանակն տեսչի հանդարտել զանհաստատուն առհասարակ միտս ժողովրդեանն Հայոց, որ պնդէր պահանջէր յայնժամ, զի արձակեսցեն ըզհովիւն իւրեանց, մինչդեռ նոքին իսկ յառաջագոյն ջանային թօթափել զծանր լուծ իշխանութեան նորա։ Այսպիսի է ընդհանրապէս բնութիւն մարդոյ, զի ցանկանայ՝ որում ոչ ունի, և զոր ունին՝ արհամարհէ։ Այլ և ծանր և անհաճոյ վարչութիւն փոխանորդին,—որ յանժոյժ ցասմամբ իւրում յեկեղեցւոջ և առ սեղանովն հայհոյէր զքահանայս և զաշակերտսն յաղագս չնչին իրաց և զաւազանաւն յոր յինչ վասն կաղութեանն՝ հարկանէր իսկ զնոսա, որով զզու-

ցեղց մերժեաց յինքենէ զքարոզիչսն՝ — մանաւանդ պատճառք եղեւ սորջանաց ժողովրդեանն ընդ վտարումն արքեպիսկոպոսին, որ քաղցրաբարոյ էր և ներողամիտ: Տանեաւ Աղէյխոս, թէ վրիպեցաւ ի յուսոյն, ոչ յայն սակս՝ զի աշխատ եղեւ տարամերժել զարքեպիսկոպոսն, քանզի յայսմ մասին կատարեաց միայն՝ զոր ինչ իշխանութենէ անտի պատուիրեալ էր նմա, այլ մանաւանդ՝ զի և ինքն աջակից եղեւ ընտրութեան փոխանորդին ի պաշտօն վարչութեան, յորմէ և ոչ իսկ հրաժարել կարէր, զի պնդէր Նուիրակն ընդհակառակն՝ թէ հարկ է յաւագ ևս աստիճան զփոխանորդն ամբառնալ. այլ Աստուծոյ միայն էր խափանել զգործն: Վասն այսորիկ ի հաղորդութիւն մտանէր Աղէյխոս ընդ դատաւորսն և ջանայր հնարիւք իւիք հաւանեցուցանել զնոսա, զի զփոխանորդն ընտրեսցեն յաջորդ արքեպիսկոպոսին. բայց ընդդիմայն եղեն վաստակք նորա, զի յորժամ վասն իրացս այսոցիկ հանեալ եղեն ի Հայոց արտօնութիւնքն յամսեանն Հոկտեմբերի յիշատակեալ 1669 ամին ի ժամ Թագաւորութեան արքային Միքայելի, զորս վաւերացուցանել անկ էր նորոյ արքային, և իբրև խռովել ժողովուրդն սկսաւ՝ հարկ եղեւ շնորհել նոցա վերստին զարտօնութիւնսն. իսկ խնդիր յաջորդութեանն առ կախ ձգեցաւ ի լուծումն ապագային:

Այս էին գլխաւոր ջանք Հայոցն և Հայ փոխանորդին և որոց ի միաբանութեան նոցա էին դատաւորացն, (յորոց կարգի հանդիսացեալ էր Գաբրիէլ ոմն Կապրիոմլեչ, այր եռեւելի ջանիւքն ի գործս հաւատոյ և ի գիտութեանց)՝ զի բակարի արգել լիցին ժողովրդեանն, որպէս զի մի առաքեսցեն Թուղթս ի Հռովմ և խնդրեսցեն զպալլ արքեպիսկոպոսին: Վասնզի որ բարեկամք էին, համարէին թէ չարագոյն ևս լիցի զպալլ նորա. վասն այսորիկ օգնութեամբ փոխանորդին մեծաւ ճարտարութեամբ զգործն կատարեցին և բազում անգամ խափան եղեն ժողովրդեանն, ցրուելով զժողովս նոցա զառանձնականսն և զհրապարակականս, ոչինչ հայելով ի կամակոր ջանս ազգակցաց արքեպիսկոպոսին և ի սպառնալիս ժողովրդեանն առ վարչութիւնն: Անցանէր ամ մի ողջոյն յետ մեկնելոյ արքեպիսկոպոսին, և ապա ուր ուրեմն գրեաց

ժողովուրդն Թուղթ, յորում խնդրէր՝ զի գործուսցին նոցա անդրէն զարքեպիսկոպոսն. այլ յայնմ Թղթի ըստ ազդելոյ հակառակորդացն եղեալ էին այնչափ պայմանք և այնքանի Թէութիւնք և յանդիմանութիւնք յանցանաց արքեպիսկոպոսին վախրացեալք ինմին իսկ ժողովրդեանն, զի Թուղթն այն փառաւոր մանաւանդ քան Թէ օգտակար եղև նմա։

Ի վերջ կոյս այսր ամի 1669 Ալոյիսիոս ըստ բնական ճարտարութեան իւրում առ ի հաճել զմիտս ժողովրդեանն և հանդիսացուցանել ի տեսարան Թատրոնի ողբերգութիւն մի սրբազան (որ երկրորդ էր ըստ կարգի և վերջինն եղև՝ զոր աշակերտքն հանդիսացուցին) զկայսերուհւոյն զկուսէն Գուղինեիայ, զոր խոտեն և չարախօսեն ի հերետիկոսական գիրս Հայոց, առ այն զի գումարեաց զԺողովն Քաղկեդոնի։ Զայս ողբերգութիւն գրեաց Ալոյիսիոս ի լատին լեզու հանդերձ մեկնութեամբք ի լեզու Լեհացւոց, որպէս Լատինացիքն խնդրեցին, զի այնու ցուցանիցէ, Թէ ի դպրանոցին ուսանդին կրկին լեզուքն, Հայոց և Լատինացւոց։ Այլ զի մի չար հետևանքն լիցին բարւոյ իւրոյ դիտաւորութեան՝ յոչինչ յառաջագոյն ձեռնարկեաց, այլ նախապէս ընկալաւ զրով զհաւանութիւն Ս. Ժողովոյն։

Գեղեցիկ իմն բարգաւաճէր դպրանոց պապին ի բարեպաշտութեան և ի գիտութիւնս ջանիւք երկոցունց միայն հարց, նա մանաւանդ հօրն Անջելոյ Պիկերատեայ, որ սրբութեամբ վարուց իւրոց, գիտութեամբ և փութոյն իւրով ի տարածանել առ իւր և ի քաղաքին զջատագովութիւն դրութեանց աստուածաբանականաց և փիլիսոփայականաց՝ յարգանս մեծամեծս գտանէր յամենեցուն, և լինէր իսկ այր կատարեալ ամենևին յամենայնի՝ եթէ ուսուցեալ էր ի նա սէր լեզուին Հայոց, փոխանակ բաղում սիրոյ նորա առ Հայրենի աշխարհն իւր։ Ոչ նուազունք եղեն և յաջողութիւնք առաքելութեանն, յորժամ ազնուականք Լեհացւոց կառուցին քանի մի եկեղեցիս վասն Հայոց ի քաղաքս քաղաքս, ի Ժվանեցի ասեմ և ի Գորոդենցէ և ի Պոտչայցի, զորս հիմնեալ էին գաղթականքն ի Մոլդաւիոյ. յաջողէր նոյնպէս և աշակերտացն, աւարտելոց զուսմունս իւրեանց, որոց գործ նոցա էր հրապուրել

զՀայս ի միութիւն ամօք ամօք յեղանակօք։ Ոմանք ի նոցանէ յաջողեցան կատարելապէս ի գործս իւրեանց։ Ի ժամանակին, յորում կարգեաց Ս. Ժողովն զՀ. Ալոյսիոս Մարիոս Պիտու տեսուչ առաքելութեանն (և սա անդէն կարգեաց փոխանակ տեսչի զՀ. Անջէլոյ), եկն և ժամանեաց ի Հռովմայ յԻլվով ի 22-րդի աւուր Յունիսի 1670 ամի Հ. Յովսէփ Ռագատտայ, ծննդեամբ ի Վերոնայ, պաշտամամբ առաքելական քարոզչութեան, կրօնաւոր արդարև բարի, այլ ըստ ակարութեան անձին և որպէս հարկ է ասել, ըստ անվարժութեան հոգւոյ և ըստ անփորձութեան իւրոյ առ Հայս՝ ոչ յարմարաւոր էր յայն պաշտօն։ Իբրև անցին ամիսք երկու յետ գալստեան Հ. Ռագատտայ՝ մեկնեցաւ անտի յԻտալիա Հ. Պեփիրատի, որպէս ընկալեալ էր հրաման ի Ս. Ժողովոյն վասն հաստատ խօթութեանն իւրոյ, ընդ որ տրտմեցան յոյժ ամենեքեան, նա մանաւանդ Ալոյսիոս։ Հօրն Պեփիրատեայ ետ տեսուչն ուղեկից զսիրելին իւր զաշակերտ զՎարդան Յունանեան, զի ածցէ զնա Հայրն առաջի սրբազան կարդինալացն, իբրև զնախընծայ պտուղ քրտանց հարցն. իսկ զարդիս ամբարձեալ է Յունանեանն յաստիճան յաջորդի արքեպիսկոպոսին Հայոց Իլվովայ։

Աւուրք ինչ յառաջ քան զմեկնիլ Հ. Պեփիրատեայ, յետ բազում ճգանց և բազմադոյն աղաչանաց, որ յամիս ողջոյն ձգեցան՝ ընկալան ուրեմն քարոզիչքն զթոյլատուութիւն փոխանորդին, զի զամ մի յիօթնեկի քարոզեսցէ Ալոյսիոս քահանայից Հայոց զբարոյական տեղեաց (casus conscientiae), զորս ամենեքին անգիտանային նոքա։ Այլ կամ եղև փոխանորդին զերծուցանել յայնց դատախօսութեանց զհաւատակիցն իւր արբեցող, յորում ոչ կարի արծարծեալ էին խորհուրդք ուղղափառութեան, թէ և կարօտ էր դասուցն. հրաժարեցոյց զնա և ի խոստովան առնելոյ զժողովուրդն, որ յոյժ պատուէր զնա վասն հասակին ծերութեան և վասն հարուստ և եպիսկոպոսավայել բուսոյ մարմնոյն։

Առանց իրիք դժուարութեան դարձոյց փոխանորդն ամենայն աշակերտաց դպրանոցին զիրաւունս քարոզելոյ, և նոքա սիրով մարզէին յայն գործ մինչև ի վերադարձ արքեպիս-

կոզոսին, ընդ որում չէր զայսմանէ բանակցութիւն ինչ մինչև ցայն վայր ժամանակի. իսկ աշակերտքն ուսումնաւարտք քարոզէին փոփոխակի կարգաւ: Յաղագս քարոզի իրիք ուրումն ի նոցանէ յաւուր տօնի Ս. Գրիգորի Լուսաւորչին, յորում սաստիկ բանիւք յորդոր կարդայր քարոզիչն ժողովրդեանն Հայոց մաղթանս գոհութեան վերառաքել առ Աստուած վասն բարեյաջող կատարածի միութեանն յԻլվով քաղաքի ամօք հնգիւք յառաջ՝ բարկացան յոյժ դասաւորքն Հայոց, որք ոչ կամէին կոչել նոր ունիաթ (նորոգ միացեալք) և ոմանք յայնցանէ, որ պնդէին, թէ ամենևին ուղղորդք էին նորամոյծ ուղղութիւնքն. և առ այս ոչ միայն չառնէր պատասխանի փոխանորդն, այլ և ընդ բանն հաւանէր: Վասն որոյ իբրև յուզեցան խռովեցան միտք ժողովրդեանն ընդդէմ հարցն, կամէին ընկենուլ զնոսա արտաքս ի նախնի բնակութենէն, զայն ինչ կեղծեօք առարկելով թէ տուաւ նոցա բնակութիւնն ոչ մշտնջենաւորապէս, այլ վասն երից միայն ամաց: Յայսմ մեծի դժուարութեան, իբրև ծանեաւ Եղյիսիոս ի բարեկամաց, թէ որում անպայման հաւատացեալն էր քան ընկերաց իւրոց և տուեալ էր յանօթ զումար նշանաւոր արծաթոյ, փոխանորդն՝ չարագոյն թշնամի է դպրանոցին և աշակերտացն, և զի ի ձեռն անդուլ դաւուց զուն գործէ առնուլ հրաման ի նուիրակէն խափանելոյ զդպրանոցն՝ չոգաւ փութով ի Վարշաւայ, ուրանօր մեծաւ սիրով ընկալաւ զնա ի տան իւրում սրբազան կարդինալն Մարեսկոտտի: Առեալ էր Եղյիսեայ ընդ իւր զմի ոմն յաշակերտացն, որում անուն էր Գաբրիէլ Զախնովիչ, որ առաջի բազմութեան ժողովեալ ազատանւոյն Լեհացւոց ասէր քարոզս յաջողութեամբ մեծաւ: Յայնժամ յաջողեցաւ Եղյիսիոս ուղևորութեամբն՝ զի ցրուեաց մերժեաց զամենայն կասկածանս և զնախանձ, և եգիտ զսրբազան կարդինալն բարեկամ մեծ իւր և իւրայոցն, մինչև ի կատարած անդր նուիրակութեան կարդինալին:

Այլ քանզի հարկ էր հրաժարել ի յուսոյն վասն ի վերոյ յիշատակեալ յարակից սենեկին, այն ինչ և արքեպիսկոպոսն և Հայք յետս պահանջէին և զբնակութիւնն իսկ, զոր

արդէն ունէին՝ սոյն այս կարդինալ գրեաց թուղթ առ փոխանորդն Լատինացւոց Իլվովայ, եպիսկոպոսն Նիկոպոլեսանի, առ Իւրիյ Գէձինսկի, յորում խնդրէր աջակից գալ Հարցն յայնմ գործի և երբև յանձնէ ի բանակցութիւն և ի միաբանութիւն ընդ Հայս մնանել վասն տեղւոյն բնակութեան յաբուտրձանի քաղաքին, (յորում տեղւոջ կառուցեալ է զարգիս դպրանոցն)։ Այլ չեղև հնար յաջողութեան իրիք. իսկ գործոյն վախճան եղև ի սկզբան միւսոյ ամին և եթ 1671-րդի, որպէս զի հաւանեալ լեալին Ս. Ժողովոյն ի գործն՝ խոստացաւ տալ ամ ըստ ամէ օժանդակութիւն արտաքոյ կարգի Հ. քարոզչացն ի շինութիւն և ի զարդ բնակարանին այնորիկ կարի յարմարաւորի։ Այլ երբև յարեաւ պատերազմն Տաճկաց, կամ առ ահի Թաթարացն, զի մի յարձակեսցին ի վերայ տանն, հուպ ի պարիսպս քաղաքին շինելոյ, որպէս զեկուցեալ էր ուրումն զՍ. Ժողովն չարամտութեամբ և թիւրութեամբ, կամ վասն այլոց իրիք պատճառաց՝ մինչև ցայսօր ժամանակի ոչինչ եղև օգնութիւն ի Ս. Ժողովոյն։

Ամօք ինչ յառաջ քան զկատարած յիշատակեալ գործոյն՝ տրտմութիւն մեծ եղև քարոզչացն, զի սրբազան կարդինալն Մարեսկոտի կարգեցաւ նուիրակ Սպանիոյ և անդր փոխադրեցաւ. քանզի յուսացեալք յոյժ էին ի նա քարոզիչքն վասն փութոյ նորա ի գործ հաւատոց և սիրոյն առ դպրանոցն։ Այլ խրախոյս կարդաց նոցա՝ որ փոխանակեացն զկարդինալն Մարեսկոտի, սրբազան կարդինալն Նէրլի, որ գութ և սէր ընդ քարոզիչսն ունէր միշտ և զամենայն միջոց ժամանակի կարճատև նուիրակութեան իւրոյ անխոնջ ջանիւք աշխատ եղև յաղագս անդորրութեան դպրանոցին և առաքելութեանն։ Իբրև ժամանեաց ի Վարշաւայ կարդինալն Նէրլի, փութաց չոգաւ առ նա տեսուչն, զի ծանուսցէ նմա զվիճակ դպրանոցին և առաքելութեանն և զգուշացուցանիցէ զնա ի չարախօսութեանց, որովք հնար էր արդեօք քողարկել զճշմարտութիւնն, որպէս փորձով քաջ հասեալ էր ի վերայ Հ. Ալեխիոսո։

Այլ տեսցուք ըստ ոճոյ գիրջկաց՝ թէ Յորժամ ոչ յարմարին ամոլքն, դժուարին է սայլին շարժիլ։ Զնոյն իսկ

և իսկ իմա և յաղագս հարցն ի մասին յաջողութեան դըպրանոցին և առաքելութեանն. Եւլոգիոս, որ խնդրէր միշտ սիրելի լինել ժողովրդեան՝ ջանայր զամենեսեան յինքն յանկուցանել. իսկ Բաղդատայ ատեցող էր Հայոց և միայն յակամայից իմն երթայր ի պաշտամունս նոցա, լաւագոյն համարեալ առ իւր զպատարագն մատուցանել քան ի յեկեղեցիս նոցա։ Նա այս ինչ հետևանք եղեն սորա, զի որ ոչն սիրէր զնոսա, եղև և ինքն նշաւակ արհամարհանաց և ատելութեան։ Աշակերտացն քրթմնջելով իբր զայնմանէ, թէ հալածէ զնոսա ատելութեամբ փոխանակն տեսչի և ուսուցչին իւրեանց՝ դրդեալք յօտարաց, ի բացակայութեան Եւլոգեայ փախեան ի դպրանոցէ անտի ամենեքեան, բայց յերկուց. և այնու միայն արդարացուցանէին զայս յանդգնութիւն իւրեանց, թէ չէր այլ ևս հնար համբերել Բաղդատայի, որ խոչընդոտն լինէր նոցա յամենայնի և ջանայր հանել անջատել զնոսա ի կանոնացն առելեաց վասն նորա, և համոզել՝ զի մտցեն ի կարգ Թէատին կրօնաւորաց։ Իբրև գոլով ժամանակս խոյզ և խնդիր արարին, դարձին ապա զնոսա առ փոխանորդին Հայոց, որ սրտմտեալ էր յոյժ ընդ Բաղդատայ. ի նմին իսկ աւուր ի հնազանդութիւն եած զնոսա տեսուչն, առանց արտաւորելոյ զպատիւ իւր, և կոչեաց անդրէն ի դպրանոցն, զմին միայն ի նոցանէ արձակելով ի բաց, որ յանցաւոր քան զամենեսեան գտաւ։ Իսկ այլք ամենեքեան հարկեցան ի հրամանէ տեսչին, զի խնդրեսցեն ի Բաղդատայ զթողութիւն յանցանացն իւրեանց։ Այլ ի զուր. քանզի Բաղդատայի խստագունից պատժոց արժանի զաշակերտսն համարեալ և անարգութիւն անձին իւրում վարկանելով զմեղմ անյիշաչարութիւն Եւլոգեայ՝ ի զայրոյթի իւրում ամբարձ գրիչ և գրեաց զնմանէ ամբաստանութիւն առ Ա. Ժողովն։ Այլ ոչինչ ազդեաց ամբաստանութիւնն. զի հայրքն ծիրանաւորք վասն զրախօսութեանց կրօնաւորի ուրումն անծանօթի ոչ փութանակի անդէն դատապարտեցին զպատուարժան վաստակաւորն, որ լռութեամբ միայն պատասխանի առնէր երկպառակութեանն, զի մի վէճք այլ ևս ի նորոյ յարիցեն։ Այլ զանգիտեալ Բաղդատայի, զի մի ի պա-

տեհ ժամու չարիս նմա նիւթիցէ առ նուիրակին արքեպիսկոպոսն Իլվովայ Ոորեցինսկի, որ վասն սնոտի պատճառաց բարկացեալ էր ընդ նա՝ խնդրեաց հրաման դառնալոյ անդրէն յԻտալիա, զոր և ընկալաւ, բայց անագան, ի 15-րդի աւուր Յուլիսի 1671 ամի, յետ գալստեան երկոցունց այլոց հարց, Հ. Աւգոստինոսի ասեմ Լորիլլեայ ի՛ Նէապոլսոյ, առն երևելւոյ ի գիտութիւնս և Հ. Հերոնիմոսի Ռոսսեայ, հասակակցի նորա, որում ամք էին իբրև 26, այլ առաւել խոհականի և փորձառուի ի գործավարութեան։ Երկոքին սոքա հայք ժամանեցին յԻլվով ի 23-րդի աւուր Յունիսի, իսկ և իսկ նախ քան զմեկնելն Ռագատտայի։ Այն ինչ աստ ի ներքս ի դպրատունն եդին նորեկ քարոզիչքն՝ և ահա անդէն ի նմին գիշերի ի խուցս իւրեանց չև ևս մտեալ ի քուն՝ խօսել կալան զվերադարձէ իւրեանց ի հայրենիս, նախ քան զլրանալ պայմանեալ քառամեայ ժամանակին, քանզի երկուցեալ էին ի բանէ տեսչին, որ իբրև առնոյր ի նոցանէ զվկայական թուղթս քարոզչութեան նոցա վասն չորից ամաց ասաց, թէ ամենևին ոչ հետևի ի թղթոցն, զի առ քառեամ մի և եթ առաքեալ իցեն նոքա. քանզի, ասէր, եթէ այսպէս էր՝ չէր ապա արժան ծախսլայնչափ արծաթ առ ի փոփոխել զքարոզիչսն քառեամ ըստ քառեամէ. այլ թէ յայն միտս այնպէս առնէ Ս. Ժողովն՝ զի ի լրանալ պայմանեալ ժամանակին արժանի հնազանդութեամբ խնդրեսցեն քարոզիչքն՝ անդրէն նորոգել զթուղթսն։ Ալէքսիոս, որ հուպ առ նոսա բնակէր և արթուն էր զեռ ևս՝ լուաւ զայն ամենայն և յոյժ տրտմեցաւ, զի ընտրէ Ս. Ժողովն յառաքելութիւն զայնպիսիս, որոց ոչ հրաժարեալ յաշխարհէ և չև ևս սկիզբն արարեալ առաքելութեանն, (որ և ոչ դժուարին ինչ է, զի ոչ յԱսիայ է և ոչ յԵթովպիայ առ վայրենիս)՝ փափագեն արդէն ի ստինս մարց իւրեանց»*)։

Ոչ սակաւ տրտմեցաւ Ալէքսիոս և ընդ վշտալից թուղթն ի Հռովմայ յաղագս բնակարանին, զոր նորոգ ստացեալն էր (վասն ինչ ինչ գրաւոր և անգիր պայմանաց, ընդ որս հար-

---

*) Ի բնագրին ad ubera matris Թարգ.

կեցաւ հաւանիլ Ալոյսիոս ըստ խորհրդոյ բարեկամացն, միայն այսու կարևոր թէութեամբ՝ զի և Ս. Ժողովն վաւերացուսցէ զպայմանն. ի թիւս այսց պայմանաց, որպէս թուի, չէր խոստումն դարձուցանելոյ առ Հայս զշինուածն յետ ամաց 10 կամ 15 ի վերայ անցանելոյ, առանց պահանջելոյ զծախս շինութեան)։ Սարջացաւ Ալոյսիոս, զի զայն գործ դժուարին և այնչափ օգտակար վասն դպրանոցին, զոր և արժանի համարեցան ի Հռովմ վաւերացուցանել ի սկզբան անդ՝ գարգիս ի յանդիմանութիւն նմա վերադրեն, չև ևս լուեալ ինմանէ զջատագովութիւն անձին։ Այնպէս զանգիտէր վասն գործոյ արքեպիսկոպոսին, զորմէ տեղեկութիւնս տայր վեհերոտն փոխանորդ, թէ ահա ի Վիեննայի է կամ ի Կրակովէ, և ի դրունս իսկ քաղաքին, և երկնչէր յոյժ, զի Ս. Ժողովն, որ բարեհաճ էր ընդ նա՝ մի առաքեսցէ զնա յԼվով, կամ վասն սիրոյ իւրոյ առ նա, կամ զերծանելով ի յաճախակի ժտանս Թադէորաց և իշխանաց և յուժգին խնդրուածս ժողովրդեանն, որ օր ըստ օրէ առաւել ևս զարշէր որոշէր ի փոխանորդէն։ Վասն այսորիկ խնդրել կալաւ Ալոյսիոս թախանձագին, զի տացի նմա թոյլ գալ ի Հռովմ և խոստանայր ի փախճանել գործոյն անդրէն դառնալ յառաքելութիւնն։ Ոչ միայն կատարեաց զխնդիր նորա Ս. Ժողովն, այլ և սրբազան կարդինալն Կոլոննայ, որ քարտուղար էր Ս. Ժողովոյն ի ժամանակի յայնմիկ՝ գրեաց առ նա, թէ յոյժ կարևոր իսկ է, զի գայցէ ի Հռովմ. վասն որոյ և առաջի առնէր նմա եկանել յուղի, եթէ միայն հաւատի իցէ, թէ ի բացակայութեան իւրում ոչ լիցի զեան ամենևին դպրանոցին և առաքելութեանն։ Անզգոյշ գտաւ Ալոյսիոս և յանձն արար զվարչութիւնն պատանեաց անփորձից, և սատի չարիք բազումք ապա ծագեցան։

Մինչդեռ հանդերձէր տեսուչն ի կատար ածել զպատուէր հրամանի Ս. Ժողովոյն, այսինքն է յուղի անկանել՝ եկ համբաւ, թէ մերձեցեալ են զօրքն Տաճկաց ընդ Թաթարաց և խաղախաց, զոր ինչ համբաւ ճշգրտէին և ընակիչքն մերձակայք Լվովայ՝ հապճեպ փախստեամբ ի տեղեացն իւրեանց։ Նորին Հայքն, որ չև ևս էին վարժեալ ձայնի պատերազմական

փողոց, զահի հարկեալ կամէին թողուլ զբնակութիւնն իւրեանց յարուարձանի քաղաքին, որ չէր պաշտպանեալ բարւոքապէս և խնդրեցին ի փոխանորդէն թոյլ տալ նոցա ունել առ ժամանակ մի զնախնի բնակութիւնն, որ պարապորդ էր մինչև ցայն վայր: Իբրև վասն պատճառաց իրիք, զորս անգիտանամ, մերժեաց զխնդիր նոցա զկծեցուցիչ բանս ի վերայ դնելով՝ հայքն փոխեցան ի բնակութիւն ի Զամոստիէ, հանդերձ մեծաւ մասամբն աշակերտաց. իսկ այլքն հանդերձ Հ. Ալիշանաւ մնացին անդէն յարուարձանին ի բնակութեան իւրեանց: Իբրև անցին աւուրք վտանգին, յետ երից եօթնեկաց դարձան հայքն յետս յԼվով, կարի ևս զայրացեալք ընդ փոխանորդն, որ պատճառք եղև ծախուց նոցա ի ժամ փախստեանն:

Յայնմ ժամանակի եկն յԼվով քահանայ ոմն հայազն Թադէոս անուն, որ առաքեալ էր յեպիսկոպոսէն Հայոց յՈսկանայ, կառավարչէ հայ տպարանին Ամստերդամի, առ ի վաճառել տպագրեալս գիրս ինչ պատմութեանց և այլոց բովանդակութեանց: Իբրև ծանեաւ քահանայն, թէ փոխանորդին զանգիտեալ յԱլիշանայ ոչ տայ հրաման վաճառելոյ զգիրսն, եկն առ տեսուչն, ետ նմա ի քննութիւն մատեան մի անփոյթ (այլ գուցէ էին և այլ մատեանք) և բանս շողոմաքարս բազումս ի վերայ եդ: Այլ ոչ հաւանեցաւ Ալիշանոս ընդ թոյլտուութիւն վաճառմանն, քանզի էին ի մատենին բանք բազումք անպատշաճք զԼատինացւոց և զհռովմէական հաւատոց, այլ և գովութիւնք ուսուցիկք վասն այլադաւան Հայոց (իմա զորոց էինն յուխտի եկեղեցւոյն Հայոց): Դիմեաց ապա քահանայն առ դատաւորս Հայոց, խնդրելով ի նոցանէ օժանդակութիւն օգնութեան, այլ ոչինչ յաջողեցաւ անդ ևս, զի իբրև հարցաւ տեսուչն զպատճառս մերժելոյ նորա զխնդիր քահանային, եցոյց նոցա զտեղի ինչ ի պատմութենէ վարուց արքեպիսկոպոսին (Նիկոլի), տպագրելոյն ի միում ի մատենիցն և յայտնեաց՝ թէ ոչ կարէ ինքն, գոլով ծառայ առաքելութեանն, հաւանել ընդ վաճառումն և ընդ ծաւալումն գրոց, յորս են բանք անարգանաց զհռովմէն իւրեանց: Թէպէտ և փոխանորդն, որ տատանէր և վարա-

նէր հանապազ, յայտ առնէր՝ թէ համամիտ է Ալոյիսեայ յայնմ բանի, այլ վշտանայր ի սրտին, զի ոչ կարէր ըստ կամաց իւրոց օգնել նախկին բարեկամին իւրում Ոսկանայ։ Ապա յետ բազում անօգուտ աղաչանաց քահանայքն առ Ալոյիսիոս՝ միաբանեցան փոխանորդն և տեսուչն, զի ապաստան արասցեն զայն գործ ի դատաստան ապագայ նուիրակին, (որ եղև Բանուցցի յետ մեկնելոյ կարդինալին՝ Նէրլեայ)։ Զայս խոստացաւ փոխանորդն, այլ սակաւ ևս յԱստուծոյ երկուցեալ քան ի մարդկանէ՝ ոչ պահեաց զխոստումն ուխտին, այլ զկնի աւուրց ինչ արձակեաց զքահանայն հանդերձ մատենիւքն, որ չոգաւ յԻտալովկեց, վաճառեաց անդ գիրս ինչ և այլովքն էանց յերկիրն Մոլդաւիոյ և Վալախիոյ։ Իսկ Ալոյիսիոս լուռ եկաց զայսպիսի արարոց փոխանորդին, բայց ոչ լռեաց յաղագս ջանից նորա ձրիաբար յինքն կորզելոյ ի ձեռաց Հայոց, որք ոչ բարեհաճ էին ընդ քարոզչան՝ զտուն բնակութեան դպրանոցին, որ տուեալ էր նոցա, որպէս ասեն նոքին իսկ Հայք՝ միայն առ ժամանակ մի. զայս արար Ալոյիսիոս, կարի յուսացեալ ի խորհուրդս բարեկամաց և ի կասկածելն բարեհաճութիւն արքունեացն, (որ վասն հասարակաց գործոց ժամանեալ էր ի Հոկտեմբեր ամսեանն յիշատակեալ 1671 ամին յԻվով)։ Վասն այսորիկ իբրև ընկալաւ Ալոյիսեայ յարքայէն Միքայելէ յանձնարարութիւնս ինչ առ իշխանս ոմանս՝ իբրև ծանեաւ առ կարի դանդաղութեան անկարգ ընթացից գործոյն, թէ ոչ յաջողակ լիցի ելք կատարածի նորա՝ ելեք զգործն, ցուցեալ իմն այնպէս, թէ յետաձգէ զայն ցվերադարձն իւր յԻտալիոյ, և յուղեանկաւ անդէն, առեալ իւր ուղեկից զմի ոմն յաշակերտացն, որում անուն էր Կազիմիր Մուրատովիչ, որդի աւագ դատաւորին Հայոց Կամենեցի։ Պատանեայս այսորիկ թողեալ զվաճառականութիւն, եմուտ յաշակերտութիւն դպրանոցին, ընդ որ ի խոր խոցեցաւ հայր նորա. այլ մինչդեռ ի դպրանոցին էր, ըստ չար դրդման ազգականաց իւրոց՝ կամէր ելանել անտի և գնալ ի Հայաստան, վասն այսու ածելով փրկութեան հոգւոյ իւրոյ, և հայրն՝ վերջոյ բազումս արա-

մութեանց, քանզի ընդունակ էր յոյժ և շնորհ մեծ ունէր ճարտարախօսութեան։

Ի նմին ամսեանն Հոկտեմբերի 1671 ամին որ օր 26-րդ էր մեկնեցաւ Ալոյսիոս յԻլվովայ, ոչ կարգեալ զոք փոխանակ անձին զկնի իւր. այլ բաժանեաց զվարչութիւնն յընկերս իւր, որպէս զի վարեսցէ զտեսչութիւն առաքելութեանն և զդըպրանոցին Հ. Օգոստինոս Լոքելլայ, որ ըստ կրօնաւորութեան կարգի՝ ժամանակաւ աւագ էր քան զՌոսսի, իսկ ընտանեկան մասնն և զծախսն յանձնանձեսցէ յիշատակեալ Հ. Հերոնիմոս Ռոսսի, որ առաւել խոհեմ և փորձառու էր ի գործն. յանձն առար նմա, զի որչափ հնար իցէ՝ խնամ կալցի ի վերայ շինութեանն սկսելոյ և կազմութեան խցից, զորս ի մտի ունէր կառուցանել ի վերոյ զլխաւոր դրանցն, որպէս զի եթէ ոչ հաճեսցի արքեպիսկոպոսն յետ վերադարձի իւրոյ տալ նոցա զշինութիւնն ի մշտնջենաւոր վայելումն՝ մի խոչընդոտն լիցի այս նոցա, քանզի յայնժամ անյարմարութիւն մեծ լինէր արգելք դպրանոցին և անկարգութիւն յոյժ։ Զշինութիւնն և զայն սակս կամէր Ալոյսիոս, զի յօգտակար գործս ծախեսցին արծաթքն, և մի պահանջեսցեն զդրամս նորին և անփոյթ վաստակաւորքն որ խնդրին զայն ինչ զմտաւ ածեն՝ զի ի հայրենիս իւրեանց դարձցին, թէպէտ և յետ ծախուց վասն շինութեանցն՝ յաւելոյր թերևս այլ ևս դրամ բաւական։ Պատշաճ վարկաւ Ալոյսիոս ի վեր հանել զվիճակ գործոցն նորոյ նուիրակին, վասն որոյ չոգաւ նախ ի Վարշաւայ, ուրանօր մեծաւ սիրելութեամբ ընկալեալ եղև ի նուիրակէն և յետ կարի համառօտ բացատրութեանց, ճեպով փութացաւ ի Կրակով և անտի ի Վիէննայ առ նուիրակն այնր ժամանակի Ս. կարդինալն Ալբրիցիոս, որոյ հետ եղեալ էր առաքելութեանն Իլվովայ և առաքեալ էր ի Լեհաստան զԱլոյսիոս հանդերձ Հ. Գալանոսիւ, վասն որոյ անձկայր յոյժ հիւրասիրել զտեսուչն յապարանս իւր։ Եկաց մնաց Ալոյսիոս ի Վիէննայի սուղ ինչ ժամանակ, և արժանաւորեցաւ կարի սիրալիր ընդունելութեան կայսրուհւոյն Էլէոնորայ, որում յանձն առար զթուղթս Էլէոնորայ թագուհւոյն Լեհաստա-

նի, իսկ յ17-րդի աւուր Յունուարի 1772 ամի եկն ժամանեաց ի Հռովմ։

Մինչդեռ ի Վիէննայի էր տեսուչն Եղիսէոս՝ փոքր միւս ևս և գտանայր անդրէն յԼիվոռն ըստ խոհական խորհրդոյ սրբազան կարդինալին Եզերիցեայ, (որում ոչ անսայց, քանզի տեսանէր զդժուարութիւնն առնլոյ վերստին հրաման նորոյ ուղևորութեան, և զի ոչ կամէր զիսա թէ ի կիսոյ ճանապարհէն յետս ընդ կրունկն դառնալ)։ Իսկ այս խորհուրդ ծագեցաւ ի նմա վասն Թղթոյն, զոր ընկալաւ յԼիվոռնայ, մինչդեռ հանդերձէրն մտանել ի նաւ առ ի չուել ի Վենետիկ, յորս էին տեղեկութիւնք, թէ ժամանեալ է յԼիվոռն եպիսկոպոս ոմն Հայ, Թէոդորոս Վարդանովեչ, որ առաքեալ է ի հերձուածող կաթողիկոսէն Էջմիածնի և կարգեալ է ի նմանէ յաջորդ արքեպիսկոպոսին Հայոց, և զի հաճ են յարքունիս ընդ Վարդանովեչն, որ օր ըստ օրէ ի ձեռն շողոքորթութեանց և պատարագաց պաշտպանս իւր հայթայթէ։

Գիտելի է, զի սորին այր Թէոդորեայ Վարդանովեչի, որդւոյ ականաւոր դատաւորի Հայոց յԼիվոռնի՝ է ի Հայս հօրեղբայր մի Ստեփան Վարդանովեչ անուն, քարտուղար կաթողիկոսին, որ թէպէտ և ոչ ընկալաւ ուսումն կատարեալ, այլ հանապազօր ընթերցմամբ առասպելեաց Հայոց և թարգմանութեամբ ինչ ինչ լատինական գրոց, (զլեզու Լատինացւոց ուսեալ էր նորա ի դպրանոցի Հ. Յիսուսեանց) և վասն աշխարհավայել վարուց կենցաղավարութեան այնչափ մարզեցաւ յարուեստի կեղծաւորութեան, զի ժողովուրդք տեղեացն իբրև զերկրորդ ոմն Բարսեղ ունէին զնա, և առ կարճամտութեան իւրեանց յանչափս պատուէին և փառաւորէին զչեղ մեծարեցուցին։ Արդ ըստ կամաց հրամանի նորա՝ այս Թէոդորոս յառաջ քան զսկիզբն միութեանն (այլ անդէն յետ դաւանեան հարցն քարոզչաց յԼիվոռն) ընդ հովանաւորութեամբ հերձուածող նախանդամին Հայոց աւարտեաց զընթացս ուսման իւրոյ ի դպրոցս Լատինացւոց, այլ ոչ կարի յաջողութեամբ։ Յայնմ ժամանակի այցելութիւնս առնէր երբեմն հարցն և այնչափ յաւակնեցաւ առա-

ջի Հ. Գալանոսի, զի յանձն առնոյր աշակերտել դպրանոցին, եթէ խոստանայցէ Հ. Գալանոս աջակից լինել նմա ի հասանել յարքեպիսկոպոսութիւն ի պատիւ յետ մահուանն Նիկոլի: Իբրեւ զարմացաւ Հ. Գալանոս ընդ ինքնահաւանութիւն պատանւոյն եւ ընդ թեթեւամտութիւն այնոցիկ, որոց յուսացեալ ի զօրութիւն իւրեանց՝ խորհուրդ այսպիսի ի միտս նորա դնէին, եւ սառնութեամբ սրտի արար պատասխանի, թէ ամենեւին աննշան ոք գոլով ոչ կարէ խոստանալ նմա զայնքանի իրս, որ ի կամս Աստուծոյ են ապաստան եւ յիշխանութեանն՝ եկաց մնաց պատանին ի խորհրդեան իւրում: Այլ տեսեալ զյաջողութիւն դպրանոցին՝ ոչ աւելորդ ինչ համարեցաւ ուսանել յԱլյխեայ զլեզու Լատինացւոց, որպէս զի ունիցի ապա իրաւունս աշակերտ հարցն կոչելը: Փիլիսոփայական գրութեանցն ձօնելոց յանուն Նորին Մեծութեան արդի Թագաւորին, որ Թագակիր Մեծ Հեթման էր յայնմ ժամանակի՝ փոքր ի շատէ յաջողութեամբ պաշտպանեաց առ հարսն Յիսուսեանս, յոր վիճաբանութիւն կոչեաց եւ զհարսն քարոզիչս հանդիսատես լինել, այլ երեւեցոյց ձիրս մանաւանդ ճարտասանականս քան փիլիսոփայականս. իսկ իբրեւ ի դպրանոցի պայլին առաջի բազմութեան ունկնդրաց ի պայքար հակաճառութեան կոչեաց զմի ոմն ի լաւագունից աշակերտաց՝ այնպէս կարկեցաւ, յորժամ փաստս ապացուցից ածէր ի մէջ՝ զի ոչ եւս կարաց ըղճառն բովանդակել: Զայս ամենայն հարկ եղեւ մեզ ասել առ ի պապանձեցուցանել զայնոսիկ, որ քան զչափն դրուատեն ի զեան մեծ փառս հաւատոց զեկն, յաջորդն հերձուածող, հանգոյն նմին՝ որպէս Հայք արեւելեայք զՀօրեղբայր նորա: Ի վախճանի դասընթացի աստուածաբանական գիտութեանց կոչեցաւ Թէոդորիոս ի Հայաստան ի քարտուղարէ կաթողիկոսին, եւ սրբապղծաբար ձեռնադրեցաւ ի բարձրագոյն աստիճանս կարգի եւ ի քահանայութիւն, եւ զկնի սորա, գոլով դեռ եւս ի պատանի տիս, ամբարձաւ յաստիճան եպիսկոպոսութեան, չէ ինձ յայտնի, թէ որպիսի տիտղոսաւ, քանզի առ ոչինչ զայս համարէին նոքա, եւ հուսկ յետոյ կարգեցաւ գոլ յաջորդ արքեպիսկոպոսին Հայոց: Նա առանց գիտելոյ զկամս Ս. Հօրն

յետ միութեանն կայանալոյ և ոչ զարքային Լեհացւոց, որ անձին պահեալ է զիրաւունս կարգելոյ եպիսկոպոսունս ի պետութեան իւրում, և ոչ ակն ածելով յիրաւանցն, որով Հայք ի կանուխ ժամանակաց հետէ ինքնին ընտրեն իւրեանց հովիւս, և ոչ հարցեալ զկամս արքեպիսկոպոսին, որ կենդանի էր դեռ ևս՝ առաքեցին զյիշատակեալն ի վերոյ զԹէոդորոս Վարդանովիչն, ոչ միայն՝ զի ունիցի զաթոռն արքեպիսկոպոսութեան, որ մասամբ որբացեալ էր վասն երկարատև տարակայութեան արքեպիսկոպոսին, այլ մանաւանդ զի դարձուսցէ զժողովուրդն Հայոց, որ Միութեամբն խառնեալ էր յեկեղեցին Հռովմայ՝ անդրէն յիշխանութիւն հերձուածող կաթողիկոսին։ Եւ ոչ տեսանէին Էջմիածնեցիք խոչընդոտն ինչ խորհրդոց իւրեանց, զի չէր ի միջի Հ. Գալանոս, խարազանն Աստուծոյ վասն հերետիկոսութեան արևելից, չէր և Ալոյիսիոս, որ գիտակ էր խորամանկութեանց Հայոց և ներհուն լեզուի նոցա։

Իբրև լու եղև հարցն Լոբէլլեայ և Ռոսսեայ, որ ի բացակայութեան տեսչին ղեկավարէին առաքելութեանն՝ թէ եկեալ հասեալ է ի սահմանս Պողոնեայ յաջորդն բռնաւոր, չոգան փութանակի առ արքայն Միքայէլ, որ յածէր դեռ ևս յԼվովի, և խնդրեցին ի նմանէ հրաման՝ զի մի տացի թոյլ Թէոդորեայ յառաջ վարել զուղին. այլ մինչ յայտնեցաւ հրամանն արքունի և մինչ խնդրեցաւ գտաւ սուրհանդակ առ ի տանել զհրամանն արքունի՝ փոխեաց պալատն զկամս իւր, ջանիւք խորամանկութեան ազգականացն Թէոդորեայ, և այսու եգիտ նա ժամանակ և հնարս այց ելանելոյ Կամենիցի, Եազլովեցի և այլոց քաղաքաց, և խաչիւ և ոսկեղէն շղթայիւ, ըստ սովորութեան եպիսկոպոսացն Լատինացւոց՝ եկն եմուտ յԼվով և իջևանս կալաւ առ հարսինն, զոր մերժեալ էին տալ նմա ըստ օրինաց, որպէս զի բռնութեամբ զկայան յափշտակեսցէ և պղծեսցէ զհօտն Քրիստոսի։

Ոչ երբէք այնպէս քաջութեամբ խիզախեալ էր փոխանորդին, որոյ էր յոյս ընդունելոյ ի Ս. Աթոռոյն զյաջորդութիւնն, (և ոչ վրիպէր արդեօք յայսմ բանի, եթէ յամենայնի ցուցեալ էր նորա զնոյն փութաջանութիւն)․ քանզի

փակեաց զգլուխս եկեղեցեացն Հայոց առաջի Վարդանովբէյի և աջակցութեամբ ամուսնաւոր եկեղեցականացն, զոյս հարկեցոյց երդմամբք ուխտի՝ առ ոչինչ համարել զպատնալիս և զաղաչանս դատաւորացն Հայոց և զազգականաց նորա՝ ստիպեաց զնա ակամայ կամօք դիմել ի Վարշաւայ առ Նուիրակն առաքելական, Ռանուցցի։ Նմին եհաս Թէոդորիոս ի Վարշաւայ հանդերձ դատաւորաւ միով Հայոց, որում անուն էր Աւգուստովիչ, որ կարգեալ էր առ նորա ի պաշտօն գործակալի, և փոխանակ ջանալոյ հաճել յինքն զՆուիրակն՝ այլ և այլ տարազովք արհամարհել կալաւ և անարգել զլրացակայն Ալյիխիոս և խնդրեաց ի Նուիրակէն գրել թուղթ ի Հռովմ, թէ յապա ժամանակին ոչինչ օգուտք լինելոց են յառնէն յայնպիսւոյ, զոր առէին Հայք յոյժ յոյժ։ Իբրև ծանեաւ, թէ աղաչանք իւր և ուղեկցին իւրոյ ոչ ազդեն և ոչ կակղեն զՆուիրակն, որ պահանջէր յարքունեացն բարեհաճի յոյժ առ Թէոդորիոս, զմերժել վարել նորա յաշխարհէն՝ սկսաւ ապացուցանել, (այլ առանց յաջողութեան) թէ խակ և խակ կաթոլիկ է կաթողիկոսն, յայն սակս զի հանդերձեալ էր երբեմն երթալ ի Հռովմ։ Հուսկ ուրեմն ըստ կարգադրութեան Ս. Ժողովոյն առաջի արարին նմա ընտրել զմին յերկոցունց աստի, կամ ուղևորել ի Հռովմ, կամ գնանալ անդրէն ի Հայաստան։ Թէպէտ և ոչ հաւանէր նա ոչ ընդ այս և ոչ ընդ այն, այլ ջանայր յոլով ժամանակս առնուլ հրաման բնակելոյ ի Լեհաստանի իբրև այր ոմն սոսկական—յայտ է թէ ի մտի եդեալ ունելով ներգործել անդ ի ծածուկ և նենգութեամբ,—բայց յետոյ ընտրեաց զառաջինն, ընդ որ հաճեցան ամենեքեան. այլ թէ յի՞նչ միտս, այն յայտնի եղև յետ սուղ ինչ ժամանակի։ Կորզեաց էառ արծաթ յառաքելական նուիրակացն ի պէտս ճանապարհի, մեկնեցաւ անտի ի Վենետիկ, ուրանօր ի մատրան միոջ հերձուածողաց մատոյց պատարագ ըստ արարողութեան հերձուածողաց առաջի Թագակիր իշխանին Մոսկովիոյ, բաշխողին ողորմութեանց. անտի յուղի անկաւ ի Հալէպ, երկուցեալ յարդար պատժոցն, որոց ակն ունէր ի Հռովմ վասն ուրացմանն։ Թէպէտ և ի Սպանիա, ուրանօր բնակեալն է զարգէս, ուղղագոյնս

*կենցաղավարէ, գովեալ ի Հ. քարոզչաց որ անդն են՝ այլ մե-
ծի կասկածանաց է գործն. զի որ ի քանի մի նուագս ուրա-
ցաւ՝ դժուարին է նմա հաւատալ։*

*Ի պատճառս իրացս այսոցիկ Թէոդորեայ Վարդանովե-
չի, մտադիւրութեամբ ես հետամուտ եղէ ի Հռովմ խնդրոյ
յաջորդութեանն Իլվովայ. Թէպէտ և նախագոյն քան զառա-
քել Թէադին կրօնաւորացն ի Լեհաստան խորհեալ և հո-
գացեալ էին զայսմանէ, այլ ոչ յաջողէին բանքն վասն դը-
ժուարութեան ընտրելոյ զանձն պատշաճաւոր։ Ի թիւս ընտ-
րելեացն Յովհաննէս Պիստոստուրովիչ, երէցն Զամոստիէ
քաղաքի, այրն կաթոլիկ և գիտուն յոյժ՝ ոչ յարմարաւոր
երևէր վասն ծերութեան հասակին և զի արքեպիսկոպոսն խե-
թիւ հայէր ի նա. սոյնպէս և ոչ ընդ փոխանորդն, եպիսկոպոսն
Ներսէսովիչ էին բարեհաճ, քանզի կասկածելի էր և ոչ անա-
րատ ի վարս. և սակայն ես ընդ յիշատակեալն Ստեփան
Վարդանովիչ, ազգականն բռնաւորին, որ ի սկզբան անդ
համարեալ էր կաթոլիկ վասն ինչ ինչ հաղորդութեանց նո-
րա ընդ քարոզչս, այլ յետոյ ծանուցաւ գոլ յայտնի հեր-
ձուածող։ Վասն այսորիկ յանձն արարին Հ. Գալանոսի,
որ հանդիպէրն գալ ի Լեհս՝ զի անդէն իսկ ի ժամանելն
իւրում յԼվով փոյթ արասցէ զայսմ գործոյ. բայց յընդու-
նայն եղեն ջանք նորա, իբր զի Հայք ոմանք մեծատոհմք, որոց
առաջի արար Հ. Գալանոս զատեանն՝ մերժէին զայն,
քանզի ընկալեալ էին զպատիւ ազնուականութեան Լեհա-
ցւոց։*

*Յորժամ ժամանեաց Եղիսէոս ի Հռովմ՝ սիրելութեամբ
մեծաւ ընկալաւ զնա արքեպիսկոպոսն, և դիւրաւ յինքն
յանկոյց զնա, որ այր անոխակալ էր և անտես առնէր ար-
կածից հակառակութեանց։ Տարաբերէր ի միտս իւր տեսուչն,
եթէ զիարդ ի յառաջիկայն վարեսցի. այլ իբրև ծանեաւ
ի ժամ տեսակցութեան ընդ կարդինալացն, թէ բազումք ի
նոցանէ հակամէտք են առաքել զարքեպիսկոպոսն ի Լեհաս-
տան, և իբրև ընկալաւ պատուիրան ի սրբազան կարդինա-
լէն Կոլոննայէ, քարտուղարէ Ս. Ժողովոյն յայնմ ժամանա-
կի, կազմել զուխտ դաշինն և զպայմանսն, զորս ընդունել*

ունէր արքեպիսկոպոսն երդմամբ յառաջ քան զմեկնելն ի Հռովմայ՝ միանգամ բոլորովին ի կողմն արքեպիսկոպոսին առ ահի ապագայ վնասուցն, զոր հատուցանէր արդեօք նմա արքեպիսկոպոսն, եթէ աղաչեալ էր միջնորդութեամբ համազգեաց իւրոց և իշխանաց, դեսպանաց և այլոց երևելի պաշտպանաց, առանց փութաջան աջակցութեան նորա: Թուէ-պէտ և խոհականութեան համարէր տեսուչն զայս գործ՝ այլ վրիպեցաւ յոյժ, քանզի գիտէր իսկ քաջ և տեղեկագոյն էր քան զամենեսեան՝ թէ յամառեալ պնդեալ է արքեպիսկոպոսն անդառնալի ի միտս և զի հանապազ փաստակար էր աստուածահաճոյ գործոց և լիցի առ յապա: Վասն որոյ հարկ էր նմա անտես առնել զամենայն օգուտ անձին և զայնմանէ միայն հոգալ, որ ինչ ըստ կարծեաց նորա առաւել օգտակար իցէ Ս. Աթոռոյն. զի եթէ և արձակեալ իսկ էր ապա Նիկոլ գէթ խնդրէր Ս. Ժողովն զելս հնարից՝ թէ զիարդ զնա մերժեսցէ ի պաշտամանէն ի յապայս: Իսկ յարձակելն անդ զարքեպիսկոպոսն զայս ինչ յուշել կալաւ Ս. Ժողովն, զի կատարեսցէ զխորհուրդս և զխնդրուածս իշխանացն Լեհացւոց, և պատժեսցէ զդատաւորս Հայոց, որք խռովութիւնս անդադար յարուցանէին վասն կալանաց արքեպիսկոպոսին այնու՝ զի ըստ աղաչանաց նոցա վարձուսցէ նոցա զտուժն, զոր երբեմն յոյժ ծանր և անտանելի համարէին. այլ և զայն խորհէր Ս. Ժողովն, զի յաջողեսցի գործ բնակարանի դըպրանոցին, որ տևեաց այնչափ ժամանակս մեծամեծ ճգամբք և խոչընդոտիւք, ընդունելով զայն շինութիւն յարքեպիսկոպոսէն իբրև նուէր ի մշտնջենաւոր վայելումն, որով լցցին բերանք չարաբանողացն և այնոցիկ, որք արհամարհէին զպայմանսն յիշատակեալս ի վերոյ, կռուելս ընդ փոխանորդին. հուսկ ուրեմն և զայս ինչ, զի ընտրելով զայր կաթոլիկ և կատարեալ ի գիտութեան յաստիճան յաջորդութեան Հայոց Իլվովայ՝ այսու իսկ անհնարին առասցեն ամբառնալ յայն աստիճան բռնաւորին Վարդանովիչի և այլոց հաւատակցաց նորա արևելեայց:

Վարեալ տեսչին զայն գործ սովորականաւն իւրով փութաջանութեամբ՝ ընկալաւ ի պարգևի մասին յարքեպիս-

կոպոսէն վասն մշտնջենաւոր ժամանակաց յօգուտ դպրանոցին զշինութիւնն՝ յորում էր դպրանոցն ի ժամանակի յայնմիկ, սոյնպէս և զհաւանութիւն կարդինալաց, հակառակելոց մինչև ցայն վայր՝ յընտրութիւն յաջորդի, և համոզեաց իսկ զարքեպիսկոպոսն, զի ինքնագիր խոնարհ խնդրագրով աղաչեսցէ զՍ. Հայրն կարգել նմա յաջորդ, ընդ որ ի զարմանս կրթեցան ամենեքեան: Եղեւ և անդադար ճգամբ ներգործելով ի վերայ կարդինալաց և խնդրելով զաջակցութիւն զեսպանան և իշխանաց՝ յուսայր Հ. Եղիսէոս յընթացս ամսոց ինչ բարեյաջող յեղանակաւ հասուցանել զգործն յըղձալին կատարած: Այլ իբրև յետաձգեցաւ գործն վասն հիւանդութեան Կոլոննայ կարդինալին և ապա, իբրև հետաքննեալ ամբաստանութեանցն, որ զարքեպիսկոպոսէն, բազում յանցաւորութիւնս ի նմա եգիտ սոյն կարդինալ, արժանաւորս պատժոց, վասն որոյ և կարծեաց ի նմանէ զսէր իւր նախկին՝ յուսահատեցաւ Եղիսէոս և յոյժ տրտմեցաւ, զի հարկ եղև նմա և այլ ևս զերկեամ մի բովանդակ կալ մնալ ի Հռոմ ի վնաս մեծ դպրանոցին:

Յամի Տեառն 1672, յորժամ զօրքն օսմանեան ընդ առաջնորդութեամբ սուլտանին Մուհամմէդի և մեծի վեզերին Ահմէտի նուաճեցին առին զԿամենիցպոդոլսկ, զպատուարն քրիստոնէութեան յամսեանն Օգոստոսի, և ի Սեպտեմբերի սկիզբն արարին պաշարեալ զԼվով, ուրում պաշտպանէին Ս. Կոյսն և Ս. Միքայէլ և այլ պահապանք երկնաւորք՝ երկոքեան ընկերքն Եղիսէեայ փախեան ի Կրակով քաղաք, ուրանօր մնացին գրեթէ ամ մի հանդերձ չորեքումբք աշակերտօք, քանզի զմին ի նոցանէ մերժեալ էին ի դպրանոցէն յաղագս անյաջողութեան նորա, իսկ այլքն ցրուեալ վտարեալ էին անտի, տրտնջելով զուսուցչացն, որք ոչ գիտէին զլեզուն Հայոց: Մինչդեռ տարակայ էին նոքա՝ զնորոգ շինութիւն դպրանոցին թափուրն ի վերակացուէ, յոր խնայեալն էր թշնամեացն՝ հրձիգ արարին թափառական զինուորք Լեհացւոց: Սովաւ զեան մեծ եղև դպրանոցին, զի մատնեալ էին ի կորուստ խուցք փայտաշէնք յարմարաւորք թուով երկոտասան, զորս ի մօտոյ կառուցեալ էր Հ. Բասիլ ի վերայ զլխա-

ւոր դպրանցն ըստ յանձնարարութեան Ներսիսեայ։ Այլ մեծագոյն եղեն չարիքն, զի ծախեցին Հայքն. քարոզեցաք ի պէտս ուղղոյն զամենայն արծաթ և զթոշակ օժանդակութեան և զանօթս և զայլ ամենայն ինչս, և դարձեալ ապա յետս յԵլփով ըստ հրամանի Ս. Ժողովոյն, և յետ հրաժէշին զքարոզչէն որմունս միայն զդպրանոցին կանգունս թողեալ՝ ի խուարչոտին և յանձնեալ ի տան միոջ ամփոփեցան ի քաղաքին, զի փոխանորդն ըստ սովորական անզգութեան իւրում ոչ եւ նոյն ի բնակութիւն զնախկին տուն դպրանոցին. Հուսկ ուրեմն յայտնի չարիս բարդեցաւ և այն՝ զի ընդդէմ հրամանի Ս. Ժողովոյն ընկալեալ եղեն անդրէն ի դպրանոցն չորեքին աշակերտքն, որպէս ասեն, ըստ պահանջելոյ Բանուցցեայ, զոր խարեալ էին պատիր անեղեկութեամբք զփնձակէ գործոյն։

Մինչդեռ ի Հռոմի էր Ներսէս, յանձն առնէին նմա քննել և ուղղագրել ըստ օրինակի Լատինացւոց զպատարագամատոյց գիրս Հայոց հանդերձ Աւրատախանաւն գերմանացի կրօնաւորաւ ի կարգէն Դոմինիկեանց, որ քարոզիչ էր Հայոց ի Լիվօռնոյ և ըստ կարի հմուտ էր լեզուին Հայոց, քանզի կեցեալ էր ի Մեծն Հայս ամս երկոտասան, և հանդերձ Յունանեանիւ, արդի յաջորդաւն Հայոց Լիվովայ և երկոքումբք քահանայիւք Հայոց, Նարդսաւ և Յովհաննու, թարգմանչօք Ս. Ժողովոյն։ Զայս գործ, որ այնչափ գժուարութեամբ սկսաւ ընդ հայեցողութեամբ Ս. կարդինալին Նանի, որ ներկայ էր յայժ յարարողութիւնս պատարագի զկնաւորեցին ըստ ուղղութեանցն, արարեալ ի Հ. Կղեմենտեայ Գալանոսէ ի Լեհաստանի, արտաքս միայն ընկենլով զյիշատակութիւն անուան հերձուածող կաթողիկոսին, յաւելով բառս յաղագս Հոգւոյն Սրբոյ, թէ ի Հօրէ և յՈրդւոյ բղխի։ Զպատարագամատոյց գրոյն առ կախ ձգեցին առ ժամանակ մի, ցրուանդակ ուղղագրութիւն Ս. Գրոցն Հայոց, առ ինչ պիտոյ էին յոլովագոյն ժամանակ և ուղղեաց հմտագոյնք եւս, քան յիշատակեցաքդ ի վերոյ Հայք, որք առ յայժ սիրելոյ զլեզուն Լատինացւոց, զոր և ոչ քաջ իսկ գիտէին, և ածէաք զօրով հանօրէն մամնագրութեանցն Հայոց նախնեաց, այլ և Հ. Գալանոսի՝ հնա-

ըսցին նորատի իմն լեզու հայկական, բռնաբար կցկցելով ի նա ըստ օրինակի լատին լեզուի թիւս ընդդէմ յատկութեան լեզուին և խոնարհմանս և աստիճանս բաղդատութեանց և այլ բազումին, հակառակ պարզութեան լեզուին, որով փայլի հայերէնն: Զայս թեթեւամտութիւն պատանեկան աշխուժի յանդիմանէին և դատապարտէին փոխանորդն Հայոց Լըվովայ, որ հմուտ համարէրն յայսպիսի գործս, և հարքն Թէատինեանս և Եղյլխիոս, այլ և համօրէն աշակերտք և ուսումնաարարք պապական դպրանոցին, որ երկնչէին յոյժ, զի մի արձանեսցին Ս. Գիրքն այնու լեզուաւն, (եթէ ոչ զգուշաւորք լեցին) յորժամ յանձն լեցի նոցա ուղղագրութիւն մատենիցն:

Եղյլխիոս, որ թախանձէր անդադար, զի վախճան տացեն գործոյ իւրոյ և արքեպիսկոպոսին՝ ըստ հրամանի Ս. կարդինալին Կոլոննայի գրէր թուղթս հանապազօր, յորս ապացուցանէր, թէ մարթ է անխար յուսալ յաջողութիւն արքեպիսկոպոսին, եթէ զնոքն (զԵղյլխիոս) առաքեսցեն յԼըվով հանդերձ յոլովագոյն արժանաւոր օգնականօք, որպէս զի առ նոցա մեծապէս ևս ազդիցէ արքեպիսկոպոսին և հարկեսցէ զնա բարւոք կենցաղավարել, և զի դժուարին իսկ է կարծել, թէ ծերունի ոք ամաց իբրև ութսնից, հազիւ ունելով յանձին զօրդւոց իւրոց, յետ բազում այնպիսի անյաջողութեանց՝ կարասցէ կրկին գալ ի վէգ ընդ Ս. Աթոռոյն, ընդ արքային, ընդ նուիրակին, ընդ քարոզչին, ընդ եկեղեցականս և ընդ ժողովրդեանն, որ կաթոլիկ է արդէն: Ակնարկէր դարձեալ և այն, թէ վտանգաւոր յոյժ է Ս. հաւատոյն և միութեանն, յետ ընդունութեան կաթոլիկ յաջորդի եթէ ոչ փակեսցին առհասարակ դրունք առաջի Վարդանովիչի, որ ի ձեռն խարդախութեան կարող է հալածել զկաթոլիկս, կոչել յարեւելից զհերձուածողս և համոզել զժողովուրդն Հայոց Լեհաստանի դառնալ անդրէն ի հերձուածն: Այլ եթէ և դաւանեսցի նա զհաւատս կաթոլիկաց, և ընծայեցուսցէ զանձն կաթոլիկ (որպէս առնեն ընդհանրապէս արեւելեայք) յանդուգնութիւն մտանէին արդեօք աշակերտք պապական դպրանոցին, տեսեալ զի ի կաթողիկոսէն Հայոց է նոցա ակն ունել պատուոյ և եպիսկոպոսական աթոռի: Գրէր երկրին և ցուցանէր ինչ ինչ

պայմանս դաշինն, զորս հարկ էր արքեպիսկոպոսին երդմամբ առնուլ յանձն, նախ քան զմեկնելն իւր ի Հռովմայ, յորոց միջի կարեւորք են սոքա, զի մի պահեսցէ ի տան իւրում կանոնս կասկածելիս. մի վերագրեսցէ անձին իրաւունս ինչ իշխելոյ ի վերայ դպրանոցին և աշակերտացն. մի լիցի ամենեւին վրէժխնդիր այնոցիկ, որք հնարիւք հնարիւք սատար եղեն դարձանն նոցա ի Հռովմ. մի մեծարեսցէ ամենեւին յեկեղեցիս քահանայս հերձուածողս կամ կասկածելիս և զորս ի հերձուածողաց անտի իցեն ձեռնադրեալք. զի ի բաց կորզեսցէ ուստի հարկն իցէ՝ զամենայն գիրս Հայոց հերետիկոսական և մի տացէ զայնոսիկ ի ձեռս աշակերտաց, որպէս արարին միանգամ. զի յաճախակի յայց ելանիցէ եկեղեցեաց կամ ինքնին անձամբ կամ ի ձեռն այլ ուրուք, հանդիսացելոց ի բարեպաշտութեան և հմտագունի ի գիտութիւնս. զի մի անտես արասցէ զեկեղեցիս, և մի թափուր թողցէ զնոսա ի քահանայից և ի Ս. պատարագէն, որպէս էին յեկեղեցիս Իլվովայ որ յարուարձանսն, նախ քան զգալուստ քարոզչացն յԻլվով. զի զաստիճանս վարդապետութեան Հայոց տացէ լաւագունից աշակերտացն դպրանոցին. զի տացէ ի կիր զեկեղեցական մատեանսն, որ ի Հռովմ ուղղագրեալք են. տացէ թոյլ քարոզչացն ուսուցանել քահանայիցն Հայոց զբարոյական տեղիս (casus conscientiae). զի զայնոսիկ միայն ձեռնադրեսցէ՝ որք յաջողութեամբ հարցաքննեալ իցեն ի քարոզչացն. զի մի նեղեսցէ զժողովուրդն, պահանջելով արծաթ բազում վասն թաղման, պսակի, և այլն։

Եւ զի կարի դժուարին էր գտանել այլ յարմարաւոր ի պաշտօն յաջորդի՝ յանձն արարեալ Նիկողոսի քանի մի անգամ, ցուցանել զոք յայնոցիկ՝ զորս ինքն ճանաչէր և արժանաւոր համարէր այնմ աստիճանի, զի ի բազմութեան ընտրելոց դիւրագոյն եւս լիցի ընտրել ի նոցանէ զմի ոմն։ Այլ ի համար էարկ Նիկողոս զուսումնասէր աշակերտսն, որք առ հասարակ վասն դեռաբոյս հասակին անպատշաճք էին եպիսկոպոսական աստիճանի, (թէպէտ և արժանաւորագոյնք եւս էին քան զայլսն), վասն որոյ եցոյց Ս. Ժողովոյն զչորեսին զայսոսիկ արս. զՀ. Պաուրխալովիչ, Հայազն Իլվովեցի, որ

մտեալ էր ի կարգ Դոմինիկեան կրօնաւորաց (praedicatores) նախ քան զսկիզբն Միութեանն, այր աստուածաբան երևելի և քարոզիչ. զԲիստուտուրովքէ, զՀայ երէցն Զամոսեայ, հանդիպացեալ ի փութաջանութիւն վասն հաւատոյ և ի գիտութեան լատինական և հայացի ուսմանց, զորմէ ասէին՝ թէ կամիցէ լեալ թագուհւոյն Մարիամու Լուդովիկէի ամբառնալ զնա յաստիճան փոխանորդութեանն Իլվովայ. զՎերեմովէչ, փոխանորդն Հայոց ի ժամանակին յայնմիկ, եպիսկոպոս Բոզգանիոյ, ծնդեամբ Իլվովեցի, ազգակից արքեպիսկոպոսին, և հուսկ զսիրելին իւր զաշակերտ զՎարդան Յունանեան, արևելեայ Հայ ի Թոխատ քաղաքէն, որոյ կացեալ ամս երկուս ի քաղաքական դպրանոցին Հռովմայ՝ յինքն յանկոյց զամենեսեան բարի բարի ձիրք վարուց: Ծանոյց Ալյխիոս ընտրողացն և զպարագայս ընտրութեան կամ մերժման ընտրելեացն, և թէպէտ բաւ երևութին նպաստաւոր լինէր աշակերտին իւրում, բայց և վասն փոխանորդին աշխատ յոյժ լինէր կամ առ այն՝ զի յուսայր, թէ փոխանորդին անցեալ գոլով զաւուրբք և ախտացեալ՝ ոչ բազում ժամանակս կեցցէ և զի դիւրագոյն ևս լիցի ղեկավարել զնա, որ երկչոտ էր բնութեամբ, կամ առ այն՝ զի ակն ունէր յետ այնր աջակցութեան իւրոյ, խնդրել առնուլ ի նմանէ զտուն վասն բնակութեան դպրանոցին, կամ զի համարէր՝ (որպէս և սովորութիւն էր նորա զայս առակ ի կիր արկանել՝ թէ Լաւագոյն է որ ինչ յայտնի է) թէ ոչ ինչ կարասցէ Վերեմովէչն վնասել առաքելութեանն, այլ մանաւանդ նըպաստաւոր լիցի նմա և պատուար մեծ վասն քարոզչացն ընդդէմ զաղտագողի ամբաստանութեանց և չարախօսութեանց: Իսկ արքեպիսկոպոսն, որպէս ընկալեալ էր պատուէր՝ եցոյց յանձնէ զընտրեալն ամի անյարմարաւոր, զՀ. Լուդովիկոս Թորոսովէչ ի կարգէն Դոմինիկեանց, զոր առ մերձաւոր ազգակցութեան միայն նախապատիւ գնէր ամենեցուն: Այլ իբրև ետես, թէ յայն ընտրութիւն ոչ հաճի Ալյխիոս, յորմէ ակն ունէր օգնութեան մեծի՝ ոչ ևս պաշտպանեաց ընտրելոյն իւրում: Յետ ժամանակաց ինչ ընկալաւ տեառն թուղթս ի Լեհաստանէ, թէ մեռաւ յիշատակեալն Թորո-

ամիս, և յայնմ հետէ սպասել ևս կալաւ, զի ընտրեսցեն զմին յայնոցիկ, զորս իւր ցուցեալ էր, ճարտար հնարիւք անձամբ առաջի առնէր արքեպիսկոպոսին փոխանորդն, իսկ ի ձեռն բարեկամաց իւրոց և իշխանաւորաց՝ զՎարդան, քանզի գիտէր, թէ բարեհաճ է ընդ Վարդան Ս. Ժողովն: Այլ յայտնապէս մերժեաց արքեպիսկոպոսն զփոխանորդն ասելով, թէ լաւագոյն ևս իցէ նմա մեռանել ի բանտի, քան հաւանել ընդ ամբարձումն փոխանորդին յայն պաշտօն. քանզի քաջ տեղեակ է ինքն, (ի ձեռն փաստից ինչ և նամակաց փոխանորդին, գրելոց առ նուիրակս, զորս կալեալ էր ինքն արքեպիսկոպոսն, ուրանօր իբրու թէ բացատրէր փոխանորդն խիստ և արհամարհական բանիւք զթերութիւնս արքեպիսկոպոսին) թէ նա իցէ գլխաւոր հեղինակ կալանացն իւրոց. իսկ զերկոցունց զառաջնոց ընտրելեացն թերահաւատէր, գուցէ ոչ հնազանդեսցին նմա կամակարութեամբ յամենայնի, վասն որոյ և ըմբռնեալ յորդորմամբ՝ ինքնին առաջարկեաց զՎարդանն, և ըստ խորհրդոյ Աղյխեայ, (որում զայս պատուիրեալ էր կարդինալն Ալընեայ) խնդրեաց իսկ և իսկ գլխաւոր խնդրու զՍ. Հայրն վասն Վարդանայ, ակն ունելով սովաւ ընդունել հրաման դառնալոյ յԻզմիր: Այլ յերկարեցաւ գործն վերստին, քանզի թէպէտ և կարգեալ էին նիստք ժողովոյ վասն իրացս այսոցիկ՝ բայց ոչ գումարեցան ժողովքն, էր զի յաղագս հիւանդութեան կարդինալին Ալընեայի, էր զի պատճառանօք անկարութեան գալստեան Վարդանովբէին ի Հռոմ կամ կատարածի պատերազմին Տաճկաց. և այսպէս ձգեցաւ գործն, մինչև կարդինալն Ալընեայ փոխեցաւ ի պաշտամանէ քարտուղարի Ս. Ժողովոյն Տարածման Հաւատոյ ի պաշտօն անդամոյ Ս. Օֆֆիցիումին*), զորմէ լիցին մեզ բանք ի սորին:

Բայց ոչ վասն գործոց արքեպիսկոպոսին և եթ եկեալ էր Աղյխեան ի Հռոմ, այլ մանաւանդ վասն հաստատելոյ զվիճակ գոյութեան դպրանոցին և զառաքելութեանն, որոց ոչ էր հնար հաստատուն կալ մնալ առանց պաշտպանաւոր վատակաւորաց, որ վաճառք իցեն սիրոյն Աստուծոյ, և ար-

*) Մի է յատենից Հռովմայ ժամանակին. Թարգ.

զեստի հրաժարեալք յաշխարհէ և ի մարմնոյ՝ (և ոչ ի վերին հրեա, որպէս առնեն կրօնաւորք բազումք) պատրաստականք լեցին զնել զանձինս իւրեանց վասն Աւետարանին,—վասն որոյ աշխատ յոյժ եղև, զի զարս այսպիսիս կոչեցէ ի Լեհաստանս Յայտ արար յանձնէ առ Ս. Ժողովն Թէատինեանց, թէ կարէ ինքնին ընդ զպէտս ուղղոյ երից կամ չորից քարոզչաց: Զայսմանէ բազում անգամ բանախօս եղև և կարդինալն Կոլոննայ ընդ Հ. Խնամակալի կարգին Թէատինեանց և խոստացաւ խնդրել և առնուլ վասն նոցա և զհամօրէն առաքելութիւնս Հայոց Լեհաստանի և Վալաքիոյ, Սեմտեկրզամի և Լվովոյի և յարևելս բովանդակ և յարևմուտս, բայց միայն զի զոյեն ի մէջ իւրեանց արս արժանաւորս յայն գործ: Այլ իբրև թուղթք Հ. Կարգապետին Գարիմբերդի, զոր գրեացն առ ամենայն վանորայս և առ ուխտս միաբանութեանց՝ ընդունայնք եղեն, (զի թէպէտ և արք ոմանք հաւանեցան ի հրաւէրն, այլ ոչ ոք ի նոցանէ ընկալեալ եղև, կամ առ ի չգոյէ պատշաճաւոր ուսման կամ առ այլոց պատճառաց) ապա մեկնեցաւ Ագլիսիոս ի Կամբանիա ի Նէապօլիս, ուր եգիտ արս երիս. երկուք ի նոցանէ քահանայք էին և երրորդն յաշխարհական կարգէ: Յետ աւուրց ինչ անցանելոյ հրաժարեցան քահանայքն ի խորհրդոց իւրեանց. իսկ երրորդն որ ի Հռովմ կոչեցաւ, իբրև եսես՝ թէ բազում ժամանակս հարկ է մնալ ուղևորութեանն Ագլիսեայ ի Լեհաստան՝ դարձաւ և նա անդրէն ի Կամբանիա: Պնդագոյն քան զնոսա էր ի խորհուրդս իւր պատանին Պաւղոս Աւգուստինոս Արրոցցեոյ ի Գենուայ քաղաքէ, յաջողակ յոյժ և ճարտարամիտ, որ եկաց մնաց ի սուրբ խորհրդեանն ամ մի ողջոյն և գրեաց զայսմանէ ոգելից թուղթս առ իշխանաւորս իւր և մնայր անշուշտ ի բանի իւրում, բայց ծնողք նորա պատճառանօք վատառողջութեան նորա խնդրեցին ի Հ. Կարգապետէն հրաման, զի կացցէ մնայցէ յԻտալիայ: Յոյժ տրտմեցաւ ընդ այն Ագլիսիոս և աշխատ սկսաւ լինել, զի զառաքելութիւնն փոխանակ Թէատին կրօնաւորաց յանձն առասցեն Հայոց Քարոզչացն, որոց գործ է պատրաստել կղերիկոսս և աշակերտս դպրանոցաց, որք և ի Վարշաւի հան-

գիտացան ի սուրբ առաքելոցն։ Ուրեք ի մէջ ասացցուք, թէ որքան նուազագոյն ծախուք, այլ մեծագոյն եւս արդեամբ կարեն գործել ի Հայս Եւրոպայ, եւ այսու գանձն մխիթարէր, թէ ընդ նոսա լիցի երբեւ ընդ հայրենակիցս, մինչեւ ուսանիցին նոքա զլեզուն Հայոց։ Այլ եւ զայս առաջարկութիւն մերժեցին որբազան հարքն վասն կարեւոր պատճառաց, ոչ կամեցեալ փոփոխութիւնս այսպիսս մուծանել։ Վասն այսորիկ ձանձրացեալ Աբգարիոս մնալով ի Հռովմ այնքան ժամանակս, առանց ինչ օգտից եւ կորուսանելով ի ժամանակի պատերազմին Օսմանեանց զյարմարաւոր աւելի ընծայեցոյ գանձն ի գործն աստուածահաճոյ. եւ զի ոչ գիտէր, թէ զի՞նչ արդեօք վճիռ յարուցեն վասն նորա, (քանզի անլուր համարէր Բանուցցի զկեալն նորա ի մէջ Հայոց վասն ատելութեանն ծագեցոյ ի ժողովրդեանն ընդդէմ նորա, իսկ իշխանաւորք նորա զամենայն ջան ի գործ արկանէին զի առաքեսցեն զնա ի Պաղգեա), վասն որոյ եւ սկսաւ հոգալ յոյժ զերագս դպրոցանէ եւ ածէր իսկ բազում անգամ զմտաւ զանալ ծածկաբար ի Լեհաստան, մանաւանդ յորժամ լսէր, թէ վասն երկու ամաց կոչեցեալ էր ի Հռովմ. այլ ոչ կամեցեալ արատ ածել բարի համբաւոյն իւրոյ գաղանի փախըստեամբն առանց հրամանի իշխանութեանն՝ դիմեաց առ կարդինալն Կոլոննայ եւ էառ ի նմանէ հրաման կալոյ առ ժամանակ մի ի Ֆլորէնտիա, թէպէտ եւ ինքն հանդերձեալ էր երթալ ի Լիվոռնոյ, եւ չոգաւ իսկ անդր առնս տեսանելոյ ընդ Հայս քաղաքին այնորիկ եւ լուեալ վերահասու լինելոյ, թէ չիցէ արդեօք հնար փոխել անդր զդպրատունն ըստ կամաց Ոսկացին կրօնաւորացն։ Այլ իբրեւ ծանեաւ անդ, թէ անհնարին է գործն, քանզի նուազունք են յոյժ թուով Հայք, որ առ ժամանակ մի կեան անդ յաղագս գործոյ վաճառականութեան եւ բացագոյն յընտանեաց իւրեանց՝ յուղի անկաւ անտի երթալ ի վանս իւրոյ կարգին, Ս. Մարիամու դէ Մոնտէ Նէգրոյ, որ սակաւ ինչ մղոնիւք հեռագոյն էր ի Լիվոռնոյ, կառուցեալ ի գեղեցիկ ծովեզերեայ վայրի, որպէս զի փոքր մի հանգիցէ ի վաստակոցն յանտառախիտ ի տեղւոջն։

Զի եւ մեկնեալ ի Ֆլորէնտեայ ի Լիվոռնոյ՝ ընկալեալ

եղև Նղյխսիոս ի մեծ իշխանէն Տոսկանայի մեծաւ պատւով և սիրելութեամբ, որպէս սովորութիւն էր իշխանին։ Անդանօր դէպ եղև նմա խօսել ընդ եպիսկոպոսին Մարսիլեայ, զոր տեսեալ էր ամենաքրիստոնեայ թագաւորն արտաքոյ կարգի դեսպանութեամբ առ իշխանն Տոսկանայի՝ վասն հայ ապարանի կաթողիկոսին Էջմիածնի, զոր սուղ ինչ յառաջ փոխեալ էր Ոսկանայ եպիսկոպոսին յԱմստերդամայ ի Մարսիլեայ, և թախանձագին խնդրէր ի դեսպանէն, զի մի տացի Հայոց թոյլ ապագրել ի կաթողիկ պետութեան և ի վիճակի բարեպաշտօն եպիսկոպոսին զիրս յիմարականս ի մեծ վնաս կաթողիկէ հաւատոյն։ Ընկալեալ դեսպանին զլաւոր անգէտութիւնս յաղագս ապարանին և Ոսկանայ, զոր կաթոլիկ համարէր՝ խոստացաւ զամենայն ջան ի գործ արկանել առ ի կատարել զայնպիսի օրինաւոր պահանջ։ Մինչդեռ հանդերձէրն Նղյխսիոս երթալ ի վանս Ս. Մարիամու զէ Մոնտէ Նէգրոյ, կոչեցաւ կարդինալն Կոլոննայ ի պաշտօն անդամոյ Օֆֆիցիումին իսկ ի պաշտօն քարտուղարի Ս. Ժողովոյն Տարածման Հաւատոյ կարգեցաւ Բանուցցի, որ յայնմ ժամանակի առաքելական նուիրակ էր ի Լիվոռնոյ, և փոխանակ նորա զայն նոր պաշտօն վարէր օգնականն քարտուղարի Հայրն Յենի, որ սիրով մեծաւ կոչեաց զՆղյխսիոս ի Հռովմ զի, որպէս խոստանայրն՝ փութով վախճան արասցէ գործոյ նորա։ Ոչ գիտէին ինչ էր Նղյխսեայ հրաժարել յղձացեալն հանգամանէ կրանաւէտ միայնութեանն այնորիկ, երկուցեալ թէ նոր ի նորոյ ձգձգեսցի անդրէն գործն. բայց զիջաւ ընդ բաղձապատիկ թախանձագին խնդրուածս աշակերտաց իւրոց, որոց ի Լեհաստանի կային և որոց փոխեալ էին ի Հռովմ։ Յետ մահուան Կազիմիրայ Մուրադովիչի ի քաղաքական դպրանոցն Հռովմայ, զոր էառ ընդ իւր Նղյխսիոս, որպէս ի վերոյ ասացեալ է՝ եկն եհաս ի Հռովմ այլ ոմն աշակերտ դպրանոցին Լվովայ, զինա թէ խափանեցոյ յայնմ ժամանակի, և մինչև ցայսօր ուսանի ի Հռովմ ի բարձրագոյն դպրանոցի Ս. Ժողովոյն. և յառաջ քան զնա ժամանեցին Դէոդատ (Աստուածատուր) Ներսեսովիչ ուսումնասէրն, որ յետ յարձակմանց Օսմանեանց ի վերայ բնիկ քաղաքին իւրոյ Կամ-

ըմպելի և ուտելոյ պճնալից կերուածն, խնդրէր տեղի ինչ անդորր, ուր զօղեսցի, և Վարդան, որ յաջորդ է զորդիս և յառաջագոյն իսկ անուանեալ կոչէր Հռովմայեցի վասն երկարատև բնակելոյ նորա ի քաղաքին յայնմիկ: Զորեքին սո- քա կարի համեստութեամբ և բարի բարի վարուք իւրեանց այնպէս յանկուցին յինքեանս զսիրտ ամենեցուն՝ մինչև Ս. կարդինալին Մորոնեայի ոչ հանդուրժել ի գովութեանց և յանձնակի յայտ առնել, թէ դատախազեալ են նոքա յար- գարև հրեշտակային վարս, ի պարծանս մեծ քաղաքացն: Այլ ընդ փութանակի գալն Ապգարեայ ի Հռովմ ազգեաց մնա- ւանդ թուղթ մի, զոր ընկալաւ ի խնամակալէ ուսմնէ արք- եպիսկոպոսին Հայոց, որ ոչ քաջ գիտէր զլեզուն Իտալացւոց վասն որոյ և յանձն արար առնն գրել զթուղթն յի- տալացի լեզու: Այսու թղթովն, որ լի էր սպառնալեօք՝ կոչէր արքեպիսկոպոսն զԱպգարիոս, զի տացէ պատասխա- նի նմա, անծանօթին զրոյց՝ զամենայն յօդուածոց ամբա- ստանութեանց, որ գտանին ի թուղթս նորա (Ապգարեայ) առ Ս. Պապն և առ նուիրակն Լեհաստանի, քանզի զայսմա- նէ միայն կախեալ կայ կատարած գործոյն իւրոյ: Զայրացեալ Ապգարեայ ընդ այս՝ գրեաց անդէն պատասխանի, թէ փու- թացի իսկ ժամանակի գալ և անձամբ բացայայտել զայս գործ: Եւ իսկ և իսկ յաւուրն անդ երկրորդի եմուտ ի նաւ և ժամանեաց ի Հռովմ յաջող հողմով ի ժամանակս ամա- նային ջերմութեանցն սկսանելոյ և հանութեամբ լուեալ զըն- ցաքութիւնս արքեպիսկոպոսին յաղագս անձնահութեան թըղ- թոյն՝ ըստ նախնի եռանդեանն իւրում բանակցել կալաւ ընդ օգնականի քարտուղարին Ցեննեայ յաղագս կատարածի գործոյ քարոզչութեանն:

Յայնժամ կազմեաց Ապգարիոս ըստ պատուիրելոյ Ցեննեայ պէս և պէս միջնորդագիրս, և կարգեաց առանձինն նիստ կարդինալաց յաղագս ածելոյ զգործն ի կատարած: Եւ այնմ ժողովոյ, յորում էին և կարդինալքն Աշաֆէրի, Սոլինի, Վի- տոնիու և Մորոնեայ՝ առաջի արար Ապգարիոս ի թիւս այլոց զհետագայ կէտս.

ա) Տեառըն առաքելութեան առ Հայս Լեհաստանի և

մերձակայ աշխարհացն խնդրէ խոնարհաբար, զի նորոգեսցեն օրէնքն 15-ի Նոյեմբերի 1664 ամին, որով արգիլեալ է դառնալ Հայոց ի Մխութենէն ի Լատինականութիւն։

բ) Արգելին համարեսցին բարեպաշտ կամք Հայոց Լեհաստանի յօգուտ վանացն Լատինացւոց, եթէ չիցեն վաւերացեալք ի Նուիրակէն. քանզի այսու մնասանօք զրգռի ատելութիւն Հայոց առ Լատինացիս, զորս ադաչս կոչեն։

գ) Յաւելցի թոշակ փոխանորդին Հայոց, այնու զի հաւանեսցի նա այլում տալ զիրաւունս յաջորդութեան։

դ) Յիշատակեալ պատանին Կալեմիր տարեսցի ի Լեհաստան զնի լինիլ ի կատար ածելոյ զփիլիսոփայական ուսմունս և զքարոզական աստուածաբանութիւն։

ե) Պատուիրեսցի հայրն Թէատինեանց, զի զգուշաւորք եւս լիցին յընտրելն արս ի պաշտօն քարոզչութեան։

զ) Ընկալցին յառաքելութիւնն այնքիկ և եթ արք, որք ունիցին զբաւոր վկայութիւնս Ս. Կարդինալին և Խորհրդականացն կամ անդամոցն վասն բարի վարուցն և պատրաստականութեան ի մասին ուսմանց. քանզի անպատշաճութիւնք ծագին հանապազ յանփութութենէ քարոզչացն կամ վասն թերի ուսման նոցա ի գործս հաւատոյ։

է) Ս. Ժողովն տացէ առաքելական նուիրակին իրաւունս վարելոյ յառաքելութենէն առանց երկարաձիգ հետազօտութեանց զքարոզիչսն անփոյթս և ոչ յաջողակս ի պաշտամունս իւրեանց։

ը) Յորժամ ոչ բաւիցէ սէրն Աստուծոյ ի բորբոքել ըզսիրտս քարոզչաց՝ խորհուրդ տայցեն ընդ իշխանաւորս Թէատինեանց յաղագս տալոյ արժանաւոր քարոզչացն, որք յետ տասնամեայ օգտակար պաշտամանց իւրեանց, ստանիցին զեղուն Հայոց կամիցին անդրէն ի խուցս իւրեանց դառնալ՝ արտօնութիւնս ինչ, զոր օրինակ՝ իրաւունս ընտրելոյ ընակութիւն բառ կամաց անձանց յոր և իցէ վան, որ սեփականութիւն իցէ կարգի իւրեանց, բառ այսմ և մնանելոյ յոր և իցէ վարչութիւն հօգեար. իրաւունս խոստովան առնելոյ զմօրվորդն ամենուրեք, առնով միայն զհրաման եպիսկոպոսի տեղւոյն. իրաւունս մատակցելոյ յիրկուս ուաց վարչութիւնս

յետ տասնամեայ պաշտաման, ի չորիս՝ յետ հնգետասանամեայ պաշտաման, իսկ յետ քսանամեայն՝ յամենեսին։ Զի քարոզիչքն, որ գան ի Հռովմ վասն գործոց իւրեք՝ յորժամ դարձցին անդրէն յառաքելութիւնն՝ տացի նոցա օգնական ի կարգէ կրօնաւորութեան նոցա. իսկ եթէ տեսուչք առաքելութեան լիցին՝ տացի նոցա տեղի բնակութեան ի վանս կարգի իւրեանց և պատիւ գացեն իբրև իշխանաւորք օտար աշխարհաց. զի եթէ դարձցին ի կարգս կրօնաւորութեան իւրեանց այնուքիկ, որ ամս ինն վարեալ իցեն զպաշտօն տեսչութեան՝ տացին նոցա մշտնջենապէս արտօնութիւնք հարց խորհրդականաց։ Նոյն վասն իւր յայս արար Սիքստոս, թէ զամենայն աւուրս կենաց իւրոց հրաժարի յայսց և յայլոց արտօնութեանց։

թ) Կարեւոր համարի, զի սահմանեսցին պատիժք վասն կրօնաւորացն, որ ծառայելով մարմնոյ, ջանան հանել և զայլս ի պաշտամանէ առաքելութեան պայլին, զորս կարգին իւրեանց նախագաս համարելով ընդհանուր բարեաց համօրէն քրիստոնէութեան։

ժ) Համարի, թէ հարկ է հարցն Թէատինեանց հաստատել զպրանոցս վասն պատրաստելոյ զարսն, որք հանդերձին երթալ ի տեղի առաքելութեանն և մանաւանդ վասն ուսուցանելոյ նոցա զձև վիճաբանութեան և զայլ ուսմունս կարեւորս. քանզի նոքա ըստ մեծի մասին տգէտք են լեզուաց և ճարտարախօսութեան, կամ եթէ յաջողեսցին իսկ յայտնիլ առաքելոյ՝ անփոյթք են ի փառաւորել յայնմ ապարիզի, յետ ծախելոյ Ս. Ժողովոյն արծաթ բազում ի պահել զնոսա և ի պէտս ուղւոյն։ Տնօրէնք զպրոցացն լիցին տեսուչք, որք կարգեսցին ի Ս. Ժողովոյն։ Պատուիրեսցի խառն կարգին (Թէատինեանց), զի յառաջ քան զհանդիսաւոր երդումն նորընծայքն յայտնեսցի նմա նպատակ այսց զպրոցաց, և եթէ ոք ի նոցանէ ըստ արդեացութեան Աստուծոյ կամիցի մտանել ի մի յայնցանէ՝ անդէն և անդ յետ երդմանցն առաքեսցի անդր. և եթէ կացցէ յար ի զպրոցին և զնի ամի միոյ մնասցէ ի սուրբ խորհրդեան իւրում՝ տացէ զերդումն տասնամեայ պաշտաման յառաքելութեան անդ։

Յամսեանն Սեպտեմբերի, որ օր հինգերորդ էր՝ Ժողովե-

ցան սրբազան կարգինալքն ի ցանկացեալն ի վաղնջուց հետէ ի նիստ վասն գործոց առաքելութեան Հայոց Իլվովայ․ կոչեցին և զՆիկոլայոս, որ տեղեկութիւնս ետ նոցա զամենայնէ և մանաւանդ զվարուց արքեպիսկոպոսին, զորմէ ոչ կամէր երաշխաւոր լինել․ այլ յայս արկանէր՝ թէ ուղղեսցի թերևս վասն զանցեալ հասակին և վասն երդմանցն՝ զոր ունէր երդնուլ և վասն կարևոր հարկի ընտրութեան յաջորդի։ Հաւանեցան կարգինալքն ընդ արտօնութիւնս վասն քարոզչացն և զայլս թողին ի յարմարագոյն ժամանակ և կարգեցին՝ թոյլ տալ արքեպիսկոպոսին զատնալ յաթոռ իւր, գրելով յառաջագոյն առ նուիրակն Լեհաստանի, զի ծանիցէ զմիտս արքային յաղագս կարգելոյ յաջորդի Հայոց, և առ կախ թողուլ զայլագայ կարգադրութիւնս մինչև ընկալցին պատասխանի։ Ոչ հաւանեցան կարգինալքն ընդ առաջարկութիւն Յեսեայ, զի առաքեսցի յառաջագոյն Նիկոլայոս հանդերձ երկու ընկերօք, յորոց մին յաշխարհական կարգէ իցէ և միւսն կրօնաւոր, և զի զրով տացի տեղեկութիւն Հ. Կարգապետին յանուանէ Ս. Ժողովոյն վասն արտօնութեանցն յիշատակելոց ի վերոյ։

Վասն նորոց յետաձգութեանս վիշտ մեծ եղև արքեպիսկոպոսին և տեսչին, որք երկնչէին, թէ զուցէ յորժամ դարձցի քարտուղարն Բանուցցի ի Պորտուգալիոյ՝ անփախճան ժամանակօք զգործն յերկարեսցէ։ Այլ հարկ էր հնազանդ լինել իշխանաւորացն ըստ առաջնումն։ Իսկ վասն արտօնութեանցն ծագեցաւ զժտութիւն մեծ ընդ միաբանս կարգին և ընդ Նիկոլայոս, թէպէտ և ընդհանուր միայն բանիւք տեղեկացեալ էին միաբանքն վասն արտօնութեանցն․ բայց պախարակէին՝ զի քարոզիչքն (յետ պաշտամանն ի նշանակեալ աւուր) կոչելոց են մասն ունել ի վարչութեանն։ Վասն որոյ խնդրեաց Նիկոլայոս ի սրբազան կարգինալացն, զի մի ի կիր արկցեն առ ժամանակ մի զայնպիսի միջոց փրկարար։

Ըստ առաջարկութեան Հ. Կարգապետի կարգեաց Ս. Ժողովն քարոզիչս երկուս վասն առաքելոյ ի Լեհաստան ընդ տեսչին, յորոց մին աշխարհական էր և միւսն եկեղեցական, երկոքին ի Մեդիոլան (Միլան) քաղաքէ․ բայց առաջինն, քանզի զժգոհ էր վասն վերահաս յապաղմանն՝ խնդրեաց զի

արձակեսցեն զնա ի պաշտամանէն, զոր և կատարեցին։ Իսկ երկրորդն, որ ամս հինգ ի նորընծայութեան էր,—ըստ զօրհ-նի սովորութեանն Թէաղինեանց՝ առք յաշխարհական կարգէ շունչն խրատունս տալոյ զհանդիսաւոր կրթութեան, մինչև կատարեսցին լրիւ ամք հինգ նորընծայութեան նորա—ընկալաւ հրաման, զի նախ քան զմեկնելն իւր յԻտալիոյ յայց երանիցէ ընիկ քաղաքին Հռովմայ, թէպէտ և բազումք ի հարց առ նախանձու ընդ բարի բարի յաջողակութիւնս նորա ոչ բարեհաճք էին ընդ նա այլ վասն անպաշտ ծովագնացութեանն յամեաց յոյժ յուղևորին, կորոյս Թուղթս բազումս Եգիպտոսց, և զիա թէ մերկանդամ յետս դարձաւ, զերծեալ յաջողութեամբ բազմի ի բարբարոսաց անտի և ժամանեաց յԻտալ յետ ամաց միոյ անցանելոյ զկնի ժամանելոյ տեսչին անդր։ Անդ անդանօր առ մի ոգջոյն, ուր ունելով խոստացելոյն նմա ի Յեննայ հրամանի փճարելոյ զաւխտ կրթմանցն. այլ երբեք ոչ ընկալաւ պատասխանի յաճախակի թղթոցն իւրոց առ քարտուղարն Բանուցցի՝ թերահաւատեալ թէ ոչ են հաճ ընդ նմա, եւ ի մնալ զանեալ յԻտալիա, որ կորուստ մեծ էր վասն զպրատոցին, քանզի հարկ էր Եգիպտեաց առ նմա արծաթ ի պէտս ճանապարհին. (բայց ինքն Եգիպտոս ոչ ընկալաւ զայն արծաթ ի Ա. Ժողովոյն, թէպէտ և խնդրեաց բազում անգամ)։ Եւ այլ ոչ խոհեմութեան էր գործն Եգիպտեաց, յոյր սակս և բազումք յանդիմանէին նմա, (թէպէտ և ոմանք որ անփորձքն էին՝ ջատագով էին նմա), քանզի էառ իւր ընկերակից զնորընծայ ոմն, յորոյ ի կեղծաւոր բարեպաշտութենէն խաբեցաւ ինքն, որ ճանաչէր զկեղծաւորութիւն, այլ զխրատ ի խարս անկաւ այլոց։

Համարէր տեսուչն, թէ արհամարհեալ են արտօնութիւնքն զծագրեալք. այլ եթէ լուաւ, թէ իշխանութիւնք իւր ունին ի մտի առ քարոզչաց արտօնութիւնս ինչ, բայց այնոցիկ միայն, որոց արդարև լեալ իցէ քարոզիչ և ոչ՝ որոց տաղքինն ի Կեհատատն յաղագս հանգստեան՝ գրեաց անդէն առ Յենի թուղթ, թէ քանզի բանք էին զկնդրոյն, զոր բարձ ի թողե արարեալ համարէր ինքն՝ վասն այսորիկ խնդրէ խոնարհութեամբ, զի արտօնութիւնքն, եթէ հաստատեսցին՝ տացին

առ հասարակ ամենայն քաղաքաց և զի մի ասացէ Թոյլ (Յե-նի) վեր ի վերոյ առնել զատաստան ի վերայ աղքատութեանն Իլվովայ, վասն հետագայ պատճառաց.

Նախ, զի ոչ հաճոյագոյն ինչ է բնակել յԻլվով ի Ռու-սաստանի քան ի Հնդիկս, քանզի մի և նոյն անյարմարութիւնք են ի ցրտոյ և ի տապոյ, ի մշտնջենաւոր ձմերան և ի մշտնջե-նաւոր ամարան։

Երկրորդ, զի մեծ է անդէն աղքատութիւնն ի վանդա-ւոր աշխարհս բարբարոսաց, իբրև ի Սկիւթիա և ի Թրա-կիա և յայլս։

Երրորդ, զի գործ կրկին է աղքատութեանն, — քաղաքու-թիւն և գլխանոցն. վասն որոյ և առաւել դժուարին է գայ-տանիլ պէտս ինչ քան զայլոց աղքատութեանց։

Չորրորդ, զի վասն աղքատութեանն Հնդկաստանի շատ է ուսումն չափաւոր, և զի մարթ է առաքել ի Մինգրելիա և զայս յաշխարհական կարգէ, ուրանօր բժշկութիւն է գործ Թէատինեանց. իսկ ի գլխանոցն Իլվովայ հարկ է առա-քել այս որք հանդիսացեալ իցեն ի կենցաղավարութեան և ի գիտութիւնս, որպէս զի յայս ամենեցուն փառս լիցին Աս-տուծոյ, որոց նմանողք եղիցին ժողովուրդքն։

Հաճոյ թուեցան յայս Յենեայ պատճառքն, այլ հա-ճոյագոյն ևս՝ թողուլ ձգել զգործն ապաստան ապագայ ժա-մանակաց։

Մինչդեռ մնայր արքեպիսկոպոսն անհամբերութեամբ պատասխանւոյ նուիրակին առ թուղթ Ա. Փոլովոյն՝ յան-կարծակի ժամանեաց ի վերայ նորա փորձութիւն, որ միայն ահ ազդեաց նմա այլ ոչ վնաս, վասն քահանայի ուրումն Հայոց, որում անուն էր Պօղոս, որդի նախանդամին Կամենեցի։ Այն այս քահանայ կասկածելի գտաւ ի գործս հաւատոյ, քանզի միշտ հնարէր ճարտարութեամբ խոյս տալ ի պատասխանելոյ, թէ ձեռնադրեալ իցէ նա, թէ ոչ, (մինչև ցայս վայր իսկ ժա-մանակի ոչ է յայտնի այս, թէպէտ և կղերիկոս զինքն կոչէ). այսու թերևս խորհրդով, զի քահանայ գոլով իւր, մի պաշ-տեսցէ զկարգս աստուածպաշտութեան ըստ ուղղութեան կաթողիկաց։ Անկեալ և ուսեալ էր նա ի Հայս և ապա ըստ

ռաջնորդութեան Եղիսեայ կոչեցեալ էր ի Կամենից և փոխէր առ արքեպիսկոպոսին զպաշտօն տնտեսի, առ ի չգոյէ այլոց: Ծանեան ոմանք, թէ ոչ երբէք խոստովանի նա ի Հռոմ և ոչ հաղորդի Ս. Խորհրդոյն, և ի հերետիկոսութիւն համարելով զնա մոլորեալ՝ յայտ արարին զնմանէ Յենեայ և արկին զնման զարքեպիսկոպոսն, թէ պահէ այլ հերետիկոս ի տան իւրում: Յանձն առար օգնական քարտուղարին Եղիսեայ, զի ածցէ զարքեպիսկոպոսն ի տուն նորա ի պատճառս այցելութեան. և առեալ զնա մեկուսի հանգերձ Եղիսեաւ և արքային Կոնչենի, որոց բարեկամ երկոցունցն լեալ՝ աջակից էր արքեպիսկոպոսին ի գործս նորա, յայտնեաց նմա զոր ինչ լուեալն էր վասն Պօղոսի, զոր ունէին ի մտի ածել ի դատաստան (կամ յատեան հաւատաքննութեան), եթէ ճշմարտեսցին իրքն: Նա վասն յարմարաւոր դիպուածոյն մի բառ միջէ թուեաց առաջի արքեպիսկոպոսին զամենայն անպատշաճ և զամբարիշտ գործս կենաց նորա, զորոց զօրհանապազ գրէին Ս. Ժողովոյն նուիրակն, քարոզիչքն, չէզոք անձինք և նոքին իսկ Հայք և ինքն Եղիսէոս. յայտ արար հուսկ յետոյ, թէ արժանի է արքեպիսկոպոսն խոստովանից պատժոց, եթէ ոչ կատարեսցէ յանձնհանէ, որ ինչ նմա անկն իցէ: Այլ յայտնեաց միամտութեամբ, թէ կամի ինքն փոխձան առնել գործոյ նորա ի կարգի առող ժամանակի: Յորդորեաց ապա զարքեպիսկոպոսն ծանրակշիռ բանիւք, զի ուղղեսցէ զվարս կենցաղավարութեան իւրոյ ըստ կանոնն Աստուծոյ և առ սէր նորա և վասն ալեխառն հասակին և բարեկամացն, որք զամօթի համարեսցին արգելք, եթէ տեսանէին զանձինս պատրեալս ի յուսոյ իւրեանց, յետ այնչափ ճգանց և ջանից իւրեանց յաղագս առնլոյ հրամանն, զի դարձցի նա ի մեղս իւր: Զայս ամենայն և բազում ևս յիշատակութիւնս սիրելութեամբ լուաւ արքեպիսկոպոսն, և յաղագս յիշատակեալն Պօղոսի յայտ արար խոնարհութեամբ, թէ կաթոլիկ է և յաճախ խոստովան լինի առ քահանայսն ուղեմն Հայոց Զաքարիա անուն, որ ի վաղնջուց ժամանակաց հետէ բնակէ ի Հռոմ: Յետ սակաւ աւուրց եկեր արքեպիսկոպոսն և գրաւոր վկայութիւն ի Զաքարիայ. այլ Աստուծոյ

է գիտելի, թէ հարազատ էր արդեօք թուղթն թէ կեղծ։ Եւ այսու վճարեցաւ գործն։

Այլ ոչ դիւրաւ դիջաւ Տ. Կարապետն Թէոդորեանց ի սրտմտութենէն իւրմէ ի վերայ Աշխենայ վասն արտօնութեանցն, զորս առաջի արար Աշխէնոս. բայց ցուցեալ ի վերին երեսս՝ թէ ամենայնիւ գոհացեալ է ցածուն ջատագովութեամբն Աշխենայ՝ առաքեաց ի ծածուկ զՏ. Աւագ Խնամակալն առ կարդինալն Աշտերի խնդրել ի նմանէ, զի խափանեսցէ զկարգն և զառաքելութիւնն առ ի չգոյէ արանց. քանզի, ասէր, սակաւաթիւ յոյժ գոլով միաբանիցն՝ չեն բաւական կատարել զպարտիս եդեալս ի վերայ նոցա։ Խստութեամբ յոյժ ընկալաւ կարդինալն զայրն, որ եկեալ էր առ նա այսպիսի դեսպանութեամբ. և թէպէտ այր քաղցրաբարոյ էր, բայց խիստ բանիւք հրամայեաց նմա դառնալ անդրէն առ Տ. Կարապետ։ Այլ և ինքն Աշխէնոս յայտնեցէր իսկ սմա վասն խափանելոյ զառաքելութիւնն, եթէ ի յարմարագոյն ուրեք ժամանակի ծագեալ էր խնդիրն. քանզի ցանկայր հնարաւոր, զի յօգուտ ի կիր՝ արկեալ զնախընծայ եռանդն՝ որ յառաջ բին է նորոգ հաստատութեանց, զիջի ի վերայ Տ. քարոզչացն առանձինն պարտաւորութիւն ուսուցանելոյ զաշխարհական կղերիկան ի դպրանոցս. (քանզի այս ոչ է օրէն կրօնաւորաց կարգին Թէոդորեանց ըստ սահմանեալ կանոնաց նոցա, այլ միայն վարեն նոքա կեանս ի վանորայս, պաշտեն զաստուածպաշտութեան խորհուրդս և կեան յառաքելական աղքատութեան), որ և յայն սակս յարմարագոյնք էին յայս պաշտօն՝ զի միաբանութիւնն քարոզչաց Վարշաւայի ի լաւագունից և ի յաջողագունից սակի համարեալ էր յայնմ ժամանակի։ Այլ երկուցեալ՝ թէ գուցէ վասն իրացն յամեսցէ այլ ևս ի Հռովմ, և յամենայն սրտէ իւրմէ ցանկացեալ դառնալ յԼվով, զի եթէ հնար ինչ իցէ, ածցէ անդ զգործն յառաջին վիճակն և ցուցցէ հայ ժողովրդեանն, որք կասկածէին ընդ վերադարձ նորա՝ զմշտնջենաւոր իւր սէր՝ լռեաց Աշխէնոս ի վեր հանել զմիտս իւր, այլ գովեաց յոյժ զկարդինալն վասն ջանից նորա ի գործին յայնմիկ

Իսկ երբև յընթացս եօթանց եօթնեկաց ոչ եկն պատաս-

խանի ի նուիրակէն Լեհաստանի և ժամանեաց ի Պորտուգա-լեաց ի Հռոմ Բանուցցի նոր քարտուղարն Ս. Ժողովոյն՝ խռովեցան յոյժ արքեպիսկոպոսն և տեսուչն, զի այր նոր և խստաբարոյ էր Բանուցցի ըստ համբաւոյ, վասն որոյ և հատառ յոյս նոցա վասն հիմնաւոր կատարածի գործոյ նոցա։ Ածէր ի մտի Եղիսիոս գնալ ի վանսն Մոնտէ Նէգրոյ, և անտի, յորժամ դէպ լեցի յարմարութեան՝ երթալ ի Ըս-գանդիոն, իսկ անտի դառնալ յԻկվոյ և զամենայն գործս ի Նախախնամութիւնն ածել ապաստան։ Եղև յանկարծակի օգնեաց նմա Նախախնամութիւնն, որպէս առ հասարակ կամխէ կատարել զխորհուրդս և զկամս ընտրելեաց իւրոց։ Խայլ եւ գործոց չարաց գործելի, զի յայնոցիկ բարկքն ծագեացին. և եկ ի ձեռս տեսչին Թուղթս կարևորս ի Լեհաստանէ, յորս նկարագրեալ էին ցաւալի վիճակ դպրանոցին յետ մեկնելոյ նորա անտի և տրտունջք զվարուց, զհեղգացութենէ և զանօրութեանց ընկերակցաց նորա, որք մնացին անդ։ Նոյն ժամ անդամ տուեալ էր տեսչին առ վեր-տայն՝ թէ հարկ է ծառայի առաքելութեանն անպատ լինել և ազատ ամենևին ի նշուլից իսկ կասկածանաց. վասն որոյ ոչինչ քննելով զճշմարտութիւն տեղեկութեանցն՝ փութացաւ իսկոյն առ Հ. Կարգադրեան, որ անկեալ էր սակս մի զինի յանդիմանութեան կարդինալին Եղաբէլի, և առաջի արար նմա զթուղթն ի Լեհաստանէ։ Խօսեալ յոյժ Կարգադրեանին՝ յանձն առար Եղիսեայ փութալ անդէն առ կարդինալն Եղաբէլի և պատմել նմա զամենայն, մինչև զեկուցեալ նմա զերս զայսոսիկ խափանեալ զգործադրութիւնն մեծ։ Ըստ այսմ յանձն առար Եղիսեայ, զի բարեպատեհ իւիք առթիւ յայտնեսցէ կարդինալին, թէ յայն սակս կամէր Կարգադրեան խափանել զառաքելութիւնն, զի զուշակէր անյարմարութիւնս ինչ, որք ծագէին անշուշտ՝ եթէ յանկարծ պատահիս մայր ապաստան փարչութիւնն յոլով ժամանակս, այլև խնդրեսցէ զի փութով անդր առաքեսցի կամ ինքն Եղիսիոս կամ այլ ոք համազգոյն։ Կատարեաց իսկոյն Եղիսիոս զյանձն առարեալն նմա ի Կարգադրեանէն պաշտօն, լսեաց միայն զամբաստանութիւնն ընկերաց իւրոց, զոր յընդհանուր բանս պար-

փախեաց։ Արդ մեծաւ ընկալաւ զնա կարդինալն, որ հաւանեցաւ յոյժ ընդ արդարացի պահանջն եւ խոստացաւ առաջի տանել զայն մերձակայ աւագ ժողովոյն, յորում յանձնեալ էր Յենի զպաշտօն քարտուղարութեան կարդինալին Ռանուցցի։ Յայտնեաց Ուլյիսոս զամենայն կարդինալին Վիդոնիուսի եւ նորին իսկ Յենեայ եւ ետ խնդրագիր ի Ս. Ժողովն. որ գումարեցաւ յ17-րդի աւուր Նոյեմբերի 1673 ամի. զի տացի նմա հրաման դառնալ յԼվով, եւ կարգեսցի նմա ի պէտս ուղեւոյն ըստ սովորութեան 60 դահեկան այլ ամենեւին լռեաց ի խնդրագրին վասն արքեպիսկոպոսին եւ այլոց. եւ ընկալեալ աջակցութեամբ Յենեայ զոր ինչ թախանձագին խնդրէրն՝ անդէն եւ անդ անկաւ յուղի, մեկնեալ ուրեմն ի Հռոմայ յ2-ն Դեկտեմբերի 1673 ամի։

Կարի յոյժ տրտմեցաւ արքեպիսկոպոսն ընդ չու Ուլյիսեայ, որ մխիթարէր զնա ասելով, թէ քանզի ի լուսաւորուն յոյժ փձանկի են գործքն՝ մարթ է նմա (Ուլյիսեայ) ի սուղ ժամանակի խնդրել զվերադարձ նորա ի Հայրենիս, առաքելով թուղթս բարեյաջողս յարքայէն եւ յիշխանաց Լեհացւոց։ Մխիթարեցաւ այսու արքեպիսկոպոսն եւ ետ նմա գլխաւոր թուղթս առ եկեղեցականս եւ առ պատուաւորս Հռոմայ, յորում կարի ջերմաջերմ յանձն առնէր զնա նոցա եւ պատուիրէր, զի առ հարկի տացի նմա ի պէտս դպրանոցին բնակարանն նախկին որ ի քաղաքի անդ, քանզի հրդեհեալ ասեն զշինուածն, որ յարուարձանի քաղաքին էր։

Իբրեւ եհաս Ուլյիսոս ի Փլորենտիա, դէպ եղեւ նմա տեսանել զփիշտակեալն ի վերայ զպատանին Սալլուցցեաց, որ կայր մնայր զնո եւ ի բարեպաշտ խորհրդեան իւրում ընծայեցուցանելոյ զանձն ի գործ առաքելութեանն, թէպէտ եւ բազում ընդդիմանային այսմ, նա մանաւանդ եղբայր նորա, որ է ուսուցիչ փիլիսոփայութեան ի կարգի Թէատինեանց։ Ատրջացաւ յոյժ Ուլյիսոս, զի ոչ խնդրեաց ի յետին ժողովոյն կարգել զՍալլուցցեաց իւր ընկերակից։ Այլ յայսմ իրի օգնեաց նմա եւ առաքելական նուիրակն Ենրոլդ, այր մաքրի եւ եռանդուն, որ գրեաց ի պատճառս պատանւոյն թուղթ առ Հ. Կարդապետն։ Բայց քանզի կանխաւ ծանուցեալ էր Ուլյիսեայ ի բարե-

կամքն իւրմէ, թէ ընդունայն լինէին ջանք նորա և զի ոչ հաճեցաւ Հ. Կարապետն ի լրումն խնդրոյ նորա, յառաջագոյն ծանօթ գոլով այնմ գործոյ և թերևս յիշելով զկիրս արտունութեանցն, (և ի ճշմարտութիւն բանիցս համոզեցաւ իսկ Աղէքսիոս ի թղթոց Կարապետին, զոր ընկալաւ ի Վենետիկ քաղաքի), վասն որոյ ոչ հնոյ պատասխանւոյ թղթոյն, այլ ուղեկից եղև իշխանափայլ Հօրն Օրբանվեկեայ, արդի եպիսկոպոսին Գէ-րմիչին, որ յետ ծանուցանելոյ ի Հռովմ զմահ արքա-յին Միքայելի, դարձ անդրէն առնէր ի Լեհաստան, և ընդ նմին յառաջ մատոյց զուղևորութիւնն: Ի Վենետիկ քաղա-քի դէպ եղև նոցա տեսանել զմարաջախտն Լեհաստանի ըզ-Վիելոպոլսկի: Մեկնեցաւ անտի ի Վիեննայ, ուր ժամանեաց յ9-ն Յունվարի 1674 ամի. և ոչ գտեալ ի տես կայսերու-հւոյն Էլէոնորայ, որպէս խոստացեալն էր յառաջագոյն՝ յայց եղ միայն արքայական կարդինալին Ալբրիցեայ, որ նուիրակ առա-քելական էր յայնմ ժամանակի, և նին եհաս յԼվով յ1-րդ աւուր Փետրուարի, ի մեծ խնդութիւն բարեկամաց իւրոց:

Ամիսք հինգ անցեալ էին ի վերայ որմէ հետէ դարձեալ էին քարոզիչքն յԼվով հանդերձ երկոքումբք աշակերտօքն ըստ առա-ջարկութեան Բանուցցելոյ, որում զայն պատուիրեցին ի Հռով-մայ աղաչանօք Աղէքսեայ: Եւ թէպէտ մարթ էր դիւրաւ նո-րոգել զշինութիւնն արուարձանի քաղաքին ի գանձուց դպրա-նոցին, զոնէ զմի միայն մասն ի պէտս սակաւաթիւ անձանց դըպ-րանոցին, և թէպէտ վասն բազում պատճառաց ևս քան զևս ի խափանումն թեւադրէր զայսոցն՝ սակայն վատասիրտ յոյժ գոլով Հ. Լորէնցեայ՝ ոչ կամէր ընդունել արտաքոյ քաղաքին, իսկ փոխանորդն ոչ առնոյր յանձն առ ընտանի բնակարանն: Եւ ի վերայ այսորիկ ըստ խորհրդոյ կամ ըստ հրամանի նուիրա-կին Բանուցցելոյ, որ ոչ կարի տեղեակ էր վիճակի գործոյն՝ ընկալան քարոզիչքն և այլ ևս չորեքին աշակերտս և եղին զնոսա ի տան միոջ ի վարձու կալեալ, ի սենեակս անձուկս և անառողջարարս, յարակից առաջ եկեղեցւոյն Հայոց: Ու-րախ լինէին ընդ այս թշնամիք քարոզչացն, թէ բնակելով յանկոյս տանցն Հայոց իբրև ի գառագեղի՝ ոչ խուսափես-ցին յանհրաժեշտ մահուանէ վասն խռովչացն և անմա-

քուր տեղւոջն աւերակի ի ծայր քաղաքին և այլոց ևս բազմաց անյարմարութեանց։ Իբրև եկն տեսուչն յԻկլով՝ ոչ հանդուրժեաց այլ գիրկս էարկ ընկերակցացն և աշակերտացն. սկսաւ ապա յանդիմանութիւնս բազումս կարդալ փոխանորդին վասն խստասրտութեանն, և հարցն՝ վասն անխոհեմութեան նոցա, զի ոչ միայն չարախօսեցին զնոցանէ և, ասել խակ, սպառնալ նոցա (փոխանորդին) եառն սիրով գումարս մեծ դրամոց առաքելոյ ի Նուիրակէն, այլ և հակառակ հրամանի Ս. Ժողովոյն խնդրեցին յարքունեաց, ամբաստանել զնա և յանձն առնել նմա զպաշտօն յաջորդութեան, որ զեան մեծ է վասն դպրանոցին և վասն առաքելութեանն։ Ցանայցին ամենք անմեղադիր առնել զփոխանորդն զէթ ըստ մասին, թէ ոչ վասն չարութեան խորհրդոց իւրոց արար զայն, (թէպէտ և կամէր նա միշտ, զի Թէոդոսին կրօնաւորք անդրադարձն քան զտունս եկեղեցւոյն բնակեսցին), այլ մանաւանդ առ ահի յիշատակելոյն ի վերոյ կրօնաւորին Նիկոմարդովեչի, ոչ կարէ հաճ եղելոյ ընդ միութիւն եկեղեցւոյն, զոր ոչ կամեցաւ փոխանորդն վարել ի տանէն յորում բնակեալն էր, վասն յարմարութեան դպրանոցին, երկուցեալ մանաւանդ ի մարդկանէ քան յԱստուծոյ։ Յանձն արար Արգիշխոս եկեղեցականացն և ժողովրդեանն զթուղթս առաքելականսն, որպէս զի ընկալցի զնախնին բնակութիւն. բայց ոչ Ֆուայ պատասխանւոյ նոցա, այլ հեռնարկեաց զնորոգութիւն շինութեանն յարուարձանի քաղաքին և առ այս գործ ընկալաւ ի Նուիրակէն Ռոնվեզեղոյ, որ սուղ ինչ յառաջ եկեալ էր անդր փոխանակ Ռանուցցեայ՝ նախ ոսկիս քան ի համար ապագայ կեսամէին և երկրորդ անգամ նոյնչափ ևս՝ ի նուիրատուութեանց ժողովրդոց, թէպէտ և վասն յարկին միայն ծածկելոյ շինութեանն պէտս էին դրամք առաւել յոյժ քան զոր ընկալաւն։ Այլ անխոնջ ջանիւք Տ. Բոսսեայ այնքան յաջողեցաւ նորոգութիւն շինուածոյն ի ձեռն յանօթ առեալ դրամոցն, զի զենի յետուն առուրց յեա զալստեան տեսչին մարթ էր բնակել ի քանի մի սենեակս նորքնոյարկին. բայց քանզի ցաւք ախտից ժամանեցին յաշակերտսն և ծանրացին հիւանդացաւ Տ. Նազուստինոս Լոբէն՝ հարկեցան քարոզիչքն, ըստ բուռն խոր-

հրդեհ բժշկացն, յամենայնն անդ Մարտի փոխիլ ի նոր շի-
նութիւնն, որոյ թերակատար գեռ ևս էին յարկքն, զի այ-
սու փրկեսցեն զանձինս ի հիւանդութեանց և ի մահուանէ։
Բաժանեցին յիւրեանս զհոգն խնամելոյ հիւանդաց։ Ի
տուէ և ի գիշերի խնամէին Եղիսաբէթ և Բոսսի զՀ. Լորէլ,
որ վասն ծանրանալոյ հիւանդութեանն, հաղորդեցաւ Ս.
Խորհրդոյն և փոխեցաւ յաշխարհն երջանիկ զհասարակ
գիշերաւ 30-րդի աւուր Մարտի 1674 ամի, եօթանասնից և
եօթանց ամաց։ Փոքր էր այն հայրենակցաց իւրոց, զի ներ-
կուռ էր բազում գիտութեանց. այլ չէր նորա կոչումն քարոզել։

Ի նմին աւուր, յորում ի մահիճս անկաւ Հ. Լորէլ,
ի 16-րդի աւուր Մարտի, ժամանեաց յԻվով յիշատա-
կեալ նորընծայն աշխարհական, Փրանցիսկոս Եպրոյցեր, որում
եթող Եղիսաբէթ ի Վենետիկ քաղաքի ոսկիս տասն ի պէտս ու-
ղևորութեանն ի Լեհաստան։ Ետես և հայեցաւ և որպէս ի
վերոյ ասացաք՝ ոչ ժուժկալ մինչև ընդունիցի հրաման տա-
լոյ զհանգստաւոր երգմունսն, դարձաւ փութանակի յԻտա-
լիայ, ընդ որ ոչ ոք արամեցաւ։

Ամեցեալ Եղիսաբէթ կատարել, զոր ինչ խոստացեալն էր
արքեպիսկոպոսին ի Հռոմ՝ մտրէր և թախանձէր զդատա-
ւորս Հայոց գրել առ Ս. Ժողովն և կարգի խնդրել, զի դար-
ձուսցեն նոցա զհօգիւն իւրեանց, զոր և գժուարին եղև Եղի-
սաբէթեաց կատարել, թէպէտ և յառաջագոյն քան զնա ատեան-
նի ցանկացօղք էին այսմ դատաւորքն. իսկ փոխանորդն հի-
ւանդանոց կեղծէր, այլ արդեամբ զանգիտէր յոյժ ի վերա-
դարձէ արքեպիսկոպոսին, և վասն այսորիկ դուցէ ի հակա-
ռակ միտս գրէր առ Ս. Ժողովն։ Յայնմ ժամանակի ըն-
կալաւ Եղիսաբէթ ի Նորին Մեծութենէ արքայէն, թագա-
կիր մարաջախտէն և զօրավարէն Մուսաց թուղթս, որք օծեան
մեծ եղեն, որպէս հաւանութեան է կարծել, կատարածի գոր-
ծոյ արքեպիսկոպոսին, որ յայնչափ ժամանակս ոչինչ յառա-
ջէր ի լրումն. քանզի ակնածէր յոյժ Նաաքելական Աթոռն
ի թղթոց արքային, յետ յաղթելոյ սորա Տաճկաց առ Խո-
տին ք զօրաւ և այլուր բազում անգամ, որոյ աղագաւ յար-
գանս և պատիւ եղեւ արքայն յաշխարհս քրիստոնէից։

Թւէպէտ և ոչ կարաց Աշխէնոս խնդրել առնուլ ի կար-գէն խըռնէ իւր օգնական յաջորդի, որ և գլխաւոր պատ-ճառք եղեն ուղևորութեանն իւրոյ ի Հռոմ, այլ ապաստան արար զամենայն յԱստուած և յանհասանելի Նախախնամու-թիւն նորա և եդ ի մտի առնել որ ինչ հնար իցէ նմա և մի-այն հոգալ վասն ազգայնոյն: Ոչ սակաւ մխիթարութիւն էր նմա բարեհաճութիւնն Բռնվելլեյ նուիրակին, որում յանձն արար զնա կարդինալն Սիմէոնի: Բայց սոյն այս այր, որ հեռանալու էր յոյժ պահելոյ զհամբաւ իւր բարի՝ կարի արամեցաւ վասն փոթորկին, զոր յարոյց յանկարծակի նոյն իսկ նուիրակն յաղագս Թղթոց ինչ բամբասանաց զհայրն և զգպրանոցէն, որ առաքեցան ի Հռոմ մինչև մեկնել էր նորա անտի, զորս ընկալեալ Ս. Ժողովոյն առաքեաց անդրէն յետս առ նուիրակն, պահանջելով բացատրութիւնս վասն Թղթոցն. իսկ նուիրակն յուղարկեաց զԹուղԹսն առ ան-տուն և խնդրէ պահանջ եդ ի վերայ, զի եւ մի բառ միջէ ճշմարտութեանն զհետազայ կէտից.

ա) Ոչ բառ ամենայնի պատշաճաւոր է բնութիւն տե-ղւոյն վասն բնակարանի զպրանոցին, քանզի մերձաւ միով հեռի է ի քաղաքէն արուարձանն, յորում տեղւոջ կարեն բնութիւնս գործել զննութեն և հրէայք, որ արգեամբք փա-ռսն աշակերտացն, այլ և անյարմար իսկ է վասն դժուա-րութեանց սաստկոյ գնելոյ պարէնի, զորս հարկ է գնոց առնուլ ի քաղաքէն:

բ) Կարժել ունին աշակերտքն եկեղեցական արարողու-թեանց, երթալով զորհանապազ ի մայր եկեղեցին Հայոց, առ ինչ ծախս բազում ժամանակ: Զայս առն հրաժիգ ունեն ընդհանրապէս Թշնամիք ի ժամանակս պատերազմաց, որպէս և եղեն իսկ երկիցս անգամ յընթացս 39 ամաց. վասն որոյ ստիպեալ աշակերտքն փախչել ի քաղաքն ի ժամանակս յար-ձակմանց Թշնամեացն, առ որ պիտոյ են ծախք նշանա-ւորք, մանաւանդ վասն կերակրոց փոխադրութեան:

գ) Հարկ է խստիւ յանդիմանել զաշակերտս և խորհել զեղանակէ ուսուցանելոյ զնոսա և պատրաստելոյ ի կոչումն հոգևոր. քանզի կասկածք են զնոցանէ, Թէ ի վանքի մեծի

են և վարժարանն օր ըստ օրէ, սակս անփութութեան հարցն, որք արձակեն զնոսա երկու երկու ի տունս մանկաւոր անձանց, ուրանօր ուտեն և ըմպեն և զուարճանան ընդ կանայս, զամուսնութենէ յաճախակի խօսակցելով, և յանդգնին իսկ ընդ պատուհանս դպրանոցին ցոյց հրապուրիչս և անվայելուչս տանել անցորդաց:

դ) Հանդիսացուցանեն ի դպրանոցին կատակերգութիւնս կորստեամբ մեծաւ ժամանակի, և կոչեն ի հանդէսն կանայս, որ տարփածուք են աշակերտացն, որպէս լինի առ հասարակ:

ե) Ի դպրանոցին զուսումն ուսանեն միայն ի լեզու Լատինացւոց, իսկ ի լեզու Հայոց կամ սակաւ յոյժ կամ ամենևին ոչ, և այն՝ վասն արտաքին ձևոյ: Իսկ հայրք ատող են ամենևին լեզուին Հայոց, վասն որոյ և տրտնջեն Հայք հանապազ, թէ վասն հայերէն լեզուի կառուցեալ է դպրանոցն և ոչ վասն լատիներէնի:

զ) Աշակերտքն տան երդումն միայն յորժամ հանդերձին ձեռնադրել ի քահանայութիւն, և զայս տանեն այնու միայն խորհրդով զի ընկալցին թոշակս օժանդակութեան:

է) Յոռեպէս մատակարարեն հայրքն և զրկեն զաշակերտսն ի մասին կերակրոց, հանդերձից և այլոց կարևոր իրաց:

ը) Համակ անուղղայք են աշակերտքն, զի ի զբօսանս երթան ընդ կանայս, որպէս և հայրքն, որք յաճախակի գնան ի խնջոյս ի տունս մանկաւորս:

թ) Մինչև ցայն վայր ոչ ոք ել ի դպրանոցէ անտի աշակերտ, որ օժանդակեալ իցէ ծառայման կաթոլիկ հաւատոյն կամ արարեալ գործ ինչ այնպիսի, որով լիցի յոյս և վասն այնոցիկ, որք զեռ ևս ի դպրանոցի անդ իցեն:

ժ) Տժգոհ են յոյժ Հայք, զի հանեն ի Նորանէ զեկեղեցին Թէէարին կրօնաւորքն, որ և պատճառք լինի ատելութեան և հակառակութեան ի մէջ Նորա. վասն որոյ և յայտնեն Հայք, թէ ոչ երբէք տացեն թոյլ հարցն երթալ ի Հայաստան:

Արտմեալ զայրացաւ Նիկողայոս ընդ սոսկալի չարախօսութիւնն, որ հեռի էր յոյժ ի ճշմարտութենէ և ի հաւանական գոլոյ. վիշտ մեծ էր նմա, զի պատուիրէր նուիրակն

ճշմարտութեամբ զելսն գրել, իբրու թէ կասկածէին ընդ ուղղութիւն մտաց նորա յետ երկարատեւ փառաւոր ապացուցութեանցն և մօտալուտ վերադարձի նորա ի Հռովմայ, յորում վայրի պատուեցաւ մեծամեծ պատուօք և ոչ լուաւ յումեքէ ի սրբազան կարդինալացն այնպիսի թիւր ամբաստանութիւն զանձնէ իւրմէ. վասն որոյ զայրացեալ ըստ սովորականին՝ ի ձեռս Նուիրակին եկեք զպաշտօն տեսչութեանն, բայց որպէս պատուիրեալն էր նմա՝ պատասխանի տալոյ յանդիմանութեանցն յայս միտս.

ա) Յայտ արար նախ, թէ ըստ ամենայնի յարմարաւոր է բնակարան դպրանոցին. հազիւ նետընկեցիւ միով հեռի է ի պարսպաց քաղաքին. այլ վասն ընդարձակութեանն, բարձրութեան պարսպաց, առողջարար օդոյն, գեղեցիկ պարտիզացն և խաղաղութեանն, որ կարեւոր է աշակերտաց՝ յարմարագոյն քան զամենայն համարեալ է տեղին ըստ խորհրդոյ իշխանաց Լեհացւոց և կարդինալացն Նէրլեայ և Մարեսկոտտեայ, որք եկեալ են անձամբ յայցելութիւն տան դպրանոցին. թէ դիւրին է յոյժ ստանալ նիւթս պարէնի, որ ըստ սովորականին առաւել դիւրագնի են յարուարձանի անդ քան ի քաղաքին։ Ցրեաց և զդիտողութիւնն, թէ յընթացս 39 ամաց բազում անգամ հրձիգ արարեալ է թշնամեաց զտունն. քանզի յարկքն միայն վառեցան, այլ շինութիւնն համօրէն, որ ազիւսով և սրբատաշ վիմօք է կառուցեալ և ամրագոյն կամարօք յեռեալ՝ մնաց յամբողջութեան. իսկ զգեանս դիւրին է նորոգել ծախելով ոսկիս հարիւր. այլ հարկ էր ապաքէն զայնպիսի գումար դրամոց ծախել յեռամեայ կամ ի քառամեայ ժամանակի վասն ի վարձու ունելոյ ի քաղաքին բնակարան անձուկ և անառողջ։ Եւ ի վերայ այսր ամենայնի, չէ վտանգ շինութեանն ի Թաթարաց կամ յայլոց թշնամեաց, վասն քարաշէն պարսպացն ի ձեւ աշտարակաց, բայց միայն եթէ վանդեսցի և քաղաքն. իսկ այս հազիւ ուրեմն պատահէ։ Այլ որ ինչ հայի յայն, թէ Հրէայք և զինուորք արդեամբ վնասեն աշակերտացն՝ զուր և անիրաւ է ամբաստանութիւնն և ոչ իսկ արժանի պատասխանւոյ, զի աշակերտքն իսկ և իսկ համեստութեամբ իւ-

րեանց և քաղցրութեամբ բարուցն սիրելի են առ հասարակ յաչս ամենեցուն, այլ և Հրէից։

բ) Ոչ ի քաղաքին և ոչ յարուարձանի նորա ոչ կարեն աշակերտք ուսանել զարարողութիւնս Հայոց. քանզի հանապազօր իբրև զլուսին փոփոխին արարողութիւնք նոցա, առանց կարգաց և հիմանց, այլ միայն ըստ քմաց ախորժակի առն առն եկեղեցականի։

գ) Յաւուրս աւագ տօնից տան երբեմն իրաւունս աշակերտացն երթալ առ ծնողս իւրեանց և ճաշել ընդ նոսա. բայց ոչ այլ ոք զայս արտօնութիւն ունի և ոչ իսկ եղբայր հարազատ։ Բայց քանզի ոչ պահանջեն իշխանաւորք, զի զեկեսցին սիրոյ ծնողացն յայնպիսի արգարացի մխիթարութենէ՝ ոչինչ առս նորանի են այս իրք. այլ ըստ օրինի միայնակեցաց, առուքին զնոսա ընդ ընկերաց, զի առաւել ևս համեստք լիցին։ Իսկ որ ինչ հայի ի կանոնս կամ յանունութեան կալ՝ զայս բամբասանս հարկ է վերագրել չարամտութեան բամբասողին։ Յորէ, ասէի հիմնարկութեան դըպրանոցին չեղև օրինակ ինչ, զի աշակերտ ոք առաքելութեան յանձնառութիւն մտանիցէ, բայց ի միոյն, որ էր ի քաղաքէն Զմիւռնիոյ, որ երբեմն աւարտեալ զուսման իւրոց զընթացս և դարձեալ ի հայրենիս իւր՝ ըստ թիւր խորհրդոց մօր իւրոյ մերժեաց զկարգ կրօնաւորութեան և ամուսնացաւ ընդ կնոջ ումեմն ի քաղաքէ նորա, որոյ ոչ երբէք լեալ էր Լիվոնի։ Այլ որ ինչ վասն անկարգութեանց աշակերտացն են բանք՝ առայօդք են բովանդակն, քանզի ի դաշտավայրի կառուցեալ է դպրանոցն և պատուհանքն հեռի են յոյժ ի պողոտայից հասարակաց։

դ) Ի դպրանոցին ոչ հանդիսացուցանեն կատակերգութիւնս կամ զայսպիսի իրս ինչինչ։ Այլ ամօք ինչ յառաջ քան զպատերազմն Օսմանեանց, վասն կարևոր ինչ պատճառաց, ըստ թոյլտուութեան Ս. Ժողովոյն հանդիսացուցին աշակերտքն արքայան ողբերգութիւնս երկուս, ի հայ և ի լատին լեզուս, գրեա թէ առանց ծախուց, ընդ որս ուրախ եղև յոյժ քաղաքն համօրէն։ Բայց չարամիտ կեղծիք են բամբասողին բանքն վասն կանանց և տարփածուաց։ Այլ հարկ

է ասել, զի յորժամ յառաջնումն անդ հանդիսի չեղև հնար զդրունս դպրանոցին պահելոյ՝ խռնեցան ի նիւթս բազմութիւն ժողովրդոց, այլազգաց և այլասեռք, հետաքրքիր յոյժ գոլով վասն անլուր տեսարանին ի մէջ Հայոց։ Իսկ յերկրորդի նուագին, քանզի և կասկածք էին, թէ մի գուցէ տապալեսցի շինութիւնն խարխուլ՝ յազատ և յարձակ տեղւոջ հանդիսացուցին, որ առ մայր եկեղեցւոյն Հայոց։

ե) Ուսմունքն աւանդին ի դպրանոցին ի լեզուս Հայոց և ի Լատինացւոց, իսկ աղօթքն ի ժամ սեղանոյ և յայլ դէպս և փառաբանութիւնքն՝ ի լեզու Հայոց միայն. այլ խոստովան լինի տեսուչն, թէ չեն անտեղի տրտունջք Հայոց յայսմ մասին, վասն անփութութեան հարցն յուսանել զլեզու Հայոց, որ դիւրագոյն է ի լեզուս արևելից։

զ) Ամենայն աշակերտք ի ժամ ձեռնադրութեան ընթեռնուն հրապարակաւ զդաւանութիւն հռովմէական հաւատոց. այլ զայս ինչ հարկ է ի միտ առնուլ, զի յերդումն իւրեանց առաջի տեսչին՝ յանձն առնուն, զի մի փոխեսցեն յայլ կրօն և մի մնասցեն ի վանս Լատինացւոց, ըստ պատուիրանի Ս. Ժողովոյն։ Յայտնի է ապաքէն, թէ ոչ դնեն (Հայքն) ի վերայ աշակերտաց նորանոր լուծս, ոչ ունելով հրաման յիշխանաւորացն իւրեանց։

է) Վասն անձկութեան դրամոց դպրանոցին սակաւապէտ են մատակարարութիւնք կերակրոց աշակերտացն. բայց ոչ դժգոհ ինչ են սոքա, և ոչ իսկ կարող են դժգոհ լինել, զի ի միջէ սեղանոյ ուտեն ամենեքեան, զոր ինչ և տեսուչն. իսկ հաց և գարեջուր գրեա թէ ի մի և ի նոյն տեսակէ մատակարարի նոցա անպակաս, քանզի ի կանուխ պահու ընդունին զնախաճաշիկն։

ը) Բացէ ի բաց մերժէ տեսուչն զչարամիտ և զանհեթեթ զամբաստանութիւն, զոր բամբասողն անամօթաբար յարուցանէ ի վերայ աշակերտացն. քանզի ոչ միայն հեռի են նոքա յայնպիսի անառակութեանց, այլ և զովասանաց մեծաց են արժանի վասն գեղեցիկ բարւոյ բարուց և համեստութեան, հեզութեան և հնազանդութեան. զի յորբունս գրեա թէ հա-

սակի անտրտունջ կրեն զպատիժս գանից ձաղկչի և զա-ւազանաց, և զարմանալի իմն փութաջանութեամբ կատարեն զպատուէրս իշխանաւորի իւրեանց, ընդ որ յանձնիս կրթի տեսուչն։ Զբօսանս նշանեն ամենքեան ի միասին և գնան յայնպիսի տեղիս, յորս սակաւ յաճախէ ժողովուրդն, որպէս զի վայելեսցեն յազատութեան. այլ այս զուն ուրեք պատահի, զի են նոցա և սրահք զուարճալիք և պարտէզք։ Իսկ որ ինչ ի հարսն հայի՝ ճշմարիտ է, զի հարկաւ են նոքա յաճախակի կրթալ ի խնջոյս անդամոց ծերակուտի և յիշխանաց գրեա թէ ակամայ կամօք, իբր զի ձանձրանան յոյժ ի խնջոյսն երկարաձիգս. վասն որոյ և ցանկան ի սրտէ, զի յայնմհետէ մի ևս տացի նոցա թոյլ կրթալ ի խնջոյս. քանզի առանց այսպիսի հրամանի դժուարին է նոցա մերժել զհրաւիրանսն։

թ) Յայնմ կարճառօտ ժամանակի եղեն ի դպրանոցէն քահանայք բազումք ուսեալք և օրինակելի վարուք և բազում քարոզիչք բանին Աստուծոյ. սոքա նշանաւոր են և առ Լեհացիս, որք զոհ են յոյժ ընդ նոսա, իսկ Ռուսք նախանձին. սոփաւ որպէս զլոյս արեգական երևելի է յաջողութիւն դպրանոցին, ոչ միայն ի գիտութեան, այլ և յօրինակելի վարս, ի փութաջանութեան և ի հաւատս, յորս երբեմն քան զչափն զանցանեն անխոհեմաբար. վասն որոյ և ծագեցան խռովութիւնք ոչ սակաւ ի ժողովրդեանն Հայոց Եւդոկիոյ վասն կարի ջերմեռանդըն քարոզութեանց՝ թէ ի մոլորութեան խարխափէին Հայք մինչև ցՄխութիւնն, որ մեծաւ ի նոսա յետ գալստեան Հայցըն, նոյնպէս և յԱնկիւրիոյ քաղաքի՝ վասն կշտամբելոյ զկաթողիկոսն Հայոց թէ հերձուածող է, ի Պոդչայցի և յայլ ևս տեղիս՝ վասն չափազանց ջերմեռանդութեան երիցուն և ուսումնարանին, որ զՀայս անարգէր, որք ի կարճ ժամանակաց հետէ եկեալ էին ի Մոլդաւիոյ՝ կամէր սակաւ բռնադատել զի ընթերցցին հրապարակաւ յեկեղեցւոջ զդաւանութիւն կաթոլիկ հաւատոց։ Նոյն և ինքն Ս. Ժողովն և կարդինալն Սոլոմնայ վկայեցին անշուշտ վասն իրացս այսոցիկ, որք զիտէին թէ խնդութեամբ ընկալեալ եղեն ի դպրանոցն Հռով-

մայ աշակերտք ոմանք դպրանոցին, որոց չև ևս յաւարտ ածեալ էր զուսմունս իւրեանց։

Հուսկ և ժ) Աչ կրօնաւորաց կարգին Թէատինեանց (ոյք ոչ որպէս Թէատինք, այլ իբրև մշակք առաքելական՝ գործին յայգւոջ Տեառն) և ոչ քարոզչաց հանեալ է ի Հայոց եկեղեցի մի և ոչ իսկ խորհին հանել, որպէս բազում անգամ յայտ արարին. քանզի պատրաստք են ձեռամբք իւրեանց կառուցանել տաճարս ի նորոց, այնու միայն զի ծառայեսցեն զՍ. Միութիւնն։ Այլ ընդհակառակն, յայտնի է ամենեցուն այս ինչ, զի զբանալն եկեղեցւոյ յանուն Ս. Խաչին, որ յարակից է դպրանոցին՝ պահէ քահանայ ոք ազգաւ հայ ընդհանրապէս. և քանզի փակեալ են դրունք եկեղեցւոյն բաց մեծի մասին՝ հարկեալ են առա քարոզիչքն երթալ զօրհանապաշ ի քաղաքն վասն զպատարագս մատուցանելոյ, զի մի զայթակղութիւն լիցի ի ժողովրդեանն, բաց օրինակի որպէս եղև յաւուրս տեսչութեան Հ. Կարացիոլեայ յաղագս մատուցանելոյ պատարագին ի մատրանն յօրինելոյ ի տան։ Յայս մատրան առօթեն աշակերտքն ընդ առաւօտս և ընդ երեկոյս, մերժելով հանապազօր յերթևեկութենէ եկեղեցւոյ։ Յանկալի է արդարև, զի ազգին հայոց փոխանակ եկեղեցւոյն և թոյլ տայի նոցա կատարել անդ զպաշտօնն աստուածային հանդերձ աշակերտօքն, այլ պահելով զարարողութիւնս հայաստանեայց. իսկ Հայքն արևելեան ուրախ լիցին անշուշտ, տեսանելով անդ յամբողջութեան պահեալ զարարողութիւնս իւրեանց առանց փոփոխմանց, զորս մուծին արքեպիսկոպոսն և փոխանորդն, որք յարարողութեանցն Լատինացւոց և Հայոց յօրինեցին խառնուած ինչ արարողութեան, իբրու թէ զայծեան յօղիս փոխեցին։ Այլ պարտ են արդարև համօրէն ամբաստանութեանն ապաւինելք Հայոց, որով պհարան կամին զարհուրեցուցանել, (բայց ո՞վ արդեօք առաքելեացն ունին զնիցէ), թէ ոչ երբէք տացեն նոցա թոյլ երթալ ի Հայաստան. չեն ինչ նոքա պահապանք ծովու և ճանապարհաց, և վասն այսր գործոյ չէ ինչ հարկ առնուլ հրաման ի նոցանէ կամ անցագիր։ Մի է պատասխանի վասն այսր ամենայնի, թէ Շաղփաղփութիւնք են։

Դայ ապա զկնի Նկարագիր կենցաղավարութեան աշակերտաց պարզին, որով վարէին ի ժամանակս տեսչութեան Տ. Եղիշեայ. քանզի ընդ այլով իշխանութեամբ այլազգ էր մասամբք ինչ։

Զարթուցանէին զաշակերտս յառաջնում ժամու նախ քան զծագել արեւու. յետ կէս ժամու ի ձայն զանգակի ժողովէին ի մատուռն յաղօթս առաւօտու, զոր յօրինեաց Տ. Պալանոս ի լատին լեզու եւ Եղիշէոս փոխադրեաց ի լեզու Հայոց։

Յետ առաջնոյ աղօթիցն առաւօտու գնան աշակերտք ի խուցս իւրեանց կազմել եւ յարդարել զանկողինս եւ զայլ ինչ, եւ զկնի այսորիկ հարկանի զանգակ առաջին վասն երկրորդ աղօթիցն առաւօտու, զոր երգեն եւ որ նման է երգոց մերոց Երեւագալի եւ Օրհնութեանց. յայսմիկ աղօթս ժողովին աշակերտքն զկնի երկրորդ զանգակին կամ ի մատուռն անդր կամ յեկեղեցին, եթէ անդ լիցի քահանայն Հայ, լուսարար եկեղեցւոյն։

Զկնի Օրհնութեանցն նախաճաշիկ է, յորում մատակարարի հաց սեաւ ի հաճարոյ, որով վարին եւ Հարքն առ ի չգոյէ ստացուածոց։

Ի նախաճաշէ մինչեւ ի ճաշ ուսանին ի խուցս խուցս յուսումնարանի ի լեզու Հայոց կամ ի Լատինացւոց, իւրաքանչիւր ըստ կարի յաջողակութեան իւրոյ։

Ժամու միով յառաջ քան զօրհասարակն հարկանի առաջին զանգակ ճաշու, եւ յետ կէս ժամու՝ երկրորդ զանգակ։ Երեք են սեղանք կերակրոց ճաշու, որ են թան մսոյ, միս եփեալ եւ ձու ընդ պանրի եւ պտղոց՝ եթէ առ ձեռն գտանիցին, կամ՝ այլ ինչ նմանօրինակ։ Այնպէս եւ ի կէսօրաճաշին երեք են սեղանք կերակրոց, բայց փոխանակ եփեալ մսոյ տան միս տապակեալ։

Յետ ճաշու կարգեալ է ժամ մի վասն հանգստեան, եւ յայսմ պահու, եթէ չիցէ ձմեռն՝ գործեն աշակերտքն յածուս իւրեանց, քանզի իւրաքանչիւրում ի նոցանէ է իւր ածու սեփական։

Ըստ վանական սովորութեան լռութիւն ունին աշակերտքն ի ժամ ճաշու, այլ լսեն ընթերցմունք Ս. Գրոց ի

լեզու Հայոց և ապա ի լեզու Լեհացւոց և սակաւ մի ի լեզու Իտալացւոց վասն նորին քարոզչաց, որք ոչ գիտեն ըզլեզուն Լեհացւոց: Յերկրորդէ սեղանոյն, որ մատակարարի յետ ընդհանուր սեղանոյն, ուտեն ընթերցողն և սպասաւորն սեղանոյ *): Ի լեզու Հայոց կատարեն աղօթք և մաղթանք գոհացողականք նախ և զկնի ճաշու, զհետ որոց գայ այլ աղօթք, ընդարձակ իբրև երեք «Հայր մեր», և ապա աղօթք Ողջունի Ս. Կուսին Մարիամու, **) զոր երգեն ծունր եդեալ:

Զկնի հանգստեանն, ի հարկանել զանգակին երթայ աշակերտ իւրաքանչիւր ի խուց իւր յուսումն, որպէս յառաւօտու անդ, մինչև հարկանիցի զանգակ ուսումնարանին, որով կոչին նոքա ի դաս փիլիսոփայութեան և աստուածաբանութեան. իսկ ժամք ուսմանց յաւելուն և նուազեն ըստ պահու և ժամանակի տարւոյն. բայց վասն քերականացն ***) և այլոց, որք երկու են կամ երեք թուով՝ ոչ եղև հնար կարգելոյ ուսումնարան յատուկ, այլ իւրաքանչիւրում ի նոցանէ առանձինն աւանդին ուսմունքն:

Յամառան, այն է ի զատկէ մինչև ի վերայ հասանել ցրտոցն, առաւել լինի աշակերտացն հասարակօրէն ժամ մի հանգստեան ի 22-րդի ժամուն, հանգոյն առաջնոյն:

Յամառան ի 22-րդի և ի կէս ժամու հնչի զանգակ վասն յարդարելոյ զսեղանն. ի 23-րդի ժամու նստին ի սեղան նովին կարգաւ լռութեան և ընթերցման որպէս ի ժամ ճաշու: Իսկ ի ձմեռան փոխին ժամանակքն ճաշու և ընթրեացն ըստ երկարութեան տուընջեան և գիշերոյ: Յետ ընթրեացն տուեալ լինի հանգիստ կարճառօտ մինչև ցաւարտ երկրորդի սեղանոյն՝ ըստ կամաց իշխանաւորին. յետ որոյ հնչի զանգակն և ժողովին աշակերտքն ի մատուռն վասն հանգստեան աղօթից, որ են աղօթք խաղաղականք, խոկմունք և մաղթանք առ Ս. Աստուածածինն, և այլք: Ի վերջին կոչնակէ անտի մին-

*) Իմանալի է, թէ ընթերցողն և սպասաւորն ուտեն զկնի ամենեցուն:

**) Ave Maria.

***) Այսինքն՝ որ ուսանին զքերականութիւն: Թարգմ.

չև ցվախճան առաջին աղօթիցն առաւօտու միւսոյ աւուր լռութիւն պահի խստիւ։

Ոչ մատուցանի պատարագ հանապազ ի նշանակեալ ժամանակի. այլ յորժամ կամիցի հայ քահանայն մատուցանել ըստ արարողութեան Հայոց յեկեղեցւոջն, որ յարակից է դպրանոցին՝ երթան աշակերտքն ի պատարագն։ Այնպէս և զնախատօնականն կատարեն աշակերտքն ի դպրանոցի անդ յաւուրս տօնից և կիւրակէից, կամ երթան ի մայր եկեղեցին Հայոց։

Ոչ պահեն ի դպրանոցին զտօնս Լատինացւոց, այլ զՀայոցն և եթ. և յաւուրս տօնից խոստովան լինին աշակերտքն ի միասին և հաղորդին ի ժամ հանդիսաւոր պատարագին, ըստ օրինակի որոց և աշխարհականք հաղորդին Ս. Խորհրդոց, հակառակ սովորութեան արևելեայց։

Յամենայն աւուրս կիւրակէից և տօնից Հայոց երթան աշակերտքն ի մայր եկեղեցին Հայոց ի յոյժ կանուխ պահու համեստութեամբ և բարեկարգութեամբ, երկու երկու ի կարգի, և և զկնի նոցա երթայ ոմն ի հարցն։ Զգենուն անդ շապիկս և սպաս հարկանեն յաստուածպաշտութեան, յաղօթս, ի մեծաշուք թափօրս, ի հանդիսաւոր կամ ի պարզ պատարագս և յայլ արարողութիւնս մինչև ցկէսօր. դառնան անտի ի տուն և և զկնի ճաշու երթան անդրէն յեկեղեցի, եթէ ի տես եդեալ իցէ Ս. Խորհուրդն կամ իցէ տօն երևելի. իսկ յայլ դէպս ի դպրանոցի անդ երգեն զժամն խաղաղական, և հանգչին ապա, կամ գուն ուրեք երթան ի զբօսանս հանդերձ հարքն։

Յընթացս ամաց ինչ պահէին հայքն ոչ միայն զպահս Լատինացւոց, այլ և զՀայոց, ըստ խստութեան արևելեայց և ոչ զձուկն իսկ ուտելով։ Այլ ապա իբրև յաճախեցին հիւանդութիւնք յանձուկ ընակարանին ըստ միջնորդութեան Տ. Անջէլոյ Պէմէլլատեայ ի կեր սկսան ուտել հայքն և աշակերտք զձուկն. և այնպէս թուլացեալք ի նախնի ջերմեռանդութենէն՝ թողին հայքն ըստ մեծի մասին ի կամս Հայոց պահել զյաճախակի և զերկարաձիգ զպահս Հայոց, այլ ինքեանք շատանան միայն լատինականօքն։

Յաւուրս չորեքշաբաթու յիւրաքանչիւր եօթնեկի յետ

օրհասարակի կարգեալ են ժամք հանգստեան վասն վանական խաղուց ըստ օրինի կրօնաւորաց, որպէս գնդախաղ այլ և այլ եղանակաւ, սայլինձ, և այլն։

Լինէին երբեմն խաղք և ի սերտարանին, այլ միայն ի նախընթաց աւուր պահոցն Հայոց, որ անէ եօթնեակ մի և կէսի Փոքր Բարեկենդան։ Յայսմ աւուր յաւելուն յիւրեանց տեսակս կերակրոց և գնդրորդն, կամ այլ ինչ այսպիսի, իսկ փոխանակ սովորական ըմպելեացն տան սակաւ ինչ մեղրաջուր։

Բաժանեալ են ի մէջ աշակերտաց պաշտամունք այլ և այլք, զորս վարեն փոփոխակի յընթացս միոյ եօթնեկի. զոր օրինակ, ընթերցող ի ժամ սեղանոյ. կարգապահ, որոյ գործ է հսկել ի վերայ բարեկարգութեան գրչանոցին, կամ անձամբ կամ ի ձեռն սպասաւորի յարդարել զսերտարանն, զսրահսն, զանդուղս և զայլ տեղիս հասարակաց. հսկացող ի վերայ մաքրութեան սրտաքնոցին. սափրիչ, որոյ գործ է գերծել զկրօնաւորական պսակն ընկերաց (այն է զգագաթունս). սեղանապետ, վասն հոգալոյ զպէտս սեղանոյն. պահապան, առ ի հսկել ի վերայ հրոյ ի գիշերի, որ վասն երկարատև հրսկմանն՝ յառաջ քան զայլս ելանէ յանկողնոյ, և այլք։

Ի վերայ այսց պաշտամանց են և այլ պաշտամունք ինչ անփոփոխք և մշտատևք, զոր օրինակ քննիչ, որում պարտին հնազանդիլ երբեմն իշխանաւորի։ Հայի նա միշտ ի վարս աշակերտացն և հսկող է բարոյիցն, որ երբեմն նշմարէ անկարգութիւն ինչ վարուց՝ զեկուցանէ զայն իսկոյն տեսչին և ըստ թոյլատուութեան կամ ըստ հրամանի նորա պատժէ զանցաւորսն. կարգապահ է նա յեկեղեցւոջ, ուրանօր ամենեքեան զհրամանէ նորա կախեալ կան։ Եթէ մեկնեսցի ոք յեկեղեցւոյ կամ ի դասարանէ կամ ի հասարակաց ննջարանէ առանց տեղեկութեան նորա, յորժամ բացակայ իցէ տեսուչն կամ պարապեալ՝ յանցանք մեծ համարի այնմ։ Իսկ եթէ դիպեսցի ինչ և նա ոչ զեկուսցէ զայնմանէ տեսչին՝ նմա դրին յանցանքն և պատիժ վասն յանցանացն։ Է և հանդերձապահ, որ խնամ ունի կարկատանաց հանդերձից և բաժանելոյ որոց պէտք իցեն, այլ և վասն սպիտակեղինաց, առ ի ժողովել և տալ ի լուացումն և բաժանել յետ լուաց-

մանն. հոգաբարձու կօշկաց. հիւրընկալ. հիւանդապետ, վասն խնամելոյ զհիւանդս. մատենադարանապետ. քարտուղար, և այլն։

Բաց ի ժամուց հանգստեան խօսիլ ունին աշակերտքն յայն լեզու, զոր նշանակէ հայր տեսուչն կամ քննիչն, իմա յԻտալացւոց, Լատինացւոց, Տաճկաց կամ յաշխարհիկն Հայոց և կամ յայլ լեզուս ըստ պիտոյից իւրաքանչիւրոյն ի նոցանէ. երբեմն պատուիրի նոցա խօսել զամիս մի նշանակեալ ի լեզու մի, և ի միւսում ամսեանն յայլ լեզու—զի որ գիտէն խօսիլ հայերէն՝ խօսի ի լեզու Լատինացւոց, և որ զԼատինացւոցն գիտէ քաջ՝ խօսի ի սովորական լեզու Հայոց։ Յայն սակս կոչեմ սովորական լեզու, զի զայս լեզու ժողովրդական միայն ի ձեռս խօսից վարժութեանց մարթ է ուսանել, իսկ զգրաւոր լեզուն ի ձեռն գրոց, որ ծանօթագոյն է քան զաշխարհիկն. այլ զլեզուն ժողովրդական հարկ անշուշտ է գիտել վասն խօսակցելոյ ընդ արս արևելեայս, ուր տգէտք են գրաբառին։ Եթէ ոք ի կիր արկցէ բառ ինչ յարգելեալն լեզուէ, ընդունի յընկերէն որ նշմարեացն զյանցանսն՝ նշան մի փայտեայ, որ ընդհանրապէս կոչի Նշանակ. և եթէ ոչ կարասցէ մինչև ցերեկոյն տալ զփայտն այլում ումեք, որոյ զանցեալ իցէ ըստ նմին օրինակի՝ ի ժամ համարոյ երեկոյին ընդունի ի քննչէն հարուածս երիս թեթևս ի ձեռս իւր։

Յանցաւորք պատժին զանիւ ձաղկչի կամ խարազանի ըստ սովորութեան Լեհացւոց կամ որ հաւասարի ևս է Գաղղիացւոց։

Ի դպրանոցս Լեհացւոց կրտսերքն միայն ըմպեն՝ զան ձաղկչաւ, այլ որ աւագքն են՝ պատժին խարազանաւ։ Իսկ Եպիսկոպոս ըստ սովորութեան աշխարհին իւրոյ, ուր զապաստաւորս միայն պատժեն խարազանաւ, որ ծանրագոյն և խըստագոյն ևս համարի՝ ետ հրաման զի առանց խտրոցի հասակի կամ վիճակի՝ զամենեսեան առ հասարակ միով յեղանակաւ պատժեսցեն մեղմով, և այն ի ձեռն աշակերտացն, եթէ միայն ոչ ըմբոստք լինիցին։ Եթէ կոչեցեալ է ոք զի զպատիժն կրեսցէ՝ եթէ յանցաւոր իցէ նա, կամ եթէ անմեղ՝ ոչ ունի իրաւունս ջատագովելոյ զանձն. քանզի ջատագո-

վութիւն անձին համարի յանցանք կարեւոր. իսկ լաց և ողբ նուազագոյն համարի յանցանք. այլ կարէ լալ աշակերտն յետ պատժոց, բայց առանձինն կամ միայն առաջի ÷. տեսչին, և կամ յորժամ չիցէ յանցեալ աշակերտին, այլ ի վերայ կայ զպատիժն կատարել վասն մեռուցանելոյ զցանկութիւն մարմնոյ: Նոյն յիշելի անդուոջ կախեալ կայ զորմոյ տախտակ, յորոյ վերայ նշանակեալ կան պատիժք ի լեզու ÷այոց, որոց այս են գլխագիր և բովանդակութիւն:

### Սահմանեալ պատիժք ի դպրանոցի պատժն:

Որ ոք ասիցէ Երդնում յանուն Աստուծոյ, (որպէս սովորութիւն է առ Լեհացիս) ընդունի պատիժ երիւք հարուածովք:

Որ ոք ի լեզու իւր ասիցէ Սատանայ՝ երիցս անգամ համբուրէ զգետինն:

Որ ոք կոչեսցէ զընկերն պոռնկորդի, (յիշոց, որպէս հանապազ ի կիր արկանեն Լեհացիքն) ընդունի հարուածս երիս:

Որ ոչ հնազանդեսցի քննչին յեկեղեցւոջ՝ ընդունի հարուածս եօթն, իսկ եթէ արտաքոյ եկեղեցւոյ՝ հարուածս հինգ:

Որ ոչ հնազանդեսցի փոխանակի քննչին (առաջ աշակերտին ի առաջակայ դոյն քննչի)՝ յառաջնումն նուագի ի սերտարանի ի ժամ ճաշու ընթեռնու զՅանցանսն, (թուի թէ իցէ աղօթք ինչ) յերկրորդումն նուագի ըմպէ գան բառ սահմանելոյ քննչին:

Որ ոչ հնազանդեսցի հայրն՝ ըմպէ գան բառ սահմանելոյ նոցա, որչափ և կամիցեն. իսկ որ ոչն հնազանդեսցի ÷. ուսուցչապետի և տեսչի առաքելութեանն՝ յառաջնումն նուագի ըմպէ գան բազում, և յերկրորդումն վտարի ի դպրանոցէն:

Որ ոչ փոյթ ունիցի զդասականն գրոց (liber lectionis), այլ թողուցու ի սերտարանի՝ ընդունի հարուածս երիս: Խնամակալ խաղուցն, որ ոչ փոյթ ունիցի զխաղալիկան իւրոց, (սատրինճ և այլն) ընդունի պատիժ բառ սահմանելոյ իշխանութեանն:

Որ ոք առանց հրամանի արտաքս ելցէ ի խցէն՝ յառաջնումն նուագի հնգիցս համբուրէ զգետինն, իսկ յերկրորդումն ընդունի հարուածս երիս։

Որ ոք ձեռամբ խաղ առնիցէ ընդ այլում կամ հարկանիցէ զնա, յառաջնում նուագի հնգիցս համբուրէ զգետինն, իսկ յերկրորդումն պատժի երիւք հարուածովք։

Որ ոք ունիցի գնչանն փայտեայ (վասն ի կեր արկանելոյ զեկղու արգելեալ) և ոչ եկեսցէ առ քննիչն յընդունել զսահմանեալ զերիս հարուածսն՝ յառաջնումն նուագի ընդունի հարուածս եօթն, յերկրորդումն ընթեռնու զյանձնառութիւն յանցանացն իւրոց, իսկ յերրորդումն՝ գան հարկանի երիցս անգամ։

Եթէ ընթերցողն ի սեղանատան յառաջ քան զվախճան եօթնեկի կարգին իւրոյ ոչ ունիցի գրեալ պատրաստական դէթ տողս եօթանասուն ի Ս. Գրոցն Հայոց՝ ընդունի հարուածս եօթն։ (Նու այս սահմանեալ է առ ի չգոյէ գրոց)։

Որ ոք փոխեսցէ կամ բեկանիցէ զիր ինչ այլոյ կամ զդպրանոցին՝ ի սեփական գոյից իւրոց տուժէ զփոխան, եթէ ընչեղ իցէ. իսկ եթէ ոչ կարիցէ՝ ընդունի պատիժ ըստ կարևորութեան փոխանն։

Որք պաշտօնակալք, որք անփութութեամբ զգործս իւրեանց կատարիցեն՝ ընդունին պատիժ ըստ սահմանելոյ քննչին։

Եթէ ոչ պահիցէ սպասաւոր սեղանոյն զհանդերձն, զորս առ սպասաւորութեամբն զգենու՝ յառաջնումն նուագի պատժի երիւք ձաղկօք, յերկրորդումն երիւք հարուածովք։

Որ ոք առեալ հրաման արտաքս (ի կարիս) ելանելոյ և մնասցէ առանց ինչ պիտոյից յայլ տեղի՝ յառաջնումն ձաղկել մի ընդունի, յերկրորդումն՝ հարուածս երիս։

Որ ոք առանց հրամանի ի տուէ ննջիցէ ի սենեկի՝ ծոյլ եղեալ ի ննջարանին ընթեռնու սաղմոս հինգ։

Եթէ կարգապահն յեօթնեկի կարգին իւրոյ ոչ յարդարեսցէ դէթ մի անգամ անձամբ, կամ ոչ հրամայեսցէ սպասաւորին յարդարել զեկեղեցի տեղիս շինութեանն՝ հարուածս երիս ընդունի։

Որ ոք առանց հրամանի երթիցէ ի խոհանոցն՝ հարուածս

երիս ընդունի, բայց ի սեղանատանէն, որ պատժի նովին յեղանակաւ, յորժամ առանց ինչ հարկի երթիցէ անդր։

Որ ոք առանց հրամանի ընկողմանեսցի յանկողին ընկերին իւրոյ՝ հարուածս երիս ընդունի։

Զայն և նոյն պատիժ ընդունի՝ որ ոք կորուսցէ զփայտեայ նշանակն։

Որ արտաքս ելանիցէ յեկեղեցւոյ առանց հրամանի՝ ընդունի հարուածս հինգ։

Եթէ գիշերապահ ի քուն մտանիցէ մինչ վառի ճրագն՝ ձաղկի անողորմ թուով հարուածոց։

Որ ոք առանց պատշաճ հրամանի առցէ զիրս այլոց՝ ընդունի հարուածս հինգ ձաղկաւ, եթէ աննշան ինչ իցէ իրն. իսկ եթէ կարևորագոյն իցէ, զոր օրինակ զվերարկ կամ զգեստ այլ կամ ինչ հանդերձատեղ՝ հարուածս երիս ըմպէ։

Որ ոք առանց հրամանի և առանց հարկի երթիցէ յեկեղեցւոյ ի խորանն կամ վասն սպաս հարկանելոյ այլոց պատարագին՝ (զի այս պատճառք բարեպաշտութեան առիթ լինի անճահութեան) ընդունի յառաջնում նուագի հարուածս հինգ ձաղկաւ, իսկ յերկրորդումն՝ երիս հարուածս։

Եթէ ոք կոչեսցի յիշխանաւորէն կատարել զպատիժն յանցեր իւր, և անփոյթ լիցի ի պաշտօնէն՝ փոխանակ յանցաւորին ինքն ընդունի հարուածս երիս։

Որ ոք յեկեղեցւոջ կարգս յարուցէ՝ հանդերձ յանցաւորաւն ընդունի պատիժ ըստ կարևորութեան յանցանացն. որ ոք ի նոցանէ առաւել իցէ յանցաւոր՝ ձաղկի առանց որոշման քանակի, իսկ եթէ արտաքոյ եկեղեցւոյ իցէ կարգն՝ ըստ սահմանելոյ քննչին անօրինի աստիճան պատժոյն։

Եթէ ոք յաշակերտաց ի դատարկութեան զօրն անցուցեալ է կամ ոչ զդասն առացեալ կամ ոչ ցուցեալ զվարժութիւնս դասուց, և ոչ յայտնեսցէ քննչին զպատճառս նորա՝ ընդունի քննչէն պատիժ յառաջնումն նուագի հարուածս երիս ձաղկաւ. յերկրորդումն՝ ի սերտարանի խոստովան լինի զյանցանսն. իսկ յերրորդումն՝ ընդունի հարուածս եօթն։

Յերկարէր արդեօք յոյժ գործն, եթէ թուէաք մի ըստ

միջէ զվարժութիւնս աշակերտացն, զուսմունսն, որ աւանդէին, զեռկմունս կրօնականս, զյորդորս, զքարոզութիւնս ի սերտարանի, զմաղթանսն ի պատիւ Ս. Կայէտանի յաւուրս չարեքշաբաթու, Ս. Գրիգորի՝ ի հինգշաբաթու, Ս. Լեւոնի Մեծի և Սրբուհւոյն Գուլիելմիայ կայսրուհւոյն, զորս նզովեն հերետիկոսքն արեւելեայք վասն գումարելոյ նոցա և պաշտպանելոյ ժողովոյն Քաղկեդոնի, ի պատիւ Ս. Ժողովոյն Քաղկեդոնի և չորեցունց ուղղափառ ժողովոցն Հայոց, Տարսոնին, Սսոյ, Ատանայի և Խրիմայեայ, ի պատիւ սերովբէական կարգաց, առ ի ցրել զաւատկելս հերետիկոսութեանց, զորս յօդեալ են արեւելեայք, զմաղթանս յաւուր Համբարձման Տեառն, զորս կատարեն ի միջօրէի առ ի հայցել զօրհնութիւն Յիսուսի Քրիստոսի, որ յերկինս համբարձաւ, ըզմաղթանսն ի 1-ն Նոյեմբերի ի յիշատակ լռման Միութեանն բովանդակ Հայոց Լեհաստանի, յետ միանալոյ ժողովրդեանն Կամենիցի յամին 1666, և զայլս, զորոց մարթ է ընդունել լեալ ենթակութիւնս ի զեղուցմանց հայց քարոզչացն Եւրոպան բաւ լեալ վասն զպահոցին և կանոնաց նորա և կարգաց կենցաղավարելոյ յայնմ։

Հանձնէ յայժ թուեցաւ ջատագովութիւնն Նուիրակին Լոնվէլեայ, որ համարեցաւ լեալ ի չարամտութիւն բամբասողին. այլ դժգոհ էր վասն ցասմանն Եղիսեայ և փութալոյ նորա հրաժարել ի պաշտամանէն, որ ըստ բանի նորա՝ ոչ ի կամս Եղիսեայ է ապաստան, այլ Ս. Ժողովոյն։ Բայց խորհուրդ եր նմա բարեկամաբար, զի բարւոք խորհեսցի և մի գործեսցէ ինչ շարժեալ ի կրից, ընդ որ զղջասցի ամենեքեան. քանզի ոչ ոք կարծէր, թէ անարգանք ինչ իցեն նմա ամբաստանութիւնքն կամ տուեալ արկցեն ի վերայ երեւելի վաստակոց նորա. իբր զի ամբաստանութիւնքն էին զվարչութենէ ընկերաց նորա, ի տարակայ գոլ նորա. վասն որոյ և խորհրդաբար ի վերայ եդ զպատուէրն (զոր անարգութիւն անձին համարէր անուէն), որպէս զի զիւրոցն լեցի նմա զանձն ջատագովել առաջի ընկերացն, եթէ լուեն նոքա, թէ գրեալ է անուէն չար ինչ զնոցանէ, և կարող լեցի ասել՝ թէ առ Հարկի պատուիրանին գրեալ է զայն։ Ընդ այս

բացատրութիւն առնն ականաւորի հովացաւ մխիթարեցաւ Բոնվիզիոս, վասն որոյ և յետոյ եկաց ի խորհրդոցն հրաժարելոյ ի պաշտամանէ տեսչութեանն, այլ խնդրեաց թախանձագին ի Նուիրակէն, զի եթէ դիպեսցի իր ինչ այսպիսի յապագայ ժամանակս՝ առանձինն և գաղտնի թղթով զեկուսցէ ինքն, որպէս զի մի առ տգիտութեանն կրկին անգամ մեղիցէ։

Յայնմ ամի, որ 1674-րդ էր մարդեղութեան Տեառն՝ վասն սխալական տոմարին, զոր դեռ ևս ունէին Հայքն մասամբ՝ մեծ պահքն Հայոց հնգիւք եօթնեկօք յառաջէին քան զԼատինացւոցն. այլ Նուիրակն հրամայեաց քարոզչացն, զի թողուցուն զկարգ պահոցն Լատինացւոց և փարեսցին պահօքն Հայոց յորինակ միաբանութեան։

Ի սկզբան անդ միւսոյ ամին 1675, յ17-րդի աւուր Յունվարի, ըստ առաջարկութեան Բոնվիզեայ հաճեցաւ փոխանորդն Հայոց, զի ի բաց հանցի աղօթք ինչ յիշատակութեան եպիսկոպոսաց բազմաց և կաթողիկոսաց. մանաւանդ որոց ի հերձուածի վախճանեցան. որովհետև զայս աղօթս հայքն կրկնէին երգէին և զայն ի տօնս սմանս՝ վասն որոյ խուսափեցաւ յաչաց Բոնվիզեայ և այլոց հարցն, որք ոչ գիտէին զեզու և զմարդասիրութիւն Հայոց։

Իսկ արքեպիսկոպոսն Նիկոլ թախանձէր յոյժ յոյժ, զի վախճան արասցէն գործոյ իւրում, և իբրև ընկալաւ ի Վարշաւէ ջանիւք Նուիրակին Կղեմենտեայ զհաստատութիւն ապարտոյ յաջորդին ի նորոյ արքայէն Յովհաննու Գ., որ ընտրեցաւ յաջողութեամբ ի 21-ն Մայիսի 1674 ամի՝ հանդիսիւ մեծաւ ձեռնադրեաց յայնժամ ըստ հրամանի պապին զՎարդան Յունանեան առաջի երկուց քահանայից Հայոց և խնդրեաց և ընկալաւ հրաման լինել նմա յաջորդ արքեպիսկոպոսին Հայոց Լվովայ, ունելով տիտղոս եպիսկոպոսի Նափիփանու, յանուն քաղաքի միոյ յԱսիայ in partibus infidelium։ Եւ սակս անդէն յուղի արկին զնոսա, տալով նոցա զրամ ի պէտս ճանապարհին, արծաթս 500 արքեպիսկոպոսին և 50՝ յաջորդին։ Սա իբրև պահանջէր զրամն յաջորդին՝ կարգեցին նմա և այլ ևս յաւել արծաթ՝ ի Թոշակէ նորա հարիւր արծաթոյ, զոր ունէր ընդունել ամ

րստ ամէ. Իսկ արքեպիսկոպոսին կարգեցին ամի ամի արծաթս 300, այն է 200, զոր ունէր նա յառաջ քան զգալն իւր ի Հռոմ և 100՝ փոխ ընծայից մշտնջենաւոր ժամանակաւ ի պէտս Ս. Ժողովոյն Տարածման Հաւատոյ զտունն յարուարձանի քաղաքին Իվրէայ, յորում հաստատեալ է այժմ դպրանոցն: Թէպէտ և պատուիրեաց Ս. Ժողովն գնալ նոցա ի միասին, զի մի արքեպիսկոպոսն, որ առիթու մանաւանդ քան ի կամաւոր ընդունէր սրտի իւրոյ ձեռնադրելոյ զյաջորդն՝ խռովութեանց իրիք պատճառ լեցի կանխելով յԻվրէայ յառաջ քան զյաջորդն—այլ մինչէն յարեաւ խռովութիւն ընդ նոսա և գնաց իւրաքանչիւր ի ձմեռանոցս իւր առանձինն. փոխ այսորիկ իբրև ժամանեաց արքեպիսկոպոսն ի Կրակով յամսեանն Յուլիսի, եկաց Տեաց յաջորդն ի Կ.Ենեանիկ քաղաքի եօթնեակս երիս առ ի չգոյէ դրամոց և բազում քարոզութեամբք իւրով յեկեղեցւոջն Հայոց եցոյց զջերմեռանդութիւն հաւատոցն իւրոց և ոչ սակաւ անգամ պաշտեաց զաստուածպաշտութեան զկարգս ըստ ամենայն ուղղութեանց կաթոլիկեաց, որ ազգեաց արդարև ի հերձուածոյս քաղաքին: Եւ իբրև ժամանեաց ի Կրակով՝ չև ևս մեկնեալ էր անտի արքեպիսկոպոսին առ ուղի յարձակման Աքիւթացւոց*) ի ժամանակս բողբոքելոյ պատերազմին Տաճկաց: Իսկ յետ երևելի յաղթութեանն, զոր արար արքայն Յովհաննէս բանակի միով Լեհացւոց ընդդէմ բազմաւուն հազարաց Տաճկաց, յորժամ ազատեցաւ Իվով և անցին եռուն փառնց և երկիւղ ի թշնամեացն յետ անթապարտ փախստեան ջոկոցն Տաճկաց և Աքիւթացւոց, զորս յետ ազատութեան ամրոցին Տրեմբովլէի հալածեալս առնէին սակաւաձեռն զունդք (Լեհացւոց)՝— եկին երկոքեան յԻվով յ2-րդի աւուր Հոկտեմբերի, արքեպիսկոպոսն և յաջորդն: Սակայն միով յառաջ քան զգալուստ արքեպիսկոպոսին ընդ առաջ ել նմա Սպլինիոս յԵռանով և ընկալեալ եղև անդ սիրով մեծաւ և զգիշերն ողջոյն կեցին ի միասին. Իսկ վաղ քաջ տատուօն եկին Հ. Բասսի ընդ փոխանորդին Հայոց հան-

*) Համաձայնութեան Թուղթ Թաթարաց Թարգմ.

գերձ վեցաձի կառօք դեսպանին Գաղղիոյ՝ սրբազան եպիսկոպոսին Մարսիլեայ, որ ի ժամանակի յայնմիկ կեայր ի դըպրանոցին. եկին և համօրէն աշակերտք դպրանոցին ձիով, և Հայք բազումք, զորս նստուցանէին եկեղեցականքն և դատաւորք Հայոց ի կառս և ի սայլս իւրեանց, այլ և համօրէն պատանիք Հայոց կազմեալք յաղեղն և ի կապարճ. առաւել ևս շքեղ եղև հանդէսն, զի Հայ ոմն պարսկաստանցի, Բոգդան բէգ (Աստուածատուր բէգ) անուն նորա, որ առաքեալ էր ի Կազիմիրայ արքայէն առ Շահն Պարսից և եկեալ էր յայնմ ժամանակի հանդերձ դեսպանաւն Պարսից՝ եկ ընդ առաջ արքեպիսկոպոսին արտաքոյ արուարձանին Իլվովայ, զգեցեալ հանդերձ ծանրագին և գլխարկ յեռեալ մարգարտով և ադամանդիւք ըստ շայլութեան արևելից. երթային զհետ բազմութիւն սպասաւորաց, որք ունէին ի գլօշակս հանդերձից զանգակս և օղակս պողպատեայս, որ ձայն անուշիկ հնչեցուցանէին ի շարժել արանց. իսկ զառաջեաւ նորա տանէին գլօշս, հաստատեալս ի ծայր նիզակաց: Զկնի սակաւապէտ նախաճաշի, զոր պատրաստեալ էր դատաւորացն ի դաշտի՝ եմուտ արքեպիսկոպոսն ի քաղաք ըստ ամենայն բարեկարգութեան, շուրջ պատեալ ի համօրէն սպասաւորաց իւրոց, առաջի ամբոխի ժողովրդոց, որոց հրապուրեալ ի նորութիւն տեսլեանն՝ խռնեալ էր ի փողոցսն և ի պատուհանս: Յառաջեաց այսպէս արքեպիսկոպոսն ի մայր եկեղեցին Հայոց և նստաւ անդրէն յաթոռն առաջնորդութեան, յորմէ վտարեալ էր ամս վեց և աւուրս մետասան: Իբրև երգեցին Լատինացիք զՑյդ ընդ երգեհոնի զTe Deum-ն (Օրհնեմք Աստուած փառաւորեմք) և Հայք՝ երգս գոհացողականս, ասաց մի ոմն յաշակերտաց դպրանոցին ճառ ողջունի ի լեզու հայ: Մ՝ի ոմն յաշխարհականաց խօսեցաւ ճառ վասն նորա ի լեզու Լեհացւոց և նմանեցոյց զնա արեգական և գեղեցիկս յայս ալար, թէ բազմացան ճառագայթք նորա, յաւելլով ի նա նորոյ խուրբին, ակնարկելով այսու ի ձեռնադրութիւն յաջորդին: Այս ամենայն թուեցան քարոզչացն նշանք բարեյաջողք վասն գեղեցիկ յաջողուածոյ դժուարին գործոյն. և ի վերայ այսր ամենայնի զարմանային և ընդ խոհեմութիւն դատաւորացն,

որք զյաջորդն և զփոխանորդն ընկալան քաղաքավար դիմօք թէպէտ և սառնութեամբ սրտի, զի կարի յուսացեալք էին նոքա, թէ յապագային—քանզի յուժի էր դեռ ևս արքեպիսկոպոսն և առողջ—ի ձեռս իւրեանց առցեն զյաջորդն, ընդ որ, վասն անգէտ գոլոյն լեզուին Լեհացւոց և վասն արտաքին դիմացն և այլոց ինչ պատճառաց, ոչ դիւրաւ արդեօք հաւանէին պալատն և հայքն։ Պրօնաւորն միայն Ռինար-դովէչ խիթիւ ի նա հայեցեալ և անտեղի սրախօսութեամբ զանձին իւրոյ զօգնութիւն և զնախանձ յայտ արար։

Ի 27-րդի աւուր նորին Հոկտեմբերի առաջի արար Սիգի-զմոս զարքեպիսկոպոսն և զյաջորդն Թադուհեան, որ սիրելութեամբ բազմաւ ընկալաւ զնոսա, թէպէտ և քաջ էր տեղեակ կենցաղավարութեան և բարուց արքեպիսկոպոսին և հակառակէր միշտ վերադարձի նորա և յաճախակի խոհեմութեամբ յորդոր լինէր առ Սիգիզմոս, զի զգուշաւոր լիցի յոյժ յայսմ իրի, զորմէ սարջանալոց է ապա։

Նոր արքեպիսկոպոսն յաջորդին սենեակ մի մեծ ի նախկին բնակարանի դպրանոցին. և անդ կեայր յաջորդն ընդ պատանւոյ ումեմն Հայոց ի Պարսկաստանէ, Պօղոս Պիրատամ անուն նորա, որդի մեծատան ուրումն վաճառականի և հաւատարմատարի շահին Պարսից յԻտալիայ, որ ի Վենետիկ քաղաքի յարեցաւ ի յաջորդն զանխուլ ի հօրէ իւրմէ, զի թեակոխեսցէ յուսմունս. այլ ի սենեկի անդ կարի ծանր հիւանդացաւ յաջորդն, կամ վասն փոխելոյ կլիմային կամ վասն անսովոր ցրտոյն, զի ոչ լուցանէր նա հուր՝ ի սենեկի իւրում, իբրու թէ առ ի չգոյէ դրամոց վասն փայտի. (սակայն էր նորա արծաթ պաղեալ)։ Խռովեցան յոյժ ընդ այս հայքն, ոչ միայն առ ահի մահու առն, այլև երկնչէին թէ գուցէ գրաւեսցէ յինքն արքեպիսկոպոսն զգոյս նորա և մանաւանդ զծախութիւն տառիցն Հայոց տպագրութեան, եթէ, մեռանէր նա ի թեմի արքեպիսկոպոսին։ Մեղադիր յոյժ լինէին հայքն փոխանորդին Հայոց, զի կելով հուպ առ յաջորդն՝ ոչ կոչեաց զնա առ ինքն առ ժամանակ մի վասն խնամելոյ զնա. այլ ի չքմեղս լինէր նա, թէ գուցէ կասկած տարակուսի լինէր, թէ դեղեալ իցէ զյաջորդն, եթէ մեռանէր նա։ Իսկ իբրև ապա-

քինել սկսաւ յաջորդն օծնութեամբ Աստուծոյ, բժշկաց, քաղաքացաց և աշակերտաց, որք ի տուէ և ի գիշերի փոփոխակի կարգաւ խնամէին զնա՝ խնդրեաց արքեպիսկոպոսն յԱկոյլեայ, զի ածցեն զնա ի դպրանոցն. հաւանեցաւ ընդ այս տեսուչն, այլ եդ պայման, զի հատուսցէ հիւանդն զամենայն ծախս, զոր առնիցեն հարքն ի պահել և ի խնամել զնա, մանաւանդ զի հատոյց նուիրակն յաջորդին զԹոշակն, զոր կարգեալ էր նմա Ս. Ժողովն, որպէս յիշատակեցաք ի վերոյ։

Թէպէտ և իրաւամբ պարտաւոր համարէր զինքն արքեպիսկոպոսն Ակոյլեայ վասն մեծագունից բարեացն վերադարձի իւրոյ յԻտալիոյ, զորմէ այնքան աշխատ եղև ինքն՝ այլ քանզի խորհուրդք մեծ էին ընդ կէտս նպատակաց երկոցունցն— զի Ակոյլեայ աստուածահաճոյ էին նպատակք, իսկ արքեպիսկոպոսին՝ օգուտ անձին,—վասն այսորիկ ոչ երկարատև եղև հաշտութիւն միաբանութեան նոցա։ Յաճախագոյն ևս լինէին ապաքէն հակառակութիւնքն, եթէ չէր երկիւղ Ակոյլեայ յանդիմանել բառ արժանւոյն, եթէ յայտնել լինէր, թէ ի՛նչպիսի կարգ կենցաղավարութեան գարշաւ արքեպիսկոպոսն, և արքեպիսկոպոսին՝ վասն բարեհաճութեան Թադահւոյն ընդ Ակոյլեաս և մեծագոյն ևս երկիւղ զերկրոյ ի Թոշակէն, որ կարգեալ էր նմա։ Այլ հովիւն բարի ի սուղ ժամանակի գարշաւ անդրէն ի նախկին սովորութիւնն իւր։ Պատճառք գժտութեանցն եղև այս ինչ. Յաշակերտացն Հայոց դպրանոցին Նիկողայ, եկեալ ի Հռոմ երեկի եղեն Թող զյաջորդն՝ և այլ ևս երկուք—Կաղեմիր Մուրադովիչ ի Կամենիցէ և Դէոդատ (Աստուածատուր) Ներսեսովիչ յԼուովիցէ, զովելիք վարուք, յոյժ մնացին, որք յոյս մեծ ազգէին վասն ապագային։ Առաջինն ի նոցանէ, յետ աւարտելոյ զընթացս ուսման իւրոյ ի դպրանոցին Հռոմայ դարձ արար յԼէվով սուղ ինչ ժամանակաւ յառաջ քան զվախճան արքեպիսկոպոսին, ձեռնադրեցաւ ի փոխանորդէն կիսասարկաւագ և յամսեանն Մարտի յիշատակեալ 1675 ամի՝ սարկաւագ, և ապա ի 29-ն Դեկտեմբերի ձեռնադրեցաւ յարքեպիսկոպոսէն քահանայ, և զովելի յեղանակաւ վարէր զպաշտօն իւր ի մայր եկեղեցւոջն Հայոց, քարոզելով, կատարելով զկարգս աստուածպաշտու-

թեան և զամենայն պալատս բարեպաշտութեան քահանայական կարգին. և ունէր ի մտի յետ մերձակայ խաղաղութեան երկրին դառնալ ի բնիկն իւր քաղաք ի Կամենից և կամ երթալ այլուր վասն ծառայելոյ զՍ. Միութիւնն։ Իսկ երկրորդն, Դէոդատ, զոր առ ժամանակ մի յամեցուցին ի փոքր Լեհաստանի ըստ կարգեալ թոշակի յաղագս կրթութեան ճարտարախօսութեանն՝ առա մեծահոգ ջանիւք Նիկոլայ փոխացաւ ի քաղաքն Հռոմ ի Կոլէճի առ մայրն ապրեցեալ և առ ազգականս իւր, ուր յետ ուսման Եւրոպեցի փոխեալ էին անդր ի բնակութիւն. աստանօր ի սուղ ժամանակի այնպէս հիացոյց քաղցրութեամբք իւրովք զաւագանին Լեհացւոց՝ զի իշխանն Դիմետրիոս, որ մեծ Հեթման է զարդիս, ետ նմա վճռակ կարի շահաւէտ,—զհովուութիւն եկեղեցւոյն Լեվարգովցի մերձ ի Լիւբլին, վարելոյ ըստ արարողութեան Հռոմէական Եկեղեցւոյն։ Վասն որոյ եկն Դէոդատ յԼվով ընդ իշխանին Դիմետրեայ յամսեանն Նոյեմբերի նորին 1675 ամի, կոչեցեալ գոլով անշուշտ յարքեպիսկոպոսէն, որ այն ինչ դարձեալ էր յԻտալիոյ և կոչէր առ ինքն զամենայն քահանայս Հայոց յայլոց քաղաքաց, զի եկեսցեն, ի հարկէ ոչ ունայն ձեռամբք, յայտնել նմա զհնազանդութիւն, և մասամբ՝ զի խորհեսցին ընդ Նիկոլայ վասն նորոյ վճռակի։ Իսկ իբրև Դէոդատ, որ տեսանէր ինքն՝ եւ անյագ հովուէին ի պատճառս շնորհավաճառութեան զմի միայն զոր առ իւր ունէր զոսկին՝ յորոյ ի վերայ իւր զցասումն արքեպիսկոպոսին, որ դարձոյց առ նա զոսկին և զժուարաւ թոյլ ետ նմա կալ առաջի իւր։ Իսկ Նիկոլայոս յորդոր եղև առ արքեպիսկոպոսն, զի յայց եկեսցէ իշխանին և շնորհ ունիցի նմա վասն վճռակին, զոր առաջարկեաց նա Դէոդատայ։ Եւ չոգաւ արդարև արքեպիսկոպոսն յայցելութիւն իշխանին, բայց ոչ միայն ըսեաց շնորհակալու գոլ, այլ ընդմիջեալ տմարդօրէն զՆիկոլայոս, որ խօսէր ընդ նորա առաջի բազմութեան աւագանւոյն՝ յայտ արար, թէ չէ հարկ Հայոց ընդունել զվճռակս Լատինացւոց, և ոչ կամէր համոզել յայս ինչ՝ թէ թէպէտ և ցանկալի է այժմ, զի հրատարակեցի հրաման Ս. Ժողովոյն Տարածման Հաւատոյ 15-ի ամսեանն Նոյեմբերի 1664 ամի,

որով արգելեալ է Հայոց մանկոց ի միութիւնն փոխիլ յայլ դաւանութիւն՝ այլ մինչ չև է հրատարակեալ հրամանն, ազատ է անձնիւր ոք թողուլ զդաւանութիւն իւր և ընդունել զհռովմէականն, որ կատարելագոյն է և անվթանգ, նա մանաւանդ Դէոզատ, որոյ ընկալեալ է ի Հռովմ լիովին թոյլատուութիւն պատարագս մատուցանելոյ ըստ արարողութեան Հռովմէական Եկեղեցւոյ։ Այլ և Դէոզատայ իսկ և իսկ ոչ ի մտի եղեալ էր թողուլ զդաւանութիւն իւր. այլ ընդհակառակն խոստացաւ, զի յընթացս ամի յաճախակի գայցէ ի մերձաւորագոյն վիճակին իւրում ի քաղաքն Զամոստիէ յեկեղեցին Հայոց ի մեծամեծ տօնս (զորս տօնեն Հայք և Լատինք յայլ և այլ ժամանակս) և թէ ի սուղ ժամանակի գալոց են և մայր իւր և քոյրն ամուսնացեալ, որք կարօտին յօգնութիւն նորա։ Վասն հրապարակական վիճաբանութեանն առաջի իշխանին արքեպիսկոպոսն և Ալոյսիոս ոչինչ իւիք զանձինս նախատեալս համարէին. քանզի երկոքեան եւս ջանային ջատագովել փաստից իւրեանց վասն Դէոզատայ և ընդդէմ նորա, այլ ըստ սովորականին յաղթող հանդիսացաւ Ալոյսիոս, զի յորժամ կարի յայսմ պնդեցին Հ. Ռոսսի, որ կոչեցաւ յԱլոյսեայ և այլք երկու պալատականք, կոչեցեալք յիշխանէն՝ տեղի ետ արքեպիսկոպոսն և հաւանեցաւ ի վերին երեսս, բայց և ընդ այն իսկ յոյժ ուրախ եղեն Հայքն։

Այլ կարի ծանրագոյն և երկարատև եղև գժգոհութիւն ընդ նոսա յաղագս անարգելոյ արքեպիսկոպոսին հրապարակաւ զյաջորդն։ Եւս զնոսա տեսուչն և չոգաւ առ արքայն, որ յետ բազմաթիւ յաղթութեանցն յՈւկրայնի դարձ արար ի Ժողկիև, որ երբեմն մղոնիւք հեռի է յԼվովայ, և առաջի արար զնոսա արքային յ12-րդի աւուր Դեկտեմբերի 1675 ամի, համոզելով յառաջագոյն զարքեպիսկոպոսն, որ ոչ կամէր առնուլ ընդ իւր զյաջորդն, մոռացեալ թէ քանի՛ շնորհս եգիտ նա առաջի արքունեացն և մանաւանդ առաջի դեսպանին Գաղղիոյ ջանիւքն Ալոյսեայ։ Այլ յետ վերադարձի նոցա ի Ժողկիևէ, երբ եկին տեսուչն և յաջորդն առ արքեպիսկոպոսն ի 25-ն Դեկտեմբերի յաւուր նախատօնակի ութօրէին Ծննդեան Յիսու-

թեանն Ս. Կուսին Մարիամու*), զի ածցեն զնա բառ սովորութեան մեծաւ պատուով ի Նախատօնակին Հանդիսաւոր՝ անգիտեմ թէ յորոց պատճառաց զրկեալ արքեպիսկոպոսին, առաջի համօրէն եկեղեցականաց և խուռն ժողովրդեանն ի մեծ գայթակղութիւն ամենեցուն կորզեաց խլեաց ի կրծից յաջորդին զխաչն, զոր կրեն առ հասարակ ամենայն եպիսկոպոսունք ի Լեհաստանի, ասելով թէ չէ նմա օրէն կրել խաչ առաջի իւր առանց հրամանի իւրոյ: Զայրացեալ ընդ այս Նիկոլոսեայ՝ յայտ արար, թէ ամենայն եպիսկոպոսունք ի Լեհաստանի ունին իրաւունս կրելոյ խաչ. այլ յաւել նա, ոչ ումեք տուեալ է թոյլ ի կեր արկանել զգեստս կարդինալաց և պապին, զոր օրինակ նոյն առնէ, այսպէս եղեալ ամենեցուն: Իսկ արքեպիսկոպոսն պնդէր, (այլ ամենեին սուտ թեամբ) թէ ընկալեալ է նորա առ այս թոյլտուութիւն ի պապէն յՈւրբանոսէ Ը., և յաւելլով բանս նախատանաց՝ սպառնալիս եւ եդ ի վերայ, թէ ընկենուցու արտաքս զաշակերտսն և զհայրսն ի շինութենէն որ յարուարձանի: Յերկարէր անշուշտ կագն, այլ տեսեալ Նիկոլոսեայ, թէ առաջի կան կարգք աստուածպաշտութեան և տօնն մերձակայ՝ ջանացաւ ընկճել զմոլեգնութիւն և զպրոյթ իւր: Յետ այսորիկ կամեցեալ արքեպիսկոպոսին զգուել զՆիկոլոսոս՝ կոչեաց զնա հանդերձ հայրն Ռոսսեւ ի հարցաքննութիւն երկուց աշակերտաց, զորս ունէր ձեռնադրել ի քահանայս: Ցուցեալ Նիկոլոսեայ ի վերին երեսս, թէ ոչ կամի գնալ՝ չոգաւ ապա առ նա, մի՝ զի կարգեաց այսու արքեպիսկոպոսն քննութիւն յառաջ քան զձեռնադրութիւն, ընդ որ ոչ հաւանէր նախ քան զերթալ իւր ի Հռովմ. և կրկին՝ զի առաջի քարոզչացն առնէր զհարցաքննութիւնն, ընդդէմ սովորութեան փոխանորդին, որ ոչ առնէր այդպէս: Յուշ առնել սկսաւ արքեպիսկոպոսին Նիկոլոսոս քաղցրութեամբ առանձինն, թէ քանի՛ շնորհս եգիտ նա, և զայն ի՞նչ թէ սաստկապէս անարգեաց հրապարակաւ ոչ միայն զեպիսկոպոսն յաջորդ, այլ մանաւանդ զենքն՝ որ պաշտպանեացն նմա,

*) Հեղինակն գրէ ըստ Նոր տոմարի. իսկ Հայք վարէին հնով. վասն որոյ 25-րդ որ ամսոյ ըստ Նոր տոմարի՝ գայ յ15-ն հնոյ տոմարին, որ նախատօնակ է ութօրէի յիշատակեալ տօնին, կատարելոյ յ8-ն Դեկտեմբերի Թարգմ.

սոյնպէս և զՍ. Ժողովն, որոյ սպասաւոր Համարի յաջորդն Վասն որոյ արտասուաթոր աչօք հայցել սկսաւ Եղյիխիոս, զի առ սէր իւր ցբարեկամն (ցԵղյիխիոս), զխնդիր իրաւանցն յայլ ինչ ժամանակ թողցէ և դարձուցէ ի յաջորդն զխաչն, զոր կորզեաց ի նմանէ, և տացէ հրաման կրկին զայն։ Սի-րելութեամբ պատասխանի արար արքեպիսկոպոսն, թէ ոչ երբէք մոռացի զբարերարութիւնն զորս եղիր. այլ զխաչն ոչ դարձոյց յետս։ Խորհեցաւ Եղյիխիոս ոչ ևս խօսիլ զի-րացս զայսոցիկ մինչև եկեալ իցէ նուիրակն նոր, որում, յետ կարգելոյ Բոնվիզեայ ի նուիրակութիւն Վիէննայի՝ հանապազ ակն ունէին հասանել ի Կրակով. (Բոնվիզեայ ի մեկնելն իւր եթող զփոխանորդութիւն նուիրակութեանն առ ժամանակ մի ի Տուցցի)։

Վասն որոյ երբև ի վախճանի 1676 ամի հարկ եղև տեսչին գնալ ի տես նորոյ կարդինալին Փրանցիսկոսի Մարտելլեայ, որ ժամանեալն էր յայնժամ ի Կրակով, վասն գործոց առաքելութեանն՝ ի ժամ հրաժեշտի ընդ արքեպիսկոպոսին խնդրեաց ի նմանէ երկրորդ անգամ դարձուցանել զխաչն առ յաջորդն. և յայս՛ նուագի հաւանեցաւ արքեպիսկոպոսն ընդ խնդիր նորա, քանզի իմաստնաբար խորհեցաւ, թէ օգտակար էր խաղաղութեամբ վախճան առնել վիճիցն իւրոց ընդ Եղյիխեայ, յառաջ քան զմեկնիլ երթալ նորա յարքունիս և առ նուիրակն։

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

## Ա


Աբգար 2, 139.
Աբիրոն 174.
Ագաստոնովիչ Թէոդորոս 134.
Ալբրիցիոս 31, 217, 218, 234.
Ալոյիսիոս, տես Պիզու.
Ալտիէրի 233, 240, 241, 246.
Ակկերման 60, 152.
Աշմէա 224.
Աղէքսանդր Ա. պապ 70, 71.
Աղթամար 3, 140.
Աղուանք 1, 3, 140.
Ամբրոսիոս 71.
Ամբրոսիոս de Calepio 41.
Ամորէատի 121.
Ամստերդամ 8, 45, 46, 143, 215, 230, 232.
Անգղիա 1.
Անդրէաս Լիւբլինեցի 70, 94.
Անի 9.
Անտիոխիդորայ ժողով 71.
Անտիոք 148.
Ս. Անտոն 7, 145.
Անտոն քահանայ Լուցկի 11, 110, 126.
Անտոնիոս, գաւառապետ Դոմինիկեանց 95.
Անտոնիոս եպիսկոպոս 34.
Անրուլդ 242.
Ապրոցցիոյ Պօղոս Աւգուստինոս 230, 242, 245.
Ասիա 2, 139, 140, 213, 262.
Ասլանովիչ Յովհաննէս, տես Ոսկեփորոս քահանայ.
Ասորիք 1.
Ատանայի ժողով 40, 71 139, 261
Արամ 1.
Արարատ կամ Մասիս 9, 141.
Արիէնովիչ Մելքիոր-Նիկողայոս, տես Պետրոս քահանայ Զամոստեայ.
Արիստակէս վարդապետ 155.
Արիստակէս քահանայ 14, 97.
Արսէն քահանայ Իլովայ 19, 23.
Արտաշատ 140, 141.
Աւագովսկի Անդրէաս 124, 132.
Ս. Աւգուստինոս 71.
Աւգուստովիչ 221.
Աւրեղեայ Դ ժողով 71.


## Բ


Բաղդասարայ Յովսէփ 209, 212, 213.
Բալակլավայ 10, 152.
Բալդադրօղլու Յովհաննէս 128.
Բալէնչ Բաղդասար 49, 68, 119, 132.
Բալսամ կամ Բալսամովիչ Գրիգոր քահանայ Ստանիսլաւովի 15, 42, 49—51, 54, 61, 68, 79, 80, 82, 83, 85—87, 89, 92, 120, 132, 170, 171, 175, 179, 186—189.
Բախչիսարայ 10, 152.
Բատաւիա 180.
Բարդոցովիչ Յովհաննէս 49, 119, 132.
Բարթուղիմէոս առաքեալ 1, 139.
Բարթուղիմէոս քարոզիչ 140.
Բարսամ կրօնաւոր 66.
Բարսեղ Չնորհալի 71, 86, 147, 218.
Բարսեղ քահանայ Հայոց ի Հռոմ 225.
Բաւարիա 31, 162.
Բելճիկայ 180.

Բերնարդովիչ Ալեքսիս-Նիկոդայոս 116.
Բերնա(ր)դովիչ Յովհաննէս քահանայ Իլվովայ 19, 116, 170, 189, 244, 265.
Բերնարդովիչ Քրիստափոր 58.
Բէնդերի 10, 152.
Բիւզանդիոն, տես Կոստանդնուպոլիս.
Բողդան բեգ 264.
Բողդանիա 35, 50, 176, 228.
Բոլեսլաւ Բ. Գոռոզ 24, 158.
Բոնայ 174, 225.
Բոնվիզիոյ 244, 246, 261, 262, 270.
Բոսսի Հերոնիմոս 213, 217, 220, 224, 244, 245, 263, 268, 269.
Բոցեան 11, 152.
Բուլղարիա 111.
Բուտանովսկի Սիմէոն 43, 117, 118, 133.
Բրոդարէնի Գ. Ժողով 71.
Բրոդի 153, 267.
Բրոսկի Յակոբ քահանայ Իլվովայ 18, 19, 33, 34, 37, 41, 95, 115, 164.


## Գ


Գաբրիէլ քահանայ Կամենեցի 13, 124.
Գաբրիէլովիչ Գրիգոր 124, 129.
Գաբրիէլովիչ Քրիստափոր 39, 129.
Գալանոս Հ. Կղեմենտիոս 6, 14, 15, 20, 29—31, 34—36, 38, 42, 45, 47—50, 52—56, 61, 62, 70, 73, 75, 85, 95, 96, 104, 107, 114, 116—118, 120—123, 125, 126, 132, 134, 144, 161—163, 166, 167, 169—173, 176—180, 182, 186, 189, 193, 194, 197—199, 217, 219, 220, 222, 225, 253.
Գալաց 10, 152.
Գալեւիչ Յակոբ 127.
Գալիչ 11, 153.
Գաղղիա 197, 231, 264.
Գաղղիացիք 83.
Գայիանէ 2, 65.
Գարիմբերդ 230.
Գենուայ 230.
Գեձինսկի Իւրիյ. 133, 211.
Գերմանիա 1.
Գերմանոս 71.
Գոլուբ քահանայ Հայոց ի Հռոմ 238, 239.
Գորիսկայ Յակոբ քահանայ Իլվովայ 34.
Գորոդենկայ 153, 208.
Գութք 108.
Ս. Գրիգոր Լուսաւորիչ 1—3, 25, 26, 39, 43, 65, 66, 69, 72, 92, 125, 139—141, 145, 147, 158, 210, 261.
Գրիգոր Կեսարացի վարդապետ 22, 154, 155.
Ս. Գրիգոր վարդապետ 66.
Ս. Գրիգոր Սսեցի 67.
Գրիգոր քահանայ Իլվովայ 34, 35.
Գրիգոր քահանայ Կամենեցի 13.
Գրիգորիս կամ Գրիգորովիչ Յակոբ քահանայ յԻլվով 21, 35, 36, 56, 59—61 63, 111, 116, 123, 180.


## Դ


Դանան 174.
Դարիայ Ֆրանցիսկոս 96, 98, 99, 102, 107, 112, 113, 124, 130, 194, 204.
Դաւիթ գոյիր 49.
Դաւիթ մարգարէ 66.
Դեմետր իշխան Ռուսաց 11, 152.
Դեմետրիոս իշխան Լեհացւոց 267.
Ս. Դիոնեսիոս 65.
Դիոսկորոս 4, 142.
Դոմինիկեանք 2, 14, 50, 52, 83, 95, 97, 140, 202, 225, 228.
Դուին 1, 139.


## Ե


Եաբլոնովսկի 168.
Եազլովեց 4, 15, 21, 49, 51, 52, 63, 67, 68, 76, 81, 88, 93, 97, 98, 111, 112, 117, 121, 124, 127, 131—133, 153, 166, 172, 175, 180, 181, 187, 191, 193, 194, 204, 216, 220, 232, 251, 266, 267.
Եալինովիչ Ստեփանոս 130.
Եանով 263.
Եանովիչ Յակոբ 129.
Եասսի 10, 152.
Եթովպիա 213.
Ելեոնորայ թագուհի Լեհացւոց 217.
Ելեոնորայ կայսրուհի Աւստրիոյ 217, 243.
Եղիազար պատրիարք 92.
Եպիփան 262.

Երուսաղէմ 3, 5, 19, 66, 90, 141, 143, 177.
Եփեսոսի ժողով 65.
Եփրատ 139.
Եփրեմ քահանայ Իլովայ. 19, 115.

## Զ

Զախնովիչ Գաբրիէլ քահանայ Իլովայ 20, 32, 39, 116, 117, 125, 127, 130, 135, 210.
Զախնովիչ դատաւոր Իլովայ 38.
Զախնովիչ դպիր 132.
Զակքէոս 150.
Զամոստէ 16, 17, 31, 35, 41—44, 48, 49, 110, 118, 119, 127, 128, 131, 153, 169, 194, 215, 222, 228, 249.
Զաքարիա քահանայ Կամենեցի 15.
Զաքարիայ քահանայ Հայոց ի Հռոմ 239.
Զբորովսկի 243.

## Է

Էմմանուէլ կայսր 46.
Էջմիածին 2, 3, 16, 19, 21, 45, 92, 93, 140, 141, 144, 154, 159, 173, 182, 218, 232.

## Թ

Թադէոս առաքեալ 1, 139.
Թադէոս քահանայ 215.
Թաթարստան 1, 9, 10, 11, 21 128.
Թաթարք 15, 152, 198, 211, 214, 248, 263.
Թէադինք 6, 96, 99, 109, 114 161, 197, 212, 222, 230, 231, 234, 235, 237, 238, 240, 242, 244, 247, 252.
Թէոդոս Փոքր 133.
Թէոդոսիա, տես Կաֆայ.
Թէոդոսիոս իշխան Ռուսաց 11, 152.
Ս. Թէոդորոս 71.
Թէոդորոս քահանայ Կամենեցի 19.
Թէոդորոս քահանայ Սնեատինի 15, 54, 67, 97.
Թէորիանոս 46.
Թոխատ 120, 228.
Թովմաս առաքեալ 64.
Թովմաս քահանայ Կամենեցի 13.
Թորոսովիչ Լուդովիկոս 128.
Թորոսովիչ Նիկոլ, արքեպիսկոպոս Հայոց Լեհաստանի 11, 21, 113, 117, 133, 154—164, 168, 169, 180, 184, 185, 187, 193—195, 197, 215, 219, 223, 262.
Թրակիա 1, 140, 238.

## Ժ

Ժոլկեվ 268.
Ժվանեց 153, 208.

## Ի

Իլով 10—12, 14—21, 30—32, 34 35, 42, 43, 45, 48, 49, 52—55, 57—59, 61, 62, 70, 72, 78, 86, 92, 93, 95—100, 102—104, 109, 112—115, 117, 119—121, 123, 124, 130—133, 153—155, 157, 159, 160, 162, 164—166, 168—170, 173, 175—177, 179—181, 186—188, 190, 193—195, 197, 198, 205, 206, 209—211, 213—218, 220, 222—229, 231, 232, 236—238, 240—245, 249, 251, 262—264, 266—268.
Իսահակ եպիսկոպոս 10, 11.
Իսմայէլ 10, 152.
Իտալիա 1, 31, 82, 102, 154, 162 169, 178, 204, 213, 216, 230, 237, 245, 265—267.
Իրինէ Նաճապակ 70.

## Լ

Լատինացիք 12, 55, 61, 74—76, 83, 94, 123, 149, 153, 163—165, 174, 186, 189, 193, 201, 203, 208, 215, 234, 264, 268.
Լեանցկորոնսկի 133.
Լեհաստան 1, 2, 9—11, 21, 26, 39, 42, 83, 85, 108, 109, 114, 123, 137, 140, 149, 153, 161, 165, 167, 170, 172, 173, 178, 184, 194, 204, 217, 221, 222, 225, 226, 228, 230—234, 236, 238, 241, 243, 245, 261, 267, 269.
Լեհացիք 29, 154, 160, 167, 194, 258, 263.

Լեչչինսկի 74, 79, 95, 131, 182, 186.
Լեոն ԺԳ պապ 4, 41, 56, 64, 65, 133, 143, 261.
Լիթուայ 11, 108.
Լիւոնայ 232.
Լիվորնոյ 35, 50, 177, 225, 230, 231.
Լիւբլին 118, 267.
Լիֆլանդիա 108.
Լորէլլ Աւգոստինոս 213, 217, 220, 243—245.
Լուցկ 11, 12, 110, 153, 194.

## Խ

Խաչատուր պատրիարք 35.
Խաչատուր վարդապետ, նուիրակ 22, 92, 155.
Խարասու 152.
Խերսոնեայ (դուքսէ Ֆոնտայ.) ժողով 139, 261.
Խիլում 92, 93.
Խոլմ 16.
Խոսրովիդուխտ 140.
Խոտին 11, 89, 92, 112, 152, 192, 245.
Խրիմ 10, 152.

## Կ

Ս. Կալլիստրատոս 55.
Կամբանիա 230.
Կամենեց 11—16, 21, 24, 32, 39, 54—56, 62, 63, 67, 68, 70, 72, 74, 77, 78, 81—89, 91—95, 98, 111, 112, 119, 123, 124, 129—133, 153, 154, 166, 175, 179—181, 186, 188—190, 192—194, 204, 216, 220, 224, 228, 239, 261, 266, 267.
Կամենեցկոլսկի 15.
Ս. Կայետան 261.
Կապրիա միջեւ կամ Կապր մակի Գաբրիէլ 38, 115, 207.
Կապրովսկի Յովհաննէս 125, 126.
Կարաչոնի Հ. Յովսէփ 102—106, 109, 110, 126, 191, 197—203, 252.
Կարաֆայ 233.
Կարթագինեայ Գ. ժողով 71.
Կարմելիտեանք Բոկոտինք 22, 75, 155, 189,
Կարուց քաղաք 9.
Կաֆայ 10, 61, 128, 152.
Կեսարիա 155.
Կերեմովիչ Յովհաննէս եպիսկոպոս 35, 50, 95, 133, 176, 178, 222, 228.
Կիեւ 11, 12, 15, 16, 34, 61, 133, 153·
Կիլիկիա 3, 140.
Ս. Կիպրիանոս 65, 71.
Կղեմենտիոս, տես Պալլանոս.
Կղեմենտիոս Ժ. պապ 70, 127, 132, 194·
Կոզլով 10, 152.
Կոլոննայ 167, 204, 214, 222, 224, 226 229—233, 251.
Կոնչինի արքայ 239.
Կոստանդնուպոլիս 2, 10, 16, 18, 26, 34, 36, 92, 141, 155, 159, 178, 241.
Կոստուցցի Բոնավենտուրի 114, 116, 162ʻ 178.
Կորիցինսկի 168, 213.
Կորնելիոս 113.
Կրակով 70, 94, 102—104, 116, 178, 197 214, 224, 263, 270.

## Հ

Հալէպ 3, 221.
Հայաստան, Հայք 1, 2, 9, 17, 18, 21, 25ʻ 33, 45, 50, 52, 61, 67, 82 90, 95, 96· 116, 120, 121, 140, 151, 156, 170, 177, 203, 218, 219, 225, 238, 247, 252·
Հայք 1—3, 7, 9, 11, 12, 14, 15, 17, 21, 24—26, 29—31, 33—35, 37, 43, 48, 64, 67, 70, 71, 74, 76, 80, 81, 83, 88, 93, 94, 97, 104, 112, 114, 130, 139—ʻ 142, 145, 146, 148—154, 158—161, 164—166, 172, 174, 180—185, 189—191, 193, 194, 198, 201, 203, 208—212, 214—216, 219—222, 225, 231, 233, 234, 247, 250—252, 255, 261, 262, 264, 267—269.
Ս. Հեղինէ 65.
Հեղինէ Հարճ Նիկոլի 28.
Հերոնիմոս 71, 88.
Հէ (դը լա-de la Haye) 178.
Հնդկաստան 1, 64, 140, 238.
Հոլլ Նդայ 1
Հռիփսիմէ 2, 140, 203.
Հռոմ 2, 3, 20, 25, 26, 29, 30, 34—36, 45, 50, 70—72, 74, 85, 94, 93, 100, 102—104, 111, 113, 121, 126, 130, 132, 140, 151, 157, 158, 161, 162, 167, 168, 171—173, 176—178, 182, 183,

195, 197, 203, 204, 206, 207, 209, 213, 214, 218, 221—225, 227—233, 235, 239—243, 245, 246, 248, 251, 263, 266, 268, 269.
Հրէայք 32, 65, 88, 248, 249.

## Ղ

Ղարասու 10.
Ղեւոնդիոս եպիսկոպոս 147.
Ղուկաս աւետարանիչ 71, 150, 192.

## Մ

Մագդուայ 108.
Մախոմակի 62.
Մակարայեցիք 90.
Մակարիոս (Հերետիկոս) 65.
Մանազկերտի ժողով 67, 71.
Մատթէոս առաքեալ 34.
Մարաստան 1.
Մարէսկոտի Գալէացցոյ 29, 113, 203, 210, 211, 248.
Մարիամ Լուդովիկէ թագուհի 16, 28, 29, 38, 84, 98, 102, 160, 164, 179, 189, 193, 197, 228.
Մարիամ միանձնուհի 82.
Մարխեւիչ Յակովբ քահանայ Իլվովայ 17, 19, 32, 113, 117, 125.
Մարկիանոս կայսր 65, 143.
Մարսիլիա 151, 232, 264.
Մարտէլ Ֆրանցիսկոս 270.
Մարտինից իշխան 170.
Մարտիրոս դպիր 49.
Մարտիրոս եպիսկոպոս 10.
Մեսակովսկի 133.
Մելքիսեդեկ կաթողիկոս 3, 21, 154, 155.
Մեսրովպ արքեպիսկոպոս Իլվովայ 154.
Ս. Մեսրովպ վարդապետ 142.
Միլան 236.
Մինգրելիա 1, 238.
Միջ. գետք 1.
Միտրովիչ Գաբրիէլ 43, 118, 132.
Միւնխէն 31, 162.
Միւսիա 1.
Միքայէլ արքայ Լեհացւոց 207, 216, 220, 242.
Միքայէլ քահանայ Կամենիցի 13.
Մոլդաւիա 112, 114, 152, 153, 208, 216, 251.
Մովսէս կաթողիկոս 3, 155, 159.
Մուհամմէդ սուլտան 224.
Մուրադովիչ Կազիմիր 131, 132, 216, 232, 234, 266.

## Յ

Յաբեթ 139.
Յակովբ առաքեալ 66, 70, 143.
Յակովբ կաթողիկոս 3, 10, 44.
Ս. Յակովբ Մծբնեցի 141.
Յակովբ քահանայ Եազլովեցի 14, 15, 54, 81.
Յիսուսեանք 32, 50, 83, 115, 116, 119, 124, 125, 131, 135, 218, 219.
Յոյնք 4, 7, 9, 11, 67, 142, 146—149, 152.
Յովհան Կազիմիր արքայ Լեհացւոց 29, 108, 158, 160, 164, 189, 195, 198, 202, 264.
Յովհաննէս Գ. արքայ Լեհացւոց 262, 263.
Յովհաննէս աւետարանիչ 4.
Յովհաննէս կրօնաւոր 44.
Յովհաննէս վարդապետ 159.
Յովհաննէս վարդապետ Իլվովայ 92.
Յովհաննէս քահանայ Եազլովեցի 14, 51.
Յովհաննէս քահանայ Հայոց ի Հռոմ 225.
Ս. Յովսէփ աստուածահայր 65, 66.
Յովսէփ քահանայ Իլվովայ 34, 39, 61.
Յուլիոս Բ. պապ 71.
Յունանեան Վարդան 44, 120, 130, 132, 175, 176, 201, 209, 225, 228, 229, 233, 262.
Յուստինէ սարկաւագուհի 65.
Ս. Յուստինիանոս 64, 70.
Յուստինիանոս կայսր 64, 65.

## Ն

Նախիջեւան 2, 140.
Նապոլի, Նէապոլիս 197, 213, 230.
Ներլի 168, 211, 216, 248.
Ներսէսովիչ Գաբրիէլ 124.
Ներսէսովիչ Գրիգոր 132.
Ներսէսովիչ Դէոդատ, քահանայ Եազլովեցի 14, 39, 112, 116, 117, 127, 128, 135, 232, 266—268.

Ներսէս Մեծն Եպիսկոպոսապետ 1, 46, 139, 145.
Ներսէս քահանայ Սալամեցի 14.
Ներսէս ք. հանայ Կամենեց 13, 51, 52, 191.
Նիկոլ, տես Թորոսովիչ.
Նիկողայոս դպիր, տես Սիմոն քահանայ.
Նիկոն հայազն 142.
Նոյ 1, 9, 139, 141.

## Շ

Շմեղր 108, 109.

## Ո

Ոնուփրիոս քահանայ 20, 32, 41, 119, 125, 130.
Ոսկան եպիսկոպոս Երևանցի 45, 46, 151, 215, 216, 232.
Ոսկերչեան Յովհան 71, 147.
Որբերեան, տես Օրակս.
Որանիս 233.
Ուլինովի Միքայէլ 13, 83, 133.
Ուկրայինա 11, 268.
Ուրբանոս Ը. պապ 25, 157, 163, 178, 269.
Ուրմանի 11, 152.

## Չ

Չեխք 170.
Չերնիգով 108.

## Պ

Պարխալովիչ կրօնաւոր 227.
Պարսիկք 1—3, 8, 44, 140.
Պարսկաստան 1, 8, 34, 140, 265.
Պաւլովիչ Խաչատուր 124, 126.
Պետրակովսկի սարկաւագ 28, 37, 95, 96, 99, 123, 133, 164, 193, 195, 196.
Պեփերատի Հ. Անթէկլոյ 96—98, 107—110, 124, 127, 132, 194, 196, 201, 202, 208, 209, 255.
Պետրոս առաքեալ 25, 26, 66, 67, 70, 158.
Պետրոս (Արքեննովիչ) քահանայ Զամոս-տեայ 16, 118, 128.
Պերեկոպ, տես Օրակս.
Պերեմիշլ 102, 195, 243.
Պժեվուսկի Ադամ 161.
Պիգնատելլի, արքեպիսկոպոս Լարիսայ 16, 18, 28, 29, 31, 35, 62, 63, 83—86, 94, 96, 98—103, 110, 113, 133, 160, 162, 172, 179, 189, 190, 193—195, 197, 203.
Պիդու Ալոյիսիոս Մարիոս 74, 105, 106, 116, 161, 163, 164, 171, 173, 174, 178—180, 184—189, 193, 194, 196—205, 207—222, 224—233, 235—237, 239—247, 253, 257, 261—263, 265—270.
Պիրամամ Պօղոս 265.
Պոդոլիա 11, 103, 133, 220.
Պոդոլսկ 13, 72, 77, 89.
Պոդլաշիայի 104, 153, 186, 198, 208, 251.
Պոզնան 102, 195.
Պոկ աբէ 11.
Պոնտոս 1.
Պոտոցկի Անդրէաս 15, 61, 133.
Պոտոցկի Նիկողայոս 133, 186.
Պորտուգալիա 1, 236, 241.
Պուլերբիայ կղզի 41, 65, 143, 208, 261.
Պրագայ 170.
Պրեժմոսկի 189.
Պրուսիա 108.
Պրոկղ 71.
Պօղոս առաքեալ 66, 135.
Պօղոս արքեպիսկոպոս Թոխատեցի 17, 44 92, 93, 173, 175, 192.
Պօղոս եպիսկոպոս 64.
Պօղոս քահանայ Իլովայ 18, 124.

## Ռ

Ռէֆորմատեանք 28, 161, 196.
Ռուսաստան, Ռուսիա 9, 11, 16, 21, 103, 108, 112, 152, 238,
Ռուսինք 16, 78.
Ռուսք 94, 123, 184, 203, 251.

## Ս

Սարգիս Հերեւինեան. 65.
Սարդիք 110.

Սեւ ծով 3, 152.
Սեբաստիանոս կրօնաւոր 225, 226.
Սեխերով 11.
Սեղբեստրոս պապ 2, 140.
Սեմ 1.
Սերաս 11, 152.
Սեֆերովիչ Մայրապետ 82, 87.
Ս. Սիմէոն վկայ 67.
Սիմէոն քահանայ Իլովայ 17, 39, 42, 43, 46, 47, 55, 56, 60, 179.
Սիմոնովիչ Քրիստափոր 130.
Սիս 3, 40, 71, 139—141, 144, 261.
Սլոնիովսկի Ղազար 36.
Սկիւթացիք 152, 263.
Սկիւթիա 238.
Սմոլենսկ 108.
Սնեատին 11, 15, 54, 67, 97, 153.
Սոբեսկի զօրավար 15, 104, 133, 194.
Սոչաւա 152.
Ս. Սուքիաս 140.
Սոֆիայ 111.
Սպանիա 1, 197, 199, 211, 221.
Ստանիսլաւ եպիսկոպոս 24, 158.
Ստանիսլաւով 15, 34, 39, 54, 61, 98, 132, 153, 171, 179, 194.
Ս. Ստեփանոս կրօնաւոր 66.
Ստեփանոս Սիւնեցի 67.
Ստեփանոս քահանայ Նազլըմեցի 14, 51, 81.


## Վ


Վալախիա 1, 9—12, 21, 45, 52, 71, 89, 97, 111, 114, 152, 153, 161, 216.
Վաղարշապատ 2, 141.
Վանդալք 108.
Վալով 11.
Վասկայ դատաւոր 112.
Վարդան դատաւոր 93.
Վարդան հերետիկոս 66.
Վարդան քահանայ 45.
Վարդանովիչ Թէոդորոս 218—223, 226, 229.
Վարդանովիչ Ստեփան 218, 222.
Վարշաւայ 15, 23—25, 31, 34—36, 63, 68, 77, 79—87, 98—101, 158, 162, 184—186, 188—190, 210, 211, 217, 221, 230, 240, 262.
Վելեպոլսկի 243.
Վենետիկ 96, 194, 218, 221, 230, 243, 245, 263, 265.
Վերոնայ 209.
Վիգոնիուս 233, 242.
Վիեննայ 214, 217, 218, 243, 270.
Վիշնեվեցկի 16.
Վլադիմիր 11, 153.
Վլադիսլաւ Դ. արքայ Լեհաց 158.
Վոլինիա 267.
Վոլոսկի Յակոբ քահանայ Իլովայ 34.
Վոնսովսկի 221.
Վրաստան 1, 178.


## Տ


Տաթեւացի Գրիգոր 66.
Տաճիկք 2, 3, 10, 44, 73, 92, 140, 152, 154, 178, 183, 192, 214, 232, 245, 249, 263.
Տարնովսկի արքեպիսկոպոս Իլովայ 95, 96, 98, 102, 123, 133, 164, 171, 174, 175, 179, 186, 194, 195, 206.
Տարսոնի ժողով 71, 139, 261.
Տիգրիս 139.
Տոսկանայ 232.
Տուբելինոս Ալփոնսոս 135.
Տուզցի 270.
Տրդատ 2, 140.
Տրեմբովիչ 263.
Տրիբուրգի ժողով 71.
Տրուասի ժողով 71.


## Ր


Րադզիեվսկի 34.
Րանուցցի 216, 221, 225, 231, 232, 236, 237, 241—244.


## Ց


Ցեզալ 9.
Ցենի 232, 233, 236—239, 242.
Ցուցի 166.

## Փ

Փիլիպպոս առաքեալ 66, 67.
Փիլիպպոս կաթողիկոս 3, 26, 159, 170, 190.
Փլաւիան ս 41 143.
Փլորենտիա 71, 231, 242.
Փուզզան Պետրոս 2, 5, 39, 144.
Փոքր Ասիա 1.

## Ք

Քաղկեդոնի ժողով 1, 4, 41, 56, 64—67, 133, 143, 208, 261.
Քերոն Տաւրեան 152.
Քրիստոստուրովիչ Յովհաննէս Հռոմայ Ջամաստեայ 16, 17, 31, 35, 39, 41, 110, 118, 119. 128, 169, 222, 228.

## Օ

Օձնեցի Յովհան 25, 26, 66, 71.
Օսմանցիք, տես Տաճիկք.
Օտարողակի Աղեքսանդր իշխան 206.
Օշաս 10, 152.

## Ֆ

Ֆերրարայ 96, 194.

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ


| | | |
|---|---|---|
| Յառաջաբան | երես | է |
| Պատմութիւն Սամքելի, գլ. ԻԲ. | » | խե |
| Մատենագրութիւնք պատմութեան Հայոց Լեհաստանի | » | կէ |
| Ցանկ կարեւոր վրիպակաց | » | կթ |
| Յիշատակարան Ա. Պիգու | » | 1 |
| Յիշատակարան երկրորդ | » | 139 |
| Ցանկ յատուկ անուանց | » | Ա. |


[library stamp]